



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

**Agat'angeghos
ew iwr
bazmadarean
gaghtnik'n**

Barsegh Sargisean

25

6

25.57



ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

ԵՒ


ԻԻՐ ԲԱԶՄԱԳԱՐԵԱՆ ԳԱՂՏՆԻՔՆ

Sargisean, Barsegh
Agatangeghos ew iwr bazmadare...

Ս.Գ.Ա.Թ.ԱՆԳԵՂՈՍ

ԵՒ

ԻՒՐ ԲԱԶՄԱԴԱՐԵԱՆ ԳԱՂՏՆԻՔՆ



ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

Հ. ԲԱՐՍԵՂ Վ. ՍԱՐԳԻՍԵԱՆԻ

Ի

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՐԻ ԶԳԱՆԵՐՆ
Գարգաթիւ 613



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՄՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1890

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

25

f

25.87



ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

ԵՒ

ԻԻՐ ԲԱԶՄԱԴԱՐԵԱՆ ԳԱՂՏՆԻՔՆ

Sargisean, Barsegh
Agatangeghos ew iwr bazmadarean...

ՍԳԱԹԱՆԳԵՂՈՍ

եի

ԻՒՐ ԲԱԶՄԱԴԱՐԵԱՆ ԳԱՂՏՆԻՔՆ


— * —

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

Հ. ԲԱՐՍԵՂ Վ. ՍԱՐԳԻՍԵԱՆԻ

ի

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՄՐԲՈՅ ՂԱԶԱՐՈՒ

1890

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Grad
LRFN
552
BUHR

Great
EREIV
352
i. 11. 99

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ



ԲԱՅՈՑ դպրութեան ամուրամիկ ծնունդն և ամենէն աւելի հոյակապ և գեղեցիկ երկասիրութիւնը, զոր բազմադարեան հնութեան հետ՝ մեծագոյն դէպք ևս, այսինքն է, Հայաստանի դարձն 'ի քրիստոնէութիւն՝ 'ի ձեռն մեծի Լուսաւորչիմ, մուկրական գործեցիմ՝ է Պարտախիւնն Ագախոնքեոյ: Յիրաւի, այս բամիս ոչ ոք տարակուսած է երբէք. մամաւանդ թէ այս մեծագոյն և փառապանծ յօրինուածութեան համեմատ՝ միշտ մեծ եղած է և տոհմայիմ մասեմագրաց համարումը, որուն կը ձայնակցիմ այսօր 'ի մասմաւորի մ:սև քմնասէրք ուտամատեմչ Եւրոպիոյ: Բայց թէ Ագաթանգեղոս, որուն ընծայած են մախմիք մեր այս գրուածքս՝ իցէ՞ ստուգիւ լեւա ժամամակակից և ակամատես գրիչ այն դիպաց՝ որք կ'աւամդիմ աստ, եթէ ոչ. — արդեօք մորա աւամդածներմ իցեմ՝ բովանդակապէս երրորդ դարում վերջերմ և չորրորդիմ սկիզբներ կատարուած պատմական և հարազատ իրողութիւնք, եթէ ըմդհակառակմ՝ կամ յայմմ ման յետնագոյն ժամանակաց եկամուտ ամհարազատութիւններ: — Երկասիրութիւնս այս գրեցամ ստուգիւ հայերէմ բարբառով և վասն Հայոց, եթէ այլազգ ամեմեկիմ եղեն 'ի սկզբանէ ելք իրացն: Արդ այս բաներոս վրայ տարակոյսներ յայտնելու և ուշի ուշով քննելու, ոչ միայն լիուլի իրաւունք՝ այլ և պարտքն անգամ ունի յամծիմ ժամանակիս քմնադատութիւնմ, ևս առաւել ազգայիմ մատեմագրութեամբ պարապող քմնասէրք. որովհետև ոչ միայն քրիստոնեայ Հայաստանի եկեղեցական պատմութեան և վարդապետութեան, այլ մոյմ իսկ հեթանոսիկ Հայաստանի դից և դիցամուէր աւամդութեանց հիմն այն է: Ի՞նչպէս կարէ ոք այն աւամդութեանց վրայ վստահել

և իբր 'ի վերայ հիման հետզհետէ մորամոր շէնքեր ևս շինել՝ հայկա-
կան դպրութեան հրաշակերտը վեր բարձրացնելու աղագաւ, առանց
լաւ գիտնալու, թէ՛ իրջան հաստատութիւն ունի այդ հիմը: Հայկեանս
զրոհի մորախայծ և ուսումնաստեմէ սերունդն իմչպէս պիտի կարենայ
յագեցնել անտի իւր մտաց ծարաւն, եթէ ապահով չլինի, թէ՛ արդեօք
այդ երկասիրութեան մեզ աւանդածներն յակամակլիտ և անխառն
յաղբերաց յառաջ գամ, եթէ 'ի խարդախելոց: Ահաւասիկ առաջիմ
պատճառ կամ շարժառիթ իմ այս Քննադատութեանս: Երկրորդ
պատճառն եղած է տոհմային և օտարազգի մատենագրաց այլևայլ
ժամանակաց մէջ իրարմէ տարբեր կամ մանաւանդ թէ՛ գլխովիմ
իրարու հակասող կարծեօք և եմթադրութեամբ զմիտս բազմաց
շփոթելմ. այնու զի հիմք յաճախ իրենց ժամանակին և նպատա-
կին յարմար դիւրահասանութեամբ՝ քան թէ՛ մորոք իմ և աչալորջ
քննութեամբ իբրև արդէն իսկ ապացուցուած ընդունեցան զամե-
նայմ, նոյն իսկ զոչ արժամիս հաստատութեան. իսկ մորք՝ ընդհա-
կառակն, քան զչափմ կարի անաչառութեամբ և յանդուզմ դատմամբ
բոլորովիմ հակառակ արդիւնքներ և վճիռներ արտաբերեցին, որոնց
վմասն և աւերմուծքն աւելի եղան քան կարծեցեալ մորզութիւն-
ները:

Բարոնիոս, Պապերրոզ և 'ի մասնատրի Ստիլտինգ¹ եղան, որք
զառաջիմն տարակրտեցան Ազաթամզեղոսի և մորա պատմութեան
հարազատութեան վրայ: Վերջինս՝ Մետափրաստէսի ձեռքով մեզի
թողած Ազաթամզեղեայ յոյմ օրինակը՝² լատիներէն հրատարակու-
թեամբ ծանոյց ուսումնասիրաց, և անաչառութեամբ կոչելով զայմ
ի դատ՝ իւր ըմտիր ծանօթութիւններովն և սուր դիտողութեամբքը
մեծ արդիւնք ունեցաւ, այնպէս որ կարելի է ասել, թէ Ազաթամ-
զեղոսի գրոց քննութեան առաջին քայլը մա ըրաւ:

Յետ մորա ելաւ արդի հայ պատմաբանից հայրն 4. Միքայէլ
Չամչեան³, որ իւր ընդարձակածաւալ հմտութեամբը՝ չնաց ոչ
միայն Ազաթամզեղոսի վաւերականութիւնն հաստատել ամոր յաշոր-
դող տոհմային պատմագրաց վկայութիւններով, այլ նոյն իսկ իւր
ժամանակի հորիզոնէն վեր հեռատեսութեամբ լուծել իւր մախրողիմ
ամուրձամեղի կարծուած դժուարութիւնքը. բայց յամենայնի պաշտ-

1. Bolland. Acta Sanctorum. Septemb. 30 Tom. VIII, pag. 320
et seq. Acta Sancti Gregor. anctore Agathangelo; ex Bibliotheca
Medicæe Florent. S. Laurentii, interprete Ioanne Stilting.

2. Πρόλογος Αγαθαγγέλου, ἐν οἷς καὶ τὸ μαρτύριον τοῦ ἀγίου Γρηγο-
ρίου.

3. Պատմ. Հայոց հտ. Ա. էջ 668:

պամոռական դրութիւնն 'ի վար արկամելով, այնպէս որ մորա հայրն մասիրութիւնն և ազգասիրութեան պարծոմն աւելի դեր խաղացեր են ամբ քան թէ ժամանակիս անաչառ քննութիւնն և լոկ ճշմարտասիրութիւնն: Այս վերջին պարագայս եթէ ազգային մատենագրաց համաճարակ ախտ համարիցի ոք և եթէ առանձին ճարտարութիւն իմ բազմահմուտ Մխիթարեանին 'ի զգետնել զախոյեան իւր, պէտք է ըսել թէ այնքան զօրեղ է և համոզեցուցիչ, որ եթէ Յիսուսեան անպարտելի գիտնականը սորա գրութիւնն իւր դիմացն ունենալու բաղդին հանդիպած լինէր յառաջագոյն, գուցէ թէ այնուհետև ոչ տարակուսէր Ազաթանգեղայ պատմութեան հարազատութեան վրայ և կամ կարի չափատրէր իւր տարակուսանաց թիւն. որովհետև Ստիլիինգ ինքնին որոշակի կը խոստովանի թէ արտաքին մատենագրաց համաճայնութիւնը բաւական ապացոյց են մորա հարագատութեան, եթէ ժամանակաւ մերձաւոր եղած լինէին, բայց դժբախտաբար դարական խտրոցն մոցա հետ՝ զիս ևս կը թուի հեռացնել ամտի: Իսկ Ջամչեան այդ մեծ խտրոցն իսկ շանացեր է հարթել զընթէ Ազաթանգեղայ ժամանակակից և կամ ժամանակաւ մերձաւոր հայ մատենագրաց խումբ մի 'ի վկայութիւն կոչելով: Մակայն այսու համոզեմ, պէտք է ասել, թէ տոհմային մատենագրութեան այդ ճիշտ գիմարանն իսկ՝ արդի քննութեան առջև իբրև ժամգահար զենքեր կը մերկայացնէ Ջամչեան, որոնք չպաշտպանելէն՝ զատ՝ կարող են վնասաբեր ևս լինել գործածողաց. որովհետև մոցա հարագատութիւնը յառաջագոյն չէ ապացուցած: Բաց աստի, մա իւր ժամանակի սահող և սպիթաքող հոսանքներէն մղուելով շատ և շատ էական խնդիրներ (յորոց մին է Ազաթանգեղոսի բնագրի և թարգմանութեանց խնդիրն) հարևանցի մկատած է. կամ լաւ ևս զլխովին առանց մկատողութեան թողած, որոնք ցայսօր եղան ոմանց քար զայթակղութեան մ այլոց իբրև մեցով ապաւինութեան:

Յամին 1843 Մխիթարեան Հարց Գնութիւն և Թովմասէոյ իտալացոյն սրբագրութեանը եղած Ազաթանգեղոսի իտալերէն հրատարակութեան յառաջաբանի հեղինակը, թէպէտ և մի քանի օգտակար տեղեկութիւններ կը թուի յաւելուլ Ջամչեանի պաշտպանած դատին 'ի մպաստ, բայց զրոց բնագրի և թարգմանութեան խնդրոց մասին՝ անկէ աւելի քայլ մի առած չէ. այլ պարզապէս մորա ըմտրած դաշտին վրայ կենալով՝ միայն որոշակի իւր դրօշը ցուցել է, ասելով թէ հայերէն գրուած է այն: Եմթադողութիւն մի՛ որ չկարէ գտնացնել զոք. ասութիւն լոկ՝ առանց ապացուցութեան:

Ջամչեանի կրօնակից վիեննական Մխիթարեանց մշամաւոր Հարց

միմ, այսինքն է, համրածամօթ Հ. Յ. Գաթրոնեան¹ իւր աչալուրջ և հշտղ մտօք ունելով ՚ի միտմ ձեռիմ քմնասիրութեամ կարկիմմ, իսկ ի միտումմ՝ արդէն իսկ Ջամհեանէն ձգուած տոհմային և օտարազգի պատմագրաց միութեան լարը պատշանցեցնելով Ագաթանգեղայ բազմակողմեան յօրիմուածութեան և մորա գլխաւոր դիպաց, քաջ չափեց զանոմք և պահպանել ուզեց ոչ միայն օտար յարծակմանց դէմ, այլ յետագայից իսկ լուսատու լամբարմեր պատրաստեց՝ քայլ մի ևս յառաջելու Ագաթանգեղոսի պատմութեան խորհրդաւոր մթու թեան և լաբիւրիմթոսի մէջ. սակայն մորա բնագլի և թարգմանութեան խնդիրներն, մանաւանդ Գրիգորի կարծեցեալ վարդապետութեան հարազատութեան կամ ամհարազատութեան քօղն և ոչ իսկ ծայրիւ մատին ուզեց պարզել. այլ մորա իմաստից և խորհրդոց համառօտ տեսութեամբը միայն զոհ եղաւ, գուցէ ոչ այնքան իւր ժամանակի պահանջմանց հետեւելով, որքան իւր մտաւորակամ հորի զոմին վերայ ապագայ քմնադատութեան մորանշոյլ աստղը դեռ պայծառ ծագած չլիմելում պատճառաւ. կամ մանաւանդ իւր անաշարկեալ գրութեանէն օտար վարկաւ զայնս:

Ջկնի ապա յասպարէզ եկաւ Վ. Լամզուայ²: Գաղղիացի հայագիտիս համար կարելի է ըսել թէ ստուգիւ մի մոր քայլ առաւ, երբ իւր հրատարակութեան մախաշաւդի մէջ ուղղակի շօշափել ուզեց Ագաթանգեղեայ հարազատութեան կամ ամհարազատութեան, բնագրի և թարգմանութեան նշանատր խնդիրներն, յորմէ կը կախուի, ըստ իս, Գորդեան համգոյցէն աւելի Ագաթանգեղեայ գրոց բազմակննդում համգոյցի լուծումը: Նորա կարծեօք ոչ այժմու յումաւ ընն և ոչ հայերէնը կարեմ լիմել բնագիր, — հայերէնը՝ ոչ թէ Դ. դարու դիւանակամ պատմութիւն է, այլ Ե. դարուն սրբոց վարուց խորհրդի մի:

Գաղղիացի գիտնականին կարծիքն մասամբ մի եթէ ստոյգ ևս համարինք, սակայն և այնպէս պէտք է ասել, ըստ առածին, « Մի թէ բամիւ ինչ պատերազմն վնարիցի՞ », ուր ոչ մի ապացոյց մէջ բերուած չէ. այլ որոտընդոտտ պատգամք բամից՝ գաղղիական թափով արծակեալ:

Յամին 1877 ելաւ Գերմանիոյ հուշակամում քմնադատն Ա. Գուտ

1. Տիեզ. Պատմ. հտ. Բ. էջ 476 տպ. Վիեննայի 1852:

2. Agathange, Hist. du règne de Tiridate et de la prédication de S. Grég. Illuminateur, avec suppression des passages purement religieux, sur le texte Arménien accompagné de la version grecque. Paris, 1867.

ըմբռնող որ թէպէտև իւր առանձին երկասիրութեամբ¹ մէջ Լամզուայի առաջին կարծեաց հակառակ՝ Մխիթարեան հարց հիմնաւորց կարծիքն ընդունեց, այսինքն թէ, Ագաթանգեղոսայ գիրքն ի սկզբան անդ հայերէն գրուած էր. սակայն Գաղղիացոյն լոյ բանիւ արտայայտած երկրորդ կարծիքը՝ Գերմանացին անսովոր կրօնով մտաց և մեծ հմտութեամբ քաջ բարգաւաճեց և շնաց ասպացուցանել, իրարմէ տարբեր եկեղեցական և աշխարհական աղբիւրներ յայտնելով Ագաթանգեղոսայ գրոց մէջ: Գոտշմիդ թէ այս աղբերաց յայտնութեամբ և թէ Կորեան հետ մնամաբան հատուածոց ուշիմ բարդատուութեամ մէջ մեծ արդիւնք ունեցաւ. սակայն պէտք է ասել, թէ նորա տևող նակյան յարծակական և անձնական ենթադրութեանցը շատ պատմական ճշմարտութիւններ և հայաստանեայց եկեղեցոյ նովիրական աւանդութիւնք ևս առաջուր եղան. որոց մասին եթէ մեզ ևս ուզէինք լուել, տոհմային պատմութիւնը պիտի բողբէր ընդդէմ նորա: Նիւթս չի ներեր և ես իսկ չեմ ուզեր ՚ի ներածութեամ ասա՝ նորա քննադատութեան բովանդակութիւնն ընել. բայց յընթացս երկասիրութեանս և ըստ պահանջելոյ հարկին մէջ պիտի բերեմ նորա առանձին տեսութիւններն, որպէս զի մէկ կողմէն իւր ՚ի հիմանց քննուած լինին, և միւս կողմէն՝ այլ ընթերցողացս զաղափար մի տուած լինիմ նորա գրութեան և կարծեաց մասին:

Ճ. Գարեգին Վ. Զարբհանալեան՝ իւր հայկական հին դպրութեան² մէջ, 181 – 213 յէջս ընդարծակաբար և մեծ հմտութեամբ խօսած է Ագաթանգեղոսի վրայ, համառօտելով նոյնպէս ներկայ քննադատութեան յարուցած կարևոր հարցերն և տուած վճիռները. բայց նոցա լուծումն և իւր առանձին պատասխանին վերոյիշեալ Դպրութեան մտիկին տպագրութեան և իւր ուխտակից նախորդաց հնալանի կարծեաց համաձայն ուզած է տալ: Ի նպատ յոճարէն թարգմանութեան մէջ բերուած նորա ասպացոյցներն՝ ըստ բաւականին են հիմնաւոր և եզրակացուցիչ. բայց ոչ նոյնպէս և անոնք, որովք զհայերէն Ագաթանգեղոսն ՚ի սկզբան անդ հայերէն լեզուով գրուած կը համարի ՚ի Դ դարու: Սակայն միւսմալու չէ, թէ մեծապատիւ հեղինակին սոյն այս գրութեան նովիրական նպատակն և իւր պահպանողական զգուշաւորութիւնն ստիպած են իւր յառաջագոյն յայտնած կարծիքը վերստին պաշտպանելու՝ յետ նորանոր յայտնութեանց Գոտշմիդի:

1. Agathangelos von Alfred Gutschmid, Leipzig, 1877.
 2. Երկրորդ տպագրութիւն յանելուածներով և փոփոխութեամբք, զննետիկ, Մխիթարեան տպարան, 1886:

Յիշելու ենք դարձեալ Կարապետ Թովմայեանի փոքրիկ բայց գովելի երկասիրութիւնը¹ . յորում ինչպէս վերնագրէն իսկ կը տեսնուի, հեղինակը Ազաթանգեղայ պատմական մասերէն աւելի՛ վարդապետ տակամին քննութեամբքը պարապեր է: Սակայն նախընթաց գլխոց մէջ ըրած է սրամիտ դիտողութիւններ, նաև Ազաթանգեղոսեան գրոց բնագրին և աղբերաց մասին, յաճախ ընթանալով զկնի շատաց Գոտշմիլի, և ուրեք ուրեք սեփական կարծիս արտայայտելով . սակայն կ'երևի թէ կամ ընդարձակ քննութեան միջոցներ և կամ ժամանակ չունենալով պարտուպատշաճ փաստերով զամոռք ապացուցած չէ: Իսկ քանի մի վարդապետական կէտերու մասին տուած մեկնութիւնքը օտար են ի բնագրէն:

Ծանօթ է ինձ նաև յամին 1886 լոյս տեսած Փելիքս Նէվի երկասիրութիւնն² , որ հայկական Մատենագրութեան բովանդակութեամբը մի նշանատր գործ է . սակայն Ազաթանգեղոսի և նորա պատմութեան մասին ամենեւին նոր բան մի չընծայեր . այլ տոհմային գրագէտ դասուն մէջ շրջող և հասարակային կարծեաց արծագանգներ ևեթ կու տայ մեզ, բայց ՚ի մասնատրի Ջարբհամալեանի Դպրութեան պատմութեամբ ներընչուած:

Մինչև ցարդ մէջ բերուած գրութիւններէն դատելով կը տեսնենք, որ Ազաթանգեղոսի գրոց մասին եղած քննադատք երկու տարբեր կու սակցութեանց բաժնուած են: Օտարք Լանգլուայի և Գոտշմիլի հետ յարձակողական մի նոր դեր խաղալով . իսկ տոհմայինք և տոհմային լեզուին ծանօթ Երոպացիք ոմանք՝ Մխիթարեան Հարց հետ պահպանողական դրութեամբ յառաջելով կը կոծին և մրցին, ունենով ՚ի միջի զոսկեխնձոր և զոսկեգրիչ երկն Ազաթանգեղայ գրոց: Վերջինները՝ իւրեանց հայրենի հնաւանդ յիշատակարանաց վրայ յարեալ և պանծացեալ վարկպարագի յոմանց գուցէ թէ հնամուտ իսկ կոչեցան յայսմ՝ որպէս և յայլ հրատարակութիւնս նախնեաց . սակայն առաջնոց քննադատ աւերմունքը չգործելէ զատ, ինչպէս փորձմ ինքնին ցուցուց, ժամանակին աշակցութեամբը մեծամեծ ծառայութիւններ ևս մատուցին մրնչև ցայսօր տոհմային մատենագրութեան և չպիտի դադարին մատուցանել . վասն զի ժամանակեան նորութեանց և հնութեան անարտար գործիչներ լինելով մէկ Սշխար մի կամ նշմար չեն ուզեր վերցնել կամ փոփոխել, առանց նորա տեղ փոխանակելի առձեռմ պատրաստ նութիւն ունենալու:

1. Agathange et la doctrine de l'Eglise Arménienne en V.ème Siècle, Lausanne, 1879.

2. L'Arménie chrétienne et sa Littérature, Louvain, 1886.

Արդ, յետ գերմանացի քննադատին անցին տասն ամբ. այժմ հասած է, ըստ իս, ժամանակն և վճռական վայրկեանը. հրաւիրա մաց զամզակը կը կոչէ 'ի գործ. հարկ է որ այս երկու կուսակցութիւններս իրարու միտք լաւ հասկնան և ոտն առ ոտն՝ մօտեմալով միմեանց ձեռք կարկառեն, մոր խորհուրդ մի երկմելու և մորակերտ շինուած մի կառուցանելու Ազաթամզեղոսեան գրոց աւանդութիւն մներէն և կամ զամռնք իւրեանց սկզբնական կացութեամը վերածելու համար, զոր եթէ երանգք դարուց և ժամանակաց ազդեցութիւնք կերպարամափոխեցին երբեք:

Արդ այն ժամանակէն 'ի վեր երբ զառաջիմն կարդացի ես Գոտ շըմիդի քննադատութիւնն Ազաթամզեղոսի մասին, կը խոստովա միւս, թէ մեծ զայրութով սիրտս լեցուեցաւ, մտածելով որ օտարազգի մի կը յամբոյն ձեռներէց լինել յասպարէզ ամուր հայկեանս գրականութեան և աղօտացմել մեր ամենէն աւելի պանծալի և պարծելի հեղինակին և մորա հեղինակութեան արժանիքը առանց հայերէնագիտութեան: Սակայն գիտմալով քաջ, թէ հայրենասիրական զգացմանց շերմաշերմ հուրն էր որ կը բորբոքէր յիս այդ բոցը և կ'ուզէր շլացմել իմ մտացս աչքերը չմկատել այն մորակերտ աշխարհը, զոր լուսաւոր յայտնութիւնք ժամանակին ինծ ակներև կը պարզէին, և թէ այդ քննադատը չէր տգէտ ոմն և ամենաշակ չայոց պատմութեան, թոյլ տուի ժամանակ մի որ այդ բոցը համադարտի. և յետ ժամանակաց վերստին ըմբերցայ զայն ամենայն աշխարհութեամբ և առանց նախապաշարմանց: Այս երկրորդ ըմբերցումը ոչ միայն մոր գաղափարներ ծնաւ իմ մտացս մէջ, այլ նաև բուռն զօրութիւն մի ձեռք զարմելու այս գործին: Առ այս յորդորեցին զիս և արտաքուստ գեղեցիկ ակնկալութիւնք երկից կամ չորից մպաստից. պսիմքն է, նախ մեր Վիեննական եղբարց Ազաթամզեղոս պատմութեան ամենէն հմազոյն և կրկնագիր ձեռագիրն, զոր ոչ որ միմչև ցայսօր բաղդատելու բաղդն ունեցաւ. սակայն այս ակնկալութիւնս ի դերև ել: Բ. Կ. Պօլսոյ Յունաց Սէլէֆօսի ատենապետ և հմագէտ Պապադոպուլոս Կերամակի մոր գիտն, զոր զառաջինն ծանոց ինծ Պիզայի Պրօֆ. Էմիլիոս Տէզա, 1886 Դեկտեմբերին առ իս ուղղեալ թղթով մի, թէ վերոյիշեալ յոյն գիտնականը Մակեդոնիոյ Կոնստանտինոպոլստանի գրատան մէջ Ժ. դարում գրուած յումարէն ձեռագրեր փոշիներու մէջէն դուրս բերել է, յորս կը գտնուին յումարէն Ազաթամզեղոսի բազմաթիւ հատուածներ: Անծամք տեղեկացայ զստուգութիւն եղիւթեանս և խնդրեցի 'ի նմանէ այդ հատուածոց ընդօրինակութիւնը, բայց նա պաշտօնով յերուսաղէմ հաստատուած

լինելով, չկարաց իմ խնդիրքը կատարել՝ զյոյսն իմ և եթ տածելով. Գարահատեալ յանձնարարական թուղթ մի ուղղեցի առ միամձուռն վերոյիշեալ մենաստանին՝ պէսպէս խոստումներով. սակայն յետ երկուց ամսոց, չգիտեմ՝ այդ մենաստանին աշխարհքիս երեսէն շընջուելուն եթէ թղթատարաց շնորհիւ, այդ թուղթն առ իս վերադարձաւ: Այսպէս ուրեմն այս մպաստէս կա զրկուեցայ. բայց առանց կասելու շարումակեցի արդէն ՚ի վաղուց սկսեալ իմ գործը, ունելով ՚ի ձեռին բաց ՚ը վենետկեան Ագաթանգեղոյ կրկին հրատարակութիւններէն, մաև Կ. Պոլսոյ հին տպագրութիւնս և՛ համդերծ քառաթիւ օրինակաց բարդասութեանց յաւելուածներով, զոր կը կոչեմ Ա. Բ. Գ. Դ. և Է՛մ. Տէգայի մի փոքրիկ հրատարակութիւնն, որ է արլիւնք Գարտար և արթնամլտ բարդատութեան փորքնտեան յոյմ օրինակլն՝ ընդ տպագրութեան Լանգլուայի: Բաց աստի, ոչ ինչ նուազ նպաստամատոյց եղև ինձ մաև Բարբերինեան մատենադարանի ձեռագրէն օրինակուած լատիներէն Ագաթանգեղոսն, որ ՚ի քաղաքն յաւիտենական:

Հուակ ուրեմն և ՚ը վեր քան զակնկալութիւնն իմ, եհաս ՚ի ձեռս իմ Գերմանոյ, մանաւանդ թէ, Եւրոպոյ համրածանօթ և մեծ բանասերն Պ. Իր Լագարդի դեռ այն ինչ լոյս տեսած և բազմաձևատապ բազմազանձ հրատարակութիւնն¹, որ աւելի քան զամենայն նպաստամատոյց ինձ եղև, և պէտք է, որ ամէն ուսումնասիրի՝ բայց ՚ի մասնատրի՝ մերպսոց խորին ուշադրութեան առարկայ լրնի: Մեծ գիտնականը վերջին այդ հրատարակութեամբ երկու ամսամեծ ծառայութիւններ սատուցած է Հայոցս. Ա. վերստին ՚ի լոյս ընծայելով զյոյնարէն Ագաթանգեղոսն, բայց ոչ որպէս զնախորդս իւր. այլ իւր լնգրաբանական, աստուածաբանական և պատմական ընդարձակ հմտութեամբը քաջ ուսումնասիրած է վերստին Փորքնտեան ձեռագիրն. մանրակրկիտ զննութեամբ ուղղագրած է նախընթաց հրատարակութեանց սբսւ ընթերցմունքը՝ նշամակելով ՚ը ստորև իջուց նոցա տարբերութիւններն, յոյս Զ լնչ ընդհատ կը տեսնուին Պրօֆ: Տէգայր մարմաբար այն ձեռագրին վրայ ըրած սրամիտ և ուղիղ դատողութիւններն, զորս անաղարտ պահած է Գերմանացին, միով բանիւ մա լրացուցեր է Լանգլուայի հրատարակութեան պակասատր միջոցներն. այնպէս որ կարելի է ասել, թէ մասամբ մի կատարուած է այժմ վերոյիշեալ իտալացի բանասիրին և հայագիտի

1. Agathangelos und die Akten Gregors von Armenien, Göttingen, 1887.

ցանկութիւնը, որ իւր փոքրիկ գրութեամ մէջ կը փափաքէր հայերէ՞մ Ազաթանգեղոսիմ առըմթեր՝ տպուած տեսնել և՛ մորա համապալ տասխանող յունարէմ օրինակմ: Պարտք կը համարիմ յիշել աստ մեծարդիւմ Գերմանացւոյմ ՚ի վերջկոյս իւր երկասիրութեամ յաւել լեալ յատուկ ամուսնաց Նուսրամութիւնմ և ի Ս. Գրոց յԱզաթանգեղ կիր առեալ տեղեաց խմամտտ թուակարգութիւնը, յորս հասասալ րապէս կը փայլին հիմասուրց ծերունոյմ ամխոմջելի կորովմ և զար մանալի մամբերութիւնմ: Բ. ՚ի լոյս ատեր է զՊարտք-Նիւն գործոց Ս. Գրիգորի Նուսուրչիմ վատիկամեամ մատեմադարամի երեք ձեռագիրներէմ, զորս միմչև ցայնվայր ոչ ոք կարող եղած էր ճամալ չել, ըստ վկայութեամ հեղինակիմ. և այս իսկ խորիմ կերպով իմ ուշադրութիւնը գրաւեց, թէպէտ և արդէմ ՚ի վերջկոյս ժամանեալ էի գործոյս: Այլուր առիթ պիտի ունեմամ, սոյմ գործի վրայ խօսել, իսկ այժմ թէ՛ երևելի գիտնակամմ և թէ՛ ես ուժգնմ կը յամծնեմք ազգայնոց գէթ գրագէտ դասում, ստամալ և ըմթեմուկ երախտալ պարտ սրտիւ այդ օգտաշատ հրատարակութիւնը, մանաւանդ թէ, ցանկալի էր մորա հայերէ՞մ ճիշդ թարգմանութիւնմ և՛ տեսնել ՚ի լոյս ըմծայեալ յազգիս:

Յըմթացս գործոյս, մանաւանդ ՚ի դժուարակնճիւն լուծումմ կա ընտր խմդրոց, թէպէտև ՚ի խորհուրդ կոչած եմ ստեպ զԳոտաշմիդ, բայց մորա կարծիքը լաւ իմամալու համար և ոչ թէ ունելոյ իմծ առաջմորդ. որովհետև ՚ի բազում իրս և դէպս տարբեր եմ իմ տեսութիւնքս և սեփական կարծիք: Յառաջ քամ զծեմուարկ գործոյս՝ իմ առաջիմ ջանքմ եղաւ ուշի ուշով քմնել գերմամագի քմմադատիմ թիւր հետևութեանց խարխուլ սկզբունքներմ: Նորա դրութեամ և քմմադատութեամ փորձաքարմ եմ Ազաթանգեղոս և ազաթանգեղոս սեամ գրութեամ մէջ պարունակուած մերքիմ հաւաստիք. այնպէս զի կարելի է ասել, ըստ խոստովանութեամ մորա, թէ Ազաթանգեղոսով՝ զԱզաթանգեղոս ուզեր է դատել: Իսկ ես ՚ի մեծ զգուշութիւն իմծ և՛ ՚ի հաստատութիւն գործոյս՝ իմ քմնասիրութեանցս ասպարէզմ ըմդարձակեցի մաև Դ. Ն և յաշորդ դարուց տոհմայիմ և օտարազգի մատեմազրաց վրայ, որոմք սերտ յարաբերութիւն ունիմ ըմդ Ազաթանգեղայ և մորա աւանդութեանց հետ. բայց մախ քամ զածելմ զմոսսա յապացուցութիւն աւանդելոցմ յԱզաթանգեղոսէ, մոցս հալ րազատութիւնը ջանացած եմ ապացուցանել: Այս տաժամելի գործորութիւնը սիրայօժար փափաքամօք կատարեցի, ոչ միայն տպագիր հրատարակութեանց՝ այլ մանաւանդ ամտիպ ձեռագրաց վրայ, որոմց իրարմէ ունեցած զամագանութիւններմ իսկ մեծ մտատում

Նույնիւմ կը պատճառենք քմնասիրիւմ, զոյգ ընդ ուրախութեամ : Զանազներ եմ նչքէ անցնել գէթ վանացս ձեռագրատամ բոլոր ճառագրայն ինքնառ լինելով ձեռնարկած միւթոյս ծամրութեամ . որուն համար մոյքամ ձեռագիրք ևս հարկաւոր եմ, մորք և առժամայն յայտնեալք 'ի մատենադարանս ազգիս և առանձնականաց ունանց, և ես մեծայոյս մեծափափաք կը սպասելի մոցս ցժամ առանձնի հրատարակութեամ գործոյս . յուսալով, թէ չեմ զլացուիր՝ զայս յաջող կերպով աւարտելու և այլոց սկիզբն առնելու համար :

Առաջիկայ գործոյս մէջ պարունակեալ և ընդարձակօրէն բարգաւաճուած և լուծուած առանձնիմ դէպք և դժուարակնցիւմ խնդիրներ՝ զլեակարգութեանց բովանդակութեանը մէջ պիտի տեսնեն ըմբերցողք . իսկ ընդհանուրքն, որոնց վրայ իբրև յառանցքի պիտի հողովի և յառաջէ քմնադատութիւնս, եմ Ա. Ազաթամզեղոսի իրական գոյութեամ կամ ոչ գոյութեամ խնդիրն . այսինքն է, Ազաթամզեղոսէ ամուսնեալմ իցէ՛ լեալ պատմական և ժամանակակից գրիչ Տրդատայ և Գրիգորի պատմութեան, եթէ ընդհակառակմ իմամալի է : Բ. Ազաթամզեղայ պատմութիւնն ամբողջապէս իցէ՛ արդեօք գործ քարտուղարիմ Տրդատայ և գրեալ 'ի սկիզբն Գ. դարու, թէ ընդհակառակմ յայլ և այլ հեղինակութեանց և գործոց կազմակերպուած խմբագրութիւն մի : Գ. Ստուգիւ հայերէն լեզուով գրեցաւ այդ երկասիրութիւնը, իմչպէս կարծեմ Գուտշմիդ և այլք ոմամք, թէ ընդհակառակմ յունարէն : Դ. Այժմեան յունարէն Ազաթամզեղոսմ՝ իցէ՛ արդեօք բնագիր հայերէնի, թէ ընդհակառակմ, մորա վրայէն յետոյ ուրեմն եղած թարգմանութիւն : Ե. Լուսաւորչայ կարծեցեալ ընդարձակ վարդապետութիւնմ՝ ստուգիւ հարազմտ իցէ, թէ գործ յետմագումի ուրումն ժամանակաւ :

Ամենում քաջածանօթ է այժմ, թէ Ազաթամզեղայ գիրքը յերից մասանց կը բողկամայ . այսինքն է, առաջինը կը պարունակէ Տրդատայ, Գրիգորի և սրոց հովիտիմեանց մահատակութեամ պատմութիւնը . երկրորդը՝ Լուսաւորչայ կարծեցեալ վարդապետութիւնն . հուսկ երրորդը՝ Հայաստանի դարձի պատմութիւնը : Թող մերեմ ինձ առ այժմ Հայոց լուսաւորութեան հօր հետ՝ մորս շքեմ որդիքը՝ փոխադրելու այդ միջին կամ երկրորդ մասմ 'ի վերջկոյս երրորդիմ, խոստամալով որ դարձեալ կարելի է գետեղել իւր տեղ, մորա հեղինակութեամ հետ իմիասիմ՝ զայն բարգաւաճող և օրհմեալ ձեռքն և բերամն ևս մատմամիչ ընելով և ամդ մերմուծուելու բում պատճառմ :

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

ԵՒ

ԻՒՐ ԲԱԶՄԱԴԱՐԵԱՆ ԳԱՂՏՆԻՔՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Նախադրուած Ագաթանգեղոսեան գրոց և նորա անսովոր վերնա-
գրութեանն. — Ագաթանգեղոս անունն և նորա գաղտնիքն. — Նախ-
կին յև մակագրութեան յառնարէն բնագրին և սխալ լարագրմանսն
նորա. — Լաթուսն խորհրդաւոր հանգոցին :

Ածածաօթ երկիր մի՛ կամ ապարամ մի մտած ժամանակ՝ կ'ուզէ
մարդ փութամակի և բնական բերմամբ իմամալ, թէ ինչպէս կը
կոչուի այն, և ի՞նչ կը պատկանի: Այսպէս և ես այս բազմադարեան
և հոյակապ յորիմուածութեանս մախաղուտն հասնելով՝ հարկ կը
համարիմ և հարկ անհրաժեշտ, մախ քան զամենայն հարցամեղ.
Ո՛ր է յորիմուածս այս. և անդէմ կը լսեմ, մամաւամդ թէ կ'ըմ-
թեռնում ամպատիր. « Ագաթանգեղոս » . ինչ բան. « Պարտութեան »
և ոչ այլ ինչ: Այս բանս մի եզակի իրողութիւն է, և բացառութիւն
կը կազմէ ընդհանուր ազգաց պատմութեան մէջ: Յիրաւի, ի ճակատ
զրոց չերողոտոսի գրուած է Պարտութեան, բայց յաւելուածովս՝ հին
աղբաց. Թուկիդիդեսայ Պարտութեան՝ Պերոպոնեսական մարտին, Տիտոս
Լիւկոսի՝ Պարտութեան Հառփայեացոց, Մ. Խորեմագոյ՝ Պարտութեան
Հայոց, Թապարեսայ՝ Պարտութեան Սասանեանց և Արաբացոց, այս-
պէս և առ այս: Իսկ աստ, ընդհակառակն, կը գտնենք միայն Ագա-
թանգեղոս Պարտութեան: Արդ ամսովոր վերնագրոյս Պարտութեան
բառն եթէ վերաբերենք Ագաթանգեղոսի իբրև անձի և մերս մտնենք
այն յորիմուածութեան մէջ, ուրիշ ոչ այլ ինչ գտանեմք ամը՝ բաց
յաւնուանէ մորա և ՚ի ծննդավայրէն. բայց այնպիսի մի Յառաջաբալ

Որ մէջ, որում հարազատութիւնն իսկ, ինչպէս քիչ յետոյ պիտի տեսնենք, գլխովն տարակուսակամ է և ամհարազատութեամ տիպ ունի: Իսկ եթէ լատ կամս ընծայենք զայն Տրդատայ, մոր վերնա գիր մի հմարած կը լինինք, որում հակառակ կ'ելլեն Գրիգորի և Հռիփսիմեանց՝ աւելի քան զայն առանձնակամ պատմութիւնք, որոնք յիրաւի, միամալ կը միամամ ընդ առաջնոյն, քայց առանձին պահելով իւրեանց բնադրոշմն և աւելի ընդարծակ տեղ գրաւելով. կ'ըմթամամ 'ի մի կէտ մպատակի՝ քայց տարեեր շատօք և եղա մակաւ. միով բամիւ՝ թուիմ բղխել 'ի միոջէ աղտերէ, քայց այլազան իրեր առքերելով մեզ տարեեր երամօք և առանձնայատկութեամբք:

Արդ այս ամել լարիւրիմթոսէն ելլելու և շատ մի յամտեղութեանց գերծանելու համար՝ երկու ուղիներ կարելի է բռնել, այսինքն է, կամ ասել, թէ այս վերնագրոյս մէջ « Ազաթանգեղայ պատմութիւն » ամմիշապէս կից էր մաս բառս « Տրդատայ », եթէ իրօք մա Տրդատայ քարտուղար եղած և մորա պատմութիւնը գրած էր. քայց յետոյ մախրմթաց մի քամի գլխոց հետ՝ որոնք կը գտնուին արդ միայն յունարէնի մէջ, ամույտացած է, և կամ ընդօրինակողաց ամհոգութեամբն 'ի քաց թողուած: Եւ կամ ասել թէ ամբստին, « Պատմութիւն Ազաթանգեղայ » բառերը միայն կային, քայց թող ըովին այլ ինչ Ոչանակելով քան թէ յատուկ ամուս մարդոյ: Այժմու հայերէնը համարելով միակ բնագիր և մի միայն հեղինակութեան գործ, ամտեղի կը թուի ինծ և ամընդունելի այդ ենթադրութեանց առաջինը. այնու զի մայս վերոյիշեալ պարագայք ընդէմ կը զինին մնա: Բ. Սոյն վերնագրոյն մնացած մասն իսկ Յառաջարամով համ դերծ գիշատիչ Կոռնոսի անգութ ժանեացը զոր եղած պիտի լինէին: Ուրեմն կը մնայ երկրորդը: Սակայն յայսմ իսկ եթէ « Ազաթանգեղայ » բառը իրեն յատուկ ամուս առնունք, դարծեալ այն մոր ընմակ բացատրութեամ և ամտեղութեամը մէջ պիտի անկամիմք, զոր 'ի սկզբան ամդ Ոչանակեցի և արդ աւելորդ է երկրորդէ:

Արդ իորհրդակամ ամուսն Ազաթանգեղոս կամ Ազաթանգելոս, կազմուած է յունական ἀγαθός Բարբ և ἄγγελος հրեշտակ բառերէն, ինչպէս թարգմանած են Կիրակոս և այլք Բարբ — հրեշտակ: Այս իմաստիւք մկատելով հռովմէա — յունական ամուսն, պէտք է ըսել, թէ քրիստոնէութեան ձեռքով մտար գտաւ վերոյիշեալ ազգաց մէջ և եղև գործածակամ իրեն յատուկ ամուս: Բազմամթիւ ամծինք Ազաթանգեղոս¹ կը կոչուէին առ Հռովմայեցիս և առ Յոյնս, որոնք

1. Պառաւիւն, 'ի փողոցին Ս. Մանմայ՝ կայ արծանագրութիւնս Դ. Praef. T. D. V. A. Antonius. A. F. Agathangelus: — Բ. ի չռովս կը գտնուին հետեւեալ արծանագրութիւնքս. — 1.° M. Sergius C. L. Agathangelus. Fecit ex Patre Quinta. sibi et Ocesia C. L. Apate. Uxori: — 2.° T. Cæsivus. T. L. Agathangelus ex Patre quarto sibi et suis: — 3.° D. M. Myrineni C. Vari Agathangeli. Filia IC sita est. Vixit A. XXI: 4.° M. Pompili. M. L. Fortunati. Gram. Vixit an LXXIX. M. III. — M. Pompilius M. L. Agathangelus: — 5.° Dis. Man. Cossutiae Arescusae F. Cn. Cossutinus Agathangelus, ect: — 6. Առ Մոմարմի, Inscr. 35, կը յիշուի P. Carinatus Agathangelus:

ծանօթ եմ մեզ Փարրիկիոսի, Մոմսըմի և այլոց յումա — հռովմէական արծամագրութեանց հաւաքաբանութեամբքը: Կարինացի Ագաթամ զեղորս մասնատրապէս գրաւեց իմ ուշադրութիւնս, և ես շատ հեշտ մտտեալ եղայ ընդարծակ տեղեկութիւն մի գտնել մորա մասին առ Մոմսըմի և կամ այլոր, բայց ՚ի զուր: Կարելի է սասել, թէ մակա մունս Carinatus, Կարին անուամէմ ածանցեալ Կարինի բառին լոկ տառադարձութիւն եղած լինի, և թէ նա եկաց քարտուղար թագաւորին Հայոց. եթէ, ընդհակառակն, լատիններէմ Carina բառէմ ածանցեալ: Չերջիմ եմթաղրութեանմ ՚ի հաստատութիւն չումիմ փաստս ինչ եզրակացուցիչս, սակայն առաջնոյն ուղղակի կը հակասեմ, մախ զի հորա շիրիմ կամ արծամագրութիւնմ ՚ի Հռովմ կը գտնուի: Բ. Տրդատայ քարտուղարին համար գրուած է, թէ էր ՚ի քաղաքէմ Հռովմայ:

Գայտանոսի Դ. յէջ 80 կ'աւանդէ, թէ յաւուրս հալածանաց Դիոկղեսիանոսի և Մաքսիմիանոսի բազումք ՚ի հեթանոսաց դարձան և մկրտեցան ՚ի ձեռն Ս. Կղեմայ Անկիւրացոյ, զորս կոտորեց Դիոկղեսիանոսս. բայց մի ոյմ որուն անուն էր Ագաթամզեղորս, որ թարգմանի բարի հրեշտակ, փախստեամբ զերծաւ: Այլ յետոյ կապեցաւ և ածաւ ընդ սրբոյ հայրապետին ՚ի Նիկոմիդիա, և հրաշքով ազատեցաւ ՚ի մահուանէ: Ապա Մաքսիմիանոս ետ տամել զմա կապամբ յիմիսն քաղաք առ Դոմեսիանոս դատաւոր, և յետ պէսպէս տամշանաց իջուցիմ զմա ՚ի Տարսոն, և անտի յԱնկիւրիա, ուր և նահատակուեցաւ սրով, զոր առեալ հաւատարիմ կիմմ Սոփիա թաղեց պատուով: Արդ դիտելու եմք մախ, որ այս Ագաթամզեղորս էր Հռովմայեցի, և Կղեմայ ի Հռովմ եղած ժամանակ դարձաւ ՚ի քրիստոնէութիւն: Բ. Ս. Կղեմայ պատմութիւնմ իսկ շատ մնան է Ս. Լուսաւորչայ պատմութեան. զի երկրքեան իսկ ասին ՚ի մանկութեանէ յամծն արարեալ կմոջ հաւատացելոյ և բարեպաշտի, որ կը կոչուէր Սոփիա. երկրքեան իսկ ՚ի Հռովմ գացած. երկաքամչիւրին հետ սերտիւ կապուած է Ագաթամզեղորսը անուն: Ուստի կարելի է, թէ մէկուն պատմութիւնը միւսոյն անցած լինի, վերաբերութեամբ Հռովմայեցի Ագաթամզեղորսին. բայց թէ որո՞ւմ ձեռքով, այս յայտնի չէ:

Մեծանուն հմազէտն Յով. Դէ Ռօսսի՝ առ իս ուղեպատմէկ թղթովը կը ծանուցանէ մի այլ Ագաթամզեղորս, պաշտօնով մօտար, բայց կը յաւելու, թէ սորա ժամանակն և տեղին և ազգութիւնմ այն պէս որոշ է, զոր չէ մարթ համարել քարտուղար Տրդատայ: Լ. Ալլատիոս¹ ևս խօսելով զհռչակաբանում Լեպիթեայ՝ կը յիշէ զԱգաթամզեղորս ոմն, յասն. « Agathangelus (qui adversus Niceporum Gregorium scripsit pro Aristotile) Callistradi filius in « Narrationibus ». Eius verba descriptionis taedio fatigatus, ut animo recreeris, nec invitus, quia rara, et non-dum edita perleges ». Յետոյ այդ-Ագաթամզեղորսի « Պատմութեանց » Narrationibus զրքէմ հատուած մի ևս սէջ կը բերէ Լեպիթեայ ՚ի գովեստ:

1. Առ Փարրիկիոսի, Bibl. gr. edit. nuova, T. X, p. 551-824.

Արդ, այս վերջին Ազաթանգեղոս՝ եթէ նոյն համարինք ընդ մախա յիշատակելոյն ի Յ. Դէ Ռոսսեայ, և եթէ որիչ 'ի մմանէ, այս յայտ է, թէ լեալ իցէ ծանրակշիռ հեղինակութիւն մի առ Հոռոմն, զորմէ վիպէ և Լ. Ալլատիոս յերկասիրութեան իւրում: Արդ եթէ աստամօր յիշատակեալ Գալլիստրատոսը, առ Դիոկղետիանոսիւ կատարուած մեծատոհմիկ վկայիմ հետ նոյն համարինք, այնուհետև նորա որդոյն մասին գէթ ժամանակագրական անտեղութիւնը կը վերմայ, և չէ ինչ անկարելի որ քարտուղար ևս եղած լինի թագաւորին Հայոց և նորա հրամանաւ պատմութիւն մի ևս գրած ունենայ: Բայց թէ Գրիգորի գործոց և Հայաստանի դարձի պատմութիւնմ իւր այժմեան ձևով և ամբողջութեամբը, զոր ըմծայեմ մեզ հայերէն և յունարէն օրինակ մները, իցէ՞ թէ նոյնպէս նորա ձեռքով գրուած լինին. այս ոչ միայն առանց հաստատութեան, այլ և անկարելի իսկ կը թուի ինձ: Եւ պէտք է ասել, թէ ցայս վայր յիշատակուած Ազաթանգեղոսներու գոյութենէն՝ չէ մարթ հետևցնել Տրլատայ քարտուղար Ազաթանգեղայ գոյութիւնը:

Տոհմային մատենագիրք առ հասարակ, յԺԳ դարէն սկսեալ ցը վերջ կոյս Ե. իմ, կը յիշեն զԱզաթանգեղոս իբր քարտուղար և գրիչ Տրլատայ Պատմութեան. մանաւանդ Ջենոբայ պատմագրութեան Դ. օրինակն, որ դեռ բարդատութեամբ հրատարակուած չէ, իւր բազմապատիկ նորութեանց հետ՝ **Խաղաղարարութեան**՝ պատիւն ևս կ'ընծայէ Ազաթանգեղայ այսպէս. « Որ ունէր զխաղաղարարութեան պատիւ յարքայէ »: Որոնք որ Ազաթանգեղոսեան գրոց գաղտ միքը լաւ հետազոտած չեն և լոկ հեղինակական վկայութիւնը քսւ ապաւ կը համարին առ ամենայն, տոհմային մատենագրաց այս համածայն վկայութիւնս առին իբրև մի զօրաւոր և ամօխտելի ապացոյց անձնական գոյութեան և հեղինակութեան Ազաթանգեղայ: Սակայն մերուի ինձ ասել, թէ այս երևոյթն ոչ այլ ինչ է՝ բայց եթէ ծառայական հետևութիւն խորագրին գրոց « Ազաթանգեղայ » կամ նորա Յառաջարանին, և թէ այդ ժամանակէն և անդր, այսինքն է, Ե. դարու առաջին քառորդէն՝ ցերկրորդ կէս Դ. դարում ոչ ոք, թէ տոհմային և թէ օտարագգի մատենագրաց, երբէք ծանեաւ կամ կը յիշատակէ զԱզաթանգեղոս իբրև պատմագիր և հեղինակ « Գրիգորի գործոց և Հայաստանի դարձի պատմութեան »: Թէպէտ և եմ ոչ սակաւք որք այս անուն երկասիրութենէն հատուածս և եթ 'ը մէջ բերեն: Թորոնք զեղիչէ, զԵզմիկ, զՄեսրոպ և զՄահակ, որոնք քիչ կամ բնաւ առիթ չունեցան յիշատակելու զԱզաթանգեղոս, ինչպէս կարծեն ունանք: սակայն Բուզանդացին Փաւստոս, մեծն և հնապատումն 'ի պատմագիրս, որ, կարեմ ասել և օպացուցանել, թէ ամենէն ասելի օգտուեցաւ 'ի « Գրոց Ազաթանգեղայ » և նորա շարունակութիւնն եհար 'ի գրի, բնաւ չի յիշեր զԱզաթանգեղոսը անուն: Պէտք է աւագ աջօք դիտել այս երևոյթն և ոչ վարկպարագի բամիւք անցանել: Այս անձ խնդրոյն և նորա մասին աւարկելի դը.

1. Այս պաշտամանս մշամակութիւնը տես « յԱյրարատ » 3. 2. Ալիշանի, էջ 421;

ժուարութեանց պատասխանին յետածգելով, և մորա իսկական մտար միայն 'ի Ոկատի առնելով, այլազգ ուրեմն հարկ է լուծել զայն:

Արդ, իմ կարծիքով, յունա — հռովմէական 'Աγαθόγγελος անուան կամ բարդութեան առաջին մասի մշամալութիւնը մոյմ պահելով՝ ճγγեλλոզիմ հասար պէտք է ասել, թէ ճγγեλλա (ճγγելլա) բայէն ածանցած է, որ մշամակէ ~~---բ---~~։ ուստի միացնելով ճգածոց ածականը ճγγեղոց կամ ճγγեλλոց գոյական անուան հետ՝ կը լինի ոչ թէ բարի աւետարեիր, այլ ~~բ---~~ կամ աւետիր: Արդ այդ յատկացուցեալ անուան պայպէս վերլուծելէն յետոյ՝ կ'ըլնեսմ ասել, թէ « Գրոցս » յունարէն բնագրի հմագոյն խորագիրն կամ մակալ գրութիւնն եղած է 'Ιστορία του ἀγαθού ἀγγέλου կամ որ մոյն է, Եծճγγեλλոս. այսինքն է, « ~~Պ---~~ »։ կամ լաւ և, « ~~Ս---~~ »։ որովհետև յունական էմ մասնիկն և՛ բարի կը մշամակէ, և բազմաթիւ յատուկ անուանք ասով կազ մուած են: Սակայն Գրոցս հայ թարգմանիչն և կամ խմբագրողն, որուն ժամանակն և պարագայքը յետոյ պիտի ցուցնեմ, կամ բնագրին եղծուած լինելուն և սղագրութեան պատմաառաւ, և կամ ըստ սովորութեան ընդօրինակողաց ձեռագրաց, ադ ածական և գոյական զոյգ անուանք իրարու շարայարեալ գրուած լինելով, սխալ կողմէն առած և իբր յատուկ անուն մարդոյ՝ թարգմանած է « Ազաթամգեղայ Պատմութիւն », հակառակ մորա քովամալութեան և միւթիմ, որ աւետեաց Աւետարանին և Հայաստանի դարձին, և ոչ թէ Ազաթամգեղոսի կամ մորա պատմութեան վրայ կը խօսի: Արդ այս մեկնութեանքս, այսինքն է, վերոյիշեալ յունական եռաթիւ բառերու պարզ թարգմանութեանքը կը կազմուի և պէտք է որ կազմուած լինի հայերէն Ազաթամգեղայ գրոց վերամաղին. և այն պէս գեղեցիկ կերպով պատշաճած է այդ գրոց պարունակութեան ինչպէս գրուած 'ի մարմնի: Եւ ով որ այս մեկնութիւնս չի ընդունիր, գէթ զայս ստիպուած է ընդունել, թէ « Ազաթամգեղայ պատմութիւն » յետոյ ուրեմն ի ձեռն այլոց գրուած է և ոչ թէ 'ի միմ իսկ Ազաթամգեղոսէ, ե՞րէ գոյր. որովհետև Ազաթամգեղոսը չէր կրնար իւր պատմութիւնն անուանել զայն՝ առանց յաւելուածոյ այլոց բանից:

Այս կարծեացս 'ի հաստատութիւն՝ կամ դեռ ուրիշ արտաքին և մերքին ապացոյցներ: Յիրաւի, 'նիկողոս Գամասկացի՝ « ~~Կ---~~ » մէջ կ'ըսէ. 'Ο γάρ Οὐβάρας δύναται 'Ελλάδι γλώσση ἀγαθόγγελος: Ըստ սեծանուն արևելագոյնիմ Բիւնուֆի՝ անունս Οὐβάρας « est certainement un nom d'origine persan... serait exactement en zend hubara, et signifierait celui qui porte le bien, ou le porte-bonheur. Cette signification répond exactement à celle d' ἀγαθόγγελος; traduction grecque du nom persan d' Οὐβάρας ou Soebares, d' après Justin ».

1 Հրատարակութիւն Դիդոյի, Vie de César, III, p. 400,

Ապա կը դառնայ ապացուցանել, թէ երկաքանձիւրն իսկ զամուկներէն hubèreti բառէն կ'ածանցին, և քոչի աւերի կամ բարի անտելու գործողութիւնը կը նշանակեն. Quant à légitimité de cette formation, je l'appuie sur l'existence constatée du mot hubereti l'action d'apporter le bien. Voy. Nicolas de Damas, Vie de César, par N. Piccolos, D. M. Paris 1850, Addition, p. 88-90.

Բ. Ապացոյց կը համարիմ եւ այս բանին Ազաթամզեղայ գրոց Յառաջաբանի էջ 24 հետևեալ խօսքերն, զորս հայկազմ խմբագրող Գրոց գոգցես իմն յոչկամս ստիպած է մէջ բերել յասելն. « Ընթերցեալ զԹորգոմեայ ազգիս և զՀայաստան աշխարհիս աստուածապարզն աւերեաց Աւերեացի քարոզելոյ բանին », այսինքն է, զԱւերեացի: Եւ յիրաւի, Յառաջաբանն եթէ հեղինակին Գրոց համարիցի որք, և եթէ թարգմանողին կամ խմբագրողին, այս յայտ է, թէ մորա ընթերցածը Աւետարանի քարոզութիւնըն չէր կարող լինել, այլ քարոզութեան պատմութիւնը կամ անտիսը: Այս բանս խիստ յայտնի կը լինի յաշորդ բացատրութեամբս. « թէ որչափ կ'աւերեաց ընկալան (զԱւետիս Աւետարանին) և որպիսի արամբ »:

Արդ, իրն յինքեան այսպէս լինելով պսուհետև չէ ինչ դժուարին ասել, թէ ինչպէս Ազաթամզեղոս ամուսնն ըմտելական մի բան դարձաւ տոհմային մատենագրութեան պատմութեան մէջ: Հայերէն Ազաթամզեղոսի թարգմանիչը կամ խմբագրողն յունարէն բնագրի տիտղոսի սխալ հասկացողութեամբն՝ համարձակեցաւ առաջին անգամ ներմուծանել զԱզաթամզեղոս յատուկ ամուսն իւր մորակերտ և ինքնագիր Յառաջաբանին մէջ ևս, համդերձ մորա ազգաբնակութեան և ոյլ պարագաներով. զոր ոչ թէ մորա մասմաւոր Յառաջաբանէն կամ մի այլ յիշատակարանէ առաւ, այլ իւր թարգմանելի բնագրի լոկ յունարէն գրութենէն և Ազաթամզեղայ 89 իջն մակաբերեց: Աստի սարդեցաւ ապա Ազաթամզեղոս ամուսն մաս երկրորդ թարգմանչաց, այսինքն է, Մ. Խորենացոյ և Ղ. Փարպեցոյ պատմագրութեանց մէջ, որոնց, յետոյ ուրեմն, ծառայական մամուղութեամբ հետևեցան բոլոր յետագայ պատմագիրք:

Պէտք չէ բնաւ զարմանալ այս եղելութեանս վերայ, եթէ հայերէն Ազաթամզեղայ թարգմանութիւնը Մեսրոպեան նշանագրոց գիտէն տարիներով յետոյ եղած համարինք. այսինքն է 420-430. յորում ժամանակի Մովսէս դեռ աղածրի մամուկ էր, իսկ Ղազար տակաւին ծնած¹ չէր. այլ տարիներ անցնելէն վերջ հաւաքուեցան և առաքեցան ՚ի տար աշխարհս յուսումն յոյն և ասորի դպրութեան: Եւ երբ, մորա իմաստութեամբ առցեալ ժիր մեղուաց մման իւրեանց

1 Ղազարայ ծննդեան թուականը՝ մերձաւորապէս անկամի 440-443 ամաց մէջ: Գր. Խալաթեանց՝ յամին 1833 ՚ի Մոսկուա հրատարակուած գովելի երկասիրութեանը մէջ, որում վերմագիրն է « Ղազար ֆարպեցի և գործք իւր » . արդէն ապացուցել է զայս:

հայրենիքը վերադարձա՞, իրենց վարդապետներն վախճամաս՞ զըտան: Այդ ժամանակին, մէկ կողմանէ Ագաթանգեղայ յոյ՞ բնագիրը աչաց առջև չունենալուն պատճառաւ, միւս կողմէն այլ բազմադրով ամաց շրջանք և պէսպէս հակառակութիւնք վրայ գալով՝ թոյլ չտուին վերստին աչքէ անցնել զայն, ինչպէս առաջին թարգմանիչք աչքէ անցուցին Ս. Գրոց թարգմանութիւնն և ճշդեցին: Այլ հայերէն թարգմանութիւնն ինչ վիճակի մէջ որ գտան, ըստ այնմ ևս գործածեցին, համարելով զայն ամբողջապէս գործ քարտուղարիմ Տրդատայ՝ յեղեալ ի հայ, մինչևեւ իրօք ՚ի զանազամ և յամանուն հեղինակութիւններէ բաղկացած էր այն:

Երկու դժուարութիւններ կը թուին՝ ընդդէմ զինի զայս վայր պաշտպանեալ կարծեացս, Ա. « Ագաթանգեղայ գրոց լատիներէն և յունարէն օրինակներն՝ զորս ներածութեանս մէջ դիտեցի, և ՄԵ տափրաստէսի խմբագրութիւնը: Բ. Ջենոբ Գլակացիմ, որ, ինչպէս համարիմ ոմանք, յառաջ է ոչ միայն քան զժամանակ հայերէն թարգմանութեան Ագաթանգեղայ, այլ մոյն իսկ յունարէն բնագրի կազմութեամ: Արդ յերեսիմ զրութիւնս յայտսիկ կը յիշուի Ագաթանգեղոս իբրև յատուկ անուն հեղինակի գրոցս:

Առաջնոց լուծումը շատ հեշտ է. որովհետև ներկայ յունարէնն և լատիներէնը հայերէնի վրայէն եղած փոփոխ թարգմանութիւններ են, դարերէ վերջ կատարուած, յորոց համառօտեց ապա Մետափրաստէս իւր խմբագրութիւնն. այս՝ յետոյ պիտի սպառնացանմ: Ուստի մի և մոյմ վրիպակմ ինչպէս հայ թարգմանիչ ձեռքով կարոց մուտ գտնել հայերէն թարգմանութեան մէջ, այսպէս ևս հեշտեալ և բնականապէս մտաւ երկրորդ անգամ հայերէն Ագաթանգեղոսէն՝ յունարէն և լատիներէն թարգմանութեանց մէջ, մտնաւանդ եթէ յունարէն օրինակի թարգմանիչն ստուգիւ հայ եղած համարիմք: Երկրորդ, այնպիսի պարագամերով Ագաթանգեղոս անունը ուրեղած է անդ, որ հակառակ փաստ մը չլինելէն զատ՝ իմ կարծեացս մոր հաստատութիւն մի ևս կու տայ: Նախ և առաջ դիտելու է, որ այդ գրոց ճակտին վրայ առամծիմն գրուած է 'Αγαθάγγελος, և ապա անդէն կը յարի Πρόλογος 'Αγαθαγγελου, ἐν οἷς καὶ τὸ μαρτύριον τοῦ ἁγίου Γρηγορίου. Այս վերնագիրս, եթէ ճիշդ օրինակուած է՝ հայերէնի վրայէն եղած յունարէն թարգմանութեանն, երկու բան կը պարունակէ Ա. Πρόλογος 'Αγαθαγγελου, որ է մոյմ ինքն Ագաթանգեղայ գրոց առաջին մասի Տիտղոսը « *Ἐπιφανήσεως Ἐπιστολῆς* »: Արդ յոյ՞ թարգմանիչը կամ զարմանալով հայերէնի այդ անսովոր տիտղոսիմ վրայ և կամ Յառաջաբանն ևս ուզելով մէջ բերել, փոխանակ 'Ιστορία բառիմ Πρόλογος բառը դրած է: Բ: 'Αγαθάγγελος, ἐν οἷς καὶ τὸ μαρτύριον τοῦ ἁγίου Γρηγορίου է Տիտղոս հայերէնի երկրորդ մասիմ, որ է այսպէս, « *Ἐπιφανήσεως, Ἐπιστολῆς Ἐπιφανήσεως Ἐπιστολῆς Ἐπιφανήσεως* »: Սակայն առաջին բառը 'Αγαθάγγελος միայն կը համաձայնի հայերէնի « Ագաթանգեղոսիմ ». իսկ մնացեալիմ մէջ հայերէն և յունարէն օրինակաց տիտղոսները կը կը տարբերիմ յիրարմէ: Այս

բարեպատե՞ն տարածա՞մուծիւնքս առ արտարս՝ մերքին իմաստիւք կը համաձայնին, իմ կարծիքը վերստին հաստատելու: Եւ յիրակի, ի՞նչ կը մշամակէ յոյ՞մ օրինակին յետ գրելոյ 'ի յուղղական հոլով 'Աγαθόγγελος անդէն յարելմ էն օ՛հ 'ի '....., և ստորակիտի անցմիւր միւս մախադասութեան չա՛ռ տ՞ և այլմ: Այսպէս մակ հայերէնը՝ յետ գրելոյ յուղղական «Ազաթամգեղոս», անմիջապէս կը յարէ. «'Դարձ փրկութեան» և այլմ: Արդ ինչպէս յոյ՞մ թարգմանութեան էն օ՛հ բառերն եթէ 'Աγαθόγγελος բառէն անջատ մկա տեմք և 'Աγաθόγγελος յատուկ ամուսն յուղղական կարդանք՝ մոցա մրտքը կամ իմաստն ամհասկանալի կը մնայ, այսպէս և ես հայերէն թարգմանութեան «'Դարձ փրկութեան» բառերն, եթէ չվերաբերեմք «Ազաթամգեղոսի», և եթէ զԱզաթամգեղոս սեռական հոլովով չկարդանք: Ուրեմն պէտք է եզրակացնել, թէ էն օ՛հ բառերը զհայաստան կը յարաբերեն կամ զհայս. և 'Աγαθόγγελος բարի աւետիս կամ զաւետիս Աւետարանին, որոնք իմիասին գալով կու տան մեզ այս հասկանալի վերնագիրս. «**Բարի աւետիս** (կամ աւետիս Աւետարանին) հայաստան աշխարհի, և մահատակութիւն սրբոյմ Գրիգորի»: Արդ յունարէն Ազաթամգեղոսի Տիտղոսին, ըստ իմաստից, եղած այս թարգմանութեանէ՝ բացայայտ կերպով կը տեսնուի հայերէնի տիտղոսին հետեւեալ անյարմարութիւնը. «**Ագաթամգեղոս՝ Դարձ փրկութեան Հայաստան աշխարհի ըմդ ձեռն առն սրբոյ մահատակի**», որ և ուղղագրելի է այսպէս. «**Բարի աւետիս (Աւետարանին) հայաստան աշխարհի, և այլմ:**

Իսկ գալով Ձեմոբայ հեղինակութեանը, պէտք է ասել, թէ ոտու գիւ մորա երկասիրութեան մէջ երկիցս կը յիշուի յամուսնէ Ազաթամգեղոս. մախ յէջ 19, ըստ վեմետկեան հրատարակութեան, կ'ըսուի առ Ատորի եպիսկոպոստոմս գրուած պատմեմի մէջ. «Եւ դուք մի աղարտէք զսակաւ պատմութիւնս, կամ թէ **Ագաթամգեղոս** զայդ ոչ յիշէ, զի ես յառաջագոյն գրեցի քան զնա»: Երկրորդ յէջ 22, խօսելով Ս. Յակովբայ Մծբնացոյ քեռորդոյմ Գթաց թագաւորին վրայ կ'ըսէ. «Ձի սա էր որ եկմ 'ի պատերազմ 'ի վրայ Դիոկղետիսմոսի արքային Յունաց, որպէս **Ագաթամգեղոս** պատմէ զայստպիկ»: Աստ յայտնի հակասութիւն կայ սոյն երկու տեղեաց մէջ, և փոխադարձաբար մէկ զմէկ կ'եղծանեն: Յիրակի, Ազաթամգեղոսէն յառաջ գրող Ձեմոբը (եթէ իցէ Ձեմոբ), ինչպէս կարէր իւր գրուածքի մէջ իւր յետմորդ Ազաթամգեղոսի վկայութիւնը մէջ բերել. այս բանս ամհասկանալի է: Բ. Դիտելու է, որ առ Ազաթամգեղ չիք յամուսնէ յիշատակութիւն ոչ Դիոկղետիսմոսի ոչ հռչէի: Ուրեմն պէտք է, որ այս երկու տեղերէն մին ամհարազատ լինի. և իրօք ես չեմ երկբայիր այս առանձնաշմորհութիւնս երկրորդին ըմծայել և ասել, թէ այդ տեղին ուղղակի Մ. Խորենացիէն առնուած է, որ դմէ զհռչէ կամ զհրաչէ առ Դիոկղետիսմոսի: Սորա ամհարազատութեան մի այլ մշամ է և՛ այն, զի միշանկեալ տող միէ և բնաւ կապ չունի ոչ մախընթաց և ոչ յաշորդ բանից հետ: Երրորդ, պատմականօրէն իսկ մտածելով Գթաց թագաւորին հռչէի՝ հոլովմայ վրայ

արշաւելու վէպը տոհմային և այլ ընդ այլը աւանդութեմէ մի առ մուած և օտար ՚ի օշնարտութեմէ համարելի է, և ոչ երբեք առ թագաւորութեամբ Գիտղէտիամու կատարուած իր. զի ոչ որ ՚ի ժաւ մանակագրաց հոռոմոց յիշէ զայն: Յով. Մալալս և Սիմկելլոս կը յիշեն արշաւանք ինչ Սկիւթացւոց և Գթաց ՚ի ժամանակ Պոռոսի, բայց ոչ եթէ ՚ի վերայ հռովնայ այլ ՚ի սահմանս հռովնական պետութեան, անցեալ ընդ Խսորլսս, բայց սաստիկ կտորածիւ ցիր և ցամ կացուցեալ ՚ի հռովնայեցւոց ամտի:

Մակայն յամուռն Ջենոբայ մէջ բերուած առաջին տեղւոյն վրայ իսկ տարակուսելու բամաւոր պատճառներ կան, և ես չեմ ուզեր առանց ամոր կեղծուպատիր դիմակը վար առնելու՝ մերմուծանել իմ երկասիրութեամ մէջ: Եւ յիրաւի, Ջենոբ իւր պատմութիւնը գրած ժամանակ աւ Ատորիս, կամայն է, թէ Աշաթանգեղոս (որ իբրև գրիչ կը յիշուի) գրած էր իւր գիրքը և կամ ոչ. արդ եթէ գրած չէր (ինչպէս նա կը վկայէ), ուրեմն Ջենոբայ այս խօսքերը, թէ « Ազաթանգեղոս զայդ ոչ յիշէ » ամենևին նշանակութիւն չունին. արդ բան մի չի գրողի վրայ ոչ Ջենոբ և ոչ իսկ Ատորի եպիսկոպոսերմ՝ առ որս կ'ուղղէր նա այդ թուղթը, կարող էին տարակուսիլ. մանաւանդ զի նոքա ազգաւ և աշխարհաւ օտար գրով և ոչ իսկ Ազաթանգեղոսի ո՞վ ըլլալը գիտէին: Ուստի Ջենոբէմ մէջ բերուած դժուարութեան հերքումն ընդարձակագոյն ասպացուցութեան, կարծեմ, թէ պէտք չունի. իսկ Ազաթանգեղոյ մասին եղած զաղտնիքն և իմ կարծեանցս հաստատութիւնը՝ դեռ անելի պիտի պարզուի նորա գրոց Յառաջաբանի քննութեամբը:

Գ Լ Ո Ւ Խ Բ .

Ագաթանգեղոյ Էրոց Յառաջաբանն և անոր նորանշան հանգանակն. — Անհարպառափեան Յառաջաբանին և նորս հետախնան բնադրոշմը. — Նոր սարսույց անհարափեան արեւարարի Ագաթանգեղոյի:

Առանձին գործ է տարրաբանից, վերլուծել զմարմինս՝ նոցա նախ նակամ տարերքն իմանալու համար. հոգեխօսին՝ վերլուծել զժամօթութիւնս մասց՝ առ ՚ի հասու լինել կարողութեանց հոգւոյն. հմազի տիմ՝ որոնել զնիւթ, զերանգ և զտիպս յիշատակարանաց. հուսկ ուրեմն պատմաբանին՝ քննել զանցս և զարարուածս, մարդկութեան անցեալը ճիշդ ներկայացնելու համար. և քննադատին՝ զամենայն միամտեանց: Ուստի ես ՚ի մուտս քննադատութեան գրոցն Ազաթանգեղոյ՝ ստիպուած եմ նոյնպէս վարիլ որովհետև այս գործս յիմքեան կը բովանդակէ ոչ միայն նշմարս և նշխարս հնոյն Հայաստանի, այլ և զանճամեծ անցս դարապատում ժամանակի և վաղըմ չակամ հանգստանաց ազգիս հայկազեան, զորս կերպարանափոխ արարին մերթ առանձնակամաց ձեռքեր, և մերթ այլ կրօնական,

քաղաքական և հասարակային ազդեցութիւնք: Հարկ է անաչառ քննել զայն՝ Յառաջարկմէն սկսեալ ցվերչարանը, մորա մախմական տարերքը կամ աղբիւրքն յայտնելու աղաքաւ, 'ի մէջ այնքան եկա մուտ տարերաց: Առ այս կը ցանկայի, որ մաս իմ պատուարժամ ըմբերցողներս առանց լրտեսի կեղտ ամուսնի անարժանօրէն միայն հարկամէլին ազմուսխոր մտօք, հետեւելով ինձ քայլ առ քայլ յա մեմայն 'ի դիտողութիւնս, մասնաւոր թէ, աւելի անաչառութեամբ և աւագ այօք քան զիմս դիտէիմ թէ՛ իմ և թէ՛ քննադատութեանս եմթարկուած իրաց վիճակն, որոնց կ'ուզեմ աւելի խօսել տայ՝ քան ամձամբ խօսում և ճոխաքան երևել. որպէս զի մի գուցէ իրաց բնական վիճակէն թիւրած և անհասկանալի այլոց լիմիցիմ: Խոնարհաբար կը յամձեմ իմ ըմբերցողացս և զայս յետիմ փա փաք սրտիս, որ վաղահաս վճիռներ տալէն աւելի՝ հետեւէին ըմ թացիցս մինչ 'ի վախճան քննադատութեանս. և ուր ես կը դմեմ կմիք գործոյս՝ ամտի սկիզբն առմէր իւրաքանիւր քմտասէր իւր դա տակճոյն. և հաճէր ծանրախոր վարման հետ՝ զուգել մաս մերող դամտութիւն առ իմս տկարութիւն. որ ուրիշ մպատակ չունիմ՝ բաց 'ի խուզարկութեմէ՝ ճշմարտութեան և ծառայելոյ ազգես, զոր կը սիրեմ ոգւով չափ:

Ազատամտութեան գրոց յունարէն թարգմանութեան Յառաջարանը շատ պարզ է. մորա ուղեմարտութեմէն և մաւարկութեան այլաբանական ձևէն իսկ յայտնապէս կը տեսնուի, թէ ստուգիւ հայերէնի Յառաջարկմութեան համառոտութիւնն է, կամ մորա մի մասն ևեթ: Ոչ միայն մոր տեղեկութիւններ կամ պարագայք չյայտնեմք, այլ մասնաւոր, որ աւելի զարմանալիմ է, Ազատամտող սի, Տրդատայ և Հովհաննիսանց մասիմ եղած բոլոր տեղեկութիւնք կը պակսին: Այս՝ կարևոր և հերաքրքրական կէտ մի է, և մեծ ուշա դրութեան արժանի՝ հայերէնի Յառաջարկմին քննութեան համար: Յիրաւի, այս վերջինս, այսինքն է, Ազատամտողսեան գրոց հայերէնի Յառաջարանը, թէպէտ և լեզուաբանական հայեացքով՝ հայկաբանից համար գամձ իմն է մեծագին, սակայն պատմաբանից և քննասիրաց տեսութեամբ՝ ծով իմն երեւի մրկածուի, մեծ և ըմ դարձակ, յորում մերթ սոսկալիթխար կէտերու մման խոչոր հսկասութիւնք ասացուածոց, կրկնաբանութիւնք, արևելեան ճապաղ մկարագրութիւնք, և մերթ գոց խեցեմորթներու պէս ժժանակաւոր և խիտ առ խիտ օրինակներ և պէսպէս դիպաց իրարու սմպարիբ ակնարկութիւնք կը վխտան. այս ամեմայն անարմար կ'երևին ոչ միայն այն գրոց ծրագիր պատմութեան (ի բաց համելով զըմդարձակ վարդապետութիւնն) այլ և պատմագրիմ, որ հռովմայեցի անուանուած է: Արդարև, իմչ կը մշամակէ ասելմ յէլ 19. « Արդ հրաման հասեալ առ իս ոմն Ազատամտողս ար ՚ի Գործիս Դեմն Հառվաճայ, և վարժեալ հայերնի արուեստիւ, Հառվաճայերէն և Կոստանդնուպոլսիս արդարութիւն ». իսկ յէլ 24. « Ընկերցեալ շիրքարձայ ազգիս շէյաթս արտաշեստի » և այլմ: Ձիմչ քան զայս հակասական, լինել ազգաւ և հայրենեօք հռովմայ քաղաքացի և միամգամայն թորգոմացի և

Հայ. դիտելով, որ « ազգի և աշխարհի » վրայ լքուած դիմորդ յօղը ոչ եթէ այս կը մշտնակէ, այլ ի՞նչ. և այս բանս ամտի իսկ քաջա-
յայտ է, որովհետեւ այդ խօսքերէն յառաջ չիք բնաւ իշխատակու-
թիւն թորգոմայ տամը կամ Հայաստանի, և թէ այն ժամանակ
կարելի էր այդ դիմորդիւ հասկանալ այս ցուցականը՝ եթէ մա գէթ
իւր երկասիրութեամ ճակատը դրոշմած լինէր Պատմութիւն թորգոմայ
ազգին կամ Հայաստան աշխարհի: Երկրորդ յէջ 20, զՀայաստան
իրեն հայրենիք կ'ամուսնէ, որով ամենայն տարակոյս կը վերնայ:

Սակայն դեռ աւելի մեծ են քան զժայռս Սկիւղայ և Քարիւղայ
հետեւեալ բացատրութիւններն, յորում կ'ալեկոծի գրիչն Յառաջաբա-
միս: Արդ մա կը ծանուցանէ մեզ յէջ 22. « Ու երէ ՚ի գիւ համբար-
աց դեղինացեալ ճարեմագրել, այլ մեզէն իսկ ակամատես և առըն-
թերակայ գործոցն ». իսկ յէջ 20, թէ « Արդ հասնայ առ իս հրաման
'ի մեծ արքայէն Տրդատայ, կարգել ՚ի յեռարկելն Նշանագրեալ
ժամանակագրացն պարտել մախ զհայրենեաց գործս »: Կարծեմ թէ ա-
առանց երկիւղի վրիպամաց կարող ենք յայսցանէ եզրակացնել, թէ
ինչպէս Հռովմայ քաղաքացին և իւր հայրենի արուեստիւ, այսինքն
է, հռովմայերէն լեզուով գրողը չէր կարող լիմել միանգամայն յազգէ
թորգոմացի կամ հայ, այսպէս ևս մորա Յառաջաբանը, եթէ գոյր,
պէտք չէ շփոթել սորա եկամտաբանից հետ: Յիրաւի, չկայ յոյն
կամ հռովմայեցի մեզ ծանօթ պատմագիր մի, որ այնպիսի ծրագիր
պատմութեամ փորքիկ մարմնոյն վրայ՝ սոյնօրինակ անհեթեթ գրուի
մի յօրած լինի, զոր չգիտեմ թէ հրէջ ամուսնելու է, թէ ընդհակա
նակն, մորահրաշ դէպքի մի կամ ժամանակի ծնունդ. և թէ արեւ
լեան՝ պարսիկ կամ հայ հաշակը միայն կարէր գրկել և գրուել զայն:
Չայս իսկ դիտելու ենք, զի աստ կարի կը դրուատի Տրդատ, իսկ
յրմթացս պատմութեամ, մախատակոծ բացատրութիւնք ևս կը լինի
մմա:

Արդ, յետ ուշի ուշով քննելոյ այդ եռապատում եռազլխեան Յա-
ռաջաբանը, պէտք է ըսել, թէ կամ է ամբողջապէս գործ թարգ-
մանի և խմբագրողի գրոցս. և կամ բաղկացեալ է յերկից համառո-
տագիծ Յառաջաբանութեանց, յորոց առաջինը, այսինքն՝ է, 18
իջէն « Արդ ջամ յամծին կալեալ » պարբերութեան մկսեալ, մինչև
ցէջն 23 « աստուածատուր շմորհօքն տուելովք » բարբրով վերջա-
ցած պարբերութիւնը, կը վերաբերի Ագաթանգեղոսեան պատմու-
թեան Ա. գրքին: Երկրորդը, որ կը սկսի յէջ 24, « Հնթերցեալ գթոր-
գոմեայ ազգիս », և կ'աւարտի յէջ 26, « Նոցա օթևանս պատրաս-
տեաց », կը վերաբերի Բ. գրքին կամ Հայաստանի դարծի պատ-
մութեամ, զոր ընդարձակ վարդապետութեան մերմուծողը ստիպուած
է առաջնոյն հետ միացնել: Իսկ մնացածն՝ սեփական բնադրոշմն մի

1. Նշանագրուած ծնունդովութիւն բառերն այլ ինչ կը մշտնակեն,
ըստ իս, քան հռովմայեցի մօտարաց համառօտագրութիւնը. սակայն, եթէ
այնպէս իսկ առնուենք, ժամանակագրաց բառովը կը ցուցնէ հեղինակս,
թէ յայլոց առնելով կը պատմէ զգրեալս. որով մմայ միշտ հակա
սահման ընդ առաջին բացատրութեամ:

չումի, այլ Ազաթանգեղայ գրոց խմբագրութեան, թարգմանութեան և այլ ժամանակակից պարսպաներ կը յայտնէ: Առաջինը՝ **Նոր-բան-նի-ն** իմ համարելի է թերևս ազաթանգեղոսեան յոյժ բնագրին, բայց ոչ երբէք Յոյժ կամ հետվմայեցի Ազաթանգեղոսի մի, այլ ամանուն հայկազմ հեղինակին, որոյ մշմարտութիւնը յետոյ ակնեղև պիտի դնեն: Իսկ միւսներն առհասարակ՝ գրոցոյ խմբագրութեան և թարգմանութեան ժամանակ յօրինուած և ներմուծուած բաներ են, որոնք ազաթանգեղոսեան գրքին բովանդակութեմէն աւելի նորագիտիմ, թարգմանութեան և այլ համագամներ կը պարունակեն: Եւ ստուգիւ, այսպիսի մի եղելութեան յայտնի ապացոյցը կը տեսնենք Գրիգորի կարծեցեալ ընդարձակ **Վարդապետ-նի-ն** 378, 400, 402, 416, 417 և 418, էջերում, որոնց անծամօթ նեղիմակմ թէ հոխիսիսեանց և թէ իւր ժամանակակից հայոց մասիմ մամ համագամներ կը յայտնէ, զորս յետոյ պիտի տեսնենք:

Յիրսուի, այս բաներս դեռ աւելի հաստատում և բացայտ կերպով կարելի է ապացուցանել, հետեւեալ բացատրութեանց հակադրութեամբ: Բնագրի կարծեցեալ յառաջաբանին հեղինակը կ'ըսէ, թէ իմքը հրամանաւ թագաւորիմ և ոչ թէ յիմքենէ շարժեցաւ գրել իւր նրկասիրութիւնիմ. իսկ յէջ I, պարբերութեան հեղինակն, ընդհակառակն կը ծանուցանէ, թէ « Ըղծիւք ըղծացեալ » և իմքնայօժար ձեռն արկ իւր գործիմ, հանգոյն ծովայած վաճառակսմաց, որք շահավաճառի համար թիւր նեղութիւն և վտանգ ակնկոծութեան սիրով յանձն կ'առնու, իրենց ազատոհմիմ համար, զամոնք բումաւոր հարկահամաց ձեռքէմ ազատելու աղագաւ: Յէջ 13 կ'ըսուի. « Եւ մեր ջան յանձն կ'ալեալ... **առեալ դահ երկն-չէ**, և տուեալ զգեղեցկադիր յարմարումն պատմութեան...: Վասն զի 'ի **խորէր ելեալ և խորէր** 'ի մէջ բերեալ զկարգ պատմութեան ըստ ժամանակի իրացն եղելոց »: Արդ այս բացատրութիւնքս, այսինքն և, զվճարումն մահու յանձն առնուլն և 'ի խնդիր ելանելն պատմութեան ժամանակակից Ազաթանգեղոսի համար անհասկանալի են և առանց նշանակութեան. որովհետև մա բոլոր իւր պատմագրութեան դիպաց ակամատես և ակամջալուր եղած կը համարի. ուստի ոչ մահուան վտանգ և ոչ այլ խուզիւք փնտռելու հարկ կայր, թող թէ 'ի « Վաճառ հանելու » պէտք առ ունկնդիրս իւր, որոնք քաջ գիտակ էին պմ իրաց: Յէջս 11, 12 և այլուր յոգնակի դիմօք կը խօսի, « **որեանեմ, Նաեալ, որեպեցալ, մեք, դեղ, 'ի մեջ, առ մեք** ». մինչդեռ յէջ 19 և 20 նգակի դիմօք կը խօսուի յասելն. « Հրաման հասեալ **առ իս, հասեալ առ իս** հրամանի »: Յէջ 26 կ'ըսուի. « **Ձերեալ 'ի կընդ առ զառայն և յառայն հեռաբնալս, քորեալ** » և ուլն: Արդ այս և այսպիսի դեռ ուրիշ բացատրութիւնք, ուրիշ բան չեն ընծայեր մեզ՝ բայց եթէ զթարգմանիւս և զխմբագրողս Ազաթանգեղայ գրոց, որոնք անմիջապէս զկնի գիտի գրոց՝ մաւարկեցին յաշխարհս հեռաբնակս. այսինքն է, յԱղեքսամդրիւս, յԵղեպիւս, յԱթէնս և 'ի Բիւզանդիոն, ոչ միայն ուսանելու համար, այլ մաս յունարէմ բնագիրներ գտնելու և զամոնք 'ի հայ բարբառ թարգմանելու, ըստ ասելոյ Կորեան. յո.

րոց մին եղաւ ամշուշտ և Ագաթանգեղայ խմբագրութեամ ասլ և այլ մատուռքը 'ի մի հաւաքողմ, որոմք՝ իսկըբամ ամը թերևա առամծիմ ումէիմ իրենց գոյութիւնը:

Իսկ յ13 իջէմ, երկրորդ պարբերութեամբ սկսող մասն, որում սկիզբն է « Իսկ հոգևորացն առաքինութիւն » մինչև ցէջն 18, կը մերկայացնէ մեզ ուղրակի սրբոց Հովսիսիմեանց վկայաբանութեան Յառաջաբանը, կամ լաւ ևս ըսելով, յաւուրս Մ. Մամակայ Գարթնկի մոցա մշխարաց գիւտիմ և փոխադրութեան առթիւ եղած մեքրողեմ. այ մի մասն, զոր գրեց եռամդում ոմն յառաջիմ թարգմանաց. որում մմանեցան ապա Մ. Խորենացի և Կոմիտաս Կաթողիկոս: Յիրպի, այս բանն ամտի իսկ յայտ է, զի համառօտ վկայաբանութեան հեղիմակն, եթէ յոյմ Ագաթանգեղոս եղած համարիցի որ, և եթէ հայագգի ոմն, չէր կարող առանց անտեղութեան պայպիսի մի ճոխ մեքրողեան ընել: Իսկ եթէ ընելու ևս լիմէր, հարկ էր մայի ծաւուցանել յամուանէ իւր մեքրողենի միւթը կազմող գէթ գլխատրամծը, որպէս զի յետագայք կարող լիմէիմ հասկման, թէ ոյք եմ զրրս դրուատէ մա: Իսկ, ըմբհակառակն, գրոցս Յառաջաբանի մէջ չիք յամուանէ յշատակութիւն Հովսիսիմեանց, ոչ յառաջ և ոչ յետ մեքրողեան բամիցն: Ուրեմն, պէտք է եզրակացնել, թէ այլ ոմն եղած է հեղիմակ այս Յառաջաբանիս, և թէ այդ Յառաջաբանը բողոքովիմ ուրիշ մի այլ առթիւ կազմակերպուած է, և ոչ թէ Հովսիսիմեանց առամծիմ վկայաբանութեան և կամ սագաթանգեղոսեան յումարէմ բմագրի գրութեան առթիւ:

Երկրորդ, բաց 'ի Դ. Փարպեցոյ և 'ի Մ. Խորենացոյ, Ս. Սահակայ և Մեսրոպէայ վարաց անծանօթ բայց ոսկեգրիչ հեղիմակն իսկ ագաթանգեղոսեան գրոց Յառաջաբանի վերոյիշեալ կրկիմ կէտերն թարգմանաց ուսումնական մամապարհորդութեան և Հովսիսիմեանց մշխարաց փոխադրութեան մասիմ հասկացած և բարգաւանած¹ է:

1. Հայկ. Մոփերաց Բ. հտ. յէջս 14, 15, 17, 18, 37 և 38, մշամագրոց գիւտն յիշելէմ վերջ՝ կը խօսի թարգմանաց վերայ, յասելմ, թէ Մ. Սահակ և Մեսրոպէ «Առաքեցիմ զմոսս յագգս և 'ի լեզուս օտար գաւառաց ուսանել զիմաստութիւն: Ամենքեան գումարէիմ, համդերծէիմ, յուղի ամկաւնէիմ, երկայմածիգ մամապարհորդէիմ, 'ի ծովս ըմթամայիմ, 'ի թևս թեթևս թուչէիմ, յերիվարս փայտակերտս ելամէիմ, լայմալամջս ըմբռնէիմ, զխարսզամս օգատարածս յածէիմ, 'ի սասմուտ դաշտս ամհաստատս արշաւէիմ, զմահ քամ զկեանս միշտ ըմտրէիմ, ամերևոյթ մպատակի ուշ ումէիմ, 'ի վաստակս և 'ի ջանս ժրամայիմ, կրթելով վաստակելով պատրաստելով զամծիմս 'ի յերկս օգտակարս, և 'ի գործս շահաւէտս, ոմամք գտառից գծագրութիւնս շահատրեալ, ոմամք զիմաստս հաւաքեալ: Եւ այսպէս ջամայիմ, արիամայիմ, խիզախէիմ, պատրաստելով, կուտելով բեռիմս դժուարակիրս, զգրեանց բազմութիւնս և զուսումն իմաստութեան, բազմաց բաղձալիս: Եւ կայիմ հասամէիմ մեծաւ ուրախութեամբ յաշխարհս Հայոց, վաճառակամք հոգևորք, փարթամացուցիչքմ եկեղեցւոյ, խրախացուցիչքմ մամկանց Միոմի, սիրացուցիչքմ բազմախումբ ժողովրդոց, զարդարիչքմ հոչակահամուէս տօմախմբութեանց, ումելով ըմդ իմքեանս բեռիմս շահաւէտս և արդիւմարարս, մարգարիտս գեղեցիկս և ակամս պատուականս:

Այսպիսիք էիմ վարք երամնելացն, սրբոյմ Սահակայ և մեծիմ Մես

Արդ, Խորենացիի և Ղազար¹ մմանել մմանած եմ ազաթանգեղոսեան գրոց Յառաջաբանին, բայց մեզի ծանօթ երկասիրութեամբ իւրեանց ոչ ոք 'ի սոցանէ կարէ լինել հեղինակ այնորիկ: Յառաջ բանիս հեղինակը՝ թէ՛ տիօք և թէ՛ հեղինակութեամբ երիցազոյն ոմմ է, որուն հօզորագոյն ազլեցութիւնը կրեցին մեծամում պատմագիրքս անգամ, և որ գրեց Ս. Սահակայ և Մեսրոպայ մի այլ ընդարծակազոյն պատմութիւն, զոր ծանուցանէ Սոփեյլքիս վերոգրեալ տղերուն բանաբարն, ասելով յէջ 37, թէ « Առաւել ևս քան զայն զոր գրեալ է 'ի Կարաբեայ Պարսիէան մոցա », այսինքն է, Սահակայ և Մեսրոպայ:

Իսկ, թէ ո՞վ արդեօք գրեց այդ կատարեալ պատմութիւնը, Կորինո թէ Եզնիկ, Խոսրով թէ Մամբրէ. չկարեմ հաստատուել: Թովմաս Արծրունի պատմական երկասիրութիւն մի կ'ընծայէ վերջնոյս. բայց չի ծանուցաներ զայն յանուանէ: Անյայտացած գրչագրաց ցուցակի մի մէջ՝ կը հանդիպիմք, Պարսիէայ Մարգրէի վերնագրով երկասիրութեան մի. բայց չէ յայտնի, թէ 'ի Ս. Սահակ և 'ի Մեսրոպ, եթէ յայլ ինչ: Ստեփանոս Ռօշքեան՝ իւր բառարանին մէջ հետեւեալ պատմական հատուածներս մէջ կը բերէ. « Ըղծիցմ իւրեանց փափաքամաց հասին սուրբքն. — ընդ այնքան ժամանակս ոչ փտեցան մարմինք սրբոց », որունք աւելի սրբոց հովիտիմեանց կը պատշահին, և եմ մման բանիցմ Ազաթանգեղոյ, որ յէջն 170:

ըովբայ..... Սոքա ամուք հաւատոյ, սիւնք եկեղեցոյ, պարիսպք պահպանութեան հաւատացեալ ժողովրդոց, առաջնորդելով 'ի շահեղ սարդարութեան: Սոքա տունկք ամմահութեան՝ արմատացեալ 'ի դէպ ժամանակի զմմանակի պտուղն ոգեկեցոյց, որոյ կերակուրն մմայ 'ի կեանսմ յաւիտեմից: Սոքա պսակք եկեղեցոյ և պարծանք մագնիք որդւոց մօր Սիովիբ բազում հարս 'ի փառս ածել, համարծակապէս առ Աստուած, ասելով. Ահաւասիկ ես և մանկունք իմ՝ զոր ետ ինծ Տէր: Սոքա արքեւրք եղեմարուրք 'ի շնորհաց Տեանմ յառաջեալք՝ արբուցանելով զբանակամ երկիր ծարաւուտ կեմդամակամ վտակօք, որոյ միանգամ արբեալմ՝ երկրորդին ոչ կարօտի: Սոքա դայեակք Գոգևորք գորովագութ սիրով ստեղծիայ Սիոմի, լոյս շամբելով կերակրելոցմ, որք ոչ միայն լուսաւորեալք աշակերտելոցմ անծինք, այլ և լուսատուք յոլովից խնդրողաց: Սոքա օրիորդք երկմից արքային անթիւ կուսանաց անծինս առթելով թագաւորին ամմահի, առատաբուխ վարդապետութեամբն զորս յորդագոյն հոսէին իբրև զԳեղաթ և զԱրածանի: Սոքա զտակք գրոյ իմաստից արկապետացմ սուրբայից երկարօգի տառիցմ վեհից, որով զանտարբմ տարբացուցին և զանմիւրն 'ի միւթ յեռեցին և զամմարմինմ՝ ընդ մարմնոյ կապեցին »:

Արդ այս տողերուս հեղինակ եթէ Սկևռացի համարինք և եթէ ոմմ 'ի թարգմանչաց, Ազաթանգեղոյ գրոց յառաջաբանին և սրբոց հովիտեանց մերթողեան ճառի մի ծառայական հետևողութեամբը գրած է: Այս բանս վերջնութեան մախաղասութեմէն իսկ կը տեսնուի, ուր « Սոքա եմ օրիորդք երկմից արքային և այլմ » խօսքերը, որք մոցա համար բուռած եմ կը պատշահեցմ Սահակայ և Մեսրոպայ:

1. Զգիտեմ թէ Գր. Խալաթեանն իմչ հիմամ վերայ հաստատուած կ'ըսէ (Գ. Փարպեցի և գործք մորա, Մօսկուս, 1883, էջ 116) թէ. « Զորմէ (Յառաջաբ. Ազաթ.) ոչինչ ակմարկէ Ղազար »: Միմիւրն մա Գ և Դ գլ. էջ 9 և 10, և Ե գլ. էջ 15, 17 և 18 մմանածայն հատուածներ ևս մէջ կը բերէ Յառաջաբանէ անտի:

Արդ, ազաթամզեղոսեան Յառաջաբանին ցայս վայր եղած քննութեանէն իսկ ոչ մի դրական փաստ յառաջ չի գար 'ի մպաստ Ազաթամզեղոսի անձնական գոյութեան և Տրդատայ քարտուղարութեան. այլ ըմբռացք իրաց զլիտվիմ այլազգ են քամ զոր ցայսօր համարեալ կարծէաք: Եւ ստուգիւ, այս բանս՝ յետագայ մասանց քննութեան մէջ դեռ աւելի ակններն պիտի տեսնուի, զորս կ'ուզեմ հետ զինտէ բարգաւանել:

Գ Լ ՈՒ Խ Պ.

Քննութեան առաջին քննութիւնաց յառաջէն Ազաթամզեղոսի և թերէ գոն հայերէնի. — Գառաշիբի և Սոբիւրիբի կարծիքն և նոցա անհասարակութիւնը. — Այս էն գլխաց նախին աղբիւրն և հետեւիւնը. — Յառաջէն լարգիւնի խաղացած դերն. — Յառաջէն Ազաթամզեղոսի զհայերէնը, և հայերէնի զյառաջէնը լրացնելու է:

Ազաթամզեղոսեան պատմութեան հայերէն օրինակին սկիզբը շատ պակասատր է. այնպէս որ, սորա Ա. գլխահամարը կը թուի համապատասխանել Լամզուայի վերոյիշեալ հրատարակութեան 9 §. գլխահամարին: Արդ հայերէն օրինակի սոյն թերիմ և հայերէնա սիրաց հետաքրքրութիւնը կը լեցնէ յոյմ օրինակն իւր իմնաթիւ գլխահամարներու մէջ, որում պակասատր պարբերութիւնքն այլ Լազարդի մոր հրատարակութիւնը կը լրացնէ: Դարձեալ պէտք է ծանուցանել, թէ սորա Յառաջաբանն հազիւ թէ կէս երես գրուած է: Նա առանց Ազաթամզեղայ մասին եղած տեղեկութեան, հայերէն Յառաջաբանութեան առաջին տողերն և վաճառաշան մաւարկութեան հսկիրճ խօսքերը մէջ բերելով, կը ծանուցանէ իւր ըմբռացանելեաց՝ անցնիլ 'ի ծով անդը Հայոց պատմութեան: Այս մորահրաշ երևոյթս կը ցուցնէ, ըստ իս, թէ մոյմ իսկ այս գրոցս յունարէն թարգմանուած ժամանակ Ազաթամզեղայ գոյութեան մասին տարակոյսներ յայտնուած էին. և թէ առ Յոյնս եղջերուաքաղ իմն համարուած էր հայ մատնագրաց մորա անձնական գոյութիւնը և Յառաջաբանը. այս պատճառաւ իսկ թարգմանիչը լաւ վարկաւ 'ի բաց թողուլ զայն՝ Յառաջաբանի սեթևեթեալ հատուածովք իմիասին:

Պարթև — Արշակունի հարստութեան մեծամալուն, աշխարհակալութեանն և 'ի չորիս զիւղս բաժանուելուն, այսինքն է, 'ի գահն Պարսից, Հայոց, Հնդկաց և Մասքթաց կամ Կովկասային ժողովորոց, մասին մեզ մատակարարած մորա տեղեկութիւնքն թէպէտ և համառօտ, թէպէտ և մթին, սակայն մեծ արժէք ունին: Այս գլխաց մէջ տեղն 'ի տեղ, չասեմ գոհացուցիչ պատճառներով, պատմուած են Մասանեան հարստութեան վերականգնումն 'ի ձեռն Արտաշրի, և կործանումն պարթևական հարստութեան մահուամբ Արտաւանայ: Աստ ակներև

կը տեսնուին վերջնոյս պարտութեան արդետալի պարագամերն, և առաջնոյս յաղթութեան զօրեղ ազդեցութիւնն և տիրապետութիւնը շրջակայ ազգաց և աշխարհաց վրայ, որոնք ցայմ վայր կային ըմբծով Պարթև և Արշակունի իշխանութեանց:

Արդ, այս կարևոր մասը, որուն բացակայութիւնն այժմու հայերէնի մէջ մեր մտքերն 'ի պէս պէս կարծիս կը տարուբերէ, կը գտնուէր արդեօք Ե. դարում, նոյնպէս հայերէն Ազաթամզեղոսի կամ գէթ մորա յունարէն բնագրի մէջ: Մ. Խորենացի կարդացել էր մոցա միոյն կամ միւսոյմ մէջ, եթէ ոչ:

Հարցմանցս ուղղակի պատասխանելն առաջ, դիտելու է, որ այժմու յոյն օրինակի այս մասի իսկ եթէ չունենայինք դիմացմիս, դարձեալ կարելի էր փոքր 'ի շատէ ստանալ մորա մէջ պարունակուած տեղեկութիւններն, բնեւելով մաիս հայերէն օրինակի Ա. գլխահամարին մէջ պարունակեալ ըմբռնած տեղեկութեանց: Երկրորդ, Մ. Խորենացոյ Պատմութեան Բ. Գրոց Կէ, ԿԸ, ԿԹ, Զ, և ՀԱ գլուխներն, որոնցմով մա իբրև հաւատարիմ գանձապահ Ազաթամզեղայ վերոյիշեալ աւանդութեանց՝ մեզ օգնութեամ կու գայ. որովհետև մա այս գլխոց մէջ մի և մոյմ կէտերն փոքր ինչ ըմբռնած պատմելով, կը յիշէ զԱզաթամզեղոս: Եւ 'ի վերջ կոյս ԿԸ. գլխում կը յարէ այսպէս. « Բայց մի աստամօր բամբասանցես գնեզ իբր զաւելագործ ոք, որպէս թէ *զինքնս պարտուան (յԱրաւանգեղոսէ)* դարձեալ ասացաք. այլ գիտեա, զի վասն ախորժելոյ ազգակամաց սերոյ Նուստարիմ կրկնեցեացք »: Յիրաւի, թէ Մովսէս ըստ հայերէն թարգմանութեան կը նանչնար զԱզաթամզեղոս, և ոչ ըստ յոյն բնագրին, մորա պատմութեան Կէ գլխէն իսկ քաջ կը տեսնուի, յորում զերիս տեղիս 'ի մէջ կը բերէ՝ բար առ բար փոխ առնելով յառաջնոյ անտի: Բաց աստի, մի և մոյմ գլխում մէջ Ազաթամզեղոսեան մատենի վերոյիշեալ միւսից հակիրճ բովանդակութիւն ևս կ'ընէ ասելով. « Ճաղագս սորա (Տրդատայ) և համատոհմիցն (այսինքն է Խոսրովու և Արտաւանայ) կարն 'ի կարճոյ իմն անցանելով, աշող քարտուղարն Տրդատայ Ազաթամզեղոս, փոքր 'ի շատէ պատմէ *զինքն Արտաւանայ Պարսից թուգաւորին* — և *զինքնս* տէրութեան Պարթևաց յԱրտաշէր որդւոյ Սասանայ — և *զինքնս* Պարսից ըմբ ձեռամբ մորա — և *զինքնս* Խոսրովու հօր Տրդատայ — և ասպատակաւ հինից *տէրէ* զաշխարհն Պարսից »: Արդ Մովսէսի այս բացատրութեամբ, այսինքն թէ, « փոքր 'ի շատէ պատմէ զմահն Արտաւանայ », եթէ հայերէն Ազաթամզեղայ Ա. գլխահամարին առաջին երեսն հասկնամք, այս աւելի յիշատակութիւն մի է քան թէ պատմութիւն. իսկ եթէ այժմեան յունարէնի իմն գլուխներն՝ այս իբր պատմածէն իսկ աւելի ըմբռնած է և հետարքրակամ: Այլուր, այսինքն է, 22 գլխում ևս կը թուի Մովսէս այլ ինչ աւանդել մեզ յանուն Ազաթամզեղոսի, քան զոր այժմ ըմբռնումնք հայերէն օրինակի մէջ: Նա Մ. Նումէի մասին խօսելով կ'ըսէ, թէ, « Խնդրեալ արս հաւատարիմն՝ յղեաց առ Մ. Գրիգոր,

եթէ զինչ հրամայեսցէ մնա գործել »: Բ. Թէ « Առաքելուհի եղեալ քարոզեաց 'ի Կոստանդնուպոլսու և Կոստանդնուպոլսու մինչև 'ի սահմանս Մազքթիաց, որպէս ~~ուսուցանել~~ ~~եւ~~ ~~Աբխազի~~ ~~դու~~ »: Մովսիսի առաջին տեղին ուղղակի կը հակառակի մախ Սովրատայ և Սոզոմենոսի, որք առ Կոստանդնուպոլսու և առ հայրապետն Հոռոմոց գրեալ ասեն: Երկրորդ առ Ազաթամզեղոսի՝ չիք յիշատակ նուենայ: Իսկ երկրորդ տեղիմ՝ առնուած է հայերէն Ազաթամզեղոսի 628 իջէն, բայց հակառակ է այնմ. որովհետև աստ Գրիգորի համար կ'ըստի միայն: Ուստի ինծ այնպէս կը տեսնուի, թէ Մովսես Աւետարանի քարոզութեան տեղեաց մասին միայն կը կոչէ զԱզաթամզեղոս, և ոչ թէ վասն առաքելուհայն նուենի: Ուստի, այս տեղեացմէ չէ մարթ եզրակացնել, թէ յունարէն բնագիրը կը ճանաչար մա. սակայն կարող եմ ասել թէ Մովսիսի գործածած հայերէնը կատարելագոյն էր քան այժմեանը: Մովսէս իր պատմագրութեան Հ. զլխուն մէջ Պահլակաց մասին եղած առասպելն ևս մէջ կը բերէ, և Փիլիպպոս (ուղղագրելի է Սոքր. Սենրոս) կայսեր ձեռնտուութիւնն ևս կը յիշէ յարշաւանս Խոսրովու. սակայն այս՝ ոչ Ազաթամզեղայ գրոց հայերէն և ոչ յունարէն բնագրէն, այլ ուղղակի Բարսումայի Մասամեանց վրայ յօրինած Պարթևներէն կ'առնու, զոր յունարէն թարգմանեց Խոռոհրուս:

Արդ, Դ. Փարսեցիքն ևս Մովսիսէն աւելի մոր պարագաներ չի յայտներ Ազաթամզեղայ գրոց պարտմակութեան մասին: Սակայն այս երևոյթն բաւական չէ հաստատել, թէ Ազաթամզեղայ գրոց ոչ հայերէնի և ոչ նախկին յոյն բնագրի մէջ կային երբեմն այն տեղեկութիւնքը, զորս այժմեան յունարէնն ըմծայէ մեզ: Յիրաւի, Տրդատով 'ի Հայս կործանեալ Պարթև — Արշակունի թագաւորութեան վերականգնուելուն պատմութիւնը գրող հեղինակին՝ անհրաժեշտ հարկաւոր էր, յիշել նորա կործանման մախըմթեաց և յարակոյց պատճառքն և պարագաներն ևս. որովհետև առանց այնց անհասկանալի կը մնար Տրդատայ ազգականութիւնն. և ո՛վ կարէր հաւատալ, թէ էր մա ստուգիւ ժառանգ և օրինաւոր յաջորդ Արշակունի թագաւորութեան, որ դեռ այն ինչ լոյս տեսած, ամբարտաջալ 'ի միջոյ. թող զի հարկ էր կամուրջ մի ձգել՝ Տրդատայ պատմութեան անցնելու համար: Բ. Մասամեաց հարստութեանը՝ Պարթևականիմ յաջորդելու ժամանակակից և մեծագոյն դէպքը, զոր, ըստ վկայութեան Մովսիսի, պատմագիրք առհասարակ Յունաց, Ասորոց և Պարսից 'ի գիր անցուցին, մա չէր կարող լուրսեամբ անցնել, ուր գրութիւնն ինքնիմ և համագամակք ժամանակիս անգամ զայնս կը պահանջէին: Թերևս վաճառելի լինէր ոմանց, յունարէն օրինակի միջոցով մեզի հասած այն անգին գլխահամարներն, այսրէն իսկ թարգմանուած տեսնել 'ի հայ բարբառ: Սակայն այս օգտաշատ ծառայութիւնս արդէն իսկ մատուցած է Հայի. Գրութեան հեղինակն հայ ուսանողաց: Ուստի ես այսպանս կարևոր կը համարիմ ծանուցանել 'ի գիտութիւն մեռազնայց, թէ մոյն իսկ յունարէն օրինակիմ Ը և Թ զլսոց մէջ դատարկ տեղեր կան, զորս Լանգրուս լատիներէն թարգմանութեանէ,

որ կը գտնուի 'ի Նէապօլիս և 'ի մատենադարանին Բարբերիճեայ, որ 'ի Հոռով, լրացուցած է մասամբ: Ես վերջնոյս օրինակութիւնն ունէի դիմացս, յորում յունարէնի յառաջաբանն իսկ Ա. գլխահամարին առաջին տողին հետ կը պակսի, պակասատը է և 'ի վերջոյ:

Նշմաւոր դէպքիս, այսինքն է, Սասանեանց հարստութեան կամգնելուն և Պարթևաց կործանման միջոց ժամանակամիջոցը մշամակուած չէ ազաթամգեղոսեան գրոց մէջ. ուստի հարկ է զայն նշել և դնել իրրև չուակէտ իմն Պատմագրութեանս այստիկ. այս բանս մեզ իսկ պիտի ծառայէ իրրև փորձաքար քմնելոյ և որոշելոյ գհարազատութիւն մորա յարակից միւս աւանդութեանց: Այն փնտրական նակատամարտը, զոր յիշէ ազաթամգեղոսեան գրոց հեղինակն, յորում ամկաւ Արտաւան Պարթև, և յաղթանակեց որդին Սասանեկայ, հանդիպեցաւ անտարակոյս, ըստ վկայութեան Նեօլէքէի, Պարսից Միհր ամոյն վերջին օրը. այսինքն է, 28 Ապրիլ, յամին 224. իսկ Արտաշրի գահակալութիւնն եղաւ 226 ին, և մահը յամի Տեառն 241, Յուլիսի:

Քննենք այժմ ազաթամգեղոսեան գրոց վերոյիշեալ երկու թագաւորաց և մերոյս Խոսրովու մասին աւանդածներն, և տեսնենք, թէ ի՞նչ պատմական արժէք ունին: Յունարէնը՝ § 3. էջ 110, երազով մի և անընկալան յայտնութեամբ կը սկսի պատմել Արտաւանայ ժախորդութիւնը: Այս պատմութիւնս զխտփն արևելեան տիպ ունի, և ամկախ է 'ի յունական ազդեցութեմէ: § 8. էջ 112, Արտաշրի սիրունին կու գայ 'ի համուէս, որ և Արտաշրի կը յորջորջի, միմչեռ յետին ժամանակի պատմագիրք Պարսից՝ Գոնշար կամ լաւ ևս, Կիւլ-Մար կ'ամուսնեն: Յիրակի, կամացի ազգի հօգոր ազդեցութիւնը մարդկային ազգի պատմութեան մէջ միշտ տեսնուած և շօշափելի նշմարտութիւն է. սակայն այս ամձմարտութեան՝ աստ մէկէն 'ի

1. Քշղել ըօի, որովհետև այդ մասին մեծ տարածայնութիւն կայ հին պատմագրոց մէջ: Տոյն և լատին պատմագիրք որոշ կերպով հաստատած չեն այն դէպքը՝ միշդ տարիթուով: Ապուլֆարաճ, Պատմութիւն Հարստութեանց է. Մասն, Արտաշրի թագաւորութեան տարին կը դնէ Ադեք. Սենրոսի Մամիայ որդւոյն կայսերութեան յՅ մին. այսինքն է, յամի Տեառն 223: Սորա կը հետևի Եւոզիոս Աստմանի, Acta Sancti Marty. Orient. Pars I. LXXVII. Սակայն երկոքեան իսկ կը սխալին: Ըստ Ազաթիասի, 4, 24, որ էր դուստմապետ արքային Պարսից, փորոյիշեալ դէպքն Յանդիպեցաւ Սենկեան թուականին 538, այսինքն է, յամի Տեառն 226, Հոկտ. 1, 'ի չորրորդում ամի կայսրութեան Ադեք. Սենրոսի: Ազաթիասի կը թուի համաձայնել 'ի հնոց, Գիոն Վասիոս, հեոդոհանոս, Եղիաս Մճքմացի և Թապարի. իսկ 'ի մերոց Եորին, Մովսէս Խորենացի և Ղազար, որոնք Յագեկերտ Բ ի գահակալութիւնը կը դնեն յամին 439: Արդ Յագեկերտ Բ էն ցերեկել մորաշրի կը մժայ 213 տարուան միջոց, զորս բաժնելով հուսքանչուրին, Արտաշրի գահակալութիւնը կը հանդիպի յամին 226: իսկ 'ի մորոց՝ Սէն Մարդէմ Hist. des Arsacides T. 2. p. 226-1-22: է. Մ. Զամչեան, Պատմ. Հայոց հատ Ա. էջ 603-4: Նեօլէքէ. Geschichte der Perser und Araber s. 409-411. Արդ 226 տարիթիւն՝ այնպիսի ստոյգ հաստատութիւն առաւ Նեօլէքէի սոյն ետեսարտութեան մէջ սերուած շօշափելի յիշատակարաններով, որուն վերայ տարակուսելն իսկ աւելորդ է:

մէկ գալով 'ի համդէս, պատմականէն աւելի վիպասամական երևոյթ ունի: Հայերէն օրինակի Ա. գլխահատարին 29 իջէն, և յարտաքին պատմագրութենէն իսկ զհտեմք, թէ Սրտաշրի յաշողութիւնքը զխովիմ քարաքայիմ և կրօնական ընդհանուր պատճառաց արգասիք են՝ քան թէ վիպասամական և անըջական դէպքի մի: Ուստի այս տեսակէ տովն հայերէնը շատ աւելի հաւատարմութեամ արժամի է, որ ամ դէն 'ի մուտս պատմութեամ կը ծանուցանէ եղելութեամ բուն պատճառն, ասելով այսպէս վասն Սրտաշրի. « Բը էր մախարար ոմն 'ի Ստահր, գաւառէ, որ եկեալ Բաբանեայ. զչորս Պարսեց, որ Խոսեցին զին գրեթեմն Պարսեայ, և հոմեցան հաւանութեմք ընորել զբեթեմն Արտաշրի որբուց Սասանայ:

§ 8. յէջ 113, վերջիմ ճակատամարտը կը յիշուի միայն, յորում Արտաւան կը մեռնի և Արտաշիր կը յաղթանակէ և կը տիրէ բոլոր պարթևական թագաւորութեամ երկիրներում. մինչեւ Ֆիրտուսի և այլք՝ երեք պատերազմներ կը յիշատակեն. և թէ Արտաշիր վերջիմ վճռական պատերազմը Արտաւանայ դէմ բացած ժամանակ, արդէն իսկ Ատրպատականի և ուրիշ քանի մի մահամզներու տիրած էր: Թէջ 112, կը յիշուիմ Զին և Կարենոս պահլաւունք, իբրև կրկնմ համախոհք Արտաշրի: § 9. յէջ 113 և 115, իսկ ըստ հակերէն ' օրինակիմ յէջ 32, կը յիշուի Խոսրով թագաւոր Հայոց իբրև եղբայր համահայր Արտաւանայ. մինչեւ իրօք Դիոն Կասիուէն, հն. 9, գիտեմք թէ տարբեր հոր որդիք էին:

Արդ, յումարէն օրինակիմ մեզ ըմծայած այս հետաքրքրական կէտերն, արդէն 'ի պարուց Ստիլիմզի և Գուաշմիդի պէսպէս մեկնութեանց միւթեր եղան: Վերջինս եմթադրական այս խախտու հիման վրայ յեցեալ, թէ հայերէն Ազաթամզեղոսն եղած է բուն բնագիր, և չգտնելով սորա մէջ յումարէնի աւամդածն, եզրակացոյց, թէ այդ մասն պէտք է գործ համարել ուղղակի յոյն թարգմանչի գրոցս: Գուաշմիդ, այսպիսի մի եղելութեամ ապացոյց կը համարի հետեւեալ երևութն. այսինքն է, յումարենի այդ մասին մէջ դրուատեաց խօսքեր մէջ կը բերուիմ 'ի վերայ Արտաշրի, որ ցոյց է, թէ յոյն թարգմանիմն այնպիսի ժամանակի մէջ կ'ապրէր, յորում Սասանեանց հօգ և ազեցութիւնը կը ստիպէր զհեղինակիմ այնպէս խօսել. մինչեւ հայերէն Ազաթամզեղայ հեղինակիմ, ընդհակառակն, Խոսրովու վրայ գովեստներ կը շտայլէ: Բ. Թուրքիդեանէն առնուած երկսող հատուած մի, որ կը գտնուի բարբարիկ լեզուով գրուած այդ յումարենի մէջ: Արդ իմօ այնպէս կ'երևի, թէ գերմանացի ըմմադատիմ այս սրամիտ դիտողութիւններս կը ծառայեն մեզ այս հետաւորութիւնս միայն առաջ բերել. այսինքն թէ, Ազաթամզեղայ յումարէն թարգ.

1. Աստ կը ծանուցանեմ իմ ըմթերցողացս, թէ ինչպէս միշտ ցայսր՝ այսպէս այլ ցմբիջ գրութեանս հայերէն Ազաթամզեղոսի յիշատակութիւնքը, ըստ 1835 վեմետկեան տպագրութեամ պիտի ընեմ. իսկ յումարէնը՝ միմչև ցկէս գործոյս, ըստ լամզուայի տպագրութեամ, զի լագարտի հրատարակութիւնը յետոյ ուրիմ ստացայ:

մամուլիւնը յետիմ ժամանակի գործ է, և ոչ թէ այն թարգմանութեամ միւլթը կամ վերոյիշեալ հատուածներն:

Իսկ վերջինս, այսինքն է, Ստիլտինգ ուրիշ պատմական իրողութեան մը վրայ հաստատուած, յոյն թարգմանչին իբրև եկամտաւանհարազատութիւն վարկաւ վերոյիշեալ հատուածն. որովհետև, մորա կարծեօք, Արտաշէր և մորա սիրուհոյն վրայ պատմուած վէպը կը գտնուի Պարսից յետիմ ժամանակի պատմագրաց Դամիշլէրի, Խոնտէ միրի¹, Ֆիրտուսիի քով իսկ. միայն թէ փոխանակ Արտաղէսոյ Գուլմար կը կոչուի մա:

Սակայն յումարէն Ագաթանգեղայ այդ եկամտաւ կարծուած մասը, սկզբէն ցվերջ պատմութեան, յառաջ էր քսմ գլումարէն թարգմանութիւնն և կարէր գտնուիլ թէ յումարէն բնագրի և թէ հայերէնի հնագոյն օրինակին մէջ. հետևապէս դիւանական պատմութեան մի մասն համարելի է: Առ այս դիտելու է, որ Ֆիրտուսի թէպէտ և ժամանակաւ կրտսեր, թէպէտև իւր գործը վիպասանօրէն գրած է, սակայն մորա աղբիւրն հիմ է, և յոյսով հետ սերտիւ միացեալ, զոր յօրինեց Գուլմար յամին 632–636, Պահլավիկ լեզուով և հրամանաւ Յազնկերտի Գի. և յամին 731 յեղաւ ՚ի լեզու արաբական: Արդ, եթէ յոյն թարգմանիչը յառաջ էր քսմ գամն 636, ինչպէս կ'ապացուցամէ այլուր Գուտշմիդ, չէր կարող Դամիշլ վերէն կամ Ֆիրտուսիէն առած լինել այն. որքամ այս իսկ յայտնի ապացոյց է, թէ մորա աւանդածը՝ դեռ աւելի հնութեան բնադրոշմն ունի, և թէ պարսկային պատմագիրներէն յառաջ բերած Ստիլտինգի հետևութիւնն առանց հիման և ամբողջութեան է:

Կարծեացս ՚ի հաստատութիւն՝ դեռ աւելի զօրեղ և հաստատում ապացոյցը կու տայ Մ. Խորենացին: Այրա այս բնագրահմուտ, աւանդապահս այս ընդազգի գամնուց հնութեանց, իւր պատմութեան Բ. գրոց 3. գլխուն մէջ խօսելով Պահլավկաց մասին ծանօթ վիպաց վրայ այսպէս կը գրէ. «Քանզի ամտեղի է մեզ այժմ երկրորդել գառնասպելն յաղաքս Երզնայն փոփոխոյ... արտաբնոյցս յառաջատարէն, որ եմ քատեայք... և պահլավկան խորհուրդն Արտաշէրէ հանդերձ սպանտութեամբ», և որ ինչ այլն ամենայն»: Խորենացոյ այս տեղիս, զոր ամգիտացամ Ստիլտինգ և Գուտշմիդ, յայտնապէս կը ցուցնէ մեզ Արտաղէսոյ վերաբերութիւնն ընդ Արտաշէրի. և երազմ ախտարմողական մեկնութիւնն և սպանումն Արտաւանայ, զոր աւանդէ մեզ Ագաթանգեղայ յումարէն օրինակն: Ուրեմն, ըսել է, թէ այս աւանդութիւնս ոչ եթէ վեցերորդ կամ եօթներորդ դարու, այլ մոյն իսկ Ե դարուն շատերուն քաջածանօթ վէպ մի էր: Գիտելու է ն' այս, որ Մովսէս այս աւանդութիւնքս մէջ բերելէն առաջ երեք հեղինակութիւններ կը յիշատակէ. այսինքն է, զԱգաթանգեղոս, զԲարսուան և զԽոռոհրուդ, որոնք Գ դարու զոյններ են. ուստի, սոցամէ յորմէ ևս օգտուած համարինք զՄովսէս, դարձեալ միշտ հետևութիւնը մեզ նպատաստանոյց կը մնայ:

1. Herblot, Bibli. Orient. Artaschir Babegan.
2. Görres, II, 404, und Mouradega D'Ohsson, II, 153.

Արտադրուխտ անուամ զոյուծիւմ իսկ 'ի յումարէմ օրինակիմ կա-
րելի է մի պատմական և լեզուաբանական փաստ համարել մորա
աղբեր կամ բնագրի հմութեամբ: Յիրախի, այս զուտ պարթևական
ամուսն ըստ լեզուագրի է յԱբրահամ և դոմիոս¹ (հ. դուստր) յատուկ և
զոյական ամուսններէն, և կը մշակուի դուստր Արտաւանայ: Այսպիսի
բարդեալ ատուկ անուամս յամսխ 'ի վար արկանէիմ Պարթևք և
Հայք: Փ. Բուզանդացոյ Զ. Դարութեան 261 իշում, Զրուանայ պար-
սրկի դուստրը կը կոչուի Զրուանդուստ. Խորենացոյ Պատմութեան
Բ. գրոց 17 գլխում մէջ և 'ի հնագոյն վկայաբանութեան Թաղէոսի
Առաքելոյ Սամատրկոյ աղջիկը կը կոչուի Սանդուստ: Ազաթանգեղայ
գրոց մէջ յէջս 165, 167, 575 և այլն խոսրովածիմ կոչուր կը կոչուի
Խոսրովիդուստ: Այսպիսի են և այլուր Զարանդուստ, Եանանդուստ
և այլն: Իսկ Կիւնուստ, ընդհակառակն, ֆարսի-արաբական ամուսն մի
է և ըստ լեզուագրի է 'ի Կիւն և Կուս կամ Կուս գոյական ամուսններէն,
որոնց առաջինը, թուի իմն, թէ արիական կամ իրանական լեզուաց
մէջ ևս վարդ կը մշակուի. զի մատենագիրք Պարսից և Արաբա-
ցոց, այլ և այլ տեղեր ևս կը յիշեն սոյն արմատէն կազմուած. օրի-
նակ իմն, Կիւնուստ աշխարհագրական ամուսն, որ մոյն է վարդաս-
տամ: Իսկ երկրորդ վանկը Կուս կը մշակուի, որ զայով 'ի մի կը
կազմուի վարդանուստ, կամ վարդանուս կեղծ ամուսն, որ ոչ է
պատմական, այլ զխովիմ վիպասանական:

Սակայն հարկ կը համարիմ ծանուցանել, թէ Արտադրուխտ ա-
մուսն այս մեկնութեան կը թուիմ հակառակել մասն Ազաթանգեղայ
յումարէմ այս խօսքերս, *ἦτι; τῶν ἐν πρώτοις τελοῦντων θυγάτηρ
σπάρχουσα, συνθήκης ἦν τινὶ τῶν μεγιστάνων, որք αὐτῶν* զԱր-
տադրուխտ դուստր միոյ ուրում յիշանաց: Բ. լատիներէն թարգ-
մանութեանը մէջ, որում համար ըստեցաւ, թէ յումարէնի Ը և Թ
գլխահամարներում պակասը կը լեցնէ, երբ Արտաշիր կ'ըսէ 'ի ժամ
պատերազմիմ առ Արտաւան, *Meminisse responsi, quod ali-
quando reginæ dixisti in tabernaculo. Արտաւան կը գոչէ ամ
դէմ. Quam gravis res est femina! amor conjugii potius
læserit, quam iuverit. Արդ եթէ femina բառով Արտաւան
զԱրտադրուխտ յիշեց և amor conjugii potius læserit բառերով
մորա հետ ունեցած ամուսնական սիրոյ վնասը, ինչպէս կարելի է
այլ ևս ասել, թէ Արտադրուխտ Արտաւանայ աղջիկն էր:*

Արդ, ես կարծեմ, թէ femina գոյական ամուսն ուղղակի զթագու-
հիմ կը յարաբերէ, և ոչ թէ մորա աղախիմը Արտադրուխտ: Երկրորդ
եթէ Արտադրուխտ ևս իմամանք այնու, դարձեալ Արտաւանայ դու-
ստրը կարէր նոյնպէս ամուսնի ևս լինել միանգամայն: Յիրախի, այժ-
մու մեզ երևցած ամտեղութիւնը յայնժամու սովորութիւնը արգագ
օրինատր կ'ըմէիմ. զի Բարդաճան աստիւիմ, առ Եսեքիտի², կը վկայէ,

1. Այս գոյական ամուսն պահուած է ման ուրիշ արիական կամ հըմ
դեւրոպական լեզուաց մէջ, ինչպէս գերմաներէն Tochter և Ամգրիներէն
daughter, և յումարէն Թոգաթր.

2. Præparationis Evangelicæ, lib. VI,

թէ Magusæos non in Perside tantum filias uxores ducere, sed etiam ubicumque degant, acceptas a majoribus leges, eosdemque mysteriorum ritus ac ceremonias retinentes. Այսպէս ուրեմն և՛ Արտասամ որում համար կ'ըստի, թէ մեզ էր և քաղէութեան արուեստին քաջավարժ, յաստիղաց ամտի գուշակելով իւր ամկումը:

Չիկա և Կարինաս յատուկ ամուսնքը՝ թէպէտ և, ըստ յունական կիրառութեան, մոր իմն թուիմ, բայց ըստ պարթևական ձևոյն հնազոյն յոյժ: Մ. Խորենացի Պահլավկաց ցեղին այլ և այլ բաժամամբ և ամուսնակոչութիւնքը պատմաբանօրէն կարգելով՝ Բ. գրոց ԿԸ. գլխում մէջ զԿարին ևս կը թուէ: Չիկասայ տեղ՝ գՄուրէն կը յիշէ. և ՀԱ. գլխում կ'ըսէ, թէ « Երկու ցեղ Պահլավիմ որ Ապարհադեթի և Սարգիսի ՚ի Պարսաս ամուսնիմ, մախամն պահելով ըստ թագաւորեալ ցեղիմ իւրեանց հարազատութեան ազգիմ, որ է Արտաշէսիմ, կամաւ յամնն առին թագաւորել Արտաշէի որդւոյ Մասանայ: Այլ մտերմութիւն պահելով առ եղբայրութիւն ազգակամութեան տանն Կարն Պարսաս ընդդիմացամ պատերազմաւ Արտաշէի որդւոյ Մասանայ »: Քիչ յետոյ, կը ծանուցանէ Մովսէս մի և մոյմ գլխում մէջ, թէ ամենայն մախարաբ Պարսից միացամ ընդ Արտաշէի « բաց ՚ի ցեղէն Կարն » առ որ հրեշտակ առաքեաց » (Խորով): ՀԲ. գլխում մէջ կը ծանուցանէ, թէ Խորովու հրեշտակներէն ոմանք, « որք ՚ի պարսաս կանգոյն » ազգն երթեալ էին ՚ի Բահլ բերին համբաւ, թէ ազգական քո Վեհաստ համդերն ցեղէն իւրով Կարն Պարսաս ոչ հնազանդեալ Արտաշէի, այլ ՚ի կոչք քո դիմեալ գայ »: Եւ ՀԳ գլխում մէջ, թէ այս բանս լսելով Արտաշէի, « կտորեաց զամենայն ցեղ Կարնամ Պահլավիմ, ջնջելով զամենայն արու, բայց ՚ի միոյ տղայոց, զոր առեալ Բարդի փախեաւ յաշխարհիմ Քուշանց: »

Մովսէսի՝ ՀԱ. գլխում մէջ բերուած կրկին տեղիքը մուլթ են և գոգցես իմ իրարու հակասական, այնու զի Ասպահապետի և Մուրենի Պահլավները թէ՛ կ'ուզեն որ Արտաշէիը թափառոր. և թէ՛ կ'ընդդիմանան մնա պատերազմաւ: Մակայն մորա ատելութիւնները լաւագոյն և հնազոյն՝ սողբերէ մի առնելով, այսինքն է, Պարսից Շապուր թագաւորին դպիր Խոռոհրուտի պատմագրութեանէն, կարեն լուսաւորել Պահլավկաց ցեղին և Ազաթանգեղայ գրոց յէջ 32 ամորիչ մէկ տեղիմ, զոր յոյմ թարգմանիչն ուզած է որոշել, բայց չէ յաշը դած: Արդ Մովսէսի աւանդած տեղերէն կը տեսնուի, թէ Ա. Ասպա հապիտի կոչուած Պահլաւ Պարթևաց Արշախի թագաւորին դստեր Կոշմէն կը շառախղէր. բայց թէ ինչո՞ւ համար պսպէս կոչուեցաւ, արդեօք ազգախառնութեամբ ուրիշ ըմտանիքի մի հետ, թէ մորա

1. Չիկասան պահլավիկ յատուկ ամուսնիս իսկ ապացոյց է ստուգիւ սողբերս հնութեանը:

2. Քապարի՝ Դրմ. Չիկասպէն կարգեալ 7 ազգապետներ կը թուէ, բայց երեքը միայն յամուսնէ կը յիշէ. այսինքն է, Կարէն Kâren, Մուրէն Mûren և Մակամար Spendjiâr. առաջիմը կ'իշխէր Նիհավանդայ, երկրորդը՝ Մագաստանի, իսկ միւսը Դաստանի:

ստամծմած պաշտամանէն կամ պատուամուծէն . այս յայտնի չէ : Բ. թէ յետ թագաւորեալ ցեղին Արտաշիսի՝ ամենէն պատուականագոյն ցեղն էր Կարմ պահլաւին, և սոցա բնակավայրն էր ի Բահլ կամ ի Բակտրիա : Գ. թէ այս ցեղիս իշխաններն, թէպէտև ի սկզբան առ նախանծու ընդ թագաւորեալ ցեղին Արտաշիսի համախոհ երևեցան Արտաշիսի, որպէս զի այն թագաւորոջ ցեղին բարձրամարդ՝ Պարթևա կան զահակալութիւնը շուտով իրենց վերադառնայ, ըստ օրինաց և դաշինմ՝ զոր եղ Աբգար թագաւոր Ասորոց և Միջագետաց Հայոց . սակայն յետոյ յորդորեալ ՚ի քաջէն Խոսրովայ ըմդդիանցած են մնա պատերազմաւ, ոյր վասն և կոտորեալ յԱրտաշիս Սասանեան : Արդ, Մովսիսի աւանդութիւնը ուղղակի կը հակառակի Ագաթանգեղոյ յումարէն օրինակի աւանդածին . որովհետև առաջինը՝ զԿարմ Պահլ լա գրեթէ միշտ հաւատարիմ կուսակից կը համարի Խոսրովու, և զՍուրէնեան պահլաւը հակառակ մտին : Իսկ վերջինը, ընդհակառակն, զերկուսեան իսկ արքամեակս առնէ Արտաշիսի, մերթ զԿարէն առա քերով առ Արտաւան, և մերթ զԱնակ Սուրէնեան՝ առ մերս Խոսրով ՚ի դաւանանութիւն և յորոգայթ մահու : Արդ, յայսմ կամ Մովսէս կը սխալի, կամ հեղինակն ագաթանգեղոսեան գրոց, և կամ յումարէնի թարգմանիչը : Ծն կ'ախորժիմ այս երևոյթս ուղղակի յումարէնի թարգմանիչն վերագրել, որ զհայերէնն ՚ի ոյն փոխած ժամանակ, երբ հասաւ յայն տեղին (յէջ 32), ուր Պահլակաց վրայ կը խօսուի առանց անուան, նա տգիտաբար Զիկ և Կարէն անուանքը ներմուծեց . կամ զերկուսեան իսկ առնելով Փաւստոսի Գ. Դպրութեան՝ ԾԾ . գլխէն, և կա՛հ առաջինը մրայն առաւ անտի . իսկ երկրորդը՝ Մովսիսի վերոյիշեալ տեղերէն : Բայց կամ իւր այդ խարդախութիւնը չի յայտնելու համար և կամ յումական ձև տալու աղագաւ Զիկը՝ Տիգրան ըրաւ և Կարէնը՝ Կարսան : Մենանդրոս իսկ զոյգ ընդ Փաւստոսի կը յիշէ զառաջինը : Փաւստոսէն առաջ՝ ոչ ոք ի պատմագրաց կը յիշէ զԶիկ . ուստի, ինծ կը թուի թէ Պահլակի ցեղերուն հետ վերաբերութիւն չունի : Իսկ զՍուրէն և զԿարէն՝ պարթևական անուանք գործածական էին և ի հնումն, զորս կը յիշեն հնագոյն պատմագիրքն՝ յումաց . և ո՛վ կարէ անգիտանալ այն խորամանկ և քաջաւ մարտիկ զօրավարին անունն և ազգանունը, որ զամյագն և զանմուկուն Կրաստոս՝ Պարթևաստամի անպատաւ աւազներուն տալ թաղեց հանդերձ որդւովն :

§ 9. յէջ 113, 114, և 115, որ համապատասխանելոց է հայերէն օրինակին Ա . գլխահամարին 29 և 30 էջերուն, ոչ միայն պակասաւոր է, այլ նոյն իսկ այս տողէս սկսեալ *Τὰ δὲ συβάντα ταῦτα ἀπηγγέλλετο Χδς...* մեծապէս կը տարբերի հայերէնէն, ոչ միայն բանից դասակարգութեանը մէջ, այլ նոյն իսկ նորանոր յաւելուած .

1. *Fragm. hist. græc.* IV, 206.

2. Պրոտարքոս, ի Կրաստոս : *Լիվիոս*, *Epitome CVI.* Florus, 3, II. *Տակիտոս*, *Annal.* 6, 42. *Ամիրանոս*, 30, 2, 5 : *զոսիմոս*, 3, 15 : *թերդորեսոս*, *Hist. Eccles.* 5, 39. *Իսկ ՚ի Ոորոցս Նեոլտէթ*, *Geschichte der Perser und Araber*, s. 437, 438, 439, etc.

մերով կամ կրճատմամբ անուանց: Երկիցս Արտաւանայ մահուան լուրը կը հասնի առ Խոսրով թագաւորն Հայոց մեծաց. մի ամգամ յԱ. պարբերութեան մէջ, միաւ և՛ յերկրորդում: Երկու ամգամ ևս կոչելով զԽոսրով Եղբայր՝ Արտաւանայ Արտաթանն տ՛ն անտ՛մ օձեւօձն. մորս անունն առաջին վանկը միայն գրելով Ճձճ. զոր Լազարդ ամբողջացուցել է: Դարձեալ, սուաջին պարբերութեան մէջ Արտաւանը՝ կոչուած է որդի Վաղարշի՝ տօ՛ն Արտաթանն սեօ՛մ Օձաւթնոս, փոխանակ Վաղարշի: Հայերէնն՝ աստ խոտորմակի կ'ընթանայ յուժարէն օրինակի հետ. զի առաջին պարբերութեան մէջ Արտաւանայ մահը ծանուցանելն ամսիչապէս յետոյ, կ'սատ վասն Արտաշրի. « Որ էր մախարար ոմն՝ի Ստահր գաւառէ. » մինչ ղեռ յուժարէնը՝ յերկրորդ պարբերութեան մէջ ուր ուրեմն կը ղմէ գայն: Այսպէս մակ Պարթև—Արշակունեաց գահում՝ ՚ի կարգի երկրորդ լինելուն — Խոսրովու առ Պահլաս ղիմելուն — ՚ի մոցամէ ձեռնուժայն յետ դատմալուն և Արտաւանայ եղբայրակցութեան հաստուածքը՝ խոտոր համեմատութիւն ունին: Արդ այս կրկին օրինակացս մի և մոյն գլխահամարի մէջ եղած բանից, մախարասութեանց և այլ յետևառաջութիւնքը կը ցուցնեն, թէ իրօք զգալի յեղափոխութիւն մի եղած է աստ, չքան թէ ո՞րք մի. բայց ո՞վ է մեղապարտ, մի՞թէ յոյն թարգմանիչը միայն, ինչպէս կարծեց Գուտշիրդ: Ոչ այնպէս. այլ մախ հայերէնին թերութեան և աղաւարութեան ընծայելի է այն, զոր յուժարէնի թարգմանիչն իրրև բնազիր գործածեց: Բ. յոյն թարգմանիչի ճարտարութեանը կամ ընդհակառակն անբաւականութեանը, որ այլազգ չկարենալով այն իրթնացեալ բառէն դուրս գալ, շանացեր է մի և մոյն իրաց մասին մատող Հայոց հին սլասմագիրներէն, այսինքն է, ՚ի Փաստոսէ և ՚ի Խորենացոյ մախարասութիւններ և յատուկ ամուսան իսկ փոխ առնուլ և մերմոձել անը, այն պակասատր և մութ տեղերը լրացնելու և պարզելու համար: Գ. Վաղերիոս ամուսան փոխանակութիւնն և Խոսրովի կրճատումը՝ ընդօրինակողաց անհոգութեան ընծայելի են: Իսկ զԱրտաւանը Խոսրովու եղբայր անուանելն ոչ միայն պատմական չէ, այլ և ոչ իսկ ազատամեղոսեան յոյն բնագրին ընծայելի. այլ պարզապէս վրիպակ համարելի է թիւր հասկացողութեան յոյն թարգմանիչն: Եւ յիրաւի, այս բանիս կրկին և յայտնի ապացոյցք առձեռն պատրաստ կան. Ա. զի հայերէն օրինակին մէջ՝ յէջ 32, փոխանակ Եղբայր՝ եղբայրութիւն գրուած է. և երկիցս ուղղակի ազատումին ընծայուած, և ոչ թէ Խոսրովու: Բ. Մ. Խորենացին, որ ազատամեղոսեան զրոց հնագոյն և կատարելագոյն օրինակը ղիմացն ունէր, իւր պատմագրութեան Բ. Գրոց ԿԷ. գլխոյն մէջ մոյնպէս հասկացած է, եթէ չստեմ գտած է այլուր: Յուժարէնի իմնաթիւ գլխահամարներու պարունակութեան մասին այսչափս կը բաւէ. անցնինք յետագայից քմութեան:

1. Այս բանիս գոգցես իմ կը Գամաճայնի Պրոկոպիոս, որ Յաղագս Շիմութեանց Յուստինիանոսի, Գ. Գրոց մէջ կ'աւանդէ, թէ Արտաւան թագաւորեցոյց զեղբայր իւր Արշակ ՚ի վերայ Հայոց: Գիտելու է, որ Արշակ իւր ածական արշակունի, կը գործածէ յոյն հեղինակս:

ԳԼՈՒԽ Դ.

Մասնաօր բնաբորոշմն անանդաբնեանց անախանգեղոսեան քրոջ
 և Մովսէի Խորենացւոյ. — Անբեղաւնիան նոցա. — Գազարնի
 Խոսրոֆեանց և Տրբարեանց. — Հայաստան լեզու ընդ այնտն ծա-
 ճանախ մարջ Պարսից. — Ճշգրէր պարսիք 26—30 ասիայ կոչու-
 թեան Հայաստանի, ըստ արքային պարսնաբոնեան. — Գառշտիքի
 կարծիքը Խոսրոֆա ճախն և Թեբէի արշանաբորոնիներ. — Տեղ
 կենսաբոնեան Տրբարայ. — Կենսաբոնեան Տրբարայ ոչ կարե
 վնէլ Յոյն կամ Հռոմէայեցի:

Բանալով Ազաթանգեղայ պատմագրութեան հայերէն օրինակի
 32—49 եղած սակաւաէջ միջոցը՝ կը տեսնենք Մեծիմ Խոսրովու
 Հայոց թագաւորի մեծագոյն զայրոյթը վասն մահուն Արտաւանայ—
 զվայրագաստուն ազնիւս Կովկասու ՚ի մի հաւաքելը — տասնամայ
 ժամանակաւ և տարևոր արշաւանօր Պարսից երկիրն աւերելն —
 Արտաշրի յաղթելով՝ մինչև յԱտրեստան և ՚ի Հնդկս փախցնելն —
 Անակայ ձեռքով կատարուած Խոսրովու եղբերակական մահուան
 տեսարանը — տիրելն Արտաշրի ՚ի վերայ Հայաստանի — մորա որ-
 դոյն Տրդատայ փախստեամբ ՚ի Յոյնս գերծանելն — առ Լիկիանոսի
 կատարած մեծամեծ քաջագործութիւնը — Կայսերմէ թագաւոր
 պսակուիլն — վերադարձն ՚ի Հայս և զՊարսիկս պատերազմաւ վա-
 մնելով՝ Արշակունի հարստութեան անդէն վերակաշգնելն:

Արդ այսքան և այսպիսի բազմադրուագ դէպքեր և արարուած
 մեր, թէպէտև ըստ արտաքին երևութիւն իրարու պեղցեալ և յօղեալ
 մի մարմին կը տեսնուին, բայց ըստ իրին՝ բազմազինեան հիդրայի
 կը մտնին, որոնց գոյութեան և հասնմատութեան գաղտնիքը՝ կար-
 ծէք թէ մորա բազմակերպեան եղելութեանցը մէջ կայացած է և
 կը տղի, քան թէ այդ մի քանի էջ զրուած միջոցի մէջ. այնպէս
 որ՝ եթէ ուզենք զմիմ ծայրաքաղ առնել՝ միութեան վերածելու հա-
 մար, միաները տակաւին կը պահեն իրենց գոյութիւնը, իրարու ամ-
 տեղութիւնը արտասիայելու համար: Այլ բազմադիմի դէպքերէն՝
 քիչեր կան, որք իւրեանց բնական վիճակի մէջ գտնուին. իսկ այլք
 առհասարակ՝ առասպելեալ Պրօմեթէասի մամն այլ ընդ այլը երանգներ
 և զոյմեր զգեցած մեզ կը մերկայաման: Ժամանակագրութեան
 հսկայածն վրիպակներ, անուանց փոփոխ կիրառութիւնք. միով քա-
 միւս պատմական դիպաց յեղաշրջեալ ըմծայութիւնք, այնպէս խոտոր
 նամապարհներ կը բաման քմնական ատենիմ դիմաց, յորս իբրև
 յամն բաղի մտքերմիւս չպաշարուած կը տարակուսի, թէ իմպէս
 ելս գտնէ: Այսպիսի արագին խառնակութեան մէջ կարծեմ թէ,
 քարեաց անտարբեր անգամ Ազաթանգեղոս, եթէ իրօք եղած լինէր,
 դարձեալ կարող չէր լուսաւոր հորիզոն մի բամալ յասելն թէ. « Կար-

վաղակի յետ մահուանմ Արտաւանայ ՚ի թիկունս հասամէին մեծաւ քազմութեամբ Աղուանք, Լիկիմք, Ճիղիք և Կասպք » : Աղուարն սոցա գլխութեանն և ճիղք այս ժամանակամիջոցն Հայոց և Պարթևաց միզակակից և հարկատու լինելու մասիմ ոչ ոք կը տարակուսի, զի պատմաբանօրէն իսկ ապացուցեալ մի ամտարակուսելի ճշմարտութիւն է : Սակայն Խոսրով, Արտաւան, Արտաշիր, Կայսրն Յունաց և Լիկիանոս անուանց ըմդհանուր յիշատակութիւնքը՝ բաւական չեն ածել զՏրդատ ՚ի հանդիսի և ըմծայել սեզ ժամանակագրական ճիղք պատմութիւն մի, առանց որոշ ժամանակագրութեամ, ինչպէս ուզած են ըմծայել գրոցս հեղինակն և խմբագիրը, որով Խոսրովու և Տրդատայ ըմծայուած գործերն և ժամանակը հասակատասխանել կարենային Արտաշրի, Դիոկղեստիանոսի և Լիկիանոսի ժամանակին . որովհետև պատմութեան մէջ այլևայլ Խոսրովներ, Տրդատներ և Լիկիանոսներ եղած են տարբեր ժամանակաց մէջ :

Յիրաւի, եթէ բարդատեանք կենսագրիմ Խոսրովու և Տրդատայ վերայ աւանդածներն՝ յոյն և հռովմայեցի պատմագրաց աւանդածներուն հետ, կը տեսնենք ակնելն, թէ երկուստեք հագիւ երբէք սերւծաւորութիւն կայ . իսկ ըմդհանուրիմ մէջ՝ դէմ ըմդդէմ մեծամարտութիւն : Ըստ վկայութեան Դիոմ Կասիուսի, 2. 3, յամին 228 արշաւեց Արտաշիր ՚ի Հայս, բայց սեծ ըմդդիմութիւն կրելով ՚ի Հայոց և Ոցա կուսակից Մարաց և յորդոցն Արտաւանայ՝ ստիպեցաւ յետս նահանջել : Հերովդիանոս, 2, 5, 6 կը պատմէ, թէ ՚ի պատեւ յետվին Աղեքսանդրոս Սեւրոսի, յամէմ 231-233, Հայք էին դաշնակից Հռովմայիցոց, և հռովմէական բանակի մի մասն անցաւ ընդ Մարաստան ՚ի Հայաստան երթալու համար, տիրելով երկրին և աւերելով զՔնոս, առանց կարենալու Արտաշրի՝ իւր հեծելագործք արգելով զմա, և կ'ըսուի, թէ զօրք Պարսից այնքան տկարացան այս և յաջորդ պատերազմաց մէջ, մինչև ստիպեցան 3-4 տարի զինադադարում խնդրել :

Իսկ Տրդատայ կենսագրիմ (յաւ ևս էր Խոսրովու անուանել) զայս ասեմայն Խոսրովու վերայ դարձուցեր է՝ յասելն . « թէպէտև վաղ լուեալ զքօթ Արտաւանայ՝ ոչ ինչ ժամանեաց հասանել յամբոկ գործոյմ պատերազմի իրացն պատրաստութեամ ... մեծաւ տրտմութեամբ անցեալ եկեալ յաշխարհի իւր . իսկ ՚ի գլուխ տարւոյն » դարձեալ զօրածողով կը լինի Խոսրով և միայն քաջն Խոսրով, տառն տարի ամըմդհատ և ամարգել և մի և մոյմ կերպով կ'արշաւէ և կ'աւերէ Պարսից աշխարհն, առանց հռովմէական լեզէոմներու օգնականութեան . և մորա շքեղ և պամծալի յաղթամակաց ժամանակամիջոցն է 228-237 :

Կարծեմ՝ թէ չենք սխալիր, եթէ Գուտշմիդի հետ գտչենք, թէ կենսագրիմ այս մորաշնամ վարմունքն ուրիշ բան չի նշանակեր, բայց եթէ ազգային սմապարծութիւն . որով պատմութեան դէմ կը սեղանջէ : Հռովմէական լեզէոմներն և հռովմէական կայսրն են աստ գլխաւոր գործ տեսնողներ, բայց մոցա ամուռն անգամ յիշուած չէ : Դիտելու է դարձեալ, զի կենսագրէմ աւանդուած պատերազմիմ

սկիզբը կը համապատասխանէ Հերովդիանոսէն նշանակուած տարեթուին. սակայն վախճանման անցանէ ամբողջ քան զամբողջ 3 կամ 4 տարի: Դեռ անվի զարմանալիմ, որ կենսագրի աւանդածները կասկածելի կ'ընէ, է այս. զի Պարթևաց և Մարոս դաշնակիցն և պաշտպանն Խոսրով, Արտաշրի բացակայութեան ժամանակ ամտերունջ Պարսկաստանին ոչ կը տիրէ և ոչ պարթևական ցեղէն թագաւոր սի կը վերահաստատէ Արտաւանայ յամիրաւի կործանեալ զահուն վերայ. երբ թէ՛ առիթն և թէ՛ Արտաշիսի ցեղէն զատ ուրիշ երեք ցեղք ևս Պահլավաց՝ կը պահանջէին զայն. այլ լու ասարով ասէն ամբամ գոհ եղած կը վերադառնայ ՚ի Հայս:

Հայաստանի նուաճման մասին ՚ի կողմանէ Պարսից, պատմագիրք՝ Հոտմոց կ'աւանդեն, թէ կայսրն Փրիլպպոս յամին 244 իսղաղական դաշամբ ետ զայն Շապհոյ Ա զոյգ ընդ Միշագետաց. բայց յետ սակաւուց յետ առաւ իբրև իւր ինչ սեփական: Գաղղոսի ինքնակալութեան ժամանակ իսկ, այսինքն, է յամին 252-253, կ'աւանդէ Զոմարաս, ԺԲ. 21, համաձայն Դիոնի, թէ Պարսիկք երբ զՀայաստան զբաւելու վերայ էին՝ թագաւորն մոցա Տրդատէս՝ փախաւ ՚ի կողմանն Յուսաց, և մորա որդիքն ամկամ ՚ի ձեռա Պարսից: Արդ այս երկու հեղինակութեանց երկաքանչիւր աւանդութեանն ևս մեծ կարևորութիւն տալու է, ըստ իս, զի այս յայտնի դիպաց կրկնակի յիշատակութեամբ՝ կրկին անյայտ եղելութիւններ կ'ակնարկեն Տրդատայ զահակալութեանց մասին:

Իսկ ըստ պատմագրին Տրդատայ, յամին 238, երբ Խոսրով դաւանանութեամբ հորեղբարցն և Արտաշրի սպանաւ, անդէն և անդ Հայաստան նուաճեցաւ յԱրտաշրէ և Հայոց թագաւորի մատաղ որդին Տրդատ փախստեամբ զերծաւ ՚ի կողմանն Յուսաց:

Արդ, աստի ևս կը տեսնուի, թէ արտաքին և տոհմային պատմագրութիւնք՝ իրարու կը հակասեն. ուստի երկոքեան իսկ ՚ի միասին չեն կարող ծնալիտ լինել. ուրեմն միոյն կամ միւրոյն աւանդածները պէտք է որ սխալ լինին: Սակայն արտաքին վկայութիւնք թէ՛ դահեկաններով և թէ՛ իրերաց համաձայնութեամբ՝ ամենէն ընդունած և հաւատարմութեան արժանի իրողութիւն է և չէ մարթ առանց ամխոհմութեան մերժել զմոսա: Իսկ կենսագրին աւանդածներն կամ առանձնական և այլ ընդ այլոյ և կամ պարզապէս հայ ժողովրդեան զրոյցներ համարելի են: Բայց համարելով, թէ այս այսպէս ևս իցէ, դարձեալ չեմ համարձակիր մէկէն ՚ի մէկ մերժել, առանց խորհրդակցութեան տոհմային միւս պատմագրաց:

Կոչենք առ այս՝ Հայոց հին պատմագրաց հայրը, Մ. Խորենացի, և լսենք մորա կարծիքը: Սա՝ իւր Պատմութեան Բ. գրոց ՀԱ և ՀԲ. գլուխներուն մէջ կ'աւանդէ Խոսրովու արշաւանքն ՚ի Պարսս՝ համաձայն գրոցն Ազաթանգեղայ, բայց կը յիշէ Հոտմոցեւոց կայսեր Փրիլպպոսի ձեռնտուութիւնն: Արդ Մովսիսի աւանդութեան վերջին մասը թէպէս և սխալ է, այնու զի Աղեք. Սենրոս՝ էր ժամանակա-

կից Խոսրովու, և ոչ թէ Փիլիպպոս . բայց կը համաձայնի Ջոմարա սայ և Եւագրի աւանդութեանն : Իսկ Խոսրովու մահուանէն վերջ հանդիպած դիպաց մասին ցթագաւորելն Տրդատայ՝ կը ծանուցանէ Մովսէս, թէ Փիրմիլիանոսի եկեղեցական պատմութեանէն կ'առնու : Սակայն զարմանալի են մորա հետագայ խօսքերը, զի յետ ասելոյ ՀՅ գլխուն մէջ վասն Փիրմիլիանոսի, թէ « Գրէ բազում վկայեալս և 'ի Խոսրովու 'ի մերում աշխարհիս, համայն և յետ մորա օտարք յօտարաց », անդէն կը յաւելու . « Բայց զի ոչ ~~հարցումքն~~ ~~նկատեմք~~ ~~ստուգեմք~~ և ոչ զամուսնս նշանակէ . . . ոչ ինչ կարևորագոյն համարեցաք երկրորդել » : Սոյն բացատրութիւնս այլուր ևս ըրած է Մովսէս՝ Սալարբայ Մծուրմեցոյն համար, իբր թէ անո՞ն իմն կ'սկսեալէ վասն Հայկայ : Փոխանակ ասելոյ, թէ իմ՝ և իմ ազգայնոցս կարծեաց համաձայն չէ, այն պատճառաւ զանց կ'ընեմ : Արդ, զամուսնս 'ի լուծեան թողած Փիրմիլիանոսէն՝ ինչպէս իմացաւ Մովսէս Հայոց թագաւորին Խոսրովու անուան և ազգանունն, ոյր վասն դիտած էր առ մա . այս ամհասկանալի է : Ինչպէս կարէր, դարձնաւ, յամին 269 վայտնանալ խեղճ Փիլմիլիանոսը՝ յամին 284 թագաւորող Դիոկղետիանոսին և յամին 303 ուր ուրեմն մորա համած հալածանաց պատմութիւնը գրել . այս անկարելի էր գլխովին՝ մեզ ծանօթ Փիրմիլիանոսի համար : Յերկրորդ պարբերութեան մէջ՝ դարձեալ առնալոյն հակառակը կը հաստատէ՝ ասելով . « Իսկ որ ինչ զկնի մա՛ հուան Խոսրովու մինչև ցթագաւորութիւն Տրդատայ 'ի ժամանակ անիշխանութեան պատմէ, ստոյգ համարելով երկրորդեմք » : Եւ ի ըօք Բ . Գրոց ՀԶ գլխուն մէջ կ'երկրորդէ, այսինքն է, կը յիշէ յամուսնէ զՎաղեբիանոս, Կորդոս, Աւրեղիանոս, Կիւմրոս, Տակիտոս և Փլոդիանոս . և Հէ գլխուն մէջ կը յիշէ զՊոռթոս, որ զՀայաստանը դաշամբ խաղաղութեան կը թողու Արտաշրի, որուն ապա 26 տարի ևս թագաւորել կու տայ Հայաստանի վերայ, ապա կ'ածէ 'ի հանդէս զՇապուհ « ցթագաւորելն Տրդատայ ամ մի » : ՀԹ գլխուն մէջ էր պատմէ Տրդատայ քաջագործութիւններն առ Լիկիանոսի : Յայսմ ժամանակի կը թուէ զԿարոս, զԿարիմոս, զՆոմերիանոս և հուակ ուրեմն զԴիոկղետիանոս, որուն զահակալութեան երրորդ տարին, կ'ըսէ, թէ թագ կապեց Տրդատ և եկն 'ի Հայս :

Ինչպէս կը տեսնեն ընթերցողք, ոչինչ ընդհատ քան զպատմազգիրն Տրդատայ՝ տխուր է և Խորնոյ ծերոյն մեզ ըմձայած ժամանակագրութիւնը . բայց բարբաւոր կը համարիմ ես զՄովսէս և մորա մեզի մերկայացուցած հռովմէական կայսերաց և Սասանեան թագաւորաց ցուցակը, որով պիտի պարզուի Ագաթանգեղոսայ զորոց անմեղածիմ զառնալիքն և սրբագրուի տոհմային պատմագրութիւնը : Դնեմք Պարսից Վաղարշ թագաւորին ժամանակէն սկսեալ մինչև ցԴիոկղետիանոս՝ հռովմէական կայսերաց անուանց ցուցակին հետ՝ մասն մոցա զահակալութեան և մահուան ճիշդ տարեթիւքը, որոնց ստուգութիւնը դահեկանօք իսկ հաստատուած է, և սասանեան ժամանակակից թագաւորաց ցուցակը, զոր տան մեզ Ագաթիաս և Յ . Եղեսացի . և Վաղարշէն սկսեալ Արշակունի թագաւորաց ցուցակն մինչև ցՏրդատ, ըստ տոհմային պատմագրութեան :

Հուովմ. նայանիք	զանակ.	ման.	Մաս. թագ.	զանակ.	ման.	Արշ. թագ.	զանակ.	ման.
Նարակալա	211	217 ապրիլ	.	.	.	Վարար2	195	210 °
Մակրինո	217	218 յունիս	.	.	.	Խոսրով Ա	210	260 °
Ամտ. Հերիոզաբաղ	217	222 մարտ	Աղտաշիր Ա	226 սեպտ.	240-241	.	.	.
Աղեք. Սնեքոս	222	235 ապ.
Մաքսիմ. Քրակացի	235	238 մայ.
Ամտ. Գորգիանոս Գ	238	244 փետր.	Շապուհ Ա	241 սեպտ.	271-272	.	.	.
Յ. Փիլիպպոս	244	249 սեպտ.
Դեկ.Տրայամոս	249	251 հոկ.
Գաղղոս	251	263 մայ.
Լիկ. Վաղեղիանոս	253	266
Լիկ. Գաղիէնոս	269	268 մարտ	Որմիզգ Ա	272 սեպտ.	274	.	.	.
Աւր. Վրդոյիոս Բ	268	270 հոկտ.	Վուամ Ա	274 սեպտ.	276	.	.	.
Լիկ. Գոմնտ. Աւրիդ.	270	275 մարտ
Վրդ. Տակիտոս	275	276 ապրիլ	Վուամ Բ	276 սեպտ.	293	Տրդատայ երթմ 'ի մարտ	.	282
Աւրիդ. Պարոսո	276	282 ապ.	Վուամ Գ	0 սեպտ.	...	'ի Պամնոնիա	.	283
Աւրիդ. Վարոս	282	283 դեկ.	.	.	.	'ի վերայ Պարսեց	.	283
Նոմնրիանոս	282	284 ապ.	Ներսես	293 սեպտ.	300-302	Անցանէ 'ի լիւզ ընդ	.	284
Վարիմոս	282	285 մայ.	Որմիզգ Բ	302 սեպտ.	309	Նսիրատ գետ	.	.
Գիովկետիանոս	284	305 մայ.	Շապուհ Բ	309 սեպտ.	379	.	.	286 °
			.	.	.	Տրդատ կը գահակալէ	.	.

Արդ, այս ցուցակէս տեսնուած Արշակունի թագաւորաց թագաւորութեան ժամանակամիջոցը, կամ լաւ ևս ըսելով, տոհմային պատմագրութեամբ ժամանակագրութիւնը բարդատմամբ արտաքինում հիմ աւերակաց կամ կիսավերածամ շինուածոց կը մտամի. և գոգցես իմ առ ՚ի չգոյէ այլոց թագաւորաց շնամացեր եմ մերքս Խոսրովու կենաց տարիները երկնցնել, որպէս զի կամ ՚ի մոռացութեամբ դատապարտեալ մեզ անծանօթ թագաւորաց պակասը լեցուի, և կամ մի քանի այլ ըմդ այլոց իրողութիւններ մէջ բերելու աղագաւ: Ի՞նչպէս կարէր արուարն մերս Խոսրով, որ Արտաշրի գահակալութենէն 10-12 տարի վերջ մեռաւ, ըստ Ագաթանգեղայ աւանդութեան, (այս ինքն է, յամիմ 236 կամ 238) մինչև ցամմ 260 ապրած լինել. և եթէ ապրած ևս համարինք, ինչպէս կարէր Փիլիպպոսի օգնութեամբ Արտաշրի դէմ պատերազմներ մղել, մինչդեռ Փիլիպպոս 244 ին դեռ մոր գահակալից: Իսկ Արտաշիր 241 իմ վախճանած էր: Ի՞նչպէս կարէր Արտաշիր, զկմի մահուան Խոսրովու, 26 տարի ևս առանց ընդհատութեան տիրել Հայաստանի, այս ինքն է, ցամմ 262. մինչդեռ 241 իմ վախճանած էր արդէն: Այս իսկ անհասկանալի է, թէ յամիմ 238-258 փախստական մամուկմ Տրդատ, ինչպէս կարէր սմանիլ և ուսանել առ կոմսին Լիկիմիոսի, որ 263 իմ ուր ուրեմն ծնաւ ՚ի Դակիա ՚ի գեղջուկ ծնողաց, և 286 իմ հագիւ կարէր զիմուտրիլ Դիոկղեսիանոսի իբրև սոսկական զիմուտր, քան թէ բարձրամալ ՚ի կոմսութիւն. այլ հաւանօրէն ՚ի պատերազմունս ըմդ դէմ Վրաստայ Բև և Ներսեսի ըմդունցաւ Լիկիմիոս կոմսութեան և այլ պատուաւանամ: Հ. Ղևտնդ Ալիշան (Այրարատ էջ 374) երկիցս գահակալած կը հավարի զՏրդատ. մի յամիմ 282 առ Պոռթոլու, որ պարտեաց զԱրտաշիր և զՎռամ. միւս ևս յամիմ 297 առ Դիոկղեսիանոսի: Սակայն ստոյգ լինելով Տրդատայ առաջին գահակալութիւնն, այն ժամանակ թէ մորա մամկութիւնն և սմունդն ըմդ խնաւ մակալութեամբ Լիկիմիոսի և թէ Պոռթոսի յամիմ 276-277 Արտաշրի հետ մղած պատերազմն և հաստատեալ դաշինքն անհասկանալի կը մնան. զի այդ ժամանակէն շատ յառաջ մեռած էր Արտաշիր: Ձիւմրդ կարէր յամիմ 286 ՚ի Հայաստան վերադարձող Տրդատը ամ դէն և անդ Շապիոյ Ա. հետ չարաչար մարս մղել, մինչդեռ Շապուհ Ա. յամիմ 272 վախճանել էր. իսկ Շապուհ Բ. յամիմ 309 հագիւ ուրեմն գահակալից: Պարզ այս կէտերուս քննութենէն իւր կը տեսնուի, թէ կարի մեծ է խորոցմ որ ըմդ տոհմային և ըմդ արտաքին պատմագրութիւնս, սանաւանդ հակասութիւնքը: Սակայն միւս կողմանէ մեծագոյն ևս է պատուարմ քան զպարիսպս Ձիւմաստամի, զոր ամբառման ըմդդէմ մեր Խորենացիմ և Տրդատայ պատմագրութեան հեղինակը, ոչ այնքան ճշմարտապատում իրողութեանց ականդութեամբ, որքան իրենց ծանրակշիւ հեղումակութեամբը: Ի՞նչ ըմբելու է ուրեմն այսպիսի մի քննադատական պարագայի մէջ, երբ բազմադարեան ականդութիւնն ինքնին իբրև զլէմ ծանրացած է ազգային սրտի և մտաց համոզման վերայ, և ըմդհանրութեան կարծիքը, թէպէտև անճիշտ, թէպէտև հակասական, բայց յըմթացս դա-

րուց հայ ազգաբնակութեամ մէջ խոր կերպով արմատացած է: Ես կը լռեմ, թող խօսի դրական զիտմականներէն միմ, այսինքն է Նեօլէքէ, որուն հեղինակութիւնը շատ անելի մեծ է քան զառաւ-
 րեան: Սա իւր վերոյիշեալ գործիմ մէջ, յէջ 18, կ'ընէ թէ. « Պարթև
 կիմ պահլալի թագաւորաց ժամանակագրութեամ մասիմ՝ հայ
 մատենագրաց տուած ընծայութիւնն յարգ չունի »: Նոյնը ցուցու-
 ցեր է Գուտշիւր թէ Ազաթանգեղայ և թէ Մ. Խորենացոյ պատ-
 մութեան քննադատութեանը մէջ: Եւ յիրաւի, այն ժամանակագրա-
 կան մեծ սխալները կ'ըմէ Մովսէս այս ժամանակիս կատարուած
 պիպաց մասիմ, զոր ինչ այլուր ըրած է զԿրաստսէ և զմերոյս Ար-
 տաշխէ: Այնպէս որ Շապուհ Ա. ժամանակ կատարուած գործերն
 մասամբ Արտաշրի ընծայուած են և ըստ մեծագոյն մասիմ Շապիոյ
 Բ. որ 70 տարի վերջկու գայ 'ի համդէս: Այսպէս մաս Տրդատ Ան ժա-
 մանակ կատարուած իրերը՝ դար մի վերջ եկող Տրդատիմ ընծայած:
 Ցուցնելու համար, թէ արդարև Շապուհ Ա. եղաւ Հայաստանի տի-
 բորը և ոչ թէ Արտաշիր, շատ է երկու վկայութիւններ մէջ բերել:
 Դիոն Կասիոս (Mumil, II, 523) կ'աւանդէ, թէ թագաւորն Ֆէրու-
 լեան, որ էր ազգական կամ որդի Արտաշանայ՝ յետ մահու Մորաւ ա-
 պաւիմեցաւ 'ի Հայս, և մոցա հետ միանալով՝ մեծ վնաս հասուցիմ
 Արտաշրի. այնպէս որ մա ոչ միայն չկարաց մուսնել զՀայաստ-
 սան, այլ մոյմ իսկ Ատրպատականի տիրելն իսկ տարակուսական է:
 Բ. Նեօլէքէ է Հաթի-պարթէ արծամագրութիւնը մէջ կը բերէ, յորս
 Արտաշիր ինք զինքը լոկ « Բաթա-որ Բաթա-որոց Իբանի » կոչած է.
 իսկ Շապուհ որդի Մորաւ. « թագաւոր թագաւորաց Իբանի և ոչ Ի-
 բանի » կոչուած է: Գ. Ջոսիմոս (Գիրք Ա, ԺԹ.) Շապիոյ կու տայ ա-
 ընելեան ազգաց, այսինքն, Պարթևաց և Հայոց տիրապետութիւնն:
 Ուրեմն իրմ այսպէս լինելով, կ'ըսենք, թէ Տրդատայ կենսագրիմ
 յէջ 42 յԱրտաշրէ « փոսացուցեալ վիերն » և հաստատուած սահ-
 մաններն և Մովսիսի Բ. գլ. ՀԵ « արարչերական » կոչած քարերը
 պէտք է դարձեալ յամուծ մերոյս Արտաշէսի կոչել արարչական:

Բազմահմուտ վարդապետն Չամչեան ինքնին՝ յետ երկայն վապ-
 տակոց և ջանից կը խոստովանի՝ թէ անմիաբանելի է Մովսիսի գոր-
 ծածած ժամանակագրութիւնն ընդ այլոց պատմագրաց: Բայց որով

1. Geschichte der Perser und Araber, p. 18.

2. Պատմ. Հայոց հտ. Ա. էջ 605 կ'ընէ. « Մի ինչ է որ բերէ զամհա-
 մաճայութիւն միմ. իբր զի Խորենացիմ զկարգ կայսերացն 20 ամօք 'ի
 վեր շարժէ. քանզի գայն ամ՝ զոր մատենագիրք կայսերաց համարիմ
 հիմնագրորդ ամն Աղեքսանդրոսի Մամեան, Խորենացիմ համարի իբր
 չորրորդ ամ փլիպպոսի կայսեր. յորոց միջի անցիմ ամբ 7 կամ 7Ա. և
 ըստ այսմ կարգէ մաս զժամանակս այլոց կայսերաց ցՄեծն Թէոդոս և
 ցԱրկաղէոս: Իսկ 'ի հասանելիմ 'ի սկիզբն կայսերութեան Թէոդոսի փո-
 քու՝ կարգէ համաճայն կայսերական ժամանակագրութեանց »: Արդ
 Չամչեանէն յիշուած՝ քայց ոչ քննադատուած այս վերջիմ կէտս՝ կը ցու-
 ցունէ, թէ Մովսիսի գործածած ոչ ժամանակագրութիւնն և ոչ պատմու-
 թիւնն են հասարակայնիմ, այլ իւր ինքեան միայն սեփական. ապա թէ
 ոչ փոքր Թէոդոսէն վերջ ևս պէտք էր միշտ 'ի վեր շարժիլ. այլ չի
 շարժիլ, որովհետև աստի և անդր՝ կը հետևի ժամանակագրութեան և

Բնտև մոյմ իմքմ Զամչեամ տոհմայիմ աւամդութեամ աւելի ուզած է կարևորութիւն տալ, այս կրկին Բեղիմակութեամց Բնութեամ վերայ հիմնուելով, քամ թէ արտաքին պատմագրութեամ, որ դահեկամօք կը խօսի և այլ շօշափելի յիշատակարամօք, այն պատճառաւ իսկ մորա յօրինած ժամանակագրութեամբ ևս չէ մարթ կատարեալ համաձայնութիւն մի կազմել ըմդ այս և ըմդ առաջնոց:

Արդ, ըստ իս, պէտք է խոտտովանել, թէ Արտաւամայ կամ Խոտտովու մահուամէն ցգահակալութիւն Տրդատայ (զոր ես կ'ախորժեմ, մամուլամոդ թէ ստիպուած իսկ եմ Գ. ամուամել) եղած ժամանակ կամիջոցիմ չայատուսմի պատմութիւնը զլիտվիմ տարբեր կերպարամք և համգամանքներ ունեցած է, քամ զոր ըմձայեմ մեզ Տրդատայ կենսագիրն և Խորենացի. և թէ զայն միշտ մերկայացնելու համար պէտք է ըմդուել արտաքին պատմագրութեամ աւամդած մերն, որով միայն վերոյիշեալ երեք ազգաց ժամանակակից թագաւորք և դէպք իմքնիմ ճշգրիտ արարուածովք և տարբերտովք պիտի կարենամ իրարու համաձայնիլ և զուգըմթամալ:

Արդ, ըստ արտաքին պատմագրութեամ ¹, առ Սեպտ. Սևերոսիւ, այսինքն է 195–210, Վաղարշ (որդի Սոյեմայ) թագաւորն չայոց միաբանելով ըմդ համանուն թագաւորիմ Պարսից՝ կ'ասպատակէիմ Հռովմայեցոց տնութեամ սահմանները, երբ կայսրը պատահեալ էր յԱրևմտաւոսի մարտ պատերազմի իւր մախամօրդիմ Աղբիամոսի Բետ. բայց երբ յաշողութեամբ խաղաց Սևերոս ամդրէմ յԱրևելս, թագաւորն չայոց աճապարեց ըմդ առաջ, և գամծիւք և պատամդ մերով, ըմդ որս էր և թագուհիմ չայոց մայր Տրդատայ Բ, հաշտութիւն խմդրեց, տալով մնա և զգումբս 'ի քաջ աղեղմատրաց չայոց: Եւ ըստ ասելոյ Դիոնի, Հե, Վաղարշու գերեալ եղալլը կամ զորդիմ Արտաւամ թագաւոր կը դմէ Ծովաց, և իմքը չայոց աղեղմատրօք կը մտնէ 'ի Պարթևաստամ, կը զրաւէ զՄիշագետս և կ'աւերէ ² զՏիգրոն: Մակայմ յամիմ 226, երբ Սևերոսի որդիմ Կարակալաց Պարթևաց թագաւորիմ Արտաւամայ Դ. դէմ պատերազմ բացաւ, զի իւր դուստրը չետ մնա կնութեամ, և ուզեց զչայաստամ առնել մարզ Հռովմայեցոց, այն ժամանակ զայրացաւ նսև թագաւորն չայոց Վաղարշ, որ էր ազգական Արտաւամայ: Կարակալաց ամկաւ 'ի միմ պատերազմի. բայց մորա յաշորդը Մակրիմոմ խաղաղութիւն ըմելով թագ ևս դրկեց Տրդատայ (մորա մօր ձեռքով, որ 11 ամսէ 'ի վեր պահած էր 'ի դիպահոջ) թագաւորելու փոխամակ հօրն, որ յամիմ 217 մեռաւ 'ի կալանս: Այս Տրդատայ, որ տոհմայիմ

պատմութեամ մատենագրացմ Յունաց: Ուստի իմչաէս Մովսիսի՝ այսպէս ևս Տրդատայ կենսագրիմ աւամդած ժամանակագրութեամ պատմութեամ համար ըսելու է, թէ իրենց միայն սեփական է և ոչ Յունաց կամ Հռովմայեցոց:

1. չերովդիամոս, Գ. զլ. 73:– ջոսիմոս, Ա. 8:

2. Զայս յայտնապէս կը վկայեն Դիոն, չերովդ. Դ. 10, 1: Մպարտիա մոս, 6: Եւտրոպիոս, Ը, 11: Հուսիփիմոս, 21: Սևերոսի այս դէպքն է ամշուշտ, զոր Տրդատայ կենսագիրն մեծիմ Խոսրովու վերայ յարմարցուցել է՝ ասելով. « Միմչև 'ի դրունս Տիգրոնի »:

պատմագրութեամ մէջ ամծամօթ է և ուրեք երեքք վրամ խօսուած չէ, մեծագոյն ուշադրութեամ արժամի է. և ես կ'ախորժեմ կոչել զՍա Տրդատ Բ, զի առաջինն՝ եկաց առ Ներոնիս, որ և Տիրիթ ևս կը կոչուի: Գիտովիմ պատմական հասարելու է սորա գոյութիւնն, և չէ ինչ ամտեղի դնել զՍա ամմիշական յաջորդ Վաղարշու, քամ զԽորով Ա: Այս կէտս տակաւիմ պիտի պարզեմ որ յետագայս: Եւ յիրաւի, հետագայ դէպքմ իսկ կը թուի պահանջել զայս. այսինքն է, յամիմ իոր 221-222 ուր ուրեմ, ըստ վկայութեամ Պրոկոպիոսի¹, Արտաւամ Գ. վերջիմ հետ պարթեական հարստութեամ ՚ի Պարսս, կը թագաւորեցնէ զեղրայր իւր զԱբշու ՚ի թագաւոր Հայոց, յետ մահուամ Տրդատայ Բ, և թէ առ մա ապաւիմեցամ ազգականք Արտաւամայ յետ մահուամ նորա: Սրբ. Պրոկոպիոսի յիշած Արշակն իբրև հասարակ ամուսն ատենելու ենք աստ, ըստ սովորութեամ պատմագրաց Յունաց ևս և Արշակունեաց. քայց նորա յատուկ ամուսն է ի Խորով (Ա.): Այս բամիս քաջ կը համաձայնիմ թէ Պրոկոպիոսէմ նշանակուած ժամանակամիջոցմ և թէ համգամանք տոհմայիմ պատմագրութեամ, ըստ Ագաթանգեղոսեամ զրոց:

Արդ ինչպէս Արտաւամայ մահը՝ ամհաշտ թշմամի յարոյց զԽորով ըմդղէմ Արտաշրի և միզակակից կայսերն, այսպէս ևս Խորովու մահը՝ թշմամի բրաւ զՀայս Պարսից միով մասամք, քայց միւսովմ միզակակիցս Հռովմայեցոց՝ մինչև ցփլիխայոս: Այնպէս որ կարիի է ասել, թէ Խորովու մահը որ համդիպեցաւ հաւանօրէմ 238 իմ², Հայաստամի վերայ այնքամ աղետայի հետեանքներ չունեցաւ, որքամ որ կը մկարագրէ մեզ Տրդատայ կենսագիրն, զի պարսպամեալ էր ՚ի Հռովմայեցոց. և ըստ Հերովիտանի Ե. զԲ. Բ, և Չոսիմոսի՝ նոցա քաջ աղեղմաւորքն հռովմէակիմ լեզունաց հետ պատերազմներ ևս կը մղէին: Սակայն յամիմ 248-252 յաջորդմ Գորդիանու, չկարեմարով այլազգ դէմ դնել Շապուհ Ա, որ կը սպառնայր տիրել հռովմէական սահմաններուն, Հայաստամը զօրութեամք դաշին առաջին անգամ եղաւ հարկատու Պարսից. և Շապուհ յամիմ 253 Խորովու ազգականներուն հետ եմուտ ՚ի դաշմ՝ տամել ՚ի բաց զմատադատուկն Տրդատ Գ. իբրև պատամդ և տիրել Հայաստանի: Այս է ժամանակակէտ տարման Տրդատայ ՚ի տար աշխարմ. քայց թէ ո՛ր տարուեցաւ. արդեօք յարքունիս արքայիմ Պարսից թէ կայսերն Հռովմայ, յայսմ չեն միարամիր տոհմայիմ և արտաքիմ պատմագրութեամց աւանդածներն. թէպէտ և ինծ առաջնոյմ վկայութիւնը բանաւոր կ'երևի, զի յաղթողը Պարսիկք էին: Այս միայն ստոյգ է, թէ քիչ ատենէմ դարձեալ Հայոց զօրեղ կուսակցութիւնը՝ Հռովմայեցոց կողմն բռնեց, ունելով իւր բնիկ թագաւորն, իսկ միւս կուսակցութիւնը յամիմ 260-270, ըստ վկայութեամ Տրեմ. Պոդիոնի, Գ, հակառակ կայսերն Վաղերիոսի՝ Շապուհ ձեռք ևս կը

1. Գիրք Գ. Յաղագս շիմութեամց Յուստինիանոսի:
2. Իսկ Հ. Ղևոնդ Ալիշամ (Այրարատ, էջ 374) յամիմ 258 եղած կը համարի:

կարկառէ: Բայց թէ ո՛վ էր այդ թագաւորը, մանո՞ւկն Տրդատէս, թէ Արտաւազդ Գ (Մամբակունի) զոր Մ. Խորենացի և կենսագիրս՝ Տրդատայ հետ 'ի կողմանս Յունաց կամ առ Հռովմայեցիս փախուցեալ կը համարին: Առաջինը ամհատատայի կ'երեխի, եթէ յամին 253 տակաւին ստմոզեայ համարինք զմա: Արդ եթէ Տրդատայ առաջին փախուտով կամ տարումն եղաւ ստուգու 'ի Պարսս, ոչ 'ի ստմոզեայ հասակի, այլ յետ առաջնոյ զահակալութեան, շատ հաւանակամ է, թէ մորա առաջին զահակալութիւնն իսկ Պարսից կողմնէ հղած լինի: Բայց յետոյ ուրեմն կամ իւրական պարտութեամբ և կամ 'ի կողմնէ Պարսից պատանդ ղրկուեցաւ առ կայսրն: Արդ այսպիսի մի եղելութեան կը վկայեն մաս համզամանք յայմժամու պատմութեան Հայաստանի. զի առ Վուպիսկոսի¹ կը գտնենք, որ յամին 271 կը պատերազմին Հայք ընդ դրօշու ամազոնական թագուհոյն Ջեմոքիայի և կը պատերազմին ըմդէմ Հայոց և Հռովմայեցոց, իմչպէս կ'ակնարկեն հեղինակիս 28 գլխահամարին վերջին խօսքերը: Ուստի կը տեսնուի, թէ այդ ժամանակ Հայք երկու կուսակցութեանց բաժնուած էին, որոնց միմ ձեռք կը կարկառէր Հռովմայեցոց՝ առ Արեւիւանոսիս, 600 աղեղնաւորօք Հայոց, իսկ միւրը կը հակառակէր մոցա. ուստի բնական է կարծել, թէ հակա-հռովմէական կուսակցութեան վերայ թագաւորողն օտարազգի ոմն էր և ոչ Արտաւազդ, այսինքն է Վաթուրի որդին Ջեմոքիայ, որում ձեռք ևս կարկառեցին միացեալ ընդ Մարաց և Պարսից:

Այս ժամանակիս սկսաւ Գթաց և Սարմատաց արշաւանքն 'ի փոքրն Ասիա և ամբողջ իսկ, որոնց դէմ պատերազմելով իմկաւ Ռոբնատոս: Այս ժամանակամիջոցին կը դնէ Տրդատայ կենսագիրն՝ մորա դիւցազմական արութիւնքը, մերթ ըմդէմ Գթաց և մերթ ըմդէմ Պարսից. — մեծամարտութիւնը — թագապսակ վերադարձն 'ի Հայս — անհղ պատերազմներն և աւերմունքը, զորս կը գործէ յերկրին Պարսից: Սակայն մոցա այնքան հաւատք ըմծայելու եմք որքան խոսրովու վերայ պատուածներում. զի ըստ իրիմ ոչ այլ իմչ եմ՝ եթէ ոչ Կարոսի յամին 283 և Գաղբերիոսի յամին 295—297, Ներսէհի Պարսից թագաւորին դէմ մղած պատերազմներն և յաղթութիւններն: Տրդատայ մանկութիւնն 'ի Հռովմ անցնելուն վերայ ոչ արտաքին պատմագրութեան սէջ և ոչ մորա կենսագրի քով որոշ տեղեկութիւն կայ: Առ Եղիշէի եղած վկայութիւնն՝ ուղղակի Կոստանդինոսի ժամանակի երթը կը մշամակէ: Ըստ Յ. Սիմկլետիսի՝ Ժաննա-Կոստանդինոս էջ 705, Գթաց արշաւանքն եհաս մինչ 'ի սահման հռովմէական պետութեան և ոչ թէ 'ի Հռովմ: Կենսագիրը գլխովին մէկդի թողած Տրդատայ թագաւորելուն քաղաքական բուն պատմանքն և համզամանքը, Գթաց թագաւորին Հուշի հետ ըրած մեծամարտութիւնն՝ որ ոչ համոզիպած և ոչ յիշուած է յարտաքին պատմ.

1. Aurel. 27. "Nobis Persarum auxilia non desunt, quæ jam speramus, pro nobis sunt Saraceni, pro nobis Armenii. Եւ 28, "Nam et auxilia quæ a Persis missa fuerant, intercept et alas Saracenas Armeniasque corrupit".

մագրաց, իբրև բուն պատճառ մէջ կը բերէ: Սակայն այն մեծա-
մարտութեան մկարագիրը քաջ քննելով կը տեսնուի ակներև, թէ
ոչ այլքան մեծամարտութիւնն եղաւ պատճառք Տրդատայ թագաւո-
րելուն, որքան թագաւորելը՝ Տրդատայ Կենսագրի մեծամարտութեան
դրուագին: Յիբաւի, մեծամարտելու համար իմջ հարկ կայ « արկա-
մել զանծամբ զըշան թագաւորութեան (աղամանդ) ». ուրիշ շատ մե-
ծամարտութեան օրինակներ ևս կ'ընծայէ մեզ պատմութիւնը, բայց
մկարագրելով զգէնս և ոչ զթագմ աղամանդակապ :

Յ. Մալալա իւր *Ժամանակագրութեան* ԺԲ գրոց մէջ կ'աւանդէ թէ
« Imperator Probus bellum adversus Gothos in Sirmia
habuit, quo tempore fames ingens per totum orbem gras-
sata est »: Տրդատայ կենսագիրն յէջ 45-46 բողոքովն յեղաշրջե-
լով զայս՝ « խարի, համբարապահաց և իշեմոյ » պատմութիւնն հը-
մարած է յամծիմ Տրդատայ, որուն ամտեղութիւնն անմեռն քա-
ղաքի բացատրութեմէն իսկ քաջ կը տեսնուի: Երկրորդ, Թէոփամէն՝
'ի *Ժամանակագրութեան* իւրում Կոստամդիանոսի համար կը պատմէ
այսպիսի մի քաջագործութիւն 'ի Գաղղիա ընդդէմ Ալամաց, բայց
յամին 288: Սակայն դիտելու եմք որ միայն այս կէսս չէ, յորում
Կոստամդիանոսի գործերն և առամծմպատկութիւնքը կը՝ զուգըն-
թեաման ընդ Տրդատայ, կամ լաւ ևս ըսելով, կենսագիրս սեփակա-
մած է իւր դիւցազինմ. այլ մոյն իսկ հռովմէական դիւցազինմ հսկա-
յագոր զօրութիւնն - Սարմատացոյ դէմ ըրած մեծամարտութիւնն -
մորև առաջին կենսաց քաջակորով մրցութիւնքն - առիւծուց և ցլուց
հետ ունեցած ընդիմադրութիւնքն - երիվարաւ ճահիճմերէն անցու-
դարծն - մորա բազմամեայ պամդիստութիւնն առ դրամ Դիոկղեսիա-
մոսի իբրև պատամդ - վերադարծն 'ի հայրեմիս - անցմիւն 'ի զը-
լուխս գօրաց և գոռ պատերազմներն: Արդ բոլոր սոյս քաջադիպու-
թիւնքս անկարելի է դիպուածակամ համարել. այլ պէտք է ասել,
թէ Տրդատայ կենսագիրն՝ ուղղակի Կոստամդիանոսի կենսագրու-
թեմէն առած է այս ամենայն, ինչպէս մաւ Կոստամդիանոսի մասին
պատմածներն, զորս յետոյ պիտի տեսնենք: Արդ համարելով լուկ,
ըստ տոհմային պատմագրութեան, թէ իրօք Տրդատ 'ի Յոյն տա-
րուած ըլլայ, ես կը կարծեմ թէ Նիկոմիդիա եղած լինի մորա բմա-
կավայրը. զի աստ էր այն ժամանակամիջոցին աթոռն կայսեր
(Դիոկղեսիանոսի): Բ. ըստ վկայելոյ Խորենացոյն՝ Բ. զլ. 24. աստ
ծանօթացաւ Տրդատ ընդ Կոստամդիանոսի, որ մոյնպէս տարագիր
'ի հօրէն՝ կ'անցնէր իւր գեղեցիկ օրերն յօտար երկրի:

Կենսագրի աւանդածներուն վերայ ըրած այս համառօտ դիտ-
դութեմէն վերջ՝ դմենք այժմ Տրդատայ թագաւորութեան քաղաքա-
կան բուն պատճառն: Ամմ. Մարկելլոս, ԺԳ. 5, 11 կ'աւանդէ, թէ
(յամին 295-297) թագաւորն Պարսից Ներսէս պատերազմ բացաւ
Հոտվմայեցոց միզակակից Հայոց դէմ: Արդ, այս դէպքս կը ցուցմէ
մեզ, թէ Շապիոյ Ա. մահուամբը՝ Հայք դարձեալ Հոտվմայեցոց
կողմն անցան, ուզելով 'ի կայսերէն զԱրշակունիին Տրդատ՝ իրենց
թագաւոր, կամ լաւ ևս ըսելով, այս ժամանակին Տրդատեանք աւելի

զօրացամ: Մոյմ պատերազմի թէպէտ և 'ի սկզբամ ձախող եղաւ, բայց 'ի վախճանի բարեբաստ ելք ունեցաւ Հայոց հասնար. որով հետև ըստ վկայութեամ պատմագրաց ¹ Յուսմ, Դիոկղետիանոսի զօրավարիմ Գաղերիոսի վնասկամ յաղթութեամբը՝ ստիպուեցաւ Ներսէսի խաղաղութեամ դաշն խնդրել, որոյ պայմ ամենրէմ մին և դաւ Հայաստանի սովակախ թագաւորութիւնն, ուունահանմը պիտի լինէր, ըստ ասելոյ Պետրոսի Պատերզուղոսի ², Մարաց դրակից Ձեմթայի ամրոցը: Կ'երևի, թէ այս բաղախնդիր ճակատամարտիս մէջ տիրապարզնմ Տրդատ ևս մեծ գործ տեսաւ, ունկոյ վզողմ ինքնակալիմ Հռովմայեցոց. և Տրդատայ կեմագրի՝ յէջ ³ Յ5 աւամ դածր թէ, « Մամաւանդ աւար առեսլ զամեմայն երկիրն Տանկաց՝ դառնայ », առտ միայն կր ճշմարտի. վասն զի Գաղերիոս իւր Մակագրութեանցը ⁴ մէջ բաց 'ի Պարսից դէմ տարած կրկիմ յաղթութիւններէմ՝ մոցա կուսակից Մարաց, Ադիաքեմաց և Հայոց վերայ տարած յաղթութեամբ և տիրութեանցով ևս կր պարծի: Հուսկ ուրեմն, ըստ համաստայն վկայութեամ արտաքին պատմագրութեամ, իւրև արդիւնք վերոյիշեալ խաղաղական դաշինք խաղաղութիւնաբերն Տրդատ, յամին 297 հաստատուեցաւ, ձեռնտուութեամբ հռովմակամ կայսեր, յաթոռ կործանեալ կամ լաւ և լքեալ և բաժանեալ թագաւորութեամ Արշակունեաց, իր դաշնակից թագաւոր Հռովմայեցոց: Եւ ըստ հաւատարիմ վկայութեամ ծանրակշիռ հեղինակութեանց ⁵, Պարսից թագաւորը հրաժարեցաւ այնուհետև Հայոց վերայ ունեցած գերիխանութեանէն: Այնպէս որ Տրդատայ այս զահակաւութեանս ամուշնապէս յաշորդեցիմ խաղաղաւտ տարիներն ⁶, և ոչ թէ ըստ այլըմբայլոյ աւանդութեամ կեմագրիմ « Զամեմայն ժամանակս իւրոյ թագաւորութեամ աւերէր քանդէր գերկիրն Պարսից թագաւորութեամ ». որովհետև եթէ իրօք ուզէր ևս հսկայագօրն Տրդատ՝ չէր կարող իւրովի պատերազմ բանալ, առանց զըժելոյ 40 ամեայ դաշինք, զոր եղ կայսրն Դիոկղետիանոս ընդ արքայից արքայիմ 'ի Մծրիմ: Այսպէս ուրեմն պէտք է ողջունել զՏրդատ թագաւոր խաղաղութեամ, քան թէ ըմծայել մնաստայօղ պատմութիւնս՝ լի օղաչու յաղթանակօք ընդդէմ Պարսից: Վասն զի Տրդատայ պատերազմներն շատ տարիներ վերջ տեղի ունեցան, և էին զլիսաւորապէս ընդդէմ Հիւսիսայնոց և պաշտպանողականը. որոց մասին այլուր առիթ կ'ունեմանք խօսելու:

1. Եստրոպիոս, Թ, 25: Իուսիմոս, 25:

2. Առ Միլլէրի, հատ. 14:

3. Եւսեր. Եկեղ. Պատմ. Ը. 17:

4. Զոսիմոս, Եստրոպիոս, Ամմիանոս և Եւսերիոս, գիրք Ը, գլ. ԺԸ:

5. Յիրակի, զիլտոր, *De Caesaribus*, փետոս, ին *Breviario* և *Լիբանոս*, ին *Bosilio* կր վկայիմ, թէ յամին 297 Կրսեհի հետ գրուած այդ դաշինքմ իւր պայմաններով համդերծ պահուեցաւ մինչև ցամ 337, առ Կոստանդնուս: Ուստի պահուած չպիտի լինէր, եթէ ըստ զեմագրիմ Տրդատայ պատերազմներն ստուգիլ կատարուած համարիմք. որովհետև զիսաւոր պատմաններէմ մին էր Հռովմայեցոց միգակակից Հայաստանի անկախութիւնն և խաղաղութիւնն:

Այս է ահաւասիկ Վաղարշէմ մինչև Տրդատ Գ. Արշակունեաց Պատմութեամբ և Հայաստանի կացութեամբ բնական վիճակը, զոր աւելի լաւագոյն կերպով կարելի էր պատկերացնել, եթէ ձեռնարկած գրութիւնս ինձ թոյլ տայր: Աստ՝ որքան որ այլազգ եմ իրք յաւանդելոցն ՚ի տոհմային պատմագրութեամբ, մոյճքան ևս բնական կերպով կ'ընթանամ. և ասք թագաւորաց և գործք՝ ժամանակագրական կերպով իսկ գեղեցիկ կը զուգընթանամ ընդ ժամանակագրական պատմութեամբ և գործոց կայսերաց և Սասանեան թագաւորաց: Այսու կը լրանայ Արշակունի թագաւորաց պակասաւորագագացուցակը՝ մերմուծմամբ միոյ կամ երկուց անյայտ թագաւորաց, որոնց մերկայութիւնը միայն ՚ի պատմութեամբ բաւական էր փոխել իրաց վիճակը: Այսու դարձեալ կը յայտնուին տոհմային հիմնաւորութեանց անյարմար կիրառութիւնքը, որոնց մի մասը ՚ի կենսագրէմ Տրդատսոյ և միւսն ՚ի խմբագրողէ պատմութեամբս պէտք է մերմուծուած համարել: Յիրաւի, որքան անյարմար է և հակապատմական մտածել զՊոսրով յամին 210, իբրև ամսիջական որդի և յաջորդ Վաղարշու, և տալ մտա ջազմութիւն արշաւանքներով աւելել զՊարսկաստան մինչև ցամ 260, մոյճքան ևս բանաւոր է դնել յամին 217 զՏրդատ Բ. իբր հարազատ որդի և յաջորդ մսիմ իսկ Վաղարշու, և ընդ Սեպտ. Սենրոսի տալ արշաւել մինչև ՚ի դրուսն Տիգրանի. և հուսկ ուրեմն յամին 222 ածել ՚ի հանդէս զորդին Տրդատայ Բ. զՊոսրով Ա. և զոյգ ըմդ Աղեք. Սենրոսի տալ պատերազմել ընդ Արտաշրի և յաղթել:

Արդ, Տրդատայ Բի գոյութեամբը, զոր տոմսային պատմագրութիւնը շփոթեր է ընդ մորա թուան Տրդատայ Գի և քրիստոնեայ մեծ թագաւորին հետ, մի այլ ապացոյց կարելի է մէջ բերել Հայոց պարթեական թագաւորաց ազգագրական ցուցակը, զոր կ'ընծայէ մեզ մոյմ ինքն տոհմային պատմագրութիւնը հակառակ իւր: Աստ կը տեսնենք արդարև, զի Տրդատայ Գի որդին փոխանակ իւր հօր անունամ որուն անսիջապէս կը յաջորդէ, պայսում ամուսնաբ Պոսրով կը յորջորջի: Այս բանս դիպուած կամ սոսկ երևոյթ չէ, այլ պատմական իրողութիւն, որ կը ցուցնէ, թէ Պարթև - Արշակունի թագաւորաց սովորութեամբ համեմատ ընդհանրապէս թագաւորող հօր որդիմ՝ պայսում¹ ամուսն կը կրէր. որպէս զի մէկ կողմէն առ կենդանութեամբ հօրը՝ շփոթութիւն չիլին. միւս կողմէն այլ վախճանեալ պայսում ամուսն իբրև ըմտամեկան մակամուսն պահուի: Այս.

1. Պոտուգու, այսպիսի մի եղիլութեամբ շօշափեյի ապացոյց մի ևս կուտամ մեզ Ձեռնոցայ պատմագրութեամբ երկու բնութիւն օրինակները, այս ինքն է, Ե երրորդն և Գ չորրորդ գոյազերերն. յորս խօսելով Ամակայ որդւոյն Պուրեմի մասին այսպէս կ'ըսուի. « Իսկ միւս մամուսնն որոյ զպայսումն էին եղեալ Պուրէմ » , այսինքն է զամուսն պայսում իւրոյ: Գ օրինակը բաց աստի մի ուրիշ մուկրական իրողութիւն ևս կը յայտնէ մեզ յոյժ մպաստաւոր. այսինքն է, մեր Ղուսաւորչիմ սուրոն մկրտութեամբ և յունական ամուսն առքմթիւն, մորա հեթանոսական և պարթեական ազգամուսն և ամուսն ինքնին մէջ կը բերէ, ոսելով այսպէս. « Եւ մկրտութեալ՝ Գրեգոր, զոր մայր և հայր մորա Ամակչատ-Պուրէմ կոչէին » :

պէս ուրեմն մասն քրիստոնեայ թագաւորիմ՝ Տրդատ ամուսնակու չութիւնը՝ մատնամիջ կը ցուցնէ մեզ, թէ մորա պապն ևս Տրդատ կ'անուամէր:

Գուտշմիւր՝ մախկիմ Խոսրովի մի գոյութիւնն ևս հարկաւոր կը տեսնայ և շնամացած իսկ է ապացուցանել զայն 'ի թերէ գտնուած մանոնեան կրթողի հետեւեալ արձամագրութիւնը. Χοσρόης Ἀρχιεπισκοπος ἔδωκεν ἐπιτάχασα: Եիրաւի, թէ քիչ առաջ յիշուած՝ ազգացուցակէն և թէ արտաքին պատմագրութեանէն կը տեսնուի այսպիսի մի թագաւորի պակասատոր միջոցը. սակայն ես չեմ կարծեր, թէ գերմանացի քննադատէն մէջ բերուած և լրասարմած այդ արձամագրութիւնը՝ իրօք այն հմութիւնն ունենայ, որուն ուզած է տալ Գուտշմիւր: Այլ հաւանօրէն յետև ժամանակի հայազգի ճամապարհորդի մի գրութիւն ըլլալու է. որովհետև թագաւորական տիտղոսը կը պակսի:

Արդ, ցայսպայր եղած քննութիւնք կը ցուցնեն, թէ Տրդատայ կենսագրին մեզի աւամուշաճմեղէն ոմանք ըստ կամս յերիւրեալ են, և այլք յեղաշրջուած, ըստ ժողովրդական վիպագ և զրուցաց Հայոց. իսկ ընդհանուրին ըմթացքը՝ հակառակ է արտաքին պատմագրութեան Յունաց և Հռովմայեցոց. իսկ որովհետև յոյն կամ հռովմայեցի պատմագիր մի չէր կարող իւր ազգային պատմագրաց ընդհանուր աւամուշաճմէն դուրս բոլորովին տարբեր բաներ աւամուշաճել և տարբեր ժամանակագրութիւն գործածել, ուրեմն եզրակացութիւնս ամենուն հասկանալի է: Ահաւասիկ միւս այլ շօշափելի նպացոց Հռովմայեցի Ագաթանգեղոսի կամ Տրդատայ ատենադարի անգոյութեան:

Գ Լ ՈՒ Ի Ե .

Ս. Գրեթորէ գործոց կամ Կենսագրութեան սիշքնատրութեանն և պարագայը. — Տրդատայ պատմութեան նորա հետ ունեցած կողմնէն ի կողմնադիւրս. — Երկուսին մէջ երկուցոք պարբեր բնագրոջն և հակասութեանը. — Այլ ընդ այլոց յարմարութեամբ հայեպէս հին վերջեր. — Արտաշատու բանքին գրեպէս և նորա գաղտնիքը. — Ո՛վ էր այրէ վերջ. — Բամբէշն հայ վիշապանութեան և նորա գոյութեան և կենաց խորհրդատու հանգամանքը:

Ի 49 իջէ ամտի ցէջն 103 բռնած միջոցը՝ կը պարունակէ Ս. Գրեթորի գալուստն 'ի Հայս ընդ Տրդատայ — մորա քրիստոնեայ յայտնուիւն — թագաւորին հետ ըրած փոփոխ տրամախօսութիւնը — ամտանելի չարչարանքներն և վարդապետութիւնն — և արկանիւն 'ի խոր վիրապն Արտաշատու:

Ե. զխահամարին Ա. պարբերութիւնը՝ գրեթէ կրկնութիւն է մախկնութեան պարբերութեանը՝ յորում կենսագիրը կը ծամուցանէ թէ,

« Խաղաց զմաց թագաւորն (Տրդատ)՝ի կողմանս Հայոց ... եզիտ զզօրս Պարսից, զբազումս կոտորեաց և զբազումս վախաստակամս արարեալ, և զհայրենեաց տէրութիւնն յիմքն մուսնեաց » : Իսկ յայսմ՝ վերստին կը ծամուցուի, իբր ՚ի դիմաց այլը ուրումն, մորա պարտամն, այնպէս իբր թէ առաջնոյն մէջ ընաւ ծամուցած չի լիւմէր, յասելմ . « Յառաջին ամիմ Տրդատայ արքայութեամ Հայոց մէծաց, Խաղացին Եկն հասին յեկեղեաց գաւառ » : Արդ դիպուածով եղած չէ ամենեկն այս կրկնութիւնս . ինչպէս դիպուածով չէ յէջ 42 Ս. Գրիգորի և Տրդատայ ՚ի միմն՝ ժամանակի ՚ի կողմանս Յունաց փախստեամ հատուածիմ մերմուծումը ; և յէջ 43 Յունաց կայսեր հալածանաց միջամկեալ հատուածը : Այլ դիտումար կամիել է հատուածիս հեղինակը յէջ 42 կամուրջ մի կապել դէպի առ Պատմութիւն Գրիգորի, որ կը սկսի յէջ 42, Բ պարբերութեամբս « իսկ որդի Պարթևիմ » և այլմ, և յառաջ կը վարի 49 իշումը : Այսպէս նաև կայսեր հալածանաց յիշատակութեամբը՝ կը պատրաստէ զմիտս ըմթերցողաց առ պատմութիւն հալածանաց և չարչարանաց Գրիգորի, որում հեղինակը՝ Տրդատայ պատմութեամ և միջամկեալ հատուածոցս հեղինակներէմ տարբեր է :

Արդ ցուցնելու համար, թէ Ե. զվսահամարիմ Ա. պարբերութեամ կամ Գրիգորի գործոց հեղինակը մոյմը չէ յէջ 42 պարբերութեամ երեք տող հատուածիմ, որ է, « Արդ երթեալ սմեալ և ուսեալ Տրդատէս առ կոմսի ուսեամ Լիկիւմէս անում կոչեցեալ », յէջ 43 Բ. պարբերութեամ՝ որ կը սկսի, « ընդ ժամանակս ընդ այնոսիկ իշխանն Յունաց » և այլմ . և յէջ 48 Գ. պարբերութեամ հատուածիմ՝ որ կը սկսի, « Եւ յետ մարտիմ յաղթութեամ » և այլմ հեղինակին հետ, բաւական են հետեւեալ դիտողութիւնքը . Ա. Դիտելու է, որ 48—49 էջ պարբերութեամ հեղինակը՝ Տրդատայ գալուստն ՚ի Հայս, Պարսից հետ սուած պատերազմներով և կոտորածներով կը մկարագրէ, որ սուտ է և զլիտվիմ հակառակ արտաքիմ պատմագրութեամ, զոր ՚ի վեր անդը ցուցիմք : Իսկ Ե. զվսահամարի Ա. պարբերութեամ հեղինակն, ընդհակառակն, ոչ միայն առանց պատերազմի կը պատմէ Հայոց մորապսակ թագաւորիմ մուսքն ՚ի Հայս, այլ և ոչ իսկ Պարսից սահմանները կը մտցմէ : Եւ այս կարի ճշմարիտ է : Յիրակի, Փոքր Ասիայէմ կամ ՚ի Նիկոմիդիոյ (ուր էիմ արքունիք Դիոկղետիանոսի և ուրամօր կատարուեցաւ Տրդատայ թագաւորութեամ համդէսն) եկող Տրդատն՝ ինչպէս կրմար ՚ի Պարսկաստան մտնել, առանց անցանելոյ մախ յեկեղեաց գաւառ : Բ. 43 իշում յիշուած ամանում կպարմ, եթէ էր ստուգու Դիոկղետիանոս, չէր կրմար Տրդատայ թագաւորութեամ տարեթուէմ, այսինքն է,

1. Այս բանս ամենեկն պատմական հիմն չունի . որովհետև Գրիգորի և Տրդատայ հարց մահը թէպէտև մի և մոյմ տարիմ կը լիմի, բայց ոչ մոյմպէս և մոցա տարումն ՚ի կողմանս Յունաց : Վասն զի, ինչպէս տեսանք, Խոսրոփու մահուամբը Հայաստան ամդէմ և անդ չմուսնեցաւ յԱրտաշէրէմ, ինչպէս վրիպակաւ կ'ենթադրէ հեղինակ հատուածիս, այլ շատ տարիմը վերջ և ՚ի ձեռն Շապուհ Ա :

297 է՞մ առաջ հալածել զՆկեղեցիմ, որովհետև մորա առաջիմ հալածամքն եղաւ յամիմ ՅՕՅ, ըստ համաձայն վկայութեամ ամենայն պատմագրաց. իսկ եթէ մի ուրիշ կայար ենթադրենք, Տրդատայ թագադրութեան ժամանակամիջոցէն կը խոտորինք: Գ. և մեծագոյն հակասութիւն մի է և այս. զի յէջ 43, դիմել կու տայ հեղինակն հատուածիս՝ Գրիգորի առ Տրդատ, մինչ էր 'ի կողմանս Յուճաց, և կայսեր հալածամքն յիշելէն անմիջապէս յետոյ կը յարէ. « Իսկ իբրև զգացեալ Տրդատիոս վասն Գրիգորի՝ թէ քրիստոսական պաշտամանն հաղորդ է, սկսեալ այնուհետև պատուհասակոծ առնէր զնա. և ազգի ազգի արհաւիրս արկամէր 'ի վերայ մորա. բազում ամգամ 'ի բանդ և 'ի կապումս տանջամօք մեղէր զնա »: Իսկ յէջ 50, որ է շարունակութիւն Ե. գլխահամարին կամ Գրիգորի պատմութեան, ընդհակառակն Տրդատայ 'ի Հայս վերադարձին ժամանակ՝ եկած կը պատմուի յունատարազմ Գրիգոր առ նա. և Տրդատ իբրև « այր մի օրբաւան և անշխարհիկ կ'ամուսնէ զնա և հեթանոսիկ Հայաստանի բարեացապարտ մօր Ամահտայ պատկերին շնորհակալեաց երախայրիս չմատուցամելում առթիւ՝ անգամ կը ճամնչայ, թէ Գրիգոր քրիստոնեայ է, ծանուցանելով իսկ, թէ ցայն վայր գտի էր 'ի Գրիգորէ, և այն օրէն վերջ կը հրամայէ չարչարել զնա: Դառնամք այժմ Գրիգորի Պատմութեան քննասիրութեամբը պարապելու:

Ազատագրութեան գրոց այս մասը՝ պատմական տեսակէտով մկատելով՝ կենսագրութեան մի ամենայն արժամիքն ունի, բայց ժամանակակից վկայարանութեանց սովորական ազդեցութիւններէն գլխովին զերծ չէ. մասնաւոր թէ 'ի բազում ուրեք և ըստ բազմազամ պարագայից, վկայարանութեան կերպարանք առած է. այնպէս որ՝ յառաջ քան զքննութիւն և յետ մանրագլին քննութեան չէ մարթ ըսել, թէ ցայս վայր Տրդատայ մասին պատմագրողն՝ Եղած լինի նոյնպէս զրիչ Գրիգորի պատմութեան: Առաջնոյն մէջ իբք առհասարակ և յարաբերութիւնքն են բոլորովին քաղաքական. իսկ 'ի վերջնում՝ կրօնական և վարդապետական: Տրդատայ պատմութեան մէջ մասնաւոր շանք մի կը տեսնուի հեղինակին կողմանէ ածել 'ի համդէս զթագաւորն Հայոց իբրև զդիւցազմ, և զամենայն գործս քաջութեան գործեսլալ յօտարաց կամ յազգակից մախորդ թագաւորաց, այսպէս և զժողովրդական արանդութիւնս Հայոց զհինս և զժամանակակիցն անձնաւորել 'ի Տրդատ: Իսկ ընդհակառակն այս մասին մէջ՝ Գրիգոր է միակ դիւցազմ և դիւցազմ քրիստոնէական, որ հրաշքաբան բերանով և աներկիւղ հաւատով կը խօսի և կը յարթաւ հարէ զթագաւորն հեթանոս և զմոլորութիւնս մորա, կ'արհամարհէ մորա ամենազգի տանջանքներն, և զնա յիբրև և Լորնիբրև մէջ կը դասէ (հեղինակին բառերովը խօսելով): Տրդատ՝ իբրև զմի 'ի սովորական տանջողաց կամ 'ի կուրացեալ կուսապաշտից կը մկատուի, որուն բերանը միայն տանջանաց փոփոխ սպառնալիքներ և անզօր խօսքեր դրուած են: Դիտելու կէտ մի է և այս, զի Տրդատայ ամուսն հագիւ թէ երկիցս կը կրկնուի այս ընդարձակագոյն խօսակցու

թեանս մէջ. իսկ Լուսաւորչիմ՝ գրեթէ յամենայն 'ի պարբերութիւնս, և միշտ յումարէն ձևովս **Գրեթէ**: Այնպէս որ այս դէմ՝ ընդդէմ է ընդդէմ կամ ձկտումները չտեսնելու և մի և միս հեղինակին ընծայելու համար՝ պէտք է կոյր լինել և կոյր մտօք և ոչ աչօք միայն: Սակայն 'ի հետևեալսն դեռ արեւի աչքի զարմող և խոշոր պարսպակներ կը յայտնուին Գրիգորի պատմութեան մէջ. սպիւմքն է, եօթն օր անընդհատ Տրդատ կը տամջէ զԳրիգոր, Գրիգոր օրոյ սէջ կախուած կը խօսի և նշանագիրները կը գրեն: Սակայն պէտք է ըսել, թէ ոչ եօթնօրեայ ժամանակի խօսակցութեան և ոչ այլ նշանագրութեան միւթ պարունակուած կայ աստ: Երկրորդ, միւթէ այդ եօթն ատուրց մէջ, ոչ մի քաղաքային դէպք կամ դեսպանակամ յարաբերութիւն, ոչ մի արքունի բանագնացութիւն, միով բամիւ, ոչ մի ընտանի և ներքին գործ չհամդիպեցան. մինչդեռ Հռիփսիմեանց վկայաբանութեան սկիզբն և վերջ՝ այնպէս յարափոփոխ դէպք իրեաց կը յաջորդեն, զորս հեղինակն անգամ չի կրնար գրել և յօդել 'ի մի: Իսկ եթէ ստուգու համդիպեցան, ընդէր ոչ նոյնպէս 'ի գրի հարան. եթէ յիրաւի Տրդատայ կենսագիրն էր գրող և այսմ, որ հրաման իսկ, ասէ, ընկալեալ յարքայէ « գրել որ ինչ առ նոքօք գործեցան »: Աստի իսկ կը տեսնուի, թէ այս մասը Տրդատայ կենսագրին չի վերաբերիր, այլ այլոյ ուրումն, որուն գլխատըր նպատակն էր, Գրիգորի կենսաքնն և գործերն 'ի գրի առնուլ:

Արդ, այս մասին Տրդատայ կենսագրին չլինելու ապացոյցներն՝ արդէն տեսնուեցան 'ի սկզբնատրութեան ամոք, վերոնշանակեալ հատուածներով. իսկ 'ի շարունակութեան աստ՝ բաց յայտը կը վերաբերեն նաև 'ի Ս. Գրոց փոխ առեալ և խիտ առ խիտ յառաջընթացութիւն կամ տեղիքն, որոնք 'ի բազում ուրեք կը տարբերին **Եօթնօրեայ** թարգմանութեանէն: Բ. յունական ոճերու և բացատրութեանց հետ՝ կը մկատուին նոյնպէս ասորական և Ս. Գրոց բացատրութիւններ: Տեսնենք այժմ՝ մորա վերջատրութեան համգամանքներն: Արդ, 'ի գլխահամարն ԺԱ. յէջ 103, ուր առ վայր մի կը դարձի Գրիգորի կենսագրութիւնն և ամոր կը յաջորդէ Տրդատայն՝ այսպէս կ'ըստուի. « Իսկ թագաւորն Տրդատ, զամենայն ժամանակս իւրոյ թագաւորութեանն արեւէր քանդէր զերկիրն Պարսից թագաւորութեան » և այլն: Արդ, այս գլխահամարին յէջ 102 կը ծանուցուի իբրև մոր ինչ և կարևոր գիտ, թէ կապեալն Գրիգոր է որդի Անակայ մահապարտի, և թէ չէ նա արժամի կենաց. և թագաւորն ամգամ մեծ խնամք կը տանի ստուգելու, թէ « արդարև որդի Անակայ Պարթևի է, որ սպան զԹոսրով հայր մորա »: Այս յայտնութիւնս արդէն իսկ յէջ 42 յերկրորդումն պարբերութեան եղած տեսանք. ուրեմն եթէ 42 իշի պարբերութիւնը Գրիգորի կենսագրին ընծայեմք, 102 իշի յայտարարութիւնն ոչ ևս կարէ լինել այժմ, և կը մնայ առանց նշանակութեան. իսկ եթէ ընծայեմք Տրդատայ կենսագրին, սոյն յայտարարութիւնս Տրդատայ կենսագրին համար կը մնայ առանց նշանակութեան. ուրեմն պետք է ըսել, թէ կամ այդ երկու տեղիքը իրարմէ անկախ երկու գրութիւններ կը յայտնեն, որոց մին

Տրդատայ, իսկ միւսը Գրիգորի կենսագրին է ամկ. և կամ ըսել, թէ այդ երկու տեղեաց միմ ոչ միոյմ և ոչ միւսոյմ, այլ խմբագրողի գրոցս է ըմտայելի:

Աղբերաց տարբերութեամ մի այլ ապացոյց կը գտնենք յէջ 103, ուր Տրդատայ համար կ'ըսուի թէ. « Եւ ինքն իսկ թագաւորն խաղայր զմայր 'ի Յէրոց յԱյրարատ գաւառ 'ի Վաղարշապատ քաղաք 'ի Հայոց աշխարհ յարեւել »: Միջնդեռ կենսագիրն Տրդատայ կ'աւամդէ, թէ Խաղարշ էր Յէրոց արքային (Խոսրովու) յՈսրէ գաւառ: Ըստ ինքեան ամկարելի չէ, որ Արշակունեաց թագաւորներն այլ և այլ ժամանակաց մէջ այլ և այլ ձմերոցներ ունեցած լինին. բայց ամկարելի էր մկատմամբ Տրդատայ կենսագրին, որ շատ տարիներէ վերջ եկած կը համարի զինքն 'ի Հայս և ականատեսն իրաց վկայ կը կոչուի միայն: Իսկ « զմայր յԱյրարատ գաւառ յարեւել » բուռերը կը ցուցնեն, թէ Ս. Գրիգորի չարչարանաց օրերն ոչ եթէ 'ի Վաղարշապատ, այլ յերիզայ կատարուեցան. և թէ անտի ամմիշապէս տարուեցաւ Գրիգոր 'ի խոր Վիրապմ¹ Արտաշատու, և Տրդատ 'ի Վաղարշապատ քաղաք:

Ը. Գլխահամարին մէջ յէջ 89, յետ աւարտման վարդապետութեան և մաղթանաց՝ կ'ըսուի թէ. « Եւ միջնդեռ կայր կախեալ այն պէս խօսեցաւ զայս ամենայն և բրեշխոս արեւակալ դռնբռն Նշանաբաց »: Փ. Բուզանդացին ևս, Դ. Դարուլթեան 87 իշում կը յիշէ « սեմիարք մոտարացի » անուամբ, որ գրեթէ թարգմանութիւն է Տրիսէա էն յաւրօ՛՛՛՛՛ բառերում, զոր զոէ Պրտարքոս՝ Կաստին Ոստիկեցոյ վարքին մէջ: Յիրաւի, մեր թուակնին անաշիմ դարէմ 'ի վեր կային առ Հռովմայեցիս մոտարք մշամագրողք, յորոց ապա անցաւ առ Յոյս: Սակայն իցէ՞ ստոյգ ըմդումն, թէ այդ արուեստը տարա-

1. Վիրապս այս՝ ոճրագործաց միայն պատժարան լինելով, չէ մարթ կարծել թէ թագաւորն Հայոց Տրդատ այնքան անգուլթ և ապառուհ դած լինի, միմչև « զիւր սիրելիմ զԳրիգոր », որ Խոսրովու մահուան մասնակից չլինելն զատ՝ իւր հաւատարիմ սպասահարկութեամբը թոր յանցանաց տեղ իսկ լիովին վճարած էր և Տրդատայ համակրութիւնը մեծապէս առ ինքն գրաւած, անդ ձգած ըլլայ: Այսպէսի մի եղելութեան վերայ թերևս տարակուսելով կենսագիրն ինքմին, դիտմամբ « որդի մահապարտի » քացատրութիւնն ըրած է: Թէպէտև ազգային հնագոյն աւանդութիւնը Գրիգորի կենսագրի վկայութեանը վերայ հիմնուած՝ անզատին 'ի վաղ ժամանակաց « 'ի վիրապմ մերքին » հռչակած է. բայց, թէ վիրապ ըսելով՝ հո՞ր ինչ կամ փո՞ս կը հասկնային, թէ այլ ինչ զլեռն վին, ես մախըմթաց և հետագայ պատճառաց վերայ հիմնել՝ կ'ախորժեմ « 'ի դղեակ բերդին » եղեալ համարել: Ա. զի Գրիգոր էր մնացեալ արու ժառանգ Մուրեմեան Պահլաւին յետ թագաւորեալ ցեղին. ուստի ըստ պահանջել հարկին այնու միայն կարելի էր շարունակել զայջորդութիւն Պարթևազմ հարստութեան: Ամշուշտ մեծանձն Տրդատ իսկ այս քաղաքային հետադարձութեամբ Գրիգորի ազմուակամ զարմմն հետ՝ մորա ազմիւ հոգւոյն ևս իբրև « հասամէր 'ի վերայ », արհամարհելով այն մախարարին խորհուրդը, որ ասաց, թէ « չէ պարտ կենաց », մըտման տուաւ « խաղացուցանել զմա 'ի դղեակ բերդին »: Բ. հնգետայ սան տարի այն տեղ ողջ մնալու աւանդութիւնն և այրի կնոջ պատմութիւնն, որուն վերայ յետոյ ուրեմն ըմբարձակօրէն պիտի խօսիմ, զայս կը ցուցնեն:

ծուած էր մոյմպէս և 'ի Հայս 'ի սկիզբմ 'ի դարու: Մ. Էմին իւր Հայոց գրի մասիմ գրուած մի յօդուածի մէջ, որ հրատարակուած է յամիմ 1858, Մ. Խորեմացոյ պատմութեամ ռուսերէմ թարգմանութեամ հետ իբր յաւելուած, եմթարդած է, թէ Հայք անդտսիմ 'ի վաղ ժամանակաց պատկերագրեր գործածէին: Այս բանս իմծ պարզապէս կարելի կը թուի, բայց ոչ մոյմպէս ընդունելի. որովհետև շոջա փելի յիշատակարամներ չգտն 'ի միջի ամեմկիմ. իսկ մորա մէջ բերած փաստերը՝ Մեսրոպեան մշամագրոց կամ Դպրութեան արգասիք եմ: Գրոցս Յառաջաբանէմ եթէ դատեմք, պէտք է որ Տրդդատայ քարտուղարմ եղած լիմի հեղիմակ պրօրիմակ գրութեամ: Մակայմ ես, ընդհակառակմ, կ'ըմտրեմ ըսել, թէ մոյմ իսկ Յառաջաբանի մէջ եղած այմ տեղեկութիմը՝ Գրիգորի պատմութեամ վերոյիշեալ տեղոյմ վերայ ստերիւրեալ է, հակառակ մորա իմաստիմ. որովհետև Յառաջաբանի մէջ Ագաթանգեղոս եգակի դիմօք՝ յարուեստէ մշամագիր կ'ամուռամի. իսկ աստ յոքմակի դիմօք կ'ըստի, թէ « գրեցիմ ատեմակալ դպիրքմ մշամագրոց », յորմէ մարթ է ըսել, թէ Գրիգորի պատմութեամ հեղիմակը ոչ էր մշամագրոյ, այլ 'ի մոտարացի մշամագրաց առաւ իւր գրութեամ ատարծը: Բ. թէ երկաքամիւրոց գրութեամ լեզում և եղամակը՝ պէտք էր որ յունարէմ եղած լիմէր. այմու զի, 'ի ստեղեպ հասակէմ առ Յոյմս դաստիարակեալ յունատարազմ և յունակսում Գրիգորիոս, ամդէմ 'ի գալմ իւր 'ի Հայս չկարէր հայերէմ քարբատով յօղել զքարտուղիմ իւր. և եթէ մա կարող լիմէր խօսել, մոտարքմ Յունաց և Հայոց անկարամայիմ մշամագրել գայմ, որովհետև ոչ Հայք մշամագրեր ումէին այմ ժամանակ, և ոչ այլ Յոյմ կամ Հռովմայեցի քարտուղարմ Տրդատայ կարող էր գիտել զհայ լեզում. և եթէ գիտար իսկ՝ սակայմ և այմպէս գրելմ անկարելի էր: Այս բանիս վերայ առանծիմ գլխով մի պիտի խօսիմք յետոյ:

Մ. Գրիգորի վկայաբանութեամ հմութեամ և մորա մէջ պարունակուած վարդապետութեամ հարազատութեամ վերայ տարակուսելու բամաւոր պատճառներ չեմ տեսներ ես՝ բայց 'ի 77, 78, 85 և 88 էջերէմ, յորս յոքմակի դիմօք կը խօսուի ¹, միմչեռ մրա էջերում Գրիգոր եգակի դիմօք կ'արօթէ 'ի կախաղանէմ. և 64 իջէմ որ հազարամայց և կայամաղոց վարդապետութեամը կը թուի ծայմակցիլ, ըստ երևութիմ ²: Բայց 'ի մասնաւորի 68 և 82 էջերը կը թուիմ տարակուսի յակ ձգել Գրիգորի գէթ 65-89 էջս եղած

1. Արդ, այս երևութէս կը հետևի, թէ կամ Գրիգոր ումէր ուրիշ չար չարակից և հաւատացեալ ընկերմեր ևս, զորս վկայաբանութեամ հեղիմակը լուած է, սակս հեռի գոյոյմ իւր ժամանակաւ, և կամ Գրիգոր կ'արօթէր 'ի դէմս զիմուրեալ եկեղեցոյ բազմաչարջար մահատակմբքում, որ ամիմուրեք կը կրէիմ հալածամս և կտտամս:

2. Ըստ երևութիմ ըսի, վասմ զի իրօք փոխամակ վերջիմ դատաստամի և մշտմջեմաւոր շաքթում առմուած եմ ամդ դարք, որում օրհիմակ էր շաքթիմ արարչագործութեամ: Այս վարդապետութիմս ուրիշ Մ. Հարք ևս ըրած եմ, մամաւամդ Մ. Օգոստիմոս, Յաղագս քաղաքիմ Աստուծոյ, հտ. Բ. գլ. 1. գեղեցիկ ևս ըմդլայմած է:

մաղթողախառն վարդապետութիւնը, որովհետև Ս. Բարսղի Պատարագամատոյցէն մնան հատուածներ և բացատրութիւններ կը պարունակեն: Յամրն 1889 Վիեննայի « Հանդէս Ամսօրեայ », թիւ 2, էջ 24, հետևեալ վերնագրով « **Ի Սբարդա Խորհրդամատոյցի** », հ. Յ. Գաթրընեանի Հատակոտորք 'ի յԱզաթանգեղոսն և 'ի Փ. Բուզան դացին » յօդուած մի լոյս տեսաւ, յորում բազմահմուտն Գաթրընեան պնդան կարևորութիւն տուած է վերոյիշեալ երևութիւն, այսինքն է Ս. Բարսղի Յիշատակաց մնամաբան մի քանի տող հատուածոց, որով և այս եզրակացութեան եկած. թէ Ազաթանգեղայ գիրքը, ոչ թէ Դ դարում՝ ինչպէս կը ձևանայ, այլ եհմ մէջ և յետ կարգաւորութեան Պատարագամատոյցին զրուած է: Ջարմանալի կ'երևի ինձ: Եւ այսպիսի մի թեթև երևութէ՝ այնպիսի ծամը վճիռ մի կ'ընքել: Լաւ կը լինէր որ գէթ մորա հրատարակչն այդ վնճէն աւելի մորա մնացած փաստերն ևս հրատարակէր, եթէ գոն:

Սակայն դիտելու է, որ նախ Ս. Բարսղի կարծեցեալ հատուածներն չեն բոլորովին բառ առ բառ: Բ. կը զըտնուին մոյնպէս 'ի Յիշեայս Պատարագին Գրիգ. Աստուածաբանի, Գրիգ. Լուսաւորչի, որ ասի և « Ս. Աթանասիոս » և Իգնատիոսի Աստուածագեցի թարգմանելոյ 'ի յասորերեմէ (Տես 'ի Լիոնեան Խորհրդատետր ժԲ. Դ. 2): Արդ, այսու Գաթրընեանի հետևութիւնն՝ առանց հիման կը մնայ, ըստ իս: Նոյն իսկ 'ի Ս. Բարսղէ եթէ փոխ առնուած համարինք, դարձեալ Ազաթանգեղայ գիրքը Դ. դարում զրուած լինելն ուրիշ բան չհետևիր աստի:

Գրիգորի վարդապետութեան մանրոշական հատուածներ, որ յէջ 71 և 72 կը լինին վասն մեռեալ պատկերի Որդայն Աստուծոյ, բառ առ բառ 'ի մէջ կը բերեն յամում Գրիգորիոսի Հայկազմոյ՝ մաև Եւթիմիոս յոյն պատմագիր, Ս. Թէոդոր Ստուտիթ և Նիկեփոր¹ պատրիարք Կ. Պօլսոյ՝ յէ. դարում: Նման հատուած մի ևս մէջ բերէ մերս Սահակ Պարթև 'ի թողթս իւր առ եպիսկոպոստոն Յունաց՝ Ս. Պրովկ և Ակակ: Արդ, այս հեղինակութիւններս ես ստոյգ ապացոյց կը համարիմ Գրիգորի վկայաբանութեան ոչ միայն հմուտեանն, այլ մոյն իսկ յունարէն բնագրի մի գոյութեանը: Աստ այսքանս բաւական կը համարիմ Լուսաւորչայ վարդապետութեան մասին. մորա ընդարձակ վարդապետութեան ընդարձակ քննութիւնքն՝ առանձին գրքով մի կը յուսամ՝ ընել:

Էջ 103, յԲ պարբերութեան՝ դարձեալ կու գայ 'ի հանդէս Տրդատայ կենսագիրն՝ իւր և Հայոց ղիցագզին պատմութիւնն յառաջ վարելու. և իրօք կը սկսի մի և մոյն խանդով և զարմամագործ յաղթանակաց մկարագրաւ. « Իսկ թագաւորն Տրդատ զասննայն ժամանակս իւրոյ թագաւորութեան աւերէր քանդէր գեղիկրն թագաւորութեան Պարսից »: Այս պարբերութիւնն՝ հաւաստեալ շարունակութիւն է ՀՅ իշխն « եւ զօրացաւ 'ի վերայ սահմանաց մորա » բառերով վերջացած պարբերութեան, և ոչ թէ 103 իջում եղած նախորդ պար:

1. Ἀντιόχειος καὶ ἀνασκευὴ τῶν Εὐσεβίου λόγων. *Stu Pitra, Spicil. Solesm. T. I, p. 371.*

բերութեանմ, որում վերջի տան մէջ արդէն իսկ զուրցուեցաւ. « Եւ ինքն թագաւորն խաղայր զմայր » և այլն, ուստի երկու տող վերջ դարձեալ նոյն բացատրութիւնը կրկնել անմեղքի էր :

Տրդատայ Պարսկաստանի և Ասորեստանի մէջ գործած քաջութիւնքն և աւերմունքը պատմած ժամանակ հայ ժողովրդեան մէջ դեռ կենդանի պահուած հետեւեալ վէպը կամ զոյրցը մէջ կը բերէ մտրա մասին. « Վասն պսորիկ պատշաճեցան քանիս յայ՝ քանիս կարէն առաջ, թէ էքէն զէքէն Տրդատ, որ սխալուեալ տեղեաց շինուի քն ինքոյց, և ցամառեցոյց իսկ ի սխալուի քնոս շինուի » (չուրց) : Իսկ կարծիքով, պէտք է ըսել, թէ ոչ եթէ այս վէպս յօրինեցաւ կենսագրէս յիշուած Տրդատայ Կի վերոյիշեալ պատերազմացը վերայ. այլ թէ ընդհակառակն, կենսագրի մախայիշուած պատերազմաց միակ սղոթերն և հիմն եղած է այդ հնաւանդ վէպի կամ առակի գոյութիւնն : Եւ յիրարի, այս բանս կը տեսնուի մտրա մասի ընթաց խօսքերէն, ուր յայտնապէս կ'ըսուի, թէ « Պատշաճեցան բանքս այս (պսորիքն է յիշուած պատերազմները) ՚ի բանս կարգի առակաց » : Բ. Տրդատայ մասին ըրած հետեւեալ նկարագրէն, որ նոյնպէս այն վէպէն առնուած է և կ'ըսուի. « վասն զի սէզ էր առ համդերծ, և այլ ուժով պնդութեան հաստատութեամբ, բուռն ոսկերօք և յաղթ մարմնով, քաջ պատերազմող ... արկանէր ՚ի սուր զգօրսն Պարսից » և այլն :

Տրդատայ կենսագրի աւանդածին ամտեղութիւնն և իրին ճշմարտութիւնը դեռ աւելի ակններն ընելու աղագաւ, քմենք մէջ բերուած վէպին կամ առակին ծագումը : Սակայն դիտելու ենք, թէ Տրդատայ Կի ձեռքով գործուած այդ պատերազմներն, այն ժամանակ ստոյգ պիտի կարենային լինել, եթէ ստուգուէր, թէ այդ վէպն իրացնէ մտրա ժամանակ հնարուեցաւ : Սակայն Տրդատայ կենսագրին այդ առածէն յառաջ և յետոյ ուրեմն մէջ բերուած խօսքերէն իսկ քաջ կը տեսնուի, թէ բազմօք իսկ առաջ գոյր այդ առակը հայ ազգաբնակչութեան մէջ, ուրեմն հետևութիւնն յայտնի է :

Այս ժողովրդական առածս կը յիշէ Դ և Ե դարուց պատմագիրներէն և ոչ ոք : Միայն Մ. Խորենացոյ ընծայուած Սրբոց Հովսիսի մեանց ներբողին մեջ բերուած է այն՝ սիշը մովլին բանիւ : Ձեռքը Տրդատայ երկու պատերազմներ ՚ի միայն կը յիշէ, բայց ոչ եթէ Ասորեստանի կամ Պարսկաստանի մէջ, և ոչ այլ մտրա զբրիստունէութիւն ընդունելէն յառաջ, ալ յետ դարձին իւրում և ընդդէմ թագաւորին հիւսիսոյ կամ հոնաց, առ եզերք գետոյն փոքու ՚ի հաշտեմից գաւառին : Առ Ղազարայ Բ. էջ Ծ, այսչափս միայն կը գտնենք. « Զհսկայաբար միւսանգամ զբարձմ Տրդատայ, և շարունակ յարիս »

1. Տրդատայ այս պատերազմս և մեծամարտութիւնը կը պատմէ մակ Մ. Խորենացի, Բ. գլ. 36. բայց անմեղքի ժամանակագրական սխալով մի, որ չգիտեմ մտրա ձեռութեանմ եթէ մեզ անծանօթ մի այլ պատմաբան ընծայելու է. զի ասէ վասն Տրդատայ. « խաղայ յաշխարհն Պարսից, դիմեալ ՚ի վերայ Շապուհոյ որդւոյ Արտաշէրի » : Կը շփոթէ զՇապուհոյ Բ. ընդ առաջնոյն, բառմարով գշորեսին թագաւորս միջանկեալս :

ունենել գլխորդին զմախմենացմ քաջարար զթագատրութիւն » : Դիտե-
լու է, որ 'Կազար' այս տեղիս ուղղակի Տրդատայ կենսագրէն առնե-
լով յառաջ կը բերէ, ինչպէս նա ինքն կը ծանուցանէ : Նոյնը՝ բայց
ընդարձակ պարագամերով կը պատմէ Մով. Խորենացիմ ¹ ևս,
այնպէս որ մորա աւանդածը մասամբ Զեմորայ, և մասամբ Տրդա-
տայ կենսագրին աւամրութեանց իրարախառնումն կարելի է ա-
մուսնել. այսինքն է, կրկին պատերազմներ կը պատմէ, մին յետ
գալստեան Տրդատայ 'յի Հայս, իսկ մըրան յառաջ քան զգալուստ
մորա : Սակայն պէտք է ասել, թէ՛ Մովսիսի և թէ՛ կենսագրին՝
Տրդատայ Գի համար պատմած պատերազմները յերկրիմ Պարսրց,
այլընդայլոյ ² բաներ են, և աչքի զարմող կերպով ըմտայուած
են մնա : Եւ յիրաւի, իմչ պատմական արժէք կարծեմ ունենալ այն-
պիսի պատերազմներ, յորս ոչ պատմական անծիմք կը յիշուին յա-
մուսնէ, որոնց դէմ՝ նա կը պատերազմի և ոչ աշխարհագրական ու-
րոշ տեղիք, զորս նա կ'աւերէ, և ոչ որոշեալ ժամանակք՝ յորս այդ
պատերազմները կը գործուին և ոչ այլ նոցա քաղաքական բուն
պատճառքը կը տեսնուին բնաւ. այլ, ընդ հակառակն, յիշուած ան-
ծիմքն իսկ 'յի Մովսիսէ, տեղիք և ժամանակն գլխովիմ՝ անհիշել և
անկարմար : Բուզանդացիմ Փաստոս ³ իսկ կը վկայէ յայտնապէս
վասն Տրդատայ, թէ՛ զքրիստոնէութիւնն ըմբռնելէմ վերջ խաղաղու-
թեամբ անցուց ըւր տարիները : Ըստ վկայութեան Կաղանկատուա-

1. Պատմ. Հայոց, Բ. գլ. ԶԲ. այսպէս կը գրէ. « Իսկ քաջիմ Տրդատայ
երագապէս և բազում սակատս մղեալ, մահ 'ի Հայս և սպա 'ի Պարսս,
իւրով անձամբ առնէր յաղթութիւն : Որ 'ի միում՝ մուագի առաւել քան
զծղիականմ գայի 'ի հնունմ կանգնեաց զմիզակն յոգնական համաթիւ
վերաւորաց : Դարծեալ յերկրորդում կորովեացմ Պարսից զփործ առեալ
զսաստկութեանմ սկայիմ և կուռ վառուածոյն, բազում վերջոյ պա-
տեալ զծին սատակեցին մետածութեամբ, որոյ զարկուցեալ յերկիր
ըմկեմոյր զարքայն : Իսկ մորա յարուցեալ և 'ի հետի յարձակեալ, փո-
խանակ իւր զբազումն ըմկեմոյր 'ի թշմամեացմ, և զմիոյ ուրում զծի
կալեալ արիւարար աշտանակեալ, դարծեալ յերկրորդին միւս անգամ
կամաւոր լեալ հետի, սուսերաւ զերամակս փոլացմ պուղէր : Եւ այսպի-
սի մահատակութեամբ յամեալ 'ի Պարսս և յԱսորեստան անդր ևս քան
զճիզբոն յարծակի » :

2. Նախ Մովսիսի աւանդածն այլ ըմբ այլոյ է, այնու գի Վոստամ-
դիանոսի ժամանակակից Շապուհի Բ, Արտաշէի որդիմ էր. և ոչ իսկ
Գեղեւնիոնի Տրդատայ դէմ տուած պատերազմը կարէր լինել 'ի ժամա-
նակս որդւոյն Արտաշէի, այլ անկ է շատ տարիներ վերջ : Այս բանս
խիստ յայտնի կը տեսնուի առ Զեմորայ : Այլընդայլոյ է նոյնպէս կեմ
սագրի աւանդածն, որովհետև ինչպէս 'ի վեր անդք տեսանք, Տրդատ'
Գաղեղիոսի ձեռքին տակ և Ներսիսի դէմ պատերազմեցաւ՝ և յետ յաղ-
թութեան խաղաղական դաշամբ տիրեց Հայաստանի և մինչև ցգոս-
տանդիանոս պատերազմ՝ չըրաւ Պարսից հետ :

3. Գ. Դպրութիւն, գլ. ԺԵ, յասելմ զՏրդատայ. « Քանզի 'ի ժամանակաց
'ի թագաւորութեանմ Տրդատայ, յորմէ հետէ զՏէրմ սամաչելոյ արար
խաղաղութիւն, և լոնցոյց շուրջ զթշմամիս նոցա (Հայոց), ցածոյս Տէր
զմարտ պատերազմի 'ի սահմանաց նոցա և մինչև յայն ժամանակ ոչ
ըմբ ունեք բանք գոյնիմ ամբոյի կամ խռովութեան, և 'ի մեծի խաղա-
ղութեան էին բնակեանք » :

ցոյ և Զուամորի, Տրդատայ կեմաց վերջի տարիներում, իմպէս մորա որդւոյն Խոսրովայ ժամանակ համդիպած պատերազմները միայն Հոնաց, Վրաց և Կովկասայմոց դէմ էին ուղղակի, և պաշտպալ մողական են քամ թէ յարձակողական : Իսկ Տրդատայ կեմա գիրմ ըմդհակաւկմ կը թուի աւամդել՝ ըսելով. « Համէր զգօրս Հոնաց սաստիկ յոյժ և գերէր գկողմանս Պարսից » :

Արդ, միմչև հիմայ մէջ բերուած տոհմային պատմագրաց տեղիքը՝ Տրդատայ կեմագրի աւամդած պատերազմաց յիշատակութիւնը կամ մկարագիրը միայն կ'ոնեն. իսկ այն վերոյիշեալ վէպին ծագու մի կը թողում 'ի մթութեան. ուստի կարող ենք ասել, թէ ոչ միայն Մովսէս այլ և ոչ իսկ Ջեմոն և ագաթամզեղոսեան գրոց հեղինակը՝ էին ժամանակակից այն միայն, երբ զառաջիմ հմարեցաւ : Հար զոնենք ուրեմն արտաքին պատմագրութեան : Տակիտոս, Տրեբ. Բ, Տովսեպոս, Բառթ. Եր. պարթեւի, Է, գ. Իէ, Մուստոմիոս և հռով մէական դահեկանը՝ մատնամիշ կը ցուցնեն մեզ զմիւս ոսմ դիւցազմ պարթեւական, այսինքն է, համանունն Տրդատայ Գի՝ զՏրդատայ Ա. որ առ Ներոմիւ թագաւորեաց 'ի վերայ Հայոց, և յետոյ պէսպէս գործս քաջութեան գոյց տուաւ՝ համդիպելով քաջի զօրավարին Կոր. բուրմի : Կ'ըսուի թէ Տրդատս այս երբ Վիտելիոսի առաջնորդութեամբ իւր զայր 'ի Հայս և համդիպեցաւ խտերախ գետոյն Եփրատայ, Կենտրոնը գոհիւ և զեմմամբ երկարաց հաշտեցոյց ըմդ իւր զգետն անհաշտելի, մտաւ ապա 'ի Տիգրոն 'ի թագաւորաբնակ քաղաքն Պարթևաց, ուր թագադիր իշխանն Մուրեմեան՝ թագիւ պսակեց մորա զլուխը : Սա 'ի սկզբան քարեկամ՝ յետոյ պատերազմացաւ Հռովմայեցոց դէմ, և Վաղարշայ օգութեամբ յաղթեց իսկ մոցս այն պատերազմի մէջ. և 'ի մշան յաղթութեան կամուրջ սի ձգեց Մրածանոյ վերայ : Ըստ վկայութեան Մուստոմի (ի Ներ. Լ. 3), Նաորայոսի և Որոսիոսի, թոյլ չտուաւ պարտեալ Հռովմայեցոց ամոր վրայէն անցնելու. և ժողովելով մոցս զէմքերն, զրամներն և մեռելոց դիակունը կուտեցին 'ի մի 'ի ցոյցս պարծանաց, և իրենր արքունական փիղերու վերայ հեծած անցան 'ի յոյր ըմդ գետոյն Արածանի, վասն զի լուր առին, թէ կամուրջ շինողները մեզ գութեամբ խարխուլ շիմած էին զայն՝ զիրենք դաւաճանելու համար :

Արդ, այս վերջին դէպքս, այսինքն է, Տրդատեանց այն շարժում և մեռնէն պարիպներով գետէն անցնիլը, բաւական էր Գողթնն մուսնայից միւթ տալ պէսպէս վէպեր և առակներ յօրինել Արտաշատու իշխողին Տրդատայ Ա. վերայ, թէ. « Միգադով աւերեաց գթնամբս գետոց » և այլն. իմպէս Պարսկաստանի և Աղդեստանի մէջ մերթ Հռովմայեցոց դէմ և մերթ Հիւսիսայմոց դէմ տուած պատերազմն :

1. Եթէ Մուրեմս այս թագադիր՝ էր Պարթևանց Գահ յաւէ, արտաքին մատնագրաց աւամդածն ուղղակի կը հակառակի Մ. Խորհմագուոյ աւամդածին, որ զբազրատունիս սսէ կարգեալ 'ի Վաղարշանայ թագադիրն ասպիտա : Այս բանս կարելի էր որոշել, եթէ Ագաթագոհոսեան գոռո հեղինակը՝ Մուստոմիան իշխանն յիշած ատեն, մորա յատուկ պնդում ևս մշանակէր :

ըրձ և 'ի Տիրզոմ մտնելու հիմ աւամդութիւնը՝ Տրդատայ Գի կեծ սագրիմ Ուրթեր մատակարարեցիմ, իւր դիւցազիմ վերայ դարձնել ամենայն ինչ: Թէպէտև դարական խտրոց մի ժամամական կը բաժնէ կը հետազնէ գՏրդատ Ա. 'ի Տրդատայ Գէ սակայն կեծնագիրն իւր դիւցազիմ սիրոյմ համար դիւրաւ վերցուցեր է այդ մեծ խտրոցն, և ինչպէս այն երկու ամձմաւորութիւններն՝ ասպէս ևս Ոոգա փորձերն 'ի մի զուգել է: Բնաւ պէտք չէ զարմամալ այս բանիս վերայ. մամաւսամդ ուր ամուսնք և գործքն իսկ երկաքանչիւրոց՝ մմամ եմ իրերաց: Ասկէ իսկ կարեմ գուշակել ըմթերցողք, թէ կեծնագիրս ակամատն էր իսաց գորս 'ի գրի սոմոյր, եթէ ըմդհակառակն՝ ժամամակաւ գիտոյիմ սագական:

Յէջն 105, Ա. պարբերութիւնը՝ շարումակութիւն է Գրիգորի պատմութեամ: Եւ այս բամիս ապացոյց եմ մախ թիւն 13 ամաց որ համաձայն է 103 իջի հատուածին, յորում կ'ըսուի թէ Գրիգոր Ողմչակի տարիներ եկաց 'ի վիրայիմ: Բ. զի այս պարբերութիւնս ոչ շարաւորութեամ կազմութեամն և ոչ իսկ պատմական յօդիւ կապ ունի մախորդ պարբերութեամ հետ, զի անդ Տրդատայ պատերազմներն, կապուած և կողպուտը կը պատմուիմ. իսկ աստ, ըմդհակառակն, Գրիգորի վերայ յատուածուստ կատարուած մեծ զգանչելիք մի: Գ. սորա յաջորդ պարբերութեամ հետագայ խօսքերն. « եւ յայնչէ հրաման ետ Տրդատ », որք ուղղակի 103 և 104 էջերում շարումակութիւն եմ և զամոնք կը յարաբերեմ և ոչ թէ 105 իջի, Ա. պարբերութիւնը, որ կղզիացեալ և ամջատ կեցած է 'ի միջի մախըմթիւց և հետևեալ պարբերութեամց:

Գրիգորի կեծնագիրը թէպէտև այդ պարբերութեամ սկիզբը կը կամիսէ կը ծամուցամէ զկայմ Գրիգորի « 'ի բերդի բամտիմ և 'ի խոր վիրայիմ 13 ամ ». բայց Ոորա բում մկատակն այս չէ, այնու զի այնոր ծամոյց արդէն այս բանս. այլ աստ կ'ուզէ մա ծամուցամել յաւէտ յիշատակաց արժամի այնչէ գործը, վիրայիմ տխուր համգամամքներն և Գրիգորի ողջ պահուիմ ամդ « շմորհիւ Տեսուց »: Ա. յս համառօտագիծ հատուածիս մէջ պէսպէս դժուարութիւններ մեզ ըմդ առայ կ'ելլեն, որոնք ուրիշ տեղ աւամդածներում կը թուիմ հակառակիլ: Դաս յէջ 103 և աստ յիշատակուած 13 ամաց թուոյմ հակառակ՝ 15 գրուած է 166, 176 և 184 էջերում, որում կը համաձայնիմ Հայոց միւս աւամդութիւնը, Հրապարակում և հմագոյմ յիշատակարանք¹ Ասորոց: Յումարէմ օրինակիմ մէջ մախըմթիւց երկու տեղերում 14 տարի գրուած է. իսկ վերջիմ տեղեաց մէջ 15: Գրիգորի Գործոց² մէջ, ըստ մորոգ հրատարակութեամ Գ. Լազարդի հետևեալ հետաքրքրական ռագատրութիւնը կը գտնենք էն լէ տէσσαραξ δλους πρδξ τοξ δέκα Χρόνους τῆ έντεσδθεν έπολιορχεττο κακώσει, որ կը թուի այլ ինչ ակմարկել բամ տարի:

1. Ստորերէմ Սկայարամութիւն Սմտիոքացոց եկեղեցւոյմ, Մեպտ. 30. գորով հատուածս ինչ մէջ կը բեռէ Հ. Ամտ. Մարիա Բոմուկիոսս 'ի Գատմութեամ Ս. Գրիգորի Լուսաւորչի:

2 Akten Gregors von Armenien, p. 100.

Կարելի է արդեօք Ազաթամզեղայ գրոց հայերէն և յումարէն օրինակացմէ մէջ բերուած այլ տարրեր տեղեաց թիւոց տարրերու թիւում ընդօրինակողաց անհոգութեամբ պարզապէս արգասիք հաւարել և կամ ըսել ընդ Գուտյիդի, թէ իրարմէ անկախ և տարրեր յաղտերաց կը յառաջագային: Այս դժուարութեանցս առաջինը կը ջրի հայերէն օրինակի ձեռքով յորում ոչ մի անգամ ևեթ, այլ երկիցս դրուած է 13 թիւը, զոր չէ մարթ ամուշադրութեամ արգասիք համարել կամ դիպուածով մերմութուած: Իսկ վերջինը կը ջրի յումարէն թարգմանութեամբ որովհետև մի և մոյմ տեղւոյմ մէջ ուր հայերէնը 13 կը գրէ, սս ըմդհակառակմ ունի 914 ամ: Արդ իմ կարծիքով, Գրիգորի բամտարգելութեամ տարեթիւոց տարրութեամ բուն պատճառմ պէտք է որ հետևեալմ եղած լինի: Այսինքմ է, Գրիգորի կենսագիրմ առաջին երկու տեղեաց մէջ, մորս միրապ մտնելո կը դմէ Տրդատայ թագաւորութեամ առաջին տարին, իբրև առամծին իրողութիւմ մի, և ապա առամց յիշելու մորս ելքո, իրաւամբ 13 տարի կը թուէ: Իսկ վերջին տեղեաց մէջ, յորս մախարաք և Գրիգոր իմբնիմ կո խօսին յետ ելամելոյմ 'ի վիրապէն է, ուստի մտից և ելից տարիներմ 'ի միասին հաշուելով կը լինի 15 տարի: Յումարեմի թարգմանիչը, կ'երևի թէ մոյմ իսկ առաջին տեղւոյմ մէջ մտաքմ ևս 'ի միասին հաշուած է, որով 14 եղած է:

Իմ կարծեացս և 15 թիւոյմ ուղղակի հաստատութիւմ համարելու է՝ Հռիփսիմեանց մահատակութեամ դէպքը, որ Տրդատայ գաւհակալութեամ 15 տարին ճիշդ կատարուեցաւ, և Գրիգորի վիրապէն ելլելէն 9 օր առաջ: Յիրաւի, եթէ Գրիգորի կենսագիրմ այն առեմ այս զամզամութիւմս բրած չլինէր, կարծեմ թէ մեզք պիտի ընէինք այժմ, և իրարու հակասական համարէինք զամոնք:

Իսկ զայրմ այս հարցիս, թէ ո՞վ էր արդեօք այն այրի կինը՝ որ 15 տարի անօտժամ կարով 'ի Գրիգորէ կերակրեց զմա. քրիստոնեայ թէ հեթանոսիկ, ազգակամ թէ օտար ոմմ, յաւազմց արդեօք թէ 'ի սոսկական դասուէ: Գրիգորի կենսագիրը դատաւարտելի լուծութեամբ մի 'ի միտնջեմաւոր լուծութեամ դատաւարտած է մորս ամուր, միմչեռ մորս յաւէտ յիշատակաց արժամի բարեգործութեամ հետ՝ ամուսն ևս արժամի էր որ յիշուէր յէջ պատմութեամ Գրիգորի: Սակայն ես այսու միայն կը համարիմ արդարացմն ըզկենսագիրմ, զի չէր ստուգիւ ժամանակակից առաքիմուհւոյմ, ուստի և ոչ իսկ կարէր ճանաչել զմա յակամէ յամուսնէ:

Այդ արի կինը հաւամբօրէն, կամ արդէն իսկ քրիստոնեայ էր, և կամ զքրիստոնէութիւն ընդունելու հետամուտ որ և յաւազաց ամտի ուստի չէ իմչ ամենին հակառակ պատմութեամ, մանաւառ թէ սրտամակամ հանգամանք իսկ ժամանակին կը թելադրեմ ինծ ըսել, թէ պէտք է որ եղած լինի մա կամ սմուցից Գրիգորի բարեպաշտուհին Ս. Գ. Գ., որ ըստ վկայութեամ Խորենացոյ, Բ. զ. 2. Խոսրոմու տխուր մահուան օրերում մէջ 'ի Հայաստան կը գտնուէր. կամ Արքիմ. արիմ մեծի մախարարիմ Սուրենայ և մայր Ս. Թէոդորոսի. և կամ քոյրմ արքային Տրդատայ Խ. Գ. Գ.:

Առաջնորմ մկատմամբ՝ այս դժուարութիւնս կայ, այսինքն է, պատմութիւնը չի յիշեր այլուր ոչ մորա ողջութիւնը և ոչ իսկ կրկին դարձն ՚ի Հայաստան: Իսկ հակառակ պարագայից մէջ՝ շատ հաւանական է, զի մոյմ ժամանակի քրիստոնէից եռամդն և խիղճը կը պարտաւորէր, սիմչև վտանգաւ իսկ կեանց ըմբռնով գնես հոգևոր պարակաց ՚ի հալածմանս, մոցա յակտեմական կեանց ժառանգութիւնն ասպարովելու համար. և իրօք այսպիսի օրինակներ խիստ շատ են վկայարամութեանց մէջ: Սակայն հաւանականագոյն քան զայս կը համարիմ ես վերջին երկուքը, որոնց ՚ի քրիստոնէութիւն դարձի պատմութիւնն իսկ ժամանակակից և յարակից պարագաներով քաջ կը միամայ Ս. Գրիգորի պատմութեան հետ:

Զերանելին և զմեծագգի Աղվիթա թէպէտն զանց ըրած է յիշել Գրիգորի կենսագիրը, սակայն կը յիշէ քաջ սագային հմագոյն աւանդութիւնը: Յիրաւի, ըստ վկայութեան Ղազարոս և Յայսմաուրաց (Մայիս 11) կ'աւանդէ թէ, երբ կը տսումէին զՍ. Գրիգոր ՚ի զդեակմ Արտաշատու, ըմդ առաջ ելին մմա Գառն քահանայն և իւր ըմկերքն, և ամկեալ առ ոտս սրբոհ ամդէմ և ամդ բժշկուեցան ՚ի բուրտութեմէ: Սոցա հետ էր և Աթեմադորոս՝ որդի մախարարիմ Հայոց Սարգիսայ, 1 և իշխամին Սահակայ զաւառին, և կը բնակէր ՚ի Սահակայ, որ հաւանորէն ամկամի ըմդ մէջ Դերջամայ և Եզրմկայի: Զայս տեսնելով Աթեմադորոս հաւատաց ՚ի Քրիստոս և մկըրտեցաւ. մորա մկրտութեան ժամանակ երանելի մայրն ևս Աղվիթա եղաւ քրիստոնեայ: Շատ հաւանական է, որ իւր որդւոյն ողբերգական մահուամէն և երկամր սակաւօրեայ կեանքէն յետոյ՝ զացած և մտտ զտած իմի ՚ի զդեակմ Արտաշատու, քրիստոնէական հաւատոց էակամ մասներն ուսամելու համար ՚ի Ս. Գրիգորէ, մամաւանդ թէ մորա կեանքը պահպամելու մպատակաւ, սիմչև ցելմ Գրիգորի ՚ի վիրապէն:

Զայս կը թուին հաստատել մախ Ասորոց Ամտիրացւոց վերոյիշեալ վկայարամութիւնն և մի այլ վկայարամութիւն, զորս հաւաքեց Պետր. Դոմիտիոս Նիկոզիոյ եպիսկոպոսմ ՚ի զերեզմանագրոց Ասորոց, յասելմ թէ. « Կին ոմմ այրի և բարեպաշտ (հաւատացեալ) ՚ի ծածուկ կերակրեց զԳրիգոր հմգետասամ ամ »: Սակայն անելի քամ զայս, մամր պարագաներ կը յայտնէ Գրիգորէ Հայոց Գարնայ յուճարէն հրատարակութեան, յէլ 100, մէկ տեղին 2,

1 Զեմոր Գրիգորի և կը յիշէ զոմմ Սուրէն, իբր եղբայր Լուսաւորչի, զոր առեայ մանկարարձաց՝ փախուցին ՚ի տունն զառսից: Սակայն Զեմորայ հետեանայ արուաղ բացատրութեմէն, « Զայս, ասէ, Սուրէն համբաւէին, թէ Զգոմ ասի եղբայր Գրիգորի Յակոբ, այլ ոչ գիտէին ստուսիւ, զի Յակոբն այն հորաքեռ որդի էր Սրբոյն Գրիգորի », կը տեսնուի թէ շիտութիւնն մի եղած է Յակոբ և Սուրէն ամուսնց մէջ: Իմօ այն պէս կ'երևի, թէ Յակոբ էր ստուգիւ հորաքեռ որդի. իսկ Սուրէնը՝ հարգատ եղբայր կամ հորհրայր Գրիգորի և ՚ի տամէ Սուրէնեան զահլախ, զոր յետ մահուն Ամակայ փախուցին ՚ի կողմանս Գարսից, ըայց յետոյ եմ ՚ի Հայս և եղև բմիկ Տէր զաւառին Սայմունեաց:

2 Γυνή δέ τις συζύγου μεθρημαμένη παρὰ τῷ Ἀρταξάτ φρουρῶν οἰκοῦσα, ὁφθαλμοῦ φελας ὄντα ἐπιφανεστέα, ἀπρου τι τρυφός ἐκάστους ἡμέρας εἰς

գոր, ինչպէս ըսուեցաւ, Լազարոյ Վաստիկանի երեք ձեռագրերէն գարսուփարեց, որոնք ժ-ժԱ դարում գրուած են: Աստ կ'ընուի, թէ « Իւր էրկամէն այրի մնացած կիմ մի կը բմակէր Արտաշատու բերդին մօտ, որում երեւցաւ յամուրջս տեսիլ ¹ աստուածային, և իւրաքանչիւր օրուամ նամար հացի կտոր մի կը բերէր կերակրելու զբնամեկին, որ մորա խոնջեալ մարմինը կը կազմուէր և չէր ձգեր որ մեռնի: Բայց խօսքը կը կամխէ զհետեւեալը, չարիքով և ոչ խում մի հրահանգ է յառջայ տուն »: Այսքանս Աղվիթայի մասին:

Իսկ Խոսրովիդիտոյ՝ ոչ յառաջ քան զդարձմ իւր 'ի քրիստոնէութիւն՝ և ոչ յետ այնորիկ անցուցած կենաց պարագայներն՝ կը յայտնեն մեզ Տրդատայ և Գրիգորի կենսագիրքը: Սակայն պէտք է ըսել, թէ Տրդատայ տարագութեամ ժամանակ մորա քոյրն և թողով Վարդարշապատու արքունիքն՝ ամրացաւ մօտ 'ի սահմանս Յունաց. և 'ի զահակալելմ Տրդատայ ընկերեց մնա 'ի Հայց. բայց թէ յետ այնորիկ յարքունիս ոստանին անցուց իւր կենաց մնացած տարիները թէ յԱրտաշատ կամ այլուր, այս անյայտ է գլխովին: Գրիգորի կենսագրին, յէջ 165, մէկ տեղին. « Յայնմ ժամանակի տեսիլ երևեալ 'ի վերայ քեռ թագաւորին, որոյ ամուս էր Խոսրովիդուխտ. Եկեալ խօսէր առ մարդիկն » և այլն, իբրև աստուածային սրանցեւեաց կամ տեսեան պարզ գործի մի, գառաչիմն, ածէ 'ի համդէս զկոյսմ Խոսրովանիւն. սակայն մարթ է վերնախմստ տեսչութեան իբրև արքանեակ ևս համարել զմա առ ընկեցեալմ յամել բամտի Ա. Գրիգոր, յըմթացս 15 ամաց, և ընզուենլ մորա քրիստոնէական ծածուկ յարաբերութիւնն ընդ առաքելաշնորհ հօրս երկրորդ լուսաւորութեան Հայոց, ինչպէս երբեմն Սամատրոկածնին Սամղիտոյ՝ ընդ Թաղէտսի Առաքելոյ: Կարելի չէ՞ արդեօք, այսպիսի սրբազան սիրոյ արդիւնք համարել մորա ամուրի ² մնալն ևս ընդ միշտ:

τόν λάκκον ἠφέλι, ὅπερ τροφή τῶ μακαρίῳ γινόμενον, ἀνελάμβανεν τε αὐτῷ πεπονηκόσ τὸ σῶμα, καὶ τέλειον ἐκλιπτεῖν οὐκ εἶα. Ἄλλα πρῶφθάζει τὴν ἀκολουθίαν ὁ λόγος, μὴ ἀποστῆναι μνηδὲ βραχὺ τῆς τοῦ ἀνδρός μνήμης ἐδέλω.

1. Արդ դիտելու է որ զԳրիգոր կերակրող կնոջ մասին աւանդած այս տեսիլ՝ մահաւապտարաստութիւն իմն է զԳրիգոր 'ի վիրապէմ համել տուող կնոջ տեսեան, հաւամօրէմ մի և մոյմ յարեբէմ կը յառաջազային:

2. Յիրաւի, շատ զարմամալի է Խոսրովիդիտոյ ամուրի կենաց կամ կուսութեան վէպը: Եկեղեցական մատենագիրք մեր՝ կը մերկայացնեն զմա իբրև հազուազիւտ օրինակ կամ փուռն մի շուշամափայլ և մանուշակային առաքինութեանց, փթթեալ 'ի փափկութիւնս արքունական դարպասի: Իսկ սմուրն Համուոյ, Գողթմ գաւառ և ափունքն Գեղամայ կը թուին ընծայիլ զայն իբր յաւերժահարսն հայկական վիպասանութեան, որում մուրհուած են սանձագեղեցիկ վայրք բնութեան: Սակայն ծիրանափայլ և մազելի կոյսս, հաճեցրծ համօրէմ փառօք և մեծութեամբ, այնքան թեթև ոտքիք սահեր անցեր է այս մահականացու կենցաղումս, որ իւր խնկելի սրբութեան ամուշահոտութիւնը միայն սփռած է Ախուրեծոյ և Շրապիական դալարագեղ և մշտազուարթ հովտաց մէջ և եկեղեցեաց սեղանոց վերայ. այնպէս՝ իբր թէ քրիստոնեայ Հայաստանի մուսամբէրն ստեղծեալ և երգուած ամմարմին էութիւն մի

Այսուհետև քննենք այն տեղիմ և համագամաճը՝ զոր Գրիգորի կենսագիրը ընծայած է վիրապիմ և վիրապարմակիմ Գրիգորիտի, 'ի միմ պարբերութեամ: Կ'ըսուի, թէ էր այն « Խոր, դժմակ, դառնաշունչ, վասն կարակում տղմիմ, օծախառն բնակութեամ: Վասն չարագործաց իսկ էր շիմեալ զայն տեղիմ և 'ի սպանածի հապարդաց ամենայն Հայոց »: Կարելիք բամ է որ այս վիրապս, որքամ և խոր եմթադրենք, բաակկամ ըլլար լիմել ըմդումարամ չարագործաց և մահապարտաց, ոչ միայն Արտաշատու՝ այլ, որ զարմամակիմ է, ամենայն Հայոց: Ձայս՝ բարեմտութեամք կ'աւանդէ կենսագիրս, և զԳրիգոր իսկ՝ 15 տարի շարումակ ամդ կը բնակեցմէ. բայց լի է անտեղութեամք և փորձառութեամ դէմ զլիսկիմ: Եթէ հաստոյ մասն ևս եղած լիմէր այդ աւանդութիմը, սակայն դարձեալ չէր մարթըստ մկարագրական կամ բառական մշամակութեամ բնագրիս հասկըմալ զայն, առամց հակասելու բնագրիմ: Յիրակի, եթէ բովանդակ Հայաստամի մահապարտմերմ այդ տեղ կը ձգուէիմ, յըմթացս հմգետասամ ամաց՝ իմչպէս Գրիգոր չձածկուեցաւ այդ բազմաթիւ դիակամց մերքև, կամ այդ հորը իմչպէս չեցուեցաւ մոցս դիակօք, առ որ ամիս մի միայն բաակկամ էր: Գուցէ այս մեկմութիմս տրուի, թէ ամդ կը ձգուէիմ մահապարտք, բայց ոչ մնայիմ մարմիմք մոցս: Սակայն այսպիսի մի եմթադրութեամ՝ կը հակադասակիմ Գրոցս 176 և 180 էչերը, յորս Գրիգոր իմքմիմ կը պատմէ զամհմարիմ համգամամս մեղութեամ իւրոյ, բայց չիշեր բմա, թէ անկը հոմ ձգուած ըլլայ այն միջոցիմ և կամ մեռած, բաց յիմքմէ: Բ. Եթէ իւրօք այդպէս լիմէր, իմչպէս կարէր օր ըստ օրէ մտմել ամդ այրի կիմը, կերակրել զԳրիգոր, քնակունու ընդ նա և իօսակից լիմել միմ, ըստ վկայութեամ վերոյիշեալ յումարէմ կենսագրութեամ:

1. Յիրաւի , մախ զի Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի համած հալածանքներն՝ ամբողջ 10 տարի տևեցին : Բ . ՚ի միջոցի աստ տասն ամաց , մանաւանդ թէ մօտ ՚ի վախճան անդր , եղաւ Պրիսկայի և Վալերիայի մահատակութիւնը : Գ . Հայաստանի դարձն ևս ՚ի քրիստոնէութիւն՝ եղաւ մօտ յամ 210-211 , ըստ արտաքին պատմագրութեան : Դ . Նանքիոս , Պատմ . Եկեղ . Գիրք Ը , գլ . 2 , քաղաքական շփոթ մի և խռովութիւն ևս ծագած կը պատմէ այս ժամանակս ՚ի Հայս և յԱսորիս . և կարծեմ , թէ այս դէպքս է , զոր ագաթանգեղոսեան զբոց հեղինակը կը յիշէ 123 և մանաւանդ 140 իջում , ա՛յլըմդայլոյ պատճառներով և պարագայիւք :

վերջին պարագայս խնդրոյ և տարակուսամաց տակ ձգել (թէպէտև այն երկու հեղինակութիւններն իբրև ամտարակուսելի իրողութիւն մեր կ'աւանդեն), քան թէ մնացած բոլոր քաջադիպութիւնքը, որով միայն Հռիփսիմեանց վկայարանութիւնը պատմական արժէք կը ստանայ, և տոհմային պատմագրութիւնն՝ արտաքնոյմ հետ ձեռք ձեռքի կու տան :

Ո՛վ արդեօք յերկոցումց աստի՛ այդպիսի տարածայնութեան և շփոթութեան աղբւր համարուելու է, Լակտանտիոսն, թէ Հռիփսիմեանց վկայարանութեան գրողը : Ես աւելի վերջինս հաւանական կը համարիմ, կամ մասնաւանդ գրոցս խմբագրողը . որովհետև առաջինը ոչ միայն ժամանակակից է այն դէպքին՝ զոր կ'աւանդէ, այլ ամբողջտ ակունատես իսկ : Եւ իմ պատմաւունքս ահաւաստիկ եմ : Նախ, ինչպէս կանխաւ ծանուցի, Հռիփսիմեանց՝ Տրդատայ հետ մեծամարտելուն և իւր ընկերօք այն կերպով մահատակուելուն, ինչպէս մոցա մախորդ և հետևեալ մի քամի հատուածներն՝ բոլորովիմ ազգային տիպ ունին, և պատմականէն աւելի վիպասանական ձևի մէջ դրուած եմ՝ յետ ժամանակաց . Մաքսիմիմոսի արարքն և վարմունքը՝ Տրդատայ պատշահեցնելով, ինչպէս Դիոկղետիանոսի՝ առ Մաքսիմիմոս դրկած դեսպանն և թողթը, կամ մոյմ իսկ Մաքսիմոսի առ Տրդատոս ուղղած մէկ հրովարտակը՝ Դիոկղետիանոսի ընծայելով : Բ. այս և մի քամի ուրիշ դէպքեր ևս, ինչպէս 'ի վեր ամողբ թեսանք, այլընդայլոյ քամիւ պատմուած եմ և յեղաշրջուած . ուրեմն չենք սկսալիք, եթէ ըսենք, թէ ազգային սնապարծութիւնը մէկ կողմէն և անհատութիւն յարտաքին պատմագրութեան միւս կողմէն՝ Հռիփսիմեանց մահատակութեան պատմութիւնն և տեղին իսկ այլափոխած է. այնու զի մոցա զարատն 'ի Հայս վկայեալ էր մաս յօտարաց, ինչպէս կը ծանուցանէ Մովսէս Դաւթի Հոովմայեցոյ համար :

Հռիփսիմէ 'Քւփլայ անունն իսկ՝ անյատուկ կերպով գործածուած է աստ . այսինքն է, ընկերսն է՞ Զէքթիֆոթոյ, յայտ է թէ 'ի ծիրանափառ տիկնութեմէ անտի . իսկ նորա ծննդեան ամունը՝ բոլորովիմ այլ իմն պէտք է որ եղած լինի . որովհետև թէ՛ առ Յոյնս և թէ՛ առ Հոովմայեցիս չիք այլ ոք այսպէս յորջործեալ ¹ . իսկ առ մեզ՝ ը դաւրու մատենագիրք և մոցա յաշորդ դարերը միայն 'ի գործ ածել եմ : Իսկ Ջենոբ Գլակացի՝ որ յատուկ ամուսնց յիշատակութեան մասնատր փոյթ ունի, բնաւ չյիշեր զՀռիփսիմէ : Առ Փ. Բուզանդացոյ՝ անգամ սի միայն կը յիշուի, Գ Դպրութեան ԺԴ գլխուն մէջ, համընթ զԳայիանեաւ . բայց այն երկտող հատուածն եկամտտ ամհարագատութիւն ² կը տեսնուի : Արդ, եթէ Լակտանտիոսի ձեռաւ

1. Հռիփսիմէս իբր յատուկ անուն կը յիշուի 'ի հին վէպս արևելեայց. տես Les Mille et un jours, Contes Orientaux. Paris, 1883, p. 357.

2. Չամսն զի յետ ասելոյ զԴամիելէ եպիսկոպոսէն, թէ « Բումէր մազատիման աթոռոյն գլխաւորութեան Տարօմոյ », և այն գաւառին սրբբազան տեղեաց յիշատակութիւնն ըրած ժամանակին՝ անդէմ կը յարէ, « Մոյմպէս և 'ի գաւառն Այրարատեան զմախավկայսն քրիտոսիս,

գրաց մէջ ընդօրինակողացմէ ներմուծուած խամզարմուք մի չէ՝ ~~թեւադրելի~~ ամուռը, շատ բամաւոր է ըսել, թէ վերոյիշեալ թափազարմքը, մայր և դուստր բամբիշմերը, կը կրէին այդ անյատուկ նմունքներ՝ յետ դարձին իւրեանց 'ի քրիստոնէութիւն կամ յետ տարագրութեանմ 'ի Հոռվնայ. և թէ մոքա, ինչպէս կ'աւանդէ Մովսէս Դաւիթ Հոռվնայեցոյ վկայութեամբը, ստուգիւ 'ի Հայս եկած են, Տրդատայ ձեռքէն ազատած և հուսկ ուրեմմ 'ի Քեսաղոմիկէ ամցած և գլխատուած: Բայց մոցա նշխարքն ամտի ապա 'ի Հայս տարուած են այն բազմաթիւ քրիստոնէից ձեռքով, որոնք կ'ընկերէին մոցա: Եւ յիրանի, այս բամիս կը մպաստեն մաւ Ազաթարմեզայ գոոց 150 և 151 էջերը, յորս կ'ըսուի, թէ ամպարտելի կոյսը՝ համգոյմ Դեբովայ պարտելով զթագաւորն և հերծեալ զամբոխ մարդկամ 'ի գիշերի գերծաւ 'ի բաց:

Իսկ ընդհակառակն, եթէ ապացուցուի, թէ Լակտանտիոսի ասանդածը սխալ է. և թէ Պրիսկա և Վալերիա ստուգիւ կատարուեցան ոչ եթէ 'ի Քեսաղոմիկէ՝ այլ 'ի Վաղարշապատ Հայոց, ընդ քրիստոնէական ամուամբս Հոբիսիմէի և Գայիամէի, այն ժամամակ այդ մեծ կմնիւն և՛ լուծուած կը լինի, և մոցա պատմութիւնմ ըստ արտաքին պատմագրութեան իսկ քաջ հաստատուած: Եւ յիրանի, Եսեբիոսի մէկ տեղին 'ի, ուր յամին 311-312 Մաքսիմիանոսի պաշտօնագիրը կը պատմէ ընդդէմ Հայոց, որոնք, կ'ըսէ, թէ ցայն վայր մարտակից և միգրակիցք էին Հոռվնայեցոց, կը թուի մպաստել այս բամիս: Արդ, ծամբակչիւ հեղինակս՝ պս հակիրճ բամիքս՝ բազում և կարեւոր եղելութիւններ կը յայտնէ մեզ: Ուսի, թէ այդ ժամամակէն քիչ առաջ, այսինքն է, յամին 310-311 կատարուած էր Հայոց դարձմ 'ի քրիստոնէութիւն, յորում էին այնպէս ~~գոյն~~: Երկրորդ, թէ ստուգիւ Հայք միգրակից էին Հոռվնայեցոց, և այս

ուր Գայիամէն և Հոբիսիմէն կային, իւրեանց համոզերծ գործակցօք, որ բոլորովին միջանկեալ մի բան կը տեսնուի և փաստոսի ճառած միւթէն և մպատակէն դուրս է:

Իսկ եթէ ստուգիւ փաստոսին համարիցի ոք այս տեղիս, կարելի է գոնյոմ իբրև զօրեղ ապացոյց 'ի մէջ բերել Հոբիսիմեանց գոյութեան, Գուտշմիդի կարծեաց հակառակ: Բ. փաստոսի Գ. Գպրութեան ԺԴ գլխում, Գամիէլ՝ առ մեծամեծս Հայոց ուղղած յամողիմանութեան մէջ՝ առանց ամուամ կը յիշէ գսուրք կուսամս, զի յետ յիշելոյ զառաքեալմ Հայոց՝ ամղէն կը յաւելու. « Եւ զհետ մորս մորին մամին (այսինքն է Գրիգոր) չարչարեցին վասն մոցին իրաց. իսկ զվնի սորին իրացս՝ եկին բազմութիւնք սրբոց վկայիցն Աստուծոյ »: Դ. փարպեցին ևս, գլ. Ը, փաստոսի վերջին խօսքերով ուղղակի զՀոբիսիմեանս հասկացել է:

1. Պատմ. Եկեղ. Թ. Գպր. գլ. Ը, այսպէս գրուած է. « Համոզերծ տքիմք յարեաւ և պատերազմ 'ի բոմաւորէն (Մաքսիմիանոս) ընդդէմ Հայոց, որք, 'ի սկզբամէ ամտի բարեկամք և մարտակիցք էին Հոռոմոց. զորս քրիստոնեայս և յերկրպագութիւն Յշմարտիմ Աստուծոյ փոյթս, մեղելով բոմաւորին ատելոյն Աստուծոյ՝ զի կոտց և դիւաց զոհեսցին, փոխանակ բարեկամաց՝ թշմամիս, և փոխանակ միգրակիցաց՝ պատերազմողս ընդդէմ իւր յարոց գոնսս: ... Արդ, մա համոզերծ զօրովք իւրովք 'ի պատերազմի ամղ ընդդէմ Հայոց 'ի բազում ուրեք հարեալ վատթարէր առաջի մոցս »:

պատճառաւ առ Տրդատ գրուած մամակին մէջ ~~նշուած~~ իւր կը կոչէ կայսրն զթագաւորն Հայոց: Երրորդ, թէ 'ի կուսպաշտութիւն ամուր ստիպելուն համար զմորադարձ արքայմ՝ եղաւ այն պատե ըրազմը, յորում կ'ըսուի, թէ չարաչար պարտեցաւ Մաքսիմիոս: Կարծեմ, թէ համաձայն ըսած կը լինինք Եւսեբիոսի Հ Դպրութեան ԺԴ գլխում յէջ 660 խօսքերում, եթէ իբրև մի այլ պատճառ կայսեր թշնամութեան և այն պատերազմին եղած համարինք Հռովմայեցի տիկնամց սպանութիւնը, զոր պակշտ կայսրմ՝ առ յոյժ ցանկութեան չուզեց բառնալ 'ի կենաց, այլ ետ աքսորել, ըստ Լակտանտիոսի և Եւսեբայ, և կը յուսար վերստին ձեռք բերել. բայց այս ակնկալութիւնս 'ի դերև համեց թագաւորն Տրդատ, զի հակառակ մորա հրամանին փոխանակ յետ դարձուցանելոյ՝ ետ սպանանել:

Մինչև հիմա ըրած քննութիւնմին ամփոփելով, կարող ենք ասել, թէ Ա. Դիոկղետիանոսի ամուսնը առ Տրդատ գրուած թուղթը, զոր 'ի մէջ բերած է վկայաբանութեանս հեղինակմ՝ Մաքսիմիոսի ընծայելի է, 'ի մկատի առնելով մորա ժամանակն և պարագաները՝ յորում գրուեցաւ, և կամ լոկ մնամութիւն համարելի է Դիոկղետիանոսի առ Մաքսիմիոս զրած աղերսագրին, յետս դարձուցանելոյ զՎայելիհա՝ յաքսորանաց ամսի յարևելս: Բ. թէ Հռիփսիմեայ և Գայիանեայ պատմութիւնմ՝ ամենայն պարագայիւք մոյն է Վայելիայ և մորա մօր Պրիսկայ պատմութեան հետ, ըստ որում և ամձամց մոյնութիւնը չէ ինչ հակառակ՝ ոչ տոհմային և ոչ արտաքին պատմագրութեան աւանդածներում, այլ երկուտեք ևս քաջ կը միաբանին: Գ. Նոցա կատարումը պէտք է որ եղած լինի մօտ յամմ 210-211: Դ. թէ 'ի հինգերորդ դարում իսկ խնդիր և տարակոյսներ կային Հռիփսիմեանց ամձմակամ գոյութեան, ուղղորութեան և մահատակութեան վերայ. և թէ այս պատճառաւ Մ. Խորեմացի հետամուտ եղաւ քննել և ստուգել մոցա պատմութիւնը: Ե. թէ Դավիթ Հռովմայեցին եղած է իբրև հասարակաց աղբիւր թէ՛ Մովսէսի և թէ՛ Հռիփսիմեանց վկայաբանութեան հեղինակի աւանդութեանց՝ որ յԱզաթանգեղ:

Գ Լ ՈՒ Խ Է .

Տրդարայ խոշակերպութեան ասանդութիանն և նորա արժէքը . — Այս զբրտագիւ և Գրէֆորէ կենսագրութեան հախադարկերն . — Գտարշօքը կարժէքը . — Բողբոտութեան հարսածոցն Տրդարայ ընդ Նաթաֆորանոսարայն . — Այսի զարնող հախաութիանդ և ան արեղութիանդ հարսածոցս հեղինակին . — Վարզնշան կամ Վարդար ասութեան անշնատրութիանն աս արեղիտայ և նորա հետախար . — Գույլախարութեան հիւանդութիանն և նորա պարծնաւը . — Սոյոջ և պարճական լաւածոն՝ Վիպատանական հանձնոցի խոշակերպութեան Տրդարայ :

Յէջ 163, Ի գլխահամարով սկսող պարբերութեանն՝ մինչև ԻԲ գլխահամարն յէջ 193 միջոցը՝ կը պարունակէ Տրդատայ որսի ելլելուն — Ի վերուստ հարուածուելուն — Խոսքովիղխտոյ տեսլեան — Գրիգորի վիրապէճ համուելում և զհարուածեալս հրահամզելու պատմութիւնը ¹ :

Ո՞ւմ արդեօք իցէ այս . Տրդատայ, թէ ընդհակառակն Գրիգորի կենսագրութեան մասն : Այս բանս իմանալը շատ դժուար չէ, ըստ իս, եթէ այս հատուածոցս մէջ պարունակեալ Ուրիցոյ խղճամիտ բարդատութիւն մի ընենք՝ Տրդատայ պատմութեան և Գրիգորի կենսագրութեան հետ, որոնց մի մասն արդէմ քմնեցինք, և միւսներն յԲ . Գրոց մէջ պիտի գամ Ի համդէս : Տեսանք արդարև Ի պատմութեան անդ Տրդատայ, թէ մորա կենսագիրն ինչպիսի բարձրագոյն, վեհամծմ, և վեհմական դիրքի մէջ դրած է իւր թագաւորն, ամենայն պարտուպատշաճ յարգութիւնս ցուցանելով մնա, աւելի քան զեղեակսն Ի պատմութեան : Նոյնը կը տեսնուի մաս Յառաջաբանի և վերջաբանի մէջ և Բ . Գրոց այլ և այլ էջերումը, բայց Ի մասնաւորի յէջնմ 576, 583, 625, 659, 651 և 660 : Իսկ յայտմ, ընդհակառակն, թէպէտև թագաւորն Հայոց՝ սէզմ Տրդատ մերթ ընդ մերթ կու գայ Ի համդէս, բայց զերդ « Դիւաբախ և կատարի », և զերդ Ի կերպարամս անբան և ամենագարջ անասնոյ : Եւ այս պարագայից մէջ հեղինակը ոչ միայն թեթև կարեկցութեան կամ ցաւոց նշան մի չտար բնաւ իւր մեծափառ տիրոջ՝ մախատակոծ և խղճալի կացութեանը վերայ, այլ մամաւանդ, ըստ կարելոյն, սաստիկ և

1. Դիտելու եմք, որ հայերէն Ազատագրողայ 171 իջէն և ԻԲ գլխահամարէն սկսեալ՝ ցէջն 545 ժ. գլխահամարին, կը պակսի յունարէն օրի մակին մէջ : Իսկ ըստ լամպուտայի հրատարակութեան, § 94—§ 108 : § 108 գլխահամարէն՝ մինչև § 110 գլխահամարներն կիսով չափ ևնթ հմ : § 115— § 120 դարձեալ կը պակսին . իսկ § 120 և § 121 գլխահամարներն հագիւ թէ տողս ինչ բմծայեմ մեզ : Լագարդ՝ իւր վերոյիշեալ հրատարակութեան մէջ լրացուցեր է բոլոր այդ պակասն և պակասաւոր գլխահամարներն :

թշմամանալից բացատրութիւններ միայն կը յանախէ: Եղան ունանք և եմ իսկ արդ, որք այս երևոյթս 'ի նկատի չառին, այլ եմթաղու- թեամբս միայն զոր եղան և շանացին զոհացնել և զըմթեցողս իւրեանց, ասելով բարեմտութեամբ, թէ Տրդատայ խոնարհութիւնն իմքնին զայդ կը պահանջէր. առանց խորհելու, թէ այդ հատուածները Տրդատայ մահուանէն շատ և շատ տարիներ յետոյ կարող էին գրուած լինել, և Տրդատայ քարտուղարէն բոլորովին տարբեր անձի մի ձեռքով: Ուստի այսպիսի փաստեր՝ ծրի ասութիւն համարելի եմ պարզապէս և ոչ իր. այլ, ըստ-առածին, « Ընդ բան և ընդ իր՝ մեծ է խտիր »: Եւ յիրաւի, եթէ Տրդատ իսկ ուզէր պնջքան խոնարհիլ, սակայն մորա կենսագրին անկէր կարեկցիլ մահ և 'ի վեր բարձրացընել, և ոչ թէ այնքան մուստամալ և մուստացնել զայն: Ուստի, իրաւամբ տարակուսեցան Ստիլտինգ և Գուտշմիդ այս բանիս վերայ:

Արդ, այս մասով թէպէտև Տրդատայ պատմութեան հետ փոքր ինչ վերաբերութիւն կը ցուցնէ, սակայն և այնպէս պէտք է իրօք անտի անկախ մի բան համարել. այսինքն է, մասամբ ¹ է շարու- մակութիւն Գրիգորի կենսագրութեան, որում հեղինակը դիտմամբ ուրեք ուրեք 'ի մէջ ածելէ զՏրդատ՝ այն աղետալի կացութեանը մէջ, որպէս զի Ս. Գրիգորի և մորա փրկողին զործոց մեծութիւնն ասելի ևս արտափայլէ: Եւ իրօք այս բանն ակնեղև կը տեսնուի 'ի յետագայ դիտողութիւնս. այսինքն է, Տրդատայ պատմութեան մէջ, էջ 103 և 105, երկիցս 13 ամ կը դնէ զմնայն Գրիգորի 'ի վիրապին, ինչպէս տեսանք յառաջագոյն. իսկ աստ, ընդհակառակն, երկիցս դարձեալ 15 ամ կը գրուի յէջ 166 և 186: Յէջ 181 Հովիսիմիանց մասին եղած այս բացատրութիւնս. « Ապա և սուրբ վկայքն Աստուծոյ, զոր դուքն չարչարեցէք, վասն ձեր և մոքս բարեխօսութիւն մատուցանեմ », մնամ եմ բանիցն որ յէջ 544 յերկրորդում պարբերութեան: Յէջ 164 կ'ըսուի վասն Տրդատայ, թէ փոխուած էր 'ի կերպարանս խոզի, և եղեգանց մէջ կը ճարակէր. մոյն բացատրութիւնը՝ մնամածայն բառերով կը լինի մահ յէջ 549 և 550: Յէջ 171 կ'ըսուի, թէ թագաւորը մախարարօք համդերծ Գրիգորի ոտքն ինկած՝ թողութիւն կը պաղատէին իրենց յանցանացը և բժրը կութիւն 'ի հարուածոց. մոյնը կը ծամուցովի բառ առ բառ մահ յէջ 548: Յէջ 183 կ'ըսուի, թէ հարուածեալ թագաւորն և մախարարները չկարէին հեռանալ 'ի Գրիգորէ, ապա թէ ոչ անհմարին կերպով կը տանջուէին 'ի դիւսց. սոյն այս բացատրութիւնը կը լինի մոյնպէս յէջ 545:

Իսկ մնացածմասն, այսինքն է, 187 իջէ անտի ցէջն 193, սերտ յարաբերութիւն ունի Ս. Գրիգորի անուամբ ծանօթ ընդարձակ վարդապետութեան հետ, որ Ազաթանգեղոսեան զրոց մեծագոյն տեղը գրուած է. այսինքն է, 195-541 էջերը: Բաց աստի, ուրիշ երևոյթ մի ևս ընդ առաջ կը լինի մեզ, զոր պէտք եմք ուշադրութեան առնուլ: Ի՞նչ կը նշանակէ, յիրաւի, 163-187 էջ եղած մասիմ՝ փո-

1. Այսինքն է, ցէջն 187 միջև և 'ի վերջ պարբերութեան:

խամակ իւր մախրովթացին (այսինքն, Հովհաննիսեանց վկայաբանութեամ) և կամ գէթ մորա յաշորդին (այսինքն է, Գրիգորի վերոյիշեալ վարդապետութեամ) ընդհակառակն ամոր յաշորդող վերջին Գրոց կամ Հայոց դարծի պատմութեամ հետ ունեցած կատարեալ համաձայնութիւնը: Ի՞նչ կը Նշանակէ, դարձեալ 187 իջէմ մինչև 193 էջ գրաւած մասին համաձայնութիւնը ոչ թէ ամսիշապէս իւր մախրողին և ոչ իսկ Հայոց գործի պատմութեամ այլ Գրիգորի պատմութեամ Ա. մասի մէջ պարունակուած վարդապետութեամ հետ և ամսիշապէս զինքը յաշորդող, այն իմքն է, ընդարձակ վարդապետութեամ հետ:

Առաջին հարցման մկատմամբ իմ կարծիքս և պատասխանիմ այս է, թէ այդ խմբող միւթ եղող հատուածները կամ շարունակութիւն և վերջաբան համարելի են Գրիգորի Կենսագրութեամ Ա. Մասին, զոր ընդհատել է Հովհաննիսեանց միջանկեալ վկայաբանութիւնն. և կամ մախապատրաստութիւն ինչ Բ. Մասին պատմութեամն այնորիկ: Իսկ գալով երկրորդ հարցիմ պէտք է ըսել, թէ է այն մախապատրաստութիւն իմն ամսիշապէս զինքը յաշորդող Գրիգորի կարծեցեալ վարդապետութեամը: Բայց այսպիսի մախապատրաստութիւն սի Գրիգորի կենսագրիմ արդեօք պէտք է ընծայել (են խաղրելով մորա գոյութիւնն), թէ ընդհակառակն զայն յետոյ ուրեմն խաղազողին և Ազաթանգեղայ գրոց մէջ ներմուծողին. այս բանս որոշելն ասեմադժուարին է յայսմ վայրի. որովհետև այս մասը մնամութիւն ունի, ինչպէս ըսուեցաւ, թէ Գրիգորի կենսագրութեամ մէջ եղած այն համառօտ վարդապետութեամ տեղեաց հետ, զոր կը պարունակեն մաս յոյն և լատին օրինակներն, և թէ ամսիշապէս իրմէ վերջ եկող ընդարձակ վարդապետութեամ տեղեաց հետ, որ չգտնուիր ոչ յունարէմի և ոչ լատիներէմի մէջ: Օրինակն աղաքաւ, յէջ 191 երկրորդ պարբերութեամ մէջ մարգարէից վերայ եղած հատուածը, յորում մոքս կը դրկուին յԱստուծոյ իբրև լուսատուք հեթանոսութեամ խաւարը փարատելու, և Աստուծոյ կամքը մարդկանց յայտնելու համար, կը գտնուի նոյնպէս յէջն 68 և 69 Բ. պարբերութեամ և յէջն 255-256: Աբրահամու վերաբերեալ հատուածն յէջ 191 կը գտնուի մաս յէջ 229 ընդարձակ վարդապետութեամ:

Գուռշմիդի կարծիքով յէջ 187, « իսկ եթէ զձեզ յորդոր յօժարութեամբ տեսամիցեմք » պարբերութիւնը ցէջն 193, ինչպէս մաս յէջ 195, « Տէր Աստուած որ մա միայն է ինքնութեամբ » բանիք սկսող ընդարձակ վարդապետութիւնը ցէջն 541, « Այլ ես զանմայն պատգամս Աստուածութեամ կարգեցի », գոյր յուռաշարքն և Գրիգորի գործոց հեղինակն արդէն իսկ իւր դիմաց ունէր: Իսկ 171 իջէմ սկսեալ մինչև 187 էջը « Փառաւորչաց իւրոց », Գրիգորի գործոց հեղինակէմ կամ լաւ ևս մորա խմբազողի ձեռքով մախապատրաստուած են, ընդարձակ վարդապետութեամ ներմուծումը դիւրացնելու մպատակաւ: Արդ, դիտելու ենք որ գերմանացի քննադատին եզրակացութիւնն երկու մախադասութիւններ կը պարունակէ:

Առաջնոյն, այսինքն է, 187-193 էջերը՝ Գրիգորի կարծեցեալ ընդարձակ վարդապետութեան հետ մոյմ կարծելու զխաւոր պատճառն եղած կ'երևի՝ երկաքամչիւր կողման մի քանի տեղեաց կատարեալ մամուլութիւնը. այս մորա մէջ բերած հակիրճ բարդատու թեմէն՝ իսկ կը տեսնուի: Գուտշմիդի Ferfass-ը բառովմ՝ եթէ հեղինակ միայն հասկնանք, այն ժամանակ Գրիգորի և Հովհիսիանաց Գործոցը՝ մի միայն հեղինակ եղած պիտի լինէր. մինչեւ, ըստ իս, բոլորովին հակառակը պէտք է ըսել: Բ. մա այս երկու մասերու վարդապետական կէտերում աստուածաբանական քննութիւն մի ըրած չէ. ոչ թէ Ազաթանգեղայ յումարէն կամ խտալերէն հրատարակութեանց մէջ չգտնալուն կամ հայերէն չհասկնալուն պատճառաւ, ոչ. այլ աստուածաբանութեան ամծեռնհաս լինելուն աղաքաւ. որովհետև կ'ըսուի, թէ մա ամգամ մի միայն այնպիսի մակածութեան մէջ ասպարէզ գալով և անյաշող ելք ունենալուն համար՝ առաջարկած էր պնտհետև զգուշանալ: Ուստի մա այն հատուածոց բառական մամուլութեանց բարդատուութեամբը միայն բաականացել է, որ զինքը այս հետևութեանս հասուցել են:

Սակայն, Գրիգորի ամուսնը մեզի հասած ընդարձակ վարդապետութիւնմ առնուած է Գրիգորի պատմութեան Ա. մասի մէջ եղած համառօտ վարդապետութեանմ. որովհետև ըստ հիման ևնթ է մոյմ ամոր հետ, և ոչ թէ ըստ *արդարեւնէն այսինքն յետն*՝ որով կը մերկայանայ մեզ այսօր. ուրեմն այսպէս մաս 187 էն մինչև 193 էջերմ ուղղակի ազաթանգեղոսեան զրոց խմբագրողիմ և կամ լաւա՝ այն խմբագրութեան մէջ մեծ դեր խաղացող ընդարձակ վարդապետութեան հեղինակիմ ընծայելի են, որ ուրպէս զի կարեմայ դիւրալ յաշողցնել ազաթանգեղոսեան Ա. և Բ. զրոց մէջ ընդարձակ վարդապետութեան մերմոծումը, մորա մի քանի տեղերը կանխած մէջ բերած է, ղնելով զայնս 'ի բերամ Ս. Գրիգորի. մամաւանը թէ յէջ 188-189 կը ղմէ վարդապետութեան միւլթոց հակիրճ ծրագիրն և՛ երեքմելով սոյն բացատրութիւնս. « Սկիզբն արաոցուք ձեզ պատմելով » և այլն, առ 'ի պատրաստել զմիտս ընթերցողի գըրոցն: Սակայն համդերծ այսու՝ կամ յայտնաբարբառ մշամներ, յորոց կարենք հաստատել, թէ ստուգիւ 187-193 էջերում եղած հատուածներմ՝ ոչ ուղղակի Գրիգորիմ են անկ և ոչ իսկ մորա պատմութեան մախկիմ հեղինակիմ: Եւ յիրաւի, մոցամն միոյն կամ միւսոյն լիմելու համար, պէտք էր, որ այդ հատուածները ուղղակի և անըմբմիջաբար Գրիգորի պատմութեան մախընմաց վարդապետութեան հասարակ տեղեացմէ՝ իբրև ուղէշք 'ի բոյն ամտի բառ առ բառ յառաջ եկած լինէին (զէթ ըստ էական մասաց), քան թէ մորա յաշողը ընդարձակ վարդապետութեան տեղեացմէ, զոր յետոյ ուրեմն ճառելոցն էր մա, և մենք իբրև պտուղ և ծաղիկս համարելու ենք առաջնոյն: Սակայն իրն ինքնիմ հակառակ կը ցուցամն մեզ. որովհետև այն հատուածոց մէջ հագլու թէ մի կամ երկու տեղեաց

1. A. von Gutschmid, Agathangelos, s 38, 39.

մմամ բացատրութիւններ կան, զուցէ այն իսկ ըստ դիպաց եղած են: Իսկ, ընդհակառակն, յաջորդ վարդապետութեան տեղեաց հետ ստէպ ստէպ և բառ առ բառ մնամութիւններ յայտնուէ ի տեսնուիմ: Բ. այսպիսի եղելութեամ մի այլ ակնյայտմի ապացոյցը՝ կը գտնենք զրոցս Գ. մասին, այն ինքն է, Հայաստանէ դարչնէ պատմութեան ԴԹ. գլխահամարին՝ 541-542 էջերում, որ ամմիջապէս կը յաջորդէ վարդապետութեամբ: Աստ՝ Ա. և Բ. պարբերութեանց մէջ, որոնք 176 և 185 էջերէն փոխ առնուած բացատրութիւններ են, յետազայ մատող խօսքերը դրած է խմբագիրը Գրիգորի բերամմ. « Այլ են զամենայն պատգամս Աստուածութեան կարգեցի և եղի՝ ՚ի լսելիս ձեր առհասարակ, ոչ թագուցի զօգուտն. ՚ի սկզբանց մինչև վասն վախճամին՝ զամենայն պատմեցաք ձեզ »: Սակայն դիտելու ենք, որ այս բացատրութեանս կը հակասեն անկէ վերջ եկող էջերը, յորս ղեռն սյն ինչ կու գամ ՚ի համդէս « խոզացեալ թագաւորն և դիւաբախ բազմութիւնը » — վաթսում օրում մէջ հազիւ ուրեմն բժշկութիւն կը գտնեն մտաց և մարմնոյ, և ապա կը փութան զունդագումը ՚ի լուր « բամին կենաց և աւետեաց աւետարանին ». — հուսկ ՚ի վախճամի՝ շիմութիւնը վկայարամաց: Գ. յէջս 546-547 կ'ըստի Ս. Գրիգորի կողմանէ. « Ոչ եթէ ծայրաքաղս ինչ արարեալ՝ օղաբանս կամ օրավարս խօսեցաւ. այլ յարիւսպարոս՝ արարեալ՝ ուսուցանէր ամենեցուն ... զի՛ օ՛ր և՛ Նոցանէ առանջնն յակամէ ծառուցամէր և յարմարեալ ընծայեցուցամէր ... և ՚ի մարն զմեկութիւն մորուն համդեքծեալ գրեաց »: Իսկ ընդարձակ վարդապետութիւնը՝ բոլովիմ հակառակ երևոյթ ունի. այսինքն է, ծայրաքաղ և գեղեցիկ ծաղկաքաղ մի է յունակամ հարց, որոնք դարով յետոյ են քան զԳրիգոր. բայց հիմն ունի զհամառօտ վարդապետութիւնն Գրիգորի, որ խօսեցաւ ՚ի կախաղամէ ամտի և զՊատարագամս, սոյցն Գր. Լուսաւորչի և զՅանախապատում նառան: Դարծեալ ոչ միայն իւրաքանչիւրին վիճակին և հասկացողութեան չէ յարմարուած, այլ մոյն իսկ այն մորադարձ երեխայից հասկացողութեանէն բոլորովիմ դուրս և բարձրագոյն տեսութեամբ զրուած. մանաւանդ թէ ուրեք ուրեք աստուածաբանից իսկ դժուարիմանալի: Բայց ո՞րովհետև Գրիգորի կարծեցեալ ըմդարձակ վարդապետութիւնն Ա. գաթանգեղոսի մէջ այն տեղին չունէր ՚ի սկզբան, այլ յետոյ մտաւ, այն պատճառաւ՝ են իսկ վերջը կը թողում առանձին զըքով ընել մորա մանրամասն քննութիւնը: Այժմ դառնամք քննելու վերոյիշեալ մասի պատմական արժէքը:

Տխուր և միանգամայն գեղեցիկ է այն հակիրճ դրուագը, որ կը յաջորդէ սրգաւէտ մտաւորան գեղամայն հոփիսխեսայ, և կը կամխէ կը պատրաստէ զընթերցողս կրկին երկմտաք սքանչեանց, յորոց միովն կը հարուստէ թագաւորան թագաւորաց Աստուած՝ զթագաւորն Արշակունի, համդերձ մախարաօք և մեծամեծք. իսկ միւսով՝ կը կանգնէ և կը լուսաւորէ այն երկիրն, որ ուղեցեալ իւր ամանդ վկայութեաց սուրբ արեամբը: Վեցաթիւ սև օրեր կը թաւալին կ'անցնին Տրդատայ լուսապայծառ արքունեաց վրայէն, մին քան

զմիւսն անելի սաստկացմեով մորա ցաւոց և տրտմութեամ ակըմն_
րը: Հոակ ուրեմն կ'ելլէ խրոխտապանծ և սէգ Արշակունիմ, ըստ վա_
ղեմի սովորութեամ Պարթևաց, թուր իւր ցասման և ցանկութեամ
մետերը թափելու վայրի էրէոց վերայ. բայց որպիսի մեծավայե_
լուչ պատրաստութեամբ. « Ժամ տուեալ որսոց՝ ամենայն զօրաց
ածել կուտել զդաստիարակն 1, իստոպտունն 2, երբոսոց ստուեալ,
Լուսուրի չքեալ... երթեալ 'ի դաշտմ քառասուն շնորհոց »: Այն ինչ
բազմել 'ի կառա կ'ուզէր քաղաքէն դուրս զնալ, անդէն և անդ
կը հասնի Աստուծոյ ահաւոր և վրէժխնդիր դատավճիռը մորա վե_
րայ, որ կատրէն 'ի գետին կործանուելով կը մոլեգնի. և 'ի քթթել
ակամ համգոյն թագաւորին Բաբելացոց կը փոխուի 'ի մարդկային
կերպարանաց՝ 'ի կերպարանս վայրի խոզի. մոցա բնակակից կը
լիմի և կը ճարակի յեղեգմուսու:

1. Փ. Բուզանդացին, Գ. Գաբ. զլ. Դ. կը յիշէ մամօրիմակ որսորդու_
թիւն մի, զոր ետ Տիրամ՝ Վարագ-Շապհոյ, յասելմ. « Սակաւ սպասաւո_
րօք համդերծ և որսոցմ պատահամօք »: Առ Ղազարայ ևս կը յիշէին
մամօրիմակ որսորդութեամ գործիմեր. « Հարկանէին յանկարծողէպս
յերագազմ »: Եւ այլուր՝ « Թակարթացմ շրջափակութեամբ, երագա_
զիւքմ և գահողովքն ելեալ 'ի յորս գումդք մախարարացմ որդուվքն ա_
զատաց »: Ի թարգմանութեամ ամդ Վիւրդի՝ կ'ըսուի. « Երագազմ՝ ամօք՝
ինչէ հիւսկէն »: Առ Եզմըկայ կ'ըսուի. « Ի դաշտս երագազումք ձգեցին »:
Այսպէս մա և առ Մ. Խորենացոյ Գ. զլ. ԵԳ և ԴԳ: Արդ, Գ և Ե դա_
րուց հեղինակաց այս վկայութիւններս իսկ կը հաստատեն Տրդատայ
կենսագրին աւանդածը, թէ արդարև Արշակունիաց ժամանակէն և
այսր՝ գոյր 'ի Հայս սովորութիւն արքայական որսորդութեամ: Սակայն
քսնմտիոն 'ի Վերամարզմ և այլուր դեռ անելի 'ի խոր հմութիւն ամդը
կը հանէ զայն և կը ցուցանէ, թէ որսորդութիւն՝ առ Պարսիկս և Հայս
համարուած էր իբրև պատկիր իմն պատերազմի: Եւ յիշաւի, Վիւրդոս
այսպիսի իմն պատերազմ կը մտնէ 'ի Հայս և կը պաշարէ յեղակար_
ծումն ժամու զերուամդ:

2 Ամուսն ֆառակամ՝ միայն ԴԳ ծառըմտրի մէջ, էջ 446, փառակակ
զրուած է. իսկ Ազաթամզեղոսի բոլոր օրինակաց և տոհմային մատն_
նագրաց քով փառակամ է: Բայց հետեւեալ բառին մկատմամբ՝ մեծ ան_
միաբանութիւն կայ. Բ և Ջ օրինակները մշամակաց կը զրբն. իսկ այլուր
մշմակաց (մշամակաց): Սակայն ճշդագոյն կը թուի ինծ ֆառակամ
Շեմակաց. որովհետև է դարուն հմագոյն օրինակաց մէջ հաւանօրէն
այսպէս զրուած էր. որոյ ապացոյց է մոյն դարուն հայերեմէ յեղեալ
լուծարէն թարգմանութիւնը: Ազաթամզեղայ հրատարակիչք և Հայկ.
Բառարանին յօրինողքը՝ փառակամ փոխանակ պառակամ հասարակ
ամուսն առեալ՝ առանց զխագրի տպած եմ: Սակայն պէտք է իբրև յա_
տուկ անուս ըմբռնել զայն. որովհետև յոյմը կը զրէ. 'Εν τῷ πεδωδῶδι
καλοῦμαι τὴν Φορκακόνην Σερδακων: Բայց թէ այդ դաշտը մեր կը գտնուէր
արդեօք, և այժմ ի՞նչպէս կը կոչուի. կա դժուարին է ճշդի որոշել:
Փուստոս և Մոլսէս՝ կը թուին ցուցանել մեզ գտնելիս որսորդութեամ
Արշակունի թագաւորաց՝ 'ի գաւառս Վոգահովտի (Գոգհովտ), 'ի Շա_
հապիվամի և յԱպահունիս: Սակայն անելի 'ի դէպ է ասել, թէ եղած
ըլլայ մօտ 'ի Խորովակիրտ առ Տիկմունի ապարամու, զոր յիտոյ Տըր_
ղատայ որդին 'ի յշշատակ հօրն՝ հրաշակեբտ շիմուստովք և անտառօք
ամմահացոյց, կամ 'ի Բազրևանդ գաւառին 'ի ստորոտս լեռին՝ զոր
ֆուստոս Վարագ կ'անուանէ. և կամ Իշխամաց կղզին՝ որ 'ի մէջ Երաս_
խայ, (Բաֆֆի, Սամուէլ Վիպ. էջ 660):

Արդ, ինչպէս Հովհաննէսայ պատմութեանը՝ Շուշանայ դէպքին կերպարանք տրուած է, և Գրիգորի 'ի վիրապմ անկամիլը՝ Դամիէլի 'ի գուրն առիծուց ձգուելու մնամողութեամբ յօրինուած է. այսպէս այլ Տրդատայ պատմահաստեւելում և դարձիմ նկարագիրը՝ Նարուգու դոմոտորայ պատմութեան մնամութիւն է: Բայց այսու համդերծ այս աւամողութեան հարազատութեանը վերայ չէ մարթ տարակուսիլ. մնամաւանդ թէ, իմ կարծիքով, այս հաստուածս աղբիւր եղած է մնացած բոլոր տոհմայիմ և օտարազգի մատենագրաց¹, որոնք միածայմ կը վկայեն այսպիսի մի եղելութեան. ուստի զայն մերժել ուզելմ է ողորակի պատեւրազմել ըմդղէմ այնքան պատմական վը կայութեանց և ազգայիմ և օտարազգի աւամողութեանց:

Արդ, եթէ բանաւոր և ներքի չէ մերժել զայն, իցէ՛ մարթ, ըմդ հակաւանկն, իբրև պատմական ըմդումել բոլոր այն դրուագմ և նորա վերաբերեալ հատուածներն, և ըմդումել ճիշդ այն կերպով՝ որով նկարագրուած է այդ դէպքը՝ թէ՛ աստ և թէ՛ վերջիմ գրոց 548, 549 և 551 էջերում մէջ: Ոչ բմաւ: Արդ, եմթաղբերով, թէ երկմառաք հրաշիք ևս եղած լիմի այն, սակայն չէ մարթ աւելի ըմդարձակ նշանակութեամբ իմամալ, քան զոր պատմեն Գիլքմ Դամիէլի՝ մնա մատիպ դէպք մ'ն և Բաբելագւոց թագաւորիմ համար և իմամամ մեկնիչք² գրոց: Իսկ արդ Դամիէլի (ինչպէս ման Ագաթանգեղայ 164 իջի նկարագիրքը) բոլորովիմ կը տարբերիմ Տրդատայ վերայ կա տարուած դէպքի նկարագրութեմէն. ուրեմն ըստ այսմ ևս պէտք է

1. Զննոր, էջ 23, առ Ասորիս զրած թղթոյմ մէջ: Փ. Բուզանդացի, Գ Դպր. գլ. ԺԳ, էջ 34: Ատենագրամութիւն Ս. Մահակայ Գարթնի առ Ղազարայ էջ 58: Զրուանչիր Գատմ. վրաց, գլ. Ը, էջ 44: Յովն. Ոսկեբերամ, Ներբողեան 'ի Ս. Գրիգոր Լուսաւորիչիմ միր: Մետափրաստէս յոյմ հեղի մակ թ դարում: Ամամում թարգմամիչն լատիներէն Ագաթանգեղոսի: Նիկեփորոս Գալլիստոս, 1, Ը, 35: Զայս կը յիշեն դարձեալ Յայսմաւուրք Յունաց և Վրաց, պատմիչք Ասորուց և Աղուամից: Հուսկ ուրեմն Մոզմ մէնոս, Թէոփամէս հո. Ա. և Թէոդորոստոս՝ սքամչիւօք եղած կը համարին զդարձմ թագաւորիմ Հայոց Տրդատայ 'ի քրիստոնէութիւն, որ զոր ծեցաւ 'ի տէրութեան անդ կամ 'ի տամ:

2. Գայմէտ, Comment. litt. in veteris et novi Test. libros, Venetiis, pag. 438. *De Metan.orphosi Nabuchodonosor*, այլևայլ առանձնակամ կարծիս մէջ բերելով առ-այս և հերքելով, հուսկ ուրեմն Ս. Հարց և մեկնչաց ըմդհանուր կարծիքմ այսպէս կը ներկայացմէ. "Denique recepta communi suffragio et maxime probata sententia tenet, Nabuchodonosorem Dei vindicis percussus in phrenesim incidisse; in eam nempe morbi speciem, quam *lycantropiam* appellant; cuius vis turbata phantasia, etque morbido ardore effervescens, bovis, lupi, felis et canis non spec em qu dam, sed *mores indolenque* reipsa sibi adsciscit. Ita rex semel bovem se esse persuasus, coepit curvato dorso manibus pedibusque reptare, herbas carpe: e, veluti cornu petere, in agro pererrare, coetus hominum fugere, comam anguesque ferino more negligere; ad novum prodigium stupentes Babylo- ni, furentem alligaverunt, juxta ac Daniel insinuat. *Alligetur vinculo aereo et ferr. o* nihilque cum illo mitius, quam cum furente et mania laborante egerunt. Sed elapsus tandem, in agrum commu- n. m cum belluis vitam acturus convolavit. Neque id morbi genus

դատել մորա արժէքը: Յիրաւի, եթէ պահ մի բարդատեմք զգրիմ աստուածազրեցիկ՝ Տրդատայ կենսագրին հետ, ամոզէմ կը տեսնենք այմ մեծազոյմ խտիրմ, որով միոյմ պատմական ճշմարտութիւնմ ամվմաս կը պահուի, իսկ միւսոյմ՝ ընդհակառակմ, Տրդատայ հետ պլպփոխուած կը լինի: Նարոզորոմսորայ համար կ'ըսուի. « Սէր մորա ֆոխեայ ՚ի հարբանէ և սիրտ գազամաց տացի մմա »: Իսկ աստ կ'ըսուի յաղագս Տրդատայ. « Ելիս ըստ հարբայն քնախեան արտախ ՚ի նահաւիխն լայրենէ խոզոց »: Արդ սիրտ բառմ ինչպէս այլուր՝ այսպէս և աստ առնուած է փոխամակ մտաց. ուստի, եթէ ըստ մկարագրական իմաստիմ և եթէ՛ պլբարմօրէմ առնուք, կարէ փոխուիլ. այսինքն է, կարէ մարդ կորսնցնել զայմ, մերթ բարոյական և մերթ միւթական հիւանդութեամբք, զորս կամ ցամկականմ և կամ ցամմականմ յառաջ կը բերենմ: Այսպէս ուրեմմ ՚ի բամա՝ կանութենէ զրկուած մարդուն համար՝ չէ ինչ հակասական, որ ըստի՛ տացի սիրտ գազամաց ամբանից. այսինքն է, կորսնցնել բանավարութեան կիրառութիւնմ. այս բանս համապագօրեայ փորձով իսկ քաջ կը հաստատուի միշտ մորամոր:

Սակայմ իցէ՛ մարթ առամց հակասութեան ըսել մարդուս համար, թէ փոխեցաւ ՚ի մարդկային բնութենէ կամ յէական կերպարանաց՝ իւրոց՝ ՚ի բնութիւն կամ ՚ի կերպարանս խոզի, ինչպէս կ'ըսէ կենսագիրս վասն Տրդատայ: Արդ, դիտելի է որ Աստուած իւր քացարձակ ամենակարողութեամբմ՝ ինչպէս յամբոյից ՚ի գոյ էած զբանական և զամբան կենդանիս, այսպէս և կարող է վերացմամբ բանիմ՝ փոխել զմարմին կամ զմարմնատր ձև մարդոյ՝ ՚ի մարմին խոզի, ինչպէս փոխեց երբեմմ ժամանակի զկիմմ Ղովտայ՝ յարձան աղի. և առ այս զուրցուած է գուցէ ՚ի դէմն Նարոզորոմսորայ, և զուրցուած է յառաջ քան զստանալմ զազանեղէմ սրտի, թէ « Վերացաւ բանմ յիմէմ »: Սակայմ թողլով զբանական հոգիմ մարդոյ ՚ի մարմնի ամոզ, իբրև տեսակարար և կերպացուցիչ կերպարան

gnotum est medicis, scriptisque de medicina libris.». Յետ որոյ հիմ և մոր պատմութենէմ և ՚ի բժշկաց բազմաթիւ իրողութիւններ մէջ կը բերէ, զորս աւելորդ կը համարիմ յիշել աստ: Իսկ ոչք տակաւիմ կը տարակուսիմ այսպիսի մի հղելութեան վերայ՝ մկատմամբ Հայոց թագաւորիմ, կարող եմ ըմթեմուով յիշեալ հեղինակմ և համոզուիլ:

1. Գերպարան կամ բնութիւնը՝ քացարձակապէս պէտք չէ շփոթել արտաքին և միւթական ձևի հետ, որ ոչ այլ ինչ է՝ քայց եթէ պատահական արգասիք քամակութեան և սեփհակամութիւն իմմ ամհատականութեան. այնու զի սի և մոյմ տեսակի վերաբերեալ այլևայլ ամհատք կարեն տարբեր ձևեր ունենալ և ունիմ. հւր թողումք և մարդկային ազգի հրէշներմ, որք իրենց արտաքին թերութեամբքմ և խոտորմուքմմ որով համոզերձ՝ մերքապէս մարդ լինելէ չեն դադրիր: Այլ կերպարանը սեղմ առմամբ է հր և է տեսակի մի էութիւնը կազմող մերքին սկիզբը. որ է հաղորդականման մի և մոյմ տեսակի վերաբերող ամէմ ամհատից, և է ամփոփոխ. այնու զի է օրիմակեալ ՚ի վերայ մախատիպ օրիմակաց իմացութեան Աստուծոյ. և ինչպէս միմ ՚ի մախատիպ օրիմակաց էից՝ աստուածային իմացութեամբը մէջ չկարէ լինել մոյմ ընդ միւսոյմ, այսպէս իմմ և վասն օրիմակելոց:

մարդկեղէն բնութեամբ, չկարէ Աստուած ինքնին առնել այնպէս՝ որ մի և մոյմը՝ լինի միանգամայն կերպարանք խոզի, 'ի մսին ժամու, ինչպէս չկարէր առնել զի Ղովտայ կիմը արծան դարծած ժամամակ՝ լինէր միանգամայն և մարդ կենտունակ։ և կամ զի քառակուսիմ՝ իցէ միանգամայն բոլորակ, և թիւ 2 միանգամայն և՛ 3, ապա թէ ոչ իր ինչ երկու էութիւն պիտի ունենար 'ի մսին վայրկեմի. այլ այս է ամհմարիմ՝ զի է հակասակամ, այնու զի՝ երկու հակառակամարտ տեսակեմեր՝ 1 չկարեն կազմել մի միայն տեսակ կամ էութիւն, զի եղծիչ են իրերաց։ Այս բնագանցական ճշմարտութիւնմ՝ ընդու-մուտած է յամենայն իմաստմոց, և մորա վերայ՝ իրը 'ի հիման հաս-տատուած են զանազանութիւնք տեսակաց և մոցա մասիմ եղած զիտութիւնքը։ Բ. Դիտելու է, որ կարէ իր ինչ երրակի լինել կարելի կամ ամկարելի. այսիմքն է, Բարոյապէս, Ֆիզիկապէս և Քնաշտեցոյն։ Արդ, բարոյապէս ամկարելիմ՝ կարէ լինել ֆիզիկապէս կարելի. ինչ-պէս Ֆիզիկապէս ամկարելիմ և՛ կարող է լինել բնագանցապէս կարելի։ Բայց ընդհակառակմ, որ ինչ ամկարելի է բնագանցապէս՝ հարկ է որ մոյնպէս ամկարելի լինի որ և է կերպով։ Իսկ որովհետև (ինչ-պէս տեսնուեցաւ) բնագանցապէս ամկարելի է, որ մարդս 'ի միմ վայրկեմի և միանգամայն լինի թէ՛ մարդ և թէ՛ խոզ. ուրեմն ամկարելի է, կը հետևեցնենք, որ Տրդատ իրօք է տեսակաւ փոխուած ըլ-լայ 'ի տեսակարար կերպարանս խոզի և պահած յիմքեամ զմիտս մարդկայիմ կամ զբնութիւն մարդոյ։

Մակայն կենսագիրս՝ բնագանցապէս ամկարելիմ՝ ուզած է պատ-մարանօրէն իսկ կարելի ընել։ Յէջ 549 կը մերկայացնէ մեզ զՏրդ-դատ (մերէ այս ակամայ բացատրութեամմ, ո՛վ երանելիդ 'ի թա-գաւորս) « Կհրախուս ոտիւք և ձեռքք, Կհրախուս գոճամաց, մեծամեծ ծանկոտ և խոշորապաւ մարմով »։ Յէջ 550 տուած է մնա « Կիւր, Կը-լիւ և Կիւրի »։ « քոխոնելով փրփրացեալ, դիզեալ զկնճակեբրպ ե-րեսօքմ »։ Յէջ 169 առաջին ամգամ երբ Գրիգորի կը համդիպի այս մորահրաշ կիմնս՝ անդէն և անդ կը ճանչնայ գրիգոր, և Գրիգոր յիւրն կողմնամէ կը ճանչնայ, թէ՛ այդ է Հայոք թագաւորը. միմ 'ի գունս անկեալ թողութիւն կը խմդդէ. իսկ միւսն 'ի վեր կը կամզմէ՝ ըսելով. « Ես մարդ եմ իբրև գծեզ »։ Յէջ 545 իբրև զգաստացեալ ապաշխարող ոք՝ « ձործապատեալ » և միխրի վերայ մատեցուցած կը մերկայացնէ զհէզ թագաւորն և պահս ևս տայ մնա պահել։ Այժմ որ յէջ 548 առըմթեր Գրիգորի կալով՝ մորա աւետարանակամ քա-րզութիւնքը կը լսէ, և կը խոստամայ իսկ առն Աստուծոյ կատարել զոր ինչ միանգամ հրամայիցէ. մոյմը դարծեալ յէջ 573, այսիմքն է,

1. Տեսակ կամ բնութիւնը՝ պէտք չէ շփոթել, դարծեալ, գոյացութեամ հետ. որովհետև երկու տարբեր գոյացութիւնմեր՝ ամբողջ պահելով ի-րնոց գոյութիւնը՝ կարեն կազմել մի միայն էութիւն կատարեալ, ըստ տեսակի. ինչպէս հոգի և մարմինը՝ կը կազմեն զմարդկայիմ տեսակը կամ բնութիւնը. բայց մարդս քամի որ է մարդ բամաւոր՝ չկարէ լինել միանգամայն և՛ ամբամ ամասուն, զի է ըստ իմքեամ կատարեալ 'ի տե-սակի. ուստի լինելու համար՝ պէտք է որ մախ զրկուի իւր տեսակէն։

յետ վաթնօրեայ պահոց, վարդապետութեամ և պատմութեամ տեսեան 'ի Գրիգորէ, խոզակերպ կու գայ 'ի համդէս. « իսկ թագաւորն Տրդատ Գ-ն ևս յայնչա՛մ էր յա՛մենայն կերպարան խոզէ՛ » բաց 'ի մարդկապէսն խօսելոյ » : Բարէ դարձադարձ անյարմարութեան, յորում կը մերկայացնէ կենսագիրն դիմապատկերն իմն ճշմարտութեամբ ընդ ստութեան, հմարաւորիմ ընդ անհմարութեան, ծարու և Ոչաւամաց՝ ընդ կարեկցութեան :

Առ իմն սրդեօք այս դերս ուզած է խաղալ հեղինակ հատուածոցս. առ իմն արդեօք թէ՛ խոզ և թէ՛ մարդ միանգամայն ուզած է ցուցնել զՏրդատ, յընթացս 60 ատուրց: Ըստ իս, երեք գլխաւոր պատճառաց համար. այսինքն է, խոզ ըրած է՝ Գրիգորի սքանչելաւ գործ զօրութիւնն՝ ամենում զգալի ընկելու համար. մարդ պահած է՝ Գրիգորի ընդարձակ վարդապետութիւնն հաւատարմացնելու աղազաւ: Իսկ Տրդատայ այն մորօրինակ դէպքիմ, զոր մարթ է մորահը մար բառիւ կ'համարդարութիւնն ամուսնել, այնքան յասնցնելում չիք այլ պատճառ՝ բաց 'ի շինութեմէ վկայարանաց սրբոց վկայից, և 'ի փոխադրութեմէ մշխարաց մոցիմ: Եւ յիրակի, խօսքը վկայարանաց շինութեան գալում պէս, անդէմ փութեանակի Գրիգորի մէկ արթթըովը թափել կու տայ թագաւորիմ կնդակներն և զամենայն և ընդդէմ վարագի. և մարդակերպ կը մերկայացնէ զայն ձեռօք և ուտիւք, որպէս զի կարեմայ ունիլ զբահ և զփայտաստ և կամ 'ի բարձուէ Մասեաց արաստոյ վէմս ևս բերել տայ: Բայց զարմանալի և մեծագոյն հակասութիւն մի ևս աստ ըրած է, այնու զի վկայարանաց մասնակցող և 'ի Մասեաց հայկաբար ութ արձան վէմս բելող Տրդատայ համար տակաւիմ կ'ըսուի, յէջ 580, թէ « Միմն կայր 'ի տեսիլ խոզի ընդ ժողովրդեան, յամկարծակի հարեալ զըողման և զխորխմ արտաքոյ մարմնոյն 'ի բաց ընկնելոյ, ժամտատեսիլ ժամեօքն և կմնթաղէմ երեսօքն » :

Արդ, բոլոր այս պարագաներս 'ի մկատի առնելով հարկ է միմ յերկուց աստի ըմտրել. այսինքն է, կամ ցայս վայր մէջ բերուած ամտեղութիւնքն և ամհմարութիւնը՝ կուր զկուրայմ իբրև պատմական ճշմարտութիւն ըմդումել, և կամ մերժել իբրև հակապատմական իմն: Ես իբրև խոզարկու ճշմարտութեամբ վերջինը կ'ըմտրեմ. և իմ կարծիքով, յէջ 548 « Մամուսանդ թագաւորն » բառերով հատուածն՝ միմն « Ի միշոյ մարդկամէ », ցէջն 550 միմն « հասամէր յայմ տեղիմ », յէջ 165 « Նաև ամենայն մարդիկ քաղաքիմ » փոքրիկ պարբերութիւնն, յէջ 573 « իսկ թագաւորն Տրդատ » պարբերութիւնն, յէջ 546 « Հասօրէն տեղեկացուցեալ » պարբերութիւնն և մորա յաշորդը, յէջ 580 « Եւ թագաւորն միմն կայր 'ի տեսիլ կերպարանաց խոզի » պարբերութիւնն. և հոսակ ապա յէջ 541 առաջիմ պարբերութիւնն՝ աւելի վիպասանական՝ քան թէ պատմական տիպ ունիմ. ըստ կամս յերկրեալ եմ կամ Գրիգորի գործոց հեղինակէն և կամ գլխովին եկամտտ ամհարագատութիւններ համարելի եմ, յետոյ ուրեմն մերմուծեալ: Նոցա հեղինակը ջամացեր է մեծամեծ գործերում միշտ մեծ և զարմանալի մկարագիրներ տալ.

բայց երանի՜ թէ տուած չլինէր . որովհետև այդ հատուածները մեծապէս վնասած են ստորգ եղելութեանն և ծաղրակամ ըրած են զայն: Ուստի ես զանոնք հակասական համարելով 168-169 իջիմ < Իսկ մտ վարվադակի ծումը իշնալ > քառերով սկտղ պարբերութեանն, որ միայն ճիշդ և պատմական իրմ իւր բնական վիճակի մէջ կը յայտնէ՝ առանց խոզակերպութեան, իբր աւելորդ չափազանցութիւններ դուրս կը թողոտ, թէ շատ՝ հայ վիպասամութեանց և վիպագրի պարզ աւանդութիւններ համարելու է և ոչ այլ իմէ: Մակայն ես կենսագրէմ աւելի՜ կը զարմամամ այն ուշիմ անծանց վերայ, եթէ կամ, որոնք պսօր իսկ մախադաս կը համարին կարելի ընել զամ կարելիմ բնագանցապէս, որուն դիմաց աստուածային ամենակարողութիւնն անգամ՝ զկայ առնու, քան տարակուսիլ այնպիսի աւանդութեան ճշմարտութեան վերայ. մանսուամդ թէ, զուցէ և զտարակուսողս իսկ՝ դատասպարտենմ:

Տրդատայ խոզակերպութեան և զայն մկարագրող հատուածոց խնդիրն այսպէս պարզելէմ յետոյ, երկու կերպով կարելի է լուծումն տալ այնմ. այսինքն է, կամ ըսել, թէ այդ դէպքը՝ մի ուրիշ հնագոյն վէպի վերայ հիմնուած է, որ մնայ մեզ անծանօթ. և կամ ըսել, թէ էր այն արգասիք տեսակ մի բնական հիւանդութեան, զոր Յոյնք լսառնծրաւա (լիկանթուպիա) կամ ~~հարտուրիս~~ կ'աւանտանն: Գուտշիդ՝ առաջինն եղած կը համարի, ըսելով՝ թէ արդէն՝ ՚ի վաղուց կայր Տրդատայ վերայ յօրինած այդ ~~արդարեւ~~ աւանդութիւնը՝ յարաբերութեամբ իզակերպ էակի միոյ, յորմէ ապամացաւ Հռիփսիմէի: Մակայն այս կարծիքս ընդունելի չէ, ըստ իսորովհետև կը հակառակի մախ վերդիշնալ սորմային և արտաքին յոքմախտանք մատենագրաց համաձայն աւանդութեանն, որք մորամը շան դէպքով մի կատարուած կը համարին զբարձմ Հայոց ՚ի քրիստոնէութիւն. մանասամդ թէ աւետարանական քարոզութեան համար շխարհական ընդունելութիւնն ՚ի սուղ ժամանակի՝ մէկ կողմէն, իսկ միւս կողմէն այլ՝ կուտց համայնաջիմջ կործանումն՝ ոչ քաղաքական յեղափոխութեան մի արգասիք է և ոչ իսկ բնական կերպով իրագործելի: Բ. Հռիփսիմեանց գոյութիւնն իսկ՝ իբրև պատմական իր կ'ընդունին և ոչ թէ լոկ վիպասամութիւն իմ: Գ. Թէպէտև առ Փ. Բուզանդացոյ կը յիշուին ըազմաթիւ պատմական և աշխարհագրական անուանք¹, որոնք վարագ բարտով կազմուած են. սակայն բոլոր այդ անուանքը՝ Տրդատայ ժամանակէն վերջ կու գան ՚ի հանդէս. ուստի չկարեն ուղղակի ըմծայել մեզ Տրդատայ վերայ յօրինուած հնագոյն վէպ մի: Դ. այն ժամանակ կարելի էր հիմնաւոր համարել Գուտշիդի կարծիքը՝ Տրդատայ խոզակերպութեան մասին, եթէ վարագ անուան կամ ոչանի կիրառութիւնը՝ պարզապէս և

1. Եթէ 17 կը յիշուի զարագ ում համեմակամ. յէջ 29 զարագմ-Շահունի, յէջ 38 զարագ իշնալ հիմաքսենից, յէջ 49-50 զարագ Շապուհ, յէջ 249 զարագ Գարսիկ, յէջ 234 զարագդատ, և յէջ 49 զարագդուխդ: Այսպէս մաս առ Ե. Գաղամկատուացոյ կը յիշուի միհրական ցեղէմ զարագ Տրդատ:

բացատրութեամբ միայն հոյ ժողովրդեան սեփական մի բան համարինք: Մակայն ազգաց պատմութիւնը կ'ընթացնուի, թէ վարազը մահ առարիական և կովկասային ազինս արքայական կենդանի մի համարուած էր՝ ամրոտին 'ի վաղ ժամանակաց: Արդարև, թագաւորք Մասամեանց՝ վարազ մատանեաւ կը կնքէին¹ իրենց երդմանց դաշինքն և հրովարտակները: Վարազ նկարագիր էր² նաև ազգային դրօշն Գելտաց՝ 'ի ժամանակս Դրուիդաց, և զինուորական շքանշաններու մէջ՝ առաջինը կը համարուէր: Վարազանշանը կը գտնուի Ոյնպէս Աւէրզաց և Էրուեմնաց դահեկաններու վրայ: Գերմանաց, Գելտիքերեանց և Իքերիացոց նշանադրօշն ևս վարազ էր:

Մ. Խորենացին, Ա. զ. ԺԲ, Արտաշէս Ա.՝ ժամանակ Վարաժ (Վարազ) անուամբ մէկը կը յիշէ 'ի սերնդոց Գառնըկայ, « յաշող յորս վարազու » և թէ « զնա իշխան արքունականացն արալրեալ որոց՝ ուսուցանել զՏիգրան »: Իսկ Բուզանը, Դպր. Ե. զ. ԽԳ, լեռն մի ևս կը յիշէ Վարազ անուամբ 'ի Բագրևանդ գաւառի, ուր դրկեց զօրավարն Մամուէլ՝ զՏիկինն Հայոց՝ հանդերձ Արշակաւ և Վաղարշակաւ, Մերուժանայ դէմ պատերազմած ժամանակ: Արդ, Մովսիսի աւանդութեան համեմատ, վարազ անուան կիրառութիւնն 'ի քաջադեղմ պատանոյ անտի յառաջ գայ 'ի Հայս, և վարազորսութիւնն՝ 'ի պարթևազն թագաւորէ անտի, և թէ մոցս վարազորսութեան տեղն էր 'ի Բագրևանդ գաւառի, ըստ Փաստոսի, ուր երթալոց էր և նա ինքն Տրդատ: Այսպէս թէ այնպէս եթէ այս կերպին տոհմային աւանդութիւնքս 'ի մի զուգեմք՝ վերոյիշեալ ազգաց յիշատակարանաց հետ, կը տեսնենք ակներև, թէ ըտր արիական և կովկասային ժողովրդոց մէջ կնճորսութիւնը կամ վարազորսութիւնը, այնպէս այրական գործ համարուած էր, ինչպէս առ Հելլէնս՝ Ոլիմպիական խաղոց մրցութիւնքն, և առ Ասպետս՝ լախտախաղութիւնն և մենամարտութիւնն: Եւ ինչպէս պատերազմաց աստուածն կամ անձնատրութիւնն, առ Յոյժս և առ Հռովմայեցիս, էր Արէս, այսպէս և առ արիական ազինս՝ կնճորսութեան կամ արիական մահատակութեան անձնատրութիւնն էր վարազ: Կարելի է ուրեմն և բանաւոր՝ այսպիսի այրական նշանակէ մի՛ իգակերպ էութիւն մի եմթադրել և ըմծայել Տրդատայ՝ Հռիփսիմնայ արարուածովք, ինչպէս եմթադրած է Գուտշմիդ, առանց հակասեալս այն ըմբիամուր աւանդութեան: Կարծեմ թէ ոչ: Ուրեմն կը մնայ ըմբու մեկ երկրորդը. և այսպէս հասկանալի է այն՝ ըստ իս: Արդ թէ 'ի բազմապատիկ փորձոյ պատմական դիպաց և թէ ըստ հասարակ կարծեաց բժշկաց, գայլախտութիւնն է յեղաշրջութիւն կամ ցմրումն մարդկային մտաց, որ կը պատճառի 'ի սաստիկ տխրութեմէ և 'ի բորբոքմանէ մաղասային հիւթոց, որք այնպիսի բուռն կերպով կը յարծակին և կը վրդովեն զուղեղն և զերևակայութիւն մտաց, յո-

1. Փ. Բուզանդացի, Դ. Դպր. զ. ԵԳ. « Եւ մա (Շապուհ) ետ բերել ըստ օրինաց հաւատարիմ երդմանց թագաւորութեան Գարսից՝ աղ կնքել վարազ նկարագիր մատանեաւ »: Նոյնը կ'աւանդէ և Եղիշէ:

2. Desobry, Dictionnaire de Biographie. T. 2, p. 2390,

րոտմ հիւանդը կենդանի գոյնով զինքը փոխակերպուած կը տեսնէ 'ի գայլ, 'ի ցուլ, և 'ի վարազ կամ յայլ իմէ, զոր յառաջագոյն կարի սիրած էր և կամ ընդհակառակն ատած . և կը սկսի մորա գործողութիւններն ևս կատարել: Սոյնը համդիպեցաւ ուրեմն յերբեմն ժամանակի Նարգոթդոնոսորայ և մերոյս Տրդատայ: Բայց որովհետև Բաբելացոց թագաւորին մտաբանութիւնն էր արգասիք կամ պատուհաս ամբարտաւանութեան, ամոր համար մա ինքն և կամ սրբազան գրիչը, փոխակերպուած կը մկատէ զմա յարջաւ, որ ըստ հիմաւորը յիշատակարանաց՝ էր մշանակ կամ ամծմաւորութիւն Ասորեստանեայց հօգոր զօրութեան: Իսկ Հայոց թագաւորին հիւանդութիւնն որովհետև էր արգասիք կամ պատուհաս հեշտախտութեան, այն պատճառաւ իսկ մորա կենսագիրը փոխակերպուած կը մերկայացրնէ զմա 'ի վարազ կամ 'ի խոզ, որ է ամծմաւորութիւն հեշտախտութեան: Իսկ ինքն Տրդատ՝ յայնպիսումն խնայցմոր վիճակի կարելի է թէ ինք զինքը փոխակերպուած տեսնէր 'ի կոյսն գեղամի, որոտմ հոգաւով չափ ցանկայրն: Ցայսմ միայն կը ստուգուի Գուտշմիդի ըսածը . բայց այդու ամծխտելի կը մնայ մասն Հռիփսիմեայ գրութիւնը, զոր մա տարակուսի տակ ձգած է:

Յիրաւի, Տրդատայ սոյնօրինակ հիւանդութեանն (յառաջ քան զզմալն յորս) ակնյայտնի ասպացոյցը՝ կը գտնենք մոյմ իսկ Ագաթանգեղոսեան գրոց 159 իշում. զի երբ դահմայեալ զՀռիփսիմէ մահատակելէմ վերջ կու գայ Գայիամէի սպամմամ վճիռն ևս ընդունելու 'ի թագաւորէն, մա տակաւին իւր ամոյշ ցմորաց¹ մէջ ընկողմած՝ դեռ կենդանի կը կարծէ զՀռիփսիմէ, և կը յանձնէ դահմայեալսն որ հրապուրելով զմա՝ բերէ առ ինքն: Եւ յէջ 160 կ'ըստի, թէ « Իբրև լուս թէ մեռաւ Հռիփսիմէ, որոշեալ որոշեալինն ընկալաւ . ինչու նախք 'ի վերայ գեղեցի, և լայր և 'ի սուգ մարտեր »: Այս կողմն էջերս բուն հարազատ աղբիւր լինելու ամենայն արժանատւութիւնն ունին, վասն զի հակառակ այլոց կ'աւանդեն մեզ Տրդատայ հիւանդութեան բուն պատճառն և որպիսութիւնը:

Թագաւորին այս մորանշամ հիւանդութիւնն՝ եթէ բոլորովին բմա կամ պատճառաց արգասիք ևս համարինք, սակայն մորա բժշկութիւնն 'ի ձեռն Գրիգորի առն Աստուծոյ, միշտ պէտք է ըսել, թէ գերբնական սքանչելագործութեամբ եղաւ: Ուստի չենք սխալիլք եթէ եզրակացնենք, թէ մէկ կողմէն Գրիգորի ողջ մնալն 'ի վիրապի 15 կամ 13 ամ. իսկ միւս կողմէն այլ ելանելն 'ի դուրս և բժշկելն ըզթագաւորն 'ի հիւանդութեանէ ամախ՝ եղած են այն աստիճան կարողութեամբ զի զրոյնքն և Թէոփանէս՝ Հայոց թագաւորին և Հայաստանեայց դարձն 'ի քրիստոմէութիւն, առանց խղճակերպութեան վերայ յիշատակութիւն մի ընելու:

1. Ագաթանգ. յէջ 159, « Իսկ մա (Տրդատ) առ սէրն յեղիալ, զեղեցալ, յիմարեալ, ասփշեալ, և ոչ յիշեալ վասն սրբոյմ Հռիփսիմեայ՝ համարեցաւ, թէ կենդանի իցէ: Մեծ աւագութեան բարձի և պաշտուոյ պարգևս խոստամայր, եթէ յամկարծ ոք հմարիցէ պատրել հաճել զմիտս աղջը կամն գալ առ մա »:

Գլխովին կասկածելի է յէջ 165 եղած հատուածն, յորում կենսա գիրը կ'ըսէ, թէ « Նա և ասեմայմ մարդիկ որ 'ի քաղաքին (Վաղարշապատու) էին՝ ուրմ օրիմակ դիւարախք՝ մոլեգմէիմ, և ամհմարին կործամուամ 'ի վերայ աշխարհին հասամէր »: Որովհետև մախ, փորձ իրացն և պատմութեամ ըմթացքը՝ սորա հակառակը կը ցուցնեն, թէ Տրդատայ հիւամուրութիւնմ ոչ միայն կործամուամ չբերաւ աշխարհիս Հայոց, այլ և ոչ իսկ քաղաքականապէս մեծ ինչ ազդեցութիւն կրեց այնու Հայաստան 'ի Պարսից: Բ. ուղղակի կը հակառակի 166 իջի հատուածին. որովհետև ամդ կ'աւամուրի, թէ թագաւորին ըտրր ըմտամիքը, սպասարարներն և մախարարք դիւարախած էին. իսկ աստ, ընդհակառակն, Խոսրովիդուխտ իբրև միջնորդ և պատգամաբեր կը ղրկուի առ թագաւորն ¹ և թագաւորին հրամանը կը տամի առ մախարարս. և մորա լսելով մորա տեսեամ պատմութիւնը՝ կը ծիծաղին և կ'ըսեն. « Գո՛ւ ևս մոլեգմեցար »: Աստի յայտմի կը տեսնուի, թէ ոչ Խոսրովիդուխտ և ոչ այլ մախարարները դիւարախք էին: Եւ յէջ 167 կը տեսնենք, երբ Օտայ ² մախարարը կը ղրկուի 'ի Վաղարշապատէ յԱրտաշատ՝ զԳրիգոր համելու համար, ժողովուրդը

1. Ազաթամգեղայ Ա և Դ օրինակներում մէջ գրուած է, թէ. « Մեծաւ երկիրուի և զգուշութեամբ ասաց զբամս թագաւորին »: Եթէ ստուգուի Խոսրովիդուխտ զիրս տեսեամ՝ թագաւորին ըսաւ, մշամ է, թէ թագաւորն ևս 'ի խոզ փոխուած չէր: Իսկ եթէ զբամս թագաւորին պատուէր ինչ համարիմք 'ի կողմանէ թագաւորին, այն ժամանակ դեռ անելի կը հաստատուի խոր վիճակին և Գրիգորի բամդարգելութեամ մասին մախ ըմթացաբար յայտնած՝ իմ կարծիքն. այսինքն թէ, քաղաքակաւ հեռատեսութեամբ Արտաշատու դղեակը դրուեցաւ Գրիգոր և յուսով արծակամ, և ոչ թէ սպամուելու համար:

2. Ոչ ինչ ընդհատ քամ զԽոսրովիդուխտյոմ՝ խորհրդաւոր է և այս մախ արարիս ամուսն և պատմութիւնը: Փլորեմտեամ յոյմ օրինակն *Αδραστας* կը գրէ: Զ. օրինակ՝ Աւատ կը գրէ. իսկ երուսաղիմեամ ծեռագիրն Աւտա: Ամեմահին ծեռագրի մի պատառիկի մէջ, որ կը գտնուի 'ի ծեռագրատամ վամացս և կարծի լիմել յԹ. դարու, ումի Ոտա: Մ. Խորեմացին ևս Բ. գլ. 1. Զ. Մամատրիկոյ ամուսնակոչութեամ մասին մէջ բերած ժողովորդական փիպաց մէջ՝ կը յիշէ, թէ մորա մայրն (և քոյր Աբգարու) կը կոչուէր Ողէ կամ Աւղէ: Աստի ես տեսնուի ուրեմն, թէ Հայոց մեծ մախ արարին և թէ Մամատրիկոյ մօր ամուսնը զուտ ասորական են և մի և մոյմ հնչումն ունիմ՝ սեռիւ միայն տարբերեալ յիրերաց:

Առ Զեմորայ և Փաստոսի չիք և ոչ փոքրիկ յիշատակութիւն ինչ Օտայի և Խոսրովիդուխտոյ: Ազաթամգեղայ պարիզեամ օրինակմ՝ աւագ տիտղոսը կու տայ մախարարիս: Մակայմ ոչ մորա ծնողեամ ազգամուսն, ոչ տեղին, ոչ մահն և ոչ կենաց միւս պարագաները կը յայտնէ մեզ, բաց 'ի այն մեծ ռոտաքելութեան՝ առ 'ի համել 'ի ղրկելէմ Արտաշատու զաւաքեալն Հայոց զԳրիգոր: Իսկ Բ. օրինակմ՝ մամատուսն մախարար կ'ամուսնէ զմա, ամսացող Խոսրովիդուխտոյ և իշխամ ամրոցին Ամոյ: Խորեմացին, Բ. գլ. ԶԳ. կ'աւամղէ մոյմպէս, թէ « Էր մա 'ի տոհմէմ Ամատու մեաց », բայց յաւելուածովս՝ « Փեսայ ազգին Սլկուսեաց, և սմուցող ի ուրովիդուխտոյ »: Իսկ Բ. Գրոց ԾԷ. գլխում՝ խօսելով Ամատու մեաց ծագմամ մասին՝ կ'ըսէ. « Եմ սոքա բնութեամբ (ազգաւ) Հրեայ 'ի Մամուկայ ու մեմնէ, որոյ որդի իւր մեծահասակ և ուժեղ Մամուս կոչեցեալ ... Տարեալք են սոքա յԱրշակայ Ա. 'ի Պարթևաց թագաւորեցիլոյմ՝ յԱրեաց աշխարհին, 'ի պատիւ հասեալք 'ի կողմանս Ամատամի (Համատամ) ...

զարմացմամբ մորա զալստեան պատճառը կը հարցնէ, և թագաւորին և Վարդաշապատացոց կարծեցեալ պատուհասին վերայ բնա տեղեկութիւն չունի. « Իսկ մա պատմեաց (ոչ միայն) զիրս տեղեկանմ (այլ) և զգործն զիւր եղև »: Արդ կարելի՞ բան է կարծել, թէ Վարդաշապատէն 8 ժամաւ քացակայ Արտաշատոցիք, որոց յարաբերութիւնն համապագօրեայ էր այն արքունի ճամապարհաւ, զոր ցուցանէ մեզ Ագաթանգեղոյ զիրքն յէջ 151, յետ անցանելոյ աւտուրց իմունց՝ տակաւին տեղեկութիւն չունենային իրենց աշխարհամաս ջաղաքին և առհասարակ քաղաքացեաց անսովոր կացութեան մասին, եթէ իրօք այնպիսի ահասոր և պատմութեան մէջ երբէք չլսուած դէպք մի կատարուած լինէր: Կարելի՞ բան է եմ թաղարել յըմթացս 60 ատուրց թագաւորութիւն մի առանց թագաւորի և վարչութիւն մի ընդ դիւարայի և խելագար վարչօք, և չիմել ոտնակոխ Գարսից, Վրաց և Սամէսամայ՝ Ադուանից թագաւորին, որոց Տրդատայ հետ ունեցած անհաշտ թշնամութիւնը՝ յառաջ և յետ զարծին ՚ի քրիստոնէութիւն Չեմորէն և Ագաթանգեղոսէն քաջ կը զիտցուին: Արդ եթէ Խոսրովու մահուամբը միայն կը յաշողի,

բայց թէ յիմջ պատճառաց զալուստ մորա այսր՝ ոչ զհիտեմ. այլ պատուին յԱրտաշեսէ գեղիք և դաստակերտօք, և ամուսնին Ամատունիք, որպէս թէ եկք: Եւ կէսք ՚ի Գարսից՝ Մամուռեանս զմոսա կոչեմ՝ յամուռ մախուոյն »:

Արդ, Մովսիսի արամոգութեան առաջին մասը՝ կամ ուղղակի մորա հընարագիտութեանն ընծայելու է, որ զՄահակ Բագրատունի ցնծացնելու համար՝ ՚ի չրէից առաջ եկած կը համարի գլխատունիս, և զմախմիս մոցա Մամուռէ և Մամսոն կոչելով, որ ոչ այլ ինչ եմ՝ բայց եթէ Մ. Կրոց Մամուռն և մորա հայրը Մամուլէ. և կամ Ամատունեաց ցեղին ուժեղ և մեծահասակ լինելուն պատճառաւ, ինչպէս ինքն իսկ կը վկայէ մի և մոյն զպէոյն մէջ: Յիրաւի, Գարսից արամոգութիւնն իսկ, զոր մէջ բերած է վերոյիշեալ տեղում, Մամուռեանս կ'ամուսնէ զԱմատունիս, ոչ եթէ մոցա կանխուոյն ամուսմբ, այլ մոցա ուժեղութեան համար: Այսպէս կամ այն պէս՝ Մովսիսի այս տեղին՝ պարսիկ յաղբերաց առմուած է և յարգելի:

Ուստի ամուռն Ամատունի եթէ պարսիկ **آدمآ** (եկաւորի) բայէն ծագած համարինք, և եթէ Համատան, որ և Նկքատան, քաղաքէն, յայտ է թէ մոցա մախիին բնակութեան տեղին էր Իրաք Անճմի կոչուած աշխարհում, և հաւամօրէն ՚ի ժամամակս Տիգրանայ համոզեպցաւ մոցա մուտքն ՚ի Հայս: Մակայն գալով ղոտայ ամուռն, որ առաջին անգամ և իբրև առաջին մախարար յիշուած է առ Ագաթանգեղ, ես մախամեծար կը համարինմ չ. Դ. Ալիշանի կարծեաց համածայմ՝ մոյն համարել ղոտայ կամ Ոթայեցիք կոչուած երկրին հետ, որ էր ՚ի սահմանակցութեան Հայոց և Ասորոց, ուր էր Նփրկերտ քաղաքն և վիճակ Մար-Ութայի, այսինքն է, Տեսան կամ Եպիսկոպոսին՝ Ութայ:

Չերջին երկու արամոգութիւնքս կարծես թէ մէկ հասարակաց յաղբերէ կը յառաջագային. սակայն ինծ թուի, թէ Բ. օրինակի արամոգածմ ՚ի Մովսիսէ առմուած է. որովհետև առ Մովսիսի դեռ ուրիշ տեղեկութիւն մեր ևս կան, զորս չէ մարթ Ագաթ. Բ. օրինակէն փոխ առմուած համարել: Արդ ինչպէս Արտաւազդ Մամուռակունի՞ էր դայեակ արքայորդուն Տրդատայ. այսպէս ևս Օտայ Ամատունի՞ էր դայեակ արքայադստերն Խոսրովիդիտոյ: Չայս կ'ակնարկեմ և յետագայ բանքս կենսագրին Տրդատայ, յէջ 42 « Առեան դայեակացն փախուցեալ ՚ի դուռն կայսեր »: Մակայն դիտելու կէտ մի է այս. զի այդ իջում՝ մի միայն « փոքրիկ մանկիկ

ըստ կարծեաց կենսագրիմ, Արտաշիր արծակ համարծակ գալ տի-
րել Հայաստամի. որչափ առանել ուրեմն այսպիսի հասարակաց ա-
ղետից, շիրթութեամ և դառմ ճգնաժամի մէջ, կարէր և պէտք էր
որ տիրէր. Շապուհ ամսէր Հայաստանի, եթէ ստուգիւ այնպիսի
դէպք մի համղիպած լինէր անդ: Սակայն այսպիսի մի տիրապե-
տութիւն և քաղաքային յեղափոխութիւն ոչ կենսագիրս աւանդած
է երբէք և ոչ այլ ոք ՚ի տոհմային կամ օտարազգի մատենագրաց,
այս սիջոցիս. ուստի իրաւամբ պէտք է ասել, թէ և ոչ իսկ այնպիսի
համաշխարհական պատուհաս մի կատարուած է բնաւ ՚ի Հայս:
Մամաւանդ կը տեսնենք, Նաեբիոսի պէս հաւատարիմ պատմա-
գրի վկայութեամ համածայն, զի յետ կրօնական մեծի յեղափոխու-
թեամ այնպէս զօրաւոր էին և միածոյ Հայք, մինչև Մաքսիմովոսի
բռնակալութեամ դէմ ևս կը խիզախեն, և մինչև ցայմժամ հոռվ-
մէական ամպարտեի լեզեղներն ևս պարտելով հպատակութեամ
լուծմ ևս իսպառ ՚ի բաց կը թօթափեն: Ուրեմն 165 իջի աւանդա-
ծըն ևս՝ Տրդատայ խոզակերպութեամ եկամուտ հատուածոց մէջ
դասելի է:

գերծեալ, ասի, յորդուց խոսրովու թագաւորիմ Հայոց». իսկ յէջ 165 յամ
կարծակի խոսրովիդուխտ ևս կուգայ ՚ի համղէս ընդ Օտայի. բայց թէ
ուստի և ի՞նչպէս. ՚ի գուր է գտանել անդ զվասն էրմ: Արդ այս երևոյթս,
ինչպէս այլուր իսկ ծամուցի, ոչ միայն մշամ է, թէ այդ կրկին տեղիքը
կրկին աղբեր է առնուած են. այլ տարակուսելու պատճառ ևս կուտայ
խոսրովիդեխտոյ և Օտայի անծնաւորութեամ մասին: Եւ այսու միայն կա-
րեն արդարամալ թէ Մովսէս և թէ Տրդատայ կենսագրիմ, եթէ մտա-
ծենք, որ արական ճեսի վերայ միայն կը խօսին մոքա՝ վերոյիշեալ տե-
ղերում մէջ:

Մովսէս, որ յայլում վայրի, իբր թէ մամրախուզիւ քմած և գտած
կը համարի, առ այլ մատենագիրս, Տրդատայ թագաւորութեամ տարե-
թիւն, խոսրովիդեխտոյ և Օտայի մասին ևս՝ մոր տեղեկութիւններ կ'ա-
ւանդէ. յետ ասելոյ վասն Օտայի, թէ խոսրովիդեխտոյ հետ՝ արքունի
գամծմ ևս պահեց՝ համղերծ Ամոյ ամրոցիւ, անդէմ մորա անծնական
բարեմասնութիւնները կը նկարագրէ այսպէս. «էր Օտայ արդաւր, համ-
բերող և ժուժկալ և իմաստուն, զի թէպէտ և ոչ ծամեաւ զճմարտու-
թիւն յաղագս Աստուծոյ, սակայն զստութիւն կուցմ գիտաց». և թէ
Տրդատ ՚ի վերադառնալմ իւրում ՚ի Հայս՝ հազարապետութեամ պաշ-
տօն և պատիւն ևս մնա յամծմեց: Բայց ես կը համարիմ, թէ Մովսէս Ա.
զաթամգեղոսէմ դուրս ուրիշ աղբիւր ունեցած չէ Օտայի և խոսրովի-
դեխտոյ մասին. այլ մասամբ զաթամգեղեան գրոց այլ և այլ պարագա-
մներէմ, և մասամբ ալ Հայոց կենդանի յաւանդութեանց մակաբերած է
վերոյիշեալ այդ տեղեկութիւնքը: Ուստի ՚ի բաց անեալ այս կէտս, թէ
Օտայ էր փեսայ Մովսէսեանց և թէ մոցա մահապետիմ Մովսէսի ծնողով
սպանուեցաւ, այլովքմ համղերծ, Օտայ մոյն տիպմ ունի առ Մովսէսի
(ինչպէս և առ Ազաթամգեղ) ինչ տիպ որ ունի խոսրովիդեխտ: Զի Մովսէս
ինքնին նկատած է զմոսս իբրև զոյգ առաքիմութեամ տիպարմներ, մի և
մոյն կերպով դրուատելով զմոսս ՚ի միում դրուագի: Արդ Մովսէսի վե-
րոյիշեալ աւանդութիւնմ, այսինքմ թէ, Օտայ էր փեսայ Մովսէսեանց, եթէ
առանձնական կարծիք ևեթ է և ոչ ստոյգ աւանդութիւն, ես կ'ախորժէի
զառաքիմին Օտայ միայն ճամաչել արժամաւոր փեսայ առաքիմուհւոյն
խոսրովիդեխտոյ, որ քրիստոնէական առաքիմութեամբ՝ ամարատ պա-
հեց զմա՝ յըմթացս այնքան ամաց և զարգացոյց:

ԳԼՈՒԽ Ը.

Գրէթորէ Տեօնէն և Նորա աշխարհը. — Ելանաթ անհարազտ
տալիսնոյ իմբաբարէ իբրոյս. — Գառաշտիք և Գրէթորէ Պառախա
նիան կարծեցեալ հակասութիանոյ. — Տեսլան բնաբարոյն և իւր
հարցական հանգոյցը. — Մբաբիք շինութեան Եղաթիսին և Գրէ
թոր նարարարապետ նորին. — Նմանութեան Տեսլան Գրէթորէ և
սրբաշն բազմայ. — Ո՞՞ յոանական նարարարապետութեան և Նո
րա բնաբարոյն ՚ի Վրայ կախաշինին էջիանին. — Յունաբէն
հին արշտանքութիանն և Աբախա նարարարաբարձ. — Եղաթիսյա
նիան:

Յէջ 552, ծԲ. գլխահամարէմ՝ մինչև ծԳ. գլխահամարմ՝ յէջ 568,
կը պարունակուի Մ. Գրիգորի Տեօնէն և Որա մեկնութիւնը: Ջքմաղ
իմ է, արդարև, և յոյժ գեղեցիկ ազատամեծեղոսեան զրոց այս դը
րուագս, յորում վառվառում և կենդանի երևակայութեան հետ ՚ի միա
սիմ՝ կ'արտափայլին հաւասարապէս Որա հեղինակի գաղափարա
կանին և լեզուին վանմութիւնքը՝ բոլոր իրենց զօրութեամբ. այնպէս
որ, դուք կը կարծէք, թէ մա Բուզեայ որդւսյմ հրեղէն անուոց վե
րայ յեցած կը հողովի, և այնքան բարձրաթուիչ՝ ՚ի վեր կը մակըրէ,
որ կը թուի շատերում թևակոխել ստուգիւ ՚ի սահմանս մարգարէա
հրաշ գուշակութեանց ապագայից, և մարգարէիմ մնամատիպ տե
սարաններ կը պարզէ դիմացնիս: Սակայմ թողունք զգեղեցկութիւնն
և որոնենք զճշմարտութիւնը:

Արդ, յամում Գրիգորի մեզի հասած այս տեսիլքս՝ գոյր հաւանո
րէմ ե. դարու առաջին քարտրդէ ամտի և այսր. և սորա ապացոյց
կարեն լինել, ըստ իս, Ա՝ Գրութեան անհամեմատ լեզուն և ոճը: Բ.
Ս. Սահակ Պարթև առ մախարարս և ժողովուրդն Հայաստանի ուղ
ղեալ սրտառուչ բանախօսութեանը մէջ երկիցս կը յիշէ՝¹ գայմ, յա
նում մախմոյմ իւրոյ և սուրբ մահատակին Գրիգորի: Գ. Սահակայ
ըմծայուած Տեսլանը² մէջ, որ կը գտնուի առ Ղազարայ՝ յէջ 80,

1. Ղ. Փարպեցի, Պատմ. Հայոց, ԺԶ. էջ 78 և 87:

2. Այս Տեսլանս հարազատութեանը վերայ արդէմ ՚ի վաղուց տա
րակոյսներ հանցին բամասէրք ազգիս: Իսկ Գ. Մ. Էմիմ՝ ՚ի ուսերէմ
թարգմանութեան անդ վարդանայ բարձրբերդեցույ, և Գր. Խալաթեան՝
յամին 1883 Ղազարայ Փարպեցույ գործոց քննութեան մէջ, ջանացիմ
ապացուցանել և ապացուցած իսկ կը համարին Որա անհարազատու
թիւնն, ըստ որում գտանի արդ ՚ի Պատմութեան Ղազարայ: Վերջինս՝ իւր
այդ երկասիրութեան մէջ, 120-130 յէջս, ընդարձակ ապացոյցներ բե
րելէմ յետոյ՝ կ'իզրակացմէ, թէ Ժ. դարում գրուած է այն ամբողջա
պէս և մերմոծուած է ՚ի գիրս Ղազարայ: Քմասէր հեղինակիս զօրեղ
պատմառնեմ՝ հետևեալներն են. «Միտ եղեալ ՚ի միոջէ կողմանէ լուե
թեանք անցանելոյմ պատմագրաց մերոց զգրաւոր Տեսլանէ Մ. Սահակայ
ցծ. դար, և ՚ի միւսմէ՝ յիշատակելոյմ գայսմանէ ՚ի Ժ. դարէ. սկսեալ,

81, 85 և 86, ամբողջական հատուածներ՝ Գրիգորի տեսլեմէն փոխ անուած են, որոնք կը համապատասխանեն Ազաթանգեղայ 552, 553, 555, 558, 554 և 557 էջերում: Դ. ՚ի Ներքոյնն հասնէ և Տովի. Ոսկեբերանի ՚ի Ս. Գրիգոր Լուսաւորիչ, կը յիշուի այս տեսիլքս այսպէս. « Գրիգոր որ նախապետութեամ շնորհի արժամացեալ մարգարէական հոգւոյն ակաթի քաշակի զհանդէրնեսուն »:

Արդ, Տեսլեանս գոյութիւնն և հնութիւնն անժխտելի լինելով, այժմ այս կրկին հարցերս մեզ ընդ առաջ կ'եկնեն. Ա. Էր այն ամկ կեանս գրին Գրիգորի. Թէ, ընդհակառակն, եկամտաւ ինչ յետոյ ուրեմն մեր մտծեալ: Բ. Արդեօք ինչ ձևով որ այսօր մեզի կը մերկայանայ, էր մոյմպէս և ՚ի չորրորդում դարու իրապէս կատարուած և զրուած մի բան:

Այս հարցերուս ուրբակի պատասխանելէն աւելի՛ կարևոր կը հա

մարթ է եմթարդել, թէ զրարոմ այն Տեսիլ թերևս ՚ի Ժ. իցէ յօրինեալ դարու, և ՚ի կարգ պատմութեամ Ղազարայ յարմարեալ »:

Իմ գործս չմերեր ընդարձակաբար քննել աստ այս Տեսիլքս. սակայն իմ կարծիքով, այսպիսի փաստեր բաւական չեն հերքել մորա հաւրագատութիւնը: Ի թղթին Ներսիսի Լամբրոմացւոյ առ Ամտիոքաբանկ Տգմարոմ Յուսիկ յայտնած տարակոյսն ևս՝ զօրեղ ապացոյց կը համարի խալաթիանը: Սակայն Լամբրոմացիէն աւելի հմազոյն և ծանրակշիռ հեղինակութիւն մի, այսինքն է, Ներս. Շնորհալի, Ղևոնդեանց վերայ յՋրինած շարակամին մէջ կը հաստատէ, ընդհակառակն, Տեսլեանս հաւրագատութիւնն յասելն. « Գարթեակամ տեսաժողովն յառաջագոյն ազդեցութեամբ գիւսատոյ որդիս Ս. Գրիգորի պսակազարդ տեսեալ »:

Մ. Խորենացւոյ, Գ. զլ. ԿԶ. մէկ կողմէն, միւս կողմէն այլ է կամ Ը. դարում յունարէն գրուած Հայոց պատմութեամն (Migne, i' astrologie, T. CXXXVII, p. 900-901), ինչպէս նաև Թովմաս Արծրունու և Կոստ. Պերփեռոսեանի վկայութիւնքը, զորս խալաթեանն՝ իր կարծեաց մպաստուոր կը համարի, ըստ իս, բոլորովին հակառակը կը հաստատեն. այնու իսկ՝ երկուք ՚ի մոցամէ դարերով յառաջ էին քան զկարծեցեալ ժամակ մակ գրութեան և որոշակի կը յիշատակեն զայն: Մովսէս դեռ ուրիշ շատ բաներ այլ կը յիշէ ՚ի զրոց Ազաթանգեղայ և Փաւստոսի, առանց ամբողջական հատուածեր մէջ բերելու. իցէ՞ արդ՝ բամաւոր հետևեցիկ աստի, թէ ուրեմն այն ժամանակ այդ հեղինակաց զրարոր երկասիրութիւնքը չկային. ոչ բնաւ:

Դարծեալ, իրաւամբ մարթ էր ամվաւեր համարել այդ տեսիլն, եթէ հանգոյն տեսլեան Մեծիմ Ներսիսի, որ առ Մեսրովպայ Երիցու, Հարաւայնոց արշաւանաց և այլն դէպքեր ակնարկէր. սակայն աստ բոլոր միւթը՝ Պարսից և Հայաստանեայց Ե դարու կացութեան վերայ կը դադմայ: Արդ, շատ հաւանական է, թէ յետագայ դարուց մէջ յաւելուածներ եղած ըլլան յայն, և մերմտնուած ՚ի Պատմութեամ Ղազարայ, բայց ոչ բոլորովին մուր յօրինեալ. զի շարադրութիւնն ինքնին գլխովին՝ ամմանմ է Ժ. դարու շարադրութեան, և Ե. դարը միայն կարէր այնպիսի բարձր լեզու մի գործածել:

Լ. Մովս. Հայկ. Դ. հտ. էջ 13: Այս ճառս, Լամբրոմացւոյ վկայութեամ համածայն, ՚ի յոյն բնագրէ թարգմանուեցաւ, ուստի՛ պէտք չէ շփոթել Ոսկեբերանի անուամբ եղած միւս համառոտ ճառին հետ, որում հարաւատութեամը վերայ իրաւամբ տարակուսեցան Մոմֆոկոմ և Տիլլըմոմ: Մորս հնութիւնն ամտարակուսելի է, և ես այլուր առիթ պիտի ունենամ մորս մասին դարծեալ խօսել. զի եթէ Ոսկեբերանին ևս չլինի, հարկ է որ ըլլայ մոյն ժամանակ ապրող հայազգի եպիսկոպոսին Դիոնիսորոսի:

մարիմ մասն քան զամենայն քմմել այլ տեսեան մպատակն և մորս հետ սերտիւ վերաբերութիւն ունեցող իրաց վիճակն: Իսկ որովհետև Գրիգորի այդ տեսեան մպատակն էր վկայարանաց և Գաթողիկէի շինութիւնն, և ցուցանել մոցա բարձրագոյն մշամակութիւնն. ուրեմն տեսնենք թէ իմէ կ'աւանդի յայսմ մոցա մասիմ, և թէ կը համաձայնմի՞ այլ՝ Հռիփսիմեանց և Գայիանեանց վկայարանի աւանդածիմ հետ: Արդ, յէջն 156 և 575, որոց առաջիմ՝ ամկ է Հռիփսիմեանց վկայարանութեանն և վերջիմը՝ Տրդատայ պատմութեան, երիցս կը յիշուիմ Հռիփսիմէ 32 ըմկերօք, և Գայիանէ՝ 2 ըմկերօք: Տեսեան մէջ, ըմդակառակն, յէջ 555 և 570, երկիցս կը յիշուիմ մոյմ սրբուհիք, բայց առաջիմը՝ 33 ըմկերօք, և վերջիմը՝ դարձեալ 2 ըմկերօք: Վերջիմ տեղեացս մէջ՝ դարձեալ միայն Հռիփսիմեանք և Գայիանեանք որոշակի կը յիշուիմ. իսկ վկայարանաց թիւն երեք է, ընդ հակառակն. վասն զի կ'ըսուի պայպէս. « Մի՛ ՚ի տեղւոյն ուր վկայեցաւ սուրբն Գայիանէ երկու ըմկերօք. և մի՛ ՚ի տեղւոյն ուր վկայեցաւ սուրբն Հռիփսիմէ երեսուն և երեք ըմկերօք. և մի՛ ՚ի տեղւոյն հոճանիմ, ուր վաճառեալսն էիմ »:

Գոտշարդ ամհարազատ եմթարդելով զՏեսիմ Գրիգորի, այս տեղիքս ևս զահաւիժաբար դիտեց, ուստի իրարու բուրրովիմ հակասակն վարկանելով զամոնք՝ շամաց այմու, իւր գործիմ 22-23 էջերում, Գրիգորի տեսեան մի գոյութեան հիսն ՚ի վեր տապալեց: Մակայմ ես այդ տեղեաց մէջ իրօք հակասութիւն չեմ գտներ, դիտելով քաջ մոցա յարակից պարագաներն: Եւ յերաւի, յէջ 156 եւրեսուն և երկու ըմկերմեր յիշուելուն. բուն պատճառն այս է, զի միատրիմ մոցա թուէմ դուրս թողուած է, որովհետև հիւանդ գոյով մնաց ՚ի հոճանի ամդ, միմշեռն այլք մահատակեցան ըմդ Հռիփսիմեայ. և թէ միատրիմ իմչպէս մահատակութիւնն՝ այսպէս և յիշատակութիւնն ապա ուրեմն յէջ 157 կը լինի:

Նոյնպէս և յէջն 575 չիք բմաւ յիշատակութիւն միատրիմ առանձինն: Բ. 155 և 170 էջերում՝ յորս միատրիմ մահատակութեանէն վերջ կատարուած իրիմ պատմութիւնը կը լինի, մա իմքն և ըմդ Հռիփսիմեանս ՚ի թիւ արկեալ է. որով ՚ի հարկէ Հռիփսիմէի ըմկերաց թիւը փոխանակ 32ի՝ 33 եղած է: Արդարև, այս բանս անտի իսկ յայտ է, զի այդ տեղեաց մէջ, քսմի որ խօսքը կուսամաց մահատակութեան և թուարկութեանը վերայ է, Հռիփսիմեանք և Գայիանեանք միայն յամուանէ կը յիշուիմ. իսկ երբ վկայարանաց շինութեան վերայ կը խօսուի, ամդ միատրիմ ևս առանձինն կը յիշուի՝ ՚ի տեղւոյն հոճանիմ, լուելով յիշել զմիատրիմ. վասն զի Հռիփսիմեանց հետ ՚ի միասիմ դասեց զմա: Ուրեմն այս պարագաներս ՚ի մկատի առնելով, 155 և 170 էջերէն աւելի՝ մոցա մախըմթաց և ամմիշապէս յաշորդ էջերու հիմզ՝ պարբերութիւնքը կ'ստործիմ ես

1. Յիրաւի, յէջ 573-577 թն. գլխահամարով հատուածիմ Ա. պարբերութեանն՝ որ « զվաստակսն մատուցամէր » բառերով կը լմնայ, եկաւ մուտ լինելու յայտնի ապացոյց կարելի է համարիլ այն մեծ հակասու.

անհարազատ մամարել, յորս թագաւորն Տրդատ, 580 իջի. հատուա ծիմ համեմատ, տակաւին խոզացեալ՝ բայց Գրիգորէմ հրամանն կ'առնու և եօթնօրեայ համապարհորդութեամբ Մասեաց բարձրութեանէն ուր արշաւանել իրարու վերայ դրած իւր թիկանցը վերայ՝ հայաբար առած կը բերէ, որոնցմէ իւրաքանչիւրը բարձրութեան հարցին ևս եթէ զային ՚ի մի՛ չէին կարող շարժել ՚ի տեղտղէն: Են ոմանք՝ որք ուզելով պաշտպանել այսպիսի անհմարին եղելութիւն մի՛ բռնագրօ սիկ մեկնութեամբ առամծինն բերուած կը համարին պիւ ութ ար ծանմներն և ոչ եթէ ՚ի միասին: Սակայն կենսագրիս բացատրութեան վերջի խօսքերով այդ մեկնութիւնն ևս անկարելի կը մնայ: Ռիտտեր՝ խօսելով Սև և Հինգու լեռնաբնակչաց վերայ, կ'աւանդէ, թէ այն պիսի ուժեղ և զօրաւոր կազմութիւն ունին, և այնպիսի ծանր բեռնն կը կրեն իրենց ուսոցը վերայ, զորս մենք չենք կարող երևակայել: Այս բանիս նս կը հաւատամ, և կ'ընդունիմ, թէ թագաւորն հայոց Տրդատ իսկ՝ յաղթամուսմ ոք էր. բայց չեմ կրնար հաւատալ, թէ մարդկային ֆիզիկական զօրութեանէ դուրս գերարուն զօրութեան մ'աւ ունէր: Այս բանս հայ ժողովրդեան վիպասանութիւնը միայն կարէր ընծայել մնա և ոչ այլ ոք. և թէ այս վէպս ուղղակի հայկայ վերայ յօրինուած էր ՚ի հնունն (ինչպէս ուրիշ ազգերն այլ ժամանակաւ. Տրդատայ կենսագիրն, կամ խմբագրողն Ազաթանգեղայ գրոց, պատշաճեցուց յամծին Տրդատայ: Եւ յիրավի, այս բանս մորս այս բացատրութեանէն իսկ քաջ կը տեսնուի. « Հայաբար, զոր արշաւանել ՚ի վերայ իւրոց թիկանց զայն դմէր »: Ութ արծաններն՝ ուղղակի հայկայ աւանդութեան մի կը վերաբերին. բայց յայտնի չէ,

թիւնը, որ կայ ընդ այս և ընդ էջն 570 ճր. գլխահամարով սկսող հատուածն: Արդ յայտմ, այսինքն է, յէջ 570, Գրիգորի պատմագիրն արդէն պատմած էր զկատարումն շինութեան ոչ միայն վկայարանաց, այլ և արկեղաց սրբոցն. և յէջս 571-572 թագաւորն և մեծամեծք մեծաբարեպաշտութեամբ ամուշահոտ խումկեր և ազնիւ մարտոս իսկ պատմաց կը բերեն և կը կուտեն դէզադէզ. և հուսկ յէջ 573 կը հրաւիրէ զմոսս փոխել ՚ի համգիստ գտուրք մշխարս վկայիցն: Իսկ յէջ 574 ճ. գըլ. խահամարին, ընդհակառակն, դեռ մոր կու գայ ՚ի համդէս թագաւորն Տրդատ, և հրաման կը խնդրէ ՚ի Գրիգորէմ, որ թոյլ տայ իրեն, Աշխէմ տնկնոջ և խոսրովիւրքիտոյ, որ իրենց ձեռօք փորեն այդարկողներն. և յէջ 575 արքայազունքս՝ բամ և փայտատ ձեռքերնին առած՝ զղիւրս հաճ զըստեան կը փորեն. և հուսկ ապա յէջ 576 Տրդատ՝ Մասեաց լեռը կ'երթալ, վկայարանաց սեամքը շինելու համար՝ յաղթ արծաններ բերելու: Այս հատուածոցս կրկին յաղբերաց յառաջագայելուն մի այլ մշան է և հետեւեալս. այսինքն է, վկայարանաց առաջին շինութիւնը պատմող հատուածին մէջ՝ յիշատակութիւն շինողացն արկեղաց. իսկ վերջոյնն մէջ՝ մասնաւոր կերպով կը յիշուին Տրդատ, Աշխէմ և խոսրովիւրքիտո: Այս հատուածներս իսկ՝ հայ ժողովրդեան կենդանի աւանդութիւններն են, ըստ իս, զորս Ե. դարուն խմբագիրը ձեռն գրելով՝ մերմուծած է անդ, ժամանակին մեծամեծաց կրօնական և ստումացեալ զգազմունքը վերստին արծարծելու համար, օրինակաւ փառապանծ մախնեաց մոցա:

1. Erkunde, I, 343. III, 581. IV, 143. V, 1031.

թէ իմջ կը Ոչամակեմ. ես կ'ախորժիմ կամ Հայաստանի ութ լեռներն հասկամալ, զորս Հայկ, այսինքն է, Հայաստանի ամծմաւորութիւնը կը կրէր իւր թիկանցը վերայ. կամ լաւ ևս այն ութ աշխարհներն որոց իշխանն և պետ եղած կ'աւամդուի Հայկ, մախապատ մականն ժամանակի մէջ:

Բ. Եւջ 577 հատուածը, զոր Գուտշմիդ եղծիչ համարելով իւր եմթաղբուրթեամբ՝ ՚ի լուրթիւմ դատապարտած է, մամաւանդ թէ ստիպած է այլուր ճարտարութեամբ ամհարազատ համարել. սյս հատուածս կ'ընես, որ Տեսլեամ. հետ անուղղակի վերաբերութիւն ունի և մի քանի էջ վերջը կը յաջորդէ, դարծեալ Գայիւանէի ընկերաց թիւն 2ի և Հոխիսիմէիմը՝ 32ի կը վերածէ. որովհետև կը յիշէ յաւանէ և զմիտորն աւանծին, ըսելով. «Որ ՚ի հնծանիմ սպամին» է: Գ. Եւջ 163 կ'ըսուի, թէ սրբոց տիկնամց Գայիւանէի և Հոխիսիմէի հետ մահատակուողաց թիւն է « երեսուն և եօթմ ». և ամմիջապէս կը յարէ. « Կատարեցաւ Հոխիսիմէ՝ դասուն սրբով երեսուն և երեսուն մալ հատակակից ընկերօքն ... և սուրբն Գայիւանէ՝ երկու իւրովք ընկերօք »: Ուրեմն աստ ևս ակնբեր է, և Գուտշմիդն ևս պէտք է ըմդումի, թէ կամ այն է թէ, ստուգիւ միտորն ըմդ Հոխիսիմեանս դատած է, որով լիմին ընկերքն Հոխիսիմեայ 33. և կամ ըսել, թէ 33 Հոխիսիմեանցմէ և 3 Գայիւանեանցմէ դուրս՝ այլ ոք մահատակուած չէ. այսինքն է, 37 էմ պակաս եմթաղբել բոլոր մահատակելոց թիւը: Սակայն այս վերջին եմթաղբուրթիւմ կը հակառակի ոչ միայն զորոց 157 և 577 էջերուն, յորս միաւորի մահատակութիւնն աւանծին իմ կը յիշուի. այլ մոյմ իսկ ազգային հմագոյն աւանդութեանն, որ 37 մահատակներ կը տօնէ, ոչ աւելի և ոչ պակաս. կը հակասէ ևս այն երեք վկայարանաց գոյութեան, զորս հիմնարկեց Ս. Գրիգոր. և միակ պատճառք մոցա շիմութեամբ՝ եղան այն 37 վկայից մահատակութիւնքն, իրարմէ տարբեր երից տեղեաց և պարագայից մէջ: Եւ իրօք այս բանիս կը վկայեն Տեսլեամ, յէջ 556, հետեւեալ խօսքերը. « Խորթիս Կորթիս ՚ի Բոյն արեան », և յէջ 567 « Շիմնաշիր զվկայարանս արթոյն ՚ի տեղիսն ուր յեան իմքեանք »: Բ. Կը հակառակի մահ 163 իջի աւանդութեան, զոր Գուտշմիդ զխովին անկախ կը համարի ՚ի Տեսլեմէ: Ուստի ցայս վայր յիշատակեալ հատուածոց քննութեանէն վերջ՝ կարելի է եզրակացնել, թէ Տեսլեամ դրուագն, ըստ էական

1. Զուամշեր՝ ՚ի Գատմութեան Վրաց (Վեմետիկ, 1884, էջ 8) Վրաց հին աւանդութիւն մի կ'ածէ ՚ի մէջ վասն Հայկայ, ըսելով: « Ըմտրեցան յոր դուց թորգմայ արք (այլուր եղբարք) ութ արիագոյնք և ամուանք. առաջինն՝ Հայկն, երկրորդն՝ Քարթլոս, երրորդն՝ Բարդոս, չորրորդն՝ Մովկան, հինգերորդն՝ Լեկան, վեցերորդն՝ Հերոս, եօթներորդն՝ Կովկաս, ութերորդն՝ Եգրէս: Եւ Հայկն առաւել էր ուժով և քաջութեամբ, որ չեղև մամն մտա ՚ի վերայ երկրի »: Իսկ յէջս 7 և 9, բաժանելով ըստ թուոյ մոցա՝ զաշխարհս Հայոց, Վրաց, Իսանց (Աղուամից), Մովկանաց, Լեկաց, Կովկասեանց, Հերամաց և Եգերաց, ամդէմ կը յաւելու. « Իսկ Հայկն՝ զմասարակն ժառանգեաց հայրենիս ասացեալ սամմանօքն, և էր իշխան եօթանոց եղբարց »: և յէջ 11, թէ « Եւթագաւորեր Հայկն եղբարց իւրոց և ամեմայն եզրականացն ազգաց »:

մասին, Գրիգորի կենսագրին ընծայելի է. բայց թարգմանութեամբ և խմբագրութեամբ ժամանակ մոր պարագաներ և երանգներ ևս զգեցած է, յորոց 'ի սկզբամ ազատ էր :

Ժամ է արդ՝ զայլ 'ի լուծումն պատմական հանգուցին Տեսխանս, զոր 'ի վեր անուր առաջարկեցինք, թէ այսպիսի տեսիլք մի ստուգիւ կատարուած է յաստուածուատ առ Գրիգոր, ինչպէս որ կը ներկայացնէ մեզ մորա պատմագիրը. թէ, ընդհակառակն, գլխովիմ այլ ինչ խմանալի է այնու: Ես կարծեմ, թէ իրիմ ճիշդ եղելութեամբ և բնագրին հմազոյմ աւանդածին աւելի համաձայնած կը լինինք, եթէ հարցմանս վերջին մասն ընդունինք: Արդարև, ես համոզուած եմ, թէ այս կարծիքս բարգաւաճելով՝ ոչ միայն յանդուգն յարծակմանք ամգութիւն ինչի մի չեմք գործեր այդ ազգային հնացեալ աւանդութեանը դէմ, այլ մամաւանդ թէ իրաց բռնագրքայի և ծամածուտ անհարթութիւնը հարթելով՝ բնական ընթացք մ'էս տուած կը լինինք այնմ. որով միայն մորա վիպասանական դիմակը վերնալով պատմական տիպ և հաստատութիւն կ'առնու այն: Անցնինք ուղղակի ապացուցութեանց:

Արդ, յէջ 541, 542 և 545 կը տեսնենք զԳրիգոր՝ որ երիցս կը հրակիրէ զմորարարած Հայաստանեայս 'ի շինութիւն վկայարանացմ սրբոց, որպէս զի 'ի ձեռն սուրբ մահատակաց բժշկութիւն լիցի մոցս 'ի տանջանաց և 'ի փրկութիւն յայտոց. բայց երիցս իսկ միջամկան հատուածներով Գրիգորի հրաւէրքն անգործադրելի կը մնայ: Իսկ վերջին ամգամ, այսինքն է, յետ կատարման 66օրեայ պառոց, երբ առաւօտուն թագաւորն և սեծամեծք՝ տակաւին ծաղածառակ վիճակի մէջ մորա ոտքն ինկած բժշկութիւն կը խնդրեն, մա փոխանակ բժշկութեամբ կը չորեքկմէ խր հրաւէրքն՝ ըսելով. « Փութագարուք շինեցէք զվկայարանս, զի համգուացուք զվկայսն Աստուծոյ, զի և մոքս զձեզ հանգուացն 'ի տանջանաց »: Իսկ թագաւորն և ժողովուրդն՝ այս ամգամ կը փութան և կը խնդրեն 'ի Գրիգորէ, որպէս զի « փութով հրամայեսցէ, որպէս և կամեսցի զինչ և կամիցի առնել »: Արդ, յետ այսքան պատրաստութեամբ և հրաւէրքի ուրիշ բան չէր մնար Գրիգորի՝ բայց եթէ տալ մոքս զծրագիր շինութեան վկայարանաց և կաթողիկէիմ: Սակայն կենսագիրն՝ ոչ միայն մեր այլ մոյն իսկ ժողովրդեան չպատասձը կը յարէ անդէմ ամսիչապէս. « Իսկ մորա տեսիլ պատմեալ մոքս՝ ասէ »...: Այս պարագայս՝ համանման է 78 իջին, որ առ Ղազարայ Պատմութեան, որուն հեղինակն հով ոք և իցէ, Ս. Սահակայ պատմել կու տայ զտեսիլն՝ առաջի ապառու՛ մախարարաց, առ 'ի յերկեցոցս մեղոյ զմոտս 'ի չար խորհրդոցն գործադրութեանէ, առ որ ասկէ աւելի զօրաստ միջոց չէր գտած: Բայց Ս. Սահակայ Տեսիլն և մորա հեղինակն այս առաւելութիւնս ունին, զի անդ, յէջ 78, կը ծանուցուի 'ի դիմաց սուրբ հայրապետին, թէ արդէն « Յառաջքան զբազում անս » Աստուած յայտնած էր մմա յամուրջս զապագայ աղէտս Հայաստանեայց: Իսկ յԱզգաթանգեղայ մատենին, ընդհակառակն, յետ չորից հրակիրանաց՝ երբ վկայարանաց շինութեամբ ատարծը

պատրաստուած էր, Գրիգոր կը խորհէր առաջօտում շինութեան պատուէրը տալ, և քրիստոսավայել տաճարի որպիսութեան ամտեղեակ հեթանոսիկ ժողովուրդն ինքնին կ'ուզէր մորա ծրագիրն 'ի Ս. Գրիգորէ, ճիշդ այն ժամանակ տեսիլքը կը պատմէ մոցա Գրիգոր, ոչ յառաջ և ոչ յետոյ :

Իցէ՞ մարթ և պարտ ստուգիւ տեսիլ աստուածային համարել զայս. թէ, ընդհակառակն, բնական տեսութիւն մտաց և զաղափարակամին Գրիգորի՞ վասն շինութեան տաճարաց, զորս կ'ուզէր համեմատ ձևոյ յունական եկեղեցեաց յորինել զորս տեսած էր (զուցէ և ուսած) 'ի Գեսարիա Կապադովկացոց, և կ'ուզէր ծուլել 'ի մի ընդ ընդ հեթանոսական մեհեմաց հնոյն Հայաստանի, որուն կարեփի է յայսցոյց համարել և հիմաւորց տափարակ գաբթիմ՝ կոնստանդի վերածիլն. սակայն այս բամիս վերայ յետոյ պիտի խօսիմ: Ըստ իս, այս հարցմանս երկու կէտերն ևս պէտք է իբրև իրական ընդունել. այսինքն է, զոյ տեսիլ ինչ յաստուածուատ յայտնեալ Գրիգորի, զոյ մոյնպէս լոկ մկարագիր ինչ կամ ծրագիր մտացն Գրիգորի. երկաքանչիւրն իսկ՝ իրարմէ ամկախ, զորս կենսագիրն Գրիգորի կամ խմբագրողն զրոցս՝ իրարու հետ շփոթած է, կազմելով գմի և եթ մարգարէահարաշ գուշակութիւն. և զայս ըրած է՝ միտելով 'ի գաղափարաց ժամանակին, որք բնական իրողութեանց իսկ՝ յամախ գերբնականի կերպարամբ տարու սովորեալ էին յայմժամ. բայց սնեք այժմ՝ զգուշատր քննութեամբք այն տեսչեան մէջ երած պարագայից՝ կարող ենք որոշել յիւրերաց և գծել իւրարանչիւրին սահմանը:

Եւ յիրակի, յէջ 552, ՃԲ. գլխահամարն, որ պարտի վինել, ըստ իս, մերածութիւն կամ լաւ ևս յայտնութիւն աստուածահարաշ տեսչեան՝ բոլորովն տարբեր¹ տիպ ունի յընդարձակ Տեսչեմէն և 'ի մեկնութեանէ մորա: Աստ բացատրութեամբ՝ Աստուծոյն խնայելու միայն կը յիշէ Գրիգոր՝ առ առք վայսն, և մոցա վերացումն յամբուզական քաղաքին ամուր երկնից արայունքն, զոր մկանց նա երբեմն հոգոյ աչօք, միմչնեռ մարմնատր աչօքն խորատուգեալ կայր 'ի վիրապին և զխաւար միայն կը շօշափէր: Այս բանս համաձայն է, արդարև, 170 իշին, ուր Ս. Գրիգոր յետ ելանելոյն 'ի վիրապէմ՝ անդէմ և անդ սպանուած վկայից տեղը կը հարցնէ, առանց ամենևին յուսեքէ բան մի լսելու. և երբ մոքս ամգիտանալ կը ձևացնեն զինքեանս, ասելով, թէ « Զորոց վկայից ասես », մա կը յարէ. « Որ վասն Աստուծոյ մեռան 'ի ձեռն »: Յայտ է, թէ 'ի ձեռն տեսչեան իրիք եղելոյ յԱստուծոյ գիտէր զայն: Բ. Յէջ 186 ևս կ'ըսէ Գրիգոր, թէ միմչնեռ էր ինքն 'ի վիրապին՝ ամէն օր աչօք բացօք կը տեսնէր զիրեշտակն Աստուծոյ, և թէ յԱստուծոյ հրամանն առաջ էր առաջի իրենց մորա կարգ: Գ. Յէջ 542, սուրբ կուսամաց վերայ խօ.

1. « Արդ եկայք պատմեսցուք ձեզ, եղբարք, զցուցական սիրոյն առ բարչութեան առ ձեզ, որ ինչ երևեցաւ ահաւորութիւն տեսչեանն. Աստուածութեան խոնարհեալ առ սուրբ վկայսն իւր, և սոցա՝ զամբանէ մատ բարձրութիւն՝ յամպատումն վերացեալ յամբուզականութիւն արքայութեան երկնից »:

սեբով կ'ըսէ. « Զի Աստուածութիւնն որ բնութեւն է ՚ի նա » . և հռակ ապա յէջ 556 կը տեսնէ Գրիգոր զ37 վկայսն « Ի Լուսաւորք Կերպարան Եպիսկոպոսական » : Ահաւասիկ Մ. Գրիգորի տեսլեանն ըսմ եղելութիւնն . որում վերայ իբր 'ի հիման բարձրացել է ապա ընդ արծակ Տեսլեանն մկարագիրն, որմ իրօք տեսիլ չէ, այլ մորա առաջին մասն է պարզապէս ճարտարապետական մկարագիր ծնոյ և հանգամանաց կառուցանելի տարահարաց, ուրոյմ առանձինն . իսկ վերջինը՝ զոր հրեշտակի բերամը դրած է հեղինակն, է ողջամիտ և խորթրդական մեկնութիւն կախողիկ, ընդհանուր և առաջնական սարք Եկեղեցոյ, որ յօղի հաւատոյ, յուսոյ և սիրոյ՝ իրեն հետ կը միացնէ այն առանձինն եկեղեցիներն, կը կրէ 'ի ծոց իւր զճշխարս սրբօք և սիրելեացն Աստուծոյ, յորում կը կատարուին Մկրտութեան, շնորհաց և այլն խորհուրդներն . ուր կը մտնեն մեղօք սևացեալ հեթանոսք, և կ'ելլեն զերդ շնորհագարուեալ զառիմք Աստուծոյ . սերունդք՝ սերնդոց կը յաշորդեն, և ոմանք 'ի գառանց և ամտի սրբեցելոց՝ դարձեալ 'ի գայլ կը փոխուին մերգործական մեղօք :

Արդ, իրմ այսպէս լինելով, իցէ՛ ուրեմն բամաւոր իբրև պատմական ինչ Գրիգորի ընծայել զխովինն այդ գրաւոր Տեսիլն, որ յինքեան

1. Գուտշմիդ, 558 իջի Ա. պարբերութեան և 566 Բ. պարբերութեան մէջ՝ գառանց այսաբանական մնամութիւնով՝ ուխտապահ շարդանանց վերայ առնելով, և գայլոցը՝ ուրացողներուն, կ'իզարակացնէ, թէ Գրիգորի գրաւոր Տեսիլքն՝ Ն դարում վերջեր, այսինքն է, համաշխարհական պատերազմին ժամանակ կատարուած դիպացը վերայ յօրինուած է : Մակայմ, այս կարծիքս ըմբռնելի չէ, ըստ իս. որովհետև մակ տեսլեանս մէջ բերուած շատ տեղերն և պարագաներ՝ Ն դարէն առաջ կատարուած իրած ակմարկութիւններն են . ինչպէս օրինակ իմմ եկեղեցեաց շէնութեան և հեթանոս չայաստամի մկրտութեան դէպքերը : Բ. աստ ինչպէս Եկեղեցի և քահանայութիւնն՝ ըմբռնուող առնուած են, և ոչ թէ իբրև ազգային հիմնարկութիւն իմչ, որով մորա ըմբռնուողականութեան ըմբողջմն և աստուածայնութիւնն եղծած կը լինէր, այսպէս և մկրտութեան ակագանն, ամով սրբուած գառանց և արտաքս ելլող գայլոց օրինակով՝ ըմբռնուող հաւատացելոց և ուրացողաց համար գործուած են : Գ. ի մեկնութեան անդ Տեսլեանն, յէջ 566, « Ի նշմարտութեան մտտի և յուխտէ քահանայից » դուրս ելլողները՝ գայլ կը կոչուին, զոր չէ մարթ շարդանանց ժամանակի քահանայից վերաբերել, որոնք ընդ մեծիմ Ղևոնդայ միաշումչ մահատակեցան, վասն հաւատոց քրիստոսի : Գ. ինչպէս տեսանք, Դ դարու մտտեանգիրն Փաստոս ևս կը ինչէ այս տեսիլս . ինչպէս նաև Մ. Մահակ յառաջ քան զամմ 438 : Ուստի ես մակի կ'ախործիմ, գէթ ըստ էական մասին, Գ. դարու վերջին կէսին գրուած համարել . այսինքն է մօտ այն ժամանակները՝ երբ Մերուժամ Արծրուծի և Չահան Մասիկոնեան՝ ուրացեալ քահանայից և մախարարաց հետ կ'ողջէին կործանել զեկեղեցին, և զգահմ Արշակունեաց . և կանգնել զպաշտօն միհրակամ հրոյն . և արարիմ իսկ ամթիւ կոտորածս գառանց և աւերածս շինից և քաղաքաց : Արդ, Ղազար ինքնին, Գատմ. 3 այրոց, Դ դարու գ. Գ. Ի. իբրև մախագոյակ և յառաջածամօթ իրողութիւն մի, կը պատշահեցնէ Գրիգորի Տեսլեան մէջ՝ գառանց և գայլոց օրինակներն շարդանանց և Չասակեանց, ասելով . « Գայր տակաւ յերևումն՝ կամխաւ տեսութիւն մարգարէական սուրբ մահատակին Գրիգորի տեսլեանն, որ երևեցաւ մահ յԱստուծոյ » :

երկու հակապատկեր իրաց տիպարներ կը պարունակէ. այսինքն է, մասնական եկեղեցեաց՝ միւթական յօրհմուածութիւնն, և ընդհանրականին՝ այլարանական մշամակութիւնն: Այս բանս, ըստ իմքեան, հակասական չէ՛, այնու զի Սուրբ Գրոց մէջ եղած մարգարէահրաշ տեսիլքն ևս՝ նոյնպէս երկու տիպ ունին և իմաստս այլնայլս: Սակայն չեմ տարակուսիր ըսել, թէ Ս. Գրքէն դուրս և լոկ պատմական երկասիրութեան մի մէջ, իմչպէս է առաջարկեալս, յամում եկեղեցական սուրբ հօր մի աւանդուած տեսիլն, որոյ մկարագրութեան մի մասն՝ ՚ի տեսամողաց Դսրայելի փոխ առնուած է և միան յունական ճարտարապետութեամբ Գ և Դ. դարու եկեղեցեաց ձևոյն վերայ հաստատուած է, չկարէ լինել և չէ իսկ աստուածային սքանչելիքս եղած մորանշան իր. իսկ որովհետև այսպէս էր և է կենսագրին մեզի աւանդած գրաւոր Տեսիլն և մկարագրած եկեղեցւոյն ոճն. ուրեմն հետևութիւնն՝ ըմթերցողք իմքմին կարեն քաջ իմաստասիրել: Տեսնենք ըսածիս ասկացոյցները:

Յիրաւի, Ա. բաւական է առ այս՝ բարդատել մախ Եզեկիէլի մարգարէութեան Խ. գլուխն, վասն շինուածոյ Տաճարին և մորա յաշորդ գլուխներն՝ որք շարունակութիւն են այն միւթոյն, բայց ուրիշ իրեր և կը յայտնեն, Գրիգորի գրաւոր Տեսլեան հետ, որոց մասնութիւնը կարի ակներն է: Յառաջնումն՝ կը տեսնէ մարգարէն Եզեկիէլ բարձրագոյն լոռ մի. մոյրը կը մկատուի և ՚ի վերջումն աստ, յէջ 554: Եզեկիէլ կը տեսնէ յարեւելս՝ Աստուծոյ Դսրայելի փառքն և կը լսէ երկմայրն բանակի ձայնը՝ իբրև զձայն ամհամար բազմութեան, — Աստուծոյ լոյսը յերկմից յերկիր կ'իջանէ և երկիրս ամով կը լուսաւորի, — կ'երևի ասպ լուսաւոր մարդ մի՝ ունելով ձող ՚ի ձեռին և զլար շինողաց, և ինքը կեցած է ՚ի վերայ դրամ: Այս ամենայն կը մկարագրուի և յէջ 554 և 555 Ազաթամզեղոսի. միայն թէ աստ հրեշտակին համար կ'ըսուի, թէ ՚ի շինամէջս քաղաքին և զետմի վերայ կեցած էր, և փոխանակ ձողի՝ ուռն ՚ի ձեռին. իսկ լարը Գրիգորի ձեռքը տրուած է: Առ Եզեկիէլ կը չափէ հրեշտակն զտաճարն՝ յարեւելս, ՚ի հիւսիս և ՚ի հարաւ, — սիւներ կը կամզինն և խորաններ կը ձգուին, — Խէ. զլուռն մէջ՝ վարագուրաց տակէն շուր կը յորդէ՝ իբրև զյործանս հեղեղաց՝ դէպ յարեւելս, — կը կենդանաման այն ամէնքը՝ որոց վերայ կը հասնի այդ կենսունակ շուրն, — ամտի կը վերընծիւղին մորամոր բարունակներ, — ամդ կը լիմի երկոտասան ցեղից ժառանգութիւնն և կը ծնանին այդէնածիմք, յորոց կը զամագանին ազգք պանդխտաց: Արդ, սոյն բաները փոքր ինչ տարբերութեամբ բանից՝ կը մկարագրուին Գրիգորի Տեսլեան մէջ: Առ Եզեկիէլի՝ երբ զարմացած կեցել է մարգարէն՝ (Խ. գլ. 3 տուն) հրեշտակը կը մօտեմայ և կ'ըսէ. իմչո՛ւ զարմացել ես աչօք տեսածն երուտք վերայ, « հաստատեա ՚ի մտի քուս՝ զամենայն գոր ես ցուցից քեզ, զի վասն ցուցանելոյ քեզ եկի այսր » և այլն: Այսպէս կ'ըսուի ճիշդ մաս ՚ի Տեսլեան ամդ Գրիգորի, յէջ 558 և 567: Աւելորդ կը համարիմ զմամրամասունման երկաքանչիւրոցն ՚ի մէջ բերել, զի ցայս վայր մէջ բերուածներն իսկ բաւական են ցուցնել, թէ կեն

սագրի նկարագրած Տեսլեան այդ մասն՝ ուղղակի մանուկներն է նկարագրելն և տեսլեան որդւոյն հուզեայ :

Ապացուցանեմք ՚ի վեր անդը արտայայտած մեր մախարասու թեան երկրորդ մասը . այսինքն թէ, էջմիածնի՝¹ կաթողիկէն յունական եկեղեցեաց ոճով շինուած է: Արդ, բաց ՚ի Տեսլեան հեղինակէն՝ չիք այլ ոք ՚ի տոհմային հին պատմագրաց, որ սոյն երկմանման տարճարիս նարտարապետական ճիշդ . նկարագիրը մեզի ասամուրած լինի: Վերջին ժամանակաց մէջ, եղան Դիւբուայ,² Բրոսէ՝³ և Տէսիէ՝⁴ որք առաջին անգամ հետազօտեցին այս տարճարիս կազմութիւնն և ուսումնարար գրեցին: Բայց ամոր ոճոյ բուն գաղտնիքը չը կարողացան լաւ իմանալ և պարզել . որովհետև այդ ժամանակամիջոցին հնագիտութիւնն, և ՚ի մասնաւորի Բիւզանդական հնագիտութիւնը, դեռ այն յառաջադիմութիւնն ըրած չէր, զոր կը տեսնեմք այսօր: Այժմեան հնագէտք, յորս դեռ մի քանի տարի առաջ մշամատր հանդիսացաւ Օղէսսայի Համալսարանի Պրօֆ. Կոմսակովը, Բիւզանդական հին նարտարապետութեան վերայ ըրած լաւ հետազօտութեամբք: Նա ինքն յամին 1876 ՚ի Մոսկուա հրատարակած երկասիրութեամբն՝⁵ ակն յայտնի փաստերով ապացուցուց Բիւզան

1. Այս եկեղեցիս, որոյ հնագոյն ամուռն էր Շողակաթ, թէպէտև այլևայլ աւերմանց և մորոգութեանց ենթարկուեցաւ, յըմթացս դարուց. մի հրամանաւ Շապիոյ Բ. և ՚ի ձեռն ուրացեալ որդուց իւրոց Մերութեանց և Վահանայ, ըստ վկայութեան Փաւստոսի, Դ. Դպր. Վ. ԾԵ. բայց փութամակի շինուեցաւ վերստին մօտ յամն 380: Երկրորդ մորոգութիւնն եղաւ ՚ի ձեռն Վահանայ Մամիկոնեանոյ, ըստ պատմելոյ Ղազարայ, Վ. ՄԿԳ: Յետ անցանելոյ 135 ամաց, Կոմիտաս կաթողիկոսն երրորդ անգամ մ'այլ մորոգեց զայն ՚ի կոփածոյ քարանց, յամին 618. և զայս կը պատմէ մեզ Սեբէոս՝ պատմիչ մոյն դարուն: Ասկէ վերջ եղածներն պարզապէս մորոգութիւն համարելի են քան թէ շինութիւն: Արդ, թէպէտև երիցս մոր շինեցաւ և մոյնչափ ամգամ այլ մորոգեցաւ չայոց լուսաւորութեան հօր այս մուրակեան տաճարս, սակայն, ըստ պատմական վրկայութեան և ըստ ընդհանուր աւանդութեան . ազգիս, պահեցաւ այն միշտ ՚ի վերայ առաջին հիման, ըստ ամենայն ձեակերպութեան. այնպէս որ, առանց բանաւոր տարակուսի, կարելի է ըսել, թէ այժմ ևս կը գտնուի մի և մոյն դրութեան մէջ, ըստ մեծութեան շինուածոցն ՚ի բարձրութիւն, յերկայնութիւն և ՚ի լայնութիւն, ինչպէս էր յառաջն: Առաջիկ Դարիժեցելոյն, Մովսիսի Սիւնեցւոյն մորոգած ժամանակ, այն եկեղեցւոյն տուած նկարագրութեան համեմատ՝ 50 հալապի էր մորա երկայնութիւնը, 48 լայնութիւնն և 35 բարձրութիւն: Շահապետեան վարդապետն՝ իւր Մտոր. էջմիածնի հտ. Ա. յէջ 16 կը վկայէ, թէ ինքն ևս չափելով զայն, չափով պարսկային զազին շրեանայ, թևէ ՚ի թև և ըստ մերքին երեսաց որմոց՝ գտաւ 32 1/2 երկայնութիւն, 32 1/2 լայնութիւն. և 21 բարձրութիւն: Եւ յիրաւի, եթէ պատմիչք ևս չըսէին՝ զայս կը պահանջէր Հայաստանեայց ամենամեծ պատկառանքը դէպ ՚ի այս Գրիգոր աւանդ ձեռակերտը. մամուսանդ զի այս գաղափարս տիրած էր առհասարակ, թէ յորդւոյն Միածնէ շինուած է այդ ձևն և չափն, և թէ չէր կարելի փոխել զայն:

- 2. Voyage autour du Caucase.
- 3. Voyage archéologique en Géorgie et Arménie.
- 4. L'Arménie et la Perse.
- 5. L'Architecture ancienne en Géorgie.

դական թոյ տիպն, ըստ ամենայնի, Հայ-Էջե կոչուած նարտա-
րապետական շինուածոց վերայ՝ անդատիմ առաջին շրջանի մէջ, որ
Դ. դարէն կը սկսի և կը հասնի ցաւարն Ժ: Կոմտակովի վերոյիշեալ
գործն ստացայ հեղինակէն, ոյր վասն և հրապարակաւ կը յայտնեմ
իմ շնորհակարութիւնս, սակայն ուսերէն գրուած լինելով՝ ինծ ան-
հասկնալի մնաց: Ուստի հարկադրուեցայ Տփղիսաբնակ Մօրիէ Գաղ-
ղիպսույմ գործէն՝¹ վկայութիւն մէջ բերել՝ որ, ըստ իս, ոչ այլ ինչ է
ծայրէ՛ի ծայր՝ քայց եթէ թարգմանութիւն առաջնոյն: Աստ, յէջ 19,
պատէս կը յայտնէ հեղինակն՝ իրաց վիճակն ըմբիամրապէս. « L'ar-
chitecture armeno-géorgienne emploie tous les principaux
éléments de la construction byzantine; le plan en forme de
croix grecque, la coupole » etc. Եւջ 21. « Comme il n'est
pas probable que la Grèce ait imité la Géorgie, il faut se
rendre à l'évidence et reconnaître que les deux pays (Ar-
ménie et Géorgie) ont subi en même temps l'influence de
l'Occident. » Եւջ 20. « Les traits caractéristiques de l'art
byzantin se répètent dans les deux pays: plan avec trois
absides, narthex et gynécée, proportions exagérées en hau-
teur, coupole sur un tambour étroit et très-élevé », etc.
Եւջ 8. « Les monuments de la première époque, autant que
nous pouvons en juger par les rares échantillons qui sont
parvenus jusqu'à nous, portent de si fortes traces d'influen-
ce byzantine qu'on peut croire qu'ils ont été construits par
des architectes venus de Constantinople ».

Ստուգիւ, ռուս գիտնականին կարծիքն և պնդիսի եղելութեան մի
նշմարտութիւնը՝ կը հաստատուին դեռ աւելի հմազոյն յիշատակա-
րանօք: Վրաց նարտարապետութեան մասին՝ Օշաքանոր է մահ Սոկ-
րատայ յոյն պատմագրի վկայութիւնը, որ իւր Պատմութեան Ա. գրոց
Ի. գլխում մէջ յայտնապէս կը ծանուցանէ, թէ Վրաց մորադարձ
թագաւորն՝ ՚ի սրբուհոյն Նուհեայ ուսանելով զոն և զձև եկեղեցեալ
ցրն Հոռոմոց, հրամայեաց ըստ այնմ շինել Վրաց առաջին եկեղե-
ցիները: Եւ իրօք Մծխիթայ եկեղեցին՝ որ ամենէն հմազոյնն է, սոյն
տիպն ունի: Իսկ հայկականին՝ իբրև յաւերժական արձան կեցած է
Տէրայ եկեղեցին, որ է գործ Ե. դարու, շինեալ ՚ի Յովն. Մանդակու-
մեցոյ՝ հրամանաւ և մպածտիւք Վահանայ Կամսարականի (որ էր
երէց եղբայր Ներսեսի և Հրահատայ), ըստ վկայութեան Հ. Ղևոնդ
Աիւշանի (Շիրակ. Տեղ. էջ 132-3): Այս բանս կը տեսնուի նոյն իսկ
ամոր վրայի հմազոյն արձանագրէն՝ յորում չիք թրակամ, զի յա-
ռաջ էր քան զդիւր հայկական թրակամին: Արդ, այս երկու հմա-
զոյն եկեղեցիներս ևս՝ յունական խաչի ձև ունին, քառակողմ խա-
րոսխաց կամ սեանց վերայ յեցած՝ դէպ ՚ի վեր կը բարձրանայ գրմ-
բէթն, իբրև զսիւն մի բլրածն, երկնաբերձ: Իսկ արդ, որովհետև այս
եկեղեցիներուս համանման է էջմիածնայ եկեղեցին, ՚ի բաց առեալ

1. L'Art religieux au Caucase.

գմբէթիմ սրութիւմ, որ յետիմ ժամանակի մորոգութեամ արգա- սիք է. ուրեմն հետևութիւնմ յայտնի է: Արդ, այժմեամ էջմիածինը Գրիգորի Տեսչեամ մէջ մկարագրուած եկեղեցւոյն հետ բարդատելու մամար, մէջ բերեմք Մօրիէի գրուածքէն մորա շինուածքիմ համա- ոսոս ծրագիրը: Յէջ 9. « À l'extérieur le plan présente en ré- ctangle; à l'intérieur une croix grecque, dont les quatre bras s'arrondissent en abside. Au centre une coupole sur un tambour ronde, à l'intérieur est polygone, à l'extérieur surmontée d'un toit conique, le passage de la croix inté- rieur au rectangle extérieur est obtenu au moyen de qua- tre pièces qui viennent s'inscrire dans le bras de la croix et tous deux servent de sacristie. Les absides ne sont pas en saillies sur la façade extérieure », etc.

Գերմանացիմ 9. Լամզլ և՛ իւր երկասիրութեամ 1 մէջ, յետ ասե- լոյ, թէ « Quello stile che sogliono chiamare armeno-gior- giano, in su le prime furono usate le forme romane e bi- zantine », այսպէս կը մկարագրէ գէջմիածին. « Le chiese ar- mene sono la più parte in pietra, e secondo l'uso bizanti- no son ricoverte di cupole e di volte a botte, con pilastro sottostanti. Hanno la pianta di rettangolo allungato, sul quale s'innalza nel mezzo una costruzione a forma di cro- ce, che sostiene la cupola », ect. Արդ, այս կրկիմ հեղինակացս ըրած մկարագիրը բարդատելով Ագաթանգեղոս գրոց կամ Գրիգորի Տեսչեամ 555 և 556 էջերու մկարագրիմ հետ, ըստ ամենայնի կա- տարեալ համաձայնութիւնմ ակնբերև կը լինի: Եւ յիւրաւի, յերկուսիմ իսկ կը տեսնուիմ չորեքկուսի խարիսխներ կամ սիւններ, որոնց պա- րասպ միջոցը կը ձևանայ խաչ իմն յումակամ, — ՚ի վերայ չորեցումց սեանց խաչիմ կը կապիմ ըմդ միմեամն կամարք զարմամալիք, — ՚ի վերայ մոցիմ կը բարձրանայ գմբէթածնն խորամարդ, — և գմբէթիմ վերայ կը կենայ տէրումակամ խաչի մշամը, զորով կը փարի լոյսն համատարած արեգակամ, — գմբէթի լուսամցքներէմ կը ծագի ՚ի մերքս շողն արեգակամ (ըստ հեղինակի Տեսչեամ շող աստուածե- ղէմ): — Միով բամիւ կ'ունենամք Գ. դարու Եղեմիէ կամ Վաղարշա- պատու եկեղեցիմ, յայմժամու յումակամ եկեղեցեաց սովորակամ ոճովմ և Գրիգորի տուած ծրագրով և ոչ թէ աստուածատուր և մաս- մատուր ձևով յօրինուած: Հեղինակ Գրիգորի մախայիշատակեալ Տեսչեամմ Եզեկիէի մարգարէութեամ տեսչեամ կերպարանք տա- լէմ վերջ կը հետևէր, որ Վաղարշապատու մայր եկեղեցւոյն այլ Ե- ղուսարկեմի Տաճարիմ պէս աստուածայիմ յօրինուածութեամ կեր- պարանք տայր: Սակայն միոյմ գաղտնիքը լուծելէմ վերջ ամենա- ըմակամ էր որ միւսոյն ևս ըստ այմ գտմար իւր լուծումը:

Գ. Ապացոյց մի ևս առ այս՝ կը համարիմ ես էջմիածնայ հիւսի-

1. I principali monumenti architettonici. Ed. di Torino, 1886. Ըստ իտալերէմ թարգմանութեամն ումէի ՚ի ձեռիմ:

սակողման անամուսնացած պատմական վերայ եղած հնազանդ յոյն արծառնագրութիւնը, զոր 'ի մէջ բերեմ Շահնաթուհեան և Պրոսէ և « Այսարատի մեծամուսն հեղինակ » , վերոյիշեալ երկասիրութեանց մէջ, ժամանակիս հնագէտք՝ քրիստոնէութեամբ Գ և Դ. դարուց գործ կը համարին : Այս յիշատակարանս կրկին ձևով է. սիրցմ մէջ փորագրուած կը տեսնուին Պատրոս Առաքեալն և Թեկղի կոյսմ իրենց յունական անուանագրութեամբը . իսկ սիրահիմ մէջ, բաց 'ի հայկական Ըստիլ, Կրթ (Տիրայր) և Կարգուս անուաներէն, կը յիշուին մասն զոչ յունական անուանքս Արչիւս և Էլտա, առն և կնոջ : Ձէ մարթ ըսել, թէ այս արծանս՝ յունաստանէն, յետոյ ուրեմն, 'ի Հայս բերուած է, այլ 'ի Հայս փորագրուած : Արդ, այս ուրիշ բան չի մշակեիր, հաւանորէն, բայց եթէ ըսել, թէ Արքիանմ գուցէ եղած է մարտարարպետ կաթողիկէին Վարդաշապատու . և այս հատի իսկ յայտ է, զի ժամին մէջ աղօթողներէն կը խօզրէ, որ զիմքն ևս յիշեմ : Արդ, եթէ այս Դանիէլ և Գարեգինն՝ մոյն համարիմք Ռըշտու մեաց իշխաններուն հետ, զորս յիշէ Բուզանդ (Դպր. Դ. գլ. Դ և Ե.) մշան է, թէ Մեծիմ Ներսիսի ժամանակ ևս մորգուեցաւ այս տաճարս :

Տեսլեանս սկիզբն և վերջաբանն իսկ՝ այնպիսի պարագաներ կը յայտնեն, որք անելի մորս հեղինակին կամայական գրչիմ՝ քան թէ Գրիգորի պատմութեան կը վերաբերին : Տէլ 552 կ'ըսուի, 'ի կողմանէ Գրիգորի, թէ « Արդ, 'ի հասարակել գեղերիս յայսմիկ, զի Խուսեպետ 'ի քուն լինէիք 'ի ծանրութեան աշխարհութեան 'ի քունութեան » : Արդ, այս խօսքերս հակասական են, մաքս, 544 իշխմ, ուր կ'արծակէ Գրիգոր զժողովուրդն, որ եկած էին 'ի լուր վարդապետութեանն, ասելով . « Արդ, այս օր ընդ երեկս է անցեալ, երթայք 'ի համգիստ քնոյ . . . և 'ի վաղու հետէ փոյթ լիցի ձեզ շինել զյարկս համգատոցաց » : Բ. 548 իշխմ, ուր կ'ըսուի, թէ « Ի վուկ վաթսմերորդ վեցերորդ աւուրն ընդ այգուն առաւօտանալ » եկան իշխանք՝ թագաւորին և մարտարարաց հետ առ Գրիգոր, և Գրիգոր 'ի յորդոր շինութեան վկայարանաց կը պատմէ զՏեսիլն : Արդ այս հատուածս եթէ շարունակութիւն իմն համարիմք անմիջապէս իւր մարտութեանց պարբերութեանն, և եթէ 544 իշխ վերջին պարբերութեանն, որ անելի հաւանական է, կը ցուցնուէ մեզ, թէ Տեսլեան պատմութեանն յառաջ երբէք տեղի ունեցած չէր այնպիսի ծանր աշխատութիւն մի . վասն զի դեռ վկայարանաց շինութիւնը չէր սկսած . ուստի աստիկ վաստակելու պատճառ մ' ևս չկայր, զի դեռ մոր ելած էին 'ի քնոյ անտի, 'ի ծագել առաւօտուն :

Իսկ 'ի վերջաւորութեան անդ, յէլ 568, այսպէս կը կնքէ զՏեսիլն . « Եւ զայս ասացեալ, շարժումն եղեալ, ընդ անստանալն ծածկեցաւ տեսիլն » : Ընդ առաւօտն ևս կը ծածկուի այն : Գեղեցիկ գիտ . զի եթէ սկսաւ պատմել, հարկ էր որ վերջնայր այն : Շատ անելի բնական և հասկանալի կը լինէր հեղինակն, եթէ ըսէր . Առաւօտ լինելուն պէս՝ եկան մորս առ Գրիգոր, և Գրիգոր բացատրեց մոցս

գտեսութիւն իւր կամ զծրագիր շինութեան վկայարանաց: և ամ-
 դէմ յարէր զբանս Գ. պարբերութեան. « Եւ զայս ասացեալ՝ հրա-
 մայեաց զի զմիւթ շինուածոյն վարդապետի պատրաստեցեմ ». որ
 շատ լաւ պիտի միաբանէր Տեսեան վերջի բնութեան և Պորա յա-
 շորդիմ հետ, « Եւ ամենայն բազմութիւն մարդկան լուեալ զայն
 իկարգանչիւրն ընթացան պատրաստել զմիւթն »: Յակոբն հեղի-
 մակս փոխանակ այսր՝ ԺԳ. գլխահամարով սկսող ճոռոմ պարբերու-
 թիւնն ևս մերմուծած է. « Արդ ամենարարն, ամենատեղծն »; և
 այլն բառերով, իրօք աստուածային երևցնելու համար՝ մկարած
 միւթն, այսինքն է եկեղեցեաց շինութիւնը. և չորիցս արդէն կորկ-
 նուած հրաւիրամաց հետևեալ խօսքերն՝ հիմնադրող անգամ մի ևս
 մէջ բերելով. « Արդ եկայք շինեսցուք զվկայարանս », և այլն: Արդ,
 այս կողմէն իւր խրամատը կարկատել ուզած ժամանակ, այլուր
 այսինքն է, յէջ 552, Բ. պարբերութեանը մէջ՝ արդէն բերդը
 սուած կը լինի. վասն զի աստ Գրիգորի բերանը դրուած այս
 խօսքերս, թէ « Դուք 'ի քուն լինէիք, և ես հարստեան կայ վասն
 սքանչելեաց ողորմութեանն Աստուածութեան այս անտեղծն »:
 Գրեալ է զսէրն վկայիցն առ սիրեցեալ արարչութիւն »; և
 այլն: Աստի յայտնապէս կը տեսնուի, թէ Գրիգոր՝ մախրմիցաց երե-
 կոյէն՝ արդէն սկսած էր պատրաստել վարդեան աւուր տալիք ծրա-
 գիրն, վասն շինութեան եկեղեցեաց, յիշելով հայաստանի մէջ կա-
 տարուած դարձիւն և հոխոխմանց մահատակութեան մեծագոյն
 դէպքերն; ամիսն 'ի տեսնելէ. և թէ՛ Տեսիլն իբրև՝ պատահական
 մի բան յարմարուած է յայսմ, միմչեւ. Պորա իրական տեղմ՝ ուրիշ
 էջերումն եղած է:

Հուակ 'ի վախճանի պէտք է ըսել, թէ՛ այս և մամօրինակ երևոյթ-
 մեր և պարագաներ, յորս Գրիգորի, Մեծին Ներսիսի և Սահակայ
 Պարթևիմ՝ աստուածային տեսիլքներ և մարգարէական գուշակու-
 թիւններ ընծայուած են, ուղղակի ազգայնութեան տիպ ունին. ուստի
 ինչպէս վերջին երկու հայրապետաց Տեսիլքները զրոգմերն հայազգի
 եկեղեցականներ էին, այսինքն է Մեսրոպը Երէց և Ղազար, կամ լաւ
 ևս Ղազարայ մէջ ձեռք խառնողը. այսպէս այլ լուսաւորչայ Տեսեան
 հեղինակմ՝ պէտք է որ հայազգի եկեղեցական ոք եղած լինէր: Այս
 բանս՝ ուրիշ տեղեաց և խնդրոց քննութեան մէջ իսկ արդէն տե-
 սանք, և տակաւին պիտի տեսնենք ընթացս ճառելիք միւթոց: Եր-
 ցա մպատակն էր, այդ եղանակս զհայս միշտ կրօնական երկու-
 դածութեան մէջ պահել, կասեցուցանել 'ի չարէն, յորդորել 'ի բա-
 ըրին և հուակ ուրեմմ՝ հոգևորական իշխանութեան ազդեցութեան
 մերքոյ արկանել զթագաւորական իշխանութիւնը. մամաւանդ թէ և
 զթագաւորն ինքնին գլխովին: Ուստի չէ ինչ ամտեղի, մամաւանդ թէ
 ողջախոն քննադատութեան է գործ, ամէն աւանդութիւն և չնորու-
 մել կուրօրէմ իբրև պատմական և ընդհանուր իր:

1. Օրինակի աղագաւ, տոհմային մատենագրաց ոմանց աւանդածը,
 թէ Ղուսաւորչիք Տեսաւոր լինուէն ուզեց յափսիթերս յերուսաղէմ երթալ,

ԳԼՈՒԽ Թ.

Հռիփփոսեանց նշխարաց փոխադրութեան պատճառով արժեքն և հայեացքն մի առ այն. — Գրիգորի անփայտանատարչ առաջինութեան, և առաջնազարդ լարաց հանձնանդը. — Բառ առ բառ նմանութեան թարգմանիչ արդիւնց կենսագրութեանց Գրիգորի և մեծի Մեթոդիոսի. — Ո՛վ է բանապաշտ, կորն'ան ինչ Գրիգորի քորձոց հեղինակն. — Գոտարշիքի կործինն՝ ի նպաստ կորեան և նորահերտաճը. — կրի՛ն Պարսնախնձի Մեթոդիոսի, և լատերաբանութեան ընդարձակի՛ն. — Լաճոսն բանադրութեան և կորեան՝ բանապաշտ կորեան. — Պատճառն և իննական հաստատիք:

Գալով Հռիփփոսեանց նշխարաց փոխադրութեանն, որ այնպիսի մեծագոյն պատրաստութեամբ կը սկսի և շքեղ հանդիսիս և հրաշապատումն փառաւորութեամբ կը կատարուի: Արդ, այս կրօնական դէպքս՝ կը ներկայացնէ մեզ Հայաստանեայց և Այրարթեան մարդ եկեղեցայն մէջ կատարուած մախիկն և տեղական պաշտամունքը, յառաջ քան զսաննայն տօնախմբութիւնս սրբոց և տօնից տէրունականաց: Այս կրօնական դրուագիս մէջ միայն, և ոչ բնաւ այլուր, կու գան կը միանան իրարու հետ Հռիփփոսեանց, Տրդատայ և Գրիգորի պատմութիւնքը, որոնք՝ անշուշտ իրարմէ տարբեր ժամանակաց և պարագայից մէջ գրուեցան: Միութիւն մի, որ զբխովին արուեստական համարելի է և առանց եկամտոտ յաւերակ ծոց չէր կարող իրագործուիլ: Եւ յիրակի, առ այս Ա. Գրոց, յէջ 168 Գրիգորի վերապէն ելլելուն և ՚ի Ֆաղարշապատ գալուն հատուածը վերստին կրկնուած է, յէջ 549, յասելն. « Իբրև եկմ ենաս ելեալ ՚ի բանտէ վիրապիմ խոստովանողմ Քրիստոսի Գրիգոր » և կրկնուած է բոլորովին աչքի զարնող կերպով. այսինքն է, յետ վաթսմօրեայ պահոց, վարդապետութեան և այլոց իրաց պատմութեան: Առ այս՝ այնքան ամգամ կը հրաւիրին Հայաստանեայք ՚ի շինութիւն վկայարանաց և տակաւին կը յետածգուի այն. առ այս՝ տուած է Մ. Գրիգորի երկիցս բժշկել զհարուածեալն Տրդատ, ըսցց միշտ ըստ մասնէ և եեթ, ամբողջն այս հանդիսիս վերապահելով. այս պատճառաւ՝ արկեղաց և վկայարանաց շինութիւնը կրկին մկարագրուած է. այսպատճառաւ կը մասնակցէ զթագաւորն շինութեանն այնորիկ:

Ըսցց հրեշտակ Աստուծոյ արգիլեց զայն. իսկ նա հետիոտս գնաց անտիշազարայ Ջահկեցոյ, գլ. Դ. աւանդութիւնը, թէ Ղուսաւորիչն մեր առանց Ղուամի կանթեղ մի կախեց ՚ի գագաթնէ Արագած լեռին, արտասուօք լիցոյց զայն. վառեցաւ և կը տնէր միմէկ իւր օրերն: Այսպէս և այն գրատը աւանդութիւնն՝ որ Յայսմաւուրս Գեկտ. 19, Գրիգորի մա հուան ժամանակ՝ ամիեթեթ հարցմունքմեր և պատասխամներ կ'ընծայէ Գրիգորի՝ ուղղել առ հրեշտակն, որոնք ծաղրական են, լի մոլորութեամբք և Գրիգորին ամենկն ամվայել:

Բ. Որչափ որ միւթական ձևով միացած են աստ՝ սոյմ երեք գրու-
թիւնքը, սակայն իւրաքանչիւրը՝ պահած է իւր առանձնապատկու-
թիւնը: Նախ զի Հռիփսիմեանց պատմութիւնը պարզ ճոցա մահա-
տակութեան յիշատակութեամբ, վկայարանաց պատրաստութեամբ,
և մշխարաց փոխադրութեամբ, իբր ամուղակի կապով մի, կը միա-
նայ. որովհետև ճոցա վկայարանութիւնը, ինչպէս տեսանք, Ս. Գրոց
163 իշի Բ. պարբերութեամբը արդէն աւարտած էր: Ո՛րքամ գե-
ղեցիկ է, արդարև, յէջ 579 ժէ. գլխահամարով պարբերութիւնը,
յորում, յետ շինութեան վկայարանաց, միահամարու կը ժողովին
Հայաստանեայք յամենայն սահմանաց, շինից և քաղաքաց, ՚ի պաշ-
տօնարանի ամբ սրբոց և ՚ի յարկի տանն Աստուծոյ՝ պատկեր ջա-
ղաբորմով. և Ս. Գրիգոր կը գոչէ առ ծովացեալ և արէծոսի ժողովմ
մորադարձ հաւատացելոց. « Դի՛ք ծովը ամենեքեանն առ Աստուած,
զի արասցէ Տէր՝ քօշկութիւն հարուածոցդ »: Յերեսս անկեալ կը տա-
րածուի ժողովուրդն այն սրբոյն առջև, որում տկարութեանը մէջ
քիչ վայրկեանէն պիտի տեսնուի Աստուծոյ ամենակարող զօրութիւնը:
Կոյրերը կը խարխափեն, կաղերմ և հաշմանդամները՝ յափսիթերս
կը սողան, հագիւ տանելով իրենց խեղացած ամբամները. խոպք և
համերք կը պապաչան՝ առանց գիտակցութեան կատարուած իրին.
ամենուստ լալու, ակի և վախի ձայներ կը լսուին. ամենուրեք խոլ
մռնիւն մի կը տիրէ՝ ընդ երկիւղի և լուսութեան: Գրիգոր Մովսիսա-
նան ձեռքերը դէպ ՚ի յերկինս կը բարձրացնէ. գոհութիւննախառն
մտթամբներ՝ յերկրէ յերկինս կը վերաման. իսկ երկնքէն աստուա-
ծային ողորմութեան և զօրութեան մոր սքանչելիքներ խեղճ ժողո-
վըրդեան վերայ կը կատարուին, ՚ի քթթել ակամ: Կոյրք՝ բնական
լուսոյն հետ՝ հաւատոյ իմանալի լոյսն ևս տեսնելով, այլ յայլմէ ե-
ղած՝ ցնծութեան աղաղակներ կը հնչեցնեն. այսպէս և այլ ամե-
նայն դասք ախտաժեհտաց, գօսացելոց և համերոց: Կարելի է գու-
շակել, թէ որպիսի զարմանք և իրարանցումն իրօք տեղի ունեցաւ
ամբ. քանի՛ աղմուկք շփոթից. ո՛րքամ երկիւղի և խնդութեան հա-
կապատկեր տեսարաններ: Արդ, այս ամենայն նշմարութեան
տիպ ումի:

Արդ, մշխարաց փոխադրութեան դէպքն այս կերպով կը լմնայ:
Բայց Կարելի է երևակայել Վաղարշապատու մորակազմ եկեղեցոյն
մէջ և մորադարձ Հայոցմէ առ սուրբ վկայս կատարուած պաշտօն
մի՛ առանց այն պաշտաման համապատասխանող վկայից իրակա-
նութեան, ինչպէս երևակայեց Գուտպիտ: Ըստ իս, այսպիսի բան մի
ենթադրելն ուրիշ բան չէ՝ բայց եթէ եղջերուաչաղս ծնանել, և ուղ-
ղակի հակառակել Հռիփսիմեանց, մա մամաւանդ Գրիգորի պատմու-
թեան, որում հարազատութիւնը Գերմանացիին իսկ ընդունած է ՚ի
բազում տեղիս և նշմարիտ պատմութիւն ամուսանած: Այժմ կը
մնայ ուրեմն ըսել, թէ կամ Հռիփսիմեանց մշխարքը արտաբոլատ
և ՚ի ձեռն այլոց բերուեցան ՚ի Հայս, Գրիգորի վիրապէն ելլելէն քիչ
առաջ. ինչպէս և յետ այնորիկ բերուեցան Յովհ. Կարապետին և Ա-
թանազիմեայ վկայի մասումքը. և կամ ըսել, թէ իրօք ՚ի քաղաքա-

միջի ամոլ ոստանին չայոց կատարուեցամ սուրբ վկայքս: Առաջին եմթադրութեամ ոչ մի մպաստատր և յայտնի աւամորութիւն չկայ առ Ազաթամզեղ և յազգային մատենագիրս. սակայն իրմ յիմքեամ չէ ինչ ամկարելի. որովհետև Մ. Խորենացի կ'աւանդէ, թէ Մեծիմ Խոսրովու ժամանակէն 'ի վեր կային, ման 'ի Հայս, քրիստոնեայք և թէ բազումք 'ի մոցամէ մահատակուեցամ յայմժամ: Արդ, այս քրիստոնեաներմ եթէ Ասորիքէն եկած համարիմք 'ի հայս և եթէ 'ի փոքում Ասիոյ ճողոպարած, շատ հաւանակամ է, որ Նիկոմոդիոյէն, 'ի Սեբաստիոյ և 'ի Թեսաղոնիկոյ իսկ զումդազումը մահատակողաց ոմանց մշխարքը իրենց հետ 'ի Հայս բերած ըլլային և ծածկուած մնային 'ի հնծամի ամոլ, ճիշդ այն ժամանակմ յորում գճկիպիսիւ մեանս մահատակուած կը պատմէ կենսագիրմ: Սակայն պէտք է խոստովանել, թէ Գրիգորի Պատմութեանմ աւելի համաձայն է վերջին եմթադրութիւնը:

Նշխարաց փոխադրութեան դրուագիմ կը յաջորդէ, յէջ 582, Գրիգորի աւետարանաբարոզ Առաքելութեան դրուագը, Հայաստանի այլևայլ սահմանաց մէջ և կոտց կործանումն. ուր ճարտար գրչութեան մերթն լաւ կը տեսնուի, թէ որքան յեղյեղով են իշխանաց աշխարհի խորհուրդներն և գործերն 'ի խորհրդոց ամտի և 'ի գործոց վերմայնսմ տեսչութեան, որ կը հայի և կը վարէ արդարութեամբ գիտնազոյս, ըստ բնութեան և պիտոյից մոցա: Կոտց և հեթամոտսութեան շերմ պաշտպամ թագաւորն Տրդատ և մորա հետ բոլոր Հայաստանայք՝ քիչ օրուամ մէջ այմպէս խորարմատ կը հաստատուին քրիստոնէութեան մէջ՝ արզելակամին Գրիգորի ձեռքով, մինչև այն զէնքն և զինուորութիւնն, որով կը հալածէին զարքանեակս Քրիստոսի, կը դարձնեն սոստ աստուածոց և հեթամոտսութեան դէմ:

ԾՂ. զխահամարէմ՝ ցծԺԱ. զխահամարն, Տրդատայ պատմութիւնն և գործերն՝ այմպէս կը զուգընթանան Գրիգորի պատմութեան և գործոց հետ, որ դժուար կը լինի այնուհետև որոշել, թէ ո՞ր կը պատմէ զայնս. կամ լաւ ևս ըսելով, արդեօք Տրդատայ թէ Գրիգորի կենսագրիմ իցեն ըմծայելի այս հատուածներս: Այս և սորա մախրմթաց զխոյն մէջ, յէջ 581 և 582, միջանկեալ երկու պարբերութիւնքը, որ կը սկսի. « Ամոլ էր այնուհետև սրտալիղ ուրախութիւն », բառ առ բառ մոյն են ընդ Կորեան ¹: Ահաւասիկ մոր դժուարութիւն մ'աւ, որ Ազաթամզեղայ Բ. Գրոց հարազատութեան վերայ, զէթ ըստ մասին, կասկած կու տայ: Մի և մոյն տեղեաց մէջ և մի և մոյն բառերով հատուածներ, որովք առ Ազաթամզեղոսի՝ քրիստոնէութեան կամ Աւետարանի մուտքն 'ի Հայս, մորա գործած մեծամեծ սքանչելիքն, պլլովք համղերն կը մկարագրուին. առ Կորեան, ըմդմակառակն, մայերէն մշամագրոց գիտի մեծ դէպքն 'ի ձեռն Մեսրոպայ, և մորա գործած մեծագոյն յեղակոխութիւնն և

1. Պատմ. զարուց և մահուան Մ. Մեսրոպայ. տպ. զիննտկոյ, 1883, էջ 13: Այս տպագրիս համեմատ պիտի լինին յիշատակութիւնք ման միւս տեղեաց Կորեան. իսկ Ազաթամզեղոսիմ՝ դարձեալ 1862ի տպագրութեան համեմատ:

վարդապետութիւնը կ'աւամուրուիմ: Թերևս կարելի լինէր պատահա-
կամ համարել այս մտրամշամ երևոյթն, եթէ վերոյիշեալ երկու տե-
ղիքը միայն էին: Սակայն որքամ անդրազոյնս յառաջնքն պնդքամ
և մնամաքամ տեղիք յաճախ սեզ ընդ առաջ կը լինին: Թէլ 584-
586 և 588-589 երկու տեղիքը, յորս կը պատմուի Գրիգորի բերնով
աւետարանի քարոզութիւնն յԱրտաշատ և 'ի Թորոսն, մնամ են
Կորեամ 7-8 էլ տեղոյմ հետ, ուր կը պատմուի Ս. Մեսրոպայ քա-
րոզութիւնն 'ի Գողթնամ գաւառի. միայն թէ առ Ագաթանգեղ՝ դէք
մարդակերպ կը փախչին Խաղտեաց և Կովկասու լեռներն. իսկ առ
Կորեամ, ընդհակառակն, 'ի Մարս: Թէլ 613 յետ ձեռնադրութեան՝
Գրիգորի 'ի ստորոտս Նպատ լերին հասնելն և Տրդատայ ընդ առաջ
մմա երթալու պարբերութիւնը՝ նոյն է Կորեամ յէլ 19, Գ. պարբե-
րութեամ հետ, ուր Մեսրոպը՝ երբ Կ. Պօլսէն վերադառնալով Հայոց
ոստանին կը մտնեմայ, թազաւորն և կաթողիկոսը կը դիմաւորեն
զմա. միայն թէ առ Ագաթանգեղ՝ Եփրատ գետը կը յիշուի, իսկ առ
Կորեամ՝ Ռահ գետը: Թէլ 627, « Եւ այսպէս » սկսեալ՝ մինչև « ա-
ւետարանութիւն », և յէլ 628. « Ջամեմայն ժամանակս » սկսեալ
ցէլն 630 պարբերութիւնը՝ բառ առ բառ նոյն են Կորեամ 22 իջի
պարբերութեանց հետ: Առ Ագաթանգեղ՝ Գրիգորի առաքինագարդ
և խտակրօմ վարուց և զարմանագործութեանց հանդէսը կը մկա-
րագրուի. իսկ Կորիւն՝ զՄեսրոպայմ: Թէլ 631-636, հատուածնե-
րը՝ միշդ կը համապատասխանեն Կորեամ 23 և 24 էջերու հատու-
ծոցը. միայն թէ առաջնոյն քով՝ ընդհատուած կը տեսնուիմ, մի-
ջնակեալ տեղեկութեամբ: Թէլ 636, ՃԻԿ. գլխահամարով սկսող
պարբերութիւնը՝ նոյն է Կորեամ 12 իջի, Բ. պարբերութեամ հետ,
յորում Մովսէս մարգարէական դասով և Պօղոս առաքելական
զմընու կու գամ 'ի ծամօթութիւն Հայաստաննայց. բայց ընտ կենսա-
զրին՝ Լուսաւորչի ձեռքով, իսկ ըստ Կորեամ՝ Հայերէն դպրութեամ և
Մեսրոպայ վարդապետութեամբ: Թէլ 651-652, ինչպէս նաև յէլ
654-655, Տրդատայ և Գրիգորի երթիմ առ Կոստանդնուսու. և Սեդ-
բեստրոս, - մեծաշուք ընդունելութեամ, - ըմծայրմկալութեամ, - և
փառապանծ դարծին հատուածները՝ նոյն են Կորեամ 17 իջին, ուր
Մեսրոպը կ'երթայ 'ի Բիւզանդիոն առ Թէորոս Փոքը և առ Ատտի-
կոս, և կը դառնայ մեծագամծ ռոնկօք և արքայական սպասատրօք
և այլն: Թէլ 657. « Ապա յետ այսպիսի գործոց » սկսեալ պարբե-
րութեանէմ՝ ցէլն 660 եղած պարբերութիւնքն, յորս կ'աւամուրուիմ
Գրիգորի Յաճախապատում հարկց գրութիւնն, - աւետարանական
ըմթացքն, - եկեղեցւոյ վերակացութիւնը, - Տրդատայ և ուրիշ աշա-
կերտելոց հետ զամեմայն ժամանակս կատարուած հոգևոր գործերն
և պարագայքը, նոյն են Կորեամ 21 և 22 էջերու կրկին պարբերու-
թեանցը հետ: Թէլ 661. « Ոչ եթէ 'ի հիմ համախաւոց » սկսեալ ցէլն
663. « Յազգս ազգաց » պարբերութիւնքը, որոնք կը կազմեն Ագա-
թանգեղայ գրոց վերջաքանը, նոյն են բառ առ բառ Կորեամ վեր-
ջաքանին հետ՝ որ յէլ 28:

Այս զարմանալի երևոյթն՝ արդէմ 'ի վարուց անդրադարձամ և

ամերադպրոցին միխթարեամ ¹ Հարքս իրենց այլևայլ հրատարակութեանց: և բարդատութեանցը մէջ, սակայն առանց մասնաւոր կարեւորութիւն մի: տարւ աչմմ. մասնաւոր թէ, չտարակուսեցան բնաւ ուղղակի զԿորինմ համարել: բամաքաղ Ագաթանգեղոսի, և զընել զագաթանգեղոսեան հատուածսմ իբր հնագոյն և հարազատ աղբիւրս կենսագրութեան Մեսրոպայ: Երկու ծանօթ ազգային բաւասելք ևս, ըստ իմոսն գիտութեան, մրցեցան և կը մրցին տակաւին ընդ իրեարս՝ իրարմէ տարբեր կարծեաց լծոյն տակ, և մինչև ցարդ ոչ ոք ՚ի մոցամէ արար: լծրմկէց զմիւս: Գոտշմիդ առաջիմն եղաւ, որ իւր երկասիրութեան ² մէջամաչառ քննութեան եմթարկեց բոլոր այս տեղիքս և ցամկեց իսկ առըմթեր զործոց Գրիգորի և հոկիսիմեանց վկայաբանութեան: Ըստ կարծեաց գերմանացի քննադատին 1. Ոչ եթէ Կորինմ այլ Ագաթանգեղոս է բամաքաղմ. 2. Կորինմէն առնուած տեղիքը՝ մերմուծուած են Գրիգորի հնագոյն կենսագրութեան հատուածոց մէջ, բայց ոչ եթէ ամոր հեղինակմ այլ յետիմ ժամանակի գործակից ոսմ համարելու ենք իբր արարող այս բամաքաղութեանցս. 3. Թէ այդ գործակցին կատարեալ և ծառայարար մասնութիւնն, որ աստ պայծառ կը տեսնուի, կ'երաշխաւորէ մեզ, թէ այն հնագոյն աղբերքը՝ զորս մա ընդօրինակեց, մոյնը բառ առ բառ վերստիմ կ'ըմծայէ մեզ՝ ըստ էական մասին:

Սակայն, ըստ իս, ոչ Ագաթանգեղոս եղած է բամաքաղ Կորեան, և ոչ Կորինմ ուղղակի բամաքաղ համարելու ենք Ագաթանգեղոսայլ մա ինքն Կորինմ է բամաքաղ ինքեան: Տեսնեմք զզինարդմ գործոյս:

Արդ, զորքեան համգոյցէն աւելի այս կմնոտս խնդիրն յաշողութեամբ լուծելու ճամար, պէտք է, մախ, Կորեան երկասիրութեան հարազատութիւնն ապացուցանել, որքան որ գործս կը մերէ: Առ այս, մախ, կարևոր կը համարիմ ծանուցանել հետևեալը՝ զոր Գոտշմիդ բնաւ դիտած չէ. այսինքն է, յամում Կորեան կրկին **Պարտաւիանդ Ս. Մեսրոպայ**, մեզի հասած են, որոնք իրարմէ շատ կը տարբերին. այնպէս որ ՚ի միոյն ձեռնարկեալ հետևութիւնքը կաւրող են միտոյն ձեռքով ոչըմչամալ: Առաջիմն է ընդարծակ, որոյ տպագրութիւնն եղաւ յամին 1833, ՚ի հնագոյն և ՚ի վաւերական երկու մտարգիր ձեռագրոցս, **Մարտապարտիանդ Եփեսոսաց**, խորագրով: Իսկ միւսն՝ համաւոտս, որում հրատարակութիւնն եղած է յամին 1854, պարիգեան արքունի մատենադարանի հնագոյն և կէս երկաթագիր ձեռագրին համեմատ, և ՚ի շարս Հոյ. Ստեփանոս կը կազմէ ժԱ. հատորը: Այժմ բաց ՚ի վերոյիշեալ երկու մտարգիրներմ կամ մաև երեք ուրիշ օրինակներ ևս, որք գրեթէ համաձայն են 1833ի հրատարակութեանը: Պարիգեան ձեռագիրը միայն է, ուրեմն, որ

1. Զամչեան, Պատմ. Հայոց հտ. Ա. էջ 668-669: 2. Գարեգին, Հայկ. հիմ Դպր. Բ. տպ. Վնենտկոյ, 1886, էջ 294: Եւ այլ ոսմ ՚ի լուսանցս Բ. օրինակին Կորեան, զոր ՚ի հնագոյն ձեռագրէ միողէ օրինակեց Տիրացու Գէորգ և առաքեց ՚ի վանս:
2. Agathangelos, s. 24-31.

սոյմ բացատրութիւնը կը մերկայացնէ մեզ, զէթ ըստ իմ ծանօթու-
թեանս. բայց նորա հմութիւնը՝ մեծ մշամակութիւն ունի: Ոճը սեղմ
է, աւելի ազդու, կոկ և հասկամալի: Բարդատելով 1833ի հրատա-
րակութեան հետ, դուք կը կարծէք, թէ մի և մոյմ անծին և միւթոյն
վերայ ճառող երկու յիւրարմէ տարբեր հեղինակութիւններ լինէին:
Կարծեմ, թէ չեմք սխալիր յասելն, թէ Մեսրոպայ այս համառօտ
պատմութիւնս՝ ճիշդ այն կերպով կը գտնուի ըմբարձակին մէջ, ինչ
կերպով որ կը գտնուին ըմբարձակ պատմութեան վերոյիշեալ հա-
տուածները՝ Ազաթամզեղայ գրոց մէջ. այս ինքն է, ոչ այն միայօր
շարունակութեամբը, զոր ըմբերցողը կը մկատէ համառօտին մէջ.
այլ շարունակ ընդհատուած եմ իրեցնմէ ըմբարձակագոյն տեղեկու-
թեամբք, որովք բոլորովին նոր և տարբեր պատմական եղելութիւն
ներ կը յայտնեն, զորս 'ի գուր է որոնել համառօտին մէջ: Արդ,
Մեսրոպայ համառօտ պատմութիւնն՝ եթէ Կորեան հարազատ եր-
կասիրութիւն համարինք, այն ժամանակ Գուտշմիդի ենթադրու-
թիւնն հիմն 'ի վեր կը տապալի. որովհետև հազիւ թէ երից կամ
չորից տեղեաց մնամութիւն կայ ըմդ այս և ըմդ Ազաթամզեղ, և այն
իսկ՝ ոչ այնպէս բաւ առ բաւ:

Սակայն քանի որ իրն յիմքեան, այս ինքն է, այդ երկասիրու-
թեան հարազատութիւնը տարակուսական է, ես չեմ կարող բա-
սական ապացոյց համարել զայս ըմբէմ Գուտշմիդի: Այլ զայս կա-
րեմ ասել, թէ Մեսրոպայ այդ համառօտ պատմութիւնն՝ այդ վի-
ճակի մէջ չէ պարտ համարել ամբողջական գործ մի Կորեան. այլ
նորա ըմբարձակ պատմութեանն ըմտրանօք եղած ծաղկաքաղ մի
վարուց Ս. Մեսրոպայ, զոր ըրաւ յետագայ ոսմ յըմբերցումն իւր և
կամ վասն հոգեսիրի ուրումն, և կամ յօրինող ոք ծառնմտաց:

Եւ ստուգիւ ապացոյց եմ այս բանիցս, մախ, Լուսաւորչայ, Սա-
հակայ և մորին իսկ Մեսրոպայ ուրիշ կենսագրութիւններն: Բ. Հա-
ւանօրէմ այսպիսի պարագայով մի Կորեան յատուկ և այլոց անի-
մանալի խրթմարանութիւնքը, որոց ստէպ կը հանդիպի ըմբերցո-
ղըն ըմբարձակին մէջ, աստ, ընդհակառակն, կոկուած և պար-
զուած են, ըստ մեծի մասին: Գ. Եթէ այդ երկասիրութեանն դուրս
թողուրք Ազաթամզեղայ մնամարան հատուածներն, կը մնայ մի
քանի էջ բան, որ ոչ միայն չիմէր արժամի Կորեան, այլ և ոչ իսկ
կարէ լինել ստոյգ կենսագրութիւն վարուց և գործոց Մեսրոպայ.
որովհետև աստ զանց եղած են բոլոր այն պատմական անծինքն և
պարագայները, զորս 'ի մէջ կը բերեն Մովսէս և Ղազար՝ յամուն
Կորեան: Այս այսպէս լինելով, ուրեմն կը մնայ ըմբարձակ իբր հա-
րազատ և ամբողջական գործ Կորեան 1833ի հրատարակուած ըմբ-
արձակ Մեսրոպայ Պատմութիւնը:

Յիրախ, այս բանիս յայտնի ապացոյց պէտք ենք համարել, մախ,
Հայկ. Սոփերաց հտ. Բ, էջ 5. Ս. Սահակայ և Մեսրոպայ Պատմութեան
ամանուն՝ բայց ոսկեգրիչ հեղինակի՝ վկայութիւնն, որ 'ի բազում

1. Բաց 'ի ըմբարձակ համաձայնութեան պատմական իրաց՝ կը զբո-
ւոնուի 'ի բազում տեղիս համաման հատուածք բանից և բացատրու-

------------------	--------------	-----------------	--------------	-----------------	-----------------	--------------------	-------------	------------------------	--------------------	--------------	--------------	---------------	--------------	--------------------	---------------	---------------------	-------------------	---------------	--------------	------------------	----------------	----------------------	--------------------	-------------------	-----------------	-------------------------	--------------------	-----------------------------	------------------	------------------	----------------	--------------	------------------	------------------	-------------	---------------------	---------------------	---------------------	---------------------

Արդ, այս ցուցակէս կարելի է հետևցնել, թէ Արշակայ ժամանակէն 'ի վեր Գաղթարացոց կամ Ալուանէց, Գաղթեց և Ռաբիացոց սահմանակալութիւնքն, այլ ոչ ևս վերաբերէին Հայոց. այլ կամ Պարսից իշխանութեամ տակ իմկած էին և կամ ինքնագլուխք: Այս բանս յայտնի կը տեսնուի մոյմպէս Սահակայ Գահմանակէն, և Եղիշէի Դ. Եղմ. 160, և Ե. Եղմ. 173, իշերէն. ուր հեղինակը մի առ մի թուերով, Գահմանակիմ՝ համաձայն, Հայոց թէ՛ ուրացեալ և թէ՛ ուկտապահ իշխանաց տոհմերն, վերոյիշեալներուն բնաւ յիշատակութիւն չըներ: Բ. Ս. Սահակայ ժամանակ՝ Աբիդեանց, Ալշեանց, Մարդուբուանեանց և Մալխաթեանց տոհմերն ևս բարձեալ էին 'ի միշոյ համգոյն Ռբուանեանց, Մանապեցի և Բշնանեանց: Ասոնց ամուսնքն ևս չեն գտնուիր առ Եղիշէի, որ մշամ է, թէ Սահակայ Գահմանակիմ մէջ ևս եղած չպիտի լինէին:

Յամուն Տրդատայ՝ առ Ղևոնդիոս, եպիսկոպոսապետն Կեսարիոյ, գրուած մամանկիմ մէջ՝ պնակիսի պարագաներ կը յայտնուին, որք գէթ ըստ մասին, տարակուսելի կ'ընեն մորա հարագատութիւնը: Նախ այս հրովարտակիս « պատմեմէն յառաջ՝ կենսագիրն պատմելով մախարարաց և Գրիգորի չում դէպ 'ի Կեսարիա Գամբաց, յետոյ ուրեմն կը յարէ այսպէս. « Եւ հրամայեաց (Տրդատ) հրովարտել Քրիստոսի զոչն ոչ »: Եւ իրօք ամմիշապէս կը յաշորդէ « Պատմէն հրովարտակիմ ». բայց բոլորովիմ ամսովոր՝ քան թէ պաշտօնագրութեան ձևով: Եւ սորա յաշորդ, այսինքն է ծծԳ գլխահամանըստ, առաջին բացատրութիւնը՝ վերստին կը կրկնուի. « Եւ պատմէն հրովարտակիմ Քրիստոսի զոչն ոչ ». և մի անգամ արդէն պատմուած չում՝ դարձեալ կը սկսի պատմել այսպէս. « Եւ կազմեցան, պատրաստեցան, և այլն »: Արդ, աստ երկուստեք կրկնութիւն կայ; և երկաքամչիւրին բնականէ դուրս լինելով՝ ակնբեր կը տեսնուի: Առ Սիմ. Մետափրատէսի և 'ի հրատարակութեան Լամբլուայի՝ այս հրովարտակիս յիշատակութիւնը միայն կը գտնուի. իսկ Լագարդի յիշեալ հրատարակութեան մէջ ամբողջապէս կայ, բայց հրատարակիչը չի գուրցեր, թէ ուստի՞ առել է, 'ի փորձնմտեանմ թէ վատիկանեան մի այլ ձեռագրէ:

Բ. Դիտելու կէտն է, զի Տրդատ՝ Գրիգորի ձեռնադրութեան առթիւ գրուած այսպիսի մի պաշտօնական թղթի մէջ՝ մէկ կողմէն Հովիսիսեանց զայտեան, — իւր ամմիտ մեմամարտին, — ամօթալի պարտութեանն և խոզակերպութեան պատմութիւնը կ'ընէ. իսկ

1. Agathangelos, s. 69-70, ուր հայերէնի. « չրամայեաց հրովարտակ գրիւ օրինակ զայս », հետևեալ կիրպով ✠ Խօսո յից Երուսաղիմ գրուած է յունարէն փոքր երկաթագիր ձեռագրին մէջ, ըստ վկայութեան Դր Լագարդի (So steht in kleinen Uncialen vor der Seite im Texte): Արդ այս բառերու սկիզբն և վերջը դրուած մշամներով ոչ աստեղանիշ են և ոչ խաչանիշ, որով իրն անհասկանալի կը մնայ. առաջինն եթէ յունարէն Խօս բառին իբրև մշամակ համարինք, վերջինը դարձեալ անսկզբնի է. սակայն այսպէս կամ այնպէս՝ ուշադրութեան կէտ մի է և պաշտօնական ձև:

միւս կողմէն կ'ըսէ. « Վասն այսօրիկ տասեցոյ մեր առ ձեզ ար Բը-
խտորս՝ իշխանս պարտականս զաշխարհիս մերոյ մեծի, զի պարտեցնե-
յեջ զամենայն սքանչելիս Աստուծոյ » : Այս երկու պարագայքս
իսկ՝ անյարմար եմ և իրարու հակասող : Յիրաւի, եթէ իւր մեծա-
մեծ իշխանները Հայաստանի մէջ եղած սքանչելիքը պատմելու հա-
մար միայն դրկած էր թագաւորն ըմդ Գրիգորի, իրեմ իմչ հարկ
կար փութալ պատմել զամենայն : և եթէ իմքը՝ զրով պատմեց, իմչ
հարկ կար իշխաններ ուղարկել առ այն : Դարձեալ, Յուսկամ և մե-
ծիմ Ներսիսի ևս նոյնպէս ուղեկից իշխաններ դրկուեցան ժամանա-
կաւ, առանց հրաշքներ պատմելու մպատակաւ : Ղևոնդիոսի առ
Տրդատ գրուած թղթին յետագայ խօսքերն ևս, թէ « Վասն կենսա-
տուր փրկութեանդ հասելոյ ձեզ յԱստուծոյ որպէս մեզ պարտեցաւ »,
կը ցուցնեն, թէ Տրդատայ առ հայրապետն Կեսարու գրուած թղթ-
թիւն մէջ վերոյիշեալ պատմութիւնքը չէիմ բովանդակուէր. այլ մա-
'ի խոստովանողէմ Գրիգորէ և մորա ուղեկիցներէմ լսեց այն բանե-
րը. ապա թէ ոչ՝ պիտի գուրցէր, թէ որդե՛ս Բըխտոր կամ Բըխտո-
մեզ : Եւ յիրաւի, յէջ 603, կ'ըսուի. « Տուեալ ողջոյն, և պարտեալ
նոցա (այսինքն է հայրապետին և ըմթերակցացն) որ մասնօրէն եղեալ
յԱստուծոյ, և մատուցիմ զթուղթ թագաւորին առաջի սրբոյ քահա-
նայապետին » :

Գ. Մի և նոյն թղթին մէջ, յէջ 600, տալով խօսել Տրդատայ զո-
ղորմութեանէմ Աստուծոյ, կ'ըսուի. « Միմչև 'ի որս յեղ կոթանն յայտ
յանքիման (տեսլեամբ) զուրմ իմքմ Գրիգորդ մեզ հովիւ և տեսուչ կա-
ցուցանել » : Արդ, այս բացատրութիւնս՝ վերոյիշեալ հրեշտակի ե-
րևումը կ'ակնարկէ, յըմտրել զԳրիգոր կաթողիկոս, որուն համար
ըսուեցաւ իսկ, թէ տարբեր յաղքեր է. այսպէս և այս՝ պէտք է որ
նոյն հեղինակութեամ վերաբերի. իմչպէս 599 իշի հատուածն այլ
Տրդատայ խոզակերպութեամ անհարազատ հատուածները կ'ակնար-
կէ, և ամոնց հեղինակին ըմծայելի է : Դ. յէջ 601, հիմզ տող հա-
տուածն, որ կը սկսի. « Մեզ զԳրիգորդ տեսուչ » և այլն, մնան է
600 իշի հատուածին : Բայց լոկ կրհնութիւն իմչ համարելի չէ ա-
ռաջնոյն, այլ իրեն մասնական հիմն և աղբիւր մորիմ :

Արդ, բոլոր այս ներքին պարագաներէս և յանճահ կրկնութեանց,
չիցէ՛ մարթ եզրակացնել, թէ այդ թուղթը կամ եկամուտ հա-
տուածներով ըմդհատուած է, և կամ ամբողջապէս անհարազատ
համարելի : Վերջին կարծեաց հակամէտ կ'երևի Գուշմիդ, բայց ա-
ռանց քմնական փաստեր առ այս մէջ բերելու : Իմ կարծիքով,
Տրդատայ առ Ղևոնդիոս գրուած թղթոյ մի գոյութիւնն՝ ամօխտելի
է. որուն ապացոյց կը համարիմ մախ Ղևոնդիոսի առ Տրդատ ուղ-
ղեալ պատասխանւոյն մէկ տեղիմ, ուր կ'ըսուի. « Եւ հարտարեալ
կոյցե վայտախնան 'ի մեջ երկոց կոթանեց » : Այս խօսքերս կը ցուց-
նեն, թէ ստուգիւ Հայոց թագաւորին և Կեսարիոս հայրապետին մէջ
զրատը դաշինք մի եղած է, ամտի առնուլ զձեռնադրութիւն կաթո-
ղիկոսացն Հայոց : Բ. Փաւստոս Բուզանդացիմ ևս Դ. Դպրութեան Դ.
զլիւոյն մէջ և Գ. Դպրութեան ժ.Ձ. զլիւում պատմելով Փառննի և

Ներսիսի երթն 'ի ձեռնադրութիւն, կը յիշէ և « զհաստարիմ հրովարտակա թագաւորաց մերոց և կաթողիկոսացն » (յայտ է թէ վախճանելոց և կամ եպիսկոպոսացն) առ կաթողիկոսն Նուսիոսս », զոր ես իբրև Տրդատէն սկսեալ դաշնագիր մի եղած կը հասկնամ . յորում ապա յաշորոք մորա դմէիմ զձեռնագիրս իւրեանց : Գ. Ագաթանգեղոսի 603 իշում, որ Գրիգորի պատմութեան հարազատ աղբերէմ է՝ ըստ այլևայլ հարգամանաց, որոշակի կ'ըսուի . « Նւ մատուցիմ զթողթ թագաւորիմ առաջի սրբոյ քահանայապետիմ, և մա մեծաւ խնդութեամբ ըմկալեալ և ամենայն քաղաքացեացմ մեծաւ խնդութեամբ » : Իսկ գալով մեր ձեռքն հասած թղթոյմ կ'ըսեմ, թէ մախմարար մէջ բերուած համզամանաց համեմատ, զէթ սկզբնաւորութենէն մինչև « Ընդունելութիւն աղօթից ձերոց և սրբութեանդ » պարբերութիւնը՝ ամհարազատութեան տիպ ունիմ : Իսկ 'ի Ոկատի ունելով Ղևոնդիոսի առ Տրդատ գրած պատասխանական թղթոյմ մէջ յայտուած դէմընդէմ համզամանքը, կարծեմ թէ ամտեզի չէ ըսել, թէ Տրդատայ ըմպալուած թողթիմ ըստ ամբողջութեան իսկ՝ յետ ժամանակաց յերիւրեալ է, Ագաթանգեղայ գրոց խմբագրի ձեռքով, հիմն ունելով 603 իշի քիչ առաջ մէջ բերուած տեղիմ Փաւստոսի վերոյիշեալ երկու տեղիքը, յորս կը լինիմ արքայական հրովարտակաց յիշատակութիւնք : Այս կարծիքս դեռ աւելի պիտի պարզուի Ղևոնդիոսի թղթոյմ վերայ լինելիք քըմնական ապացուցութեամբք : Այժմ անցնիմք յաշորդ իրաց քննութեանը :

Գրիգորի արքայական շքեղութեամբ դէպ 'ի Կեսարիա ուղևորութեանն, - Փոքր Հայոց քաղաքներէն խոստովանող վկայիս գտած մեծամեծար ընդունելութեանց, - Կեսարիոյ՝ մօրն քաղաքաց դըրորմանն, - դաս դաս քահանայից՝ կամիեղօք և եկեղեցական երգօց զփառաբերեալ մահատակն ընդունելուն, - իշխանաց և ժողովրդոց առ մա ցուցած մեծարամաց, - բազմաթիւ եպիսկոպոսաց գումարմանն, - Գրիգորի համդիսապէս ձեռնադրութեանն և գումարագումդ քահանայիւր և կրօնաւորոց 'ի Հայս վերադարձի հատուածներն, որ կենդանի գոյնով մկարագրուած են, այնպէս լաւ կ'ըմդգրկեն զիրեարս և քաջ կը պատշաճիմ այն մուկրական ամծին և իրաց, զորս չէ կարելի գատել 'ի միսեանց, թող թէ մոցա հարազատութեանը վերայ տարակուսել : Բաց 'ի մերքիմ համզամանաց ¹, արտա.

1. Յէջ 604, կ'ըսուի . « Նւ եղեալ ժողով բազում եպիսկոպոսաց 'ի քաղաքիմ Կեսարացոց՝ զի ձեռնադրեսցեն զսուրբ Գրիգորիոս, և աւամդել 'ի Ոս զպատիւ խոմարիութեան քահանայութեան Ջրիստոսի, և զբարձրութիւն եպիսկոպոսութեան փառաւորութեան Աստուծոյ զմեծ պատիւն . սրբով արեւտարամաւ եղին 'ի վերայ ձեռս ժողովք եպիսկոպոսացն սրբոց և վելաւորն Ղևոնդիոս . զի առցէ մա իշխանութիւն յերկինս և յերկրի, առնում փականս արքայութեան երկմից » :

Այս հակիրճ տողերուս մէջ՝ հետեւեալ կարևոր իրողութիւնքը կարտայայտիմ, որք համածայն են հիմ ծիսակատարութեան եկեղեցոյն Յունաց և Հայոց . Ա. Ձեռնադրութիւն Գրիգորի 'ի քահանայութիւն, որ ըստ գեղիցիկ զամզամութեան հեղինակիս, է պատիւ կամ աստիճան խոմարիութեան քահանայութեան Ջրիստոսի : Նւ այս կարի պատշա.

քին վկայութիւնք իսկ կը հաստատեն զստուգութիւն իրացս: Ջեմոր՝ Տարօնի պատմութեամբ 23 իջում, և Փաստոս՝ համառօտիւ կը յիշա տակեն մեծաւ բազմութեամբ Գրիգորի երթն ՚ի Կեսարիա, զձեռնա գրութիւնն ՚ի Ղևոնդիոսէ՝ մեծաշուք համողիսիւ և զբարձն. որով եր կոքեամ իսկ կը թուիմ ցուցնել, թէ վերոյշեալ ղհպաց պատմագրու թիւնմ՝ ուրիշիմ յանձնուած էր ընել, և կամ արդէն իսկ եղած գը տամ, ոստի աւելորդ համարեցամ ընդարձակօրէն աւամոզել:

Յէջ 606, յորում կը ծանուցուի Ս. Գրիգորի գալուստն ՚ի Հայս՝ յասելմ. « Եկեալ հասանէիմ ՚ի Հայաստան աշխարհն », յաշորդ պարբերութիւնն անմիջապէս դարձեալ մախըմթացիմ մնամ բա պատրութեամբ կը սկսի. « Եւ իբրև եկն եհաս ՚ի սահմանս Հայոց, լուսա թէ Վահեկահեան մեհեանն մնացեալ է յերկրին Տարօնոյ »: Այս երկու պարբերութեանցս, այսինքն է, միոյմ վերջաբանին և միւսոյմ սկզբնաւորութեան մէջ՝ ոչ միայն կրկնութիւն կայ, այլ մակ հակասութիւն ինչ կը տեսնուի: Եւ յիրաւի, քաշողութեամբ միան զամ Հայաստան հասնող Գրիգորին՝ վերստին Հպոց սահմանա զուխմբուրն վերայ գտնուիլմ՝ ամհասկամալի է, եթէ օրէն իցէ զՏա րօն սահմանագլուխ ամուանել: Սակայն եթէ Տրդատայ ժամանակի Հայաստանի սահմաններն ուշի ուշով մկատենք, զորս կ'ընծայեն

ճագէս, զի քահանայութեամբ եղաւ Քրիստոս միջմորդ և պատարագ հաշտութեան ընդ Աստուած և ընդ մարդիկ. իսկ միջմորդ և պատարագ լինելու համար՝ պէտք էր որ բաց յԱստուածութենէմ ունեմար մակ ըզ մարդկային ըմութիւն, որով կարելի ըլլար հպատակել զինքն չօր, խո մարհիլ յաղբրս և լիմել պատարագ: Բ. Եպիսկոպոսական ձեռնադրու թիւնը կամ աստիճանին բարձրութիւնը, զոր մանեցուցել է Աստու ձոյ փառաւորութեան. որովհետև բարձրագոյն տեղին ունի եկեղեցա կան կարգաց մէջ և յաստուածակոյս կողմանէ ամտի՝ Եպիսկոպոսն է, որ կը հովուէ զհաւատացեալ հօտն Քրիստոսի. յեպիսկոպոսական իշ խամութենէ ամտի յառաջ կու գան ամեմայն տուչութիւնք կարգաց և իրաւասութեան ՚ի քահանայս: Գ. Թէ Եպիսկոպոսապետ ձեռնադրելու համար ՚ի հնումմ՝ ժողով կը զումարուէր բազմաթիւ Եպիսկոպոսաց՝ առ հայրապետն, մախ ըմտրելի Եպիսկոպոսին կեանքն և արարքը քըմ Սելու համար, ապա առթմեբակայ լինելու հայրապետին՝ ձեռնադրու թեան ժամանակ, իբրև գործակից և վկայ մեծի տուչութեան: Ջայս յայտնապէս կը ծանուցանեն մակ գիրք ձեռնադրութեան Եպիսկոպոսին Հայաստանեայց եկեղեցւոյ՝ յասելմ. « Իսկ կաթողիկոսն ժողովէ երկու տասան Եպիսկոպոսս կամ վեց կամ ՚ի պակասմ երեք և առնէ Միւմհո ղոս և առաքէ զմա (զձեռնադրելիմ) քմնիլ ամղ »: Այս բանս թէպէտև լատինաց ծիսակատարման ևս կը մնանի, բայց իծմ կը թուի, թէ ուղ ղակի ՚ի Յունաց անցաւ առ մեզ՝ Հայաստանեայց լուսաւորչիմ ձեռքով և ըմդելացաւ. հաւաճօրէն յետոյ ուրեմն, ՚ի ձեռն անարժամից ունաց, խանգարուեցաւ. բայց Շմորհալիք և լամբրոմացիք վերստին իմղեցին զայն, ըստ հմազոյմ արարողութեան: Գ. Կը ծանուցուի աստ ձեռնա դրութիւնմ Աւետարանաւ. այս իսկ կը գտնուի այժմ ՚ի գիրս ձեռնա դրութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, այսպէս. « Եւ հայրապետն բա ցեալ զԱւետարանմ՝ զայն տեղին յորում գրեալ է. Հօգի Տեառն ՚ի վե րայ իմ, և Էօժ իսկ զիս. և եղեալ ՚ի վերայ թիկանցմ, և քորեպիսկոպոս մի բունէ և հայրապետն դմէ զաջմ ՚ի վերայ գլխոյմ, և այն »: Ե. Թէ Գրի գորհոս և թէ՛ Ղևոնդիոս ամուանքը՝ յումական ձևով գրուած են, որ մշան է յումարէն բնագրի:

մեզ զիրք Ազաթամզեղայ 627-628 էջերում, կը տեսնենք, որ ծա-
րոմ՝ ոչ մի կողմէն սահմանաժայր չի կազմեր, այլ մամուլանդ թէ
կեդրոնատեղւոյն, այսինքն է Արարատեան մահամզին կից զաւառ-
մներէ մին է, ուր հասնելու համար Գրիգոր՝ հարկ էր, որ ~~Գրիգոր~~
և ~~Բարձր~~ Հայոց քամի մի զաւառներն արդէն կտրած անցած լինէր:
Եթէ ստուգիւ և որոշակի մշամակուած լինէր Գրիգորի 'ի վերադար-
ծին բռնած ուղիւ, շատ անելի յայտնի պիտի լինէր հատուածոցս
հակասութիւնը. քայց որքան որ որոշակի մշամակուած չէ, սակայն
Ազաթամզեղոսի 604 իջն և Զեմորայ 23 իջն կարելի է եզրակա-
ցնել թէ, թէ Գրիգորի 'ի Կեսարիա երթին և դարծին և թէ Տրդա-
տայ հռովմէն առաջին անգամ գալու և վերստին երթալու ուղիմ
էր այն արքունական ճամպարոյն, որ 'ի Վաղարշապատէն կը հա-
մէր 'ի Բասեան կամ 'ի Հարք, ամտի 'ի Կարին, Կարինէն 'ի Բա-
բելոն, Բաբելոնէն յեկեղեցաց, աստի 'ի Սեբաստիա, և Սեբաստիայէն
'ի Կեսարիա:

Տարօմ զաւառում համդիպած դիպաց յիշատակութիւնը՝ բազ-
միցս կրկնուած կը գտնենք մաս առ Փաւստոսի և Զեմորայ. քայց
ուր վերջինս Գիսամէի և Դեմետրի վերայ կը դարձնէ ամբողջ պատ-
մութեան ըմթնացքն, առ Ազաթամզեղ, ընդհակառակն, Ամահտայ,
Աստղկան և Վահագմի վերայ կը հորովի: Աստ երկու հեղինակու-
թեանցս մէջ մեծ տարածայնութիւն կայ, իմչպէս յառաջագոյն ծա-
մուցի: Զեմորայ մասին արդէն խօսուեցաւ. այժմ ըմթերցողին ու-
շաղորութիւնմ Ազաթամզեղայ 607 իջի Բ. պարբերութեանը վերայ
կը դարձնեն, որ կը սկսի. « Իբրև դարձեալ գայր (Գրիգոր) 'ի կող-
մանց Յուանց՝ բարձեալ բերէր ընդ իւր մշխարս իմչ յովկերացմ ...
Յովհաննու և ~~Գրիգոր~~ Վայն Գրիգորի Արամազինէս »: Դիտելու եմք,
որ այս պարբերութիւնս ըմու կապ չունի իւր մայրնութացին հետ,
որ հետևեալ բառերովս. « Արդ, դիմեաց զալ սուրբն Գրիգորիոս, զի
քամդեսցէ և զայն », (այսինքն է, զՎահանգիսեան մեհեանը) կը վեր-
ջանայ. և ոչ իսկ յետագայ պարբերութեան հետ, որ ճժԾ գլխահա-
մարով կը սկսի: Յիրաւի, ի՞նչ կը մշամակէ Վահանգիսեան մեհեանի
վերայ խօսած ժամանակ՝ յամկարծակի ընդոստմամբ ացնիմ Յովհ.
Մկրտչիմ և Աթամազինեայ մշխարաց: Արդ, ակնբեր կը տեսնուի,
թէ այս վերջինս միջամկեալ հատուած մի է. և թէ « Իբրև դարձեալ
գայր » բացատրութիւնը գլխովին անելորդ է, վասն զի յէջս 505-
606 արդէն Գրիգորի գալուստն 'ի Հայս ծամուցուեցաւ. իսկ աստ
մշխարաց հատուածը մերմիւծելու, մամուլանդ թէ մայրորդին հետ
կապելու համար միայն կրկնուած է: Սակայն այս բանս դեռ անելի

1. Առաջին օրինակի մէջ միայն այսպէս գրուած է. իսկ յայլս. « Ըզ-
տուրբ վկային Քրիստոսի Աթամազինէիմ ». այս ըմթերցումս անելի միշդ
է, վասն զի իսօքը սրբոց մշխարաց մասին է. և ոչ թէ կեանքանի վկայն
եբեր ընդ իւր Գրիգոր: Բ. յունարէն օրինակին մէջ իսկ, ըստ հրատարա-
կութեան լազարդի, կը գրուի "Ελαβεν δε των λειψάνων του μεγαλου προ-
φητου και Βαπτιστου 'Ιωάννου και 'Αθηνογένου του μαρτυρος. իսկ ըստ
սպ. լաւագուայի՝ միայն Յովհ. Մկրտչիմ կը յիշուի:

զգալի կը լինի՞ ՚ի յետագայս. այսինքն է, յէջ 608 առաջին պարբերութեամ մէջ՝ կառածիզ և սպիտակ շրիմներում՝ սքամչելօք՝ զկայ առնուլս, և հրեշտակին՝ մասնաւոր յայտնութիւնն առ Ս. Գրիգոր՝ ծանուցանելէ մերջ, կ'ըսուի. « Բազմութիւն զօրաց մէն սատարեալ շինեցին զվկայարանս և զսուրբսն ՚ի համգիստ փոխեցին »: Իսկ երկրորդ պարբերութեամ մէջ կ'ըսուի, թէ « Եւ միմջեռ զշինուած մատրանն կազմէին, հրամանս ետ Գրիգոր զօրակամին և իշխամաց, զի միճօք տապալեսցեն զշինուածս բազմաց »: Այս երկու տեղեաց մէջ հակասութիւն կայ, եթէ լրարմէ տարբեր յարբերաց առնուած չհասմարինք զմոսս. որովհետև յառաջնոյն մէջ վըկայարանաց շինութիւնն և նշխարաց փոխադրութիւնն՝ արդէն իբրև կատարուած կը պատմուի. իսկ ՚ի վերջումն ղեռ այս ինչ կը պատրաստեն մոցա շինութեամ միւթերը: Ազատեանգեղայ սոյն տեղեացս առաջինը՝ տրամագծապէս կը հակառակի մաս Զեմորայ. զի ասորի հեղինակս, որ մասնաւոր կերպով ուշադրութիւն դարձուցած է Տարօմի պատմութեամ վերայ և աւելի մամրամասնօլէմ զբաժ, 25 իլէմ մինչև 34 էջերում կ'աւամդէ, թէ մայի 14-ը աւանի երկու բազմներն՝ անհրազօրն Տրդատ կամ լաւ և Ամգեղ

1. Այս դէպքս կ'աւամդեն մեզ մաս ֆաւստոս, Գ. Դպր. զլ. ԺԴ, և Զեմոր՝ ՚ի վերջկոյս առաջին թղթին կամ պատմութեամ իմնակնեամ տեղեաց, յէջ 38: Եւ վերջնոյս աւամդած տեղին գոգցես իմն մոյն է ըմբ բամից Ազատեանգեղոսի. զի այսպէս կ'ըսէ. « Իբրև հեռացաք ՚ի գետոյն Արածամու իբր ձիոյ արշաւանօք երկու կամ երեք, և իբրև մերձեցաք փոքր ձորակին, և կամէաք անցամել... ապա շորեք կառացմ յայմկոյս ձորոյն ոչ կարացին անցամել, և մտան: Ապա հրեշտակն յայտնեալ՝ արգել զԳրիգորիտս, և ասէ. Համեցաւ Տէր սրբօղբ բմակել ՚ի տեղոյն այս »: Միայն թէ փոխառակ Եփրատայ՝ Արածամի կը յիշուի առ Զեմորայ, զի բազուկ ինչ էր Եփրատայ: Զայս կարելի է միացնել առ Ազատեանգեղ. « Զուր մի սակաւ », և առ ֆաւստոսի. « Դոյզմ ծորձորակ » կոչուածին հետ, յորում Գրիգոր մկրտեց զուղեկիցս իւր և զզօրս: Ազատեանգեղայ վերոյիշեալ աւամդութեամը՝ կարելի էր իբրև աղբիւր համարել Զեմորայ այս տեղին, եթէ սա ևս ամհարագատութեամ մշամներ չի ցուցներ յայտնապէս: Արդ. Զեմորայ այս բացատրութիւնս, թէ « Իբրև հեռացաք... կամէաք անցամել », կը թուի ցուցնել, թէ նա ակամատես էր այն դէպքին գոյգ ըմբ Գրիգորի. իսկ ՚ի վերջ պարբերութեամ կը յայտնէ, թէ ՚ի Ս. Գրիգորէ միայն լսած էր զայն, յասելմ. « Քամ զայս սյլ պատմաւս ՚ի Ս. Գրիգորէ ոչ լուսաք »: Ուստի ես աւելի հաւանակամ կը համարիմ ըսել, թէ երկրքեամ իսկ՝ ՚ի Մաղաքիայ, աշակերտէմ Մարուգէի, առած են այս տեղին և յարմարցուցած Մատրավանից շիմութեամ. որ կ'ըսէ Յակ. Մճբմացու և Մարուգէի վարուց մէջ, թէ երբ կ'որոնէին եկեղեցի մի շինել և Մճբմացին շիշ իւրոյն ՚ի ձեռն առնած յայտնութեամ մի կը սպասէր, հրեշտակ Աստուծոյ երևցաւ մմա և մատմամիշ ըրաւ մմա գտեղին շիմուելիք եկեղեցոյն: Դիպաց մմամութիւնն ամուրանալի է. սակայն Գրիգորի կենսագիրը՝ շատ աւելի պատմակաւ արժէք կ'ուսնեմար, եթէ ըսէր, թէ երբ ձորի մի համգիպեցամ և ջորիները չկարացին ձորամիջի գետակէմ միւս ափումքն անցնել, Գրիգոր հրամայեց, որ հօմ գետեղեն զմշխարս սրբօղբ և շինեն զվկայարանս. զի ընդհանրմ իսկ՝ զայս կը պահանջէ: Բայց որովհետև աւամդութիւն է ազգային, պէտք է արհամարհել. այլ ըսել, թէ կամ Գրիգորի կենսագիրն և կամ լաւ ևս մորա խմբագրողն մերմուծեց անդ:

տամ և Միւնեաց իշխանները արիւմանեղ պատերազմներով առի՞մ և կործանեցին՝. ապա Ս. Գրիգոր սկսաւ հիմն արկամել եկեղեցւոյն, ուր զետեղեցամ Յովի. Կարապետիմ և Աթամազիմէի մշխարաց սի մասը, Կեսարիայէն՝ Գրիգորի ընծայուած լուսաւոր ակումքներէն միոյն հետ, որ ~~Արտի~~ կը կոչուէր. իսկ միւս մասը՝ մմացած ակումքիմ հետ զետեղեց յայլում եկեղեցոյ (Յաշտիշատում): Արդ, եթէ շիտիութիւն մ'աւ եղած համարինք դից, մեհեմից և շիմուած եկեղեցաց: որք կը յիշուին առ Զեմորայ, ըմդ դից, մեհեմից և եկեղեցեաց յիշատակելոցն յԱգաթամզեղայ, սակայն Զեմորայ աւանդածը շատ բամաւոր և ստոյգ իրողութիւն մի է. այսինքն թէ Տարօնի կրկին մեհեմաց բողոքական կործանմամէն վերջ և մոցա հիման վերայ, գուցէ թէ ն' մոցա աստղծով շիմուեցան Յովի. Կարապետիմ և Յաշտիշատում եկեղեցիները, և ոչ թէ յառաջ: Այս բանիս պատճառն յայտնի է մասամբ մի և պատմութեան ըմդհանուր ըմթացքէն. որովհետև մախ այն տեղերը քրմական ժառանգութեան և կալուածոց մէջ էին. երկրորդ, ըստ ըմդհանուր աւանդութեան, մոցա հիման վերայ հիմնուեցան յիշուած եկեղեցիք, որ առանց մոցա կործանմամբ ամկարելի էր: Ուստի Տարօնի պատմութեան հեղինակի ասածով մախ Կուսուս աւանի Դեմետր և Կիսանէ դից մեհեմատեղւոյն եկեղեցին շիմուեցաւ, ապա Յաշտիշատիմ. զի 'ի կործանման առաջնոյն՝ « դեք (քուրմք) մարմնաւոր տեսլեամբ ամկան 'ի կուսարն Յաշտիշատում »:

Զեմորայ ՅՁ իշում Յովի. Կարապետիմ և Աթամազիմեայ մշխարաց զետեղման մկարագրութեան մէջ, եթէ ձեռք խառնուած չլինէր պատմական մեծ արժէք պիտի ունեմար, մախ զի հեղինակ հաւտուածոյս իբրև ակամատես և գործակից սոյն գործողութեան կը խօսի զիմքեմէ: Բ. Գրիգորի մէկ արծանագրութիւնը մէջ կը բերէ, զոր զբեց պղծմեայ տախտակաց վերայ և դրաւ 'ի բեմի ամդ, յորում խստիկարգելոյր, թէ « Կիմ ոք՝ մի իշխեսցէ մտամել ըմդ դուռն եկեղեցւոյն »: Սակայն ըմդումելով համդերծ Գրիգորի՝ մնան արծանագրութեան մի և կամոմարութեան եղելութիւնը, սակայն և այնպէս կը տարակուսիմ, թէ այդ տեղին ամբողջապէս Զեմորայ հարազատ աւանդութիւնն եղած լինի, այլ միմչև այս խօսքերս. « Զոր թէ ստուգիւ կամիք իմամալ ցիսիսիտն թարգմանիչ ասորի իսկ հարցէք, և մա ասէ ձեզ »: Իսկ աստի և ամդը, այսինքն է. « Քամզի Կարապետիմ առ ամկեան դրամն Արշակունցի », խօսքերէն՝ միմչև « Ընթերցեալ է զտախտակսն », յետմագումի ուրումն է: Յիբաւի, այս բանս պատմութեան կերպէն իսկ կը տեսնուի, զի ձեռք խառնողն ուրած է աստ մերմուծել մախ համգամանս իմչ իւրոյ ժամանակին, յորս կը գտնուէր Ս. Կարապետի գերեզմանը, կրկնելով Զեմորայ խօսքերը: Երկրորդ, յամում Գրիգորի և Զեմորայ՝ արգիւն կամամց մուտն յեկեղեցիմ, յայցելութիւն մշխարաց սրբոյն. միմչև Գրիգոր այսպիսի կամոմ մի դրած էր՝ միայն արգելաւամից սրահները չի մտնելու համար, և ոչ թէ յեկեղեցիմ, որ է տում և ժողովարան ամնայն բարեպաշտից՝ առանց խտրութեան արամց և կամամց:

Արդ, Չեմոքայ ինչպէս ամբողջ գրուածքին այսպէս և այս տեղոյս մէջ կամ Թողիկ ¹ Վամահօր ժամանակ մերմուծաւ այդ եկամտոտ հատուածն, Ս. Կարապետի գերեզմանին և կամանց մասին. և կամ լաւ ևս յէ. դարում Յովն. Մամիկոնեանի ձեռքով. որ առիթ ունենալով խմբագրել իննակնեան Վանքին և Վամահարց ժամանակագրաւ կամ յիշատակարանքն և կամոմներն՝ այս դերս խաղաց մաւ Չեմոքայ գրութեանցը մէջ:

Յիրաւի, այսպիսի եղելութեան իբրև ապացոյց կը համարիմ ես Արծրունեաց իշխանին Վարդ պատրկի Տիկնոջ վերայ յօրինած մէկ վէպն, զոր կը գտնենք Յ. Մամիկոնեանի պատմութեան առաջին գլխում մէջ, հետևեալ կերպով: Այս բարեպաշտ Տիկնմ՝ որում ա՛մնուն էր Մարթի, իւր էրկան բացակայութեան ժամանակ՝ ստըմ դեպ որդին հետն առած՝ ուխտի գնաց ՚ի Ս. Կարապետ, և կը ցանկայր մերս մտնել և իւր արցունքներով հաշտեցնել այն մեծահոգակ սրբոյն թշնամութիւնն առ ազգն կամանց (ըստ Հայաստանեաց ² ժողովրդական ասանդութեան) վասն Հերովդիարայ: Միանձուք վանսց կ'արգելում զնա, քայց մա ամաստելով կը մտնէ յեկեղեցին. իբրև մոր ոմն Ամնա կը կատարէ իւր ուխտը, շերմաշերմ արտասուօք լուսալով Մուրատատուր սրբոյն շիրիմը. յետոյ քաջողութեանը դուրս գալով, 300 հարիւր միանձամց հացկերոյթ մի ևս կու տայ, ըսելով. « Ուրախ լերուք ընդ իս, զի մերեաց ինծ Տէր »: Բայց երբ մեկնելով կ'երթայր ՚ի փոքր զարիվերն Նորդուայ, կը տեսնէ յամկարծակի որսորդորոս ³ մէջնն զհասար մարդ մի՝ արիւնամերկեալ սուր ՚ի ձեռին, որով հարեալ և ինքն կարեվէր՝ մէկէն ՚ի մէկ կը մեռնի: Արդ, այս տիկնոջն մահն, ՚ի վերայ զառիվերին Նորդուայ, պատմական իսկ համարելով, մնացածն՝ այսինքն է Ս. Կարապետէն հարուածուիլը՝ ըրորովին շինծու համարելի է, ըստ իս, և Յ. Մամիկոնեանի այն զիւտերէն մին համարելի է, զորս հմարած է և յանձին Գայլի ⁴ տեանայ. և հմարած է զայդ՝ կամ վերոյիշեալ ազգային ասանդութիւնն, իբրև Գրիգորի կամոնն, ամադարտ և միշտ իւր ուժին մէջ պահելու համար, և կամ ժամանակին պէս պէս ամտեղութեանց առջևն առնելու մպատակաւ:

Ազգախանգեղայ, յէջ 609, պարբերութիւնը՝ շարունակութիւն է ամմիջնապէս իւր մախլմթաց պարբերութեանն, և մի և մոյն տիպն ունի: Հեղինակ հաստատոյս՝ որովհետև Ս. Գրիգորի մէկ սքամշեալ

1. Այս թողիկս եղաւ որ զառաջինն յաջողեցաւ մաքրել զվանս՝ Գլակայ՝ յԱսորիեաց անտի, և բարեկարգութեան կամոմներ հաստատել:

2. Այս ասանդութիւնս ստուգիւ ազգային ըլլալուն ապացոյց է, մախ զի առ Յոյնս չկան այսպիսի զրոյցք: Բ. տիկնոջս բերանը դրուած այս խօսքերս իսկ. « Եթէ վասն թշնամութեան Կարապետին է ընդ մեզ, և ո՛չ ինքն ՚ի կնոջէ ծնաւ » ... և թէ, « Ո՛վ Տէր մի՛ առներ յիս զցատում բարկութեան քո »: Գ. Միմչև ցայսօր իսկ այդ ասանդութիւնը կը տեսէ Տարօմի բնակչաց բերանը: Բայց պէտք է ըսել և զայս, թէ Ս. Եփրեմ իսկ Յովն. Կարապետին վերայ յօրինած ճառին մէջ, կը թուի ակնարկել մնամ ասանդութիւն մի և՛ առ Ասորիս, մկատմամբ ատելութեան Սրբոյ Կարապետին առ ազգն կամանց:

գործութիւնը պիտի պատժէր, այն նպատակաւ մախրմիճացիմ մէջ փութացել է ծանուցանել, թէ զօրքերն՝ ուզելով կործանել զբազմն՝ որոնցքն զլրոնս մորա, բայց չի գտան. զի « դեքն ծածկեցին 'ի Ռոցամէ. և 'ի կողմանցն արտաքուստ շամացամ և ոչ զծեաց երկաթ զորոյն »: Ուստի և իշխանները ճարահատեալ կը փութամ և կը պատմեն զայս Գրիգորի: Գեղեցիկ զիւտ. երկուտեք ծնութեամբ ըմբելով զիշխանս: ապա ուրեմն կ'ածէ 'ի համղէս զՍ. Գրիգոր, հրազմեալ տէրունեան մշամաւ. և 'ի տեսումագրելն՝ ամղէմ վաղվադակի ուժգին հողմն մի կը շնչէ 'ի սուրբ խաչէմ, կ'ըմթամայ « լերինմ հաւասար »: հիւնայատակ կը կործամէ զբազմնս, և այնպէս անպայտ կը լինին, « զի յեօ յեօրեկ » ոչ այլ իմչ կը տեսնուէր, կ'ըսէ, 'ի տեղուշմ այնմիկ, « ոչ քար և ոչ փայտ », և թէ « եղ ամղ զհիւնունս եկեղեցւոյ »:

Այս վերջին խօսքերովս, որքան որ կը թուի հեղինակ հատուածոյս համաձայնել յառաջագոյն ասանդեւոցն 'ի Զեմորայ, սակայն մղմբան ևս կը հեռանայ անտի մորամշան սքանչելագործութեան պատմութեամբը. որովհետև ըստ վկայութեան Զեմորայ, յէջ 26, այն մեհեմի կործանումն եղաւ. միայն հայախումբ զօրաց բուռն պատերազմով և 'ի բացակայութեան Ս. Գրիգորի՝ Ադր, ըստ իս, 608 և 609 էջերու հատուածներն՝ Գրիգորի գործոց խմբագրողին աւելի կը թուի վերաբերիլ, զի Ազաթանգեղայ մախրմիճաց և հետևորդ տեղեացմէ կը տարածայմին: Եւ եթէ իրօք այնպէս եղած է, առաջնոյն իբրև աղբիւր համարելու է Զեմորայ 34-35 էջերում եղած մէկ տեղին, ուր կ'ըստի, թէ իշխանները « Ջնմէին զտաճարն Գիսանէին 'ի վեր բերել և ոչ գտին ... աղաչէին զբուրմն ցուցանել զբեղեմ Գանձոցն և զբարանս Գեորգիոս Գանն »: 32 իշի հետևեալ խօսքերը, թէ « Ընդ առաջ եղին յեղ իշխանին Հայոց, աստիս Գառն մեզ, թէ Դեմետր կործանեցաւ. և հուսկ՝ 38 իշի մէկ տեղին, ուր ինչպէս տեսանք, կը պատմուի Յովհաննու և Աթմանգեղեմայ ուրջ խաբէր տանող Զարեայ Նարին և հրեշտակի յայտնութիւն: Իսկ վերջինը Փաւստոսի Գ. Դպրութեան Գ. զլխում մէկ տեղոյն հետ մոյն է, ուր կ'ըստի վրթամէսի համար, թէ « Երթեալ հասանէր 'ի մեծն 'ի մայրն եկեղեցեացն Հայոց, որ էր յերկրին Տարօմոյ, ուր Զեմեօն Եղբորդ Կորնելիոսն Բաբելոն Երեմիոսն յայտնեալ, վաղ ևս առ մեծաւ Կառայաղեպարան Գրիգորի »: Ստուգիւ, այս բացատրութիւնս իսկ առ Ազաթանգեղ, թէ « Եւ այնչափ կորոյս՝ զի յեօ յեօրեկ ոչ ինչ յայնմ Գեորգի Նշար էր Գորնել »; կը թուի ցուցնել, թէ հատուածոյս զորոյն այն դիպրց և տեսեան ակամատես չէր, այլ այնպիսի ժամանակի մէջ կ'ապրէր, յորում վերոյիշեալ հեթանոսական մեհեմին հետքն ամգաւ չէր տեսնուէր:

Ցէջս 610 և 611 երկու պարբերութիւններն մի միայն յաղբերէ կը յառաջագային և մի և մոյն հեղինակին կը վերաբերին. զի երկաքանչիւրին մէջ իսկ մոյն բառերով կը յիշուին առաջին եկեղեցիներն և մախրմեայ սեղանները, զորս կամզմեց Գրիգոր Տարօմ գաւառում, հետևեալ բացատրութեամբս. « Զի մախ ամղ արար սկիզբն շինելոյ

եկեղեցեաց և ուղղել սեղամ յանանս արքեպիսկոպոսի 1 » : Առաջնայն մէջ բաց 'ի շիմութեմէ եկեղեցեաց' կը պատմուիմ Գրիգորի առաքելաշնորհ միւս գործերն ևս, որով կը դարձնէ զքրմական վիճակն (Դեմետրի և Գիսամէի) յաստուածպաշտութիւն ամուր և կը մկրտէ զմոսս՝ իրեն դէպ 'ի Կեսարիա ուղեկցող իշխանաց և զօրաց հետ : Իսկ յերկրորդում կը պատմուի բազմաթիւ Քահանայից ծնունդութիւնն, և Կեսարիայէն բերուած սրբոց մեծ և աշխարհահամ դէս Տօմի հաստատութիւնն, յաւուրն եօթներորդի՝ Սահմի ամսոյն : Երկաքանչիւրն իսկ՝ Գրիգորի գործոց և պատմութեան հարազատ մասն կը կազմեն. երկաքանչիւրն են պատմական : Առաջնայն ճրչմարտութիւնը վերստի կը հաստատուի Չեմոբայ, յէջ 35, մէկ տեղովն, ուր կ'ըստի Սիւմեաց իշխանի համար, թէ յետ պատերազմին Արծանայ և շիմութեան եկեղեցւոյն՝ « Երթեալ յաւանն Կուարս, հաւանեցոյց զգօրսն զեղջմ (քրմաց) Գ. Ս. արքեպիսկոպոսի. որք յամծն առիմ և եկիմ ըմդ մամ » : Յովհաննու և Աթանազիենայ մշխարաց մասին միայն կը թուի տարածայնիլ Գրիգորի կենսագիրն՝ 'ի Չեմոբայ. զի Ասորիմ՝ մոցս մի մասն Դեմետրեայ մեհեմատեղում շիմուած եկեղեցւոյն մէջ, իսկ միւսն 'ի Մատրավանս զետեղուած կը պատմէ. իսկ կենսագիրս, ըմդ հակառակն, այլուր ևս տարածուած կ'աւանդէ, յասեմ, յէջ 611. « Եւ եբարծ Դիւարս անդէ կ'ի 'ի 'ըբ. Բոյն, զի և յայլ Կեղն » հաստատեցէ զիշխատակն մոցս » : Սակայն Փարսոսս՝ յայլևայլ տեղիս կը հաւատարմացնէ մեզ զասացեալն կենսագրին, քան թէ Չեմոբայ. զի Գ. Դպրութեան ԺԳ գլխում բաց 'ի վերոյիշեալ եկեղեցիներէն՝ զՅաշտիշատ ևս կը յիշէ իբր համզրտարան Յովհաննու : Իսկ Գ. Դպրութեան ԺԵ. գլխում մէջ և Ե. Դրչրութեան ԽԳ. գլխում՝ որոշակի կը հաստատէ, թէ 'ի Բագան կայիմ մշխարք Յովհ. Մկտչիմ, ուր զօրավարն Մամուէլ՝ ուրացելոյն Մերուժանայ դէմ՝ ճակատելէմ յառաջ՝ ուխտի զմաց, յասելն. « Կազմեցան ամենայն զօրքն Հայոց զմղիմ, և Մամուէլ Սպարապետն. և մտիմ առաջի սուրբ Բագան, որ Կայր յամ գեղ » :

Այս պարագայիս մէջ կարելի է, ըստ իս, Փարսոսի յիշեալ տեղերով վերջնականապէս պարզել Չեմոբայ և Գրիգորի գործոց հեղիմակի մէջ երեցած խորհրդական կնճիռն, մկատմամբ Գրիգորի կողմածամած մեհեմաց և շիմած եկեղեցիներում : Արդ, Չեմոբ՝ Դեմետրի և Գիսամէի մեհեմատեղում շիմուած եկեղեցիով՝ ուղղակի մատմամիջ կը ցուցանէ մեզ Ս. Կարայեթի կամ Գլակայ վանքն, որ 'ի Կուարս աւանի, որ վեց 2 ժամօք հեռի կայ 'ի Յաշտիշատայ դէպ յարևանտրս : Այս բանս մայն և առաջ մա ինքն Չեմոբ որոշակի կը ծանուցանէ մեզ, յէջ 15, խօսելով զյամենալոյն Գրիգորի 'ի Տարօմ, և Ս. Գրիգորի առ Ղևոմղիս գրուած մամակիմ մէջ, յէջ 8 : Երկրորդ, այլ

1. Դիտելու եմք, որ Երրորդութիւնն՝ աստ մասնաւոր եկեղեցւոյ մի կողմն չէ, իմչպէս « եկեղեցեաց » յոքմակի դիմօք գրութեմէն իսկ քաջ կը տեսնուի. այլ հեղինակը կ'ուզէ ըսել միայն, թէ սեղամ կանգնեց կամ պատարագեց յամուժ Երրորդութեան :

2. Դմճիճեան. Աշխարհ. հտ. Ա. Հայաստան, էջ 198 :

ուր՝ այն տեղւոյն մասին ըրած Ոկարագրութեանէն իսկ քաջ կը տեսնուի, որում կը միաբանի գիտնագոյնն յայցելուաց Հ. Ներսէս Սարգիսեան¹: Իսկ յէջ 38 ՚ի վերջկոյս Ա. Պատմեմին կամ պատմութեան Տարօնոյ յիշատակած եկեղեցիմ՝ է Մարգարէի, որ Ծ ժամ հետի կը գտնուի² ՚ի Ս. Կարապետէն դէպ յարևելս: Յաշտիշատու մեհենինմ և ամոր աւերածոցը վերայ կամզնուած եկեղեցոյ մասինմ բորորովիմ լրած է Ջեմոր, զոր Գրիգորի կենսագիրն և Փաւստոս Գնացոյն և ստէպ կը յեղյոցեն. Յովհ. Մամիկոնեամ՝ զերեսեանմ ևս ՚ի Ս. Գրիգորէ հիմնարկուած կ'աւամդէ³, և կործանեալ ՚ի ժամանակս արշաւանաց Արղտահիմայ ՚ի Հայս: Գուցէ կարելի լիմէր դիպուածակամ համարել Ջեմորայ այսպիսի լուսթիւնն, եթէ Գրիգորի կենսագիրն իւր կողմանէ պատմէր մեզ ինչ մի Գեմետրեայ մեհենինմ և հոմ շիմուած եկեղեցոյն վերայ. սակայն ոչ միայն չպատմէ ինչ, այլ և ոչ իսկ լոկ յիշատակութիւն մի կարելի է գտնել առ սմա: Եւէջ 612, թէպէտև կը յիշէ Գրիգորի գալուստն ՚ի Բագուան, ուր կը սպասէր մնա թագաւորն Տրդատ. սակայն եկեղեցոյ շինութեան չիք ինչ յիշատակ: Բայց Փաւստոսի Գ. Դպրութեան ԺԴ. զլիւսմ յիշուած « Մարգարէամոցն » ամշուշտ է մոյն ընդ Ս. Կարապետինմ յիշելոյ ՚ի Ջեմորայ. ուստի չէ մարթ Ստրի հեղինակիս աւանդածին վերայ տարակուսիլ, ինչպէս մա չկարէր տարակուսել Յաշտիշատու եկեղեցոյ գոյութեան մասին: Ուրեմն ինչպէս մեկնելու է այս եւրկութիւն. Ջեմոր՝ որ հրաման առաւ ՚ի Գրիգորէ Տարօնի պատմութիւնը գրել, զիմորէ կարէր ամոդ համդիպած մշամատր դիպաց մին ՚ի լուսթեան դատապարտել, առանց իրական և բանաւոր պատճառի մի: Սոյնը՝ ամհասկամալի կը մնայ մաս Գրիգորի կենսագրի համար, որում մպատակն էր Լուսատրիի գործոց « Ծրագիր » պատմութիւնն ըմել: Արդ, իմ կարծիքով այսպէս կարելի է մեկնել երկ ուստեք երևցած այդ զանցաուսթիւնը. այսինքն թէ, Ջեմոր և Գրիգորի կենսագիրը գրելէ մի և մոյն ժամանակամիջոցին ձեռք զարկին ՚ի գրի առնուլ Գրիգորի գործերն. այնպէս որ Տարօնի պատմութեան կամ առ Ստրիս գրած թիղթոց հեղինակն իւր Ա. պատմէնն աւարտած ժամանակինմ, Ազաթամզեղայ Բ. գրոց այս էջերս հագիւ ուրեմն կամ տակաւին գրուած չէին. այն պատճառաւ իսկ կը տեսնենք, զի Մարգարէի եկեղեցոյ շինութեան պատմութիւնը, որ առ Ջեմորայ՝ Ա. պատմեմի վերջին իշումը (38) կ'աւարտի և Ս. Կարապետի շինութեանէն վերջ, առ Ազաթամզեղ, ըմդհակաւակն, առաջին տեղին ունի. և ամկէ վերջ կը Ոկարագրուի Յաշտիշատու մեհենի կործանումն և եկեղեցոյ շինութեան պատմութիւնն: Ուստի աւելորդ համարեցաւ Գրիգորի կենսագիրը վերստին ՚ի գրի հարկանել Ս. Կարապետի շինութիւնն համդերծ Գեմետրի և Գիսանէի արարուածովք, զորս արդէն մամրամասն պա-

1. Տեղագ. ՚ի Փոքր և ՚ի Մեծ Հայս, Վեմետիկ. 1864, էջ 228-230:

2. Դմմիթեան. Աշխ. հտ. Ա, 193: Մարգիսեան՝ Նոյմ:

3. Պատմ Տարօնոյ, էջ 58:

րապալիք պատմագրած էր Ջեմոր այդ ժամանակ: Բնականապէս ուրեքնմ պէտք էր, որ մա իւր ուշադրութիւնն ուղղակի Յարտիշատու մեհեմի կործանմանն և եկեղեցւոյ շինութեամ պատմութեամբ վերայ դարձնէր և դարձուց իսկ, զորով միամզամայն ուրիշ միջամկեալ դէպքեր՝ միմչև ցերթն Տրդատայ առ Կոստանդիանոս: Այնպէս որ՝ Տարօնի պատմութեամ Բ. Պատճէնն երբ սկսաւ գրուիլ, Ագաթամ զեղայ զրոց վերոյիշեալ կէտերն և Յովթ. Կարապետի մեծահանդէս Տօնի հաստատութիւնն՝ արդէն գրուած էին. ամոր համար Տարօնի պատմութեամ հեղինակն՝ ուղղակի անցաւ ՚ի պատմագրել զերթն Տրդատայ ՚ի հռովմ, և Տարօնում կատարուած երկրորդ պատեւրազմն ըմբռէմ՝ Հիսիսականաց, որ եղև յետ դարձին Տրդատայ յայլ ցելութեմէ Կոստանդիանոսի: Ստուգիւ այս պարագայս համարելու եմք դարձեալ պատճառ Գրիգորի կենսագրի երկրորդ լուսութեամբ. որ Ջեմորէն մկարագրուած Տրդատայ գոռ պատերազմաց զէմքերն և զրահամքը դնելով առ ոտս խտղադարար և փրկութիւնաբեր խաչն Քրիստոսի՝ կու տայ մնա այնուհետև զոյգ ըմդ դիւցազմն իւրոյ Գրիգորի՝ « պարապել զամենայն ժամանակս ըմթերցուածոց զրոց թաղեալ ՚ի սէրն Քրիստոսի »:

ԾԺԶ. Գլխահամարով սկսող պարբերութիւնն՝ ուղղակի Տրդատայ կենսագրութեամ հատուածով մի կը սկսի. քայց շուտով կ'ըմդհատի յէջ 612, Գրիգորի կենսագրութեամ հատուածով, որուն սկիզբն է. « Իսկ մա (Գրիգոր) շրջէր զի 199է զկողմանս կողմանս եկեղեցեօք և քահանայիւք » և կը վերջանայ. « Հասամէր առ ոտս Նպատական լերինն »: Առաջինն ՚ի հատուածոցս՝ Գրիգորի պատմութեանէն դուրս և միջամկեալ քան մի է, զոր ես խմբագրողէն մերմուծուած կը համարիմ. և ասոր ապացոյց է, այն պատճառաւ յառաջ եկած սոյն ամտեղութիւնս. այսինքն է, մէկ կողմէն կը ծամուցուի զալուստն Գրիգորի ՚ի Հայս և Տրդատայ ըմդ առաջ երթալով ՚ի Բագուան, հանդերձ Աշխէն տիկնաւ, Խոսրովիդէստաւ և արքունական զօրաց քաղմութեամբ. իսկ միւս կողմէն՝ ամսօրեայ ժամանակաւ դեռ դեգերել կը տրուի Գրիգորի աստ և անդ, սպասեցնելով զթագաւորն յաւանի անդ: Արդ, եթէ այդ հատուածը մէջ տեղէն վերմար, այն անտեղութիւնն իսկ վերցուած կը լինէր, և 613 իջի. « Ընդ առաջ լինէր մնա թագաւորն ամենայն զօրօք » հատուածը քաջ պիտի միաբանէր ամմիշապէս մախրմթաց պարբերութեամ հետ, և բաւական էր իրին միշտ եղելութիւնը ցուցանել. միմչեռ այդ իմքնահմար հատուածի պատճառաւ՝ իբրև աւելորդ կրկնութեամ կերպարամբ առած է:

Ցէջ 613, յամուռ Կեսարիոյ հայրապետին Ղևոնդիոսի՝ առ Տրդատ գրուած թուղթը՝ շարունակութիւն է իւր ամմիշապէս մախրող

1. Ի տպագրութեամ Լանզլուայի, Collection des Hist. Anciens de l'Arm., ch. CXVI, p. 177, կը պակսի այս թուղթս: Իսկ մեծ գիտնականն Լագարը ամբողջապէս լրացուցել է յունարէն օրինակի այս պակասն՝ իւր յիշեալ տպագրութեամ 73 և 74 էջերում:

պարբերութեանմ, յորում թէպէտև Տրդատայ վերայ խօսք կը լինի՝ բայց այնպէս անցողաբար, զոր չէ մարթ Տրդատայ պատմութեան վերագրել, այլ ուղղակի Գրիգորի. այսպէս ուրեմն և այս թրուղթս, որ ամտի կը յառաջագայի այնպէս իմչպէս ուղեշմ՝ ՚ի բնոյմ: Առ Ջեմոբայ և Փաւստոսի չիք և ոչ իսկ յիշատակութիւն իմչ թղթոյս: Սակայն Ատորիմ, յէջ 12, յետ Բ.դի պատասխանական թղթոյմ Ղևոն դիտվի՝ առ Գրիգորիոս, կ'ըսէ, թէ « Իբրև դարձամ պատգամատրքմ ՚ի Վաղարշապատ քաղաք, համեալ զմամակմ մատուցիմ առաջի ժողովրդեանմ, ուր ըմթերցեալ տրտմեցամ հանդերձ թագաւորամ »: Կարելի է արդեօք ըսել, թէ այս դէպքէս և կամ Ազաթամզեղայ 618 իշի մէկ յիշատակութեմէմ մերջնչուած ըլլայ այմ: Թղթոյս զեթ սկզբնատրութիւնը, այսինքմ է միմչև « սիրեցեալքս Տեառմ » խօսքերը կը թուիմ հաստատել այսպիսի եմթադրութիւն մի. սակայմ մնացած պարբերութիւնը՝ բոլորովիմ հակառակը կը ցուցանեն: Ուստի Կեսարիոյ հայրապետիմ կողմանէ պաշտօնական պատասխանայ մի եղելութիւնմ՝ առանց երկբայութեան է: Բայց թէ այժմեան թրուղթը՝ զոր ըմծայեմ մեզ Գիրք Ազաթամզեղայ, իցէ՞ այմ ստուգիւ և կալէր լինել. այս կէտս քննութեան կը կարօտի:

Կոմիտաս Կաթողիկոսի առ Մողեստոս Երիցապետմ Երուսաղեմի գրուած պատասխանական թրուղթմ¹ այս պատճենիս մմամ երկու համառօտ հատուածներ² կը պարտմակէ. սակայմ այս երևոյթս ուրիշ մշամակութիւն չունի, ըստ իս, այլ պարզապէս արդիւնք համարելու է Կոմիտասայ կամ մորա քարտուղարի կողմէմ եղած Ազաթամզեղայ շարադրութեան ծառայական մմամողութեանմ. ուրում ապացոյցը ուրիշ պարագայի³ մէջ ևս մա իմքմ տուած է: Պատճենիս սկզբնատրութիւնը. « Գամեալքս և խրատեալքս », միմչև « Տեառմ », ըստ իս, ոչ միայն օտար կ'երևի յումական ոճոյ, այլ մոյմ իսկ քաշտիպութեամբ բամիցմ՝ ուղղակի փոխադարձութիւն համարելի է Տրդատայ առ Ղևոնդիոս ուղղեալ պատճենի Ա. պարբերութեանը և անոր վերայ միշտ ձևուած է. իսկ որովհետև այմ պարբերութիւնմ, իմչպէս տեսամք ՚ի վիւր ամողը, ամհարագատութեան տիպ ունի, այսպէս ուրեմն և Ղևոնդիոսի ըմծայուած պատասխանայմ զէթ սոյմ մատը՝ տարակուսական համարելի է: Ձի խմբագիրմ՝ առաջմոյմ ամհարագատութիւնը ծածկելու համար՝ իւր կողմէմ իբրև դիմակաւորեալ զլուս մի՝ յարմարցուցել է Ղևոնդիոսի

1. Առ Սեբէոսի, Պատմ. ՚ի Հերակլ, գլ. ԴԾ. էջ 86, տպ. Պետրբուրգի, 1879:

2. Որոճց առաջիմը կը սկսի. « Գամալից եղելոցը և խրատելոցը » ... իսկ երկրորդմ. « Եւ ՚ի վերայ այսր ամողադար բերամովք և ամհամզիստ լեզուօք զՏէրմ մեր Տեսուս քրիստոս, զբարեբարմ և զքաջամչեալ գործմ և զպարգևաբաշխմ օրհմնեցուք »:

3. Այսինքմ է, սրբոց Հոսիփոսիմանց Շարակամմ իսկ՝ Ազաթամզեղայ Յառաջաբանիմ և Մ. Խորենացոյ՝ Հոսիփոսիմանց մերբողեանի մմամողութեամբ յօրիմած է, ՚ի վար արկամելով մոցա յատուկ բացատրութիւններմ և բառերը:

թղթիմ վերայ: Եւ իրօք այս բանիս մատուող է՝ « Վասն կեանատուր փրկութեանդ հասնելոյ ձեզ յԱստուծոյ » երկրորդ պարբերութիւնմ, որ ոչ միայն անշատ է յառաջնոյն, այլ տակաւին իբրև նոր իմ կը յիշէ զկեանատուր փրկութիւն թագաւորիմ:

Իսկ մնացածն, ըստ բովանդակութեան, հարազատութեան տիպ ունի, որ և կը սկսէր, ըստ իս, այսպէս. « Տրդատէս (Գու՜) թագաւոր Հայոց մեծաց և այլն »; բառերով: Յիրաւի, ներքին համագամագք իսկ կը հաստատեն իմ կարծիքս: Նախ և առաջ « Աւետի-կոս », Մեթոդիոս » պատուանունաց, որք ըմբայուած են Ղևոնդիոսի, և Տեփոյէ (մեծ) մակդիրմ՝ որ տրուած է Կեսարիոյ, ոչ միայն յունարէնի լոկ տառադարձութիւններ են, այլ պատմական կերպով իսկ ճիշդ են: Բաց յայսցամէ կամ մակ ուրիշ յունաբանութիւնք՝: Չորրորդ պարբերութեան. « Եւ հասարակոյ կոյսէ վայոյթիւն ՚ի Տեփեփոց կոյմանց, զի պարզևարաշխութիւն նորոգեալ Քառանայոնեանք ձերոյդ նահանգիդ, առ ՚ի Տեփ կոյսէ անշարժ՝ յԵփեփոցու կեսարոս, առաքի և հանրեջնցոս յեղ պատրաստութիւն շինութեան յեսարոսութիւն » տեղւոյն մէջ հետևեալ պատմական և ուշադրութեան կարևոր եղբուրթիւնը կը յայտնուի, Ա. թէ Գրիգորի՝ եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունելով՝ Հայաստանեայց եկեղեցւոյ Քահանայապետութիւնը կամ հայրապետութիւնը ոչ եթէ նոր ինչ հաստատեցաւ, այլ նորոգեցաւ: Բ. թէ այս նորոգութիւնս եղաւ յԱրքեպիսկոպոսէն մեծին Կեսարիոյ: Գ. թէ երկուստեք եղած գրաւոր դաշնաց զօրութեամբը՝ մնաց այս իրաւատութիւնս Կեսարացոց եկեղեցւոյն մէջ, ըստ պահանջել հարկին ձեռնադրել զԿաթողիկոսն Հայաստանեայց եկեղեցւոյ:

Յիրաւի, Ղևոնդիոսի թղթիմ մէջ նշանակած առաջին կէտմ, այս իմքն թէ, Հայաստանի առաջին դարձէն յառաջ՝ եղան ստուգիւ հաւատացեալ հօտք և հօտապետք՝, որոնք ջանացիմ հալածանօք

1. Յունարէն օրինակին մէջ, ըստ հրատարակութեան լազարոյի այսպէս է. Σὺ Ἐπιδαύτιος ὁ Βασίλειος τῆς μεγάλης Ἀρμενίας, καὶ Ἀσυχῆνυ βασιλισσα καὶ ἡ νεάνεις μεγάλη Κουσαρωδούκτα.

2. Օրինակի աղագաւ. 'ի վերջկոյս Գ. պարբերութեան կ'ըսուի. « Ձի յիւր համգիստն արժանիս արասցէ զամենեսեանմ »: Գ. Պարբերութեան մէջ կ'ըսուի. « Ձի ոչ իմացայք դուք զմարդկանմ՝ 'ի մարդկապէսն, զի տութիւն արար ձեզ 'ի չմարդկապէսն »: Հիմզերորդ պարբերութեան մէջ կ'ըսուի. « Ուստի և հանդերձեցաւ ձեզ պատրաստութիւն շինութեան ձեռնադրութիւն »: Այժմեան յուն. օրինակը կը գրէ 'Ἐξ ἧς καὶ ἤτοιμασθη δὲν πῆν ἀρχὴν ἡ δωρεὰ τῆς χριστοτοίας, որ չկարէ լինել ճիշդ թարգմանութիւն հայերէնին, և ոչ իսկ բնագիր. այլ պէտք է ըսել, թէ « շինութիւն » է թարգմանութիւն անյայտացած բնագրի Կրօնք բանին, որ յառաջ կու գայ Կրօնք բայէն, որ կը նշանակէ ստեղծել, շինել: Այս բացատրութիւնս օտար է 'ի հայերէնէ, և յոյմ լեզուի ազդեցութեամբ միայն կրնայ ըսուիլ, շինել զոք քահանայ, կամ պատրաստել զշինութիւն քահանայութեան և որ մնամ է այսմ:

3. Այս եպիսկոպոսներս են, ըստ տոհմային աւանդութեան, Ջաքարիա՝ որ յամի Տեառն 33 ձեռնադրեցաւ 'ի թաղէոս Առաքելոյն եպիսկոպոս Արտագու և յամին 70 նահատակեցաւ յերուսաղայս Բ.դէ: Ձեմնմ տոս՝ որ էր հաւատարիմ Մանատրկոյ և յամին 79 նահատակեցաւ 'ի

հանդերձ շարունակել Քաղէնոս և Բարդուղիմէոս առաքելոց սկսած առաքելութիւնը՝ Մեծ և Փոքր Հայոց մէջ, ամուրամալի ճշմարտութիւն է. որում վերայ Նանքիոս և Տերտուղիանոս իսկ՝ երբեմն երբեմն յամկարծածազ լոյսեր կը ծագեն, բաց 'ի տոհմային մատենագրաց: Իսկ Հայաստանեայց եկեղեցւոյ Ժողովոց Հասարակաց մէջ Քաղէնոս Առաքելոյ վերագրուած 29 Յօդուածով Օրէնդարութիւն մի և կայ, որում գրողն է Զատիկ Սիւնեաց առաջին. եպիսկոպոսըն, գէթ ըստ վկայութեան յիշատակարամին, ուր կ'ըստի այսպէս. « Զայս Օրէնդարութիւնս ես Զաքարիա աշակերտ Առաքելոյն Քաղէնոսի գրեցի, որպէս լուայ 'ի մմամէ, ամենայն հաւատացելոց 'ի Քրիստոս »: Արդ, այս Օրէնդարութիւնս՝ պէտքէս կանոններ կը սահմանէ եպիսկոպոսաց, քահանայից և ժողովրդեան համար. ուստի եթէ չիցէ ամհարազատ, յայտնի ապացոյց է այդ ժամանակի Հայաստանեայց եկեղեցական Դասակարգութեան կամ նուիրապետութեան մի: Այս բանիս վերայ պէտք չէ զարմամալ, եթէ Սամա տրուկէն առաջ Հայաստան տտուգիւ ըմբարկեց զքրիստոնէութիւնն: Այլ հետեւեալ կէտերն աւելի պէտք են մեր և ամենայն ճշմարտասիրաց հետազոտութեանը միւթ լինել. այսինքն թէ, Ա. Արդեօք Սամատրուկէն ցՏրդատ՝ նոյնպէս շարունակուեցան հայ հաւատացելոց հօտն և հօտապետութիւնն, եթէ ոչ: Բ. Վերոյիշեալ եպիսկոպոսներն եթէ իրօք և եղած համարիմք, տակաւին կը մնայ այս հարց, թէ արդեօք նոզա զվսովին ամկանիս եկեղեցական վարչութիւն մի կը վարէին, թէ, ընդհակառակն, կախումն ունէին յայլոց Նախաթոռութեանց, ըստ եկեղեցական իրաւասութեան: Գ. Ուստի կ'առնուին սովորաբար իրենց եպիսկոպոսական Ձեռնադրութիւնն, և իր թեմակամ Հայրապետին կամ Նախաթոռութեան իրաւասութեանը մերքև կը գտնուէին, ըստ վարչական Օրէնդարութեան:

քրմապետն Նրուազ: Գոմսի՝ ազգաւ պարսիկ, ձեռնադրեալ յԱռաքելոյն Բարդուղիմէոսէ՝ յԱգուլիս, յամին 67, և վախճանեալ յամին 90: Բարեխաս՝ ազգաւ պարսիկ, որ յամին 90 յաջորդեց Գոմսիին և յամին 120 վախճանեցաւ: Մոքա առ հասարակ կը հովուէին 'ի Մեծ Հայս: Իսկ յեղեօք կամ 'ի Միջագետս Հայոց՝ յաջորդեցին Առաքելոյն Քաղէնոսի՝ Աղդէ, զոր մահատակեց Ամասէ: Տուքիաս՝ յամին 94, և Դոմետիանոս կայսեր հալածանաց ժամանակ մահատակուեցաւ. բարսուճա հայկազըն, առ Տրայանոսիւ (108-120): Գոմ՝ 291-295: Ակակիոս եպիսկոպոս Տիգրանակերտի 250-280: Արքեղայոս՝ 260-280: Իսկ փոքր Հայոց Գեւորիա քաղաքում յաջորդեցին յաթոռն Ս. Քաղէնոսի՝ Թէոփիլոս՝ 40-70: Չոթիկոս՝ 'ի Գոմամա, յամին 160-190: Աղեքսանդր՝ եպիսկոպոս Գամրաց 210-230: Մեհրուճամ՝ 250-280, մահատակեալ 'ի մեծէն Խոսրովայ: Փիրմիլիանոս՝ 230-270: Կղէոնիոս՝ 272-290, մահատակեալ 'ի Դեոկղետիանոսէ: Վլասիոս՝ եպիսկոպոս Մեքաստիոյ, մահատակեալ յամի Տեառն 315: Ղևոնդիոս՝ 292-302 (310-326): Մոքա պատմութեան փափաքողները կը զրկեն առ Շախաթումեան, Ստորագ. էջմ. հոտ. Ա. « Արարատ » ամս. 1884, Յուլիս 31. էջ 295-298: Մուրատեանց, Գատմ. հիկոգ. էջ 30-31: Զամիլ Գատմ. Հայոց:

1. Տես Գատմ. Ժողովոց, գլ. Ա, էջ 9-18, Աբէլ արքեպիսկոպոսի: « Արարատ » ամս. 1884, Յուլ էջ 291. և յայլ կանոնագիրս, որ ղեռ հրատարակուած չեն:

Արդ, այս երեք կետերս ալ մեր եկեղեցական պատմութեամ մէջ մի մի գործեան համարներ եղած են՝ Ն. դարէն և այսր. և ոչ որ կարաց մինչև ցարժմ պարզել մոցա զաղտնիքը, թէպէտև այս տալիսներս եղան Յշատաւոր ամօրնք¹, որոնք իրենց երկասիրութեանց մէջ կը համարին, թէ պարզեցին: Ես իսկ կը խոտտովանիմ, թէ դժուարին են և կճնոտու և փափուկ. մամաւանդ թէ, աւելի ևս դժուարացան և կճնուեցան՝ երբ մարդկօրէն շահադիտութիւններ և կողմնակցութեան ոգիներ և՛ բազմադարեան մթութեան հետ՝ միայն սին՝ գում գործեցին քօղարկել զայնս, և շիջուցանել պատմութեան այն լուսաւոր ջահերն ևս, որովք միայն կարելի էր տեսնել մոցա ստոյգ. և իրական պատկերը: Իսկ ես ոչ այս դիտումներս ունիմ, և ոչ պլ եկեղեցական պատմութեան սահմանները կ'ուզեմ աստ ընդարձակել. ալ իբրև քննասէր խօսել միայն այն պատմական իրաց մասին, որոնք թղթոյս բովանդակութեանը կը վերաբերին և կարող են հաստատել մորա հարազատութիւնը, և խօսել մամաւանդ առանց հոգոյ կողմնակցութեան, որ մեծապէս վնասել է մեր տոհմային պատմագրութեան հաւատարմութեանը:

Արդ, դիտելու է, որ Քրիստոսի թուականին առաջին երեք դարուց մէջ, քամի որ հաւատոց ախոյեան Մեծն Կոստանդիանոս դեռ միասպետած չէր հռովմէական կայսերութեան մէջ, եկեղեցեաց մուկրապետութիւնը բոլորովիմ տարբեր վիճակի մէջ կը գտնուէին, քան որ ինչ եղին յետոյ: Յեփեսոս, ՚ի Հռովմ, ՚ի Պաղեստին (յերուսաղէմ) և յեգիպտոս (Աղեքսանդրիա) ուր կամուկ քարոզեցաւ Քրիստոսի արքայութիւնն և ունեցաւ մեծ բազմութիւն հաւատացելոց, անդէն և անդ չումեցան իրենց կատարեալ կերպով կազմակերպուած մուկրապետութիւնը. մամաւանդ երբ կայսերաց հալածանքները՝ ժամանակ ժամանակ կը ստիպէին զհովիւ մոցա փակել մերթ գետնադամբաններու և մերթ այլ անել բանդերու մէջ՝ զրկեալ իրենց հօտէն: Այսպիսի պարագայից և ժամանակաց մէջ ՚ի սփիւռս ազգաց ցամ և ցիր քրիստոնէից մէջ ևս չկային տարբերութիւնք ազգային եկեղեցեաց, ոչ մախաթոտութիւնս կը մայէին և ոչ մուկրապետութիւնս, պլ աշենեցուն հասարակաց էր մի հաւատք Քրիստոսի, և պարտք՝ տալ վկայութիւն վասն Քրիստոսի: Արդ, իմչպէս Առաքեալք և Աշակերտք, այսպէս մաս այդ ժամանակսց ամփառումակ եպիսկոպոսներմ՝ զուրկ այն շքեղ տիտղոսներէն, զորս յետագայք անուանեցին Պապերք կամ Հպրապետ, Կաթոլիկոս, Մարտիրոս, Արքեպիսկոպոս, Պրեմատ և Եպիսկոպոս. այլ էին իբրև հասարակաց հայր, տեսուչ և հովիւ. որք մահ և աքտոր յամծն ուած՝ կ'ըմթամային զկնի հօտիցմ վարատելոց, ուր պէտքը կը պահամջէր, առանց խորութեան ազգի և ծիսի և լեզուի և իրաւասութեան. զի լռելեայն այդ ամեմայն օրինաւոր համարուած էր մոցա:

1. Մադ. Վ. Օրմանեան, « Աթոռ Հայաստանեայց », Վաղարշապատ, 1886: Մուրատեանց վերոյիշեալ գործում և այլուր: Վահան Վ. Գուրեան, « յերկրագոտի »:

Այսպիսի ժամանակաց և պարագայից մէջ, ուրեմն, եկամ 'ի Հայս՝
 Եւատաթէոս, և յԱղուամս՝ Եղիշայ, ձեռնադրեալք 'ի Տեառնեղբօ-
 րէն՝ Յակովբայ՝ յերուսաղէմ. և վերոյիշեալ Հայոց Մեծաց, Միջա-
 գետաց և Կեսարիոյ եպիսկոպոսներն, որոնք քարոզեցին զբանն Աս-
 տուծոյ և մահատակեցան: Արդ, ինչպէս բոլոր միւս Առաքեալներն
 և աշակերտք յայլնայլ աշխարհս՝ այսպէս և՛ Քաղէոս և Բարդուղի-
 մէոս հաստատեցին, բաց յայլոց տեղեաց, մաս 'ի Մեծն Հայս եպիս-
 կոպոսական աթոռներ: Յիրաւի, Քաղէոս Առաքելոյն զերզմանն
 աստի, և անտի՝ Արտիթէսի, Դորթիէոսի զբուծիւմներն և Ղևոնդիո-
 սի առ Ս. Գրիգոր զրուած թուղթն, զոր ընծայէ մեզ Ձեռնոք, և Բու-
 զամբացիւնն սկսեալ միւս տոհմային մատենագիրք՝ կը հաւատար-
 մացնեն այսպիսի եղելութեան մի գոյութիւնը: Սակայն չէ և չէ
 մարթ աստի ձեռնարկել Հայաստանեայց Եկեղեցւոյ կամ Քաղէոս
 և Բարդուղիմէոս առաքելոց՝ 'ի Հայս հաստատած Եկեղեցւոյ կա-
 տարեալ Ուկիրապետութիւն մի այն ժամանակէն 'ի վեր. որովհետև
 ինչպէս վերոյիշեալ եպիսկոպոսաց ցուցակէն և պատմութեանէն կը
 տեսնուի, դրքս ոչ էին պետք բազմաթիւ եպիսկոպոսաց, այլ ա-
 ռամծին և սոսկական եպիսկոպոսներ էին, որք Սամատրոպէն վերջ
 զհաստոր աստեղաց մնան հազիւ թէ կ'երևնային հեթանոսիկ Հայաս-
 տանի սահմաններուն վերայ, աստ և անդ ծածկուած հաւատացե-
 լոց հոգևոր պէտքերն հոգալու: Սոցամէ ոմանք Ատորի էին ազգաւ,
 ոմանք՝ Պարսիկ, և ոմանք Յոյն և Հայ. որք երբեմն 'ի Պաղեստին
 ձեռնադրուած՝ այնպէս կու գային 'ի Հայս, երբեմն յԱնտիոք և յԱ-
 դեքսանդրիա և երբեմն 'ի Կեսարիա Գամրաց և յԱրևմտու. որք
 հազիւ ուրեք և կամ ոչ երբէք կը յաջողէին ձեռնադրել անծամք ի-
 րենց յաջորդները: Բաց 'ի այս պատմական և անժխտելի իրողու-
 թեանց, պէտք չէ մոռնալ և զայս, թէ այդ հովուաց պատմութիւնն
 իսկ 'ի տոհմային յիշատակարանաց միայն գիտեմք, որոնք ստուգու-
 թեան մեծապէս պէտք ունին:

Սակայն զարմանալիմ այս է, զի այսպիսի ամստուգութեան մէջ,
 ուր ճշմարտասէրը կը դամբաղէ իւր ըմբացքը, շահադէտք և ակն-
 առուք, ընդհակառակն, ամոք քան զամոք կը յառաջեն՝ ինքնահը-
 մար գիտներով: Աստի յառաջ եկին քազմահոյլք կարծեաց: Առա-
 ջինը՝ կ'ըսէ, թէ Հայք Երուսաղեմայ մախաթոսոյն ստորակարգեալ
 էին, և անտի կ'առնուին զձեռնադրութիւն: Երկրորդն՝ Անտիոքայ
 մախաթոսոյն համար կը հաստատէ զայս: Երրորդն՝ Հռովմայ: Չոր-
 րորդը՝ Կեսարիոյ: Իսկ Հիմզերորդն որ է մեծամասն հայ հասարա-
 կութեան կարծիք, կը համարի թէ Հայաստանեայց եկեղեցին ան-
 դուստ յԱռաքելոց անտի Քաղէոսի և Բարդուղիմէոսի՝ անկախ և
 ինքնագլուխ եղած է միշտ և ունեցած է իւր Ուկիրապետութիւնն:
 Առաջին երեք կարծիքը՝ հաստատուած են պարզապէս առաջին ե.

1. Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուամից, գլ. 2:
2. Փաստոս, Գ. Դպրութիւն գլ. Ա, ԺԲ, ԺԴ. և Դ. Դպր. գլ. Գ: Ձեռնոք, Պատմ. Տարածի, էջ 10: Մ. Խորենացի, Գիրք Բ գլ. 37:

րեք դարուց մէջ, ըստ ոմանց և յետ այնորիկ, սակաւաթիւ հայ հաւատացեցելոց և վերոյիշեալ եկեղեցեաց մէջ տեղի ունեցած յարաբերութեանցը վերայ: Սակայն, ըստ իս, ոչ այն մի քանի եկեղեցական անուոմներն և ոչ այլ այնպիսի մակիւն յարաբերութիւնք՝ կարեն լինել ապացոյց այսպիսի եղելութեան մի. և թէ վերոյիշեալ պարագայներով իսկ արդէն հերքուած կը համարիմ ես զայնս: Ուստի խնդիրը կը մնայ վերջին երկու կարծեաց վերայ: Բայց ուղղակի դեռ այդ կարծեաց վերայ չխօսած, կարևոր կը համարիմ մէջ բերել հետևեալ երկու պատմական ճշմարտութիւնքը, որոց առջև հարկ է թէ կամայ կամ ակամայ ամենքը զկայ առնուի և խոստովանիմ. այսինքն թէ, Ա. Թաղէոս Առաքեալն՝ ոչ միայն յԱրտազգաւորի մէջ քարոզեց և եպիսկոպոսական աթոռ հաստատեց, այլ ման յՈրնսիս և ՚ի Կեսարիա Գամրաց. այս բանս վերոյիշեալ եպիսկոպոսաց ցուցակէն իսկ յայտնի է: Բ. Թէ յԱրտազ և ՚ի Միջագետս Հայոց քարոզող այն եպիսկոպոսներէն ոչ մին 120 թուականէն աստիճան չամցնիր. իսկ Մեհրուժան, որ յամս 250-280 թուարդէն սպառուած կը համարուի, էր եպիսկոպոս Փոքր Հայոց և ոչ Արտազու. և թէ երբ Լուսաւորիքն մեր Գրիգոր՝ դարձոյց զՀայս վերստին ՚ի քրիստոնէութիւն, չգոյր ՚ի Հայս ոչ եպիսկոպոս և ոչ քահանայ. այլ արդէն ՚ի վարդուց հետէ դարձարած էր եպիսկոպոսութիւնն ՚ի վիճակէն Թաղէոսի և Բարսիլուղիմէոսի: Այս բանս Ազգայնագիրոսէն և Ջեմուրէն իսկ այնքան յայտնի է, որ և ոչ իսկ մասնատր ապացուցութեան կը կարօտի:

Արդ, այսպիսի դրութեան մէջ էր Հայաստանն՝ երբ մորադարձ թագաւորն և ժողովուրդը միաբան ըմտրեցին զհայրն հաւատոց իւրեանց զԳրիգոր, և կը ճեպէին ՚ի ձեռնադրութիւն եպիսկոպոսութեան: Կ'ուղևորի Գրիգոր մախարարաց բազմութեամբ, բայց ոչ յԱնտիոք կամ յԵրուսաղէմ և կամ այլուր ՚ի մախաթոռ եկեղեցեաց, այլ ուղղակի ՚ի Կեսարիա Գամրաց կամ Փոքրն Հայոց: Այս բանս կը ցուցնէ, թէ Գրիգորէն յառաջ հաստատ մի սովորութիւն կամ եկեցական իրաւասութիւն չկայր այն մախաթոռ եկեղեցիներէն միոյն կամ ՚ի միւսոյն առնույ զձեռնադրութիւն, զի եթէ եղած լինէր՝ անշուշտ երկուստեք պահանջն ևս ըստ այնմ պիտի լինէր: Արդ, բաց ՚ի այն ձեռնադրուած ասորի և յոյն եպիսկոպոսներէ, զոր հրաւիրեց Գրիգոր ՚ի Հայս, ինքն ևս բազմաթիւ եպիսկոպոսներ ձեռնադրեց: Գրիգորի յաջորդներն ևս, բաց յԱրխատակիսէ և Վրթա միսէ, զորս, ըստ տոհմային աւանդութեան, ինքը ձեռնադրեց և կարգեց ՚ի տեղի իւր՝ հրաժարելով յաշխարհէ, Յուականէն սկսեալ ցմեծըն ներսէս հետևեցան Գրիգորի ճանապարհին՝ դէպ ՚ի մախաթոռն Կեսարիոյ: Այս դէպքս իսկ զլիովին պատմական է, և բաց ՚ի Փաւլոստոսն՝ բազմաթիւ ներքին և արտաքին պարագայք և վկայութիւնք իսկ քաջ կը հաստատեն զայն:

Ուստի ես զայս միայն կը հարցնեմ, թէ ի՞նչ էր պատճառ երթի մոցա ՚ի ձեռնադրութիւն ՚ի Կեսարիա, եթէ եկեղեցին Հայաստանայց յետ ձեռնադրութեան Գրիգորի՝ ունեցաւ իւր կատարեալ

մուկրապետութիւնը՝ լիուր իրաւասութեամբ և անկախ 'ի մախա-
թրուութեան Կեսարիոյ՝ ձեռնադրել իւր Կաթողիկոսներն : Ջի Փաւլս-
տոսի պատմութեամ զամազամ տեղերը մերժելն՝ անկարելի է և ամ
մերելի. որովհետև ոչ ոք 'ի հիմ պատմագրաց յաւակնեցաւ այս փորձս
ընել կամ ըստ կամս յառաջ բերել. ուստի յարդեաց ոմամք ¹ սկսամ
ըստ կամս այսպէս մեկմել, թէ որովհետև Գրիգոր Կեսարիոյ մէջ
կրթուած և ամուսնացած էր, և թէ այդ արքեպիսկոպոսամիտ
քաղաքն՝ Հայաստամի մօտ էր՝ այն պատճառաւ հօմ զմաց ձեռնա-
դրել : Այսպիսի մեկմութիւն մի Գրիգորի մկատմամբ՝ հասկանալի
բամ է. սակայն ոչ մոյմպէս և մորա յաշորդաց մասին՝ որոցմ ձեռ-
նադրութիւնը հասնդիպեցամ յետ ժողովոյն Նիկիոյ և յետ հաստա-
տութեամ եկեղեցական մուկրապետութեամց : Փաւստոս՝ Ս. Դպրու-
թեամ ԻԹ. գլխում մէջ կ'աւանդէ, թէ յետ եղբրգական մահուամ
Մեծիմ Ներսիսի, երբ թագաւորն Պապ ըստ կամս կաթողիկոս՝ դրաւ
զՅուսիկ 'ի գաւակէ Աղբիամոսի, այս բանս լսելով Արքեպիսկոպոսն
Կեսարու (Ս. Բարսեղ) ծամրացատւամ եղև, զի 'ի « Տեղի մորա կա-
ցուցիմ զՅուսիկ՝ առանց հրամանի մորա, զի ոչ որպէս սոյն էին առ-
հարադրեան որանել 'ի Կեսարիա 'ի յեռնադրութեան ... և եղև ժողով ե-
ղեպոսացն սեանդորոյ Նահանգին Կեսարա ... և գրեցիմ թուղթ
ցասմամբ մեծաւ ... և լաւքին շէշխանութեան իմադրեալութեան. զի
որ լիցիմ հայրապետ Հայոց ... մի իշխեսցէ ձեռնադրել զԵպիսկո-
պոս Հայոց, որպէս սովոր էիմ 'ի բնէ : Եւ յայմ հետ շարձաւ իշ-
խանութիւն Հայոց զԵպիսկոպոս ձեռնադրել ... այլ երթալիմ 'ի
քաղաքն Կեսարացւոց և ամդ լիմէիմ Եպիսկոպոսը » : Արդ, եթէ
պարզապէս քաղաքավարական բամ մի էր Գրիգորի յաշորդաց եր-
թըն 'ի Կեսարիա, Ս. Բարսեղ լիմչպէս համարձակեցաւ ուրեմն ե-
պիսկոպոսական սիւմհողոսիւ լուծել այդ մորընտիր կաթողիկոսի
իշխանութիւնն, և վերստիմ հաստատել մախիկիմ իրաւասութեամ
գործադրութիւնը :

Չամչեամը Փաւստոսի այս տեղիս « հակառակասիրութեամ » ար-
դիւնը կը համարի. իսկ Օրմամեամ՝ ամհարազատ կը դնէ զայն և
« զհայս ամուսնարի ընելու դիտմամբ » մերմուծուած կը վարկա-
նի : Արդ, ես իսկ այդպէս կը համարէի, եթէ ուրիշ տեղեր ևս չլի-
մէին թէ առ Փաւստոսի ² և թէ առ այլս, որք այդ աւամդութեամ

1 Գերպ. Մաղ. Օրմամեամ, « Աթոռ Հայաստանեայց », էջ 30 :

2. Ջի Հեիմակս Դ. Դպրութեամ ժՅ գլխոյմ մէջ կ'աւանդէ, թէ յետ
մահուամ Գմէլայ երբ Ներսէս այլ ոչ ևս յաւել տեսանել զԱրշակ, թա-
գաւորն մն կացոյց փոխամակ այնր զՉումակ ոմն. և երբ հրաման դրը-
կեց Եպիսկոպոսացմ Հայոց գալ ձեռնադրել զՄա 'ի Կաթողիկոս, ամէն-
քը յետ կեցամ այս հրաւէրքէս, և միայն Աղծմեաց և Կորդուաց Եպի-
կոպոսերն եկան : Ահաւասիկ մորա խօսքերը. « Ապա հրաման տայր
թագաւորն՝ կոչել զամնայմ Եպիսկոպոսս Հայոց աշխարհիմ, զի եկես-
ցեմ ձեռնադրեցեմ զՉումակն 'ի Կաթողիկոսութիւն Հայոց : Եւ ոչ մի ոք
ոչ հաւանեաց գալ. բայց միայն Աղծմեաց և Կորդուաց Եպիսկոպոսը ե-
կեմ, և զՉումակն ձեռնադրեցիմ, ըստ հրամանի թագաւորն » : Փաւլս-
տոսի այս տեղուոյս հարազատութեամ մասին չէ պարտ տարակուսել.

գէթ մի մասին եղելութիւնը չհաստատէիմ: Ուստի իմ կարծիքով Փուստոսի այդ տեղոյն առաջին ¹ մասն՝ իբրև ստորգ եղելութիւն ընդունելու է. այսինքն թէ, Կեսարիոյ Սիմոնոսն՝ եկեղեցական օրինօք կամ լաւ ևս Նիկիոյ ժողովոյն ² համաձայն լուծեց զԿլեմէոսի Կրտսերի, ոչ թէ ընդհանուր յայնորդաց առ հասարակ, այլ այդ ապօրինաւոր կերպով Ներսիսի տեղ յաջորդող Կաթողիկոսին: Ուս միայն չէր կրնար եպիսկոպոս ձեռնադրել, և թէ Հայոց ապագայ եպիսկոպոսապետները միայն, և ոչ թէ ո՛ր և է եպիսկոպոս, պէտք էիմ դարձնալ Կեսարիայէն առնուլ զձեռնադրութիւն. այս է հարազատ իմաստ բանից Փաւստոսի, եթէ 'ի տգիտաց ևս ձեռք խառնուած համարիմք անդ. որովհետև « Հայրապետ » եզակի դէմքով՝ ուղղակի զԿաթողիկոսը կը հասկնայ հեղինակ հատուածին:

Թերևս հարցուի, թէ ի՞նչ էր արդեօք Կեսարացոց եպիսկոպոսին վերապահուած այդ իրաւասութիւնը, զոր երկուտեք 'ի վար արկամէիմ Հայք և Յոյնք՝ առանց վիճի, մոքս յառնուլ զԿաթողիկոսակամ ձեռնադրութիւնն, և սքա 'ի տալմ զայն. և իմչպիսի՞ն հիման վերայ հաստատուած էր այդ: Այդ իրաւասութիւնն էր համանման այնմ՝ զոր ունէիմ 'ի հերոսն հետէ կաթողիկոսը Հայոց՝ 'ի վերայ Աղուանից և Վրաց, 'ի ձեռնադրութեան անդ և յալ քանի մի դէպս. և թէ ի՞նչ պատճառներ՝ որք յառաջ բերին Հայոց կաթողիկոսութեան մէջ զմախաթոռութիւնն և մորս յարակից իրաւասութիւնը, մոքն իսկ յառաջ բերին Կեսարիոյ եպիսկոպոսապետութեան մէջ զգերակայութիւն: Արդ, այս պատճառներէս եթէ ոչ միակն և առաջինը՝ այլ գէթ գլխաւորն եղաւ այն գրաւոր գաղիմքը զոր կմքեցիմ Հայք Վաղարշապատու ժողովոյն մէջ եղած որոշորութեամբ, յորում մախազահ բազմեցան ճրդատ և Գրիգոր. և Յոյնք՝ Գրիգորի ձեռնադրութեան առթիւ 'ի Կեսարիա գումարուած յոգնա.

զի Մեսրոպը ծրէց ևս կը հաստատէ զայն (Պատմ. Ներս. տես Մովհ. Հայկ. հոտ. 2. էջ 66): Արդ, եթէ եպիսկոպոսը Հայոց ունէիմ իրաւասութիւնն ձեռնադրել զԿաթողիկոսն իւրեանց, իմչո՞ւ հրաժարեցան անտի և անաստեցիմ հրամանաց թագաւորիմ: Երկրորդ, դիտելու է, որ երկու եպիսկոպոսով կաթողիկոս ձեռնադրելմ՝ հակառակ էր թէ՛ Հայաստանեայց և թէ՛ այլոց եկեղեցեաց սովորութեանը կամ Նիկիոյ ժողովոյն Գ. համոռնիմ: Բ. Մ. Խորենացիմ ևս, որ հայրենասիրութեան հետ ճշմարտասիրութեամբն ևս կը գերազանցէ քան զբազումս, Փաւստոսի առաջին տեղին իբրև հարազատ և անտարակուսելի իրողութիւն մէջ կը բերէ, ասելով այսպէս վասն Պապայ. « Ապա հարկաւորեալ յուզեաց և եզիտ զոմն յազգէ Աղբիամոսի, որում Շահակ կոչիւր, ոչ հետի 'ի գովութեմէ. զոր կայոց փոխանակ Ներսիսի՝ առանց մեծի Արքեպիսկոպոսին Կեսարու »: Մովսիսէն յիշուած ամուր կը տարածայմ յիշատակելոցն 'ի Փաւստոսէ. այսինքն է, 'ի Յուսկայ և 'ի Զոմակայ, սակայն ըստ իս մոյմ համարելի է ընդ վերջմոյս. և թէ Զոմակ՝ մակամունն է Շահակայ և ոչ այլ իմչ:

1. Այս ամտի իսկ յայտ է, զի 'ի վերջ կոչս մի և մոյմ գլխոյմ՝ խօսքը դարձնալ Յուսկան վերայ կը դառնայ և Յուսիկով կ'աւարտի, յասելն. « Եւ սա ... կայր 'ի լուսութեան և 'ի համազարտութեան զամենայն աւուրս կեանաց իւրոց »:

2. Որ կ'ըսէ. « Իւրաքանչիւր տեղոյ եպիսկոպոս կարգեցի հաւատութեամբ եպիսկոպոսապետիմ » (վիճակակալ):

խումբը նախկնդարաց ժողովոյն մէջ: Յիրաւի, ճիշդ այս դառնմբս կ'ակնարկէ մեզ կենսագիրն Գրիգորի, Ղևոնդիոսի առ թագաւորն Տրդատ ուղղուած թղթոյն հետեւեալ խօսքերով. « Եւ հասարակեալ կայցէ վայտախիւսն ՚ի թիւ երկոցանց կողմանց, զի պարբերաբար ինչն մորոզեալ Կենսապայտախիւսն որ ծնորդը մահամզկողսն ՚ի թիւն կայցէ առջարժ յեկեղեցոջն կ'եսարու »: Աստուծոյ Հայաստանէոց երկասիրու թեամ հեղինակն այսպիսի կամակոր մեկնութիւն մի տուած է այդ խօսքերում յասելն, թէ « Ս. Ղևոնդիոսի առ Տրդատ թագաւորն գրած թղթոյն մէջ ո՛չ Կեսարու Աթոռոյն զերիշխամութիւնն ու ո՛չ իւր իրաւունքը Հայաստանի վերայ, այլ միայն բաւական կը սեմէն առաջարկել, որ Գրիգորի յաշորդմերը՝ իրենց մախորդին մնան ծնունդութիւնը Կեսարիոյ աթոռէն առնում, որպէս զի յաւերժական պահովի այդ մեծ դիպուածոյն յիշատակը »: Սակայն ըստ իս և ըստ ճշմարտութեան, պէտք է ըսել, թէ այս մեկնութիւնս բոլորովին օտար է ՚ի ըմագրէն. և թէ Տրդատայ պաշտօնական թղթոյն՝ այս պաշտօնական պատասխանոյս մէջ « հաստատեալ կայցէ վայտախիւսն », ուրիշ բան չեն մշամակեր, բայց եթէ այս երկու ազգացս աշխարհական և եկեղեցական իշխամութեանց կողմէն կըրուած իրար դարձմաբար թիւսն մորոզեալ քահանայապետութեանը՝ կայցէ պաշտօնական յեկեղեցոյն Կեսարու » . և այս վերջին մախադասութիւնս արգասիք համարելու է առաջնոյն, առանց շփոթելու ընդ իրեարս:

Երկրորդ պատճառն և հիմը Կեսարացոց կողմանէ՝ Հայոց վերայ ունեցած իրաւասութեանն, եղան յամին ՅՁԾ Նիկիոյ սուրբ ժողովոյն մէջ յաղագս բարեկարգութեան եկեղեցական վիճակաց և աթոռոց եղած որոշումներն և կամոմադրութիւնները: Արդ, եկեղեցական պատմութեան մէջ իբր ընդհանուր ճշմարտութիւն ընդունուած է, թէ Նիկիոյ ժողովքէն յառաջ, եկեղեցոյ գէթ խաղաղական օրերուն մէջ, յԱռաքելոցմէ հաստատուած մի քանի եկեղեցիներ, այսինքն է, Աղեքսանդրիոյ, Հռովմայ և Ամսիոքայ՝ և Կեսարիոյ Պաղեստինացոց Հայրապետութիւնները կամ Պատրիարքութիւններն՝ արդէն զերազոյն իշխամութիւն և իրաւասութիւն ստացած էին և կը վարէին շրջակայ գաւառաց և մահամզաց վերայ: Այսպէս և առանց երկբայութեան է, թէ երեք ուրիշ բարձրատիման գրովք կամ լաւ ևս հայրապետութիւնը կային ՚ի Կեսարիա Կապադովկացոց, յեփեսոս և ՚ի Հերակլիա Թրակացոց: Բայց որովհետև յետ Կոստանդինոսի դարձին կամ մոյմաժամանակ՝ մէկ կողմէն ուրիշ ազգեր և ժողովուրդք ևս դարձան ՚ի քրիստոնէութիւն, յԱրևելու և յԱրևմուտս. իսկ միև կողմէն ալ քաղաքային վիճակաց հետ ՚ի միւս սին եկեղեցական վիճակք ևս փոփոխեցան, ուստի վէճերը դադրեցնելու համար հարկ եղաւ որ սուրբ ժողովմ աթոռոց բարեկարգութիւններ հաստատէ: Ուստի այս բարեկարգութիւններս ըրած ժամանակ՝ երկու բան դիտեց. այսինքն է, մախ եկեղեցեաց կամ առաքելական աթոռոց միմէն այն ժամանակ շարունակուած սովոյ,

րութիւնն, որ իրաաստութիւն և օրէնք դարձած էր: Բ. Տէրութեանց և այն մայր քաղաքաց քաղաքական կացութիւնն՝ յոյս կը գտնուէին հայրապետական աթոռք մասնական եկեղեցեաց: Այս բանս խիստ յայտնի է մոյմ ժողովքին խօսքերէն¹: Իսկ որովհետև մէկ կողմէն, թէ՛ ըստ հին քաղաքային վիճակագրութեան և թէ՛ յամիմ ՅՁԾ (ինչ պէս և յետոյ) Հայոց տէրութիւնն ստորակարգեալ կը համարուէր Հռովմէա-Բիւզանդական Կայսրութեան. իսկ միւս կողմէն ալ, ինչ պէս տեսանք, Հայաստանեայք՝ իրենց առաջին հայրապետին (և մորա յաշորդաց) ձեռնադրութեան գործադրական սովորութեամբն և գրաւոր դաշամբք՝ Կեսարիոյ մախաթոռոյն իրաաստութիւնը ճամնէ ցած էին. ուստի ըստ այնմ՝ ևս որոշեց ժողովն որ շարունակուի: Սակայն Հայաստանեայց Հայրապետութիւնը կամ եկեղեցական աթոռքն ինչ պատճառներով որ ստորակարգեալ էր մախաթոռոյն Կեսարիոյ, մոյմ կրկին պատճառաց համար գերիշխանութիւն կամ գերազոյն իրաաստութիւն ունէր իրեն (Հայոց) ստորակարգեալ Վրաց և Աղուամից աթոռոց վերայ:

Յիրաւի, Գ դարու ծանրակշիռ հեղինակութեանց մին, այսինքն է, Գեղասիոս Կիւզիկեցի եկեղեցական պատմագիրը՝ Նիկիոյ ժողովոյն պատմութեան Բ. գրոց ինչ գլխում՝ յայտնապէս կը հաստատէ Կեսարիոյ մախաթանութիւնը մաս Հայոց Մեծոց վերայ, յասնելն. « Դևոնդիոս Կեսարիոյ Գամրաց, զարդ եկեղեցոյն Աստուծոյ, ունէր իշխանութիւն եկեղեցեացն Գամրաց, Գաղատիոյ, Գոմտոսի, Գափղա գոմիոյ, Գողենոմականն Գոմտոսի, Հայոց Մեծոց և Փոքր Հայոց: Օրման մեանը՝ ինքնահմար մեկնութեամբ Մեծ և Փոքր Հայոց՝ առած է փոխանակ Արմենի և Երփրոք Հայոց, ցուցանելու համար, թէ վերջինս միայն Գոմտոսի Նքսարքութեան մահաճններուն մէջ լինելով՝ Կեսարիոյ աթոռոյն իրաաստութեան տակն էր. իսկ Մեծ Հայք՝ ազատ էր անտի: Սակայն Գերայ. հեղինակն պէտք էր դիտել, իբրև պատմական և համրածանօթ ճշմարտութիւն մի, թէ թէպէտև Տրայիանոսէն սկսեալ, երբ Փոքր Հայք Հռովմայեցոց իշխանութեան մերթն գրաւեցաւ, միմչև Յուստինիանոս՝ երկուքի բաժնուած էր, այսինքն է, Արմենի և Երփրոք. սակայն և այնպէս ոչ ոք ՚ի պատմագրաց կամ յաշխարհագրաց Յունաց և Հռովմայեցոց շփոթեց երբեք զամռք Մեծին Հայոց հետ, այլ կամ պոնտոսի Արմենի կը կոչէին և կամ Արմենի և Երփրոք Արմենիա: Արդ, այս բանիս վերայ տարակուսեմ իսկ ամտեղի է. զի Գողոմէոսէն և Ստրաբոնէն (Գիրք. ԺԱ) սկսեալ՝ ամենքն ալ Մեծն Հայք (μεγάλη Ἀρμενία) ըսելով կը հասկնային միշտ Եփրատ գետոյն կամ Խաղտեաց արևն-

1. « Նախնեաց սովորութիւնք պահեսցին որպէս եմ յնգիպտոս, ՚ի լիբիա և ՚ի Գեմտապոլիս, զի Աղեքսանդրիոյ եպիսկոպոսն ունիցի իշխանութիւն ՚ի վերայ սոցա ամենեցուն, վասն զի և Հռովմայեցոցն եպիսկոպոսին այս սովորութիւն է. մոյմպէս և յԱմտիոք և յայլ ևս գաւառս (մահաճ գ կամ վիճակ) պահեսցին իշխանութիւնք և պատիւք և մեծութիւն իւրաքանչիւր եկեղեցեաց»: Գամոն, 2. Ս. ժող. Նիկիոյ (Acta, II, 36, ըստ լատին և յունարէն բնագրին):

լեան կողմի երկիրն, որ կը ձգուի յարևելից մինչև Կասպից և Պարսկայիմ ծովերն, և Կուր գետն ՚ի հիւսիսոյ, և հարաւէմ՝ ցՄիջագետս Հայոց: Իսկ Փոքրոմ Հայոց սահմանքն և բաժանմունքը կը դնեն որիչ ՚ի մնամէ: Սակայն այս բանիս ամենէն աւելի շօշափելի ապացոյցը կու տայ սեզ նիկիոյ ժողովական սուրբ Հարց և Հայրապետաց ցուցակը¹, յորում որոշակի կը յիշուի. « Աւերապետ » կամ՝ Ռոստակէս « Մեծի Հայոց »: Արդ, եթէ Մեծն Հայք՝ փոխանակ Աւերապետ մունք աստ, ըստ կարծեաց Օրմանեանի, այն ժամանակ Արիստակէս եղած պիտի լինէր Կեսարիոյ կամ Սեբաստիոյ և ոչ թէ Վաղարշապատու եպիսկոպոս: Դիտելու կէտ մի է և այս, զի այդ ցուցակին մէջ Փոքր Հայտ երկիցս կը յիշատակուին, որ յայտնի ապացոյց է, թէ այրու կը հասկնային Աւերապետ և Երեւոյր Հայոց լեռնաշխարհայն, Օրմանեան այդ Փոքր Հայոց կամ պոմտական վիճակները միայն ենթարկելով Կեսարիոյ հայրապետին գերիշխանութեանը, վերջիշեալ մեկնութեամբ Համացել է շրել հաս Տեփլիզէրց² և այլ վկայութիւններն, որոնք զՄեծն Հայս ևս կը դնեն Կեսարիոյ իրաւասութեան մերթն: Սակայն և այնպէս այն վկայութիւններն իրենց ուժի մէջ կը մնան. որովհետև պոմտական այդ կրկին վիճակներն ոչ միայն լեզուով և ծիսակատարութեամբ արդէն ՚ի վաղուց յոյն եկեղեցին հետ մի մարմին կը կազմէին, այլ նոյն իսկ քաղաքականօրէն ամենապարզ ձևով մէկնական տէրութեան մերթն անկեալ էին, ուստի մոցս մասին դժուարութիւն չկար. այլ Հայոց Մեծաց վերայ էր խօսքը, որուն թէպէտև աշխարհագրական սահմաններն որոշ էին ՚ի պոմտական սահմանաց, ինչպէս և քաղաքային վարչութիւնն անկախ էր ընդհանրապէս ՚ի հռովմէական վարչութեանէ. սակայն ըստ եկեղեցական վիճակագրութեան և իրաւասութեան, պոմտական թեմի աշխարհաց կամ վիճակաց մէջ կը թուէր: Եւ այս բանիս պէտք չէ բնաւ զարմանալ և ընդդիմադրել, զի Վրաց և Աղուանից կաթողիկոսութիւնք կամ եկեղեցական վիճակներն արդէն իսկ այսպիսի եղելութեան ամենախելի ապացոյցը տուած են, որոնք թէև քաղաքական վարչութեամբ և աշխարհագրական սահմանօք զատեալ էին ՚ի Հայոց, բայց ըստ եկեղեցական վիճակագրութեան ամբողջին Հայաստանեայց կաթողիկոսի իրաւասութեան մերթն կը գտնուէին: Եւ յիշուի, յամին 372, ուղղափառ հաւատոյ մասին առ

1. Այս ցուցակս գրուած է, Ա. յունարէն լեզուով, առ Յակովբայ Մուրիլի, Bibliotheca manuscripta graeca et latina, I, p. 223-233. Bassani, 1802: Բ. լատինարէն առ Փիլ. լաբբէի Sacrosanctis Conciliis, II, col. 50-54: Գ. Ղպտիարէն և լատինարէն առ Յ. Մ. Պիտրայ Spicilegio Solesmensi, I, 516-536, և Ղպտիարէն միայմ առ Ե. Ռովիլու, Le Concile de Nicée, Paris, 1881, p. 17-22: Դ. Ասորերէն առ Հառիս Կովպէրի, Analectas Nicænis, p. 5 et seq.: Ե. Ասորերէն և հայերէն, և վերջինս ասորերէնէ թարգմանուած կ'երևի:

2. Notit. Dignitatum. Or. c. I, 2 et 23. — Boeckhing, ad Notit. — Cod. Theod. 7, 1, 15 8, 5, 57, 12, 6, 21 § 1 et 15 2 et Cod. Justinian. 8, 10, 10. — Թէոդոսի Բ. և Վաղիմտիանոսի Nouvell. Constitut. a. 441, tit 5, et § 1.

Արևմտնայս գրուած Ս. Բարսեղի թղթոյն (ՂԱ) մէջ կը գտնուին 32 եպիսկոպոսաց ձեռնազրուեթիւնք, որոց 14ը կը վերաբերէին Կապալ դովկացւոց կամ Կեսարիոյ սարքեպիսկոպոսապետական թեմիս, որոնց առանձին թէմերն գտաւ և որոշեց Տիլլըմնո (T. IX, p. 172), 'ի թիւս որոց կը յիշուին երկու եպիսկոպոսք 'ի Փոքրուն Հայոց' և 'Իս՝ սճառց Յառա՛ի' և Հայոց Մեծոց: Արդ, եթէ Յուսիկս այս' է Փաւստոսէմ յիշուած եպիսկոպոսն կամ Շահակն, այնուհետև կը հաւատարմամայ և այն, զոր աւանդեց այլուր Փաւստոս:

Երկրորդ, Մ. Խորենացի՝ Պատմութեան Գ. գրոց ԾԴ գլխուն մէջ խօսելով զվարդապետութեան Մեսրոպայ, այսպէս կ'ըսէ. « Եւ ուսոյց զքմաւ կողմանս բաժնոյն Պարսիցք քայց 'ի Յունաց մասէն, որք ընդ Երևանոսիս տուգամեցամ վերստէ յախարհ Կեսարոս, վարել յունական դպրութեամբ և ոչ ասորով »: Արդ, քաջ դիտելու ենք, զի Մովսէս իւր ժամանակի Պարսիցք բաժնի Հայոց ազատութեան միակ պատճառը կը դնէ զքաղաքական բաժանումն կամ տիրապետութիւնն 'ի կողմանէ Պարսիցք. իսկ Յունաց բաժնի Հայոց՝ Կեսարիոյ աթոռոյն վիճակելուն իբրև միակ պատճառ կը դնէ զեկեղեցական իրաւասութիւնը կամ զՍեբաստիանոսի: Ուրեմն ասիկ կը հետևի, թէ քանի որ այդ քաղաքական բաժանումն և տիրապետութիւնը տեղի ունեցած չէր Պարսիցք կողմանէ, ըստ եկեղեցական վիճակագրութեան կը ճանչնային բոլոր Հայք՝ Կեսարիոյ աթոռոյն զերիշխանութիւնը: Դիտելու ենք դարձեալ և՛ զայս, զի Յունական բաժնի կը կազմէին ոչ միայն Արևելք և Երկրորդ Հայք, այլ միմչև յԱյրարատ մահանգ տարածուած երկիրներն, ըստ վկայութեան Մովսիսի՝ Խորենացւոյ:

Երրորդ պատճառն ձեռնադրութիւն առնոյ Հայոց հայրապետիմ՝ 'ի Կեսարիոյ եպիսկոպոսապետէն, և սորայս իրաւասութեանն 'ի վերայ Հայաստանեայց՝ էր այս, ըստ Մեսր. Երիցու 2, զի Կեսարիա 'ի սկզբան անդ Արշակունի թագաւորութեան, որպէս և յառաջ, ըմդ իշխանութեամբ Հայոց եղած էր, և Թաղէոս անդ հաստատեաց մայր

1. Զի Գ. Գրոց ԽԲ. գլխում խօսելով զբաժանմանէն Հայաստանի յաւուրս Շապուհի և Արկադեայ, այսպէս կ'ըսէ. « Վասն որոյ հաւանեալ կամաւ յամծն առին բաժանել զՄիջագետս և զՀայոց աշխարհս կրկին սահմանադրութեամբ: Վասն որոյ թողեալ Արշակայ զքուն թագաւորութիւն հարց իւրոց զԱյրարատ և զամենայն մասն բաժնին Պարսիցք, զմաց տիրել արևմտեայ կողմանց աշխարհիս մերոյ, որ 'ի մասն բաժնին Յունաց էր »: ԽԳ գլխում՝ զՄպեր և զՏայս՝ Արշակայ և Յունաց կուտայ. ԽԶ. գլխոյն մէջ կը ծանուցանէ, թէ Վամանդ գաւառն յոստրովուսահան էր, և թէ Արշակ արշաւեց ամդը և ետ պատերազմ 'ի դաշտին Երևել:

2. « Բայց ասացից զպատճառս ձեռնադրութիւն առնոյ Հայոց 'ի Կեսարացւոց. զի էր համապագ լեալ Կեսարիա ըմդ Հայոց իշխանութեամբ, և մտեալ անդ Առաքելոյն Թաղէոսի լուսաւորեաց զմոսս և ձեռնադրեաց զմի ուս յաշակերտաց իւրոց քահանայ և եպիսկոպոս, որուն անուն էր Թէոփիլոս. զոր եթող առաջնորդ մոցս և ինքն զմաց 'ի Հայս: Այնք աղազաւ առնուին ձեռնադրութիւն Հայք 'ի Կեսարիա, միմչև 'ի ժողովմ քաղկեդոնի »: Մոփ. Հայկ. հտ. 2, էջ 31:

զաթոռ իւր, և ձեռնադրելով փոխանակ իւր զԹէոփիլոս, ինքն եկաւ 'ի Հայս: Սակայն, ըստ իս, պէտք է ասել, թէ այս չէ բուն պատճառ այնպիսի մի իրողութեան, այլ նոյն ինքն կատարուած իրողութեան պարզ յառաջբերութիւնն: Իսկ բուն պատճառն է հետևեալն, որով հետև թաղէոս Առաքելոյն 'ի Մեծ Հայս (յԱրտագ) հաստատուած եպիսկոպոսութիւնը, ինչպէս յառաջագոյն տեսանք մախազրիզոյրեան եպիսկոպոսաց ցուցակէն, հազիւ կը հասնի ցամ Տեսում 120. այնպէս որ Գրիգորի ձեռնադրութեան ժամանակամիջոցին արդէն իսկ բողոքովին հասել էր մորա յաշորդութիւնն և յիշատակն հազիւ մնացել էր: Այսպէս էր յեղեփիս հաստատուած աթոռն այսմը 280: Իսկ Գեսարիոյ մէջ Առաքելոյն հաստատած եպիսկոպոսութիւնն՝ ոչ միայն ամբողջատ յաշորդութեամբ կը շարունակուէր մահ յամին 326, այլ նոյն իսկ, ըստ հաւատարիմ վկայութեան Նանքիոսի ¹, Թէոփիլոսի ժամանակէն 'ի վեր ունէր զմախագահութիւն 'ի վերայ շրջակայ վիճակաց: Այս պատճառաւ ուրեմն Լուսաւորիչն Հայոց և Հայք՝ զեղեցիկ խորհուրդ 'ի մէջ առին, Թաղէոսի մախաթոռէն դարձեալ առնուլ զձեռնադրութիւն, և այնու սկիզբն տալ Թաղէոսեան ընդհատեալ եպիսկոպոսութեանն. և այսու միայն կարող էին յորջորջել զաթոռն Հայաստանայց՝ առաքելական կամ Թաղէոսեան և իրօք յորջորջեցին, Ջեմորէն սկսեալ, տոհմային մատենագիրք ² առ հասարակ: Արդ, 'ի մկատի ունելով այս ճշմարտութիւնս, այս ինքն է, մախ զընդհատութիւն և ապա զմորդութիւն եպիսկոպոսութեանն 'ի Հայս, չէ մարթ ինքնագրութիւն ամուսնն զայն, առանց մեծապէս վնասելու և ստուերածս անելոյ

1. Հեղինակս կը պատմէ իւր Եկեղց. Գատմութեան Ե. Դպրութեան մէջ, թէ երբ Ջատիկ խնդրոյն համար ժողով զուսարեցաւ յերուսաղէմ (70-90), ուր էին մանայն եպիսկոպոսք վիճակակալ Աթոռոց Արևելից և Արևմտից, ամդէն կը յարէ, թէ «Որոց զահերէց մտտէին Թէոփիլոս եպիսկոպոս Եկեղեցւոյն Գեսարիոյ և Նարկիսոս Երուսաղեմացոց»: Արդ, Թէոփիլոսիս՝ չգիտեմ հմութեամբ թէ ամուսնակոչութեան (Աստուածասէր) պատճառաւ՝ գոյութիւնը տարակուսի տակ ձգեցին արդի գիտնականներէն ուսմք. սակայն Եսեբրիոս կը վկայէ այդ տեղում, թէ «Կայ մինչև ցայսօր ժամանակի զիր այնոցիկ, որ ժողովեցան յայնժամ 'ի Գաղեստիս»:

2. Նշամաւոր են առ այս Մեծին Վարդամայ Ս. Գրիգորի Ներքողիւնւոյն մէջ բերուած յետագայ խօսքերն, զորս ես իսկ կ'ախորժեմ աստ մէջ բերել. «Գերմ և պայծառ մախարարօք և արքունական կառօք 'ի Գեսարիա երթեալ 'ի մայրաքաղաքն Գապաղովկացոց և մայրն հիմնարկութեամբ 'ի Հայաստանայցս 'ի Թաղէէ Առաքելոյ, ուր արար զառաջին ձեռնադրութիւնն և զհիմնարկութիւն Եկեղեցւոյ: Երթեալ առնուալ ռաքելական պատիւն՝ յառաքելական հօրէն Ղևոնդեայ, զի իցէ իրքն կարգաւոր և աստուածագործ հրաշ: Քամզի առ շիրձօքն մորա յղացաւ և էառ սկիզբն գոյութեան, 'ի մորին խմամոց ածաւ 'ի տեղի առաջին շմորիսաշխութեան մորա. և ըմկալաւ 'ի մամնէ զսկիզբն գոյութեան բնդ Աստուծոյ: Առաջին աթոռ, ուր զսուրբն Թէոփիլոս՝ եպիսկոպոս ձեռնադրեաց սուրբն Թաղէոս. և 'ի նոյն աթոռոյ, ուր ըմկալաւ զշմոր հրոս աւագանին 'ի Գեսարիա, այժմ էառ զամենակատար ձեռնուրդ, և զբովանդակ շմորիս առաքելութեան ...: Ջի հասարակ ցմնացեմ սերմալ մողթն առաջին՝ Բարդողիմէոս և Թաղէոս, և վերջին հմծողքն և շտեմալ

առաքելականութեան մորա, որ կայացած է Թաղէսի Առաքելոյն
 շարունակութեան և իւր մախաթոսոյն հետ ունեցած իրա-
 ւասական և կրօնական յարաբերութեանը մէջ: Յիրաւի, մինչև ցրիմ
 զերորդ դար՝ քանի որ այս կրկին յարաբերութիւնքս սերտ էին,
 Յոյնք ոչ ելլէք յանդգնեցամ զհայս հերձեալ անուանել և ոչ այլ
 մուկրապետութեան մասին վէճեր յարուցանել: Սակայն որովհետև
 եղան և են, որք այս կարծիքս՝ այսինքն է, ինքնազխտութիւն հայաս-
 տանայց աթոռոյն պաշտպանեցին, կարծելով մեծ և մուկրական
 ծառայութիւններ մատուցանել մմա, ուստի տեսնեմք, թէ իմչ պա-
 րագաներով և իմչ հիման վերայ:

Առ Յովնանու Կաթողիկոսի, զւ. ժԲ, կ'աւանդուի, թէ Դ դարուն
 և յետ ձեռնադրութեան մեծին Ներսիսի՝ « Թագաւորն Արշակ և մախ-
 արարութիւնք հայոց համարձակութիւն առեալ կացուցին 'ի Պատ-
 ըխարքութիւն տանս Թորգոմայ՝ զՄեծն Ներսէս, փաստս իրաւախոհս
 ըստ արժանին 'ի մէջ առեալ զսուրբ Առաքեալսն, զԲարդուղիմէոս
 և զԹաղէոս, որք Ասքամագեան ազինս վիճակեցամ »:

Հեղինակիս մէջ բերած աւանդութիւնն և փաստն իրաւախոհ իսկ
 համարողաց՝ պէտք է ըսել, թէ պատմականէն աւելի ազգասիրա-
 կան պահանջ մի է պարզապէս և ոչ աւելի: Յիրաւի, Փաստոս Բու-
 զգանդացի Դ. Դպրութեան Դ. գլխոմ երկու ժողով կը յիշէ առ Արշա-
 կաւ, յորոց մին եղաւ 'ի Վաղարշապատ, թագաւորին և հայաստա-
 նայց կողմանէ, ընտրել զոր 'ի տանէմ Գրիգորի կաթողիկոս, ըստ
 հմաւանդ սովորութեան հայաստանայց, յորում և ընտրեցաւ մեծն
 Ներսէս և որկուեցաւ 'ի Կեսարիա: Իսկ միւսն եղաւ յԱշտիշատ Տա-
 րօմոյ՝ հրամանաւ Ներսիսի և յետ ձեռնադրութեան մորա, ուր ժո-
 դովեցան եպիսկոպոսք հայոց, ըստ զրելոյ Փաստոսի. բայց « Առ 'ի
 կատարել անդ զաշխարհական կարգս եկեղեցւոյն և ժողովմ հաւա-
 տոցն հաւասարութեան: Յայնմ՝ ժամանակի կարգեցին կամոնեցին
 և արարին զանեանայն ժողովուրդս երկրին հայոց՝ իրոն կարգ միա-
 բանութեան վանականաց համաշխարհի, բայց միայն յամուսնու-
 թեան օրինացն »: Արդ, Յոհան կաթողիկոսի վերոյիշեալ վկայու-
 թիւնը՝ Փաստոսի այս տեղոյս սխալ հասկացողութեանը վերայ
 հաստատուած է: Սակայն այս տեղոյս մէջ խօսքը ոչ պատրիար-
 քութեան վերայ է և ոչ այլ եկեղեցական մուկրապետութեան. այլ
 աշխարհական բարեկարգութեանց, վանական ընդհանուր հիմնա-
 կութեան և մորա կալուածոց հաստատութեանը՝ համար էր,

բանողք՝ Գրիգորիոս և որդիքն իւր քաջագօտիք »: Սոփ. հայկ., հտ. Ե
 էջ 49-50:

Այս է ահա թԳ դարու համբաւաւոր վարդապետին, մամուլաւոր թէ ըմբ.
 հանուր համոզումն, յորմէ այլազգ կը խորհին յարդի վարդապետաց
 ոմանք. սակայն ես չեմ տարակուսիր բմաւ, թէ Վարդանայ խօսքերն
 ոչինչ ընդհատ 'ի պիւրօստութեանէ՝ են մոյմպէս և պատմական:

1. Փաստոսի այս տեղիս, պատմական քննութեամբք համոզեմ զե-
 ղեցիկ կիրպով բարգաւաճել է արդէն ազգասէր բամասէրն Բաճճի,
 իւր « Սամուէլ » վիպասանութեան մէջ, առանձին գլխով մի:

մպատակաւ օգնելու թշուառաց և ամտերունչ մնացելոց: Յիրաւի այս եղբրութիւնս այլուր իսկ Բուզանդացիմ քաջ կը բացատրէ, երբ Ներսիսի բարեմորգութիւններն մի առ մի կը թուէ: Մովսէս Խորենացիմ¹ և Մեսրոպ Երէց ևս՝ Փաւստոսի այս տեղիս այսպէս հասկացած են և մէջ կը բերեն, առանց պատրիարքական զերիշխանութեան կամ անկախութեան յիշատակութիւնն ընելու: Մամաւանդ թէ երկաքանչիւրն իսկ 'ի հեղինակացս՝ կը հաստատեն, թէ ցԺ դովմ Քաղկեդոնի՝ յաթորոյմ Կեսարիոյ կ'առնուին հայրապետք Հայոց զծեռնադրութիւն: Մեսրոպայ վկայութիւնն արդէն լսեցիմք յառաջագոյմ և խիստ յայտնի է. իսկ Մովսիսիմ վերջէն պիտի տեսնենք:

Երկրորդ, եթէ ամէն Առաքելոցմէ հաստատուած եկեղեցիներն և եպիսկոպոսութիւննք բաւական փաստեր լինէին անկախ պատրիարքութեանց և մախագահութեանց, այն ժամանակ հարիւրաւոր պատրիարքութիւններ և մախագահ աթոռներ եղած պէտք է որ լինէին: Սակայմ Նիկիոյ, Եփեսոսի և Քաղկեդոնի ընդհանրական և սուրբ ժողովներն, և մոցա հետ մերքս իսկ և մա ինքն Գր. Տաթևացի, չորիս նեթ կը ճանչնան Պատրիարքութիւնս և մոյնչափ ևս զահերէց արքեպիսկոպոսութիւնս կամ մետրապօլտութիւնս: Այնպէս որ Երուսաղեմայ ('ի Տեառնեղբորէն հաստատուած) մախաթոռոյմ սուրբ ժողովմ², կ'ենթարկէ զեպիսկոպոսն մորա իշխանութեան եպիսկոպոսապետին իւրոյ կամ Մետրապօլտիմ Կեսարիոյ Պաղեստինացոց. և այս Եփեսոսի Ս. Ժողովոյ Ե. Նիստի զործերէն իսկ լաւ կը տեսնուի:

Յովհ. կաթողիկոսի կարծեաց ամհաստատութիւնը դեռ անկի յայտնի կը լինի՝ յէ դարում լուսափայլ համհարով և սրբութեամբ ծաղկող ծամրակշիռ հեղինակի մի, այսինքն է, Մաքեմնոցի վանահօր Սողոմոնի մէկ հատուածովը, զոր 'ի մէջ կը բերեն Ստեփանոս Սիւնեցիմ³ և Մ. Կաղանկատուացի⁴, խօսելով Յունաց՝ Հայոց հետ ունեցած մեծամեծ վիճարանութեանցը վերայ, որք եղեն սու Մար-

1. Պատմ, Գ. գլ. Ի այսպէս կը խօսի զՆերսիսէ. « ժողով արարեալ եպիսկոպոսաց և համօրէն աշխարհականօք, կամոմական ոահմամադրութեամբ հաստատեաց զողորմածութիւն, խլելով և զամգթութեան արմատ, որ բմաբար սովորութեամբ էր յերկրիս մերում »:

2. Կամոմ Ե. « Եպիսկոպոսն Երուսաղեմի, ըստ առաջին սովորութեան, երևելի պատուով մեծարեցե. բայց պահեալ զկարգ պատշաճ իշխանութեան եպիսկոպոսապետին իւրոյ »: Սոյմը տես և՛ առ Պիտրայի *A-nalecta sacra Spicilegio Solesmensi*. T. IV, p. 456. Paris, 1883: Յայտնի չէ, թէ այս եպիսկոպոսապետս, որում կ'ենթարկուի Երուսաղեմայմ Ամտիրքայմ իցէ թէ այլոյ եկեղեցոյ: Հիմ ծնուագիր օրինակք իմչ, յառաջ քան զկամոմս ամմիշնապէս կը յիշեն զեկեղեցիմ չոզմայ: Այսպէս հասկացել է Շմորհալի (յԱ. թուղթ առ կայսրն Մամուէլ), Միս. Գօշ 'ի Դատաստանագ. գլ. ԾԶ. և Միսիթար կաթողիկոս, Ժող. Սոյո:

3. Պատմ. տանն Միսական. գլ. ԻԵ:

4. Պատմ. Աղուամից, Բ. գլ. ԽԸ:

վիճակներն ինչպէս, և յետոյ ՚ի թէ ուղտուպօլիս գումարուած ժողովոց մէջ, եկեղեցական խմորոց և հաւատոյ դաւամութեան մասին: Աստ, այսպէս կը գրէր վերոյիշեալմ Սողոմոն. «Ոչ պարտեցան Հայք ՚ի հաւատոյ մասին, այլ այսուիկ եղեմ յոյժ պարտեալք, զի սասցին Յոյնք, եթէ կարգաւորեաց Աստուած զեկեղեցի իմն դասուք որպէս ՚ի վեր ամրոր երկնայինմը՝ մոյմպէս զահակալեցան մերքին խորամիս Պարբերքէ, որ է հայրապետ և արքայապետ, որ կոչին եպիսկոպոստայեանք, Բարապետք և եղևիտայոստ, Կահանայք և Բարապետք, Կեսապարտապետք և ընկերացոյք և Բարապետք. այսոյիկ ամենայմ միաբաւ մեալ՝ ապա կարեմ ձեռնադրել զհայրապետն, և հայրապետն զամենեսեան: Արդ, եթէ ողջմտութեամբ հաւատայք խոստովան լեռուք, եթէ ո՛վ է Պատրիարքն ձեք, զի չորք միայմ կացին ՚ի վերայ երկրի. Աղեքսամողրիմ Մարկոսի աթոռն, Ամտիոքայմ Մատթէոսին, Հոսովմայմ Ղուկասուսն, Միկետոսիմ Յովհաննուսն, ըստ չորեքանկեան որք յերթոց, ըստ քառակտակ զետոցն աղիմակամի, ըստ չորեքեղեցեան կենդանեացն, ըստ չորեք Աւարարանեացն, ըստ չորից Մովսիսական օրիմացն, զի Յերկրորդում օրիմացն որիշ հասարի: Եւ թէ ամենեցան հեռադարեմք. հմագամեցարուք ղուք միում ՚ի մոցամեն կամ ամենեցում, որ մի հաւատ լիմիմք. քամզի յերն ՚ի Կեսապիայ եղևիտայոստայեան միայմ յեռադարեցոս Ս. Պարբերք և յետ Զորս միշև ցայտօր. ապա եթէ այլ ոք եկեղեցի ուղղակիառ էք գատ յայսցանէ, ցուցէք և զպատրիարքմ ըմդ որ դասի արքայապետայոստայեան յեր, որ միշև ցայտօր ընդ թէ եք: Ապա եթէ պատրիարք ոչ ումիք և այլ կղերիկոս եկեղեցոյ, հերժուածողք էք . . . : Այնու իսկ ամպատասխանիք պարտեալք լիմէլիմ Հայք, զի այնպէս որք Կեսապիայ Վարդ Նիկեոյն » :

Արդ, եթէ մեծն Ներսիսէմ սկսեալ միմչև ցճարկէմ կամ Աբրահամ ումեցած էին Հայք իրենց անկախ պատրիարքներմ, և եթէ Յովն. կաթողիկոսէմ յիշուած փաստս իրաւակտմնս առ ձեռն պատրաստ ումէլիմ մոքա, իմչն համար մէջ տեղ չբերիմ՝ ապացուցանել զայմ, այլ եղեմ ամպատասխանիք: Արդ, Սողոմոնի այս վկայութեամբս կը ջրի և այն մտացածիմ կարծիքը, թէ Նիկիոյ ժողովքէմ յառաջ և յետոյ, իմչպէս Կեսապիոյ և Հերակլիոյ՝ այսպէս ևս Հայոց և միւս զահերեց աթոռները՝ պատրիարքական աթոռոց չէին հմագամողիլ, այլ էին զխոսովիմ անկախ. զի աստ Յոյնք կը ծամուցանեն Հայոց, թէ իրենք կը հմագամողիմ չորից տիեզերական Պատրիարքութեանց. մամաւանդ թէ Տաթևացիմ իսկ իւր գրուածոց մէջ կը դաւամի զայս: իսկ Սարգիսէի ժողովոյմ Դ և Ե կամոմները՝ զրկեալ կամ ամբաստանեալ եպիսկոպոսաց դատաստանը՝ միայմ Հոսովմայ Աթոռոյմ կը վերապահեն:

Արդ, իրմ այսպէս պարզելէմ յետոյ, զամբ ուղղակի ՚ի լուծումն կմնոտո խմորոյս: Ցայս վայր մէջ բերուած վկայութիւններէմ և ամբողջ արտաքիմ և տոհմայիմ պատմագրութեան ըմթացքէմ՝ բացայտ և քաջ կը տեսնուի, թէ արդարև Արշակայ և Պապայ ժամանակ իսկ եղեմ ըմդհատութիւնք եկեղեցական յարաբերութեանց. բայց այս երևոյթս յառաջ բերին զխոսովիմ քաղաքական քամ թէ

եկեղեցական դէսպ: Արշակ թշնամանաւով ընդ Վարդէսի, և Պապ՝ ընդ Թէոդոսի, կենդանոյն աթորմկէց ըրին իրենց օրինաւոր հովիւքն և անոնց տեղ կարգեցին, ըստ կամս իւրեանց և հակառակ կամաց եպիսկոպոսացն Հայաստանեայց, արս ամարժամս. ուստի այսպիսի թշնամական պարագայից մէջ բնականապէս չէին կարող այդ եպիսկոպոսներն յուղարկել 'ի Կեսարիա կամ 'ի Յոյսն. զի եթէ առաքէին ևս՝ ոչ որ պիտի ձեռնադրէր զնոսա, զի ասորիներ էր ըմտրութիւն սոցա: Ահաւասիկ առաջին և կարծեցեալ ազատութիւնն եպիսկոպոսապետացն Հայոց, որք յաջորդեցին Ներսիսի՝ ցմեծն Սահակ: Ազատութիւն մի, որ ոչ ըմդհանուր եկեղեցական իրաւասութեամբ և ժողովով իւր ծագումն ստացաւ, և ոչ այլ օրինաւոր կերպով շարունակեցաւ: Երկրորդ ազատութիւնը կամ ամկախութիւնն եղաւ այն ժամանակամիջոցին, երբ Հայաստանի մէկ մասն եղաւ բաժին արքայից արքային, իսկ միւսը՝ կայսերն Յունաց: Արդ, մեծին Սահակայ ըմտրութիւնն, որ եղաւ այս դէպքէս վերջ և Պարսից բաժնին մէջ, քաղաքական պատմաւորս համար Հայաստանը չէր կրնար ՝ իւր մորըմտի կաթողիկոսն յուղարկել 'ի Կեսարիա, նման առաջնոցն: Իսկ Բրքլոյոյ և Սուրմակ՝ աւելի արքայից արքային ստորկններ էին, ըստ ասելոյ Մովսիսի, քան թէ օրինաւոր յաջորդք Սահակայ: Այս ժամանակի Հայաստանեայց եկեղեցական պատմութեան այս սև կէտերս՝ սեւա քօղի տակ ծածկելու, քան թէ յայտնելու արժամի են: Ուստի եկեղեցական այս ազատութիւնս իսկ համզոյն առաջնոյն քաղաքական բռնակալութեանէ, քան թէ եկեղեցական իրաւասութեանէ ծագեցաւ: Սահակայ մահուամբ՝ հայրապետական իշխանութիւնն ևս համզոյն թագաւորականին դատարկացաւ. Յովսէփ եպիսկոպոսն էր պարզապէս տեղապահ կաթողիկոսական աթորում և ոչ կաթողիկոս: Այս բանս խիստ յայտնի

1 Թէպէտև արդի մատենագիրք՝ Օրմանեանի հետ իբրև հաստատ իրողութիւն կը համարին Սահակայ ձեռնադրութիւնն՝ յեպիսկոպոսաց Հայոց. սակայն դիտելու հմք, որ ոչ որ 'ի պատմագրաց կը յիշէ այդպիսի ձեռնադրութիւն մի: Մովսէս, Գ. գլ. ԽԹ. այսչափս կ'ըսէ, թէ յետ մահուն Մսպուրակէսի « Ի տեղի մորա յաջորդէ Խոսրով՝ զՍահակ որդի մեծին Ներսիսի »: Իսկ մի և մոյն գրոց Ծ. գլխումն այնպիսի մոր պարագայներ կը յայտնէ, որք կը թուին հաստատել, թէ Սահակ ևս 'ի Յունաց էառ զձեռնադրութիւն կաթողիկոսութեան. այսինքն է. մէկ կողմէն կը ծանուցանէ, թէ Խոսրով խնդրեաց յԱրկաղեայ՝ զՀայս Յունաց բաժնին. իսկ միւս կողմէն, թէ Շապուհ գտուրքն Սահակ իւր աթորումէն վար ձգեց. « Բարկամաւով ընդ Խոսրովայ 'ի բարեկամմանս ամծամբ Արկաղեայ և յամհրաման կարգելն յեպիսկոպոսութիւն զմեծն Սահակ »: Իրացնէ, զայս կը ցուցնեն մաև Մոդոմոնի, Մեսրոպբայ Երիցու և Վարդանայ վկայութիւնքը, թէ կաթողիկոսք Հայոց՝ մինչև ցժողովմ բաղկեղումի՝ 'ի Կեսարիոյ կ'առնուին զձեռնադրութիւնն. որոնց քաջ կը միաբանին մաև յարտաքնոց՝ փօտ, 'ի թղթին առ Ջաքարիա կաթողիկոս, և Եւթիմիոս, Panopla, Pars 3 tit. 20. և մամուսանը Սահակայ ժամանակի բարեկամական և սերտ յարաբերութիւնքն ընդ եպիսկոպոսապետին Յունաց՝ զայս կը քարոզեն մեզ անտարակոյս:

կը տեսնուի առ եղիշէի և առ Մ. Խորենացոյ ¹, Գ. զԵ. ԿԵ: Սակայն Վարդանանց պատերազմով և սրբոց Դևոնդեանց մահուամբը՝ Հայաստան այնպիսի խղճալի դիրքի մէջ էր, զի Մովսէս՝ զինքն ամբալակամ համարելով ողբալ զայն՝ զԵրեսմիս կը կոչէ յողբս: Այսպիսի խառնաշփոթ ժամանակի մէջ համդիպեցաւ Քաղկեդոնի ընդհանուր ժողովմ, 666 եպիսկոպոսաց, որոնց նշանատրագոյն մասն էին զոյգ ընդ Յորենաղայ այն սուրբ հայրապետքը, որք եպիստոսի ժողովոյն մէջ պաշտպանեցին զաստուածային բնութիւնն Բանիմ՝ միաւորեալ անբաժան և անշփոթ կերպով ՚ի Քրիստոս, ընդդէմ Նեստորի. իսկ այժմ եկած էին նոյնպէս հաստատել և զբնութիւն մարդկային միաստեղծութեամբ Ասորեաց ոմանց՝ մէկ կողմէն, իսկ միւս կողմէն ալ Ջենովի և Ամաստասայ կայսերաց զայլոս ընթացիւրը՝ Հայոց մէջ ևս այլ ընդ այլոյ բանիւք որոմներ ցանուեցան և զբզեցան հոգիք եկեղեցականաց: Այսպէս ուրեմն վերոյիշեալ թաւաւորաց ժամանակի քաղաքական դիպօք սկսած բաժանումն Հայոց ՚ի Յունաց, այս ժամանակս կրօնականի փոխուեցաւ: Առիթ մի կը պակսէր Հայոց ինքնագլուխ լինելու, զի իրաւասութենէ զատ՝ հաւատոյ խնդիրն ևս ուծացոյց զնոսա ՚ի միմեանց: Այս առիթս տուա Յուստինիանոս, որ իւր ժամանակի քաղաքական աշխարհակամ և եղեղեցական պահանջմանց հասմանտ նախաթողոց ևս փոփոխութիւններ ըրաւ, զորս այսպէս կը ներկայացնէ մեզ վերոյիշեալ մեծամուն Սողոմոն, Մաքենոցաց Հայրն. « Իսկ ՚ի թագաւորենն Յուստինիանոսի Ժողովուրդ զԵրեսմիս և զսուրբ Հարս՝ հրաման խնդրէ և նոքօք հանդերձ փոխէ զմշխարս և զաթոռ Ս. Յովհաննու Աւետարանչի յեպիստոսէ ՚ի Կ. Պօլիս, և հաստատէ անդ ալ թոռ հայրապետական. նոյնպէս և Մատթէոսին փոխէ յԱնտիոքայ՝ յերուսաղէմ, ասէ. Զի քաղաք է մեծի արքային: Յայնժամ շարժեցան ամենայն Երեսմիս և իշխեցողոյ, և ուր Առաքեալ էր վախճանեալ զամենեցուն Երեսմիս Երեսմիս Երեսմիս Երեսմիս Երեսմիս Երեսմիս: Եւ զՀայս Պարսիկք և Յոյնք բաժանեալ էին. և Տէր Մովսէս էր յաթոռ Ս. Գրիգորի ՚ի Դեմի, և ՚ի կողմն Յունաց հակառակ մնա մատուցին զՅովհանն ոմն մերձ առ մա »:

Արդ, այս տեղոյս հարազատութեան մասին չէ մարթ տարակուսիլ և կամ ըսել, թէ ՚ի Քաղկեդոնականաց ձեռք խառնուած ըլլայ, զի կը գտնուի առ Մ. Կաղանկատուացոյ, որ այլուր ևս հակաքաղկեդոնեան տեղեր կը պարունակէ, և նորա հրատարակողն ևս հակաքաղկեդոնեան ոմն լինելով՝ բնաւ տարակուսած չէ: Այրեսմիս հրաւարմբ պէտք է ըսել, թէ այս է բուն ժամանակակէտ Հայաստանեայց հայրապետութեան ինքնագլխութեանը, յորում աշխարհական իշխանաց հետ՝ եկեղեցական դասն ևս կը զուգընթեամայ:

1. « Իսկ զաթոռ եպիսկոպոսապետութեանն ետեղապահութեամբ յաջորդեաց հրամանաւ երանելոյն Մեսրոպբայ՝ մորիմ աշակերտ Յովհաննի քահանայ ՚ի Վայոց ձորոյ, ՚ի Խողոքիմ գեղջէ »:

Յուստինիանոսի ըրած՝ հաւանութեամբ համագումար ժողովոց՝ մախաթոռ եպիսկոպոսաց, և փոխադրութեամբ պատրիարքական աթոռներում՝ յիմքեան հասկանալի բան է, և սորա էին բաւական պատճառք օրինաւոր պատրիարքութիւններ լինելու ՚ի Կ. Պօլիս և յերուսաղէմ։ Ինչպէս եղաւ երբեմն Լուսաւորչայ աթոռն ՚ի Սիւ, ՚ի Հոտակլայ և այլոր։ Սակայն Հայոց այդ պատրիարքական աթոռոյ հաստատութիւնն՝ առանց ընդհանուր որոշողութեան և հեղինակութեան եկեղեցեաց՝ ամհասկանալի կը մնայ։ Մամաւանդ թէ վերո յիշեալ անկողմասէր հեղինակն ուրիշ այլ պատճառ չի ցուցաներ այնմ բաց աստի։ « Եւ սակայն ինչ որոշողութեան զկատարք եկեղեցականք՝ անհասկանալի է, ըստ ըիրտ բարուց Հայաստանեայցն, կարգեցիմ զԱբրահամ Պատրիարք, և Աղուամիցն՝ արքեպիսկոպոս, և Վրացն՝ մետրապօլիտ »։ Այսպէս ուրեմն Բաքզեմիս սկսաւ կամակար բաժանումն յեկեղեցոյն Յունաց, և առ Աբրահամս՝ անկախ պատրիարքութիւն Հայաստանեայց եկեղեցոյ։

Սակայն այն հիմն՝ որում վերայ հաստատեցին Հայք այդ ժամանակին իրենց Պատրիարքութիւնն, առ ՚ի ցուցանել Յունաց, թէ իրենք ևս եկեղեցական ինն դասակարգութիւնս անթերի ունին՝ առ ՚ի կարող լինելոյ ձեռնարդել զպատրիարքն, յետ սակաւուց քայքայեցաւ։ Վասն զի Մ. Կաղանկատուացի կ'ըսէ անդ, թէ « Խեռացաւ Մետրապօլիտն Վրաց՝ որում Կիւրիսն կոչէին և գնակառակութեան բերէր վճիռ. իսկ հայրապետն Աբրահամ՝ սաէր լինել յառաջահաւատ քան զՎիրս և զԱղուանս, և նոցա անկ է եպիսկոպոսապետութիւն։ Յայս մաքսումանէ և ՚ի խնդիր ուղղափառ հաւատոյ դարձան Վիրք և եղնն քաղկեդոնիք. իսկ Աղուամիցն՝ արքեպիսկոպոս յեղեցիք արքեպիսկոպոս զիմքեանս աւանդեալ, դարձան ՚ի Հայոց առ ինքեանս, չլինել ընդ ումեք իշխանութեամբ։ Ապա Հայք վասն մեծաբանութեան Յունաց, որ փոքրկացուցանել չամային զկայս հանգըստեան Թաղէտի, չունել եպիսկոպոսապետ և Մետրապօլիտ, խորհեցան առնել Մետրապօլիտ զՄարդապետականն եպիսկոպոս՝ տալով մմա իսաչ և պատիւ միայն . . . : Ապա Միւնեաց ետուն զպատիւն լինել մետրապօլիտ Հայոց՝ խաչանիշ մեծարանօք »։

Հայք եմ պսուհետև, որք կը լուծանեն և կը հաստատեն զեկեղեցական մուխրապետութիւնս և զվիճակս, և ոչ թէ կանոնք ընդհանուր ժողովոցն Նիկիոյ, Եփեսոսի և Կոստանդնուպօլիս. ամենայն ինչ կամայականութեան խաղալիք եղած կը տեսնուի. այլ ևս չեն ընկն այն զեղեցիկ յարաբերութիւնքը, զորս կ'ընծայեն մեզ Գիրք Ազատեանի, Ս. Սահակայ թուղթերն և Ե. դարու յոյն և հայազգի մատենագիրք. որովք երբեմն Հարք Հայաստանեայց՝ կրօնական և եկեղեցական բարեկարգութեանց հետ ՚ի միասին կը սմանէին յոյն և լատին Հարք վարդապետութեամբք և եկեղեցական օրինօք։ Յունական գիտութեամբ մշակուած և ժամանակին ամենանըշանաւոր համնարմերն անգամ՝ թէպէտև ցաւ ՚ի սիրտ կը չանան, բայց ոչ կարեն խրամակարկատ առնել զայսպիսի խոռոչ։ Ի զուր կը կոչէ աշակերտն Մաթուսարայի մեծ աստուածաբանն Թէո-

դորոս ¹ առ իշխանս և մուխրակս Հայոց առաքեալս առ Հերակլ կայսր, թէ « Ընդէր վիճիք և տրտմեալ էք. ոչ գոյ 'ի մուսա թերու թիւմ ինչ հաւատոյ՝ մի եմք մեք և մորա, — մորա քան արքայ էն, և մի արքայ է 'ի Նոյանէ քանակ և առեալ զհաւատս և զամենայն կարգս քրիստոնէական, — ոչ է պարտ արքայութիւն 'ի Նոյանէ և խլիլ յարմատոյն մեր . այլ մեք կրտսերագոյնքս հնազանդիմք երիցագոյն հրամանաց մոցիմ՝ և լիցի մի հօտ և մի հովիւ » : Ի զուր կը դաւաճելը մա ինքն ամենամեծն և պատգամատու չայաստանեայց Նկեղեցոյ Մաթրուսարա՝ զուղղափառութիւն ժողովոյն Քաղկեդոնի, 'ի թղթիմ ² առ Հերակլ, ասելով. « Քննութեամբ գտաք ըստ ամենայն Հարցն ճշմարիտ և ուղիղ խոստովանութեամբ, առ միասնական սուրբ Երրորդութիւն : Բայց զժողովմ Քաղկեդոնի խոստովանեալ էր և կարգեալ ընդ երկս ժողովմ՝ ընդ Նիկիոյ 318 իցն, ընդ 150 իցն որ 'ի Կ. Պօլս, և ընդ երկերիւրոցն որ յեփեսոս » ... : Չի Մայրագոմեցի ոմն հակառակասէր՝ բաւական էր վեր 'ի վայր շրջել զամենայն կարգս առաջինս . փոյթ չէ, թէ կը տարագրի յուրայոցն, իբրև հետևող աղամուրոյն Յուլիանեայ և Սաբելի, զի առաջօր կ'ըսէր եղեալ զչարչարամս և զմահ Քրիստոսի Տեառն մերոյ . թէպէտ և մորա մուրամիտ գրուածքը յախտեմական մոռացութեան դաստապարտեցան, այլ մորա հոգիմ շնչեց և կը շնչէ տակալմ : Բայց թէ յօգոստ արդեօք եթէ 'ի վնաս Հայաստանեայցս, այս 'ի բազմապատիկ արդեանց ամտի կարեն 'ի միտ առմուլ ճշմարտախոհք, իսկ իմ միւթէս դուրս է :

Այս է ահա ճշմարիտ պատկեր և պատմութիւն Նոյանեայն Հայաստանեայցս հին և մեր Նկեղեցոյ, զոր ես հետևելով բնական ըմբացից տոհմային և արտաքին պատմագրութեանց՝ բարգաւաճեցի, առանց բամ մի յաւելցնելու ըստ կամս, և կամ թիւրեխու համոզոյն այլոց ³, ունելով իմն իբրև միակ և գերագոյն նպատակ

1. Մտեփ. Տիւմեցի, Գատմ. Միւնեաց, գլ. ԴԷ. էջ 85. տպգ. Մոսկուայի, 1861 :

2. Նոյմ գլ. ԴԸ, էջ 87 :

3. Առանց զարմանաց և կարեկցութեան չէ մարթ ըմբեռնուլ « Աթոռ Հայաստանեայց » երկասիրութիւնն, որուն հեղինակը մի և մոյն տեղերէն, զորս փոքր 'ի շատէ մէջ բերիմք և մեք, բոլորովին տարբեր արդիւնքներ առաջ բերած է, շրջելով ամենուրեք մոցս հարագատ ի մասսն . իսկ զայս 'ի լուծեան դատապարտած է, որոնք իւր մալ տակին չեն յարմարիք և կամ ամենուն յայտնի լինելով՝ չեն կրնար կամակորուիլ : Աստ գործս չի մերեր այդ գործն ընդհանուր քննութեան եմթարկել . ուստի կը շատամամ մորա մի քամի կէտերը միայն շօշալ կիւն : Հեղինակս՝ Ղազարայ՝ փաստոսի մասին թէպէտ և ընդհանուր կերպով զուլցուած այս խօսքերուս, « Թէ զուցէ այլ ոք յամղուգմ... մենն արկելս յիւրն գրեաց » վերայ հաստատուած, մերժած է բուզամղացոյ բոլոր այն տեղերն, որոնց Մովսիսէն սկսեալ միւս տոհմային պատմագիրք կը համաձայնին : Գրիգորէն յառաջ թաղէոս առաքելոյն 'ի մեծ Հայս հաստատուած եպիսկոպոսութեան ընդհատութիւնն, որ պատմական յիշատակարանօք հաստատուած մի ճշմարտութիւն է, մա յէջ 27 շարունակուած կը համարի միմէ և ցրիգոր . իսկ այլուր հա

գծընարտութիւն: Ուրեմմ յետ այսպիսի քննութեանց կարեւր եզրակացնել, թէ Ղևոնդիոսի առ Տրդատիոս գրուած Թուղթը, վերոյիշեալ նշանատր տեղովմ համղերծ, հմագոյմ և յոյմ յաղթերէ կը յառաջագալի, և այս է պատճառ՝ ոյր վասն թէ Փաւստոս և թէ՛ այլ մատենագիրք Յունաց և յիշատակարանք այնպէս քաջ կը համաձայնիմ այնմ՝ ՚ի հաստատելմ ցայս վայր կատարուած իրողութիւնմ մերմ:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ .

Մկրտութիւնն արտայն Տրդատայ, արտանեաց և արտայսփանդ շորոց. — ՅԷՆ. Մկրտէ և Անանիայի նշանաբանայ արժեյ հասարակութեան և Հայոց Նախաարքը. — Գոտրշիդի կարծիքն Անանիայի նշանաբանայ, մասին և նորա հերտամը. — Եպիսկոպոսաց յեանաբանութեան և շինութեանէ եկեղեցեաց. — Եկեղեցական կալուածաց կամ հողերու հասարակութեան և նորա հետնութեանը. — Տրդատի լէրև Սէկենաս ասորի և յայն դպրութեանց. — Աւերարանի քարտուրութեան և Հայաստանի սահմանքը. — Եւրպակոսութեան:

Գեղեցիկ դրուագներէմ միմ է Ազաթանգիլայ գրոց ժծԸ. զկիս համարով սկսած մոր պարբերութիւնը, վասն զի կ'ընծայէ մեզ հայաստանեայց նորակազմ Եկեղեցւոյ մէջ հրաշալի արարողութեամբ

կառակ այդմ կը հաստատէ: Գրիգորի և մորա յաջորդաց՝ Գեսարիայէմ ձեռնադրութիւն առնուլը՝ պարզապէս դիպուածոյ կամ սովորութեամ արգասիք կը համարի. միմչնեռ Ազաթանգիլոս՝ երկու ազգաց մէջ եղած գրաւոր դաշմնց և իրաւասութեամ հաստատութիւնը կը ծանուցամէ մեկմ բամիւ, իմչպէս յետագայ պատմիչք ալ մորա ամբողջատ գործադրութիւնը՝ ցժողովմ քաղկեդոնի: Եւ յիրաւի, Գրիգորի ըրածմ եթէ պարզապէս եղած լիմէր դէպք կամ ձև իմչ պատշաճութեամ, և հայաստանեայց աթոռը լիմէր ՚ի սկզբամէ՝ անկախ, անկարելի էր, որ այդպիսի դէպքը օրէմք դստմայր և շարունակուէր: Ո՛ր տեսնուեցաւ, նրբ և ո՛ր արդեօք ՚ի մախաթոռոց վարեցաւ այսպիսի սովորութեամբ, այսինքմ է, յայլմէ մախաթոռոյ՝ արտաքոյ վիճակիմ իւրոյ երթալ առնուլ գծեռմադրութիւն: Յէջ 17-18 և 25, կ'ըսէ, թէ այսպիսի սովորութեանց վերայ հիմնուած Նիկիոյ Ս. Ժողովը (Գամոմ 2) հաստատեց մախաթոռոց վիճակներմ և իրաւունքմերմ. իսկ յէջս 28, միմաւանդ 31 իջում հակառակ այդպիսի սովորութեան և մորա վերայ հաստատուած միկիական կամոմադրութեամ, զմեծմ Ներսէս (լաւ ևս մորա յաջորդը) ինքմագլուխ պատրիարք ըմել կու տայ, ըստ ամտեղի կարծեաց Յովհ. կաթողիկոսի, որում ամտեղութիւնմ արդէմ տեսամք. միմչնեռ Եւփեսոսի ժողովմ ևս (Գամոմ Ե.) Կ'ըսէ, թէ «Մի ոք առանց գիտութեան և գրութեան ամենաբարեպաշտ ժողովոյմ յամբողջի ըմտրել զոք մետրապօլիտ, այլ վճռով և համաձայնութեամբ ամենաբարեպաշտ եպիսկոպոսաց»: Սակայն ո՛ր ժողով եպիսկոպոսաց հաւանեցաւ ըմը ըմտրութիւն Շահակայ, Զուռակայ և այլոցմ: Յէջ 25-27 կ'ըսէ, թէ եկեղեցական

կատարուած հրաշափառագոյն խորհրդոց առաջինն և ամենաշարկաւորն: Ամսօրնայ պահոց և պատրաստութենէ վերջ, զոր պատուիրենց Գրիգոր յետ դարձիմ իւրոյ 'ի Կեսարիոյ, 'ի ծագել լուսապայծառ առաւօտուն կ'առնու զԱրքունիս ողջոյն և զզօրն արքայագումը և կ'ածէ զմոսա առ եզերս Եփրատայ, — կ'իջուցանէ 'ի ջուրս, — ամղէն և ամղ կ'երեկ սքանչելի մշամն Աստուծոյ, — գետին ալիքներն, որք յորդեալ զեղեալ կ'ըմթանային դարիւ և դարիւ, յետս ըմդ կրունկմ դառնալով կը կենամ ամշարժ, — երկմից հաստատութենէմ սաստիկ լոյս մի կը ձգուի մինչև յերկիր և կը կենայ լուսաւոր սեամ ձևով, և տէրունեան փրկութիւնաբեր մշամը կը փայլի ամոր վերայ, — մորս մուսադրութենէմ մինչև անգամ արեգակամ ճառագայթները կը լուսադրին, — Գրիգոր սուրբ օծութեամ իւրը կը թափէ մկրտելոց վերայ և ջուրը շրջան առեալ կը թևապարէ մոցա չորս կողմը, — մարդիկ առ հասարակ և փափկատուն բամբիշք սքանչացած և սպիտակածղի բազուկները դէպ 'ի յերկինս բարձրացուցած՝ կը կոչեն 'ի ձայն ուրախութեամ և սուրբ երկիւղի առ Հայրն համայնից Աստուած, և Գրիգոր կը վերըմծայէ զմոսա մի առ մի Հօրմ երկնատրի՝ յասելմ. « Մկրտի ծառայս այս յանուն Հօր և Որւոյն և Հոգւոյն Սրբոյ » . — Գիշերը վերայ կը հասնի և կը դառնան 'ի Դիցնաւամ՝ ցնծութեամ երգերով և օրհնութեամբ, — բորբոքեալ ջահերու, կամ

վիճակաց և աթոռոց բաժամմամ հիմը՝ եղած է չռովմէական կայսերութեամ զաւտական բաժամմամց վերայ. իսկ կայսերութեամ սահմաններէմ դուրս զտնուող եկեղեցեաց հպատակութեամ կարգմ աշխարհակալութեամ օրինօք հաստատուեցաւ: Ուստի չռովմայ պատրիարքիմ՝ առաքելութեամց ձեռքով 'ի քրիստոնէութիւն դարձած և հաստատուած եկեղեցիները՝ չռովմայ Պատրիարքիմ իրաւասութեամ մերքոյ ամկեալ էին, Ամտիոքայմ՝ Ամտիոքայ եպիսկոպոսապետիմ և Կեսարիոմ՝ Կեսարիոյ եպիսկոպոսապետիմ: Իսկ Հայոցը որովհետև 'ի Թաղէոս Առաքելոյն հաստատուած էր, ամոր համար այդ երկու կետերով ևս ազատ և ինքնազուխ էր: Մականմ հեղինակմ, պէտք էր յիշել, թէ Արտագու եպիսկոպոսութիւնը թէպէտ և յԱռաքելոցմէ հաստատուեցաւ, բայց մորս յաջորդութիւնը Գրիգորէմ դարով յառաջ դադարած էր: Բ. Հայաստանի երկրորդ դարձն եղաւ Գրիգորի ձեռքով, և Գրիգոր էր Կեսարացի և հպատակ չռովմէական կայսերութեամ, ուստի ինչպէս Կեսարիայէմ ձեռնադրուելով էառ զեպիսկոպոսութիւն, այսպէս ևս Կեսարիոյ հայրապետիմ իրաւասութեամ պէտք է որ եմթարկուէր. առ այս արդարև, կը դրկէ Ղևոնդիոս զբազմութիւն եպիսկոպոսաց, քա հա. մայից և վամականաց 'ի Հայս: Գ. Եթէ երբեմն Առաքելոցմէ հաստատուած աթոռներն բաւական պատմառմեր եղած համարուէին մախաթոռութիւնս կազմելոյ՝ ամկախ յայոց մախաթոռոց, այն ժամանակ ոչ միայն Հայոց՝ այլ մնացած բազմաթիւ աթոռներն ևս որ 'ի Հնդկիկս, յԵթովպիա, յԱրուսնս և այլուր հաստատուեցամ, պէտք էին մոյմպէս մտիաթոռ լինել, և ինչ իրաւամբ Արուսնից կաթողիկոսմ՝ Հայոց եպիսկոպոսի իրաւասութեամ մերքոյ ամկեալ պիտի մտար: Բայց որովհետև կային պատմառք, որով Հայք մախաթոռ կը լինէին. ուրեմն մոյմ պատմառութիւն հայրապետիմ Կեսարիոյ, ինչպէս Կեսարիա ալ, յետ ժողովոյն Բաղկեդոնի, ստիպեցաւ ճամշմալ զիրաւասութիւն Պատրիարքիմ Բիւզանդիոնի:

թեղաց և լապտերներու լուսին մէջ՝ կը փայլին ամենքը սպլտակա զգեստք՝ հրեշտակաց զուարթաղէմ զունդերու մմամ, — կը մոռնն տէրունեամ տանարմ, — անդ կը մատուցամէ Ս. Քահանայապետմ Գրիգոր՝ Քրիստոսի Տեառն մերոյ ամարիւմ զորը, — կը հաղորդին ա մննքեամ կենդանի և կենդանարար մարմնոյ և արեամ Փրկչին մեր Յիսուսի Քրիստոսի: — Հոգևոր համուխսին կը յաշորդէ մարմնաւորը, այն մեծ և նշանաւոր տօնիւր, զոր հեթամոս Հայաստամը տօն նա ւասարդի կամ Առաքելքեր և ամենարեր դիցն Վամատրի կ'ամուա մէր: Սակայն Գրիգոր այդ Ամանորարեր և Հիւրընկալ դից տօնը՝ կը փոխէ 'ի համաշխարհի տօն Յովի. Մկրտչին և Աթամագինեայ վը կայինմ:

Արդ, այս կէտերէս իւրաքամչիւրը՝ մի մի առանծին դրուագներ կազմելու և իրենց յատուկ երանգով և պարագայիւր մկարագրուե լու արժամի էին. քայց զրոցս հեղինակը զրկած է զմեզ բոլրը այն ժամամակի Հայոց, քաղաքային և զինուորական կարգաց և հան դիսութեանց, երաժշտական գործեաց և երգեցողութեան վերաքե ըեալ տեղեկութիւններէմ. սաղմոս և օրհնութիւն միայն կը յիշէ, կամթեղումն, շահս և լապտերս, և ոչ այլ ինչ: Նաւասարդի այն մեծագոյն տօնն և աշխարհահանդէս ցնծութիւնն, որուն լրկ յիշա տակը միայն հմգեստսամ դարերէ վերջ իբրև համապատկեր իմն պէսպէս դիպաց և յարափոփոխ տեսարանաց կը ներկայանայ մեզ, մա հագլա թէ կը յիշատակէ և հարևանցի կ'անցնի. այնպէս որ լիուի իրաւունք ունէր զերմանացի քմնադատն ըսելու, թէ Ագա թամագեղոս ոչ է մարտար գրիչ և մկարագրող իրաց, այլ պարգա պէս յառաջ ըբրող մոցին և դիպաց անցելոց՝ առանց կարգաքանու

Յէջ 89, կ'ըսէ, թէ « Օտար եկեղեցիք՝ եպիսկոպոսական աստիճանէ վեր կարգ չեն ճանաչեր, և ձեռնադրութեամբ տրուած գերագոյն աս տիճանն իրենց մէջ եպիսկոպոսութիւնն է. իսկ ինչ որ եպիսկոպոսութեանէ վեր է, պաշտօնավարական աստիճան է անուամամբ ստացեալ և ոչ կարգի աստիճան՝ ձեռնադրութեամբ ստացեալ: Միտրապօլսու թիւմը, Արքեպիսկոպոսութիւնը, Պրիմասութիւնը, Նքսարքութիւնը, Պատրիարքութիւնը, Կ. Պօլսոյ տիեզերական Պատրիարքութիւնն և Հոռվմայ Պապութիւնը՝ ձեռնադրութեան կանոն չունին. միայն մերս Հայաստանեայց կաթողիկոսութիւնն է, որ խորհրդական ձեռնադրութեամբ և միւռոնի օծմամբ կը տրուի. որով մուիքեայն յայդ աստիճան կը ստանայ առաւել ինչ՝ քան զայլեպիսկոպոսունս »: Հեղինակմ՝ աստ որ քան ուզած է վեր բարձրացնել զԿաթողիկոսն, այնքան ևս 'ի վայր դասած է զՍ. Գրիգոր և զյաջորդը մորա, որք 'ի Հայրապետէն Յունաց կ'առ մուին զձեռնադրութիւն միմն և ցեպիսկոպոսութեան աստիճան: Այս բանս խիստ յայտնի է Ագաթամագեղայ 604 իջէմ: Սակայն այն անհասկանալի է, թէ ուստի՞ առին հայրապետը Հայոց այդ մասնաւոր ձեռնադրութիւնը, զոր չունին ընդհանուր եկեղեցիք Աստուծոյ: Եթէ 'ի Ս. Գրիգորէ, յայտ է թէ Ս. Գրիգոր իսկ 'ի զնսարիոյ էառ. իսկ եթէ չէառ մա քաց յեպիսկոպոսութեանէ, զհաճող ապա տուա յաջորդաց իւրոց: Ըստ իմ քնանմ գորմանայի չէ՞ այս վարդապետութիւնս. սակայն ես չեմ գորմամար, այլ կը կարեկցիմ միայն, որովհետև ժամանակն և պարագայներն աւելի, քան թէ պարզապէս ճշմարտասիրութիւնը, կը ստիպէին հեղինակին այսպէս խորհել և գրել:

թեան: Եւ ստուգիւ, վերոյգրեալ կէտերն, ամէքն ալ ոտակ յիշատակութիւնք են դիպաց և ոչ մկարագրութիւն համազամանաց և պարազայից մոցիմ: Սակայն, ըստ իս, պէտք է ըսել և զայս, թէ հեղինակ գործոցմ Գրիգորի այնպիսի պարտումակի կամ վիճակի մի մէջ կ'ապրէր, որոն համար քաղաքայիմ և զինուորական իրերն, ընտանեկան կենաց համազամանքներն և ժողովրդական սովորութիւնք՝ այնքան մշանակութիւն չէին կրնար ունենալ նորա համար, այլ եկեղեցական և կրօնական իրք և արտաքոյ կարգի հրաշքներ մեծապէս գրաւած են նորա ուշադրութիւնը: Նորա ըմանծ այս լակոնական և ցամաք ոճը, այնպիսի մոկիրական և հետաքրքրական ժամանակի և անցից մկատմամբ, առիթ պիտի տայր և տուաւ իսկ խմբազրիմ և թարգմանիմ գրոցս, ոչ միայն պարարտեան կիրթ քարբառով և ասութեամբ գեղեցեսել զայն, այլ մոյմ իսկ ձեռք խառնել և ընդարձակել ուրեք ուրեք այն հայրենական քաղոք յիշատակներովը, զորս կենսագիրը զանցառութեամբ լեցուցեր էր, բայց ը դարուն տակուն ազդևոր ծայմիւ կը խօսէին 'ի սիրտս և 'ի լսելիս հայկազմ մուսայից և գրագիտաց: Սակայն եղածն՝ եղած է. իսկ մենք դատմանք այն տեղեաց և անցից հարազատութիւնն և պատմական արժէքը քննելու:

Դ Յայտնաւորաց մէջ, էջ 20, ամծանօթ հեղինակ մի յետ պատմելոյ զգորտութիւն Կոստանդիանոսի և զւարծմ նորա, ամէն կը պատմէ և նորա մկրտութիւնն 'ի ձեռն Սեղբեստրոսի. ուր մնամ Ազաթանգեղայ 621 իջիմ՝ կ'ըսուի, թէ երբ Կոստանդիանոս էջ 'ի ջուր, ծագեց լոյս յերկնից 'ի վերայ ջրոյն, և թէ նորա հետ սկրտեցան 12,000 զօրակամք: Արդ, այս պատմութեանս գէթ անաշիմ մասն, այսիմքն է, Կայսեր հիւանդութիւնն և բժշկութիւնը՝ գրեթէ բառ առ բառ Մ. Խորենացոյ Բ. Գրոց 24 գլխէն առնուած է. իսկ մկրտութեան մասիմ եղած աւանդութիւնը՝ զլխովիմ անհիմն է և հակապատմական. որովհետև Կոստանդիանոսի հաւատարիմ կենսագիրը՝ նորա մկրտութիւնն ոչ 'ի ձեռն Սեղբեստրոսի և ոչ այլ 'ի սկիզբն դարծի նորա եղած կ'աւանդէ, այլ կենաց վերջիմ օրերուս, 'ի Նիկոմիդիա և առանծիմն: Ուստի Յայտնաւորքի այդ անհարազատ աւանդութիւնը չէ մարթ իբրև մախկիմ աղբիւր համարել Ազաթանգեղայ 621 իջի աւանդութեամբ:

Ազաթանգեղայ այս և հետևեալ իջում յայտնուած պարազայներն իսկ կը ցուցնեն մոցա հմութիւնը. այսիմքն է, արքունեաց՝ Եփրատ գետոյմ մէջ ընկղմամբ մկրտուիլն, ըստ օրինակիմ Քրիստոսի, — իւրով կամ միւռտմա օծուիլն, այսիմքն է, զոյգ ըմը Մկրտութեան առնուլ և զխորհուրդն Դրոշի, — յետ այնորիկ պիտակ հանդերծիւ դառնալն մոցա 'ի Դիցմաւան, և անտի լավտերօք զմալն յեկեղեցիմ, — և հուակ հաղորդելն կենարար հացիմ և բաժակիմ, բոլոր այս արարողութիւններս՝ են ըստ առաքելական Սահմանադրութեան, զորս բարեպաշտութեամբ կը կատարէին մախկիմ դարու Արևելեան և Արևմտեան եկեղեցիք՝ միմչև ցԸ դար: Յիրախ, մախ Մատթէոսի Անէ տարանէմ զիտենք, թէ զետի մէջ մկրտութիւն առնուլ՝ ամենահիմ

սովորութիւն է. իսկ Նաեբիոս՝ Կոստանդիանոսի Վարդանանէջ, Գ. զԷ. ԿԲ կ'աւանդէ, թէ իւր ժամանակ իսկ շատեր կ'երթային մկրտիլ 'ի Յորդանան, և մոյմ ինքն Կոստանդիանոս Մեծմ՝ այս փափագս ունէր, բայց անակմկալ հիւամդութիւնն արգիլեց զմա: Ի ժամ ընկղման երեխայից 'ի Ղուրմ՝ առնմթեակայ քահանայն իւրը կը թափէր աւնոնց վրայ և եպիսկոպոսը դնելով զաջն իւր անոնց գլխուն վերայ կ'արտաբերէր զանուն ասննասուրբ Երրորդութեան. ապա սպիտակ լաթով մի, որ կը կոչուէր *Գառնայն*, կը ծածկէր զմարմինս մկրտելոց: Համդիսատը մկրտութիւնը կը կատարուէր Ձատկին և Պենտեկոստէին. յետ մկրտութեան՝ բոլորովին ճերմակ զգեստներ կը հագուէին մկրտեալք՝ 'ի Նշան շնորհագարդութեան, որ կը տեսէր ութ օր: Այս բանս բաց յայլոց որոշակի կը ծանուցանէ՝ մեզ թէ որդւսն սնան Օրինագիրքը, ԺԵ, 515: Ձմկրտեալս և զազատեալս 'ի գերութեանէ սատանայի երիցս կ'ուղջունէին՝ ԼԱ Սաղմոսին հետևեալ խօսքերով. « Երանի այնոցիկ՝ որոց թողան մեղք մոցս և ծածկեցան ասննայն յանցանք » և այլն: Այս բանս յայտնի կը տեսնուի առ Ս. Կիրիլի *Գառնայն ընթացիւն* գրոց մէջ: Յետոյ վառած լապտերներ ձեռքերնին առած եկեղեցին կը դառնային՝ հաղորդելու աստուածային խորհրդոյն. ուր յետ աւարտման արարողութեանց մորակը մուկները ծունկ չդրած և ձեռքերնին վեր բարձրացնելով առ Աստուած՝ կը խնդրէին զօգնութիւն, անարատ պահելու համար զուտը պատմունան մկրտութեան մինչ 'ի գերեզման, ըստ ասելոյ Ս. Գրիգորի Նազիանզացոյ: Նոցա իբրև մարմնաւոր սնունդ ամմիլ չապէս կը բաշխուէր կաթ և մեղր և անոյշ զինի, ըստ Ս. Կղեմէսի Աղեքսանդրացոյ՝ 'ի Նշան մտանելոյ մոցս յերկիրն աւետեաց: Այս բանս պէսպէս մեկնութեան միւթ եղած է. բայց առ Ազաթամզեղ փոխանակ ասոնց կ'ըստի, թէ հաղորդէին կեանարար մարմոյ և արեան ճառն: Յէջ 619–620 մկրտութիւնը կոչուած է *Գառնայն*, *Կառնայն*, *Կարնայն*, *Կարնայն*, *Կարնայն* և յէջ 621 Նշանակ *Կարնայն*: Այս իսկ համեստայն է Կղեմէսի Աղեքսանդրացոյ և այլոց հմազոյն հարց Յունաց: Սակայն հետևեալ բացատրութիւնը. « Եւ լոյս աստիկ երևեալ 'ի մամուլիւն սնան լուսարի կայր 'ի վերայ Ղուրց », ինծ այսպէս կ'երևի, թէ է այլաբանութիւն ինչ յունարէն *φωτισμα* (լուսարութիւն) բառին, որով Կղեմ. Աղեքսանդրացի (Յաղագս հոգ. դաստ. Ա. 6) կը կոչէ զՄկրտութիւնն, և կամ է արտայայտութիւն նշանակի Մկրտութեան, զոր ընծայեմ մեզ Գ և Դ դարուց մկարէմ խորաբանդակներմ, մերթ լոյս ցոլացեալ յերկնից, և մերթ Ղուր սիւնածև նշանակ Յորդանան գետոյ:

Արդ, համդերծ այսու ամենայնիւ, պէտք է ըսել, թէ Մկրտութեան հատուածոց մէջ մկրտելոց թուոյն մկատմամբ չափազանցութիւն կայ: Յիրակի, յէջ 610, կ'աւանդուի, թէ Ս. Գրիգոր միմղեռէր 'ի Տարօն մկրտեց իւր ուղեկից մախարարներն և զզօրս մոցս, և

1. Ձի այսպէս գրուած է. « Quibus caelestis lumen lavaeri imitantia novam sancti baptismatis lucem vestimento testantur », ,

Թէ քսան օրուամ մէջ մկրտելոց թիւն էր « Իմն և տասն ըիւր » այս հասկամանի բամ է: Իսկ յէջմ 621 թագաւորիմ և արքայազունդ զօրաց մկրտութիւնը պատմելով, կ'ըստի, թէ մէկ օրուամ մէջ մկրտելոց թիւն էր « աւելի քան զհնգետասան ըիւր », այսինքն է 190,000: Ապա յէջ 623 կը պատմուի, թէ 'ի Կիցնաւամ՝ մնացած եօթմ օրուամ մէջ մկրտեց դարձեալ « յարտանախն բառախն անդ՝ ընդ այր և ընդ կիմ և ընդ մանկտի աւելի քան զչորեքհարիւր ըիւր », այսինքն է 4,100,000: Արդ, այս վերջին թիւս թէ՛ մկատմամբ արքայազունդ զօրաց և նոցա ըմտանեաց, թէ՛ զումարմամբ առաջին և երկրորդ անգամ մկրտելոց թիւոյմ՝ ընդ վերջնոյն, և թէ՛ մկրտողն Գրիգորի համար ամկարելի ¹ է: Գրիգորի 'ի Տարօմ հասնելէմ վերջ՝ մինչև ցմկրտութիւն Տրդատայ անցուցած քսան օրերը զումարելով վերջէմ յիշուած եօթմ աւուրց հետ՝ կ'ունենամք զրեթէ 612 իջում յիշուած « ամսօրեայ ժամանակն », զոր հատուածիս մերմուծողը՝ կամխել ծամուցել է, ամծնամատն լինելով իւր այդ զործողութեամ: Սակայն այդ սուղ ժամանակամիջոցիմ Գրիգորի ձեռքով կատարել տուած այնչափ զործողութիւնքը, այսինքն է, քրմաց դէմ տուած պատերազմերմ, մեհնեաց կործանումմ, եկեղեցեանց շինութիւնքը, քահանայից ձեռնադրութիւնքը և 4,290,000 ամծամոց մկրտութիւնմ, ամհաւատանի կ'երևին: Բայց աւելի զարմամալիմ այս է, որ ոչ միայն կը մկրտէ զմոսա Գրիգոր, այլ Դրոշմի խորհուրդն ևս նոցա վերայ կը կատարէ և մի առ մի Հաղորդութեան սուրբ խորհրդոյն ևս կը հաղորդէ զմոսա: Գործոց Առաքելոցի Բ. և Դ. գլխոց մէջ կը կարդանք, թէ Ս. Պետրոս 'ի միում մուսգի մկրտեց 3,000 հոգիս, իսկ յերկրորդում՝ հոգիս իբրև հիմզ հազար: Այս բանս ոմանք ընդ Աքբէ Մարտինի ² ամկարելի կը համարին, եթէ ընկղմամբ եղած համարինք, բայց ոչ նոյնպէս և սրկմամբ: Իսկ առ Ազաթանգեղ՝ որոշակի ընկղմամբ եղած կ'աւանդուի, և փոխանակ հիմզ հազարի՝ 4,290,000 կը յիշուին: Արդ, Փաւստոս անգամ, որ այմբամ նոխ է և նոռոմ 'ի թիւ և 'ի բամ իւր, եթէ իրօք այս տողերս կարդալու բաղդն ունենայր շատ պիտի զարմամայր: Ուստի իմ կարծիքով՝ Տրդատէմ յառաջ և Տրդատայ հետ 'ի միասին զօրաց մկրտութիւնմ՝ ամծխտելի նշմարտութիւն իսկ համա-

1. Գուցէ ըսուի, թէ կամ ուրիշ պաշտօմեայք ևս զոյգ ընդ Գրիգորի կը պաշտէին զխորհուրդն Մկրտութեան, և կամ հազարաւոր ամծինս իջուցեալ 'ի գետմ՝ 'ի միասին կ'արտաբերէր զձև Մկրտութեան: Սակայն եմթադրութեանցս առաջինմ՝ ուղղակի կը հակառակի նեմսագրին, որ սիայն Գրիգորի կը վերագրէ զայն: Իսկ վերջինը՝ կը հակառակի եկեղեցեակամ սովորութեանց և խորհրդոյս վաւերակամութեանմ, այնու գի մի և նոյմ ժամանակ Դրոշմի խորհուրդն ևս կը կատարէ 'ի վերայ նորա կմքելոց, 621, 620 և 627 էջերու վկայութեան համեմատ: Իսկ արդ զրոշմիւր համար ըստ Մահմամադրութեան արևելեան Եկեղեցոյ (Փրիմիլի լիամոս, Epistola ad Cyprianum — Euchologus Barberinus) հարկ էր որ եպիսկոպոսն զրութեամբ ձեռաց օծամէր միւռոմա զճակատս կմքելոց և Սշանաւ սուրբ խաչին զրոշմէր զՉմորհոս Հոգւոյմ Սրբոյ:

2. Dictionnaire des Antiquités chrétiennes, Paris, 1877, p. 80.

բելով, դարձնալ պէտք է ասել, թէ այս տեղ ներկայացուած թիւերն վերոնշանակեալ պարագայիւք՝ ոչ 'ի դիւանագրոց ամուռած են, և ոչ ալ պատմական համարելի, այլ կամ եկամուտ ամհարազատութիւնք են և կամ լաւ ևս ժողովրդական արանդութիւնք: Եւ յիրաւի, ապացոյց կը համարիմ ես ըսածիս, մախ, հետեւեալ երևոյթիւք. զի հեղինակ հատուածոցս՝ այդ թիւերն յիշած ժամանակ՝ եւ ըիցս կը դմէ առըմթեր բառս « **տէլ** », որ յայտնապէս ամորոշութեամ է մշամ: Բ. Յունարէմ Ազաթամզեղոսի մէջ՝ հայերէնի 621 իշում յիշուած « հմզետասան բիւրը » չիկայ: Գ. Ջենոք Գլակացիմ ևս զոյգ ընդ Փաւստոսի (Գ. Դպր. գր. ԺԳ), և Եւթիմիոսի (Panopla, II, Ե. 20) կը հաստատէ մախարարակոյտ զօրաց մկրտութիւնը. ըսոյց մկրտելոց թուոյմ նկատմամբ կը տարածայմի Ազաթամզեղոսէն, յասելմ յէջ 35. « Եւ որք մկրտեցամմ՝ էիմ արք և մամկտի՝ ոչ զիք **հիւք հարք և յիստ** »: Ասորի հեղինակիս քով ևս կը գտնենք լուսաւոր սեան կամ սքանչելեաց երևումը. սակայն Ազաթամզեղոս արքունեաց մկրտութեամ ժամանակ համղիպած կը պատմէ զայն, որուն կը համանայմի մաս Մովսէս Գ. գլ. ԿԶ. իսկ Ջենոք յառաջիմ մկրտութեանը ժամանակ: Ըստ Ջենոքայ՝ 3 ժամ միայն տևեց այն, իսկ ըստ Ազաթամզեղոյ՝ մինչև ցերեկոյ. սակայն երկրքեան իսկ քաջ կը միաբանիմ, դմելով 'ի ժամ մկրտութեան մաս զիւրն օծութեան կամ զտուրք միւռտնմ Գրոշվի, որ կը մերկայացմէ մեզ զհմազոյմ սովորութիւն Հայաստանեայց եկեղեցոյ, 'ի միմ արու տալ և **չիւի**՝ մկրտելոցն չափահասից:

Մկրտութեան տեղոյն նկատմամբ ալ Ազաթամզեղոս, Ջենոք և Փաւստոս կը թուիմ տարածայնել յիրերաց, զի առաջիմը՝ կ'ըսէ. « Ի չամէիմ 'ի ջուրն Եփրատ գետոյն »• երկրորդիմ վկայութեան համեմատ « Իշուցամէ զմոսա (Գրիգոր) 'ի յորն Ածասնայ, յարևելից կուսէ հանդէպ **Կահիւնից՝ Ասորիսից** բերդիմ »: Իսկ Փաւստոս՝ « Հացեաց **դարակ** » կը յիշէ, ուր էր **ճորճոր**՝ յորմէ կ'անցամէր **վար** մի: Արդ, դիտելոյն եմք, որ Փաւստոս և Ջենոք առաջիմ մկրտութեան տեղոյն վերայ կը խօսիմ, և մոցս նկարագրութիւնը շատ լաւ կը միաբանի Ազաթամզեղոյ 608 իջի Ա. պարբերութեանը: Ուստի Փաւստոս հացեաց պուրակով՝ ամտառ միայն կը հասկնայ. իսկ Ջենոք՝ Ածասնայ քառովմ՝ ուղղակի Ազաթամզեղոյ այդ իշում յիշուած **ճորիւք** կը հասկնայ, որ ույն է 42 իշում եղած **Ուծ** անուանեալ փոսիմ հետ. և հնչումով իսկ մմամ է Ջենոքէն յիշուած Ածասնայ անուան, միայն թէ առ Ասորիս • տառը չիմելում պատճառաւ՝ արափով (Պ) գրուած էր, և ըստ այնմ Ա. ով տառադարձուած է սոյն ամուռը:

Յոհաննու Մկրտչի և Աթամզեղոսեայ տօնի հաստատութիւնն արդէն իսկ ծանոց ¹, յէջմ 611, յատուկ պարագաներով. իսկ յէջ 623

1. Յասնելմ այսպէս. « Եւ հրամայեաց կատարել ամը ամ յամէ 'ի տեղոց՝ ժողովել ամենեցուն 'ի յիշատակ սրբոցն, որ օր եօթմ էր Սահմի ամսոյ. զի ինդութեամբ ժողովեալ՝ զօր տօնիմ իմբեսցեն »:

վերստին կը պատմէ՝ մեզ, քայց աւաջինէն տարբեր պարագայիւք. այսինքն է, առաջին տեղւոյն մէջ Գրիգորի ուղեկից և զօրախումբն մախարարաց մկրտութեանէն ամմիշապէս վերջ հաստատուած կ'աւանդէ՝ Սահի ասոյ եօթներորդ օրն (՚ի մուտս Նաւասարդէ), առանց յամուանէ յիշատակելոյ զտուրք վկայսն: Իսկ երկրորդ տեղւոյն մէջ արքունեաց և արքայազունոց զօրաց մկրտութեանէն եօթմ օր անցնելէն վերջ հաստատուած կ'աւանդէ, Նաւասարդի մէկին և ՚ի ժամանակս Ամամորոյ և ամեմաբեր հիւրըմկալ Դէշ Դևասարդէ. սակայն այս անգամ յամուանէ կը յիշէ զՅովհաննէս և զԱթանազիմէս: Արդ, եթէ առաջնոց մկրտութիւնը 20 օր առաջ համդիպեցաւ քան զՏրդ դատայն, և տօնին հաստատութիւնը՝ եօթմ օր վերջ հոսկ ուրեմն կատարուեցաւ, ուրեմն իմնչպէս կըմայիմ երկաքամչիւրն ՚ի մուտս Նաւասարդի համդիպած լինել. չիցէ՞ այս ուղղակի հակասութիւն. իսկ եթէ ստուգու եմ հակասական՝ իմնչպէս կարեմ մի և մոյն աղբըրէն յառաջագայիլ:

Արդ, առաջին տեղում որովհետև որոշակի ոչ Ամամոր և ոչ այլ Նաւասարդը յիշուած են, ուստի ես չեմ կարող այս տեսակէտովս ուղղակի հակասական համարել վերջնոյն: Բայց որովհետև ՚ի սկզբն քան անդ Ս. Գրիգոր մի միայն տօն հաստատեց Յովհաննու Մկրտչի չիմ, և այդ տօնը տարին միանգամ և եթ կը տօնուէր Նաւասարդ ամսու մէկին, իսկ Սահմլ՝ էր երրորդ ամիսն՝ Երկրորդ, այսպիսի տարբերութիւն մի չայոց շարժական տարիով միայն կարելի էր արդարացուիլ. իսկ որովհետև չայոց եկեղեցական տօներն և տումարն՝ Հոովմէական տումարին համաձայն անշարժ էին. ուրեմն այսպիսի տարբերութիւն մի Գրիգորի ժամանակ անկարելի է որ տեղի ունեցած լինէր: Երրորդ, յումարէն օրինակն յետ յիշելոյ զՄահ մի՝ ամդէն կը յարէ κατὰ δὲ Ἦωμᾶλοσς Ὁκτωβρίοσ. Արդ, Նաւասարդը ըստ անշարժ տումարին՝ Արեգ ամսոյն (այսինքն է, Մարտ 9-21) և կամ ըստ Յուլեան տումարին՝ Օգոստոս 11, և ոչ թէ Հոկտեմբերին պիտի համապատասխանէր: Ուստի պէտք է ըսել, թէ այդ կրկին տեղերը՝ ոյոնպէս կրկին աղբերէ յառաջ եկած են:

Եւ յիրակի, 611 ինի հաստուածը կը վերաբերի 607 ինի Բ. պարբերութեանն, որուն հեղինակն յամուանէ կը յիշէ Յովհաննու Մկրտչի և Աթանազիմեայ վկայից ոսկերաց բերուիլն և զետեղիլն յեկեղեցին Մատրաւանից. ամոր համար 611 ինում՝ երբ մոցա տօնի հաստատութեանը վերայ կը խօսի՝ այլ ևս յամուանէ չյիշեր զմոսա, այլ, թէ « Հրամայեաց կատարել անդ ամ յամէ ՚ի տեղոյն՝ ժողովել ամեմեցուն ՚ի յէսարդի սրբոցն, որ օր եւթմ էր Սահմի ամսոյ »: Իսկ

1. Այսպէս. « Եւ զյիշատակս վկայիցն բերելոց ժամադրեաց տօն մեծ հռչակել, յառաջագոյն կարծեցեալ սնոտեացն պաշտաման ՚ի ժամանակի դիցն Ամամորոյ ամեմաբեր մորոց պտղոց տօնից հիւրըմկալ դիցն Վամատրի, զոր յառաջագոյն իսկ ՚ի միմ տեղոյն պաշտելին յուրախութեամ Նաւասարդ արուր: Զի ժողովեալ ՚ի յիշատակ մեծի երանելոյն Յովհաննու և սուրբ վկային Աստուծոյ Աթանազիմեայ, յայնմ արուր խմբեցեմ ՚ի միմ արամի » (՚ի Բագաւան կամ Դիցմաւան):

երկրորդ տեղւոյն մէջ, այսինքն է, 623 իջի հեղինակմ որովհետև այլուր յամուամէ յիշած չէր, այն պատճառաւ աստ ստիպուած է յիշել հասկանալի լինելու համար: Յունարէն օրինակմ փոխանակ « Նաւասարդ աւուրմ » (*), կը գրէ ՚ն ղիւէրք շիջ քաւրօսեաճ տօճ ՚ն յաւստօճ, այսինքն է, յաւասարճ յորճ յորճ յաւասարճ. և փոխանակ « ՚ի մսին աւանի », կը գրէ և յամուամէ զΒαγαν: Արդ, այս պիսի տարբերութեմէ մի կարող էր նոյնպէս տարբեր արդիւնք առաջ բերուիլ, մկատմամբ այն կրկին տեղեաց, որոնց վերայ է խօսքը, եթէ յունարէնը՝ հայերենին բնագիր եղած լինէր, և կամ զէթ ծ դարու հայերէնը՝ մի ուրիշ կատարեալ օրինակէ թարգմանուած: Սակայմ այս երևոյթն ես յոյն թարգմանի սխալ հասկացողութեանը պարզապէս արգասիք կը համարիմ. որովհետև Մ. Խորենուացոյ և տոհմային աւանդութեանն իսկ կը հակառակի, որք Նաւասարդի առաջին օրն՝ յորճ մամնորը կը սկսէր՝ և ոչ թէ տարւոյն վերջին օրը կը դնեն հիւրընկալ դից աշխարհատողով և մեծահանդէս տօնը:

Արդ, 623 իջի հատուածմ եթէ Գրիգորի կենսագրին համարիցի որ և եթէ կենսագրին Տրդատայ, այս յայտ է, թէ մորա յայտ մած պարագայն, այսինքն է, Ամանորոյ հիւրընկալ դից տօնին փոխուիմ ՚ի սրբազան տօն և յաւէժ յիշատակ Մկրտչին Քրիստոսի և մեծի պաշտպանին Հայաստանեայցս՝ բոլորովին մոր է և յոյժ հետարքրակամ: Բայց տեղոյ մթութեանը պատճառաւ՝ այլևայլ մեկնութիւններ տուին գիտնականք մորա մէջ պարտուակեալ իրաց: Ես միայն երկու նշանատր կարծիք կ'ուզեմ աստ մէջ բերել, այսինքն է, Մ. Էմիլիոնը՝ նկատմամբ Ամանորոյ և Գուտշմուրիներ՝ Աթանագինեայ մասին: Առաջինը՝ հիւսն դնելով իւր բանից զԱզատութեանը կը դասէ՝ զԱմանոր ընդ դիս Պանթէոնին Հայաստանի, մականուամբս Ամանոր, դնելով զմեհեան մորա ՚ի Բագաւամ ՚ի գաւառին Բագրևանդայ:

Արդ, այս կարծեացս համեմատ, Հայաստանը պիտի ճանցած և ներկայացուցած ըլլար զԱմանոր իբրև անձնատրութիւն իմն մոր տարւոյն: Կոտմոսի կամ, ըստ զրադաշտական վարդապետութեան, Ջրուանայ այս գեղեցիկ ծնունդս, որ ամ յամէ անծերամալի առու գութեամբ կը մորոգէր՝ զոյգ ընդ ընթացից Արեգական, բնականաբար չէր կրնար մկատուիլ իբրև գիշատիչ իմն երկրածնաց. այլ իբրև մորոգիչ բնութեան, արգասատրիչ սերմանց և բերող ամեմազան պտղոց: Սորա մուկրուած պիտի լինէին մոր տարւոյն առաջին ամիսն կամ Նաւասարդի առաջին օրն: Արդ, ինչպէս յաւուրս Պա

1. Հսելով, յէջ 23. « Dans la même famille de dieux se place aussi Amanor. Ce mot est composé de *am* = l'an, et *nor* = nouveau. Amanor veut donc dire : nouvel an. Agathange affirme que ce dieu était le protecteur des fruits et s'appelait aussi : Vanadour tik, dieu donnant asile ou abri. », իսկ յէջ 24 կ'ըսէ: « Que le lecteur ne s'étonne pas de ce que, prenant pour base les paroles d'Agathange, nous rangions Amanor parmi les dieux, et que nous ne prenions pas seulement son nom dans le sens de l'idée du nouvel an ».

սեքիմ բոլոր հրէայք կը դիմէին յերուսաղէմ, այսպէս ևս հեթանոս հայաստանը կը խմբէր 'ի Բագաւան, յամենայն կողմանց բերելով զբրախայրիս մորանոր պտորց: Այս պատճառաւ ուրեմն ամսով յառաջ փութաց նա ինքն Տրդատ՝ համղերծ արքունեօք և արքայա գումը զօրօքն 'ի Դիցմուսան, առ 'ի կատարել զօրմ մեծ, զոր կեն սագիրը Գրիգորին ընդ առաջ երթալու համար եղած կը համարի: Այս մուկրական առաւօտուս կատարուած համղիսից եթէ ոչ ճըշ գրիտ և կատարեալ պատկերն, այլ գէթ քաղցր արծագամզը կու տայ մեզ քաջահիղող մուսայն արքունեաց արին Արտաշիսի՝ այսպէս. « Ո՛ տայր ինձ զծառի շքեանի՝ - Եւ զառաւօտըն Նառասարդի. - Զլուինն եղանց և զլագինն եղևերուց. - Մեք քող հարստաւ և խիչի հար կանխաւ », զոր սլարտիմք Գր. Մագիստրոսի: Նման է այս երգս Արուսեան եղբարց երգին, որ 'ի ժամանակս հնձոց կ'ընէին և կը շրջէին յանդաստանս հնոյն հռովմայ, և թմբկօք և պարուք կ'երգէին զօրհնութիւնս հնձանեան հօրմ Դեմետրեայ կամ Զէրէրէի: Ամուշտ այսպէս կ'ընէին երբեմն ժամանակի մաս արքայեղբայր քրմապետըն Մաթան՝ իւրայովքն համղերծ, 'ի մուտս Նառասարդի, օրհնելով Եփրատայ և Երասխայ սրբագան գետոց ամենաբեր հովիտներն և հովտաց արմտիքը: Արմաւիր, Բագարան, Արտաշատ, Երուսաղէմ, ամուրն Անի, Թիլ, Երիզա, Բագայառիս և Յաշտիշատ իբրև մուկրական դատերք՝ Երբօրն-հրայ (Միհրայ) և Քեան-հրայ (Ամահ տայ), զմիմեանք ելևելս կ'առնէին 'ի համղէս դիցն Ամամորոյ: Եւ Եփրատէս՝ ըստ հաւատարիմ աւամուկեան, « Առանց ինչ անձրևաց առատութեամ՝ յորդեալ իւրովի և ուտուցեալ՝ պակաս բոլորածևս զվիրապաղէզ պլեօքն բերէր ըմծայ դիցն և 'ի մշամակ պէսպէս յաշողութեան հայաստան երկրին »: Ազգի ազգի զոհեր և գուշակութիւններ կը լինէին 'ի մեհնեմիմ Բագաւանի: Որսորդութիւնք էրէոց և հաւուց՝ մէկ կողմէն, իսկ միւս կողմէն ալ խաղեր և երաժշտութիւններ վեց օր և վեց զիշեր զհամաշխարհի եկաւորսմ կը զբաղեցընէին. որոնք ձրի կ'օթէին անդ ընդ յարկաւ և ընդ հովանեան Վանասուր դից. առանց արծաթոյ՝ կը հաղորդէին զոհից և կերակրոց, զորս իրենք կը բերէին 'ի դաշտաց և 'ի քաղաքաց: Կարելի է ըսել, թէ այդ օր միայն բարձրաբեր լեռներով իրարմէ անջատուած հայաստանի հնգետասան մահամզները կը միամայիմ իլաւրու հետ եղբայրական սիրով և մեծ ցնծութեամբ, ոչ ինչ ընդհատ 'ի համաթեմական տօմից և ցնծութեանց հնոյն Ելլադայ:

Իսկ գալով Ամամորոյ ստուգաբանութեանն, ես նմանէմ տարբեր համազում ունիմ, այսինքն է, իմ կարծիքով չէ պարտ զԱմամոր հայաստանի դից կամ աստուածոց կարգը դասել. այլ հասկանալի է իբրև տօմ ինչ կամ արքայապետ, զոր ամուստիմ 'ի հին ժամանակաց կը կատարէին հայք՝ 'ի պատիւ հիւրընկալ դիցն, որոնց հետ մասնաւոր արարուածով միացած էր և վամատուրն: Ո՛վ էր ուրեմն ամամորոյ ամենաբեր այդ աստուածն, և ո՛վ 'ի Բագաւան եկատր հայաստանեայց հիւրընկալմ և վամատուրը: Արդ, պէտք է դիտել, որ Ագաթանգեղայ այս խօսքերս « կարծեալ անտիպան պաշտաւ

մամ », և « **Դեյն** ամամորոյ ... **Դեյն** վամատրի », կրկին և յոգնակի դիմօք եղած բացատրութիւնքը՝ չեմ կրնար զԱմամոր յարաբերել պարզաբար, իբրև եզակամ ամձմատրութիւն ինչ այլ ուղղակի եմ յայտարար բազմութեամ աստուածոց կամ համօրէն դից Հայաստանի, որոնց մասիմ՝ մի առ մի խօսեցանք յառաջագոյն. և թէ 'ի Բագաւան եղած մեհեամմ՝ այս պատմառաւ կը կոչուէր Հասնաբեյն **Դեյն** կամ պարզապէս Դիցաւան: Չայս կ'ակնարկեն, ըստ իս, Ազաթամզեղոսի 612 իջի խօսքերն « քաղաքագեօղմ Բագուան, որ տնտանեալ կ'աչի 'ի պարկեալան լիդունն Դեյնասան »: Յիրաւիչ ինչպէս 'ի հմուտն Եգիպտացիք, Յոյնք և Հռովմայեցիք բաց 'ի այն առանձին աստուածներէն և աստուածոց տեղական պաշտամանէմ՝ Հայմարդիք՝ մեհեամն և տօմ մ'աւ հաստատած էին, զոր 'ի տարտուն միանգամ կը կատարէին աշխարհախումբ ցնծութեամբ. այսպէս ևս Հայք պէտք էր որ ունենային և ունեցան իրօք իւրեանց Համայնարդից տօմն. և այս է զոր Ս. Գրիգոր փոխեց 'ի տօմ սրբոց վկայից, և Եկեղեցի սուրբ՝ յետոյ ուրեմն ամուսնեց **Տն** տնայն որքոյ: Այս մեկնութեամբս միայն կը պարզուի Ազաթամզեղոսն շեշտուած **Տն** պաշտամունքն. այս պատմառաւ միայն հասկաւ մալի կը լինի բովանդակ Հայաստանեայց գումարումն 'ի փորքիկմ Բագուան:

Թերևս ըստի, թէ ամուսն դիք թէպէտև ամեզական ըստ ինքեան, բայց աստ եզակի իմաստով մի միայն աստուած կը նշանակէ, ուստի այսպէս հասկանալի է և բառս Դիցաւան: Այսպիսի դժուարութիւն մի՛ ես արդէն լուծուած կը համարիմ կենսագրի վերոյիշեալ բացատրութեամբքը: Սակայն ուրիշ փաստեր ևս կան, որք կը ցուցնեն, թէ Ամամոր ամձմատր աստուածութիւն մի չէր: Յիրաւի, առ Ազաթամզեղ **Դեյն** ամունը ճիշդ այն կերպով կը վերաբերի Ամամորոյ ինչ կերպով որ կը վերաբերի Նաւասարդին, որովհետև այդ երկու ամուսնքը վերլուծելով իսկ կը տեսնենք, որ մի և մոյմ մշամակութիւնն ² ունին. իսկ արդ, դիք ամունը կը վերաբերի Նաւասարդին՝ իբրև տօմի կամ աւուր տարեգլխոյ, ուրեմն այսպէս և ամամորոյ: Բ. ինչպէս ամամոր և մաւաւարդ ամուսնեց լեզուա-

1. Առ Յոյնս՝ մշամատր էր Աթէնքում 120 մարմարիայ սիւներով Պանթէօնը և Հռովմայ մէջ՝ Ագրիպպաս կայսեր ձեռքով կառուցուած ամմամմ Pantheonը: Արդ, ըստ վկայութեամ Դիոն Կասիոսի 53, գլ. 27, և Մակրոբիոսի, 3. Sat. 17, 15. այսպէս և այլ Հռովմէական և յունական հմութեամց հաւաքմունք կը հաստատեն, թէ այդ տաճարաց մէջ զետեղուած էին համօրէն դից պատկերներ և դիւցազանց ամողիք, և գոհիւք կը պատուուէին համօրէն դից և Համաթեմական տօմից առթիւ, որ կը տնէր 80 օր: Իսկ Բէշըրէլ այսպէս կը գրէ զՊանթէոնէն: "L'ensemble des figures panthées, petites statues, qui portaient les symboles de plusieurs divinités." . Dictionnaire, T. II, p. 757.

2. ՋիՆաւասարդը կազմուած է սամսկրիտ-բակտրիարէն *navā* միւր և *carad* ամ բառերէն, (Burnouf, Jaçna, 37. Lagard, Arm. Studien, p. 115, 111). Այսպէս ման ամամորը կազմուած է սամսկ. *sama*, բակտրիարէն *hama* « ամ » և հայապարթև « մոր » բառերէն: Սակայն դիտելու է, որ ինչպէս *sama* և *hama*, այսպէս ման հայերէն « ամ » բա-

կամ կազմութիւնով՝ է զուտ հինդ-արիական, այսպէս ևս մոցս դի-
ցարամական ծագումը՝ հինդ-արիական ազգերէն անցած պիտի լի-
նէր առ Հայս. սակայն ոչ ոք ՚ի գիտնականաց մինչև ցայսօր գտաւ
Հնդկ և արիական ժողովրդոց մէջ հետս ինչ Ամանոր դից: Գ. Էմիմ
Կրէօցերի մէկ վկայութեամբ վերայ հիմնուած կ'ըսէ, թէ Տիրոսի
մէջ տաճարներ ևս կամզմած էին՝ Փիւնիկեցիք ՚ի պաշտօն տարւոյն
և ամոց, իբրև մշամակ պարբերութեամ երկայն և կարճ ժամա-
նակաց. ուրեմն այսպէս և Հայք յամուս Ամանորոյ: Սակայն այդ
աւանդութիւնն ստուգութեամ կարօտ է: Մամաւանդ թէ, ըստ իս,
պէտք է ըսել, թէ Տիրացիք պաշտօն կը մատուցանէին ոչ թէ ժա-
մանակին, այլ Արեգական և Լուսնի, որով տարւոյն և ամոց շրջան
ները կը կատարուին: Երկրորդ, եթէ ստուգու պայման ևս եղած
համարինք, ինչպէս կը կարծէ Էմիմ, սակայն ամտի բնաւ չի հե-
տևիր, որ Հայք ևս մոյնպէս ըմէին. որովհետև սոքա իբրև արիա-
կան ազգ՝ ինչպէս լեզուով այսպէս մաս կրօնիք և սովորութեամբ
սեմականաց հետ վերաբերութիւն չունէին. ուստի պէտք է Հայոց
դրացի և համարուս ազգի մի մէջ որոնել զայն: Առ Պարսիկս՝ կը
գտնենք զոյգ տօներ, այսինքն է, Եւրոպայ մոր օր, որ կը համա-
ծայնի Հայոց մաւասարդին՝ և Մահաբան օր, զոր կը տօնէին ամառ-
այսին գիշերահաւասարին՝ Միհրկան ամոցն մէջ: Սակայն Պարսիկք
այդ տօներով ոչ մոր տարին և ոչ միհրական ամիսն իբրև աստուած
ծութիւն կը ճանչնային. այլ Միհրայ, Ահուրամազդայ և մեզի ծա-
նօթ աստուածոց մեծահանդէս պաշտօններ կը մատուցանէին:
Այսպէս ուրեմն պէտք է ըսել նաև Հայոց համար, որոնք կրօնքն և
տօներն հասարակաց էին ըմդ առաջնոցն: Գ. Բազաւան, որ կը
թարգմանի, ըստ Մ. Խորենացոյ Բ. գլ. ԿԶ. « Բաբելոնաց աստուած »,
յայտնի կը ցուցնէ, թէ մէկ յատուկ աստուծոյ մի մուկերեալ չէր, այլ
թէ բազմաթիւ աստուածոց և կիսաստուածոց բազմներ կային
ամը, ըմդ որս դասեալ էր և եղբայրն Տիրացեալ վերջնոյ՝ արքային
Հայոց, ըստ աւանդութեամ Մ. Խորենացոյ: Արդ այս բազմահիւստ
հեղինակս, առ որ ախորժելի է իմձ դիմել միշտ իբրև ՚ի դեղինեամն
Ապոլոն՝ վասն նորապատում և դժուարակննիւն խնդրոց, իւր
պատմութեամ Բ. Գրոց ԿԶ գլխուն մէջ այսպէս կը խօսի Բազաւանի
մեհենին և ամը հաստատուած տօնի մասին. « Յորում պատմէ ՚ի
մեհենինց պաշտամանց, վերջին Տիրացեալ արքայի Հայոց պա-
տուեալ զԳիշերահաւասարին եղբոր իւրոյ Մահաբան օրսն ՚ի Բաբելոնացեան »
և ընդհանրէ ՚ի վերայ գերեզմանին շինեալ՝ զի ՚ի զորհիցն ամնայն
անցաւորք վայելեցցեն, և ընդհանրէն հետք երեկոյն: Յորում և

ընդ կը մշամակէ « ամառ », որովհետև ինչպէս ըսուեցաւ, Հայոց ամա-
նորմ ամառնային գիշերահաւասարին կը սկսէր, յերևել մորոց պըս-
ղոց. այնպէս որ դժուար է որոշել, թէ արդեօք ամառն բառը՝ « ամ » էն
ածանցած է, թէ ըմդհակառակն ամ բառը՝ ամառն է: Իմ կարծիքով,
պէտք է ըսել, թէ ամառ մոյն է ըմդ ամ բառին, միայն « առ » մախդիքը
մորա վերայ յաւելցած է, մշամակելու համար, թէ ամ՝ առ կամ առըմ
թեր կամ ՚ի վերայ կայ:

Դիէ Վաղարշ Գոծ Երեւանի մէջ կարգեաց ՚ի սկզբան Եւ Նորայ, ՚ի մուտն Նաւասարդի: Յայտ պարտաւնէն աւել մեր երկրորդեցաք քեզ »: Մովսէս իմքնին այս տեղիս մէջ կը բերէ իրմէ աւելի հմտագոյն Բարդաճամի մեհեմակեան պատմութեամ յունարէն թարգմանութեան: Արդ, այդ տեղիմ եթէ Բարդաճամին համարինք և եթէ Ուրիւքի, այս յայտ է, թէ ամենայն ընդունելութեամ արժամի գործ է, և կը պարզէ Ազաթանգեղայ վերոյիշեալ տեղոյն մթութիւնը: Ազաթանգեղոս Նաւասարդի տօնը միայն կը յիշէ. իսկ Մովսէս՝ այն տօնին հաստատութեան ժամանակամիջոցն և զպարագայս իսկ կը յայտնէ մեզ: Առջինը՝ կարծեալ անորեաց պաշտօն մի կը ծանուցանէ, առանց ըսելու թէ հիշ էին այդքիկ. իսկ վերջինը՝ զՄժամ ևս համոզեծ ըստաւ և զոհիւք կը դասէ ըմբ մոսս: Առ Ազաթանգեղ իբր թէ Ամանոր և Վանատուր առանձին առանձին աստուածներ եղած լինէին. իսկ առ Մովսիսի թէ Ամանորն և թէ Նաւասարդ պարզապէս իբրև տարեմուտ և ամսամուտ առնուած են, բացառութեամբ յիշ բառին: Իսկ վանատուր և հիւրընկալ բառերն՝ երկաքանչիւրին քով անորոշ մնացած են: Թէպէտև առ Մովսիսի՝ Մժամայ քրմապետին ընծայուած կ'երևին, սակայն ես կախորժիմ իբրև լոկ մականուններ համարել դիցահօրն Արապացոյ: Յիրաւի, ուրիշ հնդարիական և հնդկրոպական ազգեր ևս, ըստ ասելոյ Կիլիւրոնի և Ապուլէոսի, զԱրամազդ միայն հիւրընկալ կ'անուանէին, յասելմ. *Jupiter hospitalis! Hospitalia fulmina!*

Իսկ Գուտշմիդ՝ կ'ընդունի, ընդհակառակն, Ազաթանգեղայ այդ և նորա մախընթաց հաստածոց հնութիւնը, բայց Արապացոյ պատմական անձնատուրութիւնն՝ առասպելեալ վիպասանութեամ կամ դիցաբանութեան մէջ կ'ընկղմէ, հիմնուելով մէկ կողմէն յանուն Մետափրաստեսի՝ այս սրբոյս մասին մեզի հասած մէկ աւանդութեանը՝ վերայ. իսկ միւս կողմէն այլ յօգուտ ՚ի վար արկանելով հիմ չարց տարածայնութիւնն և սրբոյս վկայաբանութեան մէջ պատմուած զարմանագործութիւնը: Հեղինակս իւր ծանօթ երկասիրութեան 56 իշում մեկնելով Մետափրաստեսի մէկ տեղիմ կ'ըսէ, թէ Արապացոյ այդ է հեթանոսական և միմաւորց աստուած

1. Ուր այսպէս գրուած է վասն Աթամազինեայ. *Ut autem appropinquavit monasterio, occurrit ei cerva et deosculata est pedes ejus. Dixit ad eam Sanctus: "Privata es fratribus ecce privaris etiam eo qui te enutrivit. Deus universorum saeculorum non permittat, ut quis dominetur tui, neque semen tuum capiant venatores, sed semen tuum ferat sobolem in memoriam nostram, et consumetur in laudem Dei". Cerva autem flens procidit ad pedes ejus; sed eam obsignans sanctus martyr dixit: "Vade in pace". Cerva autem adest in commemoratione Sanctorum martyrum adducens domum Deo hinnulum, et lecto evangelio appropinquat altari spectantibus omnibus, et positus genibus suis orat, et relicto pullo revertitur in pace ad locum suum: Hinnulum porro consumitur in gloriam Dei et in honorem sanctorum martyrum. Acta Sancti Julii IV, 218 f.*

է՛՛՛ ծածկեալ ընդ քրիստոնէական քողով. բայց մա անդատին 'ի վաղ ժամանակաց համարուած էր իբրև պաշտպան և շահապետ անտուարմակ էրէոց: Եւ այս բանիս ապացոյց կը բերէ Տակիտոսի մէկ տեղիմ, Տար. ԺԲ, գլ. ԺԳ, յորում կ'ըսուի, թէ Ադիարեմնի մէջ կը պաշտուէր իբրև զհերակլէս որսի աստուած մի:

Յիրաւի, Աթամազիմեայ վկայաբանութեան այն մասն, յորում մա արեւելեաց գաւազանաւ կը սպանանէ զվիշապն ահագին, կարծէք, թէ ստուգու հերակլէսի կամ վիշապաքաղմ Վամազնի արարուածները կը յիշեցնէ: Մակայմ իցէ՛ արդեօք բանատըր, ամէն վիշապ սպանողներ հերակլէսի կամ Վահագնի հետ շփոթել, և կամ կարծեցեալ եղմը կամ հետ ունեցած յարաբերութեան մի որսի աստուած համարել զմա: Ոչ բնաւ. ապա թէ ոչ 'Դամիէլ և Ս. Գէորգ ևս պիտի հարկադրուէինք վիշապաքաղ հերակլէս կարծել: Գերմանացի քննադատը՝ ճարտար է մման ամուսներէ և դէպքերէ կամուրջ կապել, պատմական իրողութեան մի՛ վիպասամականիմ անցներու համար: Այլ 'ի հետեւեալմ՝ վիպասամականէն, ընդհակառակըմ, կ'ամցնի 'ի պատմականմ. այսինքն է, առ Փաստոսի յիշուած Ս. Գրիգորի թրուորդիմ ևս որովհետև Աթամազիմէս կը կոչուէր, աստի կը հետեցնէ, յէջ 55, թէ որովհետև թէ՛ կարծեցեալ Ս. Աթա՛մազիմեայ նշխարաց բերուիլմ 'ի Հայս, և թէ՛ Յուական որդւոյմ ծնունդը կ'իլմայ մօտ յամմ 312. ուրեմմ Ազաթամզեոյ պատմա՛ծըմ այս վերջնոյս վերայ առնելու է. որովհետև առաջնոյմ՝ առ 'Կոնկիստանտինոսի. նահատակուիլմ և հաւատացելոցմէ միաժամանակ տօնուիլմ հակասական է:

Մակայմ Գուտշմիլը ինչպէս իւր առաջին եզրակացութեանմ՝ այսպէս և երկրորդին մէջ կը սխալի. և մորա սխալ կարծիքը տոյմ կըրկիմ Աթամազիմէսնելու մասիմ՝ հիմնուած է Մետափրաստեսի և Փաստոսի վերոյիշեալ տեղեաց թիւր հասկացողութեանը վերայ: Յիրաւի, Փաստոս՝ Գրիգորի թրուորդւոյն անուան հետ 'ի միասին կը ծանուցանէ մոյմպէս մորա ծննդեան և վարուց պարագաներմ, որով սա այնպէս կը հակադրուի Ս. Աթամազիմէսի, ինչպէս չարը բարւոյն. ուստի չէր կարող Գրիգորի Կեմնագրիմ այնպիսի մկարագրութեան առիթ տալ, զոր կ'ըմթեմումք առ Ազաթամզեոյ: Մամաւանը թէ, մորա ծննդեան թուականմ իսկ ընդունելով իբրև ստոյգ, այս հակառակ հետեութիւնմ անտի կարելի է առաջ բերել, թէ որովհետև այն ժամանակ կամ անկէ քիչ առաջ բերուեցան Ս. Աթամազիմէսի նշխարքմ 'ի Հայս և ծանօթացաւ նոցա այս մեծ վկայս. ուստի Գրիգորի թրուորդիմ այդ ժամանակ ծնանելով՝ արժանի եղաւ կրել իւր վերայ մորա անունը, թէպէտ և իւր զեղծ վարուքը գլխովիմ անարժամ ըրաւ մա ինք զինքը իւր անուանակցիմ: Եւ յիրաւի, եթէ Աթամազիմէս հեթանոս Հայաստանի ծանօթ դից անուն եղած լինէր, անշուշտ յառաջագոյմ իսկ այդ անունը կրող պատմական անծիմք պիտի լինէին առ Հայս, ինչպէս եղան Տրուատ և Միհրդատ՝ յամում Տիր և Միհր դից: Իսկ Ս. Աթամազիմեայ մասիմ՝ կ'երևի, թէ Գերմանացիմ միայն Սիմ. Մետափրաստեսի և Ս. Բարսը-

դի Յուդէոս Զոֆոնի Սբէոյ՝ ընդդէմ Աֆիլոսոս գործերը կը ճանչնայ, որոնց ականդածն իրարու հակասական կը դատի. որովհետև ատաղինը՝ սրով զխատուած կ'ականդէ զմա, իսկ վերջինը՝ հրով պարուած: Ստուգի սրբոյս մահատակութեան պարագայից մէջ կայ հակասութիւն մի, այս ամուրամալի է. սակայն երկրորդն իսկ մորա մահը Դիոկղետիանոսի հալածանաց ժամանակ կը դնեն, այսինքն է, 303-305: Ուստի յամիմ 311-312 կարող էր Գրիգոր բերել զմա 'ի Հայս: Սակայն Ս. Աթանասիոսի հայերէն և ամենա հիմ վկայաբանութիւնն, որ 'ի Հիլարիոնէ ականատես ամօնէ գրուած է, ըստ խորին քննութեան է. Մկրտ. Աւգերեան (Վարդ Սբէոյ, հտ. Դ, էջ 353, ծանօթ.), ոչ միայն վերոյիշեալ յոյն հեղինակաց մէջ եւ ընցած հակասութիւնը կը վերցնէ, այլ Գուտշմիդի կարծիքն ևս 'ի հիմանց կը տապալէ: Արդ, յայսմ կ'ականդուի, թէ Ս. Աթանասիոսէս յիրաւի, ըստ ասելոյ Ս: Բարսղի, հրոյ դատապարտեցաւ, բայց հրոյ մէջ դեռ չի մտած, երբ բազկատարած կ'աղօթէր, « Կի՛ն անհրաժեշտ » մեծատուն և ազնուագոյն՝ յորմէ կ'ականածէիմ սպասաւորք ատենիմ, և ամուս մորա Եսէֆէս, անկաւ ատաղի սրբոյս մեծաւ հառաչմամբ և ասէ. « Աղօթեա վասն իմ սուրբ Աստուծոյ »: Աթանասիոսէս կը խոստանայ մնա կատարել զինդրուածս, եթէ ինչ մարտն յարեալ հասցնէ յազարակն իւր Փիլոսոֆի, 'ի հանգիստ սրբոց, զոր մա իմքն շինած էր: Եւ երբ մտաւ մա 'ի հուրն և աւանդեց զհոգին, փութաց բարեպաշտութիւն Եսէֆէս առ Ագրիկոս ղայոս դատարն և խնդրեց զմարմին վկայիմ. որ և շնորհեց մնա ծածուկ 'ի բազմութեանէն և 'ի պատիւ մեծագոյն կնոջն: Յետ այնուրիկ կ'ըսէ, թէ երեցաւ Ս. վկայն Եսէֆէսի, ծանուցանելով, թէ բարեխօսեցի վասն քո և թողամ մեղք քո. իսկ կիմն հաւատացեալ յԱստուած՝ « Վասն որոյ զասիւնայն ծամանախ կենաց ինչոյ պարտապարտ ըլլայի ինչոյն և ինչոյն անաշխատ, և զարժանաւոր պարտն հարտացանէր նա »: Արդ, վկայաբանութեանս պատմական կերպով կատարուած Եսէֆէսի դէպքն՝ այլաբանօրէն գրուելով, առ Մետափրաստէսի, վկայասանութեան կերպարանք ատած է. սակայն *ce rva*, իզական բառս յայտնապէս կը յարաբերէ զԵսէֆէս, և ես համոզեալ եմ, թէ առ Մետափրաստէսի եղած այդ վէպիկն ևս՝ պէտք է, որ շատ հին եղած լինի: ԶԵսէֆէս եղնական մնացեալով՝ վկայասանին շարժառիթն ևս շատ պարզ է և հիմնատր, եթէ մախկիմ դարու սրբագան հմութիւններն աչքէ անցնենք: Բազմաթիւ նկարներ և խորաքանդակներ, ինչպէս ման Պոնտֆիլէն մկրտարանն և այլ և այլ ամօթներ՝ կը ներկայացնեն սեզ շեղջերան՝ իբրև նշանակ մեծի տեմչանաց երկնայնց կամ մորադարձ հաւատացելոց՝ ընդունելոյ զմկրտութիւն: Ըստ այսմ ուրեմն հիմնաւոր վկայագիրն հեթանոսիկ Եսէֆէսի ամօնաւորեց զմա յեղջերու կամ յեղմիկ, ցուցա

1. Paciaud, De baln., p. 137.

2. L'abbé Martigny, Dictionnaire des Ant. chrétiennes, p. 79. Paris. 1877.

մելու համար մորա յաւէժ-յիշատակաց արժամի սէլմ առ Ս. վկայմ Աթամազինէս: Ուրեմն իրմ յինքեան պսպէս լինելով, իրաւունք ունէին Ձեռնոք և կենսագիրն Գրիգորի, ստէպ ստէպ յեղյեղել Աթամազինեայ վկային մշխարաց բերուիլմ 'ի Հայս՝ զոյգ ընդ Յովհ. Մկրտչին, և փոխարդուիլիւմ մոցա յայլևայլ տեղիս, առամց հակասութեան:

Այսուհետև տեսնեմք, թէ այս պանծալի սրբոց տօնի հաստատութիւնը, զոր աւամդեմ մեզ Գիրք Ազատագնդայ, յէջմ 623, ինչ հիման վերայ հաստատուած է: Այս և սորա հետևեալ գլխահամարքմ ամենայն իրօք կարող եմք այն սակաւագիւտ տեղերէն համարել, որոնց մասին քաջ կը համաձայնին բոլոր հին մատենագիրք և ականդուիլիւք ազգիս: Յիրաւի, Ձեռնոք Տարօնի պատմութեան 35 իշում յետ մկրտութեան՝ անդէն և անդ կը յարէ այս նուիրական տօնախմբութեան հաստատութիւնն, ասելով. « Եւ առեալ ածէ (Գրիգոր) զմոսա՝ 'ի տէրումական տաճարն. և ԳԺ Կարգարէն Կարգարէլ, որ օր օր էր Նախարարէ »: Ասորին այս տողով՝ կը միացնէ Ազատագնդայ 622 և 623 իշից անջատուած պարբերութիւնը: Փաւստոս, Գ. Դպրութեան Գ. գլխուն, խօսելով Վրթմանի 'ի Տարօն երթալուն վերայ, իբրև միակ պատճառն այնմ՝ զայս եղած կը յիշէ. « Քամզի պսպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն Հայոց, հանդերձ թագաւորօք և մեծամեծօք և մախարարօք և աշխարհախումբ բազմութեամբք պատուել զմոյմ տեղիս, որ յառաջմ էին տեղիք պատկերաց կոտցմ, և ապա յամում Աստուածութեան սրբեցան, մամաւամդ յայմ 'ի գլխաւոր տեղիմ եկեղեցիմ ժողովել 'ի յեշարհի սրբօցն, որ անդ էին, կատարել ամի ամի եօնն՝ և ամգամ »:

1. Փաւստոսի այս բացատրութիւնս՝ գլխովիմ մի մոր իրողութիւն կը յայտնէ, զոր չէ մարթ գտնել ոչ առ Ազատագնդ և ոչ իսկ առ Ձեռնոքայ: Արդ, հիղինակիս « եօթմ ամգամ » խօսքերն եթէ վերաբերեմք « սրբոց, որք էին ամդ », այսինքն է, Յովհաննու և Աթամազինեայ, դարձեալ ամհասկամալի և ամմիարամելի կը մնան ընդ աւամդութեան կենսագրին Գրիգորի. որովհետև գիտեմք, թէ Ս. Գրիգոր մի միայն տօն հաստատեց մոցա, և ոչ թէ եօթմ 'ի տարւոջ: Ձեռնք՝ Ամդրէաս և Ղուկաս Առաքելոց մշխարքն ևս բերուած կը համարի 'ի Հայս. արդ սոցա հետ եթէ զՄուրքմ Հռիփսիմէ, Գայիանէ և զմիւսերն ևս հաշուեմք՝ կը լինին եօթմ, 'ի յիշատակս որոց մարթ է ասել, թէ եօթմ այլևայլ տօնախմբութիւններ կը կատարուէին: Մակայմ ես կարծեմ, թէ այս մեկ նուիրեմքն Փաւստոսէն խոտորած կը լինիմք. որովհետև մորա խօսքմ ուղղակի Յովհաննու և Աթամազինեայ տօնին վերայ է: Ուստի ըստ իս կարելի է ըսել, թէ կամ առ Մեծն Կիրսիսիս Հայաստամեայց եկեղեցիմ եօթմաթիւ տիտղոսներով կը տօնախմբէր զսուրբմ Աստուծոյ, այսինքն է, Ա. իբրև զՅովհաննու, Բ. զԿարապետ, Գ. զՄկրտիչ, Դ. զՄարգարէ, Ե. զԱռաքեալ, Զ. զՄարտիրոս և Է. իբրև զՄնապատական և ժգմաւոր: Յիրաւի, այս բանն կը տեսնուի մախ Յովհաննու վերայ երգուած Շառակամին մէջ: Բ. Ամդստին 'ի վաղ ժամանակաց հետէ այս տիտղոսներս իբրև յատուկ անուաներ կը կրէին իրենց վերայ Հայաստամեայց: Եւ կամ ըսել, թէ Գրիգորի ժամանակէն 'ի վեր եօթմ տեղ տարածուած էին Յովհաննու մշխարքը և եօթմ եկեղեցիք կամզմուած էին 'ի պատիւ սրբոյս, յորս առնէին տօնախմբութիւնս առամօրնս՝ ամի ամի:

Եւ Դ. Դպրութեան ժն գլխում, պատմելով զերթն Գնէլայ 'ի Շահալ պիւմ' կ'ըսէ. « Եւ յայնմ ատուր (Նախասարդի) Տծն դիպեցաւ յէշտաւի ժնն Թափաննա, որ 'ի Գրէթորէ և 'ի Տրտոտոյ հասարտեցաւ » : Մեծն Սահակ Պարթև 'ի Զ. կանոնի ¹ անդ Եռաշտ կորեոյ Ուիթի և որչան վանայ, կ'ըսէ. « Տծն որչոյն Թափաննա Մկրտչի և վնայ, շր Զախարեոյ առաքելն և խոստովանող Քրիստոսի և հայր վերստին մորոզման բոլոր Հայաստան աշխարհիս Գրէթորէ 'ի վանս » : Բայց 'ի սոցամէ Հայաստանեայց Եկեղեցոյ միս յիշատակարանը ևս, այսինքն է, հմազոյմ Տծնայոյց և շտոյց և Յայսմալորը, անժխտելի վկաներ են այս տօնիս հաստատութեանը, զի կը գրեն. « Նաաաաարթի Ա. րծն է շննդեան ² Թափ. Մկրտչի, շր կորէլու է Ս. Գրէթոր Լաաաարթի » : Հուակ ուրեմն ամժխտելի կերպով կը վկայեն այսպիսի մի եղելութեան Հայաստանի ժողովրդեան կենդանի աւանդութիւնն և բազմադարեան ընթացքն, որ Դ դարէն սկսեալ մինչև ցայսօր դադարած չէ. այլ մանաւանդ, թէ՛ իւրեանց բարդաւորութեան և թէ՛ անբարդ օրերուն մէջ դիմած են գումդագումը դէպ 'ի այն մուխրակամ սրբավայրն, ուր կը հանգչին ոսկեք սրբոց՝ յընդունելութիւն պէսպէս խնդրուածոց. որ և է դժուարին ձեռնարկ մի սկսելու համար՝ կը կոչեն յօգնութիւն զիշխող Մշոյ զՍ. Կարապետ, և գուսանք իսկ տաւրօք և մուաօք կ'երգեն աւանդութեանը մորս զարմամագործութիւններն. միով բանիւ, մոցա ընտանեկան կենաց և սրտի մէջ գոգես իմ կենդանի է տակաւին մեծն 'ի ծնունդս կամանց Ս. Յովհաննէս՝ բոլոր իւր զօրութեանմբ և նշանիւքը :

Եկեղեցական կալուածոց և հողերու մասին հաստատումներն, որք կը պարունակուին 586-587, 589 և 624 էջերում, այնպէս քաջ կը համաձայնին իրերաց, որ տարակուսելու այլ ևս բանատար պատճառ չկայ, թէ դոքա առհասարակ մի և մոյն հմազոյն յարգերէ յառաջ եկած լինին : Սակայն ոչ ինչ ընդհատ զարմանալի է նաև վերոյիշեալ երեք հմազոյն հեղինակաց համաձայնութիւնը : Փ. Բուզանդացին, Ե. Դպրութեան ԼԱ գլխում, Պապայ անմիտ գործոց մէջ կը

1. Մոփ. Հայկ. հոս. Բ. էջ 110. և յայլևայլ նամոնագիրս :

2. Դիտելու ենք, որ Ս. Գրիգոր, մի միայն տօն հաստատեց 'ի մէկն Նախասարդի՝ որ է Օգոստոս 11, ըստ Յուլեան տումարի, յորում ատուր զոյգ ընդ Յովհաննու կը տօնուէր և Աթամագինէս վկայն, ըստ Ազաթանգի դոսի և Զեմուքայ : Ազգերեան՝ յաւուրս թարգմանչաց վերածուած կը համարի զտօնս զայս 'ի պատիւ ծնողեան Ս. Կարապետին և զատեալ 'ի տօնէ տարեգլխոյ : Այս բանիս ես ընդդիմութիւն մի չունիմ. մանաւանդ թէ 611 և 623 իջից քննութեան մէջ իսկ արդէն դիտեցի այսպիսի մի տարբերութիւն : Սակայն ինձ այսպէս կ'երևի, թէ Յունուար 14 կատարուած ճօնն, յորում Յովհաննէս միայն կը տօնուի և Աթամագինեայ չիք յիշատակ, մոյն է Գրիգորէն հաստատուած տօնին հետ, բայց յետոյ Հայոց մոր թուականն հաստատուած ժամանակ, փոխեցին 'ի սկիզբն Յուլեան տարուոյն, յետ ութօրէից Յայտնութեան և Մկրտչութեան, որ է սկիզբն Տօնացուցին մերոյ. որովհետև Ս. Յովհաննէս էր մեծն և առաջին տօնելի սրբոց մէջ :

թուէ մասն եկեղեցական հողերու սեղանակապուտ յափշտակութիւնն, ասելով. « Եւ հաստ ևս յարքումիս Պապ թագաւոր զհող եկեղեցայն, զոր ստեալ էր լուսաւորին Տրքոսոյ առ Տեառն Գրեթորէն քահանայապետի 'ի սպաս պաշտաման եկեղեցւոյն ընդ ասեալն երկնն Հայոց: Ձի եօնն հողայն՝ զհինգն հատանէր յարքումիս, և գերկտում միայն թողլոր »: Փաստոսի այս տեղոյս իբրև ամսիշակամ պարիւր եղած է Ագաթանգեղայ 621 իջի հաստածն: Նոյնը կը հաստատէ ն' Ձեմոք, Պատմ. Տարւոյն էջ 37, խօսելով Գլակայ վանքի մասին, յամուանէ կը յիշատակէ նորա եօթնաթիւ կարուաններն, այսինքն է, Կոստոս, Մեդրէ, Բրեհէ, Մաշ, Խորնէ, Կեղէ և Բաշ մեծամեծ աւաններն, զորս Գրիգորի կենսագիրն 'ի լուսնեան թողած էր, և կ'ըսէ. « Արդ, այս աւանագեղք 'ի բնէ ստեալ էին հողայն 'ի ծառայութեան, զոր և իշխանին դաշնու հասարակեցին 'ի սեբեկեղեցայն, առ երեսուն և երկու լուսով: Չայս այսպէս կարգու էր դրեալն Գրեթորէ »: Արդ, առ Ձեմոքայ եղած այս հատուածս թէպէտ և համանայն է Ագաթանգեղայ 587 և 589 իջից ակամրութեանն, ուր մեհնեաց ստացուածքն՝ եկեղեցւոյ կը մուկրին, սակայն մի ուրիշ պաշտօնական կամ դիւանական աղբերէ համուած է, այսինքն է, 'ի « Գրոյ 'ի իշխանայն Մաթիոնէից », զոր մեկն բամիւ կը յիշէ ամդ հեղինակն հատուածոյս: Սակայն դիտելու ենք, որ վերոյիշեալ եօթն

1. Այս գրուածքս տակաւին յայտնուած չէ. ցամկալի էր լսել 'ի Ձեմոքայ գէթ տեղեկութիւնս ինչ զայնմանէ: Սակայն ես կարծեմ, թէ ոչ ամբողջական երկասիրութիւն մի էր այդ, և ոչ այլ Ձեմոք՝ Տարւոյն պատմութիւնը գրած ժամանակ կարող էր զայն կարդալ: Արդ, բաց 'ի այդ տեղէն, այլուր Մամիկոնեան ամուան հետքն ամզամ չի գտնուիր առ Ձեմոքայ և չէր մարթ գտանիլ, զի մախահայրն Մամիկոնէից՝ Մամզում՝ Տրդատայ թագաւորի վերջի տարիներն եկաւ 'ի Հայս, և Սլկունեաց իշխանի սպանման առթիւ, որ ապստամբած էր ընդդէմ թագաւորին, իբրև վարձ իւր ծառայութեանն՝ ընդունեցաւ զերկիր մախապետութեան Սլկունեաց զՏարոն, ըստ վկայութեան Մովսիսի, Բ. գլ. 27 և 28: Իսկ Ձեմոք այդ ժամանակ արդէն իսկ կնքած էր իւր մահկանացուն. որովհետև Յովհ. Մամիկոնեանէն գիտեմք, թէ Տրդատայ մկրտութեան 20 տարի վերջ՝ այլ ոչ ևս էր. իսկ Տրդատ յետ այնորիկ 30 տարիներ դեռ ևս թագաւորից: Ուստի յամուան Ձեմոքայ յիշուած Մամիկոնեան իշխանաց այդ գիրքն ուրիշ բան չէր, ըստ իս, եթէ ոչ Գլակայ վանքի դիւանական դաշնագիր մի, զոր կնքեցին Մամիկոնեան իշխանն Մուշեղ և վամահայրն թողիկ. և թէ վերոյիշեալ տեղիմ Յովհ. Մամիկոնեանոյ ըմծայելի է, քան թէ Ձեմոքայ: Եւ իրօք այսպիսի եղելութեան շօշափելի ապացոյցը կու տայ մեզ մա իմքն Յովհաննէս՝ Տարւոյն պատմութեան Ա. գլխուն մէջ, յասելմ վասն թողկայ. « Մա 'ի տրդայութեան ստացաւ գառաքինութիւն ... որ եղև սիրելի իշխանին Մամիկոնէից Մուշեղայ. և իշխանն բազմացոյց սմա դաստակերտս բազումս: Մա բազում կրօնաւորս կարգեաց 'ի Գլակայ վանքն ... ամծին երեք հարիւր »: Իսկ յէջ 12 մի և մոյմ գլխուն մէջ. Արծրունեաց իշխանին Վարդայ համար կ'ըսէ, թէ « Վշոնաց քսան և երկու հազար դահեկան և ետ իշխանին Տարոնոյ, և գնեաց զճուռոս և զԳարիս և ետ զՈոսա վանացն, զորս իշխան ում ամօրէն (Հայր Մարդպետն) տամն Մամիկոնէից (Արծրունեաց) կտրեաց զիրիւր աւանս 'ի վանացն և ետ գուսանի ունեան կնոջ:

աւամներով միայն չէին սահմանուիր եկեղեցական կալուածներն, որովհետև ուրա միայն մայրավամիցն ճարօմի սեփականուած էին. այլ Փաստոսի վկայութեան համեմատ « Ընդ տօնայն երկին Հա-
ոց » և, այսինքն է, Հայաստամի իւրաքամչիւր զաւտոյն մէջ, ազա-
րակ տեղերը՝ չորս չորս, իսկ յաւամն՝ Եօլն Եօլն հող յատկացուցեալ
էին Ուխտին եկեղեցւոյ, ըստ ասելոյ Ազաթամզեղայ. այնպէս որ
այդ ամէնքն 'ի միասին գումարելով, որ և է մախարարական կամ
Ոյն իսկ արքունի կալուածներէն առեկի ըմբարծակ էին. և այս է
բուն պատճառն, որուն համար յետոյ թագաւորն Պապ և Հայր
Մարդպետ սկսան իրենց մախամնու և ատելութեան սուրը դարձնել
ըմդէմ եկեղեցական ժառանգութեան և հետ զհետէ տկարացնել
զայն: Ոչ իմչ ըմդհատ քան զՓաստոսին և Ջեմոքայմ՝ Ոշամաւոր է
մաս Սահակայ Պարթևի վկայութիւնն, որ 'ի Պէրս՝ Կառնդուսիւնն,
« Յարգազ կարգի սպասաւորաց սրբոյ եկեղեցւոյ և պտղոց ժողո-
վըրդականաց ըմծայլոց 'ի Տունն Աստուծոյ », ուր կ'ըսէ. « Քանզի
Լուսաւորիչն Հայոց սեծն Պրէթոր ... մամաւանդ թագաւորն և
պայծառացեալն հաւատով Տրքաոր՝ ոչ սակաւ օժիտս տայր
սպասաւորաց և որդւոցն քրմաց՝ ասելով. Անդէն հարեալապարիկ
առնուցոտ իմչա և սպառնա՞ն և երախայրէն 'ի սորբ Եկեղե-
ցայ » :

Ի Փոքուն Հայոց զունդագունդ կրօնատրաց և եկեղեցականաց
եկատրութեանն և վամական կարգաց հիմնարկութեան հատուած-
ներն, որ յէջ 605 և 623, կրկին հաստատութիւն կ'առնուն մախ
Ջեմոքայ երկասիրութեամբը. մամաւանդ թէ, որ իմչ առ Ազաթամ-
զեղ ամորոշակի և հարեանցի կերպով կը յիշուին, առ Ջեմոքայ՝
պարզուած և ըմբարծակուած են, ուրոյն առամնին պատմութեամբ
և ներքին և արտաքին վերաբերութիւններով: Թէպէտև այդ երկա-
սիրութեան մէջ կամ տեղիք ոչ սակաւք և տարակուսական ան-
ուամք բարձր աստիճան եկեղեցականաց. ըսյց ամուրամալի են
մաս շատ և շատ հարագատ աւանդութիւններ, որոց մասին կը
համաձայնին Փաստոս և Մովսէս ինքնին: Բ. Ս. Սահակայ Գ Կա-
նոնին մէջ, ուր վամական հաստատութեան և մորա բարձրագոյն
մպատակին վերայ կը խօսի, յասելն. « Չոր և երից երամեալն
քաջ մահատակն Քրիստոսի Պրէթորիս՝ Կարաբոց (այսինքն է, հաս-
տատեաց) շնորհելով մմա 'ի Հոգւոյն Սրբոյ զօգուտ մատակարա-
րութեան »: Բայց ասոնցմէ առեկի հմագոյն և խօսուին վկայ՝ է Ս.
Գրիգորի անուամբ մեզի հասած Յաճախապարտ՝ զիւրքը, ուր բաց 'ի
զամազան տեղեաց, վերջին զլուին իսկ ամբողջապէս մոկիրուած է
'ի խրատ և 'ի շիմութիւն կրօնատրաց: Արդ, այս բանս անհասկը-
նալի կը մնայր՝ եթէ մա կրօնաստաններ հատատուած չլինէր:

Յէջ 625—626, հրամանաւ Տրդատայ, դպրոցաց հաստատութեան,
— մանկանց հաւաքման և հեղէն և ասորի դպրութիւն ուսանելու
հատուածներմ՝ ըստ ամեմայնի պատմական տիպ ունին, և Կորեան

լոկ բամաքադուլթիւմ լինելէ շատ հետի եմ: Այսպիսի մի ստոյգ եղեւ լուծեան հմազոյմ ապացոյցն է Գրիգորի և Տրդատայ ամուսմբ առ եղիազար Նիստրացոց և առ Տիմիթէոս Ազրեմացոց (?) եսխակոպոսունս գրուած Գլակայ վամաց դիւանակամ թուղթն, որով Հայաստանի կրկին լուսաւորքս՝ քահանայներ կը խնդրեն, ասելով. « Ձի դևո հանկուստ երբէն է դուրոց ես, և ոչ ոք ՚ի մոցանէ բաւկամն ՚ի քահանայութիւմ »: Բուզանդացին Փաւստոս, Դ. Դպրութեան Դ. գլխում, յետ ասելոյ վասն Ս. Ներսիսի. « Ձի ՚ի վարս Կարգոց Նանեսոց իւրոյ Հօրն Մեծին Գրեթորէ, զմոյն նորագոց առաքել լաշմորհս, մոյն գործ երևեալ », անդէմ կը թուէ ՚ի համանման գործն մորա և « վարեթերն է տեղէն տեղէն դուրոցս յումարէն և աստրեբէն յանեմայ վաւառս Հայոց »: Բուզանդացոյ այս տեղիս գրեթէ բառ առ բառ Ազաթամզեղոսէն առնուած է. և այս բանս՝ Ներսիսի գործերը՝ Գրիգորի գործոց հետ բաղդատելէմ իսկ յայտնի կը լինի, զորս մա Ազաթամզեղայ գրութեմէն կը ճանչնար:

Իսկ 626-627 էջ եղած պարբերութիւմն, որ կը սկսի. « Հասանէր յառաջագոյմ ՚ի դաստակերսն իւր յԱրտաշատ »² յԱյրարատեան գաւառին՝ ՚ի Վաղարշապատ քաղաքն », պակասաւոր կը

1. Որովհետև ոչ մի ազգային առանձնայատկութիւմ կամ սմապարծութիւմ չի տեսնուիր. այլ առանց ծածկելու կը պատմէ Հայոց՝ առ Յոյնս և առ Ասորիս դիմելու պէտքն, այս ժամանակիս մէջ: Միմեզեռ Գրիգորի կենսագիրն լռելիս կ'ամցնի: Այսպիսի երևոյթմիր այլուր ևս յայտնի կը տեսնուին. օրինակ իմն, Գրիգորի ուղեկից Յախարարաց գծտութիւմն ընդ զնսարացոց՝ վասն մշխարացն Յովհաննու և Աթանազիմեայ, և Ամբղոտան իշխանի յամուրոզն և ապերախտ խորհուրդն՝ այրելոյ զզնսարակ, գոր Ասորիմ՝ մեկն բամիւ կը պատմէ, և որում կը համաձայնի մաս Միմէոն ոմն Հայկազն (տես ՚ի մեծ Տօմակամն Պարիզու թիւ 46. մառ 349). Իսկ Գրիգորի կենսագիրը ըզրորովն ծածկել է՝ լուծեան քողի տակ: Մակայն այս և սոյն օրինակ բազմաթիւ օրինակներ բաւակամ եմ ցուցանել, թէ մա ազգային ոմն էր:

2. Յիրաւի, այս տեղոյս խանգարման մի այլ մշան է, այդ յատուկ ամուսն, որ իւր մախըմթաց և հետևորդ բառերովը կը պակսի յումարէն օրինակի մէջ: Իսկ հայերէն օրինակներէն ոմանք Ըոտոստակ, և այլք Ըոտոստակ կը գրեն: Յովհ, կաթողիկոս՝ խօսելով զՄահակայ Գ. կ'ըսէ, թէ « Մա մախ կարգեալ էր յեպիսկոպոսութիւմ Ռոտակայ »: Յովհաննանէն յիշուած այս ամուսն կը թուի ցուցանել մեզ գաւառ ինչ մախըշատակ մնացեալ ՚ի Մովսիսէ: Իմնիմեան (Հմախ. Հայ հտ. Գ, էջ 285), և Հ. Մ. Զարեան, Պատմ. Հայոց. հտ. Բ. էջ 712, 761 և այլն, կը դնեն զայս ՚ի Վործեայ: Մակայն ոչ է ուղիղ. որովհետև Յովհաննանի միւս տեղերէն կը տեսնուի, թէ Մեծ Ատրպատականի մէջ էր այդ գաւառն, և Ազաթամզեղոսէն յիշուած տեղոյն հետ բնաւ վերաբերութիւմ չունի: Հ. Ղևոնդ Ալիշան, Տեղագր. Հայոց Մեծաց, էջ 89, Ռոտաստակ գաւառ մի կը յիշէ « Ընդ Մեծ-Վորդմանս և ընդ Մեծ-Իրանս », այսինքն է, ըստի և Արցախու մէջ: Մակայն այս իսկ օտար է ՚ի յիշատակելոյն յԱզաթամզեղոսէ, զի հեղինակիս խօսքն ուղղակի Այրարատ գաւառին և Վաղարշապատու մօտ տեղույ մի վերայ է: Մեծամուսն հեղինակս՝ այլուր (« Այրարատ », էջ 204), խօսելով Վաղարշապատու կամ քաղաքու դաշտի վերայ՝ Ազաթամզեղայ սոյն տեղին մէջ կը բերէ և կ'ըսէ, թէ Ռոտաստակ յառաջ եկած է պարսկերէն رستاق (Ռոտստակ) բառէն, ըստ վկայութեան Նազուլթի, որ կը մշանակէ երկիր մշակեալ, յորում

տեսնուի, որովհետև նախընթաց պարբերութեան մէջ Տրդատայ վերայ կը խօսուի. իսկ աստ յամկարծակի խօսքը Գրիգորի վերայ կը դառնայ, առանց յամուամէ յիշելոյ զԳրիգոր: Սակայն հանդերձ այսու՝ այս հատուածս թէ՛ ծի գլխահանարով սկսող և թէ՛ իւր յաջորդ պարբերութեանց հետ սերտ յարաբերութիւն ունի. իսկ Տրդատայ և Ոորա զործոց մուկրուած հատուածը՝ կղզիացեալ մնացած է: Ուստի հօս իսկ կը տեսնուիմ հետք կրկին աղբերաց: Բայց Գրիգորի կենսագիրը յառաջ վարելով իւր ըմբացքը՝ կը ծամուցամէ, զշինութիւնս եկեղեցեաց. այլ Ոորա միակ մպատակն է աստ զկատարումն շինութեան Կաթողիկէիմ էջմիածնի ածել ՚ի հանդէս, որում ձևն և հանգամանքները մկարագրեց ՚ի Տեսլեան ամո: Եւ յիշուի, որովհետև յէջ 624 ծամուցուեցաւ արդէն շինումն եկեղեցեաց « յամենայն աշխարհս, ՚ի կողմանս և յաւանս », և աստ վերստին ծամուցանելու բնաւ հարկ չի կար, բաց ՚ի այս մոր պարագայէս, այսինքն է. « Եւ զնկարեալ տեղի տամն Աստուծոյ շինեաց զցուցեալն մնա ՚ի Տեսլեան, զյառաջագոյմ զղրողմեալն իւր »:

Եւսկիսկոպոսաց ձեռնադրութեան և թեմակալութեան մասին երեք պարբերութիւններ մուկրուած են. բայց երեքն ալ իրարմէ ընդհատուած են ուրիշ և բոլորովին տարբեր հաստատածներով, և կատարած են այլևայլ պարագայից հետ: Թէ՛ շ 624, ուր դեռ առաջին անգամ խօսք կը լինի եպիսկոպոսաց վերայ, փոխանակ նոցա ձեռնադրութիւնը պատմագրեելոյ թեմակալութիւնը կը յիշէ, ըսելով. « Սոյմպէս և զեպիսկոպոսս Վնայեցոցանէր ՚ի Գլխահանարութիւնս ժողովրդոցն Տեսում »: Սակայն նոցանէ ոչ միոյն թեմն յամուամէ յիշուած չէ: Թէ՛ շ 630, ծի՛Ա գլխահանարում, ուր խօսքը շինակեաց, լեանակեաց, անձաւանուտ և արգելական վանականաց վերայ է, յամկարծակի մի և մոյմ պարբերութեան մէջ կը փոխուի քրմաց որդւոց և նոցանէ ձեռնադրուած 12 տասան եպիսկոպոսաց վերայ, զորս յամուամէ իսկ կը յիշէ, առաջնոյն և երկրորդին թեմը միայն ծամուցանելով. այսինքն է Աղբիամոսինմ « ՚ի վերայ կողմանցն Եւփրատական գետոյն », և Եւտաղիոսինմ « վայրացն Բասենոյ »: Իսկ միաներուն ամուամց համար կ'ըսէ. « Թէ և կամիցի ոք, ոչ կարացի

իցեն աւամք, և այլ քաղաքք փոքունք: Այս մեկնութիւնս քաջ կը պատշաճի ձաղարշապատու: Սակայն դիտելու ենք որ Գրիգորի կենսագրին խօսքը ոչ եթէ ձաղարշապատու, այլ Ոորա մօտ գտնուած մի յատուկ տեղոյ վերայ է, զոր և Դաստակերտ Գրիգորի կ'ամուամէ: Արդ, զձաղարշապատ մկատելով իբրև եկեղեցական վիճակ միայն՝ կարելի էր լինել դաստակերտ Գրիգորի: Սակայն աստ դաստակերտն յատկացեալ է Ըռոտստակին և ոչ ձաղարշապատու, այնու զի վերջինս առանձին իմ կը յիշուի յառաջմոյ ամտի: Ուստի աւելի հաւանական կը թուի ինձ սեփականել այդ Ոորալուր ամուամը Ագաթանգեղայ, յէջ 545, յիշուած մշակեալ և ծառախիտ « այգւոյն », յորում կը գտնուէր հիմանն և Գրիգորի օթեամբը, յառաջ քան զձեռնադրութիւն իւր: Եւ յիշուի, այս ճշմարտութիւնս աւելի յայտնի կը տեսնուի ման յէջմ 171 մէկ տեղով և սամսկրիտ շծհառտա բառէն, որ կը մշամակէ ծառս և տուռկս պատատուողս, կամ որթս, ըստ վկայութեան Բիւռնուֆի:

շարժել » : Արդ, դիտելու է, որ այս վերջին խօսքերուս հետմնակն ու՝
 զած է վերջնականապէս ծամուցանել, թէ բաց 'ի դոցամէ ուրիշ
 բազմաթիւ եպիսկոպոսներ ևս ձեռնադրած էր Գրիգոր, որոց ա-
 մուռները դժուար էր մտն իմանալ կամ գրել : Սակայն, յէջ 637,
 հակառակ այսպիսի վերջնական ծամուցման, երրորդ անգամ մի
 ևս դարձեալ խօսքը կը դառնայ 'ի Գրիգորէն ձեռնադրուած եպիս-
 կոպոսաց վերայ, բայց այժմպիսի չհաւատալի պարագայներով, ու-
 ղում վերայ յիրաւի է տարակուսիլ . այսինքն է, նախընթաց պար-
 քերութեանն, որ կ'աւարտի այս բառերովս . « Երթեալ (Գրիգոր)
 ըմտրէր անծին իւրում կայս համգտտեամ յամապատ տեղիս, և անդ
 բնակէր, և յանապարհէն լուսաւորէր զամենեսեան », ամփոջապէս
 յաջորդ պարքերութիւնն այս խօսքերովս կը բացուի . « Եւ բազմա-
 ցոյց կացոյց տեսուչս եպիսկոպոս յամենայն գաւառս Հայոց իշխա-
 մութեան իւրոյ . և որ եպիսկոպոսական յաստինան ձեռնադրեցան
 'ի մտանէ, ասելէ քան զլորեքհարիւր եպիսկոպոսունս » : Արդ, այս
 վերջին պարքերութիւնս նախ բնաւ վերաքերութիւն չունի ոչ իւր
 նախորդին և ոչ իսկ յաջորդող պարքերութեան հետ : Երկրորդ, մու-
 ղա աւանդածը չափազանցութիւն է և հետի 'ի ճշմարտութեմէ կը
 թուի ինծ : Յիրաւի, մեծին Ներսիսի ժամանակ, երբ ամենէն աւելի
 ծաղկեցան կարգաւորութիւնք եկեղեցոյ և բազմացաւ թիւ եպիս-
 կոպոսաց, սակայն 400 եպիսկոպոսունս ոչ ոք կը յիշէ, թէ եղած
 լինին և հազիւ թէ կարէին լինել, յայնժամու պահանջման համե-
 մատ . ևս առաւել ուրեմն առ Գրիգորիւ : Արդ, այս թիւս անհաս-
 կամալի կը մնայ մոյն իսկ կենսագրի հետեւեալ խօսքերով . « Բազմա-
 ցոյց կացոյց տեսուչս եպիսկոպոս յանապարհէն իշխանութեան
 իւրոյ » . իսկ արդ այս գաւառացս թիւն էր ըստ Մովսիսի և Հ. Դ.
 Ալիշանի (Տեղգր. Հայոց մեծաց) 189. իսկ ըստ ժամանակակից
 վկայութեան Ջենոբայ' (Պատմ. Տարծնայ, էջ 13) 620, և ոչ թէ 400 :
 Մամուսանդ, դիտելու է Ասորւն յետագայ խօսքերն, թէ « Որ և
 զատառին մէն մի Կանանայ կամ երկու լոկ թէ համդիպի » : Արդ, Տըր-
 դատայ ժամանակի Հայաստանի գաւառաց թիւն եթէ 400 էն ա-
 ւելի համարիմք և եթէ մուազ, այս յայտնի է, թէ ուր մէկ մէկ քա-
 հանայ հազիւ կը գտնուէին, անդ անկարելի է, որ եպիսկոպոսա-
 կան առանձին աթոռներ ևս եղած լինին : Կենսագրիս 400 թիւը՝
 միայն առ Մեծորդայ Երիցու տեղի ունի . բայց մեծին Ներսիսի
 պատմութեան հեղինակն՝ անկէ հաստատուած բարձր և իշխանայ
 կ'ընծայէ զայն և ոչ թէ եպիսկոպոսաց : Իսկ եթէ Գրիգորէն ձեռ-
 նադրուած համարիմք իրօք այն 400 եպիսկոպոսունքը, յայտ է թէ
 յըմթեան 30 ամեայ հոտապետութեան մորս հասկանալի է, կամ
 ցվախման կենացն . յորմէ կը հետևի թէ, Ազաթամզեղայ գիրքն ևս
 պէտք է որ Գրիգորի մահուանէն տարիներ վերջ գրուած լինէր :

Արդ, Ազաթամզեղոսեան զրոց ինչպէս այս վերջին տեղիս՝ այս-
 պէս նաև երկրորդն, այսինքն է 630 իշի տեղին՝ չկարէ Գրիգորի ժա-
 մանակակից Ազաթամզեղոսի գործ լինել : Եւ յիրաւի, նախ զի Ջենոբայ
 վերոյիշեալ իշում, այսինքն է, առ Եղիազար և Տիմոթէոս եպիսկո-

պոստմո գրուած հրաւիրանաց թղթոյմ մէջ՝ կ'ըսեն թագաւորմ Տրդատ և իշխանք Հայոց, թէ « Դեռ մամկունք երկրիս 'ի դարոց եմ » այլովքն համըներծ: Սոյմը կը վկայէ որոշակի նոյն իսկ Ագաթանգեղոս 626 իշում Տրդատայ պատմութեամ միջամկեալ հաւանածագիրն. « Ածել յարուեստ դպրութեամ ... առաւել զազգս պրծագործ քրմաց, *զանկանս նոցա* 'ի նոյն ժողովել զումարել », և այլմ: Արդ, այս տողերս գրողն և իրին ակամատեսն Ագաթանգեղոսմ լինչպէս կրնար ուրեմն մի և նոյն ժամանակ և մի և նոյն երկաւիւրութեամ մէջ ծամուցամել յակամէ յամուամէ այդ քրմածին մամուկներէն ձեռնադրուած 12 եպիսկոպոսներն, առանց հակասութեամ, ասելով. « Այսք՝ որ յորդուցն քրմացն ըմտրեցամ լինել եպիսկոպոսք »: Բ. Հեղինակ հատուածիս կը ծամուցամէ, թէ միւս եպիսկոպոսաց ամուամքն եթէ ուզէր ևս չէր կարող գիտնալ¹. արդ, եթէ մա ստուգիւ ժամանակակից լինէր և յարքունի կամ կաթողիկոսական դիւանաց սումելով գրած լինէր այս տողերս՝ կարելի բան չէ, որ անգիտամար մոցա ամուամքը: Գ. Յորդուց քրմաց կամ հնդկայիմ եկացմէ ձեռնադրեալ եպիսկոպոսաց ամուամքը, բաց 'ի **Տրդատ**, միւսներմ յումակամ և ասորի հնչումն ունին: Դ. Եթէ այդ եպիսկոպոսներն առ Գրիգորիւ և 'ի Գրիգորէ ձեռնադրուած և թեմական առաջնորդութիւնս ստացած լինէին, հարկաւ ծամութ պէտք էին լինել մա Ձեռնոցայ. սակայմ ասորի հեղինակս ոչ ոք կը ճանչնայ յայսցամէ, բաց յԱղբիւրնոսէ. և Աղբիւրնոսի ոչ ազգը կը յիշէ և ոչ թեմն: Իսկ քրմական ցեղի մասին այմայիսի դատմ կըլտամբանօք կը խօսի Տարսնի պատմութեամ Ա. Պատճենմում, յէջ 36, յասելմ. « Զի ազգն այմ յորժամ դարձամ 'ի Քրիստոս՝ չէին կատարեալ 'ի հաւատսմ ... այլ խարէութեամք զայս հմարեցամ, ծամ միայմ թողով 'ի զուխ մամկանցն, զի զայն տեսեալ՝ յիշեսցեն զպաշտօն պղծութեամ իւրեանց: Զոր և ես աղաչմ գծեզ, զգոյշ կացէք՝ զի մի այս և 'ի ձերում երկրիդ սերմամեսցի », զոր չէր մարթ խօսել առանց վիրատրեւոյ այն պատկառելի և բարձրաստիճան եկեղեցականաց պատիւն և ամուում, եթէ իրօք 'ի քրմաց ամտի ձեռնադրուած լինէին: Այս տեղիս՝ մամ բամիւք բայց տարբեր պարագայիւք կը գտնուի մա Փաւստոսի Գ. Դպրութեամ թԳ. զըլխում, և 'ի հասարակի Հայոց վերայ առմուած. սակայմ առ Ձեռնոցայ՝ աւելի յարմարութիւն ունի և կարելի է նշմարիտ համարել: Ե. Աղբիւրնոսի համար ըրած Ագաթանգեղոս այս բացատրութիւնս, թէ « Որ *այս* (ժամանակաւ) կողմանցն եփրատակամ գետոյմ լինէր վերակացու » ոչ միայմ համեմատութեամբ յետին ժամանակի զըլութեամ Ոջամ է և ուղղակի կը հակասէ յաջորդ պարբերութեամն, ուր կ'ըսուի, ընդհակառակմ, թէ « Եւ զԱղբիւրնոս վերակացու թո

1. Զի յումարէմ օրինակմ այսպէս կը գրէ, « τὼν δὲ λοιπῶν τὰ θνόματα θυσθεώρητα, εἰ καὶ βουληθεῖη τις ἐξεπεσεῖν », այսինքն է, իսկ զայլոց ամուամս՝ դժուարիմ է գիտել, թէ պէտն մէկը կամեմար իսկ յայտնել:

դրոյր «բոլորեանէան դրոնն բանակէն» . այլ ըստ իս Փաւստոսի Գ. Դպրու-
թեան Դ. գլխոյմ հետևեալ տեղոյմ բանաբարութիւն է, ուր կ'ըստի
Վաչէի համար, թէ յետ ջնջելոյ զապատարող տոհմն Մամաւազէից
և Որդումուց՝ հրամանաւ Խոսրովու և Վրթամիսի, « Եր զառնն և
զբուն զահոյից գեղմ մահապետիմ Մամաւազեմից եղիսկոսոսի Առ-
բէնաթի՛ յեկեղիցի. զՄամաւազակերտ ամեմայմ սահմանօքն և Բա-
ստանաւանան հանդերձ՝ որ շուրջ զմորօք էր, որ կայ Ի Կողմանս Գեորգի
Եփրատայ » : Զէ և չէ մարթ ըսել, թէ Փաւստոսի այդ տեղիմ յԱզա-
թամզեղոսէն առնուած է, որովհետև այն պարագաներմ զորս կը
յիշէ Բուզանդացիմ այդ գլխում, չեն գտնուիր առ Ազաթամզեղ:
Սակայմ գրուգամդացիմ այսու իսկ բաղբարո կը համարիմ ես, զի
կը թուի ցուցամել մեզ, թէ Աղբիամոս Մամաւազէից տոհմէն և
դած իմի: Եւ յիրաւի, զի այս պատճառաւ Աղբիամոս կը դրկուի իբ-
րև միջնորդ և բարեխօս առ Մամաւազեանս, այս պատճառաւ մո-
ցա ժառանգութիւնմ Աղբիամոսի կը շնորհուի, այս պատճառաւ
դարձեալ ոչ միայն Աղբիամոս ¹, այլ մոյմ իսկ Աղբիամոսի տոհմէն
ըմտրուած Յուսիկ, Շահակ և Զաւէն կաթողիկոսներմ և՛ Մամա-
ւազակերտի կամ Մամազակերտի եպիսկոպոսներմ ձեռնադրուած էին:
Կը ցաւիմ, որ Փաւստոսի գրոց այդ գլխոյմ վերջի տողերմ խանգա-
րուած են, յորում « եպիսկոպոսն Բասամոս » և « յերկրիմ Բասա-
մոս » բացատրութիւններմ ամհասկամալի կը մնան: Սակայմ ըստ
իս, Փաւստոսի թէ՛ այս տեղէս և թէ՛ յայլոց տեղեաց կը տեսնուի,
թէ Որդումուց ժառանգութիւնմ այլ՝ նոցա եպիսկոպոսիմ տրուեցաւ-
և թէ՛ այդ երկու իշխանական տոհմերմ հանգոյմ տոհմիցմ Կօթմնայ
և Բօրգէզէի՝ Դ. դարում այմ քան զօրացել էին և իրարու հակա-
ռակամարտ կանգնել, որ իրեմց եպիսկոպոսներմ անգամ լաւ և
վատ կը ջանալիմ արծաթով մատուցանել Ի բարձ կաթողիկոսու-
թեան, և զոչ եպիսկոպոսունս՝ յեպիսկոպոսութիւն երկրիմ իւրեանց:
Բայց Մամաւազակերտի վերոյիշեալ ամարժամ եպիսկոպոսաց՝ զկնի
միմեանց կաթողիկոսական զահում վերայ բարձրամալը՝ արդիւմք
համարելու է կամ Մամաւազեանց յաղթական համդիսամալումն Ի
վերայ Որդումուց, և կամ շնորհիւ մեծիմ Աղբիամոսի, որում ազգա-
կից և տոհմակից կ'ամուսնէ զմոսա Փաւստոս:

Առ Փաւստոսի կը գտնենք ազաթամզեղոսեան գրոց վերոյիշեալ
տեղում յիշուած եպիսկոպոսներմ ևս: Յիրաւի, Զ. Դպրութեան Դ.
գլխոյմ մէջ կը յիշուի Աստուրակէս իբր եպիսկոպոս Մամազակերտի,
« այր քրիստոնէամիտ, աստուածապաշտ և արդար, և առաջնորդ

1. Փաւստոսի Ե. օրինակն, որում տարբերութիւնք դեռ անցած չեն
ոչ Վենետիկոյ և ոչ իսկ Պատկանեանի տպագրութեան մէջ, 530 իջում
այսպէս կը գրէ. « Եւ ետ զաւամն և զբուն զահոյից գեղմ մահապե-
տիմ, Մամաւազեմից (Մամաւազեմից) եպիսկոպոսիմ Աղբիամոսի »:
Արդ մահապետէմ վերջ դրուած ստորակէտմ, որ տպագրութեանց
մէջ կը պակսի, աստ որոշակի կը ցուցնէ, թէ ամուսն՝ Մամաւազեմից
եպիսկոպոսիմ կը վերաբերի և ոչ թէ մահապետիմ: Սոյմը կ'աւանդուի
ման Ե. Դպրութեան Դ. գլխում:

դրամն Խոսրովու», որ յետ Շահակայ՝ եղև նախկոպոսապետ ամբ-
 մայմ Հայոց: Աբրահիմ կը յիշուի է գլխում, իբրև նախկոպոս Բասե-
 մոյ. «այր ծերունի պատուական»», սրբութեամբ և գիտութեամբ
 երևելի ՚ի մէջ ժամանակակից նախկոպոսաց, և աշակերտ Դա-
 միելի: Ը, Ք, և Ժ գլխոց մէջ կը յիշուի Յովնայ նախկոպոս և որդի
 Փառհմայ, «այր կեղծաւոր, տգէտ, ագահ և խեղդատակ վարուք».
 ԺԳ գլխում կը յիշուիմ Տերի և Մուսայ, զոյգ «նախկոպոսք Բասե-
 մոյ գաւառիմ, արք լաւք և հրեշտակակրօմք»: Հուակ ապա ԺԱ
 գլխում մէջ կը յիշուի Կիւրուս նախկոպոս Տայոց, որ Շահակ ևս
 կը կոչուէր, ըստ ասելոյ Փաւստոսի. էր «այր ճշմարիտ աստուա-
 ծապաշտ, և ըստ կամացմ Աստուծոյ վարէր գեպիսկոպոսութիւն
 իւր»: Իսկ Եւրոպայ, Աբրահիմ, Անթոնի, Բասեմ և Եւսեբիոս՝ հի-
 կիական Հարց ցուցակէն առնուած են, որում հայերէն օրինակն ևս
 ունիմք, թարգմանեալ յասորերէնէ: Եւ յիրաւի, այս ըամիս ակն
 յայտնի ապացոյց կը համարիմ ես, առաջիմ երեք ամուսնց ուղ-
 ղագրութիւնմ որ ըստ ասորերենիմ տառադարձուած են և ոչ ըստ
 յունարենի. զի յունարէն Էծծճևուօջը՝ պէտք էր որ եւթադիոս տա-
 ռադարձուած լիմէր, ինչպէս դարձուցել է Մ. Խորենացի¹, Բ. զ. Գ.
 ԶԹ: Ս. յայէս մաս Դντδλοχοջը՝ Անտիոքոս, և Դγάπιօջը՝ Ագա-
 պիոս, ինչպէս ըրած է Գործոց Առաւելոյ՝ թարգմանիլը: Լագարդ
 (Agathangelos, p. 135), կ'ըսէ, թէ հայերէն Ագաթանգեղոսի Ա-
 գաթանգեղոս՝ է սխալ ըմթերցումն اچيسام ամուսն: Ծիրանացում
 Պիտրա² ևս կը վկայէ, թէ Նիկիոյ ժողովական Հարց ամուսնց հայե-
 ընմ ցուցակին յասորի բնագրէն թարգմանուած լինելը՝ բնաւ տարա-
 կոյս չի վերցնէր, և թէ այդ պատճառաւ այն ամուսնքն աղաւա-
 դուած են:

Արդ, Ագաթանգեղոս 630 իշի տեղին այսպէս պարզելն
 վերջ, այս եզրակացութիւնս պէտք է ըմել. այսինքն է, այդ հա-
 տուածի գրողը՝ կամ Գրիգորի կենսագիրը՝ պէտք է որ Փաւստոսիմ
 ժամանակակից կամ լաւ ևս մերձաւոր եղած ըլլար ժամանակաւ.
 որովհետև վերոյիշեալ նախկոպոսներէն ոմանք՝ Խոսրովու, իսկ այլք
 Տիրանայ և Արշակայ ժամանակներ կ'ապրէին: Եւ կամ գրոցս խոր
 բագրողիմ ըմծայելի է, որ յետոյ ուրեմն մերմուծեց անդ այն ա-
 մուսնքն և 400 նախկոպոսաց թիւն, զոմանս ՚ի Փաւստոսէ և
 զայլս միկիական Հարց ցուցակէն և յազգայիմ աւանդութենէ մու-
 ըարով. այսու միայն հասկանալի կը լինի նորա ըսածը, թէ «եւ
 զայլոցն ամուսնս թէ և կամիցի ոք, ոչ կարասցէ շարժել»:

Յէջ 627-628 հատուածմ յորում մի առ մի կը յիշուին Գրիգորի

1. Եւթադոս այս, ըստ Մովսիսի, էր նախկոպոս Եղեմիոյ, որ Արիս-
 տակէսի, Յակ. Մծբնացւոյ և Յովնաննու Պարսից նախկոպոսիմ հետ ՚ի
 Կեսարիայէն անցած ժամանակ՝ ակամատես եղաւ սքանչելիացն, որ
 եղաւ Գրիգորի Աստուածաբանի հօր մկրտութեան ժամանակ ՚ի Ղևոն-
 դիոսէ:

2. Analecta Sacra Spicilegio Solesmensi, T. IV. Parisiis, 1883,
 p. 462.

աւետարանական քարոզութեամ սահմանը¹, որք մեծազոյմ հոռութեամ տիպ կը թուիմ ըմծայել մեզ ըստ իմքեան. որովհետև այդ սահմանները կը զծեն մեզ Հայաստանի աշխարհագրական այն տարածութիւնը, որում վերայ կարող եղեմ իշխել մեծո խորով և Տիգրամ, բայց ոչ Ողյուպէս և Ողսա յաշորդք: Արդ, այս տեսակէտովս մտածելով, պէտք է ըսել, թէ ոչ Փաւստոս և ոչ այլ որ յետ մորա կարող էր այսպիսի մկարագիր մի ընել. զի Դ. դարու կէսէն վերջ՝ Հայաստանի այս սահմաններս փոխուած էին և մորա իշխողաց տէրութիւնը կարի յոյժ ամիոպիուած էր, ինչպէս յառաջագոյմ տեսնուեցաւ Կոտակոմ խորովայ և մորա յաշորդաց մասին խօսած ժամանակ: Արդ, Ազաթանգեղայ զոյց այս իշում գծուած Հայաստանի արևմտեան սահմանը խիտ յայտնի է. Ողյուպէս արտաքին պատմագրութեմէ իսկ կը գիտցուի, թէ հիմաուրցոմ Սատաղ՝ հռովմայեցոց կը վերաբերէր: Իսկ հարաւէն երբ կը դմէ Ամիդ, Կորդուք և Նոշիրական գաւառներն, այս ամասականայի է: Յիրախի, եթէ այդ զիծը կը քերէր առ Կորդուք, ամկարելի է որ Ողյուք կարենար անցնիլ 'ի միմ ժամանակի մաս առ սահմանօք Ասորոց և առ Նոշիրական երկրաւ. որովհետև վերջնոյս և Կորդուքաց մէջ կեցած են իբրև ամանցանելի պատմէջք Տաւրոս լեռանց գօտիքմ՝ ուրիշ սեփական գաւառով: Դարծեակ եթէ մի միայն գաւառ ևս եղած համարիմք Կորդուք և Նոշիրական, միմ միայն կարէր սահման համարուիլ: Արևելքէմ յիշուած սահմանագլուխը՝ Պարսից կամ մեծ Ատրպատականն է, և այս իսկ հասկանալի է: Սակայմ աստի դէպ 'ի հիւսիս գծուած սահմանն, այսինքն է Կասբից ծովէմ՝ մինչև ցՄազքուիթս, ցՐուռն Ալամաց և ցԿաղարջ՝ դարծեակ ամհասկանալի կը մնայ. որովհետև այդ սահմանին համեմատ՝ Աղուանք և Վիրք Հայաստանի սահմանաց մէջ փակուած պիտի լինէին և ոչ թէ մորա սահմանիչ արծաններ. մամաւանդ զի Փայտակարանն իսկ՝ « քաղաք արքայութեամ Հայոց » եղած կ'աւանդուի ամդ: Արդ, հօս յիշուած Փայտակարանը կամ տարբեր լինելու է այժմեան Վրաստանի մայրաքաղաքէմ, որ յետոյ Տիգրիս

1. Այսինքն է, արևմուտքէմ Սատաղ քաղաքն և խաղտիք, յորոց ծգուած առաջին զիծը կ'անցնէր Եկեղեցաց գաւառին և Դարամաղեաց արևմտեան եզերքէմ, կը քերէր զԱկն, զԱրաբկեր և զՄելիտիոնոյ սահմանքն և կը հասնէր մինչև յԱմիդ և Տիգրամակերտ: Աստի կը սկսէր երկրորդ զիծն, որ հարաւէմ կը քերէր, ըստ ամտիպ Աշխարհագրութեամ Կ. Ղևոնդ Ալիշանի, գեոշիրական երկրաւ, և առ սահմանօք Ասորոց, այսինքն է, Մերտիոյ և Մծբնայ գաւառօք, առ Կորդուք և կը հասնէր մինչև յերկիրն Մարաց, այսինքն է, անցնելով Կապուտակ ծովուն հարաւային եզերքէմ՝ կը հասնէր մինչև ցԱտրպատական: Երրորդ զիծը՝ կը սկսէր Կասպից ծովուն արևմտեան եզերքէմ, կը հասնէր մինչև Բաքու. և ամտի կ'երկայմէր չորրորդ զիծը, անցնելով մինչև 'ի սպառ 'ի սահմանս Մազքթից, մինչև 'ի դրուռն Ալամաց, առ Փայտակարան քաղաքաւ և մինչ առ Կաղարջօք, մինչև որ Պարխար և խաղտեաց լեռնրէմ անցնելով կը միամայր առաջին զծին հետ. այսպէս կը բորբեր Հայաստանի սահմանը, ըստ վկայութեան Ազաթանգեղայ:

Յետ Զեմորայ՝ կու գայ Փաւստոս Բուզամդացին, որ իւր Գ. Դըպլորթեան ԻՍ գլխուն մէջ համաձայն Ամ. Մարկեղոսի (ԺԵ. գլ. Թ) և Եւտրոպիոսի (Ժ. գլ. ԺԷ), Յորիանոս կայսեր ամօթալի դաշամբը՝ Տիւրանայ գերեվարութիւնն և Հայաստանի ոտմակոխ լինելն ՚ի թագաւորէն Պարսից պատմելէն վերջ, կը ծանուցանէ, թէ իշխանք Հայոց միաձոյլ ժողովով որոշեցին դիմել վերստին առ թագաւորն Յունաց, « Զի ծառայեցցեմ մնա հմազամղութեամբ, և մա լիցի մոցա թիւ կուռք օգնականութեամ . . . : Մանաւանդ զի շահարն յիշեալ դարձանցն կեցող, զերբանցն հասարակութեան, որ յիշարարութեամբ ՚ի յիշարարն կոտորեցին և ՚ի յիշարարն Տրդատայ եղև եր » :

Արդ, Փաւստոսի այս տեղոյս մէջ բնաւ յիշատակութիւն չկայ Գրիգորի, այլ որոշակի Կոստանդիանոսի և Տրդատայ օրով կը բռնած դաշինքի մի հաստատութիւնը, որուն վերայ չէ մարթ տարակուսիլ, առանց տարակուսելոյ այս տեղոյս հարազատութեանը վերայ: Յիւրակի, ես իսկ կ'ուզեմ պահ մի տարակուսել, բայց տարակոյսա լուծելու աղազաւ: Մ. Խորենացի, Գ. գլ. ԺԷ և ԺԸ, Փաւստոսէն բոլորովին տարբեր կերպով կը թուի պատմել զկալանաւորումն Տիւրանայ, և մորա որդւոյն Արշակ Բրի թագաւորելն իսկ՝ Շապիդ ձեռքով եղած կը պատմէ և ոչ թէ թագաւորին Յունաց: Այս վերջին տեսակէտովս Մովսիսի աւանդածն աւելի բամաւոր կ'երևի, եթէ Փաւստոսի վերոյիշեալ « թագաւորն Յունաց » բացատրութեամբն՝ ուղղակի գծորիանոս հասկանամք. որովհետև պարտեալն Յորիանոս, որ վատութեամբ իւր մախորդ կայսերաց՝ Հայոց թագաւորաց հետ հաստատած դաշինքն ևս ցրեց, մատմելով զՀայս ՚ի ժամիս Սասանեան վիրագիւն, մոյնը չէր կարող վերստին պաշտպանել զտէրութիւն իւր, թող թէ զՀայս՝ իւր ամպարտելի յաղթողին դէմ: Բայց որովհետև Արշակայ թագաւորելու մասին՝ Յորիանոսի ձեռնտուութիւնը կամ զմոյն ինքն Յորիանոս չի յիշեր, այլ մի ուրիշ կայսր, մամաւանդ թէ մի և մոյն զլիտուն մէջ՝ խօսք բացնելով գերեւոր փոխանակութեան վերայ, զվարդ կը յիշէ յամուսնէ. ուստի եթէ այդ ժամանակին Վարդէս կը թագաւորէր Յունաց (ըստ Մովսիսի՝ Վարդեմտիանոս) և մորա ձեռնտուութեամբը թագաւորեաց Արշակ, ես այլ ևս չեմ տարակուսիր, աւելի Փաւստոսի՝ քան թէ Մովսիսի տեղոյն պատմական կարևորութիւն տալ, որով և ամենահարազատ կը հաշտուրիմ Փաւստոսի վերոյիշեալ տեղին. մամաւանդ այսու իսկ, զի ամ շատ և միջանկեալ լոկ արտայայտութիւն մի չէ, այլ սերտիւ միացած է մախընթաց աւանդութեան հետ, ուր Հայք հրեշտակ կ'արծակեն ՚ի դուռն Կայսեր՝ վաղընջական դաշամց յիշեցոցն հրովարտակօք. և կ'ըսուի, թէ կայսրն « Իբրև լուա շերտ ելանայի, մեծա փութով և բազում պատրաստութեամբ ՚ի խմորի ելամէր իրին հասելոյ և օգնական և ինկանդ լինելու ուշիւրէն Հայոց » :

Փաւստոսի այն տեղոյն հարազատութեան հետ՝ դաշամց հաստատութիւնն ևս առանց երկրայութեան գոլով, այժմ այս հարցս ընդ առաջ կ'ելլէ մեզ, այսինքն թէ. Արդեօք հռովմէական ինքնակալին Կոստանդիանոսի և Արշակունւոյն Տրդատայ բացակայու-

Թեամբը կռեցաւ այսպիսի դաշն մի, թէ, ըմբռակառակմ, մոցա միմեանց մերկայութեամբն: Ես վերջինս եղած կը նկատեմ Փաւրստոսի վերոյիշեալ բացատրութեամբը մէջ: Յիրաւի, մա՛հ հետեւեալ երեք կէտերը կ'արտայայտէ մեզ, Ա. իրապէս կուած դաշինքն. Բ. երդումն հաստատութեամ կամ հաւատարիմ մնալու յայն՝ երկուստեք. Գ. միջնորդութիւն Կոտտամոզիանոսի և Տրդատայ: Արդ, « միջնորդութեամբ » հեղինակս կամ երկու վեհապետաց մերկայութիւնը կ'ուզէ մշամակել, որ կը պահամշուի առ յերդմու. և կամ ուղղակի յէջ 653 առ Ազաթամզեղ մշամակուած « զհաւատամ որ 'ի Տէր Քրիստոսն էր »: Սակայն երկու կերպով իսկ՝ Փաւստոս կը հաստատէ զաւանդեալն յԱզաթամզեղոսէ, և Ազաթամզեղոս՝ կը հաւատարմացնէ զասացեալն Փաւստոսի, դաշնաց հաստատութեամ մասին:

Երրորդ ծամրակշիռ վկայութիւնն երթիմ Տրդատայ առ Կոտտամոզիանոս և մոցա մէջ հաստատուած դաշինքի մի՛ յաճախ մէջ բերուած է յամուռ Վրթամիսի առ Կոտտամոզ կայսր գրուած թղթի հետեւեալ տեղին, զոր կ'ըմծայէ մեզ Մ. Խորենացիմ՝ իւր *Պատմութեան* Գ գրոց Բ գլխում այսպէս. « Յուշ լիցի քեզ պայման տալիս հերն Կոտտամոզիանոսի, զոր առ Տրդատ լուսաւորէն Տրդատայ. և մի տացես զաշխարհն Կոտտամոզիանոսի անաստուածից, այլ օգնեսցես մեզ զօրօք լուսաւորեցոցանել զորդի Տրդատայ զԽոսրով: Համզի Աստուած զձեզ ոչ միայն Եւրոպիոյ, այլ և ամենայն Միջերկրեայց տիրեցոց. և ամ զօրութեամ ձերոյ եհաս մինչև 'ի ծագս երկրի »: Սակայն այս թուրք թղթ, թէ՛ ըստ մերքին համզամանաց և թէ՛ բարդատութեամբ Փաւրստոսի Գ. Դարութեան աւանդածին հետ՝ ամհարազատութեան մշամմեր կու տայ: Արդ, Մովսէս այդ թղթով կը մերկայացնէ մեզ ամմիջնայէս յետ մահում Տրդատայ՝ զտէրութիւնն Հայոց իբրև տկար և անզօր և հասեալ 'ի մեծ վտանգ կործանման, այնպէս որ Յունաց կայսեր կը կարօտի առ 'ի կալ 'ի վերայ ոսին. և Խոսրով ինքնին՝ Կոտտամոզայ ձեռնտութեամբը միայն կը յաշողի իւր հօր զհոռն վերայ բարձրամալ: Իսկ Բուզանդացին, ըմբռակառակմ, իւր կարծեցեալ յոյնութեամբ հանդերձ՝ առանց Յունաց օգնականութեան մասին խօսք ինչ առնելոյ, կը համէ զԽոսրով 'ի գահն Արշակունեաց, « որդի քաջի և առաքինոյ » համբաւելով զմա. իսկ մորա ժամանակը՝ « ժամանակ շիմութեան, խաղաղութեան, մարդաշատութեան, ստացուածաշատութեան » և անըմբռատ յարթանակաց եղած կը նկարագրէ, 'ի ձեռն քաջի և անկարտելի զօրավարին Վաչէի: Եւ յիրաւի, մորա աշխարհաշիմութեամբը կը վկայեն մոյմ իսկ Խոսրովակերտ, *Տիգրանի պարսեան* և Մայրի ամտառն, զոր Մովսէս ինքնին կը յիշէ այլուր: Խորենացիմ՝ զոգցես իմ մարզ կը համարի զՀայս՝ կայսերն Յունաց, յասելմ. « Մի տացես զաշխարհն Կոտտամոզիանոսի », և դեպքանս իսկ աղաչաւորս կը դրկէ առ մա: Իսկ բազմիցս և 'ի զուր տարապարտօց իբրև հակառակորդ Հայոց և ազգատեաց զրպարտուած Բուզանդացիմ՝ ըտրորովիմ անկախ կը համարի զայն յօտարաց, որպէս և էրն յաւուրս Տրդատայ: Եւ յի-

ըստի, ցմահն Տրդատայ անկախ և շուրջանակի իւր թշնամեաց ա հարկու եղող տէրութիւն մի՛ չէր կարող առանց մորամոր դիպաց և բանաւոր պատճառաց այն վիճակին հասած լինել, և մոյն ինքն Մովսէս բաւական փաստեր չի տար առ այս: Երկրորդ, Խոսրովու ժամանակ մորոգոսած Հայոց 400 իշխանաց և գահուց կարգաւորութեամ ցուցակմ ևս, զոր 'ի մէջ կը բերէ Մեծիմ Ենթիսի վարուց հեռիմակմ, աւելի Բուզանդացոյն՝ քամ թէ Խորեմնացոյ աւամրած մերը կը հաստատեն: Ըստ Մովսիսի, Մար՝ Ծովաց իշխան և Գագ՝ (Դատ) իշխանն Հաշտեմից էին, որք ղրկուեցան աղերսարկուք առ Կայսրն. մինչեւ ըստ Փաւստոսի մոքս կը ղրկուին 'ի Խոսրովայ 'ի վերայ ապստամբ իշխանին Աղծմեաց, և ոչ թէ 'ի Բիւզանդիոն: Ե թէ յառանձին ինչ կամ յարքումակամ յիշատակարանաց առած լինէր զայստակ Մովսէս, այն ժամանակ կարելի էր նախադասել քան զՓաւստոս. բայց որովհետև մա ինքն Մովսէս կը ծանուցանէ Գ. զորոց Ա զկուսմ մէջ, թէ « Հասարակաց խօսիւք անցանէ ըմդ պատմութիւնմ », որ յետ Տրդատայ. մանաւանդ թէ Խոսրովու և Վրթամիսի վերայ դեռ ուրիշ բաներ ևս կ'աւանդէ, քաղելով 'ի ֆաւրստոսէ՝ առանց մորա ամուսն յիշատակութեամ. ուրեմն այսպիւր սի պարագայից մէջ, երբ մա Փաւստոսի հակառակ վրեժը կը պատմէ, չէ կարելի իբրև ստուգագոյն համարել զայմ: Վրթամիսի թղթոյմ պաշտօնակամ և դիւանակամ չլինելոյն մշան է՝ Կոստանդայ կողմէն ներկայացուցած վեց տող պատասխանին, որուն վերմագիրն աւելի ըմբարծակ է, քան թէ մոյն ինքն թուղթը: Արդ, ինչպէս անտեղի է ենթադրել կայսեր կողմանէ առ մեծ Կաթողիկոսն Հայոց և առ նախարարս այսպիսի խայտառակ թուղթ մի, այսպէս ևս դժուարահաւատալի կը տեսնուի Վրթամիսինը: Ուստի ինձ կը թուի, թէ Մովսէս կարէր տեսած կամ լսած լինել այնպիսի թղթոյ գոյութիւնը, բայց մորա մեզի հաղորդածներն այնպիսի պաշտօնակամ թղթոյ ոչ տիպն ունին և ոչ իսկ բովանդակութիւնը:

Սակայն այս յայտ է, թէ Մովսիսի վերոյիշեալ տեղին՝ առ Եղիշէի եղած դաշմաց հաստատութեամ վերաբերեալ մէկ մշանաւոր տեղւոյն՝ շատ մման է, զոր իբրև չորրորդ հեղինակութիւն կ'ուզեմ աստ առնուլ 'ի քննմ: Արդ, Եղիշէի այս տեղիս՝ չորս այլևայլ մա

1, Վարդամանց պատմութեամ ստուգաբան հեղինակս, որուն հաւատարմութեանը վերայ ցարդ ոչ ոք տարակուսեցաւ, Հայոց նախաբարակամ և եպիսկոպոսական ժողովքէմ՝ առ Փոքրն Թէոդոս ուղղած մանակին մէջ այսպէս կը գրէ. « Որ խաղաղասէր մարդասիրութեամբ ձերով տիրէք ծովու և ցամաքի, և չիք ոք յիբկրաւորացս, որ ձերում ամարգել տէրութեանդ ըմդդէմ դառնայցէ. — որպէս մեք իսկ ունիմք զամուստ յիշատակարամսն զառաքինի նախնացմ ձերոց. ունելով զԵրուզէ՝ անցին և տիրեցին և Մսիացուց կողմանց 'ի սահմանացմ Սերայ մինչև 'ի կողմանս Գաղերոնի, և ոչ ոք գտաւ ստամբակեալ և ելանել ըստ ձեռն մոցա: Եւ այնչափ մեծ իշխանութեամ՝ դաստակերտ մեծ և սիրելի զՀայոց աշխարհս ամուսնէին: Չասմ որոյ և մախմին մեր Տրդատիոս յիշելով զառաջին սէրն ձեր, որ 'ի տղայութեամ փաղորցեալ 'ի հայրասպամ մարդախողխող Թորեղբարցմ իւրոց՝ ապրեալ

սումն կը պարունակէ, Ա. սկիզբէն մինչև « Ընդդէմ դառնայցէ » ուղղակի Թէոդոսի և նորա տէրութեանը կը պատկանին. Բ. անտի մինչև « Բայրեմի աշխարհիս » ներոմէն սկսեալ ց'իտկոնտիանոս՝ հռովմէական և հեթանոս կայսերաց՝ Հայոց հետ ունեցած վերաբերութիւնները կը յիշեցնէ. Գ. « սոյնպէս » էն « ցկողմանս հիւսիսոյ » եղած մասը Կոստանդիանոսի և Տրդատայ ժամանակամիջոցի կը օժտուած յարաբերութիւնը կը ծամուցամէ: Դ. աստի՛ մինչև ցվերջ եղած մասը կը հաստատէ մեզ Կոստանդիանոսէն յառաջ և յետ այլ մորիկ ց'Թէոդոս կայսրն եղած հմազոյն պաշտօնագրոց և դաշանց թղթոց գոյութիւնն՝ հանդերձ երկուստեք եղած, այսինքն է թագաւորացն Հայոց և կաթողիկոսաց և կայսերաց առ իրեարս գրուած թղթերով. այս բանս Փառասոս ինքնին քաջ կը հաստատէ, զի ալ մէն անգամ, երբ մորըմտիր կաթողիկոսաց երթն 'ի ձեռնադրութիւն կը պատմէ, կը յիշէ և զգրութիւն պաշտօնական թղթոց թագաւորացն Հայոց:

Սակայն սիրարան եղիշէի այս տեղոյս մէջ պարունակուած այդ որիշ կէտերն չտեսնելով Կ. Շահնագարեան՝ յիշեալ երկասիրութեան 75-78 էջերում, ամխտիր և ամբողջապէս այդ տեղին Կոստանդիանոսի և Տրդատայ մախորդ հեթանոս կայսերաց մասին և դած կը հասկնայ: Իսկ դաշանց թղթոյ մի գոյութիւնն ուրամալու մամար, կը պնդէ, թէ « յիշատակարան » բանն ո՛չ Հայոց ո՛չ Յունաց և ո՛չ այլոց ազգաց մէջ ~~Թուրք~~ ~~Իսլամ~~ կամ ~~Ռեթ~~ ~~Հասարակ~~ ~~Ինքն~~ երբէք կը նշանակէ: Բայց մա եթէ ուշի ուշով կարդացած լիմէր Եզրայ՝ Ա զրոց Զ զլուխն, անդ պիտի գտնէր ակնբեր, թէ գէթ Հայք յիշատակարան բառով դուն ուրեք սլատմութիւն կամ մատեան, այլ հրովարտակա, դիւանագիրս՝ և այլն, կ'իմաման: Այլ եթէ եղիշէի 122 իջի այդ բացատրութիւնը չըմբռնեցաւ, գէթ 124 իջինը պէտք էր ըմբռնել, ուր յետ յիշելոյ զմատեանս, կը յաւելու, թէ անոնց մէջ կը գտնուէին թուղթք դաշանց կամ ուխտն հաստատութեան: Ուստի առանց « հոգետես » լինելու իսկ և « մասնաւոր շնորհաց », առանց Վարդանանց՝ առ Թէոդոս գրած թղթոյն « խորհրդական սեկնութիւն մի տալու », ինչպէս կը կարծէ մա, կա-

սմալ յերկրիդ Յունաց, և 'ի ձէնջ թագաւորեալ տիրէր Բայրեմի աշխարհիս. - Սոյնպէս և զհաստատմ որ 'ի քրիստոս ըմկալեալ 'ի սուրբ եպիսկոպոսէն Հռովմայ լուսաւորեաց զխաւարային կողմանս հիւսիսոյ »: Յետ կարգելոյ թղթոյն բովանդակ՝ անդէն կը յարէ, յէջ 124, թէ « Եւ իբրև յամբողջում եղին մեծի թագաւորիմ, և ըմթեքցամ զգիր պաղատանաց Հայոց աշխարհին և զյիշատակարանսմ մախմեացն, բազում մատեանք, որ զմոյմ ուխտ հաստատութեամ 'ի ներքս գտամէին »:

1. Զի սրբազամ գրիչը խօսելով առ Դարհիհ, վասն հրովարտակին Կիրոսի, կ'ըսէ. « Խնդիր արամ և տես 'ի տուն մատեանագրաց, ուր կամ գիրք յիշատակարանաց 'ի պահեստ թագաւորին Կիրոսի, և եթէ զբողի հրամանաւ Կիրոսի և բանիւ մորա, շինեացեն գտուն Տիանուն...: Եւ գտուն յԱմաթստի Բատանացոց (յեկբատամ Մարաց), 'ի տեղոջ ուր կային գիրք Յիշատակարանաց, ուր գրեալ էր այսպէս. « Յամին » ...:

րևմբ ասել, թէ Եղիշէ կամ Յովսէփ կաթողիկոս և Վասակ Մարգալամ թէ՛ իրենց յիշատակարանաց և թէ՛ յունական մատենից մէջ կը հաստատէին ուղղակի և՛ զգոյութիւն ուխտին հաստատութեամբ, զոր կմբքեցին Կոստանդիանոս և Տրդատ. և թէ այս է ստուգիւ Եղիշէի տեղւոյմ հարազատ իմաստն. զի Եղիշէ թէպէտև Կոստանդիանոսի և Սորա ամմիշնական յաջորդաց ամուսնքն « առաքիմի մախնեաց ձերոց » բամից մերքև ծածկել է, սակայն Ջննորայ, Փաստոսի և Մովսէսի վերոյիշեալ տեղիքն՝ որոշակի կը ծանուցանեն: Բաց աստի, նոյն իսկ Տրդատալ համար ըսածէն իսկ, թէ « Նոյնպէս զհաւատսն որ 'ի Քրիստոս ըմկալաւ 'ի սուրբ եպիսկոպոսապետէմ Հոտվմայ » կ'իմացուի, թէ խօսքը քրիստոնեայ թագաւորաց և քրիստոնեալ կամն Հոտվմայ վերայ է, և ոչ թէ հեթանոս: Այս բանս ուղղակի ես հերքում կը համարիմ նոյնպէս Օրմանեանի կարծեաց, որ ուզեց ամուսնը Տրդատայ՝ զմախնին իմանալ, որ էր առ Ներոնիւ: Յիրաի, եթէ Եղիշէէն և մախայիշեալ երեք հեղինակութիւններէն յիշուած դաշինքը կամ ուխտն հաստատութեամբ Կոստանդիանոսէմ յառաջ հեթանոս կայսերաց հետ կմքուած լինէր, իմէ ամհրաժեշտ հարկ կարէր ստիպել զնոյն ինքն Կոստանդիանոս, զԿոստանդ, զԱրկաղիոս, զՎաղնատիանոս և զԹէոդոս, նոյն իսկ վտանգաւ իրենց տէրութեան՝ ձեռն կարկառել Հայոց ընդդէմ Պարսից, քանիցս ամգամ հոր Հայք կը յիշեցնէին նոցա՝ իւրեանց մախնի թագաւորաց դաշանց հաւատարմութիւնը. մանաւանդ զի գիտէին քաջ թէ Մաքսիմիանոսի օրով իսպառ խզուած էր այն վաղմշական դաշինքը, զոր կմբեց Դիոկղետիանոս: Ինչո՞ւ համար ուխտադրուծ կը համարին և մախնիք մեր զՄարկիանոս, որ դանդաղեցաւ օգնելու ամօգնական Հայաստանին: Արդ, ըստ իս քրիստոսական պարտաւորիչ հաւատքէն դուրս ուրիշ ամհրաժեշտ հարկ մի չկար, զոր երբեմն միջնորդ կալան երկու քրիստոսասէր թագաւորքն, Կոստանդիանոս և Տրդատէս, իրարու օգնել ընդդէմ հեթանոսաց, երբ մանաւանդ միհրական կրօնքը քրիստոնէութեան վերայ գէմք վերացրնել կամենար: Արդարև, ցուցնելու աղագաւ, թէ այն դաշինքն երկուց թագաւորութեանց՝ սեփհական և մշտատև լինելու ըմադրուցն ունէր, և ոչ թէ պարզապէս առ կենդանութեամբ Տրդատայ և Կոստանդիանոսի, շատ է լսել առ Ագաթանգեղ եղած 653 իջի հետագայ խօսքերն. « Դաշինս կուէր ըմդ մնա, յՋննորդ կալել զհասարան, որ 'ի Տէր Քրիստոսն էր. զի անշուշտ միշ 'ի բուն զհասարաբի՛ սերն 'ի մէ երկուց խախտորոնեանց պահեացն. զի ես բան զես առաւելալ զոյն արտայն Հայոց հասարաբի 'ի յԵրրորդորոնեան 'ի հասարա »: Դիտելու եմք որ Եղիշէի վերոյիշեալ տեղւոյմ երրորդ մասը, զոր յառաջալ գոյն կրօնական ամուսնեցի, այսինքն է. « Մոյնպէս և զհասարան որ 'ի Քրիստոսն ընկալաւ 'ի սորբ եպիսկոպոսէն Հոտվմայ՝ լուսաւորեաց զխաւարային կողմանս հիւսիսոյ », քաջ կը միաբանի Ագաթանգեղոսի տեղւոյմ վերջի բացատրութեամբ, և կարելի է վերջնոյս փոխառութիւն իսկ համարել, եթէ Սորա արտայայտած իմաստով առնուք. այսինքն է, ոչ թէ Հոտվմայ եպիսկոպոսն ձեռքով դարձաւ

Տրդատ 'ի քրիստոնէութիւն, այլ թէ իւր հաւատակից կայսեր օրինակաւն և բամիւք՝ ևս քան զևս հաստատեցաւ 'ի հաւատոս Քրիստոսի: Երկրորդ, Եղիշէի սցս խօսքերս՝ Նիկիական դաւանանքն ևս կարող են արտայայտել, որ եղև առ Սեղրեստրոսի, և առ Ագաթանգեղ, յէջ 656, կը կոչուի « Ամենայն տիեզերաց ընդունելութեամբ աւանդութեամբ հաւատք »: Յիրաւի, այսպիսի պարագայի մէջ Եղիշէն անելի հմազոյն և ծանրակշիռ հեղինակ ոմն, որպիսիմ է Ս. Սահակ Գարթն, կու գայ և կը հաւատարմացնէ առաջնոյն խօսքերը. զի առ Ս. Գրովղ և Ակակ հայրապետս զրած թղթոց մէջ, որոնց հարազատութիւնը բամաւոր տարակոյս չի վերցնեն, այսպէս կ'սասէ. « Պահել զհոստատութիւնն հոստոյ, զոր 'ի պէքանն 'ի յերջերայ վարդապետութիւնէր ընկոյտ անէտ »: Անտարակոյս, առ Ս. Սահակ « հաստատութիւն հաւատոյ » բառերով, զմիկիական հաւատքը կը հասկնայ. « 'ի սկզբանէ » բառով անդատին Ս. Գրիգորի ժամանակը կը ցուցանէ. իսկ « 'ի ձեռն » բացատրութեամբ՝ ոչ եթէ Գրովղ կը հասկնայ, այլ յունական Եկեղեցին, որ դեռ Ե. դարում մէջ իսկ միացեալ էր ընդ Հռովմայում կամ արևմտեան Եկեղեցւոյն հետ. յունական եկեղեցին կ'ըսես, յորմէ յետ երկրորդ դարծիմ ընդունեցաւ զսուրբ քահանայութիւն, զմիկիական դաւանութիւնն և զկարգս Եկեղեցւոյ: Ուրեմն ցայս վայր ըրած քննութիւննիս եզրակացը մտով, պէտք ենք ըսել, թէ Տրդատայ երբև առ կոստանդնուս 'ի հին կամ 'ի նորն Հռովմ, և Դաւանեց հոստատութիւնն՝ ըստ ամենայնի պարտաւն է և և առանց երկբայութեան: Իսկ Գրիգորիմը՝ արտախառն է և անարդի 2, որովհետև կը պատանին առ այն դրուին, շօշափելի, հա-

1. Յիրաւի, Եսեբրիոս՝ Կոստանդնուսի Կենսագրութեամբ Գ զրոց է գլխուն մէջ այնպիսի մկարագրութեամբ և պարագաներով կը գրէ յԱրևելից և յԱրևմտից իշխանաց և թագաւորաց եկաւորութիւնն և ընծայաբերութիւնն առ Կոստանդնուս, որ տարակուսելու այլ ևս չիք տեղի: Ամհիմն է Ստիտիմզի և Գուտշմիդի այս ընդդիմադրութիւնս, իբրև այն թէ Եսեբրիոս ոչ յիշէ յամուամէ՝ զՏրդատիոս: Մակայն դիտելու է, որ մոցամէ և ոչ մին կը յիշուի յամուամէ. Բլէմիս, Ռոզիկ և եթովպացի ամուամքը միայն կը գտնուին ամդ. բայց տարագր և մկարագիրք՝ են բազում յոյժ: Բ. Ամենէն անելի Տրդատ պէտք էր որ երթայր առ ինքնակալն Հռովմայ, մի՛ որպէս զի առ Կիոկղետիա մոսի կոած՝ բայց առ Մաքսիմիանոսի խզուած դաշինքը՝ վերստին հաստատէր. երկրորդ հիմ բարեկամութեամբ և քրիստոնէական եղբայրակցութեամբ համար: Գ. Այս ժամանակի Հայաստանն քաղաքային վիճակն ևս, զոր կ'ըմծայեն մեզ Ձեմոք և Խորենացի, զմոյր կը թուի հաստատել. այսինքն է Աղուամից և Ադծմեաց իշխանաց ապստամբութիւնն և Գարսից շուրջանակի յարծակմունքն 'ի Հայս, որ Տրդատայ բացակայութեամբ ակն յայտնի մշամ է:

2. Կոստանդնուսի և Սեղրեստրոսի տօմից հաստատութիւնն յնկեղեցիս Հայաստանեայց՝ կարելի էր մշամ համարել վաղմջական վերաբերութեանց. բայց քամի որ որոշ չի գիտցուիր այդ տօմից հաստատութեամբ ժամանակամիջոցն, չէ մարթ զմոյմս արգասիք համարել Գրիգորի և Տրդատայ հետ ունեցած բարեկամութեամբ:

Նշամաւոր իմն կ'ըրևի մաս Նիկեոսիոսի Կալիստոսի յոյմ պատմագրի վկայութիւնն, որ իւր Ը. Գրոց լն. գլխումը կ'ըսէ, թէ « Եւ որք աւանդեն, թէ Գրիգորիոս համդերծ Տրդատու եկմ առ մեծ ինքնակալն Կոս-

«արարի՛ւմ և բացայայտ յիշարարութեամբ Գ և Ե դարուց. իսկ եղածներն իմչպիսի են, բաց 'ի վերոյիշելոց, մաս Գիւտ կաթողիկոսի վկայու թիւնմ առ Մ. Կաղանկատուացոյ (Ա. գլ. ԺԱ), և Լուսաւորչայ յոյմ մերբողիչի աւանդածն, այսպէս մաս Տարօմի Առաքելոց վանքում Գրիգորի ընծայուած Սահմանագիրն ¹, որ ԺԱ. դարուն թարգմանուած կ'աւանդուի յունական լեզուէ 'ի հայ, հրամանաւ Չորտուանի Մամիկոնեանոյ, «նբառաւորեալ էն առ այս»:

Դառնալք այսուհետև պարզել Ագաթանգեղայ գրոց, յէջ 651, մէկ տեղիմ, ուր կ'ըսուի վասն Տրդատայ. « Առնոյր ընդ իւր զմեծ արքեպիսկոպոսն Գրիգոր ... զՌըստակէս և զԵպիսկոպոսն Աղբիս մոս ... և Եօթանասուն (եօթն ?) հազարս ընտիր զօրօք խաղայր զընայր յԱյրարատ գաւառէ 'ի Վաղարշապատ քաղաքէ անցանել 'ի կողմանն Յունաց »: Հատուածիս հեղինակին միայն այս պարագայս, այսինքն է 70 հազար զօրօք երթն 'ի Հոռվմ, բաւական պատճառ մի է և լիուլի իրաւունք կու տայ քմնասէր մտաց. կասկածելու այն դէպքին ճիշդ եղելութեանը վերայ: Յիրաւի, իմչ հարկ կար կամ ո՞ր տեսնուած է երբէք, բարեկամական սոսկ այցելութեամ մի համար 70 հազար զօրաց ահաւոր բանակ մի անբաւ ծախիք շարժել տանել ամսօրեայ ճանապարհաւ Հայաստանէն մինչև Իտալիոյ հարաւային եզերքն, և տանել առանց մաւատորմի, թողլով զՀայաստան յորս և յաւար յիսերիմ թշնամեաց, զորս բազմապատիկ պատերազմներով յարուցած էր Տրդատ ընդդէմ իւր շուրջանակի: Արդ, եթէ այդ առթիւ և այդ ժամանակի մէջ առ Կոստանդինոս եկաւորող ամէն իշխանք և թագաւորք՝ այսպիսի զօրաց բանակներ տարած լինէին, կարծեմ, թէ Հայաստան ընդարծալ կածաւալ դաշտն՝ հազիւ կարենար զամոնք պարունակել, թող թէ պարեմաւորել: Այս բանս յետմագոյն և յայնժամու կացութեանն ամտեղեակ ուն կարէր երագել, քան թէ իրագործել: Յիլաւի, եթէ ուշի ուշով քմնեք զՋնոնք, ակմերև պիտի տեսնեք, թէ 70 հազարի պատմութիւնը բոլորովին այլ ինչ եղած և հասկանալի է: Ասորիմ յէջ 40 Տարօմի պատմութեան մէջ Հայոց արքայի մեծաշուք մեկնելը կը պատմէ մեզ յոստամէն, հանդերձ արքունական զօրօք, և նորան գալուստն՝ 'ի գաւառն Ապահունեաց, որուն կ'ընկերեն մինչև ցայն վայր մասն Գրիգոր և Աղբիսմոս, առանց ինչ յիշատակութեան Ռըստակիսի. և այս ունի իւր պատճառն: Անդ, 30,000

տամղիանոս. որ և լուեալ զքթանչելի և զանակնունելի գործս՝ խնդալից եղև »: Մակայմ պէտք է ըսել, թէ « եմ որք աւանդն » բացատրութեանս՝ նիկեփորոս կամ իւր ժամանակակցաց կենդանի աւանդութիւնքը կը հասկնայ, և կամ ուղղակի Ագաթանգեղայ գրոց յունարէն օրինակն, յորմէ Ե դարու յոյմ գրիչներ ևս հատուածներ փոխ կ'առնու: Յիրաւի, յոյմ հեղինակիս վերջին մասնադասութիւնը՝ գրեթէ մոյմ է Ագաթանգեղայ 653 իջի մէկ մասնադասութեան հետ, որ կ'աւարտի « ուրախութեամբ մեծաւ »:

1. Յոյն բնագրի գոյութիւնն ընդունելով հանդերձ, հաւանական է ըսել, թէ այդ Մամիանագրի մէջ Յոր պարագաներ և յաւելուածներ մերմոտեւած ըլլան, 'ի ժամ թարգմանութեան:

զօրաց բանակ մի Վրաց թագաւորին օգնութեան կը դրկէ Տրդատ, և ինքն ամիս մ'ամբողջ յետածգելով իւր ջուն մոցա վերադարձին կը սպասէ: Արդ, այս պարագայիս մէջ, ահաւասիկ 70,000 էմ 30 հազարը պակսեցաւ: Սակայն դիտելու է, որ մէկ կողմէն այդ 30 հազար զօրաց առաքումն 'ի Վիրս, իսկ միւս կողմէն ալ Տրդատայ անդ յամենայն, ուղղակի կը ցուցանեն, թէ Ազաթանգեղոսէն յիշուած 70 հազար զօրքը կամ առ պատշաճութեան ուղեկից եղան Տրդատայ մինչև ցտահմանագլուխն Հայոց, և կամ 'ի պատերազմ կը վարէր զնոսա թագաւորն Հայոց ընդդէմ Հիւսիսայնոց և կամ մի այլ զօրատր թշնամու դէմ: Արդ, Ձեներ վերոյիշեալ Հիւսիսայնոց դէմ տուած պատերազմն և Վրաց գերեզարծն յիշելէն վերջ, երկրորդ պարբերութեամբը ժամանակի ընդարձակ միջոց մի կը թուի պարզել ընթերցողին դիմաց, յորում թէ Տրդատ և թէ իւր ուղեկիցքը զխովիմ յայլ ինչ կը պարապին 'ի կողմանս Յաշտից, քամ թէ զնալ 'ի Հուլմ, այսինքն է պատրաստուիլ 'ի պատերազմ: Եւ յիրաւի այդ ժամանակին կը ծանուցուի Յունական կամ Հուլմէնական ծանր զօրաց գալուստն, որում իրազգած լինելով թագաւորն Հայոց կը բանակի և կ'ամրանայ Արծանի ընդարձակ բարձրութեան վերայ: Այս մեծագոյն դէպքս՝ լոկ ծանուցանելով կը փոխէ Ձեներ իւր պատմութեան միւթը, զի Գրիգորի հրամանը զայն կը պահանջէր 'ի նմանէ: Սակայն Կեսարացին Եւսեբիոս և հանգամանք ժամանակին կը հաւաստեն մեզ զարշաւանս Դժմէին Մաքսիմոսի 'ի Հայս յամ 312 և կորակոր պարտութիւն մորա 'ի Հայոց և Վրաց. որով կը մեկնուի Ազաթանգեղայ 651 իշում 70,000 բանակի գաղտնիքը: Սակայն պէտք է ըսել, թէ Ազաթանգեղոսի վերոյիշեալ տեղոյն գրողն՝ ոչ ժամանակակից կարող էր լինել այն դէպքին և ոչ իսկ արքունական յիշատակարաններ ունեցած է իւր լիմաց. ապա թէ ոչ մեծագորին Տրդատայ՝ Մաքսիմոսի վերայ տարած յարթութիւնը ոչ լռելու էր և ոչ իսկ շփոթելու ընդ երթին Տրդատայ 'ի Հուլմ, որ այդ ժամանակամիջոցին ոչ տեղի ունեցաւ և ոչ իսկ կարէր ունենալ. թեպէտև տոհմայինք մեր այնպէս կարծեցին, հաստատուելով Ազաթանգեղայ գրոց հակաժամանակագրական և առանց կարգաբնութեան մէջ բերուած այն տեղոյն վերայ: Ստուգիւ այս վերջին ենթադրութիւնս՝ մի պատմական իրողութիւն դարձած կը տեսնենք Ձեներայ 43 իշում, ուր 39 իջի, այսինքն է Տրդատայ 'ի Հուլմ երթալէն յառաջ՝ 'ի Վիրս դրկուած զօրաց դարձի հատուածը՝ Տրդատայ Հուլմէն դառնալէն վերջ դարձեալ կը կրկնուի. բայց այս անգամ ոչ իբրև մի միջանկեալ և անշատ իրողութիւն, այլ մորա հետ իբրև մի մարմին միացած են յաշտոյդ էջերն՝ Հիւսիսայնոց դէմ տուած պատերազմովն, որ 'ի Հուլմ երթալէն և դառնալէն վերջ հանդիպեցաւ, Գեղեհնոնի հետ ըրած մեծամարտութեամբը: Այնպէս որ Տրդատին 'ի Հուլմ երթալու դէպքն, այս երկու պարագաներուս մէջ իսկ, կը մնայ իբրև անյարիւր և անհասկանալի մի բան թէ՛ առ Ազաթանգեղ և թէ՛ առ Ձեներայ: Սակայն թողով այս պարագայս և դառնալով մեր առաջին կէտին, զայս

միայն կ'ըմբռնուով առ Ձեռոքայ, յէջն 43. « **Ինչպէս** յառաջիակ գնացիմ 'ի Հռովմ»: Արդ, այս բացատրութեանէս կը տեսնուի, թէ յառաջագոյն յիշուած զօրաց բազմութիւնն ևս հօմ թողուցիմ, և իւրենք միայն գնացիմ. մամաւանդ թէ, ըստ իս, այդ երկրորդ չուն տարիներով վերջ համդիպած լինելու է:

Այս տեղ կրկին հարցել ընդ առաջ կ'ըլլին մեզ, և հարկ է պարզել զմոսին. այսինքն է ո՞չք էիմ արդեօք գնացողքս, ի՞նչ ժամանակի մէջ արդեօք և ի՞նչ առթիւ կ'երթայիմ առ մեծ ինքնակալն Հռովմայ:

Բաց յԱգաթանգեղոսէ, եղան. և այլք բազումք 'ի տոհմայնոց, յորս դասելի են և Հ. Մ., Զամչեան, Հ. Յ. Գաթրընեան և Հ. Ղևոնդ Մ., Ալիշան (Ա. յարատ, էջ 388—389), որք զերիս օւղևորութիւնս կը դնեն. այսինքն է, Ա. երթմ Գրիգորի 'ի Կեսարիա. Բ. Տրդատայ երթմ 'ի Հռովմ, որ բաց 'ի վերոյիշեալ մախարարակոյտ բազմութեան՝ ընդ իւր ումէր և զՍ. Գրիգոր, զմըստակէս և զԱղբիանոս: Գ. Երթմ Արիստակիսի 'ի Ս. Ժողովն Նիկիոյ: Արդ, առաջնոյն և վերջն ուղեգնացութեան ժամանակն և պարագաներն ինչոտ որոշ են, և նոցա ստոյգ եղելութիւնն իսկ շօշափելի յիշատակարանօք հաստատուած է: Բայց երկրորդը՝ տակաւին քննութեան կը կարօտի: Գաթրընեանի կարծիքն արդէն յիշեցի այս մասին, որ յամին 313 զկնի մահուան Մաքսիմիանոսի անմիջապէս եղած կը հասարի Տրդատայ և Գրիգորի երթմ առ Կոստանդիանոս 'ի Հռովմ, և պատեհաւ Եւսեբիոսէն յիշուած համդիսադրութեանն. իսկ ըստ Հ. Ղևոնդ Ալիշանի՝ յամին 315: Սակայն ուշադրութեամբ քննելով Եւսեբիոսի այն տեղին, կը տեսնենք, որ բոլորովին տարբեր ժամանակի և պարագայից մէջ կը մկատէ Կոստանդիանոսի համդիսադրութիւնն և օտարագզի իշխանաց ընծայարեցութիւնքը, քան թէ յամին 313 կամ 315: Եւ յիրաւի, ըստ վկայութեան մորին իսկ Եւսեբեայ, Կոստանդիանոս կրկին տօմեր կատարեց յետ յաղթութեան իւրոյ 'ի վերայ բռնաւորաց. այսինքն է, մախ իւր **Կոստանդիանոս** Տրդատայի յարմարեցումն 315, որովհետև յամին 306 յաջորդեց իւր հօրը Կոստասայ: Երկրորդ ամգամ կատարեց **Կոստանդիանոս** Տրդատայի, որ հանդիպեցաւ յամին Տրդատային 325: Բայց դիտելու է, որ առաջին մանդիսադրութիւնը կամ Տրդատային եղաւ միայն Հռովմայ համար, և օտարք չի մասնակցեցում այնմ. այս բանն ամենատրոշ կերպով կը տեսնուի Կոստանդիանոսի **Կոստանդիանոս** Ա. Գր. ԽԸ. զլխում: Իսկ միւսոյն մկարագիւր կ'ընէ Եւսեբիոս մի և մոյն երկասիրութեան Դ. Գրոց Ե զլխում, և այս է, ըստ իս, այն մեծ և համաշխարհական հանդէսն, յորում ներկայ գտնուեցան իշխանք և մեծամեծք ազգաց և մա ինքն մերս Տրդատայ: Իսկ արդ այս տօմն պէտք էր՝ որ տեղի ունեցած լինէր յամին 325—326 'ի Նորն Հռովմ կամ Կոստանդիանոսի քաղաքում և ոչ թէ Հռոմուլոսին: Յիրաւի, Եւսեբիոս Գ զԵ. ԺԵ ոչ միայն զկնի մահուան լիկինիոսի, որ եղև յամին 324 և միահեծան ինքնակալութեանն յԱրևելս և յԱրևմուտս, այլ նոյն իսկ զկնի Ս. Ժողովոյն Նիկիոյ ամ

միջապէս եղած կը պատմէ զայն, որ աւարտեցաւ յամիմ 325: Ուստի նորա Դ Գրոց Ե գլուխմ, որում վերնագիրն է Βαρβαρόων δαυφάρον πρεσβείται, καὶ ἔωραει παρ' αὐτοῦ, ուրդակի շարունակ կութիւն հասարելու է Գ Գրոց ծԵ գլխում աւանդուած ~~Քառասնիկ~~ համոզիս պատմութեանմ: Իսկ արդ այս թրուականէս առաջ անԵ մեիմ անհիմն կը լինէր Եւանգելիսի՝ ենթադրել պէտպէս մուկրակութիւնս արեւելեան ազգաց, որովհետև այդ ժամանակամիջոցիմ Լիկիմիոս՝ հակառակորդն Կոստանդիանոսի և ոչ թէ ինքն Կոստանդիանոս կ'ըլիսէր և կը հրամայէր Յոնիացոց, Դորիացոց, Կիպրացոց, Փիւնիկեցոց, Փոխագացոց, Կապադովկացոց, Եգիպտացոց, Ասորոց և Եթովպացոց, և այլն, ըստ վկայութեան Զոսիմոսի, Բ. ԻԲ, և այլոց. մասնաւոր թէ, Կայլիպոլոսոյ քով Կոստանդիանոսի դէմ գումարած Լիկիմիոսի մաւական գորութիւնն իսկ՝ վերոյիշեալ ազգերը կը կազմէին ¹: Ուստի բնականապէս Լիկիմիոսի կենդանութեան ժամանակ ոչ կարող ինչ էիմ և ոչ ալ կամէիմ այդ ազգերն մուկրակութեամբ ընծայարեորք լինել. Կոստանդիանոսի, և ճանաչել զնա իբրև միահեծան Տէր Արևելից և Արևմտից. և առաւել ուրեմն մերս Տրդատ՝ իւր կարծեցեալ 70,000 աւ. զի էր բարեկամ և Երախտապարտ Լիկիմիոսի՝ իբրև խնամակալուի: Ուրեմն պէտք էր, որ Լիկիմիոսի մահուամէն կամ զէթ նորա վերջնական պարտութեանէն վերջ համոզիպած լինէր Կոստանդիանոսի փառաւորութեան և մեծութեան այդ համաշխարհական տեսարանը, զոր վերնախնամ տեսութիւնն յարոյց, յետ տխուր և մառախլապատ ժամանակաց, իբրև արեգակն իմն քաղաքային և կրօնական լուսաւորութեան ազգի մարդկան, և նորա գորութեանն ենթարկեց Սև ծովու հիւսիսային եզերքէն մինչև ցծովն Կասպից, և Բրիտանական կամ արևմտեան Ովկիանոսէն՝ մինչև ցճնդկայինն Ովկիանոս բնակող ազգերն և ժողովուրդքը: Երկրորդ, Եւանգելիոս որոշակի կ'աւանդէ անդ, թէ ինքն իսկ տեսած էր աչօք բացօք այդ բարբարոս ազգաց մուկրակներն և նոցա բերած հիւանալի ընծաներն, Կոստանդիանոսի ապարանից մէջ:

Իբրև դրական ապացուցութիւն, յամիմ 313 կամ 315, երթիմ Տրդատայ 'ի Հոմվա՝ մէջ կը բերուի Թէոդոսեան Օրէնդոց (տպգ. Լայպցիկի. 1738. հտ. Գ. գիրք ժԱ. Տխտդ. Ա. էջ 5-6) Մեծիմ Կոստանդիանոսի մէկ օրէնդրութիւնն հետևեալ մակարութեամբս. De immunitate a tributis nulli tribuenda, exceptis tantum quatuor, tum rebus, tum personis; Constantini M... imp. Constantinus A. ad Proclianum: Արդ, այս Օրինագրիս կամ Արտօնագրիս վերայ յերկրեալ է Կոստանդիանոսի որդւոյն Կոստանդինի առ թագաւորն մեր Արշակ տուած մէկ առանձնաշնորհութիւնն, որով Հայոց թագաւորիմ՝ Յուլիանոսի մէջ ունեցած կալուածքը ազատ կը մնամ 'ի հարկաց, վասն դաշնաց կռելոց առ

1. Crysanthos Antoniadès, "Kaiser Licinius", München, 1884, p. 64.

Տրդատաւ և Կոստանդիանոսի: Եւ յիրաւի այս Արտոնագրիս տակ այսպէս ստորագրուած է. «Data XV, Kalend. Jul. Constantino- poli. Constantino A. IV. et ' icinio, IV Coss. », (315). Արդ, զի տեւու ենք որ փակագծի մէջ դրուած 315 տարեթիւն՝ տպագրողէն մերմուծուած է, ուստի և զօրատր փաստ մի չէ: Բ. այդ Արտոնագիրն 'ի Գ. Պօլիս գրուած է, (և ոչ 'ի Հռովմ), որ 315ին ոչ շինուած էր և ոչ իսկ կարէր լինել արքունիք Մեծին Կոստանդիանոսի: Ուրեմն աստի իսկ յայտնի կը տեսնուի, թէ ստուգիւ Կոստանդիանոսի վերոյիջեալ Քոստանդիոսի կամ մորոյն Հռովմայ և կամ լաւ ևս Նիկոմիդիոյ մէջ կատարեցաւ, զկնի ժողովոյն Նիկիոյ, մերկայութեամբ իսկ սուրբ Հարց ժողովոյն, զորս մեծապարգև ըմծամերով մեծարեց:

Արդ, իրն յիմքեան այսպէս լինելով, աստի իսկ յայտնի կը տեսնուի, թէ Ագաթանգեղայ զրոց 650 իջի հաստուածին հեղինակն՝ ոչ ժամանակակից¹ և ոչ իսկ մերձատր ոք էր ժամանակաւ վերոյիջեալ դէպքի կատարման, երբ կ'ուզէ հաւատարմացնել մեզ, թէ Արիստակէս ևս ըմռ Տրդատայ չոգաւ առ Կոստանդիանոս. որովհետև Արիստակէս՝ Տրդատէն և Գրիգորէն յառաջ արդէն պէտք էր որ չոգած լինէր 'ի սուրբ ժողովն Նիկիոյ. այլ յաւանդութեմէ միայն լսելով կը գրէր զայս: Ուստի շատ աւելի պատմական կը լինէր, և թէ մա Արիստակիսի դարձը միացընէր ըմռ դարձին Տրդատայ՝ քան թէ մորա երթն, որ, ըստ իս, կամխելոց էր ամ մի կամ ամիս ինչ: Իսկ Աղբիանոսի ուղեկցութեանն՝ ոչ միայն չիք ուստեք հակառակութիւն, այլ մասնաւոր թէ մորա վիճակն իսկ զայդ կը պահանջէր, որովհետև Ագաթանգեղայ 630 իջի Բ պարբերութեան համաձայն, « էր մա վերակացու արքունական զբան՝ քանակին » . ուստի հարկ էր որ մա ինքն ևս զմայր ըմռ մտա:

Արիստակիսի երթն 'ի Ս. ժողովն Նիկիոյ և քսանաթիւ կամոմօք վերադարձն 'ի Հայաստան՝ է պատմական և ամենաստոյգ ճշմարտութիւն, և այնքան բազմապիսի յիշատակօք և հանգամանքս հաստատուած, որուն վերայ տարակուսելն իսկ աւելորդ է: Եւ յիրաւի, բազմահմուտն Փոտ՝ առ Ջաքարիա Կաթողիկոսն գրած թղթին մէջ կը յիշէ զԱրիստակէս 'ի Հայոց Մեծաց 'ի ժողովական Հարս: Նոյնը յամուանէ յիշատակուած կը գտնենք հայերէն և ասորերէն, յուճարէն և ղպտիարէն լեզուներով գրուած Նիկիոյ Ս. ժողովոյն Հարց կարգին մէջ: Բաց աստի Մ. Խորենացի Բ. զվ. 2Թ և Դ, և Փաւստոս,

1. Ձի յէջս 651՝ Բ և Գ պարբերութիւնքն, և յէջ 654՝ Բ պարբերութիւնը՝ Կորեան ըմծայուած հաստուածներէն են. իսկ յէջ 655 Բ պարբերութիւնն, որ կը սկսի « Եւ բիրէին զպարգևս » և այլն, մտամոթիւն է Կոստանդիանոսի Գեմսագրութեան Գ զրոց ԽԳ և ԾԸ զլիսոց, յորս կը պատմէ Եւսեբիոս՝ Կոստանդիանոսի և Հեղինայ ձեռքով Բեթղիհիսի տաճարին և Գ. Պօլսոյ Առաքելոց վկայարանին շքեղագարդութիւնն ոսկւով և արծաթով և այլ անգին ըմծայատրութեամբք: Տրդատայ գործոց պատմիչն՝ ինչպէս յայլ ամենայն պարագայս, այսպէս և յայսմ՝ քանացել է համարման Կոստանդիանոսի ըմծայեցմել զՏրդատ, համաձայն մինն տօմելի և յարգելի ըմելու արագաւ՝ յեկեղեցիս Հայաստանայց այդ ժամանակամիջոցին:

Գ Դպրութիւն գլ. Ժ, որոշակի կը հաստատեն մեզ զմերկայութիւնն Արիստակէսայ՝ այն աստուածազգեաց Հարց ժողովոյն մէջ: Աւելորդ կը համարին մի առ մի մէջ բերել յետագայ դարերու մատենագրաց վկայութիւնքն, առ որս ոչ միայն մորա երթն 'ի Ս. Ժողովն, այլ և նշանագործութիւնքն ամգամ պէսպէս արարուածներով կը պատմուէին և 'ի զրի հարամ, յորոց միմ է և՛ զծովն Բիւթամիոյ արօրադրելմ՝ ամհետ ըմթացիւք, 'ի մեծ զարմանս և 'ի պարտութիւն Արիամոսաց ոմանց, որք ~~հշտ~~ մականուամբ կը թշնամանէին զնա: Ես չեմ կարող հաւատել, թէ ստուգիւ արօրադրեաց մա 'ի վերայ ծովուն. սակայն կարեմ ասել, թէ այդ ժողովրդական վէպն, եթէ հիմ համարինք և եթէ մոր, է այլաբանութիւն իմ՝ հետեւեալ պատմական իրողութեանն, այսինքն թէ մաւարկեց երբեմ ժամանակի մաս մերս Արիստակէս ~~ի վերայ~~ ~~ճշտ~~ ~~հի~~ ~~վերայ~~ առ 'ի զմալ 'ի ժողովն Նիկիոյ, յամօթ և 'ի պարտութիւն Արիամոսեանց:

Արդ, Արիստակիսի զմալն 'ի Ս. Ժողովն Նիկիոյ դմելով իբրև մի պատմական և ամօթաւելի եղելութիւն, իցէ՞ մարթ ասել, թէ այդ դէպքի պատմութիւնն իսկ, որ կը գտնուի առ Ազաթամզեղ, է գործ մորա ժամանակակից գրչի մի: Այս կէտս՝ տարակուսական կը թուի ինձ: և արհաւասիկ այդպիսի մի բանաւոր տարակուսի պատմաւորներն: Ա. Եթէ ստուգիւ Ազաթամզեղոս ոմն էր ժամանակակից և « ըստ օրինի ժամանակագիր մատենից » զրսւծ լինէր 656-657 յէջս պարունակուած երկու պարբերութիւնքը, պէտք էր, որ Նիկիոյ ժողովոյն և Արիստակիսի երթի պատմութիւնը կամխէր քան զՏրդատայն և Գրիգորիմ, այս բանիս պատճառմ արդէն 'ի վեր ամկր ցուցինք Եանբրիսի վկայութեամբը. իսկ առ Ազաթամզեղ ընդհակառակմ՝ յետոյ ուրեմն եղած կը պատմուին: Բ. Այդ զոյգ պարբերութիւնքմ՝ իբրև միջանկեալ հատուածներ կեցած են Գրիգորի պատմութեանը մէջ. և այս ամտի իսկ յայտ է, զի սոցա մախըմթաց պարբերութեան մէջ Գրիգորի վերայ կը խօսուի, յասելմ. « Եւ Մեծմ Գրիգոր էառ շրջել ընդ աշակերտեայտն ». այսպէս է մաս ամսիջնապէս յաշորդ պարբերութիւնն. « Ապա յետ այսպիսի գործոյ սկսեալ երանելոյն Գրիգորի », իբր թէ լինէր շարունակութիւն յիշուած տեղւոյն: Գ. Այս ժողովոյն զխաւոր նպատակն էր հաստատել ընդդէմ՝ Արիստի մարդադասամի՝ զճմարիտ Աստուածութիւնն և զհասագոյակցութիւն Բանիմ ընդ հօր և Սուրբ Հոգւոյն. իսկ հեղինակ հատուածոցս՝ հերետիկոսականներն ամուռն իսպառլած է, և ՅԺԸ հայրապետաց որոշորութեան գլխաւոր կէտն իսկ հետեւեալ ընդհանուր բացատրութեամբ կ'արտայայտէ. « Ուր ամն մայն տիեզերաց կարգեցաւ ընդունելութեան ասանդութեան հաւատք »: Արդ, այս երևոյթս կը ցուցնէ, թէ մա այնպիսի ժամանակի մէջ կ'սարէր, յորում այս երկու բաներս այլ ծանօթ էին ամնուն. այսինքն թէ գիտէին, թէ որում դէմ եղաւ այդ ժողովն և թէ իմջ որոշուեցաւ ամդ, ուստի հարկ չի կար յատուկ բացատրութեանց: Դ. Անունս ~~Ռիստակէս~~ (Ρ'στάκης), ինչպէս քաջ կը ծանուցանէ Լազարդ, խառնածին ձև մի է. որովհետև թէ՛ առ Հայս և թէ՛

առ Յոյնս՝ Ռէով գրուած ամուռ չկայ, այլ ասորերէն լեզուի՝ ¹ մէջ միայն գոյութիւն ունի. և ասոր ապացոյց կը տեսնենք, որ թէ Ա. զաթանգեղոսի յունարէն թարգմանութեամ և թէ Գրիգորի Բնօրոյ Վատիկանեան յունարէն ձեռագիր օրինակաց մէջ՝ Ἀρωστακχοϋ դարձուած է. այսպէս և առ Փաւստոսի և թարգմանաց՝ Արիստա-

կէս եղած: Արդ, 'Ար (Ար) կը մեկնուի յը = յը՝ սխալ ըմբերգ. մամբը և կամ ասորի բնագրով մի: Ուստի հաւանական է, որ Նիկիոյ ժողովական Հարց ասորերէն ցուցակէն ուղղակի առնուած լինի այն, ուր ստուգիւ այն ձևով գրուած է, և թարգմանիցն ստիւպուած է ք գիրն զետեղել ասորերէն բաղաձայնից մէջ, մոցա խըստութիւնը մեղմացման համար՝ ի հայ լսելիս: Ե. Յէջն 656 և 657 երկիցս **Արիստակոս** վերադիրը կը տրուի Գրիգորի, մինչդեռ բոլոր գործոյն մէջ կամ **Արիստակոս**, կամ մեծ **Արիստակոս** և կամ **Քառասոր** տիտղոսներով կը կոչուի նա: Յունական ամուռն **καθοδικος** (ըմբամբական) հաւամբէն ՚ի Ե դարէն և այսր եղև գործածական ՚ի Հայս: Առ Փաւստոսի ևս միանգամ ՚ի վար արկեալ կը տեսնենք. սակայն այն տեղին միջանկեալ մի բան է. երկրորդ, եթէ հարազատ ևս համարինք զայն, կարելի է ասել, թէ թարգմանութեան ձեռքով մերմուծուած լինի ամբողջ փոխանակ արքեպիսկոպոսի:

2. Յէջ 657 յետ ծանուցանելոյ, թէ Արիստակոս բերաւ զկանոնս Ս. ժողովոյն առ Գրիգոր, ամբէն կը յաւելու, թէ « Սրբոյն Գրիգորի ՚ի մոյն լուսատրական կանոնս յաւելու, առեալ զիւր վիճակն ... լուսատրէր »: Դիտելու է, որ աստ առանց որոշ թուոյ կը յիշուին միկիական կանոններն, ամորոշ թողուած են մոյնպէս Գրիգորէն յաւելեալ կանոններն: Արդ, այսպիսի երևոյթ մի չէ կարելի ըմծալ յել այն ժամանակամիջոցին ապրող և այնպիսի կանոնաց ակամա տես երող գրի մի, այլ յետնագուծի ուրումն ժամանակաւ, որ թէ Նիկիոյ և թէ լուսատրեան կանոնաց՝ մի մասին միայն ծանօթ լինելով, կը տարակուսէր ամբողջին որքանութեամբ վերայ, ինչպէս մենք կը տարակուսինք այսօր: Ի Մովսիսէ Խորենացոյ, Բ. գլ. 7, կ'ի մամարք, թէ « Քսամ կանոնեալ զիսովք ժողովոյն զայ համղիպի (Արիստակէս) հօրն և արքային ՚ի Վաղարշապատ քաղաքի ». և այս քաջ կը միաբանի արտաքին յիշատակարանաց: Սակայն Գրիգորի կանոնաց մասին՝ Մովսէս ինքնին մոյնպէս կը թուի անգիտաւ, զի մամարքան բացատրութեամբ մի կ'անցնի, յասելմ. « Ընդ որ ուրախացեալ սրբոյն Գրիգորի, զուխս յինքննէ ՚ի կանոնս ժողովոյն յաւելու »: Ի կանոնագիրս ² կը գտնուին երեսուն

1. Յիրվոյն սորա յայտնի օրինակ է առ Ս. Եփրեմի, Մեկն Աւետ. համարբառ, յէջ 17, ամուռն ինքեայ, որ և Ռեքեկայ, այսինքն է Ռ = Բ: 2. Տես « Հաւաքումն Հ. Եփրեմ Վ. Սեթեան », բաղաձայնութեամբ չորս զբաղակիր օրինակաց, յէջն 63, ըայց տակաւին կը մնան ամտիպ ՚ի ձեռագրատար Ս. Ղազարոս: Լուսատրեայ վերագրուած այս կանոններն թէպէտև Նիկիոյ առաջնական և ամբողջ ծանօթ կանոններէն կը տարբերին, սակայն ճշտ երկրորդական կոչուած կանոններում քաջ կը

Կամոնք՝ յամուսն « Ս. Գրիգորի Առաքելոյն Հայոց » վերնագրով: Այս Կամոններս ստուգիւ եթէ Գրիգորի լեզու էիմ, կարելի էր այնուհետեւ ըսել, թէ իմն միայն կամոնք յաւելցուած են ՚ի Գրիգորէ: Սակայն այդ կամոններն անհարազատութեան տիպ ունին. մախ զի ոմանք՝ մի տող և այլք՝ երկու թէ շատ երեք տողերէ բաղկացած, ցամաք և մթին բամեր են, այնպէս որ Նիկիոյ ժողովոյն առաջնական կամոնաց և ոչ իսկ կմախք կարեն համարուիլ՝ թող թէ լուսաբանութիւն: Երկրորդ, Նիկիոյ ժողովոյն սոյն կամոններն քսամիւ չափ առհասարակ գրեթէ եկեղեցական բարեկարգութեանց համար են. իսկ լուսաւորչեան կամոններն, ընդհակառակն, ժողովրդեան բարոյականի մասին են, հազիւ թէ երկու կամ երեք հատ միայն կը գտնուիմ քահանայից պատկանող: Ուստի ես համոզեալ եմ, թէ Սրբոյն Սահակայ մեզի հասած կամոններն՝ 1 են Ազաթամզեղոսէն և Մովսիսէն յիշուած Գրիգորի յաւելեալ կամոններն, յորս Ս. Սահակ ինքնին թարգմանած ժամանակ՝ իւր ժամանակի պահանջմանց համեմատ մորամոր բացատրութիւններ մերմուծեց. և երրորդ՝ զլուսն՝ որում վերնագիրն է. « Նորին (Սահակայ) ին սրբոյն պարս և եպիսկոպոսոսոսոս նել զընտանեա սորբ Եկեղեցոս », բոլորովիմ յաւելուած է ՚ի Ս. Սահակայ: Եւ իմ այս համոզմանս իբրև ամօխտեղի հաւաստիք կը համարիմ ՚ի վերջկոյս Բ զլսում գրուած այս հարազատ յիշատակարանս. « Այս Սահանամարութիւն կարգաց գրեցաւ հրամանաւ սրբոյն Սահակայ մեծ հայրապետին Հայաստան աշխարհի. ընկու լեալ ՚ի բազմաբանին ՚ի տեառնէն Գրիգորէ խորհրդանշան տրոյն ՚ի յոսնէ ՚ի հոյս », և այլն: Ե. Ս. Գրիգոր բոլոր Հայաստանեայց համար այնպիսի խիստ և պատժական կամոններ դրած ժամանակ՝ ՚ի հարկէ պէտք էր՝ որ եկեղեցական ժողով մի զումարած լինէր, և իրօք զումարեց ՚ի Վաղարշապատ, ըստ վկայութեան յետին ժամանակի պատմագրաց մերոց. իսկ հեղինակ հատուածիս՝ այնպիսի ղեկութեան մի զոյութիւնն իսկ իսպառ լրած է, որ ըստ ինքեան թէ Գրիգորի և թէ Հայաստանեայց եկեղեցական պատմութեան մէջ պէտք էր՝ որ իւր յատուկ տեղին գրուած լինէր: Արդ, այս կէտս իսկ կը ցուցնէ, թէ սոյն տողեր գրողն՝ Գրիգոր տեսած չէր, այլ և ոչ իսկ ակամատես եղած էր Մերութանայ ձեռքով աւերեալ Հայաստանին, յորում ժամանակի այրուած լինելով ուրիշ գրուածոց հետ մաս եկեղեցական և արքունական յիշատակագիրքը, մա չկարաց

համաձայնին, որոնք մոյմպէս ամենահամառօտ են և բարոյական միւթեր կը մերկայացնեն մեզ: Բայց զիտմալու է, որ սոցա հարազատութիւնն ևս տարակուսական է:

1. Առաջին զլուսն, որում վերնագիրն է. « Կամոնք Ս. Սահակայ, Յաղագս քորեպիսկոպոսոսոս, թէ սրպէս պարտ է զկամոնական գկարգ հաստատում պահել յեկեղեցիս Աստուծոյ », կը պարունակէ թո՛ւ կամոններ: Իսկ երկրորդ զլսում վերնագիրն է այսպէս. « Նորին կարգ քահանայից առ ժողովրդականս, և մոցում ժողովրդականաց հնազանդութիւն և կարգ ուղղութեան առ քահանայս », և կը պարունակէ հո՛ւ կամոն:

ըստ ամենայնի իրազէտ լինել Գրիգորի ժամանակ կատարուած ամենայն իրաց, ինչպէս նաև վերոյիշեալ կանոնաց և գումարեւոյ ժողովոյմ: Ըստ աւանդելոյն Մովսիսի, Գրիգոր և Տրդատ խոստովանութեան թուղթ ևս դրկեցին ընդ Արիստակեայ 'ի Ս. Ժողովմ Նիկիոյ. այս բանս իսկ անյիշատակ թողուած է առ Ազաթանգեղ, որ ամհասկնալի է ժամանակագիր քարտուղարի մի համար:

Գալով Ազաթանգեղայ գրոց Վերջաճին՝ դիտելու է, որ բառ առ բառ նոյն է ընդ վերջաբանին Կորեան: Յէջ 662 հետևեալ երկու կէտերը դիտողութեան արժանի են, այսինքն է, մախ կ'հմթադրուի թագաւորին ողջութիւնն, առ որ կ'ուղղէ հեղինակն վերջաբանովս իւր գրուածքն, ասելով. « Որք ոչ մեզ միայնոյ թագաւորաց (ըստ յունարէնին, ո՛վ թագաւոր »), այլ յորժամ ~~+~~ ~~խ~~ ~~առ~~ ~~վէ~~ ըզմատեանը ըմթեմուցում »: Բ. ~~Հանգոցեալ սրբոց հորժերն~~, ասելով. « Համզի ~~խ~~ ~~իսկ հանգոցեալ դաճնայն սրբերունն~~ 'ի սրբոց ~~հիւսիս~~՝ զիւրաքանչիւրն ~~նշանակել~~ »: Արդ սրբոց յոգնակի դիմօք բացատրութիւնս, եթէ Գրիգորի վերաբերեմք, ուղղակի կը հակառակի 660 իջի հատուածին, յորում հեղինակն եզակի դիմօք խօսելով Գրիգորէ՝ կը կնքէ նորա կենաց և գործոց վերջաբանն այսպէս. « Արդ, այսու օրինակաւ զամենայն աւուրս կենաց առաքելական առաքելագործ վարեալ ... ~~միշտ~~ 'ի վերջնս կորսորձին՝ զայս առնէր, ամ յամէ թաղեալ 'ի սէրն Քրիստոսի »: Իսկ եթէ Հռիփսիմեանց համար զընտրուած համարիմք, այս բոլորովին անյարմար և անյարիւր է միւթոյն. որովհետև մոցա մահատակութեան և գործոց մոխ պատմութիւնն՝ արդէն իսկ յԱ մասին մէջ և 'ի Յառաջաբանին լիովին աւարտեց. ուստի աւելորդ էր, որ 'ի վերջկոյս Տրդատայ և Գրիգորի պատմութեանը՝ մորէն խօսքը մոցա վերայ դարձնէր: Բաց աստի՛ նոյնպէս 'ի սուրբ Գրոց մէջ ընրուած հարց և որդւոց օրինակներն իսկ, կարծէք, թէ աւելի ուրիշ ծնողս և վարդապետս կ'ակնարկեն, « որոց ծնունդք աշակերտելոց էին յազգս ազգաց », քան թէ զՀռիփսիմեանս: Այս մտանտիպ վերջաբանս, որքան քաջայարմար կը տեսնուի Ս. Մեսրոպոյ պատմութեան հետև, նոյնքան ևս անյարմար է առ Ազաթանգեղ. որովհետև առ վերջինս՝ պարզապէս կրկնութիւն է Յառաջաբանին, առանց նորութեան. իսկ առ առաջինն՝ է սեփական կնիք պատմութեան սրբոց վարդապետացն, և յառաջաբանի մի պակասը կը լրացնէ, տալով այն տեղեկութիւնքը, որք հարկաւոր էին առ 'ի ցուցանել մեզ յետագայիցս, ինչպէս նաև ժամանակակցաց՝ իւր գրութեան բուն շարժառիթը, նպատակն և պարագամերն: Ուստի ամենայն հաւանականութեամբ կարելի է եզրակացնել, թէ Ազաթանգեղայ վերջաբանը Յառաջաբանին մի մասն է, և թէ Յառաջաբանն իսկ է արգասիք գրչին Կորեան: Եւ յիրաւի, այս բացատրութիւնս իսկ. « Ձէարհանդուրժող (այսինքն է չկարէաք) զամենայն արարեալսն ~~հիւսիս~~՝ ~~նշանակել~~ » (այսինքն է գիտնալով գրել) կը ցուցնէ, թէ հեղինակ վերջաբանիս և նորա նախըմթաց բազմաթիւ հատուածոցը՝ Կորիւն եղած է և ոչ այլ ոք, որ ժամանակաւ հետի գտլով՝ կ'անզխտամար

Գրիգորի և Տրդատայ գործոց շատերն . արդարև երբ մա կը խօսուտովանի այս բանս՝ մենք իրատուք չումինք այլ ազգ պնդել . մա մաւանդ եթէ յիշեմք վերստին ցայս վայր պատմուած և քմնութեամ առնուած իրաց տիպն և համգամանքներն : Սակայն ուղղակի Կորեամ իսկ ընծայելով այդ մասը , դարձեալ կ'ըսեմ , թէ այն ժամանակէն 'ի վեր մերմուծած էր մա զայստսիկ Ագաթամզեղայ գրոց մէջ , երբ դեռ Ս . Մեսրոպայ Պատմութիւնը գրելու ձեռք զարկած չէր . և թէ վերջինը գրած ժամանակ իւր առաջագոյն գրած մերէն քաղուածմներ ըրաւ , սակա պէսպէս պատճառաց՝ զորս այլ ուր ծանուցիմք :

ԳՒՈՒԽ ԺԴ .

Վերջնական հայեացք և ելքուցումներն ընդհանուր բնութեան Գրոցն Ագաթամզեղայ . — Չորս իբրևի տարբեր աղբեր և նոցա առանձնայարտութեանք . — Յոցայի երեց տարբեր հեղինակութեանց . — Գլխի կամ Պարտութեան Գրքերի և նոցա նշանակութեանն . — Պարտութեան Աղբերանեաց . — Բարբոսան Առջին և նոցա Հայոց պարտութեան ժէլ իտղացած դերը . — Ագաթամզեղայեան աղանախութեանն և Ղ . Փարսեցի . — Սխան Ապարանեցին և ժն աչայարացած գրութեանն . — Կրկն խօսքութեանք գրոցն Ագաթամզեղայ և նոցա առանձնայարտութեանք :

Խորհրդաւոր մատենիս առամձին մասանց ըրորակամ քմնութեամ վերջի սահմանածայրն հասած ժամանակ , եթէ դառնանք մտօք և վերջին հայեացք մ'աւ ձգեմք պարզած կէտերուն և խնդրոց վերայ , յայտնապէս պիտի տեսնենք և իմանանք , թէ ստուգիւ յայլ և այլ աղբերաց կը յառաջագայիմ մորա աւանդածներն . ոչ թէ Տրդատայ քարտուղար հռովմայեցի Ագաթամզեղոսին հարազատ և սիւսպաղաղ գործ , այլ տարբեր ժամանակաց և պարագայից մէջ ապրող և գրող հեղինակութեանց խմբագրութիւն մի : Եւ յիրակի , Արտաւանայ մահուանէն՝ միմչև ցՍ . Ժողովն Նիկիոյ , այսինքն է յամէն 222 միմչև ցամ 325 , ուր 103 ամաց միջոց կայ . մանաւանդ եթէ 666 իշի համաձայն՝ միմչև ցմահն Գրիգորի ձգելու ըլլանք այդ գրութեան ժամանակը , որ եղաւ Տրդատայ թագաւորութեան 46 տարին , ըստ վկայութեան Խորենացոյ , կումենանք 110 տարուամ միջոց մի : Իսկ եթէ Վրթամիսի ձեռնադրութիւնն ևս 'ի մկասի առնուեք , որ եղաւ 339ին , կումենանք 117 ամաց միջոց մի : Արդ , կարծեցեալ Ագաթամզեղոսը՝ մահապետաց երկարատև կենաց բաղդին ևս եթէ իրօք հաղորդ եղած լինէր , դարձեալ չէր կարող առնել զայս : Մատենիս Յառաջաբանին և Վերջաբանի գրողն կամ մերմուծողն , ոչ միայն երկիցս , այլ և երիցս և չորիցս իսկ եթէ հաս

տատէ, թէ « Ոչ եթէ 'ի հիմ համբաւուց տեղեկացեալ և մատնալ գրեալ զայս կարգեցաք, այլ որոց մեզէմ իսկ ակամատես կերպանաւ և առնմթիրակայ գործոցմ և լսողք շնորհապատում վարդապետութեամ և նոցիմ արքանեակք ըստ աւետարանական հրամանաց », դարձեալ չէ մարթ իրօք իսկ այնպէս եղած ըմբռնել. որովհետև մա ոչ Արտասամայ, Արտաշրի և Խոսրովու գործոց, ոչ Տրդատայ և Գրիգորի մամկութեամ և ոչ ալ Վրթամիսի ձեռնադրութեանը կարող էր ակամատես լինել. զի առաջնոց ժամանակնա դեռ 'ի Հայս եկած չէր, իսկ վերջնոյս ձեռնադրութեամ ժամանակ (339) 'ի կեանս չէր: Երկրորդ, այդ գրոց մէջ պատմուած շատ բաներ՝ կարծեցեալ Ագաթանգեղոսի ժամանակ կատարուած չեն, իսկ կատարուածներն ոմանք այլ ստոյգ չեն, այլ այլընդայլոյ բաներ: Եթէ անցեալ դարուց տոհմայիմ մատնագիրք բարեմտութեամբ գոչեն 'ի սի, թէ Ագաթանգեղայ գիրքը՝ ծայրէ 'ի ծայր Տրդատայ քարտուղարը գրեց, դարձեալ ես չախտի կասիմ զոյգ ըմբնշնարտութեամ բողոքել այսպիսի ամսեղութեանց դէմ: Այո, կը բողոքեմ նոյմ իսկ այդ երկասիրութեամ մէջ բովանդակուած տարբեր երամգով և հոգով գրուած իրերմ, զորս ցայս վայր եկակոչ առնելով խօսեցուցի. կը բողոքեմ ակն յայտնի հակասութիւնք տեղեաց, այլազան տիպք և յկարգազիրք պատմական և աշխարհազրական տեղեաց. կը բողոքեմ կցկտուր վէպք և արարուածք 'ի ներքս մուծեալք, որք բռնագրօսիկ կերպով իրարու քով բերուած և ձեռք ձեռքի տուած կ'երևին. միով բանիւ, կը բողոքէ և բովանդակ ըմթացք գործոյմ, ոչ ըստ քմաց խմբագրողաց մերթ յառաջ մղուած է և մերթ ամյաշող ելիք յետս մահամշած, Դ դարում վերջերը ծակողոյ յոյմ հեղինակներէն, որպիսի են Մեծն Բարսեղ և Եւսեբիոս, և այլն և այլն քարուած հատուածներմ և գրութեամ խեղճ կողմերը պատսպարելու նպատակաւ:

Արդ, դիտելով քաջ այս և բոլոր այմ հակապատկեր եղելութիւնքը, զորս մի առ մի հարկադրուեցայ քմնել յէջ գործոյս, այժմ կը վստահիմ եզրակացմնել այսպէս, թէ առանց մկատելու Գրիգորի կարծեցեալ ըմբարձակ վարդապետութիւնը, մնացած երկու գիրքը պէտք է, որ 'ի չորից հեղինակութեանց բաղկացած լինին. Ա. Պատմութիւն կամ Կենսագրութիւն Գրիգորի: Բ. Պատմութիւն Մեծն Խոսրովու և Տրդատայ: Գ. Վկայաբանութիւն արքայ Հռիփսիմեանց: Դ. Հարակիցք հարստած իմբագրի գրոց:

Առաջինմ է տիրապէս և ստուգապատում պատմութիւն, ըստ նշագոյմ նշանակութեամ բառիս, վասն զի կը պատմէ մեզ Գրիգորի անգագատոհմը, մանկութիւնմ, անցուցած աշխարհիկ կեանքմ, կրած չարարանքներմ և բոլոր կենաց գործերմ, մանրամասն պարագաներով և անընդհատ շարապարութեամբ, որոնք թէ՛ արտաքին և թէ՛ տոհմայիմ յիշատակարանօք հաստատուած ստոյգ եղելութիւնք են գէթ ըստ էական մասանցմ. լաւագոյն և հմազոյմ յարբերաց հանեալ, յորս զգալի կերպով կը տեսնուին յոյմ և ասորի բմագրութեամ հետքեր, թէ և ուրեք ուրեք մերթ կենսագրիմ առաւել

լահաւատ մկարագրութեամբք և մերթ ալ խմբագրիմ եկամուտ հաւտուածներով՝ վիպասանական գոյներ առած կը տեսնուիմ և զոգցես իմմ համեմատութեամբք Ե դարու տիպ զգեցած :

Յիրաւի ասորերէնք բնագրի մի առհասարակ կարեմ համարիլ, բաց 'ի Գ. Լազարէնք քմմուած յատուկ ամուսնց, մաս հետևեալ օտարաբանութիւնք և բացատրութիւնք, որք Ե դարու ինքնագիր երկասիրութեանց մէջ գործածուած չեմ և կամ խիստ քիչ, և այմ մասամբ ասորերեմի և մասամբ ալ յումարեմի ազլեցութեան մերքև : Յէջ 39 կ'ըսուի . « Ամորուտ ուրեմմ իբրդեայ եղին իբրայն որ Եղին » - յէջ 41 « Եւ ոչ թողիմ յերիտասարդաց մեղև յայն » որ բնաազալ և զահեակ ոչ գիրք » . - յէջ 52 « Այլ յարարչէմ որչ եմ ստացուածք իբ » . - յէջ 54 « Այլ զոր դու կոչես մեծ Ամահիտ տիկիմ, լեալ էջին արբեօտ մարդիկ ոտ յայնժամ երբեմն ժամանակ » . - յէջ 55 « Խնդրեցայ զվեթ ամեմայմ ամպարշտութեան ամաչառ դատաստանմ արտաբանութեամբ պահանջել յամենեցուն » : - յէջ 59, « Որ առ մա դու ոչ մարթայցէք մերծեմալ » . - յէջ 60, « Չորոց դու առեալ նոցա զպատիմ ունկէտ կարդաս արարիչ » . - յէջ 62, « Չորտ չարագոյն անցք անցամիցեմ ըմդ քեզ » . - յէջ 65, « Կախել նոցա բեռիմմ ծանրութեան ամեմայմ ընդդիմակ » . - յէջ 69, « Որք վանն որչ զայս արարիլ յարչարանօք մեռան » . - « Նեղիլ և ինչեմիմ նոտա տկարացան » . - « Որ վանն որչ ընդ յարոցեալ 'ի վերայ իմ պարբերալ ոչ երկիցէ սիրտ իմ, ընդ յարոցեալ 'ի վերայ իմ ճակարատար » 'ի քեզ եմ յուսացեալ » . - յէջ 71, « Որ վանն զի սիրեցիմ մարդիկ պաշտել զպատկերս » . - յէջ 73, « Որչ ոչ գուցեմ բանք յամդիմանութեան 'ի բերան իբրեմ » . - « Ելեալ 'ի բարձրաանդակ խաչմ իբրև 'ի վերայ բարձր դիմակ էլեալ » . - յէջ 81, « Որ կանօտ քովք փոփոխի 'ի կերպարանս որպէս կանօտ հրամայեցիմ լիմեկ » . - յէջ 82, « Որոց փառաւորեալ եմ մարք իբրեան » . - յէջ 83, « Որ դու միայմ կարող ես թողուլ զմեզ » . - « Որ սովոր ես յարգել, յուրեմն զանիւնն յեմն ածել և յուրեմն 'ի վերաբանն արարածոց » . - յէջ 156, « Որոց ասացեալ և նոցա զայս » . - յէջ 84, « Չեցա մարմն մարդութեան վերայ և մկարեաց տպաւորեաց զամծմ իւր 'ի ստեղծուած ձեռաց իւրոց, զի զբեցիլ զմարմն մարդային » . - յէջ 100, « Ինչ ոչ է քայլն զայնմանէ, ինչ ոչ է պէտ զայնմանէ » . - յէջ 105, « Հրաման ես հրովարտակ առնել, հրաման հանեալ օրիմակ զայս » :

Արդ, երբ ասորերեմէ եղած և Ս. Գրոց թարգմանութեանց մէջ միայմ կը գտնենք յարաբերական դերանուանց ըմդ եմթակայիմ 'ի մեմն բարձրանութեան և կրկնաբանութեան յեբրէ, այլ ևս տարակուսելու պատճառ չիկայ, թէ մէջ բերուած օրիմակներմ սեմակամ լեզուի հետքեր եմ ստուգիլ : Այսպիսի մի եղելութեան համոզուելու համար, անկողը թող չհամարուի՝ մէջ բերել Ս. Եփրեմի Համաբարբառ Աւետարանաց Մեմնութեան համեման օրիմակներս : Յէջ 6, « Ջի խորհուրդ Աստուծոյ Քրիստոս է, որ նովա յայտնեցան անեմայմ ծածկեալ » . - յէջ 18, « Բողոքեցէ զաւազամմ յարմարեաց անտի Յեսսեայ, Բողոքեցէ և ծաղկեցէ ծաղիկ յարմարեաց անտի նորա » . - յէջ

41, « Որպէս տաք իմքն, աւէ. Մի մնայցէ », և այլն. — յէջ 43, « Սոյնպէս և Գողիաթ սրբն սրով սատակէր զբազումս, նովն սրով եհատն Դակիթ զզլուկ մորա ».— « Զորքն սրով հեղձուցանէր Փարաւոն զմանկտիմ, նովնք հեղձաւ ».— յէջ 45, « Վան առաջին մօրմ որ ամիծաւ, վանս ոչորիկ մայրն երկրորդ օրհնեալ ».— յէջ 55, « Ետես, աւէ, Տէր մեր զհաւատս նոցա շայնայիկ ».— յէջ 58, « Արդարոց սիրտն նոցա սուրբ է ».— յէջ 66, « Եւ այնով որ կարծէիմ թէ ումիցիմ նոս ».— յէջ 240, « Որ բաւական եղև ընդարշախախտն մորա լրութեամ մարմնապէս ».— յէջ 250, « Որ կաղազոյմ իցեմ հաւտ արարտաւար արարտս ».— յէջ 256, « Զի մկարեմ մեզ զնս գործք մորա շարքիկն ».— « Զի կարող իցես շօշափել զնս զայն զձեռնիսն ».— « Բեզ երկրպագել յամենայմէ զէր մորա առ սակաւ է ».— յէջ 158, « Ոչ երկիրդ որ սպաւիմեցամ 'ի մա նոս' գոյ մուագեալ » :

Արդ, մասնաւոր կերպով դիտելու եմք, որ Ազանանգեղոսիմ մէջ բերուած այն օտարածն ոճերն և բացատրութիւնը՝ Ա գրքիմ մէջ միայն կը գտնուին, և 'ի մասնաւորի Գրիգորի Կենսագրութեան մէջ. իսկ Բ գրքիմ մէջ գրեթէ հազուադիւր եմ: Այս և դեռ ուրիշ երևոյթներ ինձ կարծել կու տամ, թէ Գրիգորի Կենսագրութեանը, որ վկայաբանութեամ ձև ունի, ուղղակի ասորի բնագրէ մի յառաջ եկած է, և Գրիգորի Գրքոց կամ Բ Գրքէն ամկախ էր 'ի սկզբան. բայց յետոյ առաջին կամ լաւ ևս յումարէմ հիմ խօսքագրութեան ժամանակ, որուն վերայ յետոյ պիտի խօսուի, միացած է. իսկ Բ գրքիմ կամ Հայաստանի Գրքի պատմութեամ՝ փոքրագոյն և էական մասը միայն յումարէմ խմբագրութեամ արդիւնք համարելի է. իսկ մեծագոյն մասը՝ Ե դարու առաջին կիսում կատարուած հայերէն խմբագրութեանն ընծայելի է: Այս եղելութեանս կը վկայեմ բաց յայլոց տեղեաց, որք յետմութեամ տիպ ունին, մասն Կորեան ընծայուած խիտ առ խիտ և հոծ հատուածներն և դարձուածք բանից:

Երկրորդը թէպէտև Ա գրոց մէջ ուրոյմ առանձին պատմութիւն կամ պատմութեան մի շարունակութիւն եղած կ'երևի, սակայն յամբողջութեան ամո՞ իրօք այնպէս չի մերկայանար. որովհետև այնպէս սերտիւ միացած է Գրիգորի Կենսագրութեան և մորա Գործոց պատմութեան հետ և ամոր ստորակարգուած, յորմ յայտնապէս կը տեսնուի, թէ վերջիմս է տիրող միւթմ. իսկ առաջնոյմ հատուկտիր հատուածներն այնպէս ըմկումած են մորա մէջ, ինչպէս շիթք՝ 'ի ծովում և կամ պատահումքն՝ յենթակայի: Յիրաւի, այս բանս ակներև կը ցուցանեն, բաց յայլոց, մասն Ա գրոց հետեւեալ երկու տեղիքը. այսինքն է մասն յէջ 41-42, ուր փախստեամբ 'ի կողմանս Յունաց կը սկսի Գրիգորի պատմութիւնը, ամսիշապէս քիչ ետքը մոյմ կերպով կը լինի և՛ Տրդատայ պատմութեան սկզբնատրութիւնը, բայց այնպիսի ժամանակագրական սխալով մի, որ յայտնապէս կը ցուցնէ, թէ այդ հատուածը չէ կարող Տրդատայ մի առանձին և ստուգապատում պատմութեան սկիզբն համարուի: Այս տեղոյս հեղինակը՝ Խոսրովայ որդւոյմ փախտստմ՝ Ամակայ որդւոյմ հետ զուգելով, ուզած է լոկ պատմական յարաբերութիւն

մի հաստատել, և ոչ թէ ժամանակակից դիպաց ճիշդ համոզվալու թիւմ․ որովհետև ինչպէս մախնաբար ըսուեցաւ, Արտաշրի ծնոքով թէ Հայաստանի գրաւումն և թէ արքայորդւոց կոտորածն և Տրդատայ փախուտը՝ յետ քանի մի ամսց հագիւ ուրեմն համոզիւեցաւ ըստ արտաքին պատմագրութեան: Բ. Յէջ 42—43 Բ պարբերութեան մէջ դարձեալ կը զուգընթացմամբ Տրդատ և Գրիգոր, երկաքանչիւրն ևս 'ի միմի ժամանակի կեան 'ի կողմանս Յունաց, երկաքանչիւրն յունարէն կ'ուսանին, իրարու կենցաղակից և բնակակից եղած կը պատմուին: և հուսկ ուրեմն երկաքանչիւրն 'ի միմի կը վերադառնան 'ի Հայս, մին հեթանոս և միւսն քրիստոնեայ: Այնպէս որ գոզցես իմն անմարթ է այս հաստատած բաժնել և Տրդատայ առանձին կենսագրութեան մի մասին վերագրել՝ առանց բաժնելոյ ինչ մի 'ի Պատմութենէ Գրիգորի, որոյ գոյութիւնն առանց երկրայութեան է: Գիտելու կէտ մի է և այս, զի Տրդատայ պատմութեան վերաբերեալ հաստատածները՝ լի են չափազանցութեամբ, երբեմն օտար 'ի ճշմարտութեմէ, հակառակ արտաքին պատմագրութեան և ժամանակագրութեան, և իրարու իսկ հակասական, զորս չէ կարելի ստուգիւ գործ համարել ժամանակակից յոյն հեղինակութեան մի: Ուստի իրաւամբ կարելի է ասել, թէ այն հաստատածոց մի մասը պարզապէս ազգային հիմ զրոյցներ և վէպեր են, որք այլընդայլոյ բանիւ Տրդատայ վերայ պատշաճեցուած են, և թէ մոցս հաւաքողն և պատշաճեցնողը ազգային ում միայն կարէր լինել և ժամանակաւ կարի բացական: Այս բանիս բացալայտ սպացոյց են հայկական աւանդութեանց և աշխարհագրական տեղեաց մասին ունեցած մեծ հմտութիւնը մէկ կողմէն, իսկ միւս կողմէն ալ արտաքին պատմութեան և աշխարհագրութեան մասին 'ի բազում տեղիս ցուցուցած հեղինակին տգիտութիւնն, և հակապատմական իւրաց յատաչբերութիւնքն՝ այլընդայլոյ յարաբերութիւններով: Արտաւանայ, Արտաշրի և Խոսրովու վերաբերեալ այն տասն գլուխները, որք յունարեմի մէջ միայն ամբողջապէս կը գտնուին, ուղղակի Պարսից դիւաններէն և կամ մոցս հիմ պատմագիրներէն անուանած պատմական և արժամանահաւատ յիշատակարաններ են, որովհետև Արտաշրիստայ մասին Ֆիրտուսի և այլ հմագոյն պատմիչք իսկ կը խօսին, Գուլմար ամուսնելով զնա այլաբանօրէն, ինչպէս այլուր ըսուեցաւ: Բայց թէ ինչո՞ւ այդ մասը կը պակասի հայերէն Ագաթանգեղոսի մէջ, և թէ ի՞նչպէս մերմուծուեցաւ յունարէն օրինակի մէջ, դժուարին է ստուգել: Ի նկատի ունելով պահլաիկ ամուսն Արտաշուկատ, որ բոլորովին օտար է վերջին ամուսնէն, կարելի է ասել, թէ յունարէն հիմ բնագրին մէջ ևս հաւանօրէն կը գտնուէր այդ մասն, անկախ 'ի մատենագրաց Պարսից. բայց հայերեմի թարգմանիչը այլակայն պատակներով դուրս է թողել՝ ուղղակի Խոսրովու և մորա որդւոյն պատմութեան անցնելու համար. և կամ թարգմանած էր, բայց յետոյ ուրեմն անյայտացաւ. առ այս ստուգիւ ոտից կոտլան համարելու ենք զՄ. Խորենացի, որուն, ինչպէս տեսանք, ծանօթ էին Արտաշրի և մորա սիրուհոյն պոռնկական

Յէջ 567. Հասանել ամեմեցում 'ի չափ կատարման հասակի հաւատեցմ քրիստոսի :

Յէջ 631. Յորժամ տկարաման, յայմժամ զօրացեալ լինիմ :

Յէջ 634. Արթում կացէք, յողթս կացէք, զի մի մտամիցէք 'ի փորձութիւն :

դարծո զմեզ, երևեցո զերեսս քո 'ի սեզ և կեցցուք :

Սաղմ. ՀԸ. 13. Մեք ժողովուրդք և խաշմ արօտի քո :

Եբր. ԺԲ. 6. Ձի զոր սիրէ Տէր՝ խրատէ, տամջէ զամեմայմ որդի զոր ըմդումի :

Եբր. Դ. 16. Մատիցուք այսու հետև համարձակութեամբ առաջի աթոռայ շնորհաց մորա, զի ըմկայցուք զողորմութիւն և զըտցուք շնորհս 'ի դէպ ժամանակի օգնականութեան :

Դամ. է. 27. Եւ արքայութիւն մորա արքայութիւն յաւիտեմ կամ և ամեմայմ իշխանութիւնք մնա ծառայեսցեմ :

Ա. Կրթ. Ա. 8. Ձի ճառ խաչիմ կորուսելոցմ յիմարութիւն է, այլ փրկելոցս զօրութիւն Աստուծոյ :

Բ. Կրթ. Ա. 7. Որպէս կցորդ եմ չարչարամացմ, մոյմպէս և մխիթարութեան :

Սաղմ. ԺԳ. 32. Որ հայի յերկիր և տայ դողալ ումա մերծի 'ի լերիմս, և ծխեսցիմ :

Կողս. Բ. 19. Ուստի ամեմայմ մարմին յօղիւք և խաղալեօք տարբերեալ և խառնեալ՝ անէ զանումն Աստուծոյ :

Եփս. Դ. 13. Միմչև հասցուք ամեմեքեան 'ի մի միաբանութիւն հաւատոց և գիտութեան Որդւոյն Աստուծոյ, յայր կատարեալ 'ի չափ հասակի կատարման քրիստոսի :

Բ. Կրթ. ԺԲ. 10. Ձի յորժամ տկարաման, յայմժամ զօրաման :

Ղուկ. ԻԲ. 46. Ձի մոջէք, արիք կացէք յաղթս՝ զի մի մտամիցէք 'ի փորձութիւն :

Յէջ 635. Հոգիմ 'ի թիկունս
հասամել ամմտումն հեծուլթեամբմ
բարեխոս զիտէ :

Յէջ 642. Փոխամակ հարց՝ ե
ղիցիմ որդիք կալ իշխամ 'ի վերայ
երկրի :

Հում. Ը. 26. Հոգիմ 'ի թիկունս
հասամէ տկարութեամս մերում
'ի հեծուլթիւնս ամմտուցս :

Սաղմ. ԽԳ. 17. Եւ փոխամակ
հարց քոց եղիցիմ որդիք քո : Կա
ցուացես զմոսա իշխամս ըմդ ա
մեմայմ երկիր :

Իսկ մնացած տեղիքմ՝ բառ առ բառ համաձայն են Ս. Գրոց մե
րովքեան թարգմանութեան. օրինակի աղագաւ էջ 60 եղած տեղիմ
=Սաղմ. ԺԳ. 5-6, էջ 64 = Եզեկ. Է. 17, էջ 67, = Կրթ. Բ. 9, էջ
69 = Սաղմ. ԻԶ. 2, էջ 76 = Մատթ. Ե. 45, էջ 77 = Մատթ. 1Գ. 20,
էջ 92 = Կորթ. ԺԵ. 42-43, էջ 128 = Մատթ. Ե. 16, էջ 152 =
Սաղմ. ԺԽԳ, 10, էջ 154 = Սաղմ. ԶԹ. 15, էջ 162 = Սաղմ. ԽԳ. 22,
էջ 174 = Եբր. ԺԱ. 8, էջ 177 = Սաղմ. Զ. 13, և էջ 633 = Գործ. Ա.
ուպ. Ա. 1 :

Արդ, եթէ ուրիշ պատճառներ ևս չլինէին, այս վերջիմ տեղեացս
կատարեալ համաձայնութիւնը՝ կը ցուցնէ, թէ մերովքեան նշանա
զրոց զիտէմ և Ս. Գրոց թարգմանութեմէ վերջ մտած են ամոնք
Ազաթամզեղայ զրոց մէջ : Իսկ ամհամաձայն տեղեաց մասիմ երեք
եմթաղրութիւն կարեկի է ըմել. այսինքն, է Ա. կամ այն է թէ բոլոր
այդ տեղերմ ևս, ըստ իմքեան մկատելով, մերովքեան թարգմանու
թեմէմ առնուած են և պէտք էին համաձայն լինել, ըստ որովհետև
Ազաթամզեղայ զրոց հեղինակը զամոնք Գրիգորի և Հովսիսիմեանց
բերանը ղմելով ուրիշ այլևայլ պարագայից և ամծանց վերաբերած
է, ուստի բնականապէս այսպիսի մի ամհամաձայնութիւն յառաջ
եկած է. կամ այն է, թէ Գրիգոր ազատաբար մէջ բերած էր զա
մոնք, ըստ որում իւր յիշողութեան մէջ ումէր. և կամ հուսկ ու
րեան ըսելու է, թէ վերոյիշեալ տեղերմ մի ուրիշ բնագրի համաձայն
առնուած և թարգմանուած են : Արդ առաջիմ եմթաղրութիւնմ այն
տեղերէմ ոմանց համար՝ յորս իբօք կը տեսնուին մէկ կողմէմ բա
ռեր, որք մերովքեան թարգմանութեան բառից հետ մղոյ են. իսկ
միւս կողմանէ ալ պարագաներ՝ որք ստուգիւ կը պահանջէին փոխել
այդ բառերմ և ըսյերու ժամանակներմ և ղէմքերը, մերթ մորանոր
իրաց յաւելուածներով և մերթ ալ յապարամար մէջ բերուած տե
ղեաց, կարեկի է նշմարիտ համարել : Իսկ մնացածներում մկատ
մամբ, որոնք պարզաբար և առանց ուրիշ իրաց և պարագայից
հետ լծորդելու մէջ բերուած են, և սակայն մեծապէս կը տարբերին
Ս. Գրոց թարգմանութեմէմ, ամբողջութեան կ'երևի ինծ և ամհասկա
մայի : Ուստի վերջիմ երկու եմթաղրութեանց զորմ ևս ըմբռնիմք,
այնու կը հաստատուի, թէ Ազաթամզեղայ հայերէմ օրինակմ մախ
կիմ և ամծանօթ յոյմ բնագրէ մի թարգմանուած է : Յիրաւի, մեմք
չենք զիտեր, թէ Ս. Գրոց մախկին թարգմանութիւնմ որքամ կա.

տարեալ էր, և թէ յուժարէմ ըմտիր բնագրէմ եղած երկրորդ թարգմանութիւնն իմչ աստիճան կը տարբերէր յառաջնոյն, վասն զի այս գեղեցիկ և յոյժ կարևոր միւթիս վերայ մինչև ցարդ դեռ ցամակացեալ ուսումնասիրութիւնք չեղամ յազգիս. սակայն և այնպէս շատ հաւամակամ կ'երևի ինձ, թէ Ս. Գրիգորի պատմութեամ մէջ թէ՛ ազատաբար և թէ՛ ճշրութեամբ մէջ բերուած տեղիքն կամ ասորբնէն և կամ մի ուրիշ յոյժ բնագրէ, որպիսի են Սիմաքոսի և Դէոդէ տոմի և այլն, փոխ առնուած ըլլան. և իրօք այսպիսի եղելութեամ մի ոտից կոտամ համարելու ենք Ս. Եփրեմի Հիմ և Ոոր կտակարանաց մեկնութիւնն, յորում ակմերն կը տեսնուին Եօթանասնից և Ասորի թարգմանութեանց տարբերութիւնքը: Իսկ այդ պատմագրութեան հայ թարգմանիչն (եթէ Ս. Գրոց մախկին թարգմանութեանէն անմիջապէս վերջ եղած համարինք և եթէ զկնի երկրորդին) վերոյիշեալ տեղերէն զոմանս Ս. Սահակայ և Մեսրոպայ թարգմանութեան յարմարաց, իսկ զայլ՝ զորս կամ մա ինքն չամղորդարծաւ, թէ Ս. Գրոցմէ փոխ առեալ տեղիք են, և կամ 'ի բնագրին յոյժ ազատաբար մէջ բերուած գտաւ, ուստի ամոնց հաւատարիմ մնալու համար՝ իւր յատուկ լեզուով փոխեց զմասս 'ի հայ բարբառ, ուրեք ուրեք իլին և իւր ժամանակին ըմտամի Ս. Գրոց թարգմանութեանէն բառեր 'ի վար արկանելով յայնս:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Զ .

Ագաթանգեղոյ խաբարոսն և խաբարոսն ինքիչն. — Պարոնեանի կարծիքն և նորա աշխարհարոսն իննն. — Ագաթանգեղոյ զբոց խաբարիքն և խաբարանիչ. — Ներսիս և աբրահիմ հասարի. — Ագաթանգեղոյ զբոց խաբարոսն և խաբարոսն յամանակաօրէնցն և պարտոյ. — Ագաթանգեղոյ և Գրիգորի զբոց խաբարոսն անբարոսն և հայկախոս բարոսն ԺԷ, յետ խաբարոսն Ս. Գրոց. — Նորա արժեքն և հզօր պարտոսն իննը րոհային յարեմաբոց վերայ:

Ազատագեղոյ բնագրի խմբոյն՝ ամոնչապէս կը յաշորդէ մորա թարգմանութեամ և խմբագրութեամ խմբիւրն: Այս երկու կէտերս և՛ մախրն թաց զվոյն մէջ ըսածներէս փոքր 'ի շատէ յայտմի եղաւ արդէմ. ուստի այսուհետև կը մնայ տեսնել, թէ ո՞րք եղան այդ բոց խմբագրութիւնն և թարգմանութիւն իրագործողներն, և թէ ի՞նչ պատեհաւ և ժամանակի մէջ իրագործեցին զայն: Եթէ կը յիշեն ըմբերցողք այն կէտը՝ որում վերայ ուզեցի մասնատր ու զարծնել մախրն թաց զխում մէջ. այսինքն թէ Կորիւմ ոչ միայն Ազատագեղոյ և Փաւստոսի վերագրեալ հասարակ տեղեաց մասին կը համաձայնի. այլ նոյն իսկ բառերու ըմտրութեամբ և զարծուածովք բանից. ես չեմ կարող առանց երկբայութեամ եզրակացնել աստի,

Թէ Մեսրոպայ վարուց և գործոց հեղինակմ՝ եղած ըլլայ բացարձակ թարգմանիչ և ծեռք խառնող Բուզանդացոյ երկասիրութեան մէջ, Թէպէտև մէկ կողմէն վերոյիշեալ մասնութիւնքն և միւս կողմանէ ալ Փաւստոսի պատմութեան երիցագոյն թարգմանութիւնը՝ կը թուիմ հաստատել, թէ զէթ մասնակցած ըլլայ այնմ Կորիւմ ուղղելով և յղկելով. որովհետև հեղինակս՝ ինչպէս Ազաթամզեղայ գրոց՝ այսպէս ևս Փաւստոսի տեղեաց առաջբերութեամբմ՝ յայտնապէս կը ցուցնէ, թէ իւր երկասիրութիւնն յօրինած ժամանակ՝ այն երկու գրուածքն ևս ունեցած է իւր դիմաց, ըստ հայերէն թարգմանութեան. և թէ Կորեան ժամանակակից ուրիշ թարգմանչաց գոյութիւնը՝ Թէպէտև առանց երկբայութեան է, բայց մենք իրաւունք չունինք մոցս՝ քան թէ Կորեան ըմտայել գայն, որուն մասնութիւնն իսկ բաւական և շոշափելի ապացոյց է ըստ ինքեան: Երկրորդ՝ այսպիսի պատեհաւ և պայմանաւ միայն կարէր յամծծ առնուլ Կորիւմ երեսն բամբաղ Բուզանդացում և լռել գլխովիմ մորա ամուսն: Իսկ մկատմամբ Ազաթամզեղայ գրոց թարգմանութեան իմ համոզումն այնքան հաստատում է և մեծ, որքան հաստատում կերպով և մեծապէս կը մնանի Ս. Մեսրոպայ Պատմութեան հեղինակին լեզուն և շարաքանութիւնը՝ Ս. Գրիգորի պատմութեան լեզուին և շարաքանութեանը: Բայց որովհետև Ազաթամզեղայ գրոց խմբագրութիւնն առ մուագմ յերկուց տարբեր բնագրոց կազմուած է, և զերրորդն ալ կը կազմէր Փաւստոսի երկասիրութիւնմ՝ իբրև շարունակութիւն իմն առաջնոյն, ուրեմն ըստ թոռոյ բնագրոց պէտք էր որ եղած լինէր և թիւ թարգմանչաց, որոնց գլխաւոր մպատակն էր՝ ըմկերասէր մեղուաց մնամ առանձին մի մի քան թարգմանելով՝ քովէ քով բերել ոճով և կարգաւ և մինչև իրենց ժամանակ համդիպած դիպաց և յեղափոխութեանց, կամ լաւ ևս Հայաստանի կատարեալ պատմութիւն մի ըմծայել ՚ի լոյս: Այս յաւերժայիշատակ թարգմանիչներէն մին պէտք է որ եղած լինի զեմիկ Կողբացի, զոր գովութեամբ կը յիշէ Կորիւմ՝ ասելով. « Գմաց ՚ի կողմանս Յունաց ՚ի Բիւզանդիոն ... թարգմանիչ եղեալ ըստ հելլենական լեզուին »: Սակայն դեռ արեւի մշամատր կերպով շեշտուած են հետագայ խօսքերը, թէ « Դևոմը և Կորիւմ երթեալք յարին յեմիկմ իբր առ ըմտանի և սմոդակից ... և անդէն ~~ժամանակ~~ ~~զորով~~ ~~պէտք~~ ~~է~~ ~~ինչպէս~~ ~~էնչպէս~~ ~~էնչպէս~~ »: Դիտելու ենք, որ Կորեան վերջի խօսքերովը՝ գլխովիմ այլ ինչ հասկամալի է, քան թէ Ս. Գրոց թարգմանութիւնն. որովհետև յետոյ ուրեմն կը ծամուցուի ՚ի յաջորդ պարբերութեան, թէ « Իսկ երամելեացն սրբոցն Սահակայ և Մեսրոպայ զեկեղեցական գրոց գումարութիւնն ~~կանխ~~ ՚ի յումարէն բարբառոյ ՚ի հայերէն թարգմանեալ ... Դարծեալ յետ այսորիկ առեալ համդեբծ եզմկաւ գյառաշագոյն գյամկարծագիտ զփութանակի թարգմանեալմ՝ հաստատել ճշմարիտ օրինակօքն բերելովք »:

Արդ, բաց ՚ի Կորեան այդ վկայութեանէն, որ զեզմակ և զԴևոմը իրեն ըմտանի, սմոդակից և գործակից կը համարի, կամ դարծեալ ուրիշ գրաւոր յիշատակարանք, որք զեզմակ ևս առնեն միմ գոր

ծակից 'ի մոյմ գործն մեծ և կարևոր: Յիրաւի, Պարիզու արքունական մատենադարանի ձեռագրի ¹ մի մէջ կայ համառօտ պատմութիւն մի յաջորդաց Ս. Գրիգորի Լուսաւորչի՝ մինչև ցոփիտաս կաթողիկոս, և 'ի ստորև պատմութեամ գրուած է այսպէս. « Եղիցի յիշատակ եզմակն 'ի թարգմանել զԳիրս »: Պարոմեան բամասէր վարդապետն այս յիշատակարանիս վերայ հաստատուած՝ բոլորովն մի մոր կարծիք յայտնեց ², զոր ապացուցանելն, ըստ իս, անկարելի է: Նորա կարծիքով իբր թէ հայերէն Ագաթանգեղոս՝ Եղարուս յումարէն բնագրէն թարգմանուած է՝ եզմկայ ուրումն Երէջո՝ ձեռքով, որ լեւա իցէ ատենադպիս Կոմիտաս կաթողիկոսին: Սակայն եզմակ անուանէն պարզապէս՝ եզմկայ Երիցու մի գոյութիւնն եմթողիկոսի այդ ժամանակամիջոցին՝ կանայական մի բան է: Արդ՝ եթէ կարծեցեալ եզմիկ Երիցու գոյութիւն 'ի թիւր դէպս ապացուցուած լիմէր, սակայն դարծեալ չէ և չէ մարթ ըմծայել մնա ըզհայերէն թարգմանութիւնն Ագաթանգեղայ, այնու զի հիմնգորդ դարու հեղինակաց քով իսկ, որպիսի են Ս. Սահակ, Կորիւն, Մովսէս և Ղազար, կը գտնուին այդ թարգմանութեմէն ամբողջական հատուածք բամից բառ առ բառ, զորս այլուր 'ի մէջ բերի մասամբ ինչ և կարելի էր մնացածն իսկ ածել 'ի համդիսի: Այս բանիս չգտնեմ թէ Պարոմեան ինչ մեկնութիւն կու տայ և ինչ հիման վերայ հաստատեալ: Բայց դիտելու ենք որ բաց 'ի այս յիշատակարանիս վերնագրէն, չիք այլ ուր յիշատակ եզմկայ Երիցու և քարտուղարի, ոչ առ մատենագիրս Եղարուս և ոչ իսկ առ յետիմս: Ես Պարիզու վերոյիշեալ ձեռագիրը տեսնելու բարձրն ունեցած չեմ. բայց մեր մատենադարանի մէջ գտնուող գրչագիրն, որ կը պարունակէ Ագաթանգեղայ Զ օրինակն, վերջաբանին այս խօսքերէս « Թէ դու ես Տէր Աստուած միւր », ամմիշապէս վերջ կը յարէ. « Նշանաբէր Կարգ Բանից Եղիւնն Երէջո, և այլն »:

Արդ, այս յիշատակարանիս մէջ մի առ մի թուելով մեր Արշակունի թագաւորաց ոմանց հետ՝ մաս կաթողիկոսաց յաջորդութիւնը կը հասցնէ մինչև ցՍ. Սահակ և ցգիւտ մշխարաց սրբոց Հովհաննիսն: աստի և ամդր յետագայ ձեռք մի՝ 'ի բաց թողով շարք մի կաթողիկոսաց, յաւելցուցել է միայն զԿոմիտաս կաթողիկոս՝ Հովհաննիսնաց մշխարաց երկրորդ զիւտին և կաթողիկէի վերաշինութեամ արարուածով: Սորան կը յաջորդէ ապա երրորդ ամծանօթ ձեռքէ մի գրուած. « Ժամանակ Կաթողիկոսաց Զայոց » ժամանակագրական ցուցակ մի, որ կը հասնի մինչև ցՍտեփանոս Բ: Արդ այս երեք յիշատակարաններս տարակոյս չկայ, թէ իրարմէ տարբեր երեք ժամանակաց մէջ գրուած են. այսինքն է առաջին մասը՝ գործ

1. Թիւ 50. 0: Այս ձեռագիրս՝ որոյ վերնագիրն է. « Ճառք և վարդապետութիւնք Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի վասն Հայոց », համդերծ վարդապետն մոյմ սրբոյն և այլ գործք որք վերաբերին առ այն, գրուած է 'ի թուին Հայոց 94 (1255) ըմտիր և միայար գրչութեամբ:

2. Տես V. Langlois, Coll. des Hist. de l'Arménie. p. 103. Note additionnelle.

է Ե. դարում. երկրորդը՝ է երրորդին. իսկ վերջինը՝ պէտք է որ Ժ դարում գրուած լինի. զի Ստեփանոս Բ՝ յամին 925 ընտրուեցաւ կաթողիկոս և 926 մեռաւ : Ուրեմմ ուշի ուշով քմննելով այս ձեռագիրս և Յ. Արսէն Բագրատունու ձեռքով պարիզեան ձեռագրէն ընդօրինակուած յիշատակարանն՝ որում վերայ է խօսքերմիս, յայտնի նշաններ կան, որք կը ցուցնեն, թէ այդ յիշատակարանն « Յետ Տրդատայ թագաւորեաց որդին իւր » բառերով սկսեալ մինչև « Եւ եղև այս 'ի յամն Աբղլի վամաց Երիցու սրոյ 'ի Վաղարշապատ քաղաքի » մասն՝ է կամ կարէ լինել Եզնկայ Կողբացոյ հարազատ ՚ գործ, զի Ս. Սահակաւ կը կնքէ զկարգա Կաթողիկոսացն Հայոց, և աստ դրուած էր գրոցն թարգմանչի կամ Եզնկայ անունը : Իսկ մնացած մասն՝ որ Կոմիտաս կաթողիկոսէն կը սկսի, յասեմ. « Մինչև յաւուրս Կոմիտասայ սրբոցն Հռիփսիմեանց սպասատրի », մինչև ցվերջ՝ է բանաքաղութիւն Սեբէոսի ԻԵ. զլխոյն վերջին իշում Կոմիտաս կաթողիկոսի ձեռքով Վաղարշապատու կաթողիկէի մորգութեան մասին տուած տեղեկութեանցը, զոր ոչ թէ է դարում՝ այլ Ժ դին մէջ ապրող մէկն առաւ և ընդլայնմամբ մերմուծեց անդ՝ որով և հարկադրուեցաւ Եզնկայ անունն իսկ փոխադրել 'ի ստորև յաւելուածին : Եւ յերաւի, այսպիսի մի եղելութեան յայտնի ապացոյց են, Ա. վերոյիշեալ յիշատակարանին վերայ յետոյ ուրեմմ յարմարցուած վերնագիրն, « Նշանգիր Կաթոց Բանչիս՝ է Եզնկայ Երեցու, թէ ուստի էին » և այլն, որ բնաւ չի յարմարիր ստորագրութեանն, յորում պարզապէս Եզնկ կը գրուի : Բ. 'ի վերջկոյս յիշատակարանին « Կաթողիկէ մորին Հռիփսիմէի վամաց երիցու », ունիտրական բացատրութիւն ևս՝ ոչ Ե դարու : Իսկ եթէ համարիցի որ յատուկ Ե դարում ապրող Երիցու, այդ իսկ բաւական է ցուցնել, թէ այդ խեղճ լեզուն ունեցող Երէցը բացարձակապէս չէր կրնար միանգամայն ունենալ Ազաթանգեղայ հրաշարան լեզուն և շարաբանութիւնն : Գ. Առաջին մասին մէջ՝ անընդհատ յաջորդութեամբ կը յիշուին զոյգ ընդ թագաւորաց մա և ամենայն կաթողիկոսունք Հայոց ցմեծմ Սահակ. իսկ երկրորդին մէջ ընդհակառակն, թողով մեծ խտրոց մի՝ ուղղակի Կոմիտասայ անցուած է և Կոմիտասով աւարտուած : Արդ՝ ոճոյ այս յամկարծական փոփոխութիւնս կը ցուցնէ, թէ ձեռք խառնող անծանօթ հեղինակին միակ կէտ և մպատակն էր, էջմիածնայ կաթողիկէի վերաշինութիւնն և Հռիփսիմեանց ոսկերաց կրկին յայտնութիւնը ծանուցանել՝ յարելով ընդ առաջնոյն, որ 'ի ժամանակս

1. Յիրաւի, զի խօսելով զմեկեմաս թագաւորէն մերմէ Վոսմշապիոյ՝ կ'ըսուի այսպէս. « Յետ Վոսմշապիոյ որ կողմանն Պարսից թագաւորեաց, ապա ամս հարուստս մարգպանք Պարսից կալան (գաշխարհս) մինչև առ մեզ : Իսկ ապա Արտաշէս որդի Վոսմշապիոյ թագաւորէ հրամանաւ Պարսից արքային. և ապա Մարգպանք պարսիկք կալան մինչև առ մեզ. առ որով Ասպուրակէս կաթողիկոս » : Արդ, « մինչև առ մեզ » խօսքերմ՝ միայն Եզնկայ Կողբացոյ բերանը հասկանալի բառ է. վասն զի Ե. դարում ոչ ևս Պարսիկ՝ այլ հայ մարգպաններ և արաբացի ոստիկաններ կը վարէին գաշխարհս մեր :

Ս. Սահակայ. այնպէս որ ականատեսն՝ ոչ եթէ մա ինքն եղած է, այլ Սեբէշոս: Ուստի աւելի հաւանական է զՍեբէշոս եղած համարել ատենմարպիւր Կոմիտաս կաթողիկոսին՝ քան զկարծեցեցեայն Նզմիկ Ն. ընց: Ուրեմն կը մնայ Նզմիկ կողքացի իբրև թարգմանիչ գրոցն Գրիգորի, եթէ այդ յիշատակարամը վաւերական համարիմք:

Կորեան և Նզմկայ երկասիրութիւնները բարդատելով ընդ Գրոցն Ագաթանգեղայ, այլ ևս չէ կարելի տարակուսել, թէ երկաքամչիւրն իսկ եղած են զխաւոր գործիչներ 'ի խմբագրել և 'ի թարգմանել զայն՝ ընդ ուղտութեամբ վարժապետիմ իւրեանց և մեծ սովեստեսիմ Մեսրոպայ, որուն յաւէտ յիշատակաց արժանի գործիմ վերայ՝ ուրիշ պատեհաւ պիտի խօսուի: Յիրակի, Կորեան խմբագիր լինելուն Ագաթանգեղայ գրոց զօրեղ ապացոյց են մորա ծառաշարքամը, վերջաբանն և այն բազմաթիւ նոյնաբան հատուածներն՝ որք կը գտնուին թէ 'ի Պատմութեան ամդ Գրիգորի և թէ 'ի Պատմութեան Ս. Մեսրոպայ, որոց մասին արդէն ընդարձակարար խօսուեցաւ: Իսկ թարգմանիչ լինելուն առհասարակաց են մախ խրթնութիւն կամ մթութիւն լեզուի, որ իբրև յատուկ իմն բնադրոշմ կը տեսնուի այդ զոյգ երկասիրութեանց վերայ և կ'որոշէ զամոնք Ն. դարուն միւս երկասիրութեանց մէջ: Բ. Յանախ կիրառութիւնք քաջակազմ և վայելչահիւս բարդութեանց, կորովի բանից և մասնաւոր յոճեցում, որք այդ երկասիրութիւններէն դուրս հագիւ ուրեմն կամ բմա չեն գտնուիր: Ուստի աւելորդ համարելով բոլոր այդ առանձնայատկութիւնները բերել 'ի մէջ, այլ և չեմ դանդաղիր եզրակացմել, թէ Ագաթանգեղայ զէթ վերջիմ գիրքը՝ հաստատ կերպով պէտք է որ Կորիւն թարգմանած և ընդարձակած լինի, որովհետև այդ մասին մէջ աւելի աչքի գարմող կերպով կը տեսնուին մանուկութիւնք: Իսկ Ա. Գրոց մէջ, ընդհակառակն, բայց 'ի մասնաւորի Գրիգորի համառօտ վարդապետութեան մէջ՝ կամ բազմաթիւ վարդապետական տեղիք և՛ դարձուածք բանից, որք Նզմկայ երկասիրութեան մէջ եղած տեղեանց և դարձուածոց հետ մեծ մանուկութիւն ունին: Օրինակի աղագաւ, Աստուածային էլ ութեան և կատարելութեանց, - բարի և չար հրեշտակաց, մոցա բնութեան և թրտոց, - ծառայն կենաց և պատուիրամագանցութեան, - Նախանկար օրինակաց և գալստեանի Որդայն Աստուծոյ, - երկմայիմ լուսաւորաց և բնական ազդմանց կենդանեանց, - բանին Աստուծոյ մարդակերպ երևնալուն առ մահապետս և մի քանի ուրիշ տեղեանց հաստուածքը՝ հասարակ են երկաքամչիւրին:

Արդ այս եղելութիւնս առանց երկբայութեան լինելով, ուրիշ կերպով չէ մարթ մեկնել. այլ կամ այն է թէ Նզմիկէն առաջ Ագաթանգեղայ գիրքը խմբագրուած էր և թարգմանուած 'ի ձեռն Կորեան և Նզմիկ յետոյ ուրեմն ամոր հետեւեցաւ ծառայական մասնորութեամբ. և կամ այն է, թէ մա ինքն ևս համարոյ Կորեան մախմարար Ագաթանգեղայ խմբագրութեան և այդ գրոց թարգմանութեանը գործակցելով, յետոյ ուրեմն իւր « Նոյն Աղանդոց » երկասիրութիւնը գրած ժամանակ՝ մախկին տեղիքն և դարձուածս բանից

ի կիր էարկ վերստին: Առաջին եմթադրութիւնն ինձ անհաւանա-
կամ կ'երևի, որովհետև եզմիկ միշտ կը յիշուի իբրև առաջին և քա-
շավարժ ՚ի թարգմանիչս և յամենայնի գործակից Սրբոցն Սահակայ
և Մեսրոպայ, ուստի անկէ ոչ երիցագոյն և ոչ իսկ անկի հեղինա-
կութիւն ունեցող թարգմանիչ ոք գոյր՝ բաց յերկուց աստի, որոց
կարող լինէր մա հետևել, մամաւանդ թէ մուրալ բանս: Ուստի կը
մնայ երկրորդն:

Յիրաւի, այս վերջին եմթադրութիւնս՝ կատարեալ հաստատու-
թիւն պիտի առնուր եզմկայ երկասիրութեամբն, եթէ մորա գրու-
թեան ժամանակամիջոցը ճիշդ և որիչ կերպով մշամակուած լինէր: Արդ որչափ որ մշամակուած չէ, սակայն յոյժ հաւանակամ է կար-
ծել, թէ կամ 425—431 միջոցին գրած լինի, երբ իրեն վարդապե-
տաց հրամանաւ դեգերեցաւ յեղեսիս և ՚ի Բիւզանդիոմ՝ առ ՚ի
թարգմանել զգիրս յԱսորոց և ՚ի յունէմ՝ ՚ի հայ քարբառ. և կամ
յամէն 441—445, երբ Յարկելոս Բի հրամանաւ սկսաւ ~~Երկուսն~~
կամ մոխրապաշտութեան կրօնքը տարածուիլ ՚ի Հայս և մոցա մէջ
ճարակ գտնել: Ստուգիւ այսպիսի մի եղելութեան առաջին ապա-
ցոյցը կու տայ մեզ եզմկայ վերոյիշեալ երկասիրութիւնն, որուն Ա,
Գ և Դ գրքերն՝ ըստ մեծի մասին թարգմանաբար քաղուածոք են
Ս. Նալիկամի ~~Յարգ~~ Հերշոյ գրքին և իմաստասիրացն Յունաց,
որոնց հետ ՚ի Միջագետս և կամ ՚ի կողմանս Յունաց եղած ժամա-
նակ՝ անկի առիթ ունէր ծանօթանալու քան ՚ի Հայս: Իսկ երկրորդ
ապացոյցը կ'ընծայէ մեզ յամին 449 Յովսեփայ մախազափութեամբ
յԱրտաշատ համախմբուած և առ Միհրմբերսն ուղղուած Հայոց
~~Պատրիարքին~~ առ Նղիշէի, յորում եզմկայ վերոյիշեալ երկասիրու-
թեանէն այլևայլ տեղիք մէջ բերուած են ըմդդէմ Գարսից: Արդ՝ այս
բանս ակններև կը ցուցնէ, թէ ոչ միայն այդ թուէն առաջ արդէն
գրուած և ամենուն ծանօթ էր եզմկայ երկասիրութիւնն, այլ թէ
զուցէ մոյմ ինքն եզմիկ շարագրած լինի մաս այն պատասխանական
թուղթին իբրև քաջ աստուածաբան և լեզուագէտ. որովհետև այդ
թղթի ոտներն և լեզուն իսկ եզմկայն բերէ զտիպ, քան Նղիշէի: Ու-
րեմն եզմկայ « եղծ Աղամդոց » երկասիրութիւնն իմչալէս առ Մի-
հրմբերսն գրուած թղթէն առաջ գրուած լինելով՝ կարաց ամոր
միւթ մատակարարել, այսպէս ևս Ազաթանգեղայ թարգմանութե-
նէն յետոյ գրուած լինելով՝ միայն կարող էր անտի տեղիս և դար-
ծուածս բամից փոխ առնուլ: Առ այս ուրեմն կը ճշմարտի Կորեան
վկայութիւնը, զոր ՚ի վեր ամդր ՚ի մէջ բերի, այսինքն թէ, եզմկայ ՚ի
Բիւզանդիոն եղած ժամանակ՝ Ղևոնդ և Կորիւն իսկ միաբանեալ ընդ
մեմ վճարեցին զհոգևոր պիտոյից խնդիրն, որով կը հասկցուին
թարգմանութիւնք պէսպէս գրոց Հարց, ամշուտ և մերոյ Լուսաւոր
չին, յըմթացս եօթմ ամաց, և ոչ թէ Ս. Գրոց կամ ժամերգութեան,
զորս մոցա բացակացութեան ժամանակ կատարեցին Ս. Սահակ և
Մեսրոպ, ըստ վկայութեան Կորեան: Եւ իբրք այս բանս քաջ կը
հաստատուի եզմկայ ամուսմբ ծանուցեալ այն պատուական յիշա-
տակարամիւն հետևեալ խօսքերով. « Եւ կարգք ~~Գարսից~~ Գրէդդէ

մորոզեալ արամբ միով երամեյեաւ Տարամացոյ՝ որում ամուռ Մասարովք ճամաչէր, որ էառ զծեռնադրութիւն երիցութեամ ՚ի մահմ Սահակայ կաթողիկոսէ ... Եւ մոցուս աշակերտք Ղևոնդ, Արծամ և Կորիւմ և Եզմիկ և ~~արքանեակ~~ մոցուն Լուսաւոր Կանդապեցի » :

Առաջին թարգմանչաց ծեռքով կատարուած Ազաթանգեղայ հալ յերէմ թարգմանութիւնը լինելով ճշմարտութիւն իմ առանց երկ ըայտութեամ, այժմ քմեքմեք մորա մերծատր պարագամերմ և ժա մամակմ յորում կատարուեցաւ այմ . որովհետև ճիշդ տարեթիւմ որոշելմ ամեմադժուարիմ է, այմու զի մախմի մատեմագիրք մեր որոշ բամ մի աւանդած չեմ: Արդ, Մ. Գրոց առաջին թարգմանութիւնը պէտք է, ըստ իս, դեմել իբրև չուակէտ կամ լաւ և եզր այս պիսի խուզարկութեամ, յորմէ և ամդր չէ մարթ ամցամել . որովհետև, ըստ վկայութեամ Կորեամ, զկմի գիւտի գրոց այս եղև ~~արքանեակ~~ և ~~արքանեակ~~ թարգմանութիւնը: Երկրորդ, ինչպէս կամխաւ տեսնուեցաւ, այդ թարգմանութեմէմ համաձայմ տեղիք մէջ բերուած եմ յԱզաթանգեղ: Զէ մարթ բնաւ Ե դարու վերջիմ կիսում կամ մօտ յամմ 480 եղած համարել Ազաթանգեղայ թարգ մանութիւնմ, որովհետև Մովսէս՝ որ իւր պատմութեամ գիրքմ այդ ժամանակամիջոցիմ գրեց, Ազաթանգեղուէմ ամբողջակամ . հա տուածմեր մէջ կը բերէ Խոսրովու, Ամակայ, Տրդատայ և Գրիգորի և այլմ մասիմ, բառ առ բառ . որով յայտմի կը լինի, թէ այդ ժա մամակէմ շատ առաջ կատարուած և ամեմում ծանօթ մի բամ էր: Կարելիք է արդեօք 445–450 ամիմ թարգմանութիւնմ համարել զայմ: Ոչ, որովհետև Կորիւմ, որ այդ ժամանակամիջոցիմ գրեց Մ. Մես րովքայ պատմութիւնը, Ազաթանգեղայ հասուածմերով կը ճոխա մայ, և իւր վարդապետիմ համամման գործերմ՝ այմու Գրիգորի գոր ծոց հետ կը զուգակշռէ: Ցամիմ 435 Մ. Սահակայ և Մեսրովքայ կողմէմ առ սուրբ հայրապետսմ Յունաց Պրովդ և Ակակ գրուած թղթոց մէջ՝ Ազաթանգեղայ 71–74 էջերէմ փոխ առմուած երկու հասուածմեր կամ խաչափայտիմ և Քրիստոսի մեռեալ պատկերի մասիմ, տեղ տեղ գրեթէ բառ առ բառ: Արդ այս երևոյթս կը ցուցը մէ գէթ, թէ Ազաթանգեղայ հայերէմ թարգմանութիւնմ այդ թուա կամէմ վերջ չէր կարող եղած լինել: Ուստի դեռ աւելի ըմդարձակել րով մեր հետազօտութեամ սահմանմերմ, ես չեմ տարակուսիր այլ և՛ ամկոնիել գրոցս թարգմանութեամ ժամանակմ 426–430 ա մաց պարունակի մէջ:

Եւ յիրաւի, այս բամս կը հաստատուի չորս հմազոյմ և վաւերա կամ յիշատակարամօք: Ա. Ըստ վկայութեամ Կորեամ, յամիմ 426 Մ. Սահակ Վաղարշապատու ժողովը գումարելով եկեղեցակամ բա ընկարգութեամց համար, հրաշալի ատեմարամութիւնմեր և այլ և այլ համերակամ թուղթեր գրեց առ եպիսկոպոստմն՝ դմելով առաջի պէսակէս կամոնս վլամ թորեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց և քահա մայից և ՚ի վերայ մուկրայ: Արդ այս կամոնմերուս մէջ՝ որդոց քրմաց առ Մ. Գրիգոր ըրած հարցմունքմ և Գրիգորի առ մոսա ուղ դեալ պատասխանիմ թէ. « Ծառայեցէք Աստուծոյ ճշմարտի և կեմ

դամուսյ » . այսպէս մահ Տրդատայ՝ առ մոսս ըրած պարզևաց և երախարհաց մասին հատուածներն՝ համաձայն են Ազաթամզեղայ 610 և 626 էջերում ասածդածին : Դսկ որովհետև այդ կամոնական թղթերէն վերջ դրուած յիշատակարամի ¹ վկայութեամ համաձայն՝ Գրիգորի գործոց յունարէն բնագրէն թարգմանուած էին . ուրեմն հետևութիւնն ինքնին յայտնի է : Բ. ~~Օրհնութեան~~ կարգաւորութեամ մէջ, որ կը գտնուի ² թէ՛ ՚ի գրչագիր մատենին ³ Վա տիկամու (թիւ 8), և թէ՛ ՚ի հմագիր ~~կարգաւոր~~ ուրեք զրատամ վա մացս և կ'ընծայուի Մովսիսի ատենադպրին ⁴ Ս. Սահակայ, կը ծա մուցանէ, Ա. թէ՛ յետ ՃԺԱ ամի (քարոզութեամ) Ս. Գրիգորի « եղև սկիզբն թարգմանութեամ ՚ի հայերէն լեզուս » . այսինքն է յամին 412. որովհետև ինչպէս այլուր տեսնուեցաւ, յամին 286 համոզի պեցաւ Գրիգորի մուտն ՚ի վիրասլ ըստ տոհմային պատմագրութեամ, և յետ 15 ամնաց այսինքն է, 301 ին ելքն ՚ի վիրասլէն և քարոզութիւնն : Բ. Ս. Սահակայ կաթողիկոսութիւնը կը ղնէ ճիշդ այս տարուոյս մէջ, այսինքն է յամն 412 : Գ. Կը ծամուցանէ, թէ Օրհնութիւնաբեր ցուցակի կարգաւորութիւնն սկսաւ յառաջին ամի կաթողիկոսութեամ Սահակայ և աւարտեցաւ յետ երեքտասան ամնաց . այսինքն է 413—426, յորում ամի եքեր, կ'ըսէ, Ղազար (կամ Ղազարիկ և կամ Եղիազար) ոմն զաղօթս և զօրհնութիւնս սրբոց Հարցմ Գր. Աստուածաբանի, Բարսղի, Եփրեմի և Կիւրղի, Յուստոսի և Թէոդորոսի, զորս թարգմանեցին Կորին Արչևան (Արծամ), Խոս

1. Այս յիշատակարամիս մէջ ծայրագոյն հեղինակութեամբ տրուած մզովքն իսկ՝ ընդդէմ անհնազանդից, որ կ'ըսէ. « Արդ եթէ ոք չհնազանդեալ կամոնի մորածնել կամեսցի զկարգեալ սահմանադրութիւնս, մի ըմկայցի մասն և վիճակ ժառանգութեամ յարքայութեամ զրիստոսի Աստուծոյ մերոյ », յայտնի ապացոյց է մորս հարգատուութեամբ :

2. Այսպիսի վերմագրով. « Կարգաւորութիւնը ցուցմանց Օրհնութիւնաբեր ցուցակին, եթէ ո՛վ ոք կամ յորում ժամանակաց հայրապետաց են արարեալ զկարգս օրհնութիւնաբեր ցուցակիդ. և թէ ո՛վ ոք եքեր ՚ի Հայաստան աշխարհ և որո՞ց հրամանաւ կամ կարգաւ տառեցին : Երամելոյն Մովսիսի Խորենացոյ թարգմանչի, որ էր գրէչ սըրբոյն Սահակայ հայրապետին Հայոց որդոյ Ս. Կերսիսի » :

3. Բանաւոր կերպով տարակոյսմեր համելու իրաւունք ունէր Զամ չեան (Գատմ. Հայոց հա. Ա. էջ 778), թէ այս Մովսէսը մեզի ծանօթ Խորենացին չի կրնար ըլլալ, այլ լինիլոց է Մամազկիրտացին այն և առաջին աշակերտ Ս. Սահակայ, որ Գիւտէն յառաջ հեկց կաթողիկոս. և կամ ճարոնացին Մուշէ, որ է Մովսէս. որովհետև այդ ժամանակ Խորենացին հազիւ ուրեմն ծնած էր, թէ շատ 10—15 ամեայ մանուկ, համարելով որ 412—426 աւարտեցաւ այն կարգաւորութիւնն : Յիրաւի, դէ տելու ենք, որ Օրհնութիւնաբեր ցուցակին մէջ՝ հեկիմակն, ինքզինքն պարզապէս Մովսէս կ'ամուանէ, յասելմ. « Զեռամբ իմով Մովսիսի՝ զրչի Սահակայ Գարթնի » : Ուստի ինծ կը թուի, վերոյիշալ Օրհնութիւնաբեր ցուցակի վերմագիրն, յետմագումէ միոջէ մերմուծուած է, որ Մովսէս ամուռը վրիպակ ենթադրութեամբ Խորենացոյն վերագրել է : Ուստի այս յիշատակարամիս վկայութիւնն աւելի եզրակացուցիչ է ՚ի վեր անդր ասացելոցս, եթէ ստուգիւ Խորենացին և աւելի երիցագոյն Մովսիսի մի գործ իցէ և կամ մոյն ինքն Խորենացոյ երիտասարդ հասակին :

րով և այլք, իրենց բացակայութեամ ժամանակ 'ի Միջազէտս և 'ի Քիզամոզիոն: Սակայն յիշատակարանս այնու աւելի բարդաւոր է, զի յետ յիշելոյ զՄարգամուծիւն գործոցն Ս. Գրիգորի սերոյ Լուսաւորչիւմ. մասնաւորապէս « Վասն որ շնչեարան 'ի հանգիստ փոխեն », ամ ղէն կը յաւելու, թէ յայս գործս կատարուեցաւ « 'ի մուսասարդի ամ սոյ որ ար մի էր և յիշատակ սրբոյ Կարապետիմ ... 'ի Վաղարշապատ քաղաքի 'ի վկայարամի սրբոյն Հռիփսիմէի »: Արդ՝ թէպէտև ես չկարեմ ասել, թէ մշխարաց 'ի համզհստ փոխադրելու և այլն կամոմներով՝ հեղինակս ուղղակի Ազաթամզեղայ վերջիմ գիրքը կը հասկնայ, յորում ամենայն ինչ մամրամասն մկարագրուած են և ոչ ալ Հռիփսիմեանց այդ վկայարամով՝ զմոր մորոգեան 'ի Ս. Սա հակայ իմանալ: Սակայն Նշանօրէ կորէայ Բանից Եշնչայ, գոր 'ի վեր անդր յիշատակեցի կը թուի հաստատել զայս. որովհետև ամ ղէն զկնի առաջիմ թարգմանութեան Ս. Գրոց կը յիշէ զԿորթոսիան կամ լաւ ևս զՄարգամուծիւն « Գործոցն Գրիգորի »: Երկրորդ, ճիշդ այդ ժամանակամիջոցիմ կը ղնէ զհամումն մշխարաց սրբոց Հռիփսիմեանց և զմորոգութիւն վկայարանաց մոցա, յասելն այս պէս. « Եւ եղև համումն և մորոգումն ոսկերացն սրբոցն Գայիւանայ և Հռիփսիմեայ և ըմկերաց մոցիմ 'ի Սահակայ կաթողիկոսէ, զի եղածովն Գրիգորի կայիմ մորա: Եւ շինեաց զվկայարանսն վիմա տաշ կոփածոյ քարամբք 'ի Վաղարշապատ քաղաքի և մորոգեաց զտումն Աստուծոյ, այսինքն է զտուրք եկեղեցիս: Զի սեծիմ Գրիգորի եղեալ էր զհիմունս զայն, որպէս ցուցեալ էր Տեախանն Երեւելոյ »: Այսպէս ուրեմն կարելի է ասել, թէ զրոց գիտի սեծագոյն ար ղիւնքն և թարգմանչաց մուիրական և առաջիմ գործն եղաւ, փութալ թարգմանել զՍ. Գիրս և զԳործ Ս. Գրիգորի. որովհետև, ըստ վկայութեան Օրհնութիւնաբեր ցուցակիմ, « մինչև ցայն վայր՝ Էշնչայ, (այսինքն է յունարէնով) վարէիմ » զկարգս Գործոցն Գրիգորի:

Յիրաւի, այս բանիս ապացոյցն՝ այսինքն թէ Ազաթամզեղայ գրոց խմբագրութիւնն և թարգմանութիւնը կատարուեցաւ Հռիփսիմեանց մշխարաց համման և էշնիածնայ շինութեան ժամանակ կամ քիչ ետքը, յայտնապէս կը տեսնուի մաս առ խմբագրի մորա. զի այս առթիւ մերմուծուած է Յառաջարամի մէջ 13-18 էջ Հռիփսիմեանց մերրողեանն. այս առթիւ՝ Գրիգորի կարծեցեալ ընդարծակ վարդապետութեան հեղինակն յէջ 400 Հոգւոյն Սրբոյ բաժակիմ վըրայ խօսելով,՝ գոր արբիմ Առաքեալքն, անդէն յամկարծակի խօսքը Հռիփսիմեանց և Գայիւանեանց վերայ կը դարձնէ՝ այսելով. « Ահա երեսուն և եօթմ բաժակք քրիստոսեանք՝ որ եկիմ պաշտել զծեզ »: Այս առթիւ կազմաւ երպեցաւ այժմեան ձևով Գրիգորի Տեսլեան ղրորուած և մերմուծաւ ամը:

Գ. Ապացոյց մ'այլ, Ազաթամզեղայ գրոց վերոնշանակեալ ժամանակիմ մէջ թարգմանուած և խմբագրուած լինելուն կ'ըմծայէ մեզ Հռիփսիմեանց մերրողեան ժամն¹, զոր գրեց Մովսէս

1. Այս ճաղիս հարազատութեան մասիմ՝ արդէն իմ կարծիքս յայտնած եմ 'ի « Զմեմդատութեան » ամը Մ. Խորենացւոյ առ Մահակ Արծրունի գրուած թղթոյն. և այժմ իսկ մոյմ համոզումն ունիմ:

մօտ այս ժամանակին, այսինքն է մախ քամ զառաքումն իւր յուսումն 'ի տար աշխարհս: Յիրաւի, այս բանս Մովսէս իմքնիմ բարեբարդարար կը ծանուցամէ մեզ մախ 'ի մուսս Ներքողննայ՝ այսպէս. « Զիսս ստիպէ ~~դիտարայ~~՝ զսրբոյ մօրս և կուսի այս տուածավայելուչ փառաց մերքողել 'ի յարախմբումնս հոգևոր սորա ծմնողոց » և 'ի վերջաբանի անդ կ'ըսէ. « Այսոքիկ քեզ յիմոց բա միցս պտուղ երջանիկդ ի կամայս ... ~~տուղն~~ քրտուեր իմոյ ~~նորայ~~ հոգայոյ, որ զքեզ սիրէ՝ սիրեցեալդ իսկայպէս բարւոյն »: Իսկ արդ այս ճառին մէջ համճարեղ պատմանիմ ոչ միայն քայլ առ քայլ հետևած է պատմելոցն 'ի զիրս Ազաթամզեղայ՝ զՀոփսիսեանց, այլ 'ի բազում ուրեք հատուածս՝ և ս և զոճս բամից իսկ կը քաղէ ամտի բառ առ բառ: Ուրեմն աստի իսկ պէտք է հետևցնել, թէ Մովսէս՝ այդ ճառը գրած ժամանակ՝ Ազաթամզեղայ հայերէն թարգմանութիւնն ունէր արդէն 'ի ձեռին:

Դ. Փաստ մ'ալ կ'ընծայէ մեզ Յունական եկեղեցոյ ժամակարգութեան և Պատարագամատոյցի թարգմանութիւնն, որ հասած է մեզ յանում Ս. Բարսղի, Գր. Նազիամզացոյ, Աթիսմասի, և՛ մերոյս Լուսաւորչի, յորմէ՝ ինչպէս ըսուեցաւ, հատուածք բամից և բացաւ տրուութիւններ կը գտնուին յԱզաթամզեղ. իսկ որովհետև այս թարգմանութիւնս և կարգաւորութեան ժամանակն իսկ մոյն է ընդ ժամանակի կարգաւորութեան Օրհմութիւնաբեր ցուցակին, ուրեմն թլորդ այդ եղելութիւնքն 'ի Ոկատի ունելով, կարելի է երզակացնել, թէ ստուգու յետ մախկնիմ և յամկարծազիտ թարգմանութեանն Ս. Գրոց և կարգաւորութեան Օրհմութիւնաբեր ցուցակաց, Ազաթամզեղայն եղած է ամդրամիկ 'ի մէջ այլոց թարգմանութեանց. մա իմքն եկաց իբրև հմազոյն և հրաշապատում մատեան ամցից Հայաստան աշխարհիս և իբրև փարոս իմն լուսանճանմալ մախկնիմ լուսաւորութեան ազգիս և ազգային դպրութեան, յորմէ լոյս առին և

1. Յիրաւի, յէջ 307 Հոփսիսեանց ազմուատոհմութեան, մեմաստանին և մոցս սրբասէր զգաստասէր կենցաղավարութեան մասին աւանդածը՝ բամաքադութիւն է Ազաթամզեղայ գրոց 113 իջին: Եւջ 308 և 310 բամասարկու օձին սաղբամաց, Դիոկղետիամոսի անկարգ տուփամաց և ընդդէմ Եկեղեցոյ յարուցած հալածամաց հատուածքը՝ մոյն են Ազաթամզեղայ 114-115 էջերուն: Այսպէս մակ Տրդատայ սնծայոյզ քմնութեան և զաղարշապատցոց կայթիւք և փոթօք զհարսամիս թագաւորին յօրինելոյն հատուածը՝ փոխառութիւն է Ազաթ. 127 և 143 էջերուն: Եւջ 311 զգաստութեան մօր Գայիանայ յորդորն առ հոգևոր դուստրն իւր՝ մոյն է 146 իջին Ազաթամզեղայ: Եւջ 313 սէզմ Տրդատայ վերայ յօրինուած առակաւոր հատուածն՝ բառ առ բառ Ազաթ. 103-104 էջէն մէջ բերուած է. ինչպէս Տրդատայ ամթապարտ պարտութեան հատուածն ալ՝ 150 իջէն: Եւջ 114 Հոփսիսեանայ յաղթական կերպով 'ի հոծամայարկն հասնելն և իւր ընկերաց աւետիս տալը՝ մոյն է Ազաթ. 151 իջին: Եւջ 320 Հոփսիսեանց դառնակակիծ մահուան հատուածը բամաքադութիւն է Ազաթ. 155 իջին: Այսպէս մակ յէջ 324 Բ. պարբերութիւնը, թէ « Մոքս են մերոյ աշխարհիս որպէս լուսաւորք փայլեալք » այլովքն համդերծ, մամութիւն է Ազաթամզեղայ գրոց Յառաջաբանի 14 իջում եղած դրուատեացը:

որում հետևեցան ոչ միայն բոլոր տոհմային մատենագիրք, այլ և ոչ սակաւք յարտաքնոց ամտի: Այս տեսակէտով՝ ոչ խմբագրին եկամտու հատուածները կը կրտսերացնեն զայն, և ոչ ալ պատմական և աշխարհագրական ամօշտութիւնք բաական են բառմալ 'ի մէջ մորա վարկն և արժամիքն. այլ կարեմք միշտ կոչել զայն հարուստ թանգարան հայկական լեզուի, պատմութեան, աշխարհագրութեան և դիցարամութեան և պարծանք անցելոց, ներկայից և ապագայ հայ սերմոյց:

Մինչև հիմայ Ազաթամզեղայ մախկին յումարէն և հայերէն խմբագրութեանց հմուտեանն 'ի մպաստ մէջ բերուած փաստերէն իսկ ակներև կը տեսնուի, թէ որքան օտար են 'ի ճշարտութեանէ Հանդէսներու և պարբերական թերթերու մէջ շրջող այն անհաստատ կարծիքներն, որովք համարեցան ոմանք, թէ Կորեան Պարսկաստանն յարաջ գրուած է՝ քան զԲուզանդայն, որպէս և վերջնոյս՝ քան զԱզաթամզեղայն: Միմչեւ ապացուցեալ ճշարտութիւն մ'է (Տես «Հանդէս ամսօրեայ», 1887, թիւ 1, էջ 9-12. 4. Յ. Գաթրնեան յօդուածը), թէ Կորիւմ յամիմ 445-450 զրած է Ս. Մեսրոպայ Պատմութիւնն:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Է .

Այժմեան յանարէն Ագաթանգեղոսի բնագիր իմ ընդհանուանն խորհանուիւն լինելու ինքերն. — Ագաթանգեղոս և Գրիգորի բարձոց յանարէն և նորագիտութիւնք և նոցա հանուիւնք. — Թէ «Գրիգորի բարձերն» և ինչ յանարէն «Ագաթանգեղոս» չըկարին լինել բնագիր հայերէնի. — Այժմեան յանարէն Ագաթանգեղոսն ուղղակի հայերէնէն խորհանուած է. — Լեզուական և պարսկական ապացոյցք առ այս. — Եւրոպացուիւն:

Յետ ապացուցանելոյ, թէ հայերէն Ազաթամզեղոսն է թարգմանութիւն յումարէն բնագրէ, այժմ այս խնդիրս ըմդ առաջ կ'իջնէ մեզ. Արդեօք այժմեան ծանօթ յումարէնն իցէ՞ այն բնագիրը, թէ, ըմդհակառակն, մա ինքն իսկ յետոյ ժամանակաւ հայերէնի վրայէն եղած թարգմանութիւն է: Ես՝ յետ բարդատութեան այդ կրկին օրի մակաց ըմդ իրեարս և յետ մամրագմին հետազօտութեան երկաքանցիւրին մէջ յայտնուած պարագայից, այլ ոչ ևս իրեն կարծիք կամ եմթաղութիւն, այլ իբրև մի կատարեալ եղելութիւն ստիպուած են ըմդումիլ և ապացուցանել զվերջին մասն հարցմանս: Բայց որովհետև ձեռագրաց խուզարկութիւնը հետ զինտէ յումարէն Ազաթամզեղոսի և հայոց լուսաւորութեան հօր Գրիգորի վարուց և զործոց մորամոր ձեռագրեր կամ լաւ ևս հմագոյմ ձեռագրաց հասակոտորներ կը յայտնէ ուսումնատեմչ աշխարհի դիմաց, ուստի լուրջ քննադատութիւնը կը թեքադէ ինձ մախ այդ մորոք յայտ.

մուած յիշատակարանաց վերայ ակմարկ մի տալ, տեսնելու հա-
մար, թէ՛ կը տարբերին արդեօք ղոքս Վիկ. Լամպրուայի և Գ. Լա-
զարդի հրատարակութեամբ մեզ ծանօթ Փլորենտեան (Plut. 7.
Cod. 25) յումարէն Ազաթամզեղոսէն:

Պարիզու թիւ 1489 և թիւ 1491 ձեռագրաց վրայէն Միմի ձեռ-
քով եղած Գրիգորի Գործոց հրատարակութիւնը¹, որ հաւասար է
Միմէնի Մետափրաստեայ գործի հրատարակութեան 943-996
էջերում, արդէն 'ի վարդուց ծանօթ պէտք է որ եղած լինի ազգային
քանասիրաց գէթ ոմանց. ուստի այս մասին ես ուրիշ ըսելիք բան
մի չունիմ: Սակայն յամին 1887 հանրածանօթ գիտնական Գ. Դը
Լազարդի անխոնջ ուսումնասիրութեամբը Վատիկանի երեք ձեռա-
գրոց² վրայէն՝ 'ի Գեօտտիմզէն եղած հրատարակութիւնն (Die
Akten Gregors von Armenien), մեծապէս իմ ուշադրութիւնս
առ ինքն զրանց: Օգտակար ծառայութիւն և միանգամայն մեծ
դիւրութիւն պատճառած կը լինէր մեծամուն գիտնականն, եթէ
նախ այդ հրատարակութեան համար 'ի գործ անեալ ձեռագրաց
վերայ մանրամասն տեղեկութիւններ հաղորդէր: Բ. իւր ձեռնհաս
հեղինակութեամբը բաղդատելով հրատարակութեան սոյն մասը,
այսինքն է « Գրիգորի Գործեր », միւս մասին, այսինքն է « Ազա-
թամզեղոսի » հետ՝ մոցա իրարսէ ունեցած տարբերութիւնքն 'ի
հանդիսի կացուցամէր, գէթ լեզուական տեսակետով: Նա ինքն յէջ
89 համառօտիւ կը ծանուցամէ, մամաւանդ անմեղադիր առմէ
զամն իւր մկատմամբ առաջին կէտին, ասելով, թէ ձեռագրաց
վերայ աշխատած ժամանակ՝ 'ի զրի առած էր պահանջուած տե-
ղեկութիւններն՝ բայց յետոյ չգիտեմ զհարդ, կորսնցուցել էր զա-
մոնք: Իսկ առանձին մասնակա զիս վստահացուց, թէ ժԱ դարուն
զրուած եմ այդ ձեռագրերն:

Իմ կողմամէս ըրած բաղդատութեանցս արդիւնքն՝ ամաւասիկ
այսպէս կը համառօտեմ: Ի սկզբնաւորութեանէն սկսեալ՝ ցվերջատ-
րութիւնն, շարադրութեան կազմութիւնը բոլորովին կը տարբերի
յումարէն Ազաթամզեղոսի շարաքամութեանէն. այնպէս որ ամ-
մարթ է գտնել տողս իմչ, (թէ՛ և մի և մոյմ միւթիմ վերայ կը խօսի)
որ բառ առ բառ վերջմոյն հետ զուգըմթամայ. - Յատուկ անուանց
շատերն՝ լուած եմ կամ չգոմ 'ի միջի՝ իրենց յարակից վիպաց և
մկարագրութեանց հետ 'ի-միասին, զորս ամթերի ունին Ազաթամ-
զեղայ թէ՛ յումարէն և թէ՛ հայերէն օրինակներն. իսկ յիշատակուած
ամուամքն ալ՝ երբեմն տարբեր ուղղագրութեամբ և շեշտաւորու-
թեամբ զրուած եմ. - Տրդատայ և Գրիգորի դէմ ըմդդէմ խօսակցու-
թիւնքն, որ յումարէն Ազաթամզեղոսի մէջ՝ վեց թուղթ կը լեցնէ և
հայերէնի համաչափ է, յայսմ, ըմդհակառակմ՝ երկու թուղթի մէջ
բովանդակուած եմ՝ համդերծ տանջամաց մկարագրութեամբք.

1. Patrologia græca, t. 115:

2. a = Vaticanus 794: Blatt 251^a ff.

b = " 795: " 216^a ff.

c = " 796: " 379^a ff.

իսկ եօթնօրեայ կախադամին վրայէն ըրած վարդապետութիւնն իսպառ կը պակսի. — Տրդատայ զոյգ հալածամաց հրովարտակները չի պտրուճակներ. — Գիողեթտիանոսի առ Տրդատ գրուած թղթոյն յիշատակութիւնն ևեթ կը լինի աստ. — Հովհաննէի բերամը դրուած երկայն աղօթքներէն և յորդորներէն՝ մասն մի միայն կ'աւանդէ մեզ. — Գրիգորի վիրապէն ելելէն մինչև ցերթն մորա 'ի Կեսարիա յԱգաթանգեղ ընդարձակաբար պատմուած դէպքերն աստ հազիւ թէ երեք թուղթ միջոց մի գրուած են, զի չեն պարունակեր զմախապատրաստիչ հատուածն՝ առ ընդարձակ վարդապետութիւն ամուր, ոչ զնկարագիրս Տեսեան Գրիգորի, ոչ Տրդատայ Մասեաց լեռնէն արաստոյ վէմն բերելն և ոչ ալ կոտց կործանման առանձին առանձին մկարագիրսն տեղեօք և պարագայիւք. — Տրդատայ խոզակերպութեան և Հովհաննէանց մշխարաց փոխադրութեան մասին յամալի և տարբեր պարագամերով յեղյեղուած հատուածքն առ Ագաթանգեղ, աստ ոմանք հազիւ ուրեմն յիշատակուած են, իսկ այլք՝ ոչ գտանին. — Գրիգորի 'ի Կեսարիա ընկերող մախարարաց վեշտասան թուոյն միայն յիշատակութիւն կայ, բայց ոչ մոյմպէս և ամուսնաց. — Գրիգորի ձեռքով կատարուած Աւետարանի քարոզութեան սահմաններէն՝ Պարսք, Ատրեստան, Հոնք և Մարք միայն կը յիշուին. — Յետ դարծին 'ի Կեսարիոյ Գրիգորի ձեռքով կործանեալ կոտցսէ՛ զհերակլէս միայն կը յիշէ յամուսնէ. — Լուսաւորէն ձեռնարդուած եպիսկոպոսներէն՝ Բաստս միայն և Աղբիանոս (ընտ Ս. ձեռագրին Ալկիմոս) կը յիշուին յամուսնէ. — Տրդատայ՝ առ Ղևոնդիոս գրուած թղթոյն մասն թուղթ մի կ'ըմծայէ, բայց թերի և ամման յունարէն և հայերէն Ագաթանգեղոսի ըմծայածներում. — Ղևոնդիոսի առ Տրդատ գրուած թուղթն իսպառ կը պակսի. — Կոստանդիանոսի՛ բումաւորաց դէմ տարած բողոքական յաղթանակը թէպէտև կը յիշուի, բայց 'ի լուծեան թողուած են մոցա ամուսնըր. — Տրդատայ 'ի Հոտվո՛ երթին մկարագիրն և ուղեկից մախարարաց ամուսնըր՝ չգոն 'ի միջի. — Զկան դարծեալ ոչ յԱշտիշատայ մհհեմին կործանման ժամանակ՝ խաչիւ յարուցած հուլիմ պատմութիւնն, ոչ Նորեսաց զկայ անուսն և ոչ Տրդատայ մկրտութեան ժամանակ կատարուած սքամչելեաց, ոչ հրեշտակին երևանմ առ Գրիգոր և առ Տրդատ, ոչ Կոստանդիանոսի թագին, ոչ ազգային տիպ ունեցող ցիր և ցան հատուածոց և ոչ ալ Կորեան մանամարան տեղեաց հետքերն:

Արդ, բոլոր այս և ասոնց մասն ուրիշ մանր պարագաներ յայտնապէս կը թուին ցուցանել, թէ երեք ձեռագրաց մեզի ըմծայած **Գրիգորի Գրքերէն**՝ ոչ հայերէն Ագաթանգեղոսին ըմծալը լինելու յատկութիւնն ունին և ոչ իսկ մորա վրայէն եղած մի թարգմանութեան. որովհետև հազիւ թէ քառորդ մասն է գրոցն Ագաթանգեղայ և զուրկ է յայնմ ամենայնէ, զորս ըմծայեմ մեզ յունարէն և հայերէն օրինակք Ագաթանգեղայ: Ուրեմն կը մմայ ըսել, թէ կամ այդ յունարէն երկասիրութիւնն իբրև հմագոյն ծրագիր իմն և աղբիւր՝ ծառայած է յերբեմն ժամանակի ընդարձակ խմբագրութեան

գրոցն Ազաթամզեղայ՝ և կամ, ընդ հակառակն, յետոյ ժամանակաւ Ազաթամզեղայ գրոց վրայէն եղած համառօտ կենսագրութիւն մի է, զոր գրեց յոյժ ոսմ յատուկ ոճով և շարաքանութեամբ, ՚ի բաց թողով բոլոր այլ մասերն, որոնք լրկ ազգայնութեամ և անհարազատութեամ տիպ ունէին յԱզաթամզեղ: Ազաթամզեղայ յունարէն օրինակի լեզուին և շարաքանութեամ համար՝ արդէն ՚ի վաղուց վրկայած են Լազարո՛ և Գուրշահտ, թէ բարբարիկ և անկեալ ժամանակի գրութիւն է. իսկ « Գրիգորի Գործոց » լեզուին և շարաքանութեամ համար ոչ ոք ՚ի ձեռնհաս յունագիտաց դատաստան մի ըրաւ, ըստ իմս գիտութեամ. իսկ ես ամծեռնհաս կը համարիմ զիս վճռել զայն իբրև աւելի դասական և յստակ և կամ ընդհակառակն: Մակայն և այնպէս յերկոսին դէպս իսկ աւելի հաւամական կը համարիմ հետևութեամս վերջին մասը:

Քամուրքեցոց և Ալուիլացոց եպիսկոպոսն Գեօրջ ասորի՛ առ Յէշու ոսմ հզմաւոր յամի Տեառն 714 զրած ընդարծակ թղթոյն մէջ, զոր արդէն հրատարակած է Լազարո՛ 1, Գրիգ. Լուսաւորչայ համառօտ պատմութիւնը կ'ընէ, առնելով մորա Կենսագրութեանէն, զոր իմքը կը կոչէ « Պատմութիւն որ ՚ի վերայ մորա », այսինքն է Գրիգորի:

Արդեօք ասորի եպիսկոպոսէն՝ Գրիգորի Պատմութիւն կոչուած այս երկասիրութիւնս՝ մոյժ համարելի է ընդ Ազաթամզեղայ, թէ, ընդհակառակն, բոլորովին մի ուրիշ աղբիւր եղած է, անկախ ՚ի գրոց Ազաթամզեղայ, և կամ Գրիգորի Գործոց Պատմութեանէն, զոր հրատարակեց Գ. Իր Լազարո՛, առնմթեք Ազաթամզեղոսի:

Արդ Գէորգայ թղթոյն Ե. զլետյն մէջ արտայայտուած պարագաներուն եթէ ուշ դմեմք, վերջին կէտը կը թուին հաստատել, որով հետև թէ՛ Ազաթամզեղոս և թէ՛ Գրիգորի գործոց մէջ չեն գտնուիր այդ պարագայքը. այսինքն է, մորա ասածով, Ա. Գրիգոր. էր Գեօրջ Զամբայեցի: Բ. Ի մամկութեանէ, Դիոկղետիանոսի հալածամաց կամ մի ուրիշ պատճառաւ, ՚ի Հայս եկած, հոմ սմած, Հայոց լեզուն ուսած, մեծ համբաւ տարածած և տարիներ Վաղարշապատու արքունեաց մէջ իբրև մերձատր՝ Տրդատայ մեծամեծ ծառայութիւն մեր մատուցած է: Գ. Վաղարշապատու զբոյժ մէջ փոխամակ 15ի՛ 13 տարի կեցած կը համարի: Դ. Ոչ Հովհիսիանայ և ոչ այլ մոցս պատմական անցից յիշատակութիւն մի կ'ընէ: Ե. Տրդատայ դիւահարութիւնը յիշելով՝ մորա խոզակերպութեանը մասին բմաւ խօսք չըմեր: Զ. Կըստի, թէ թագաւորմ իւր Դեռ Կոստանէ յիշեց համել զուրբն ՚ի զբոյժ, և Խորտվիրուկատ բմաւ յիշուած չէ: Է. Կըսէ, թէ Գրիգոր՝ Կեսարիոյ եպիսկոպոսապետին Ղևոնդիոսի հետ զմաց ՚ի սուրբ ժողովն Նիկիոյ: Ը. ԶՏրդատ թագաւոր կը համարի ոչ միայն Հայոց, այլ նաև Պարթևաց:

Արդ, Ասորի եպիսկոպոսիմ՝ մեզի աւամդած յիշեալ տեղեկու-

1. P. Lagardii Analecta Syriaca (Lipsiæ). Londini, 1858. XX, 208 էջ: իսկ թարգմանութիւնը տես « Համդէս Ամսօրեայ », 1890, թիւ Ա;

թիւներս ստուգուի եթէ գրաւոր երկասիրութեմէ մի քաղաւած լի-
 մէիմ, այն ժամանակ հաստատուած կը լինէր մեզի ամծամօթ մի
 ուրիշ աղբեր գոյութիւն: Սակայն իմօ շատ հաւամակամ կը թուի,
 թէ վերոյիշեալ կէտերմ Գէորգ ասորիմ մասամբ Ագաթամգեղոսէմ
 կամ Գրիգորի կենսագրութեմէմ, մասամբ այլ Ձեմորայ գործէմ գու-
 շակեմով կամ զամոնը լաւ չի հասկամալում պատճառաւ, ըստ կամս
 յերկրած է: Եւ յիրաւի, այսպիսի մի իրողութեամ յայտմի ապացոյց
 եմ մորա խօսքերմ, որ վերոյիշեալ տեղեկութիւններէմ ամմիշապէս
 յետոյ և « Այս է պարզ և համաուտագոյն պատմութիւմ Գրիգորիւ-
 սի ուսուցչիմ Հայոց » բացատրութեմէմ վերջ, կ'ըսէ այսպէս. « Բայց
 կ'արժէ, որ առաւել 'ի հաւատարմութիւմ մեր խօսքիմ, սակաւ
 բանս քաղեմք այս մարդում, (այսիմքմ է Գրիգորի) կենսագրութե-
 մէմ »: Եւ իրօք, այս ամգամ աւամդած կէտերմ ըստ մեծի մասիմ
 'ի վեր ամդր աւամդածներէմ կը տարբերիմ, և Ագաթամգեղոսի և
 Ձեմորայ աւամդածներում քաջ կը համածայմիմ. այսիմքմ եմ Դիոկ-
 դեստիամոսի ժամանակ Տրդատայ Հայաստամի վերայ թագաւորելմ,
 - Տրդատայ պալատիմ մէջ Գրիգոր ամուամբ մարդու մի քրիստո-
 մեայ յայտմուիլմ, - մորա կրած չարչարամքներմ, վիրապի մէջ
 ձգուիլմ, և Ագաթամգեղոս 103 իջի համածայմ, 13 տարի մորա մէջ
 կենդանի պարիլմ, - զօրաց բազմութեամբ Տրդատայ որսի ելլելմ և
 պատուհասիլմ, - Գրիգորի Տեսեամ յիշատակութիւնմ և Աստուծոյ
 զօրութեամբ թագաւորի ոտքերմ և ձեմները բժշկելմ և ~~Եւստի-
 թեան վերաբերմ~~, - մախարարակոյտ բազմութեամբ 'ի Կեսա-
 րիա երթալմ և Ղևոմդիոսէմ ձեմնադրուիլմ: Յետ որոց դարձեալ կը
 յաւելու. « Այս սակաւ դրիմք հոս Գրիգորիոսի ~~ընդհանրակ
 վերաբերմ~~ » (այսիմքմ է Ագաթամգեղոսէմ): Իսկ Գրիգորի 'ի կիկոյ սիմհո-
 դոսի 318 հայրապետներէմ միմ լիմելում 'ի հաստատութիւմ մէջ կը
 բերէ այս ամգամ, ոչ թէ Գրիգորի ~~Պատմութեան~~, այլ յիշեալ ժողո-
 վոյմ Աջանագրութեան, զորս յումարէմ քառով πεπραχμένα ա-
 մուամած է: Սակայմ դիտելու է, որ Նիկիոյ ժողովական Հարց այլ
 և այլ լեզուներով մեզի հասած ցուցակիմ մէջ Գրիգ. լուսաւորչի ա-
 մումը չկայ, այլ մորա որդւոյմ Արիստակէսի: Մի և մոյմ արձամա-
 գրութեամբ կ'աւամդէ մաւ Ղևոմդիոսի երթմ 'ի ժողովմ Նիկիոյ,
 և Գրիգորի Աստուածաբանիմ իւր հօր մերթողեմոյմ խօսքերով կ'ու-
 զէ հաստատել իւր ասածն: Արդ, Գէորգայ յիշած արձամագրու-
 թիւմմ եթէ մեզի ծամօթ 318 հայրապետաց ցուցակիմ հետ մոյմ է,
 այմուհետև կարելի է եզրակացմել, թէ երկու պարագայից մէջ ևս
 ասորի հեղիմակիս վկայութիւնը կասկածելի է. և թէ մա Գրիգորի
 մեզի ծամօթ յումարէմ պատմութեմէմ դուրս ուրիշ մի հմագոյն կամ
 մոր աղբիւր ումեցած չէ իւր դիմաց, բաց 'ի բերամացի գրոցներէմ-
 Յիրաւի, այս երկու եղելութիւնքս դեռ աւելի կը պարզուիմ, եթէ
 մէկ կողմէմ դիտեմք, որ մա իւր ազգակից միայնակեցիմ Տէշուայ՝
 այմ ժամանակի Հայոց հետ ումեցած կրօմական դատի մի ձեւ-
 ըմտու ուզած է լիմել, յիշեալ տեղեկութեամքք, որք իբրև մորա
 առամծիմ տեսութիւններ մէջ բերուեցամ և վերջիմներում հետ չեմ

համաձայնիր . և թէ Յեշուայ առ Ուս գրած թղթով դեռ աւելի պիտի յայտնուէիմ, եթէ կարելի լիմէր ձեռք բերել ձայն: Իսկ միւս կողմէն սյւ դիտելու է, որ Ոորա վերջիմ տեղեկութիւններն, զորս Գրիգորի Արեւադարձութեան ամուսամբ մէջ կը բերէ, թէ և համառօտուած են, սակայն և այնպէս կարելի է Ագաթամզեղոսի հետ բառ առ բառ նոյն համարել:

Դիտելու է և այս, որ Գէորգայ աւամուշածներն, եթէ ստուգիւ աորերէն բնագրէ մի առժուած լիմէիմ և Ոորա հետքը կրէիմ իրենց վրամ, ամտարակոյս Լագարդ՝ որ Գրիգորի Գրքոց հրատարակութեամ մէջ այնչափ մանրախուզիւ հետամուտ եղած է Ագաթամզեղոսիմ ասորերէն բնագրի մի հետքեր գտնել, ամշուշտ զամց չէր ընել մէջ բերել առ այն և՛ Գէորգայ իւր ձեռքով հրատարակած թղթոյն վերոյիշեալ և այլ պարագամներն: Եւ սակայն Ուս ամենկիմ յիշած չէ զայն, որ յայտնի ծշամ է, թէ մեծամուռ գիտնականն ևս Գէորգայ թղթոյն մէջ մոր աղբեր մի գոյութեամ բաւական ասպացոյց մի չէր նկատել:

Լագարդէն ամօք յառաջ մի մոր գիւտ ըրաւ յոյն հնագէտն Պապասօպուրոս Կերամնեա, Մակեդոնիոյ Կոսմիցա մեծատամի գրաւ տամ մէջ, ՚ի յոյս ածելով փոշիմերու տակ թաղուած Ժ. դարու մի ձեռագիր, յորում կը գտնուիմ 17, 97, 109, 110, 132, 174, 237 թիւով հին ձեռագրական թերթեր, ըստ վկայութեան ¹ հեղինակիմ, որք կը պարունակեն յումարէն Ագաթամզեղայ բազմաթիւ պատմական հատուածներ և սակաւս ՚ի վարդապետութեանէն յուսաւորչի: Սոցա մասին այսպէս կը գրէր առ իս յոյն հնայնոյզմ. « Toutes ces feuilles forment une grande partie de l'ouvrage d'Agathangélos grec, d'après le texte de Florence qui a été publié par les Bollandistes et réimprimé par Langlois dans sa Collection. Le texte de ces fragments n'a aucun rapport avec la rédaction de Métaphraste. Il comprend plusieurs fragments de la partie historique et peu du doctrinal ». Հեղինակիս վերջի խօսքով կարելի է հասկանալ թէ համառօտ վարդապետութեանէն մասն ինչ և թէ ընդարձակէն. սակայն հաւամօրէն առաջնոյ ամտի լիմելու է, յորմէ Թէոդոր Ստուդիտ և այլք ոմամք իսկ ՚ի մէջ կը բերեն յերկասիրութիւնս իւրեանց յանուն Գրիգորի Լուսաւորչի: Ուրեմն Կերամնեսի ըսածին համեմատ, վերոյիշեալ թերթերու պարունակութիւնը նոյն լիմելով ընդ Փլորենտեամ ծամօթ ձեռագրիմ, փոխամակ միոյ կ'ունենամք յումարէն Ագաթամզեղոսի զոք օրինակներ. և այս վերջիմն հաւամօրէն պէտք է որ աւելի հին եղած լիմի քան զառաջիմը: Ցամկալի էր որ յոյն հնագէտն բաղաւտելով իրարու հետ հրատարակէր ՚ի վայելս ուսում մասիրաց: Արդ իրն այսպէս լիմելով չեմ կարող համաձայնիլ Կերամնեսի ՚ի յետագայն արտայայտեալ կարծեաց, թէ « J'ai tou-

1. ΕΚΘΕΣΙΣ Παλαιογραφικῶν καὶ φιλολογικῶν ἐρευνῶν ἐν Θράκη καὶ Μακεδονίᾳ, Κωνσταντινοῦπλις. 1886, էջ 28:

jours l'idée que le texte grec d'Agathangélos est le prototype du texte arménien, qui me paraît être altéré avec le temps par des anachronismes ». որովհետև այդ պալալերպու-թիւնը՝ զոր նա ինքն անգամ ստիպած է խոստովանել, միայն ժամանակագրական ամենուրեքանց մէջ կայացած չէ, այլ մոյմ իսկ լեզուին, բացատրութեանց, յատուկ ամուսանց ուղղագրութեան և բովանդակ գրուածքին մէջ, զորս 'ի միասին 'ի նկատի առնելով՝ ամենարթ է չորրորդ դարու յոյմ հեղինակութեանց մէջ դասել զայն:

Մինչև այս վերջին ժամանակներս ժ. դարէն վերջ եկող յոյմ հեղինակաց քով միայն կարելի էր գտնել ուղղակի զիշխատակութիւն Գրիգորի Լուսաւորչին, և զյառաջբերութիւնս հատուածոցն Ագաթանօզոյ. սակայն բազմահմուտ ծիրանաւորն Պիտրա՝¹ գտաւ է դարու յոյմ մատենագրի մի, այսինքն է Ս. Նիկեփորի Կ. Պօլսոյ պատրիարքին « Ընդդէմ Հերետիկոսաց » երկասիրութեանէն այլ և այլ գրութիս անյայտացած հատուածոց և հրատարակեց, յորս կը պարունակուին և հատուածք ինչ վարդապետութեան Ս. Գրիգ. Լուսաւորչին, յաղագս խաչելութեան և մեռեալ պատկերին Քրիստոսի Տեառն մերոյ, հետևեալ վերնագրով. 'Տօ՛ս օչլօս Գրիգօրօս 'Արմենիաս Իրիսեի, որբ բառ առ բառ մոյմ եմ հայերէն Ագաթանօզոյ 71, 72, 73, 74 էջերում: Դնենք աստ դիմացդ դիմաց ընդ հայերէնին այդ հակիրճ հատուածներն, զորս իբրև սակաւ 'ի բազմաց մէջ բերած կը համարի սուրբ հայրապետն, համդերձ Գրիգորի մահերգական մերրոգեմիւ:

Յոյմ հեղինակս կը գրէ այսպէս. « Μαρτυρεῖ γὰρ ἡμῖν ὁ μέγας μάρτυρ εἰσβήσεται, ὁ τῶν Ἀρμενίων τὸ φῶς τῆς θεογονίας ἐπιλάμψας Γρηγόριος, καὶ τὸν θεῖον κατ'αἰχμαλωτῆσας λόγον· ἐν οἷς ἐν τῇ ἀκμῇ τῶν κινδύνων καὶ τῷ σκάμματι τῶν ἀγώνων ἔτι ὢν, καὶ τοῖς μαρτυρικοῖς ἰδρώσι περιβρέδόμενος, πρὸς τῶν ὄλων Θεὸν τὸν εὐχαριστῆριον ἰμοῦ καὶ ἰκέσιον συντιθεὶς λόγον, τοιάδε τινα τούτων ἔνεκεν διεξέρχεται ». « Յիրաւի, յառաջ անցցէ՛ մեզ 'ի վկայութիւն մեծ վկայն, նա ինքն լոյսն Հայոց, Գրիգոր՝ որով բացափայլեաց 'ի մոսս աստուածածանօթութիւնն, յորմէ հոսեալ և աստուածային բամիւ. զի յորժամ պաշարեալ կայր յանձուէլս վտանգաց և 'ի մրցանս մարտից՝ մինչև ցիտումն մարտիրոսական կայրականն, ուղղեաց գրանս իւր մաղթողականս առ Աստուածն բոլորից բնութեանց 'ի սուրբ Հաղորդութեան. և 'ի միջի այլոց ասաց և զպսոսիկ՝ զորս ածեմք 'ի մէջ ».

Ս. Նիկեֆոր.

ԱԳԱԹԱՆՕԶՆՈՍ.

« Ἐπειδὴ ἡγάπησαν οἱ ἄνθρωποι σέβειν τὰς ἀνθρωπομορφους εἰκόνας ξυλογλύπτους

« Որ վասն զի սիրեցին մարդիկ պաշտել զպատկերս մարդադէմս փայտագործս հիւսանց, եղև

1. Spicilegium Solesmense, etc. T. I, p. 499-502. Parisiis.

τέλχη τῶν τεκτόνων, ἐγένετο Αὐτὸς ἀληθινὴ εἰκὼν ἀνθρώπου ἵνα τοὺς εἰκονοκτίστας, καὶ εἰκονογλύφους, καὶ εἰκονολάτραις τῇ ἰδίᾳ εἰκόνι τῆς θεότητος ὑποτάξῃ. Καὶ ἐπειδὴ ἦσαν οἱ ἄνθρωποι, συνεθισθέντες τὰ ἄψυχα εἰδῶλα τὰ νεκρὰ προσκυνεῖν, ἐγένετο Αὐτὸς νεκρὰ εἰκὼν ἐν τῷ στουρῷ, καὶ ἀπέθανε, καὶ ἄψυχος γέγονεν· ἵνα διὰ τοῦ συνήθους ἐν τάχει αὐτοὺς ὑποτάξῃ τῇ ἰδίᾳ εἰκόνι· τὸν δὲ σταυρὸν ὡς ἀγκιστρον κατασκευάσας, τὸ σῶμα αὐτοῦ ποιήσῃ βρῶμα τῇ οἰκουμένῃ, ὅπως ἐν τούτῳ θηρῶσῃ πάντας εἰς τὴν βασιλικὴν τράπεζαν τῆς θεότητος αὐτοῦ. Καὶ ἀντὶ τῶν γλυπτῶν ζύλων, ἐπηξεν τὸν σταυρὸν ἐν μέσῳ τῆς οἰκουμένης· ἵνα οἱ ἐθισθέντες προσκυνεῖν τὰ ζύλα, διὰ τῆς τοιαύτης συνηθείας πιστεύσωσι προσκυνεῖν τὸν σταυρὸν αὐτοῦ, καὶ τὴν ἐπάνω ἀνθρωπομορφον εἰκόνα ».

Καὶ μεθ' ἕτερα·

« Καὶ ἐπειδὴ ἐν συνηθείᾳ ἦσαν οἱ ἄνθρωποι εὐφραίνεσθαι εἰς τὰ ἱερὰ τῶν εἰδώλων ἐν κνίσαις ἅς τοῖς ἄψύχοις προσέφερον, διὰ τοῦτο καὶ αὐτὸς ἐκάλεσας τὴν οἰκουμένην εἰς τὴν σφαγὴν τοῦ Ἰῑσοῦ σου, καὶ εἶπες· Ὁ μόσχος μου ἐσφαγμένος, καὶ τὸ δεῖπνόν μου ἤτοιμασμένον. Καὶ ἐπλήθυνας τὴν εὐφροσύνην ἀπὸ τοῦ σταυροῦ τοῦ Ἰῑσοῦ σου, καὶ ἐχόρτασας πάντα τὰ πέρατα ἀπὸ τοῦ ζωσποιοῦ αὐτοῦ σώματος ».

իմքը պատկեր մարդկամ, զի զպատկերազորսմ և զպատկերասէրսմ և զպատկերապաշտսմ իւր պատկերի աստուածութեամբ հնազանդեցուցէ :

Եւ վասմ զի սովոր էին մարդիկ երկիր պագամել անողնէ պատկերաց մեռելոց, եղև իմքը պատկեր մեռելոյ 'ի վերայ խաչիմ, և մեռաւ և անշնացաւ, զի ընդշնակամամ զմոսա արագ արագ հնազանդեցուցէ իւրում պատկերիմ :

Իորև զկարթ երևցուցեալ զխաչիմ, և զմարմն իւր անձր կերակուր տիեզերաց. զի այնու որսացի յարքումակամ սեղամմ, մշտնջեմաւոր արքայութեամ իւրոյ : Եւ փրկամակ դրօշելոյ փայտիցմ՝ զխաչ իւր կամզմեաց 'ի մէջ տիեզերաց. զի որով սովոր իցեմ երկիր պագամել խաչիմ փայտի, սովորակամաւ ընդշնակամամ հաւատացեմ երկիր պագամել խաչիմ փայտի, և որ 'ի վերայ մորա պատկերմ մարդադէմ իցէ » :

Եւ յսոց դարձեալ

« Եւ վասմ զի սովոր էին մարդիկ ուրախ լինել 'ի մեհեամա կրոնցմ զոհիւքմ՝ զոր ամսնունցմ մատուցամէին, վասմ այնորիկ և դու կոչեցեր 'ի զեմում որդւոյ քոյ զտիեզերս, և սասցեր .

« Զպարարակ իմ զեմեալ է, և զմաշ իմ պատրաստեալ է » . Եւ բազմացուցեր զուրախութիւմ 'ի խաչելոյ որդւոյ քոյ. և յազցուցեր զամեմայ տիեզերս 'ի կեմդամարար մարմնոյ, որ էմ կերակուր և կեմդամութիւմ բաւակամի ամեմայմ երկրպապուաց քոց » :

Και μετ' ὀλίγα.

« Καὶ ἐπειδὴ ἔπινον οἱ ἀν-
 ἄθρωποι τὸ αἷμα τῶν θυσιαῶν ἐν
 τῷ λατρεύειν τοῖς δαίμοσι, διὰ
 τοῦτο ἐκένωσε τὸ ἴδιον αἷμα
 ἔπει τοῦ σταυροῦ· ἵνα τὸ ζῶλον
 ἀντὶ τοῦ γλυπτοῦ· καὶ αὐτὴ ἡ
 ἀνθρωπώμορφος εἰκὼν, ἀντὶ
 τῆς βδελυρᾶς εἰκόνοσ· καὶ τὸ
 αἷμα αὐτοῦ ἀντὶ τῶν αἱμάτων
 τῆς κνίσεσ, γένηται ἀνακαλιν-
 σις τῶν σωμάτων, εἰς τὸ ἀνα-
 θάλλειν τὴν ἀνθρωπότητα ».

Եւ զվի սպա .

« Եւ քանզի ուսէին և ընկէին
 մարդիկ արիւմ զոհից ամասնոց
 դիցապաշտութեամ, վասն այսո-
 րիկ եհեղ զարիւմ իւր 'ի վերայ
 փայտիմ . զի փայտն ընդ դրօշակ
 փայտիցն, և ինքն ընդ մարդա-
 դէմ պատկերացն պղծութեամ,
 և արիւմն ընդ նուագացն ուրա-
 խութեամ արեանցն, որով և նո-
 րօգումն մարմնոց դաւարութեամ
 մարդկամ » :

Արդ այս հատուածներս, որոց դիմաց ասելի կ'արտափայլի հայե-
 ընթի արտաքին շքեղութեամ հետ՝ Ողյմպէս և լակոնական ճշդու-
 թիւմն, կը պակսէին թէ՛ Փլորեմտեան յոյմ օրինակին մէջ և թէ՛ Գրի-
 զորի վերոյիշեալ գործոց հրատարակութեամ մէջ, ուստի բնակա-
 մասպէս ծանօթ չէր ոչ Ստիլիդիզի և ոչ Լամպրուայի . և կարէ լեցնել
 և իրօք, 'ի զարմամս իմօ, լեցուցեր է յունարէմ Ազաթամզեղոսի
 պակասասոր միջոցմ՝ 9 . Լագարդի հրատարակութեամ 20 և 21 է .
 չներում մէջ: Գիտնական հրատարակիչս կը ծանուցամէ իմօ, թէ
 իմքը Գիտարպէն փոխ առած չէ, և ոչ իսկ մորա երկասիրութիւնն 'ի
 ձեռին ունեցած է . սակայն կը լռէ ասել, թէ իմչ աղբերէ համած է
 զայնս:

Հուսկ ուրեմն յամին 1888 Վատիկանի գրատան երկրորդ տե-
 սուչմ բազմահմուտ Բարսեղեան Հ. Կոցցա Լուցցի գտաւ մի և մոյմ
 գրատան մէջ 2302 թուով (cod. di Gio. Bassanese) մշամակեալ
 կրկնագիր (Palimpsesto) ձեռագրի՝ մի մէջ, այսինքն է 33-48

1 . Որում գրութեամ թուականը կը պակսի, ըսյա Հ. Կոցցա Լուցցի է
 և Ը դարերու մէջ գրուած կը համարի: Եւ յիրաւի, եթէ ուրիշ մշամներ
 ևս չիմէին կրկնագիր լինելմ իսկ բնական ապացոյց էր առ այս . սա-
 կայն 'ի լուսանցս իջի միոյ կ'ըմթեցուին այս տողերս . « Fragmentum
 codicis rescripti in quo persecutio contra Christianos in Armenia,
 rege Tiridate facta ab ethnico quodam describitur ». Այս տողերս
 մշամաւոր չուղղէնի ձեռքով գրուած են, ինչպէս կը ցուցնէ ուրիշ ձեռ-
 քէ մի գրեալ յետագայ տողս: Manuser. cl. viri Hudden Borusii. —
 H. Amatius. և յետոյ ուրեմն Մայ Ծիրամաւորին ձեռքով յաւելեալ տե-
 ղեկութիւնը, թէ Non video qua ratione cl. Hudden narrationem hanc
 ab ethnico quodam scriptam putavit. Mihi potius una est ex illis
 legendis, quae et a Christianis et ad quorum Christianorum solatium
 et excitationem scribebantur atque in Ecclesiis praeegebantur. Մա-
 կայն դիտելու է, որ չուղղէն կամ ձեռագրիս մտութեամ պատմառաւ
 հեթանոսէ մի գրուած կը համարի, և կամ հեթանոսի ձեռքով ոչ եթէ
 պատմութիւնը գրուած, այլ յարուցած հալածանքն հասկանալի է ուղ-

տւեալ պարագաներն իսկ զայս կը ցուցանեն յայտնապէս. այսինքն է Լուսաւորչայ կարծեցեալ վարդապետութեան հեղինակ՝ Ս. պալը բերութեան մէջ թէպէտև որդւոյն Աստուծոյ յաշխարհս զալում և 'ի Գոաէմ մարմնանալում վերայ կը խօսի, բայց մորա մպատակն այս չէ, այլ միայն Հոգւոյն սրբոյ աստուածային գործակցութիւնն և ամենակարող զօրութիւնը ցուցնելու համար՝ մաս 'ի մարդեղութեան և փրկագործութեան աշխարհի ընդդէմ՝ հերետիկոսաց, որք կ'ուրանային զայն՝ մէջ կը բերէ. ուստի շուտով խօսքը Հոգւոյն սրբոյ վերայ դարձնելով՝ կ'ըսուի այսպէս. « Վեց զօրութեամբ նառագայ թիմ վեց հազարեան դարքն. եօթներորդն՝ հանգիստ արդարոց » : Գիտելու ենք որ, աստ « **Վեց հազարեան Գործ** » ոչ հազարամեայց վարդապետութիւնը կ'ակնարկուի, ինչպէս կ'ենթադրէ Թումայեան, և ոչ այլ « Վեց զօրութեամբ նառագայ թիւք » Հոգւոյն սրբոյ շնորհաց թուարկութիւնը կը լինի, որոնք **Եօթն** են և ոչ թէ վեց, լստ խորհրդոց եկեղեցւոյ և ըստ առաքելական ասանդութեան. այլ ուղղակի արարչութեան վեց օրերն կամ լաւ և՛ վեցօրեայ արարչութիւնքը կը հասկացուիմ, յորս ներգործեց Հոգին ընդ չօր և որդւոյ և ած 'ի չզոյ 'ի գոյ. և զհանգիստն եօթներորդ աւուր, որ է օրինակ յաւիտեակեան և հոգևոր շաքաթում կամ դարում, զոր թէ՛ Ս. Բարսեղ՝ և թէ՛ Բարսողի հետևողութեամբ՝ Նազիամզայցին՝ զեղեցիկ խորհրդածութեամբ բարգաւաճած են: Հայագգի հեղինակն՝ մեղուրէն մոցա կարծեաց կարևոր կետերու յիշատակութեամբը միայն բաւականացած է, թողլով զամենայն իմչ 'ի մթութեան: Սակայն դիտելու ենք, որ « Վեց զօրութեամբ նառագայ թիւք » բացատրութիւնը՝ վերոյիշեալ մշամակութեամբ առնելով, մի ուրիշ գաղտմիք ևս կը թուի պարզել մեր դիմաց. այսինքն է Լուսաւորչայ կարծեցեալ վարդապետութեան այդ տեղին Ս. Գրոց երկրորդ թարգմանութեանէն յառաջ զըրուած կը տեսնուի. դիտելով, որ այս բացատրութիւնս համազօր է **Մեծ Գրքի** Բ զվտոյն առաջին տան, ուր յետ յիշելոյ զօրն վեցերորդ՝ ամղէն կ'ըսուի, թէ « Եւ կատարեցան երկինք և երկիր և ամենայն **Գործ** մոցա ». զոր Ս. Եփրեմի **Արարածոց Ժեմաթեան** զլ. Ա. էջ 9 հայերէն թարգմանիչը կը դնէ. « Յաւուրն վեցերորդի կատարեցան երկինք և երկիր և ամենայն **Գործ** մոցա », փոխանակ զարդու: Ուստի ասկէ կը հետևի, թէ ինչպէս Եփրեմի թարգմանութեան՝ այսպէս և՛ վարդապետութեան այս տեղիս՝ Ս. Գրոց ասորերէն բնագրէն ուղղակի առնուած է ըստ առաջին և յանկարծագիտ թարգմանութեան Մեսրոպայ, և կամ 'ի Ա. Եփրեմայ փոխառութիւն է:

Գ. Մի և մոյն ի ին Բ. պարբերութիւնն, որ կը սկսի. « Մեծքա կերպ զԱստուած քարոզեցուք, յօդապատս ամղամօք՝ զամզեալ 'ի հողոյ՝ բառերով, և ապա կը մկարագրին առանձին գործողութիւնք իւրաքանչիւր անդամոց, որք ամենունհաս են իրարու գործոց, ոչ միայն ամհասկանալի մնացած են, այլ մոյն իսկ մոլորական են,

1. De Homini structura, Oratio II, p. 333-342
2. Oratio in Sanct. Pentecosten, p. 705 et seq.

եթէ բացառութեամբ ըմծայեմք Աստուծոյ, որում վերայ կը խօսուի իրօք ամփիշապէս մախըմթաց պարբերութեամբ մէջ. որովհետև Որդւոյն Աստուծոյ մարդեղութեամ վերայ յետոյ ուրեմ կը խօսուի 275 իջի պարբերութեամ մէջ: Արդ բաղդատելով վերոյիշեալ տեղիմ Ս. Բարսեղ մէկ տեղւոյմ⁴ հետ, այնուհետև ոչ միայն այն անտեղութիւնը կը վերմոյ, այլ մոյն իսկ կատարեալ համաձայնութիւն կը կազմուի երկաբանչիւրիմ մէջ: Եւ իրօք աստ Գեաւարացիմ կ'ընէ, թէ ամենայն մարդիկ կը կազմեն զլուծիւն (խորհրդակամ) մարմնոյմ Քրիստոսի՝ ՚ի միութեամ հոգւոյմ Սրբոյ. և մնամութեամբ այլևայլ գործողութեանց անդամոց՝ կը ներկայացմէ հոգւոյմ Սրբոյ բազմապիսի պարզմներմ առ մարդիկ: Ուստի յայսմ իսկ հայագգի վարդապետմ անշուշտ զծոյնը ունեցած է իբր մախազարպիար:

275 իջի երկրորդ պարբերութեանէմ մինչև ԽԾ զխնամարմ եղած ընդարձակ միջոցմ մուխրուած է Բանին Աստուծոյ մարդեղութեանը. յորում սակայմ 10-11 ամգամ կրկնութեամ ձևով կը սկսի և կ'աւարտի աստուածաբանական ցուցակութիւն տնօրինական խորհրդոյմ: Այս ոճով վարուած են Կիւր. Աղեքսանդրացի՝ ՚ի Պատմանց Գիրք, և Բարսեղ Ընդդէմ Անտիոնց ճառիմ մէջ. սակայն առ վերջիմս յայտնի են այնպիսի վարման պատճառքմ, այսինքն է մէկ կողմէմ մէջ բերել հեթանոսաց, հրէից և հերետիկոսաց մտրութիւնքմ և յաղթահարել. իսկ միւս կողմէմ այլ Ս. Գրոց այլ և այլ վկայութեամբք և տրամախօսութեամբ՝ ուղիղ հաւատոյ մասունքմ հաստատել: Սակայմ առ Ազատագեղ, նկատելով որ եթէ այդ վարդապետութիւնմ իրօք Գրիգորի լիմէր, մորա հեղինակի վերոյիշեալ ելուտյնը զխտվիմ ամհասկամալի կը մնայ. որովհետև դիտելու ենք, որ Գրիգորի միակ նպատակն էր նորադարձ երեխայից՝ պարզապէս և համառօտիւ հաւատոյ մասունքմ ուսուցանել, մոցա հասկացողութեամ չափով, ինչպէս որ ծամուցուած է արդէմ յէջ 189 վարդապետութեան մախապատրպստիչ ծրագրի մէջ, և ոչ թէ Արիսեանց, Եւմունեանց, Մակեդոնեանց և Նեստորականաց հերքիչ խնդիրներով և ձեռնարկութեամբք պարապել, որք այն ժամանակամիջոցիմ տակաւին յայտնուած և հայաստանի մէջ դեռ տարածուած չէին: Եւ սակայմ վարդապետութեամ մէջ կան այնպիսի տեղիք, որոնք յայտնապէս վերոյիշեալ հերետիկոսութեանց դէմ դարձուած են՝ երկասյրի սուրբերու մման և զամոնք կ'ակնարկեն: Օրինակ իմն, յէջ 276 այս բացատրութիւնս, « Որ ՚ի մարմնոյմ զթեցիմ, ուրացան զբնութիւն (այսինքն է աստուածայինմ) մորա », Արիոսեան միղորութիւնը կ'ակնարկէ: Իսկ յէջ 286 « Այն հօր և Բազովմ » պարբերութեամբ և յէջ 290 Բ պարբերութեամբմ. « Այլ յատալ քան զամենայն յաւիտեանս ծնաւ ՚ի հօրէ », և այլմ խօսքերով՝ ուղղակի այն միղորութեան հերքումը կը լինի: Եւ յէջ 284 Բ պարբերութեամ մէջ. « Բայց զԱստուած գոյիւ (գոյացութեամբ) ոչ տե-

1. Lib. De Spiritu Sancto, CXXVI. p. 51-52.

սեալ¹ ուրուք, ոչ հրեշտակաց և ոչ հրեշտակապետաց », այլովք համդերծ, զճնտմոխ և զհամախոս կը հարուածէ, որ յամբզճեցաւ լսել, թէ ի՞նքն այնպէս ակմերև կը ճամջմար զԱստուած ըմաւորապէս, ինչպէս որ Աստուած ամծամբ կը ճամայէ զամծմ իւր: Յէջ 287. « Արդ առաքեաց Աստուած զՀօփն սօսքի ՚ի կոյն Մարիամ, և իսկ Աստուածորդին մարմին ՚ի Կուսէն », և յէջ 291 Բ. պարբերութեամ մէջ. « Եւ յղացեալ այնուհետև ՚ի Հօփն Սբբոյ շնորհագիւտ Կուսին յամապական արգամդին զՍբբին Աստուծոյ », և աւելի բացայայտ կերպով յէջ 530, « Տես զՀայրն կատարեալ, զՈրդին ճշմարիտ և զՀօփն հասարի », և այլ. բացատրութեամբ կը հերքէ և կ'իղծանէ Մակեդոնի և Փոտիմոսի, մոլորութիւնը, որք զՀոգին Սուրբ արարած կը համարէին Որդոյ, և ոչ Աստուած ամենազօր և էակից: Յէջ 281, խօսելով Բանին Աստուծոյ մարդեղութեանը վերայ կ'ըստի. « Սակայն իբրև Աստուծոյ ինչո՞ք յերկն է և յերկն, սո՞չօք և ընդ Հօք »: Այս բացատրութիւնս ստէպ ՚ի վար արկանեն Աստուածարանն և Բարսեղ. բայց վարդապետութեամ հեղինակմ հաւամբօրէն Նեստորականաց և Գաղղիկեանց մոլորութիւնը ցրելու համար մէջ բերած է աստ, որոնք ըստ վկայութեան Մ. Կաղանկատուացոյ (Բ. գլ. Ե. էջ 95) Ե դարում երևեցան ՚ի Հայս և կը վարդապետէին, թէ « Միմջ ՚ի յերկրի էր Տէրն մեր Քրիստոս՝ յերկինս ոչ էր, և միմջ ՚ի խաչին էր՝ չէր յաթոռ փառաց, և միմջ ՚ի գերեզմանի էր՝ ոչ էր ընդ աշխէ հօր ». զորս յետոյ ուրեմն Յովհաննէս Կաթողիկոսն և համգոյն Ս. Սահակայ մզովից ընդ Նեստորի և ընդ Թէոդորէտոսի:

Մի ուրիշ և ակն յայտնի ապացոյց վարդապետութեանս յետնութեան և ամհարազատութեան է ըստ իս, հետևեալմ. արդ կը տեսնենք, որ թէ Յանախապատումի և թէ Գրիգորի համառօտ վարդապետութեամ մէջ ստէպ ստէպ աստուածային ընութեան և Բանին Աստուծոյ Աստուածութեան վերայ կը խօսուի, և այն պարզապէս Ս. Գրոց վարդապետութեամբ. իսկ մարդեղութեան մասին հազիւ թէ երկիցս, և այն յոյժ համառօտի և առանց ընդդիմադրութեան վերոյիշեալ հերեպիտութեանց: Այլ Գրիգորի կարծեցեալ ընդարձակ վարդապետութեամ մէջ, ընդհակառակն, հեղինակին ուշադրութիւնն և զրութեան ընդարձակագոյն մասը զրաւած է մարդեղութեան ճառը: Մամաւանդ թէ այնպիսի զէմքեր և մետեր բանից և բացատրութեանց գործածուած են Նեստորականաց դէմ, զորս անկարելի է չտեսնել, և որք ուղղակի Ե դարը մատմամիշ կը ցուցանեն մեզ: Այս տեղեացմէ չորիս միայն բաւական կը համարիմ մէջ բերել: Յէջ 286 կ'ըստի. « Հաւատք ճշմարիտ այս են. խոմարհեցաւ և իստեաց զԱստուծոյ ընդ մարդկութեանս և զամենուն ընդ մեռտոս ... յորժամ հարեալն առ հօր ընդ աշխէն եմուտ, և իստեաց զիւր (իմա զընութիւն մեր) յԱստուծոյ ինչո՞ք իբր

1. Ըստ ըմական կարողութեան հասկամալի է և ոչ թէ որ և է կերպով, հեղինակին այս բացատրութիւնը:

Ռեպրէն Որբին » : Յէջ 283-284, « Հինաւորացն վասն մեր մարտա-
 ցա... Մակայն թէպէտ և զգեցաւ մարմին և էջ 'ի մեր մասնու-
 թիւմ. այլ կայ 'ի հայրենի բնակեան Աստուծոյն խորայ. որպէս և
 էր իսկ և է կայ յաւիտեան ընդ չոր 'ի բարձունս խորս խոնկան
 հանդիման մարտն զոր 'ի մեզն գեցցաւ » : Յէջ 283, « Եւ ինքն ծնաւ
 (Բանձն Աստուած) 'ի կուսէմ, և խորոյ կանոյ կատարեաց զկամս ա-
 ռաքչիմ իւրոյ ... զի ցուցցէ զխաւարական, զանոյ, անբախն ինձնու-
 թեան Ռեպրէն » : Եւ հուսկ ապա յէջ 282, « Զի թէպէտ զկերպ-
 բան խաւ և զմարմն մարդկան, այլ խառնեաց, միացոյց, ընդմեաց 'ի
 զմարմնն յԱստուծոյն խորս » :

Արդ այս տեղեացս, բայց 'ի մասնաւորի վերջնոյմ մէջ, հեղինակ
 վարդապետութեանմ զնեստորականս առաթուր հարկանելու և ա-
 տուածային և մարդկային բնութեանց անքակ և անբաժանելի միու-
 թիւնմ յամեն Բանին Աստուծոյ հաստատելու համար՝ այնպիսի սաստ-
 կութիւն ստիպուած է տալ իւր բացատրութեան, որով առանց իւր
 ուզելում մինչև նետրեակամութեան սահմաններում մտտեցեր է, մա-
 նաւանդ թէ, քայլափոխ մի ևս առած է, « ընկզմել » բառին միամար-
 թէպէտ և անուրամալի է, թէ մա ինքն յայլնայլ տեղիս վերջնմ մո-
 լորութեան և անդձեռք դէմ իսկ կամիսեր և անանցանելի պատուար-
 մեր կամզներ է : Բ. Դիտելու կարևոր կէտ մի է և՛ այս, զի անշտի-

1. Դիտելու է որ Մշոյ Առաքելոց վանքի հմազոյմ և երկաթագիր ծառ-
 ըմտրի մէջ, գոր յօրինած է հաւաքաբար Ը դարու լուսաւոր համայն-
 անբէմ մին, այսինքն է Սողոմոն Մաքսնոցաց վանահայրմ, ըստ վկայու-
 թեան յիշատակարանին, վարդապետութեան սոյն հատուածը մէջ կը
 բերուի բառ առ բառ. բայց աստ փոխանակ « ընկզմեաց » ի « Վերա-
 ցոյց » գրուած է : Առ Ս. Եփրեմի, Մեկն. Զամբարբառ, գլ. Բ. էջ
 26 մտն բացատրութիւն մի կը լինի վասն քրիստոսի այսպէս. « Ի ժա-
 մանակին յայնմիկ՝ յորում էջ Աստուածութիւնմ զգեցաւ զմարդկու-
 թիւնմ, իսղաղութիւն յերկիր աղաղակէին հրեշտակքմ : Եւ 'ի ժամա-
 մակին յորում Ել վերացաւ մարդկութիւնմ ընկզմեալ յԱստուածութիւն
 և մտեալ ընդ աջմէ, իսղաղութիւն յերկիրս աղաղակէին մամկտին ա-
 ռաջի մորա. Օրհմութիւն, ասէին, 'ի բարձունս » : Յամին 1876, Ս. Ղա-
 զարու լատին հրատարակութեան մէջ, « ընկզմեալ յԱստուածութիւն »
 բացատրութիւնը դուրս թողուած է՝ առանց ծանօթութեան, յասիլմ.
 Quando autem humanitas, unita Divinitati elevanda erat, ut sederet
 a dextris. Դիտելու եմք, որ լատին թարգմանիչք, այսինքն է և. Մկր-
 Աւգերեան և Մէսսիմզէր, միաբնակացմէ մերմտնուած և իբրև նետի-
 քական Ոկատել եմ սոյն բացատրութիւնս. ոչր աղագաւ բնագրի իմաւ
 տրմ իսկ յեղաշրջած է : Սակայն ըստ իրին այնպէս չէ. որովհետև Եփրեմի
 յիշեալ տեղոյմ Բ. մախաղասութեանը մէջ՝ քրիստոսի մարդկային ընու-
 թեան վերայ կը խօսուի, ըստ որում համբարծեալ էր յերկիրս և փա-
 ռաւորեալ էր յԱստուածութեան իւրում, ըստ այնմ. « Եւ ընկզմեցի
 մահկանացում 'ի կենաց ամտի » : Արդ Գրիգորի կարծեալ վարդապետու-
 թեան հեղինակն, եթէ Եփրեմէն իսկ օգտուած համարինք, պէտք է ը-
 սել, թէ սիսլ կողմն առած է իւր մախորդին իմաստը. և կամ ըսել, թէ
 յետոյ ուրեմն ստուգելու մերմտնուած անհարազատութիւն է : Եւ իրօք,
 թղթոց գրքի մէջ Մահակայ կաթողիկոսին ընծայուած անհարազատ
 թղթի մի մէջ գրուած է, թէ « Առ իսառնեաց միացոյց յինքեան և ը-
 կըմեաց զմարմնմ յԱստուածութեան » :

բառով՝ զոր իբրև թակ կոչկոնիչ մուրուրութեամ Նախիբէսի 'ի գործ ածեմ ամենայն Հարց ժողովոյն Քաղկեդոնի, աստ բոլորովին զանց ետուծ. ուստի առանց երկբայութեամ կը հետևի թէ այդ էջերն ստուգուի այնպիսի ժամանակի մի մէջ զրուած եմ՝ երբ Նախիբէսացի մուրուրուցը դեռ գոյութիւն չունէր, ասպա թէ ոչ 'ի հարկէ գզուցանալու էր այնպիսի մրցութեանէն, յորում իւր մախայարձակ թշնամին զնեստոր զգետնած և զհմաթափ ըրած ժամանակ՝ իւր զէմքերն հետազային ձեռքը տուած կը լիմէր՝ զհնքն զգետնելու համար: Ուրեմն պէտք է ըսել թէ, ճիշդ այն ժամանակ զրուած է՝ երբ Նեստորականութիւնն Հայաստանի մամկանց մէջ սկսած էր կամ սկսելու մօտ էր կրօնական մախնիրներ զործել, մոյն իսկ հեղինակին կենդանութեամբը: Յիրաւի, իբրև ամօխտելի ապացոյց այս բանին կը տեսնենք, որ Գեսարիոյ և Աղեքսանդրիոյ դպրոցի Հարց¹ գիտու-

1. Ստուգուի յէջ 275 Բ պարբերութիւնն, յէջ 276 Ա պարբերութիւնն և 281-282 էջերու, այսինքն է Խ գլխահամարով սկսող երկու պարբերութիւնքն, ինչպէս նաև 286 և 287 էջերը՝ Նազիանզացու 1Ե և 1Զ ճառերու հետևողութեամբ յօրինուած են, ըստ վերոյիշեալ յուն. և լատ. հրատարակութեամ, որոց ոսկեղարեամ կամ Ե դարու թարգմանութիւնն ևս ունինք ԻԶ և ԻԹ ճառքնորաց մէջ: Յիրաւի, այս բանին ապացոյց են, մի յերկուց մոր խառնումն կամ պարզապէս խառնումն աստուածային և մարդկային բնութեանց բացատրութիւնը, զոր ըստ վկայութեան ոսկեղարեամ շարակամին և ամենայն Հարց, ուսոյց Ս. Գր. Աստուածաբան, և վարդապետութեան հեղինակն, ինչպէս տեսնուցան, երիցս և չորիցս գործածել է: Ստուգուի Գրիգ. Նազիանզացույ 'ի Ծնունդն Քրիստոսի ճառին մէջ այսպէս գրուած է. «Մի յերկուց ընդդիմակաց մարմնոյ և հոգւոյ, յորոց միմն աստուածացոյց և միւսն աստուածացու. ո՛ր մոր խառնմամբ. ո՛ր սքանչելի խառնութեամբ. խառնի, զի մամենան, զմամն մարքեցեղ »: Բ. ամբողջական տողեր և աստուածաբանական բացատրութիւնք, բառ առ բառ մոյն են ընդ տեղեաց Նազիանզացույ. օրինակ իմն, յէջ 287 Բանին Աստուծոյ համար զուրցուածք, թէ «Հարկ էր զի նույն սրբեցեղն, որով հաստատեցան » համծայն է 1Զ ճառի 578 իջի մէկ տեղոյն. այսպէս նա և հրեշտակաց երևման. «հոգուաց զուշակման, — մարոյն, — խամծարոց և մոգուց վերաբերեալ գեղեցեկ խորհրդածութիւնքն, և յէջ 275 Բ պարբերութեան վերջին տողերը, մոյն են Նազիանզացույ 1Զ ճառի 575 իջի տեղոյն և 1Ը ճառի 620 իջին: Յէջ 285. «Մի միայն Տէր, երեքանձնական զօրութիւն. երեք անձինք, մի զօրութիւն, » և այլն, ամբողջ տեղին, մամն է Նազիանզացու Ներորդութեան մէկ տեղոյն. (Տես 'ի ճառքնտիրն ԻԶ. էջ 48): Գ. Դիտելու է, որ ըստ վկայութեան Նիկիականի (Պատմ. Եկեղ. Գիրք ԺԲ. գլ. ԺԳ) Ս. Գր. Նազիանզացի միաբանութեամբ ամենայն Հարց յօրինելով զՀամգանակն Գ. Պօստոյ տուր թողովոյն, արևուց ինչ իմն 'ի Նիկիականն. այսինքն է Նիկիոյ Համգանակին մէջ ըսուած էր որդւոյն Աստուծոյ ծննդեան համար, «Ծնեալ 'ի չօրէ » միայն. իսկ Աստուածաբանն յաւելի, «Ծնեալ յառաջ քան զամենայն յաւիտեանս » Փոտինոսի մուրուրութիւնն հոգանելու համար: Արդ այս վերջին ձև ճիշտ գործածուած կը գտնենք առ Ազատամզեղ, յէջ 290 Գրիգորի կարծեցեալ վարդապետութեան մէջ: Գարծեալ Նիկիական համգանակին մէջ ըսուած էր, «Էջ և մարմնացու » պարզապէս. իսկ Գ. Պօստականին մէջ արևուց Գրիգոր, «Էջ յերկուց և մարմնացու Հոգւով Սրբով 'ի Մարիամայ կուտէն »: Այս ձև իսկ գործածուած է Ազատամզեղայ 289 և 290 էջերում. որոնք ամտարակուսելի մշամներ են 'ի վեր ամբը ըսածին:

Թեամբ զինեալ քաջամարտիկ վարդապետմ յետ խայտառակերոյ զթշմամիս նշմարտութեան և ուղղափառ հաւատոյ դաւանութիւնը հաստատելմ վերջ, կը փութայ անդէմ և 288 իջի մէջ յորդոր ևս կը կարդայ արիւնարբու գայլերէմ վարատեալ իւր հօտին, զոր հայրագուրք սիրով կ'ուզէ ազատել 'ի գիշատիչ ժամնաց, չխտորիլ բռնա 'ի կարգաց իմաստութեան յկեղեցոյ « մի յաջ և մի յանհաւ » . կը նզովէ այնպիսի միւրրութեան որոմնացան սերմանողս, ասելով այսպէս . « Ջի որ սերմանեսցէ զայնպիսի սերմանիս 'ի լսելիս լսողաց՝ այնպիսիքն նզովեալք են, թէ և հրեշտակ իցէ յերկմից, իբրև զօծ նզովեալ հողակեր » : Ամենայն ոք կը տեսնէ, թէ այս խօսքերս ամհատկանայի կը մնան Գրիգորի կամ Որբա ժամանակակցի մի բերամուտ . որովհետև այն ժամանակ դեռ ոչ սերմանացանք քրիստոնեայ աղանդատրաց կը գտնուէին 'ի Հայս, և ոչ այլ Արիւսի միւրրութիւնը ծագած էր, երբ մա վարդապետեց զՀայաստանայս յԱւետարանմ Քրիստոսի Աստուծոյ : Սակայն մասնաւոր ուշադրութեան արժանի է հետեւեալ երևոյթմ . այսինքն է 290 իջում հեղինակ վարդապետութեանմ Կիւր . Աղեքսանդրացոյ Պատրիարք ԺԳ զլսոյմ մէկ տեղոյմ յառաջբերութեանը կը կնքէ Մարդեղութեան նառն, այսպէս . « Նմա փառք ամենատեառնմ, որ վասն մեր կեանաց մարդացաւ և մարդակերպ շրջեցաւ » ; այլովք հանդերձ : Եւ ստուգել այս տեղիս յոյմ վարդապետէմ փոխ առնուած իմնելու մէկ յայտնի ապացոյցն ևս է հետագայ բացատրութիւնը . « Եւ ել և մատաւ ընդ աչնէ Ծնողին իւրոյ Աստուծոյ և Հօր » . որովհետև դիւստուած է, որ այս Ս. Վարդապետս՝ իւր զրութեան մէջ գրեթէ միշտ Աստուծոյ առընթեր՝ և շողկապով կը դնէ Հօր անունն ևս, հաւանօրէն Սարգէլեանց միւրրութիւնը եղծանելու նպատակաւ կամ տարտոնեան փողին հետ դաշմակաւորելու աղազաւ :

Ոչինչ ընդհատ ուշագրաւ է Գրիգ. Ամաւարզեցոյ՝ Օշնի համար յօրինած Յայտարարութիւն (Գ), որուն յէջ 597, Գեկտ. ԻԵ (Քաղոց ԺԹ) այսպէս գրուած է . « Տաւն Ծննդեան Քրիստոսի Աստուծոյ մեր . Ի ճառէն Սրբոյն Յովն . Ուրբերանք՝ Աստուծոյ Բաժն . « Տէր Աստուած մեր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ, որ էրն իսկզբանէ

Յէջ 290 Բ պարբերութեան մէկ տեղին, յորում Քրիստոսի յակտեմնակամ ծննդեան համար կ'ըստուի, թէ « Այն Ծնողոյ Հայրն որ զնայն ծնաւ՝ մա միայն զհօտէ », և ժամանակաւոր ծննդեան նմանք, թէ « իսկ երկորդ ծննդն, շնորհօք իւրովք 'ի մէջ մարդկանմ », բառ առ բառ մոյմ է Գրիգ. Մթանչեագործի ընծայուած Ծննդեան ճառի մէկ տեղւոյմ հետ . որում հայերէմը միայն կայ (Sbu Pitra, Anal. Sacra Spicil. Solesm. T. IV, p. 186, Parisiis, 1 83), և ըստ ամենայնի Գր. Աստուածաբանի ընտրողմը կը կրէ իւր վերայ : Յէջ 281. « Կա եկմ եղև մարդ՝ զի մարմնաւորքս տեսանել կարացեան, » և այլն, տեղինմ մոյմ է քիչ առաջ յիշատակուած ճառի յէջ 141 տեղւոյմ հետ, և յէջ 282. « Հիմաւորցմ վասն մեր մանկացաւ, զի զմեզ փոխեսցէ յամանութիւն իւր », մոյմ է դարձեալ Յոյն սուրբ չօր 138 իջի տեղւոյմ հետ : Բաց 'ի միմչև հիմա յիշուած Հարց տեղեացմէ՝ կամ դարձեալ Ս. Պրոկղի առ Հայս և Հայոց առ մա գրուած պաշտօնական թղթերէմ ևս համամամ տեղիք, թէ և ոչ այնպէս բառ առ բառ :

ծննդիս Աստուած՝ առ Աստուած, յորժամ կամեցաւ ան զմարդկան կերպարանս » ... , և այլն : Այս հատիս սկիզբը թէ և տարբեր բառերով կը սկսի, բայց շարունակութիւնը բոլորովին և բառ առ բառ նոյն է Ազաթանգեղայ 281, 282 և 283 էջերում Գրիգորի կարծուած մարդեղութեան հատիկն հետ : Այսպէս մաս յէջ 607 մի և նոյն Ցայսմատուրքի Դեկտ. ԻԸ (Քաղոց Ի) գրուած է. « Դարծնալ է նոյն հաստ Բովն. Ուիբերանէ » . « Հիմաւորցն վասն մեր մարմնացաւ », այլովք համոզեմ, որ ըստ ամենայնի նոյն է Ազաթանգեղայ 283 իջիմ : Հոսկ ուրեմն յէջ 621 կը գտնենք. Դեկտ. Լ. (Քաղոց ԻԱ) . « Վերստին տաւն Ծմնդեան ճեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ ՚ի Մարիամայ Գուհէն Հոգւով Սրբով ՚ի Բեթղեմ հէմ Յուդայ. Երանելոյն Բովն. Ուիբերանէ ՚ի Ծնունդն Քրիստոսի » . և կը սկսի. « Արդ տես զիմչ պատմէ մեզ Միքիայն, շնորհք Հոգւոյն մարգարէութեան » բառերով, որ դարձեալ բառ առ բառ նոյն է Ազաթանգեղայ 288-290 էջերուն :

Թէպէտև Ոսկեբերանին մեզի ծամօթ Ծմնդեան հառերու մէջ եւ չկարացի գտնել վերոյիշեալ հատուածներն, սակայն շատ հաւանակամ է, որ իրօք սուրբ հայրապետիս անյայտացած հատերէն միոյն բանաբարութիւն եղած լինին, զորս կը յիշեն բազմահմուտան Փոտ և այլք : Ստուգիւ հետևեալ պարագայքն իսկ այսպիսի մի եղբւրեան մպաստամատոց կ'երևին : Ա. Դիտելու է, որ Աստուծոյ Ցայսմատուրքն յումակամ մի Ցայսմատուրքի վերայ յօրինուած է և յարմարուած, պարունակելով իւր մէջ նոցա տօներն և տօնական աւտուրց յիշատակութիւնքը : Բ. Եթէ այդ հատուածներն Ոսկեբերանի անուամբ յումարէն Ցայսմատուրքի մէջ չգտնուէին, Գրիգ. Ամաւարգեցի վարէր այն աստիճան տգիտամալ, միմչև Ազաթանգեղայ հայերէն հատուածներն՝ Յոյն սուրբ Հօր ընծայել, և ընծայել ոչ միայն առանց՝ այլ և հակառակ բանաւոր պատմաբանաց : Գ. Վերոյիշեալ Ցայսմատուրքի մէջ զկմի Դեկտ. Լ. կարգեալ է տօն Ս. Ստեփանոսի մախավկային հանդերձ մի ներբողներու, որ կը սկսի այսպէս. « Երևելի արեգակամս ընդ երկնաւ ծագելով » : Արդ այս ներբողեանս Ս. Գրոկի Կ. Պօլսոյ հայրապետին ընծայուած է (Bibl. Patrum, T. VI, p. 609. Lugduni, 1677) և թարգմանուած է ՚ի յումարէն բնագրէն : Դ. Ինչպէս Դեկտ. ԻԵ յարմարցուցած հատուածին սկզբը մաւորութիւնն՝ այսպէս այլ Լ. երորդ օրուան հատուածի վերջի ամբողջ պարբերութիւնը, որ իբրև շարունակութիւն համարուած է Ազաթանգեղոսի 291 իշում « Տեսանեն զելն յառաջընծայս » բառերով սկսող պարբերութեանը, կը պակսի առ Ազաթանգեղայ : Ե. 293 և նորա յաշորդող էջերում հատուածներն իսկ՝ ըստ պարունակութեան և ըստ ոճոյն մեծ մեանութիւն ունին Ոսկեբերանի՝ Երանելոյ, Մարտիէ և Ցայսմատուրքի մեկնութեանց տեղեաց. օրինակ ըլլալ այսմ 207 իջի Բ պարբերութիւնը :

Սակայն գուցէ ըստվ, թէ Ազաթանգեղայ վերոյիշեալ հատուածներն իմչպէս կրնան լինել բանաբարութիւն Ոսկեբերանի կարծեցեալ մտաբանի, միմչեւ յայտնի կերպով տեսնուեցան ամդ նազիան

զացույ համամամ տեղեր՝ Այս բանն շատ դիւրահասկամալի է մոզա համար, որովք բաղդատած են կամ բարեհաճիմ բաղդատել Ոսկեբերամի գրութիւնքը՝ Աստուածաբանի գրուածոց հետ, ուր յայտնապէս կը տեսնուի, թէ որքան վարդապետութեամ հեղինակը՝ Ոսկեբերամիմ, մոյմքամ և՛ Ոսկեբերամ հետևած է Գրիգորի և Բարսիլի: Ուտի այս աւելի անհասկանալի կը մնայ, թէ Ամաւար զեցույմ մեզի ընծայած վարդապետութեամ հատուածներն ինչպէս կարելիմ գտնուիլ Ոսկեբերամի ամուամք ծամուցեալ և յունարէն Յայսմաւուրքիմ ընծայած ճառիմ մէջ: Արդ՝ այս պարագամերս ՚ի մկատի ունելով՝ այսպէս պէտք է եզրակացնել. կամ այն է, թէ վերոյիշեալ հատուածներմ իրօք Ոսկեբերամի ճառիմ բամաքարութիւն են, և կամ ըսել, թէ Գրիգորի կարծեցեալ ընդարծակ վարդապետութիւնն ևս յունարէն թարգմանուած էր, որ թէպէտև միմ չև հիմայ անյայտացած կը մնայ, բայց ամտի հատուածներ մեր մուծուած էիմ մաս յունարէն Յայսմաւուրքիմ մէջ, զոր ՚ի ձեռիմ ունեցաւ Ամաւարզեցիմ. իսկ վերոյիշեալ հատուածներն համամամ գտնելով Ագաթանգեղայ էջերուն, փոխամակ ամբողջապէս վերստիմ թարգմանելու զամոմք՝ հայերէնէն ընդօրինակեց:

2

Դձ գլխահամարէն սկսեալ յէջ 303 միմչև Ծ գլխահամարն յէջ 331՝ կը պարունակուի Քրիստոսի ճեառն մերոյ Մկրտութեամ ճառը, համդերծ մախապատրաստութեամք և սքամեչլագործ արգասեօքն դէպի առ ազգս մարդկամ: Ծառիս գլխարոր միւթը, հեղինակիմ դրած կարգաբամութեամ համեմատ, թէպէտև Մկրտութիւնն է, բայց մա իւր յատուկ յառաջբերութեամ ոճով հիմ և մոր կտակարամի այնքամ դէպքեր և վարդապետակամ մեկնութիւններ բերել միացուցել է ամոր հետ, որ հազիւ թէ կարելի է գտնել առամ ձիմ մի յունակամ սուրբ հօր ճառի մէջ: Նորա վարդապետութեամ ոճը՝ հեռի է բարգաւանեալ և տրամաբանակամ ցուցակութեմէ. այն մէն մի պարբերութիւմ՝ համառօտ և վսեմ աստութեամք պէս պէս վճիռներ և միւթեր յառաջ կը բերէ: Նա իւր խորիմ համութեամքն և ճարտար գրչաւ՝ թէպէտև տէր է իւր յառաջ բերած վարդապետութեանց, և ազատ կը տեսնուի ծառայակամ մամնութեմէ՝ այս կամ այն հօր, այս իմչ կամ այն դպրոցիմ, բայց համդերծ այսու ամեմայմիւ չէ մարթ ամէն բամ ամոր սեփակամ համարել, մամաւամդ ուր մի և մոյմ ճիւթի վերայ՝ իրարմէ տարբեր կարծիքներ կ'արտայայտուիմ: Դիտելու ենք դարծեալ, որ հեղինակիմ վարդապետութեամ պարզ հայեցողակամ տեսութեամք կը պարապի, խիստ քիչ կամ բմաւ գործնակամ խմդիրներու չիջմար: Օրիմակ իմն, հաւատացելոց գուրբ մկրտութիւնը միմչև կենաց վերջիմ օրերն յետածգելու կարևոր խմդիրն, որուն վերայ Բարսեղ, Նազիամ զացիմ, Գր. Նիւակայի և Ոսկեբերամ մեծ ուշադրութիւն դարծուցած են՝ իրենց ճառերու մէջ, և միշտ կը յորդորեն զժողովուրդը փութալ

առն այն. հայազգի հեղինակս, ըմբռակառակն, և ոչ իսկ խօսակցութեամ միւթ կ'ըմէ զայն. այլ երկիցս, այսինքն է 310 և 329 էջերուն մկրտութեամ հարկաւորութիւնը ցուցանելով կ'անցնի: Արդ այս երկուքս կարծէք, թէ վարդապետութեամն հմութիւնն ապացուցանող փաստ մի է, եմթադրելով, որ Գրիգորի՝ զհայս վարդապետած ժամանակ, ոչ այնպիսի զեղծումն զայր և ոչ այլ պէտք ազդարարութեամ. սակայն, ըստ իս, սորա հակառակն հետևցնելու եմք բոլորովին. որովհետև մախ եկեղեցական պատմութիւնը ամենէն անելի չորրորդ դարը կը մերկայացնէ մեզ իբրև օրինակ այսպիսի զեղծմանց կամ սովորութեանց, յորում հաւատացեալք միւթապէս կ'ուզէին Քրիստոսի օրինակից հետևելով չափահաս մկրտուողի: Բ. Գրիգորի ժամանակ անելի պէտք կար ազդարարութեամ, երբ հեթանոս Հայաստանեայց շատերը բռնի ըմբռնելով զքրիստոնէութիւնը՝ դժկամակութիւն կը զգային մկրտուելու. շատեր ալ կամ միջոցներ չունենալով կամ մկրտութեամ հարկաւորութիւնը չիմանալով կը յապաղէին զայն, քան թէ Ե դարուն, յորում Հայաստանեայց եկեղեցական կանոնաց զօրութեամս ստիպուած էին ամենայն հաւատացեալք ՚ի ծնանելը՝ ոչ միայն փութալ մկրտել զմանկունս, այլ մասնաւոր թէ տալ և զիւրն օծութեամ կամ զկնիք հոգւոյն սրբոյ: Այս բանս բացապայտ կերպով կը տեսնուի Մ. Մահակայ կանոնաց մէջ, յորս ստէպ կը յիշատակուի խորհուրդն մկրտութեամ և վերածնութեամ. բայց չկայ մոյմպէս յորտր կամ ազդիմէ առ ծնողս կամ պարզ հաւատացեալս. այլ քահանային՝ Արդ այսպէս կամ այնպէս պէտք է ըսել, թէ այս ճառիս վերայ ևս կը տեսնուի յետին ժամանակի ըմպոլորչը: Յիրափ, բաղդատելով զայն մէկ կողմէն Ոսկեբերանի՝ Յովհաննու Աւետարանի, Մատթէի և Եսայեայ Մեկնութեանց հետ, միւս կողմէն այլ մոյն սուրբ հօր և Նազիանգացոյ Ըբ֊գոյն֊ցի և Յայրն֊ն֊ն ճառերուն հետ, այնուհետև կարելի չէ չնկատել նոցա հետ ունեցած ըմբռանուր մասնութիւնն. թէ պէտև ՚ի մասնաւորի կը գտնուին ուրիշ տեսութիւնք և տեղիք՝ որք մերթ մոյն հարց միւս ճառից և մերթ այլ Մ. Բարսղի և Եփրեմի հետևողութեամբ յօրինուած են: Յէջ 313 Բ պարբերութիւնն ուր Բանին Աստուծոյ համար կ'ըսուի. « Միթէ բարբառ լոկ իցէ » ... այրովք հանդերձ, գրեթէ բառ առ բառ մոյն է թէ Մ. Բարսղի « Ի սիլբանէ եր Բանն և Բանն եր առ Աստուած՝ ճառին յէջ 136 (ըստ Պարիզեան հրատարակութեան) մէկ տեղւոյն հետ. և թէ Մ. Եփրեմի, ՄԻՆ. Ա. եր. Համբարբառ, գլ. Ա. էջ 7 մէկ տեղւոյն հետ, բայց տարբեր թարգմանութեամբ, ուր կ'ըսուի այսպէս. « Առ քոյնց եր քան յոյն լիցես », և ինն֊արհեց֊ցոյնն առ յայն, զէ յոյն չէ ՚ի զսիլբանէ: Քանչէ յառաջ քան զսիլբան չէր նա, և յեր ասիլբան զորն յետ չէ, որք ոչ եթէ յոյն եր նա, այն՝ որ նա իննն եր նախ֊ն֊ն կերպարանաց Հօրն իբրայ. և ոչ եթէ նա յոյն Հօր, այլ պարսիք նորս », և

այլմ: Արդ, ես կարծեմ թէ ինչպէս վարդապետութեան հեղինակին՝ այսպէս և Ս. Բարսեղի աղբիւր եղած է Եփրեմի այս տեղիւ: Ուստի յորմէ ևս օգտուած համարինք ըստ իրին, այս յայտ է թէ այս երկու սուրբ Հարցմէ շատ տարիներ վերջ ծաղկեցաւ մա: Յէջ 306, Ա պարբերութիւնն, յորում մկրտութեան սուրբ աւագամը՝ մախաստեղծ չուրց կը մմանցուի, որոց վերայ երբեմ շրջելով Հոգին՝ բնական ծնամելու կեմդամութիւն կուտար, այսպէս ևս գալով 'ի շուրս աւագամիմ՝ հոգևոր կեմդամութիւն կը պարգևէ մարդկամ, Ս. Եփրեմի Աբարաթոյ Դիւանութեան Յիշի տեղոյն յաւաշբերութիւն է, զոր ստուգիւ յամուծ Ասորի սուրբ Հօր մէջ կը բերէ մաս Բայսեղ 'ի Մեհարութեան Վեցօրէից: Սակայն ինձ աւելի հաւամակամ կ'երեքի ասել, թէ հայ վարդապետն այս անգամ ուղղակի առ Ոսկեբերամի օգտուած իմի անտի: Եւ ստուգիւ, այս բամիս ապացոյց համարելի է այն տեղոյն ամմիջպպէս մախորդ պարբերութիւնն, յէջ 305, որ « Եւ վասն զի գերկիր զառաջիմն 'ի չուրց փարատեցուցեալ » բաւերով կը սկսի, և միայն յոյն վարդապետին քով կը գտնուի, գրեթէ բառ առ բառ: Բ. Առ Եփրեմի՝ համառօտ է այն տեղին, իսկ առ Ագաթանգեղ ընդլայնուած:

Յէջն 326, ինչպէս մաս մախըմթաց երկու էջերու հատուածներն, յորս մմանութեամբ հարսի և փեսայի կը խօսուի Եկեղեցւոյ և Քրիստոսի վերայ, հետևութիւն է Ոսկեբերամի՝ Ցովհաննու Աւետուարին մեկնութեան գլ. Գ. տեղեաց: Գեղեցիկ է Երգ երգոցի հարսին երկու տեանց՝ հիմ և մոր Գտակարամաց մմանութիւնը: Յէջ 341 խօսելով աստուածային ըմթրեաց և սուրբ Հաղորդութեան խորհրդոյն վերայ՝ վեց տողով և ամծուկ տամ մի մէջ կը վճարէ զայն: Տեղոյս հմութիւնն ամտարակուսելի է. զի երկու տեսակաւ իսկ հաղորդելու գործալարակամ սովորութիւնը յայտնի կերպով կը ծանուցամէ « փրկութիւնագործ մարմնոյ և արեան » Տեսում մերոյ, ըստ մախկիմ դարուց. այնպէս որ քաջ կը համաձայնի Ագաթանգեղայ 610-611 և 622 էջերու կրկին տեղեաց հետ: Արդ, այս հատուածիս վերջի խօսքերէն իսկ, որք կը գտնուին 342 իշում և ամենևին կապ չունին մախըմթաց բամից հետ, կը տեսնուի, թէ պակասատր է: Ի՞նչ քաջ մէջ, յէջ 345, սքամչելի հատուածն, զոր առիթը բերաւ կամխել հրատարակել յամին 1889 « Բագմավիպի » Հոկտեմբերի Պրակիմ մէջ, եթէ որոշակի « Եղևի » Մշակ » վերմագիրը իւր վերայ չի կրէր, կ'ախորժէի զետեղել աստ՝ հատուածիս թերին ամբողջացնելու համար. որովհետև այն կէտմ՝ ուր առ Ագաթանգեղ կ'աւարտի Հաղորդութեան ճառը, անդէն ճիշտ կը սկսի Եզմկայն: Դժուարին է որոշել, թէ արդեօք Եզմկայն՝ Գրիգորի կարծեցեալ վարդապետութեանն փոխ առած է այն, թէ ընդհակառակն, վերջնոյս հեղինակմ՝ յեզմկայ: Այս միայն կարեւի է ըսել

1. Աղամուրի ամգին ձեռագրաց ցուցակին մէջ, զորս յիսուն տարի անաջ յուղարկել էր մաւաւ դէպ 'ի վամս, բայց դէբարդաբար մատնուցամ յամգիւտ կորուստն Հոնկային ովկիանոսի, Եզմկայ գրութիւն

ամերկրայ, թէ երկաթամշիւրիմ թէ ծագումն և թէ համգոյցը Ե դա-
րում մէջ ծրարուած է և ամկէց ամդին չի անցնիր: Յիրաւի, Գրի-
գորի ժամանակին և պարագայից վերաբերութեամբ՝ բոլորովին ամ
հասկանալի կը մնայ վերոյիշեալ տեղին. այդ եթէ մորա կախա-
դանի վրայէն ըրած առանձնախօսութեամ մէջ՝ երեք էջ, այսինքն է
72-75 միջոց մի մուկրուած է ՚ի խորհուրդ մարմնոյ և արեամ
Տեառն, աստ ընդհակառակո, ուր պատենին և պահանջ ժողովը-
դեամ կը ստիպէին զնա աւելի ընդարձակօրէն և պայծառ բանիւք
մեկմել զայն, ամկարելի էր այսպէս հարեամցի անցնել, եթէ իրօք
վարդապետութիւնը մորա հարազատ գործ համարինք: Ուրեմն կը
մնայ եզրակացնել, թէ այնպիսի ժամանակի մէջ և այնպիսի ժողո-
վըդեան համար գրուած են այդ էջերմ, որոնք ոչ տարակոյս ու-
նէին խորհրդոյս իրականութեամ վերայ և ոչ այլ կ'ամգիտանային
զայմ:

Այժմ կ'ուզեմ ես շօշափել մի այլ պարագայ, որ կարող է լինել
հաստատութիւմ մախլմթաց եզրակացութեամն: Արդ հեղինակս
Քրիստոսի մկրտութեամ և մորա մկրտչին վերայ խօսած ժամանակ՝
յամկարծակի խօսքը կը դարձնէ Քահանայութեամ կամ սուրբ օ-
ծութեամ վերայ, զոր զուգահաւասար թագաւորակամին, մամա-
ւամդ թէ վեհագոյն քան զթագաւորութիւնը դնելով կը ճառէ 318-
321 և 343-345 էջերում, և կը վարդապետէ զայմ յաստուածուտ
Մովսիսի շնորհուած, - Մովսիսէն մինչև ցեովնամնէս չարումա-
կուած, - Յովհաննէս Մկրտչէն՝ Քրիստոսի յամծմուած և Քրիստոսէն
Ս. Պետրոսի սուանդուած, առնելով զնա « վիճ հասարակեան ա-
մնայն եկեղեցեաց », և միւս առաքելոց՝ իբրև « հիմանք », - և Առա-
քելոցմէ՝ մոցա յաշորդ եպիսկոպոսաց:

Արդ, այսպիսի ամտվոր ձկտում մի Գրիգորի համար ամհասկա-
նալի է, վասն զի այն ժամանակ երբ մա կը վարդապետէր զՀայս՝
դեռ ոչ քահանայական մուիրապետութիւմ կար ՚ի Հայս, և ոչ իսկ
թագաւորական զաւազամի հետ պայքար. ուստի վերոյիշեալ է-
ջերմ եթէ Ոսկեբերամի Յարութիւնս Գահանայութեան ճանորու հետևու-
թիւն համարինք և եթէ Սևերիամոսի Եմեսացոյ Գ ճառին, և կամ
Ս. Եփրեմի՝ Աւետարանի մեկնութեամ մէկ տեղոյմ, յայտնի է, թէ
մոցա հեղինակի դիտաւորութիւնմ էր՝ վեր ըռնելով միշտ զՔահա-
նայապետական իշխանութիւնը՝ թագաւորակամին հետ միաբանել,
որք Դ դարում վերջիմ կէսէմ ՚ի վեր իրարու մախանձըմդէմ կ'ըն-
թամային: Եւ ստուգիւ պսպիսի մամնօրիակ ձկտում մի ևս ակներև
կը տեսնուի Ս. Մահակայ Տեպիւն մէջ՝ որ առ Ղազարայ, և ՚ի Մահ-
մանաւորութիւնս կամ կամոմս մորա-, որք հրատարակուած են
Հ-յի. Ս-իւրոց. Բ. հատորին մէջ, և վարդապետութեմէն պէտք է
որ գրուած լինին:

մի ևս կը յիշատակուի. այս վերմագրովս. « Եզմկայ Կողբացոյ՝ թուղթ
առ Մաշտոց վարդապետ Յարագս հաւատոց », որով միայն կարելի էր
պարզիւ հատուակիս և վարդապետութեամ զաղտմիքը. սակայն մարդ-
կանցմէ աւելի միանգք ծովու զամիկայ ըմթեմըլու բաղդն ունեցամ:

Յէջ 360, քառամկիւմ խաչի նշանակութեան և նկարագրի հա-
տուածո՞մ ուղղակի Գր. Նիւսացու 'ի Յարութիւն Քրիստոսի Ա ճառիմ 'ի
հետևողութիւն համարելի է. միայն թէ յոյմ վարդապետս՝ առ Ե-
փես. թղթոյմ զԳ. 18, 19 տանց և ՃԼԸ երրորդ Սաղմոսի « Ես յի
փախեայց յերեսաց քոց », և այլն, տան մեկնութեամբը կը բարգա-
ւաճէ. իսկ վարդապետութեան հեղինակը՝ ժժէ երրորդ Սաղմոսի
25 տունը մեկնելով: Յէջ 350, մեկնելով Չաքարիայ մարգարեու-
թեան ԺԴ. 7 տունն, ուր կ'ըսուի. « Եւ օրն այն յայտնի ճեառն », և
այլն, վարդապետութեան հեղինակը՝ Քրիստոսի մահուան և լուսա-
տրաց այն առթիւ խաւարման ժամուն կը յարմարցնէ, բերելով 'ի
վկայութիւն և 'համիւղի այն տեղիմ. « Յետ վաթսուն և երկու եօթ-
ներորդացմ՝ սպանցի օծեալմ ճեառն »: Չկարեմ՝ ասել ստուգիւ, թէ
որ սուրբ չօր կարծեաց արծագամզը տալով՝ այդ տեսութիւնը կլնէ
հայ հեղինակն. սակայն կը վստահիմ ըսել, թէ այդ տեղիմ պէտք է
որ պակասաւոր լինի, որով և նորա խօսքերն անհասկանալի մնա-
ցել են: Եւ բարբարոզաբար մեր ձեռագրաստան Գ. Ճարտիւն՝
յէջ 673, ԻԳ Ճարտիւն՝ յէջ 320, և ԻԵ Ճարտիւն՝ յէջ 215-
216 հետևեալ հատուածովն այդ պակասը կը լրացնեն, ասելով.
« Չի արեգակն և լուսիմ իսկ եղեն քարոզք յայնմ ժամանակի, զի
արեգակն իւրով խաւարելով բողոքելով զայն տեսիլ խաւարեցաւ.
զի ոչ կարաց տեսանել զճեառն ամարգամս: Իսկ լուսինմ մեծա-
մեծս 'ի բարձանց ամենեցունց զփրկութիւն ամենայն արարածոց
ցուցամէր »: Այս հատուածս անմիջապէս Ազաթանգեղայ 216 իշի
« ցուցեալ » բային կը յաջորդէ, և է ըմբռնումն Գր. Նազիանգաց-
ւոյմ 'ի արք. Պատմ. Բ ճառի էջ 97, (յուս. էջ 696) մէկ տեղ-
ւոյմ, ուր կ'ըսէ սուրբ վարդապետը, թէ Քրիստոսի Աստուծոյ մա-
հուամբը՝ արեգակն և զգալի արարածք ևս սուգ զգեցան: Բայց թէ
արդեօք ուղղակի Աստուածարամէն, թէ առ Ոսկեբերամէ օգտուած
է հեղինակս, 504 իշի քննութեամբը պիտի որոշուի, յորում այս
տեղիս իւր պակասաւոր մասովն և մամր պարագայիւք՝ դարձեալ
կրկնուած է:

Է

Հոգւոյմ սրբոյ Գալստեանը նուիրած ճառն, որ կը սկսի յէջ 366՝
ԾԹ գլխահամարով և կը հասնի ցէջն 477 Ձե գլխահամարիմ, ամե-
նէն աւելի խորհրդաւոր լնունք և ձորեր կը բամայ հետախուզիմ
առջև: Առաջին պարբերութեան մէջ կը ներկայացուի Հոգւոյմ գա-
լուտան և Առաքելոց անմահական բաժակաւ արքեմալն. այս դիւ-
րահասկանալի մի բան է, զի ճեառն մերոյ տնօրինական պատմու-
թեան կարգմ իսկ զայս կը պահանջէր, որուն հետևելով վարդապե-
տութեան հեղինակը քայլ առ քայլ՝ հասաւ միմչև այս կէտս: Սա-
կայն ԿԱ գլխահամարիմ հետ՝ մի տարօրինակ երևոյթ ևս կը բա-

1. Editio Parisiis 1638, T. III, p. 396-397.

ցով դիմագմինս . այսինքն է կրկին բաժակաց՝ ուրախութեամ և դատուութեամ, որոց միտկն, որ կը բղխի 'ի հոգւոյն Սրբոյ, արդարք մոր կենդանութիւն կը զգեմուն . իսկ միւսովը՝ մեղաւորք կը պատուհասիմ: Դիտելու ենք, որ այս կրկին դրուագաց միւթը թէպէտ և մախորդ գլխահամարի վերջի պարբերութեմէն առնուած է, բայց մորա պարունակութիւնն, ըմթացքն և վախճանը՝ բոլորովին յայլ ինչ կը յանգնի: Աստ յայտնապէս կը խօսուի առ հեթանոսիկ կամ հեթանոսական մտղրութեամ մէջ պատահասեալ Հայաստանեայս, ինչպէս Կն գլխահամարի Բ պարբերութեմէն իսկ քաջ կը տեսնուի, և խօսողն է իբրև ժամանակակից ոմն: Մատուակք վերոյիշեալ բաժակաց այլ ոչ ևս են երկոտասան Առաքեալներն և ոչ իսկ 72 աշակերտքն, զորս յառաջին իշում կը յիշէ հեղինակն . այլ են լուսափայլ կուսանք Հայոց՝ Հոփսիմեանք և Գայիանեանք, որք առանց ամուսն կը յիշուին 378 և 416 էջերում . իսկ յէջ 400 Կն գլխահամարին՝ մոցա թիւն ևս կը դրուի որոշակի, ասելով . « Ահա երեսուն և եօթն բաժակք քրիստոսեանք՝ որ եկին պաշտել զծեց » :

Դիտելու կարևոր կէտ մի է և այս . յէջ 419, ՀԲ գլխահամարովը մինչև ցայս վայր կարգաւ յառաջ վարեալ վարդապետութեամ հեռագոյն ըմթացքն յետո մահամշնելով՝ դարձեալ կը սկսի ամիսեալ մարդկութեամ մեղսամած դարուն վերայ նառել: ՀԳ գլխահամարով կը բանայ շրհեղդի և աշտարակաշիմութեամ դրուագները, մէկ կողմէն մեղապարտ մարդկութեան, իսկ միւս կողմէն՝ աստուածախմամ տնօրէնութեանց պէս պէս արարուածներն, յորս զեղեցիկ են հարբելոմեան աշտարակի և տէրումեան խաչին, մախկին լեզուաց բաժանման և Առաքելոց հոգեպարզ և լեզուաց հրաշագործութեանց հակապատկերքը: ԶԱ գլխահամարով՝ դարձեալ կը կրկնուին սոյն կէտերը, որոնք արդէն իսկ կրկնուած էին ՀԴ գլխահամարին մէջ . և կը հասցնեն յէջ 469՝ ԶԳ գլխահամարին, զոր միայն կարելի է կոչել շարունակութիւն ԾԹ գլխահամարին, յորմէ ամսովոր կերպով ընդհատուած է և նարսարութեամբ մեռելոց յարութեամ նառին հետ սերտիւ կապուած:

Արդ այս տեղ հարկադրուած են զկայ առնուլ և հարցանել . ի՞նչ է պատճառ այսպիսի ամսովոր երևութից, և ի՞նչ կը մշամակեն նառիս ոճոյն և միւթոց անակնկալ փոփոխութիւնքն, և վարդապետութեանս ըմթացքին՝ այդպէս աչքի զարճող կերպով յետո մահամշնումը:

Դիտելով մէկ կողմէն ԾԹ և ԶԳ գլխահամարներու միջամկեսալ մասին ամսովոր պարսագաներն, իսկ միւս կողմէն այլ Ագաթանգեղոս զոյգ զոյգ կամ Գրիգորի պատմութեամ հետ ունեցած մամուլութիւնքն, հետեանալ կարելի է եզրակացնել . այսինքն է, կամ այն է, թէ այդ միջամկեսալ մասն ամբողջապէս Ս. Գրիգորի հարազատ գործէ մի առնուած է և իրօք ամոր ըմծայելի է, կամ ամբողջապէս անհարազատ է, և մորա ամծամօթ հեղինակը դիտումս իբրև Նուստրիչ Հայոց կը ձևամայ . և կամ ըսել, թէ ստուգիւ մասամբ մի Գրիգորի հիմաուրց գործէ մի, և մասամբ այլ Ե դարու Հարց հե-

ստեղծութեամբ կազմակերպուած նաև մի եղած է, զոր հոգեզալը տեսնամ ամբիջապէս յաշրջող սրբոց հոփսիսինեանց տօնին առթիւ և հեթանոսաբար ապրող ժողովրդեան մի առջև արտասանուած է, զամենք հրահամզելու համար:

Առաջին մախադասութիւնը չկարէ լինել ճշմարիտ. որովհետև այն միջանկեալ նախնի մէջ կան այլ և այլ տեղիք, որոնք Ոսկերեւ ընդէն բամաքաղութիւնք են. օրինակի աղագաւ, 434, 435 և 382 էջերու պարբերութիւնքը՝ գրեթէ բառ առ բառ Ողմ եմ յոյմ սուրբ հօրս Հովնաթուհիս Բ Ժառհմ 4 երկու տեղեաց հետ, որոց առաջնայն մէջ կ'ըսուի, թէ հոգին Աստուծոյ իմչպէս երբեմն կործանմամբ աշտարակիմ՝ ազգերը բաժանեց, այս պէս ևս գալով յԱռաքեալ՝ զամենք դարձեալ իրարու հետ միացոյց. իսկ երկրորդին մէջ, թէ իմչպէս Որեթական երկիրս՝ թէպէտև իմքիրմէ պարարտ է և բեղմաւոր 'ի պտղաբերութիւն, բայց առանց մշակութեան մարդոյ՝ փուշ և տատասկ կը բուսցնէ. այսպէս և բնութիւն մարդոյ, որ թէ և յԱրարէն բարի ստեղծեալ ընդունակ է առաքինութեաց, սակայն առանց աստուածային շնորհաց և ջանից մարդոյ՝ մեղաց փուշեր կը բուսուցանէ և բուսոյց իսկ, զորս հոգին Սուրբ այրեց երկմատեղաց հրով իւրով: 8էջս 457 և 58 պարբերութիւնքը, յորս ԺԲ. առաքելոց վերայ խօսած ժամանակի յամկարծակի 72 աշակերտաց հատուածը մէջ կը բերուի, զորս հոգին սուրբ կը ղրկէ 72 բաժանեալ ազգաց լեզուները կիացնելու, կատարեալ մամութիւն է Ս. Եպիփանու Գիպրացոյ Առաքելոց ճշմարիտ, որ կը գտնուի ԻԶ ճշմարիտէ մէջ 77: 8էջ 414, Ա պարբերութիւնմ՝ ուր կ'ըսուի, թէ Քրիստոս աղամային մարմինը « խառնեաց միացոյց յԱստուածութիւն », որպէս զի անով յաղթէ սասանայի և պարտաւորէ, որով որ պարտեցաւ Աղամ և պարտաւորեցաւ, բամաքաղութիւն կը տեսնուի Նազիամ զացոյ Բարեբաթեան ճշմարիտէ մէջ տեղւոյն. իսկ Բ պարբերութիւնը՝ նոյն է դարձեալ նոյն սուրբ հօր Ի Գրք Պատմի Բ Ժառհմ (Edit. Coloniae, p. 685) մի այլ տեղւոյն հետ:

Երկրորդ մախադասութիւնն ևս անյարմար է և չկարէ լինել ճշմարիտ. ապ' եթէ ոչ ուղղակի խարդախութիւն մի եմթաղրած կը լինիմք հեղինակի կողմանէ, թէ իւր ժամանակակիցքն և թէ զմեզ խաբելու շահադիտութեամբ: Սակայն սպասիսի խաբէութիւն ոչ Ոորա կողմէն կարէր եղած լինել և ոչ Ոորա ժամանակակիցաց համար հաւատալի. որովհետև Ու հայաստանեայց եկեղեցական դասու բարձրապատիւ և լաւագոյն ամծնաւորութեանց մին էր, և իւր գրութիւնը՝ պաշտօնական և գրեթէ բոլոր իւր ժամանակակիցաց լիովի համակրութեան և ընդունելութեան արժանացած մի գործ, Մովսիսի և Ղազարայ վկայութեան համեմատ: Ուստի մա չպիտի կարենար բնա իբրև Որ ոմ Լուսաւորիչ հայոց՝ խօսել առ Հայս, եթէ իրօք չունենար հիմն իմչ 'ի վարդապետութեան Գր. Լուսաւորչի.

1. Edit. Venetiis, 1784, T. 2, p. 472.

2. Edit. Coloniae, 1690, p. 631.

չպիտի կարենար, դարձեալ, ստէպ ստէպ մատմացոյց առնելով զՀովհիսիմեանս ժողովրդեան՝ և առանց ամուսն խօսել մոցա մա սին և վրնել հասկանալի, եթէ իրօք պատեհն և խօսքը մոցա վերայ չլինէր: Զպիտի կարենար, դառնութեամբ բաժակաց օրինակօք յոր դորեւ զվար ունկողնիրս ՚ի լսւ ամոր, եթէ մոցա կողմամէ դառն գործեր առիթ ստուած չլինէին: Ուրեմն կը մնայ, ըստ իս, ըմբռնել իբրև ստոյգ եղելութիւն եզրակացութեամս երրորդ մախադասութիւնն և ապացուցանել զայն:

Յիրաւի, բարդատնելով այդ հառը՝ Ազաթամզեղսյ Ա և վերջին գրոց հետ, կը գտնենք մախ երկաքամչիւրին բովանդակութեամբ մէջ ըմբռնուոր կերպով ամենամեծաւոր մամուլութիւններ և երկաքամչիւրին հասարակ տեղեր, որոնցմէ մի քանիսը բաւական կը համարին յիշել աստ: Ե՛լ 385, դրօշեւոց մասին մէջ բերուած հատուածը՝ մամն է Ա գրոց 63 իջի հատուածին, և յէ՛լ 176 Բ պարբերութեամբ վերջի մասին. յէ՛լ 424 Բ պարբերութիւնը՝ մոյն է 178-179 էջերու կրկին պարբերութեամբ հետ. յէ՛լ 426-427 հատուածը՝ մոյն է 176 իջի Բ պարբերութեամբ հետ. յէ՛լ 416 Բ պարբերութիւնը՝ յորում կ'աւանդուի սրբոց վկայութեաց վերացումը ՚ի սէր Աստուածութեամբ և Աստուծոյ խոնարհումն առ մտա, մոյն է Ազաթամզեղայ վերջին գրոց 552 իջի Ա պարբերութեամբ հետ. յէ՛լ 418 Բ պարբերութիւնը՝ մամն է 542 իջի Բ պարբերութեամբ. այսպէս մաս յէ՛լ 400 Կէ գլխահամարի Ա պարբերութիւնն և 378-380 էջերու Հովհիսիմեանց մասին պարբերութիւնք՝ հետևութիւն են Ազաթամզեղայ Ցառաշարամի 14-17 էջերուն, յորս մոյմպես առանց ամուսն սուրբ վկայութեաց և բաժակաց վերայ կը խօսուի:

Բ. Ս. Գրքէն այդ հառին մէջ բերուած տեղեացմէ շատերը բոլորովին կը տարբերին Եօթանասմից թարգմանութեմէն՝ գոր այժմ կը գործածենք. օրինակ իմն յէ՛լ 380, « Արդարև ասեմ ձեզ, զի թէ ոչ հատն ցորենոյ յերկիր ամկամի և մեռամի՝ լոկ միայն հատ կայ. բայց ՚ի մեռանելմ բազմապատիկ փառաւորի և պողաբերէ տոհմակամա », Յովհ. ԺԲ. 24: Ե՛լ 395, « Ոչ ոք է ՚ի դժոխս որ խոտովանի առ քեզ, և ոչ ոք է թէ յայմ մահու յիշէ զքեզ ». Սաղմ. Դ. : Այսպէս եմ յէ՛լ 396, « Մի երկնչիր, երէ » բառերով սկսող տեղին. յէ՛լ 393, « Հովուել զքեզ գաւազամա խստութեամ », և այլն. յէ՛լ 419, « Ծագեցէ ձեզ », և այլն. յէ՛լ 424, « Որ զձեզ ըմբռնի ... ըմբռնի զՀոյ՛ն իմ ». յէ՛լ 427, « Միւսանգամ շարժեցից ... որ ամշարժմ իցէ ». յէ՛լ 428, « Վառեցից զմովա ... թրով իրցիմ », և այլք ոչ սակաւք: Արդ պէտք է ասել, թէ այս և այսպիսի տեղիք մշան են այն հատուածոց հմութեամբ՝ յորս կը գտնուին. որովհետև մախկին թարգմանութիւն մի կ'ակնարկեն:

Իսկ ցուցնելու համար, թէ ստուգիւ հառիս հեղինակին խօսքն ուղղեալ է առ Ե երրորդ և ոչ թէ Դ դարու ժողովուրդն, դիտելու ենք հետևեալ պարագայքը: Ե՛լ 383, կ'ըսուի այսպէս. « Վառեցի՛ս սպառնալեօքն պատուհասիցն Կոյ՛ն զձեզ ՚ի դրոմս ապաշխարութեամ »: Արդ վառեցի՛ս բացատրութիւնը՝ թէ Գրիգորի և թէ մորա

ժամանակ այն ինչ հարուածեալ և դեռ չբժշկուած ժողովրդեան համար անհասկանալի է: Յէջ 424, կ'ըսուի. « Ըստ խրատու առաքելակցին, յերայ Գաւրոսի », և այլն. դիտելու է որ, ձեռք առաքելոց բացատրութեամբ՝ զԱռաքեալսն Հայոց զԹաղէոս և զԲարդղղիմէոս կ'ակնարկէ, որ քրիստոնեայ Հայաստանի համար միայն կարելի է հասկանալ և ոչ հեթանոս Հայոց, որոնք յըմթացս երեք դարուց շարունակ հեթանոսութեամ մէջ ապրելով, չկարէին հասու լինել այնպիսի հմաւանդ ակնարկութեամ մի 'ի կողմանէ Գրիգորի: Յէջ 384, կը յորդորէ իւր ունկնդիրները՝ թողուլ իրենց « կուսպաշտութեամ » կամ հեթանոսական « Գրիգորի » « որք 'ի Կոնստանդնուպոլիսում իմքմիմ. վասն զի քրիստոնեայք էին, թէպէտև հեթանոսական սովորութեանց համեմատ կ'ապրէին: Գիտելու ենք, որ այս բացատրութիւնս նման է Ս. Մեսրոպայ կենսագրութեան հեղինակին յէջ 7 հետեւեալ բացատրութեամբ. « Գերեալ զամենեւնսն 'ի Կոնստանդնուպոլիսում, և 'ի սատանայական դիւապաշտ սպասաւորութեանէմ 'ի հմազամողութիւն Քրիստոսի մատուցամէր »: Բայց թէ արդեօք երկաքամչիւր տեղեաց հեղինակն մի և մոյն ամծմ է, եթէ ոչ, այս բանիս վերայ այլուր պիտի խօսուի:

Բ. Այս կերպով միայն կարելի է մեկնել նաեւ հիմազայ տեղեաց միացումը՝ վերջէմ յերիւրեալ և յաւելեալ տեղեաց հետ. ինչպէս նաև Լուսաւորչէմ շատ վերջ եկող յումսկամ Հարցմէ փոքր առնուած տեղեաց զուգութիւնը՝ Լուսաւորչայ վարդապետութեամ և կենսագրութեամ անդեաց հետ, զորս տեսանք մինչև ցարդ և դեռ պիտի տեսնենք 'ի հետեւեալսն:

Ը

ՁԳ զլիսահամարմ՝ որում համար ըսուեցաւ, թէ շարունակութիւն է հոգւոյ զայստեան նառիմ, այսինքն է ԿԱ զլիսահամարիմ. և ՁԷ զլիսահամարմ՝ ազատ հետևողութիւն է Ոսկեբերամի Առաքելոց և Հօրեպոստեան նառերում. միայն թէ 477 իջի հատուածմ, յորում մախասահմանելոց թուոյն համար կ'ըսուի, թէ են հաւասար ամկեալ հրեշտակաց թուոյն, չկարացի գտնել յոյն սուրբ Հօրս քով: Բայց դիտուած է, որ նա ինքն Ոսկեբերամ թէ Պօղոսի թղթոց Մեկմութեան և թէ մեզի ծամօթ նառերու մէջ մախասահմանութեան վերայ խօսած ժամանակ, ըմտրելոց կամ ամարգելոց թուոյն համար մեծ զգուշութիւն ըրած է, որպէս զի մի ըմտրելոց սակաւութեամբը՝ ժողովրդեան լքանելու պատճառ տուած լիմի, ինչպէս և 'ի հակառակէմ՝ զեղծամեղու առիթ: Այսպէս ըրած են և Հարք Կենարիոյ դպրոցիմ. ուստի սողքսամղերեամ Հարցմէ պէտք է որ ծագումն առած լիմի սյսպիսի մի կարծիք:

ՁԵ զլիսահամարմ՝ միմչև ՁԹ զլիսահամարմ եղած միջոցը՝ կը պարունակէ Մեթոքեան Գրքի նառը, որ ոչ միայն թերի՝ այլ և ոչ իսկ իւր բնական դրից մէջ կը գտնուի: Եւ ստուգիւ այսպիսի մի

եղեւութեամբ յայտնի ապացոյց համարելի եմ, մախ, զի յէջ 491, 2^թ գլխահամարով դարձեալ կը սկսի հոգոյ գալստեան և համարով քարոզութեամբ ճառն, և կը շարունակուի մինչև ցէջ 537: Բ. Այս իջէս մինչև վերջ դարձեալ Քրիստոսի կենսաբեր վարդապետութեամբ, վերջիմ գալստեան և հատուցման վերայ կը խօսուի, զորս կամ իբրև ամբողջացուցիչ մասն համարելու եմք 2^Ը գլխահամարի վերջիմ պարբերութեամբ, և կամ լաւ ևս սկիզբն մախապատրաստիչ 2^Ե գլխահամարով սկսող մեռելոց յարութեամբ ճառիմ: Այս պարագայքս մէկ կողմէն, և միւս կողմէն այլ դիտելով՝ որ մեռելոց յարութեան և Քրիստոսի կենսաբեր վարդապետութեամբ ճառը, որ առանց պատճառի կրկնուած է, թէ՛ ըստ ըմբացեց Մ. Գրոց պատմութեան և թէ՛ վարդապետութեամբ հեղինակին յէջ 188 և 189 առաջարկեալ ծրագրի համաձայն՝ պէտք է որ հոգոյ գալստեան և առաքելական քարոզութեան ճառէն վերջ՝ զետեղուած լինէր, կարենք եզրակացնել, թէ ~~Վարդապետութեան~~ վերոյիշեալ միջոցին և կամ էջերու և գլխակարգութեանց մէջ ստուգիւ խառնակութիւն մի և յետևառաջութիւն տեղի ունեցած է ժամանակաւ, որ 'ի սկզբան ամոռ չկար. և կամ ըսել, թէ մեռելոց յարութեամբ ճառը՝ հոգոյ գալստեան ճառէն զատ մի առամձին և ամբողջական բան չէր. այլ այն առթիւ և ամուղղակի կերպով մորա մէջ բարգաւաճեալ մասն մի:

Իսկ գալով այն ճառի պարունակութեանը, դիտելու եմք, որ 2^Ե և 2^Թ գլխահամարներն՝ գէթ ըստ մասին, պայմըն է 479-486 էջերն, յորս իբրև զգալի օրինակք մեռելոց յարութեամբ՝ մէջ կը բերուին բուսական և կենսունակ արարածք՝ ձմեռուան և զարմանային կենաց մորաքամչ յեղափոխութեամբք՝ յայտնապէս հետևողութիւն եմ Մ. Բարսղի ~~Յուշ~~ Վեցօրէից Ե ճառին. իսկ 2^Ը գլխահամարն, որում օրինակաւ բնական զարման և թուչնոց երամ երամ զաղթականութեանը կը մկարագրուին զարումն մեռելոց յարութեան և արդարոց յերկիմս վերաչուելոյն, մոյն սուրբ հօր Ը ճառի մամողութեամբ յօրինուած է, որում մեծապէս սիրող եղած կը տեսնուի հայազմ վարդապետը, ինչպէս մաս բանաստեղծական մերշնչութեամբ և ազդական բանահիւստութեամբք իսկ՝ իւր մախորդէն ստոր չի մնար: Մակայն համոզերծ այսու պէտք է խոստովանել, թէ վերջինս՝ կամ իւր ճառելիք միւթոյն պահանջածիմ համեմատ և կամ անյայտ մի այլ պատճառաւ, շատ հեռի կը մնայ այն բնապատմական և բարոյագիտական խորին և ըմբարձակ խորհրդածութիւններէն, որոնցմով առաջիմը՝ Աստուածաբանի, Նիսացոյ և Ոսկեբերամի պէս լուսափայլ և մեծ համեմարներն իսկ առ ինքն յափշտակել է և մոցա գրութեանց մէջ տիրապետողն իսկ ինքն է: Իսկ համոզուելու համար, թէ այդ ճառի հեղինակը՝ ոչ թէ Կեսարացին Գրիգոր և կամ Իտալական երկմից մեքքև և հողոյն վերայ բնակող հռովմայեցի Ագաթանգեղոսն, այլ հայաստանի բնակ ոմն եղած է ստուգիւ, բաւական է ուշադրութեամբ կարդալ յէջ 481 մկարագրուած ձիւնաթաղ և սառնապատ ձմեռն և մորա հակա-

պատկեր գարունը. իմպլէս միւս էջերում յիշուած բուսոց և սերմանց, ծառոց և պտղոց և ծաղկանց ամուսանքն, որոնք զուտ հայկական են. 490 իջի դասադաս խորոզոց գարնամայիմ չում, զոր փոխանակ յունական Իփսիքում տառիմ հարօրի կը մնանցմնէ, յասեմն. « Երամացեալ հարօրի » և երկրագործութեան և ընտանի կեննաց և անասնաբուծութեան պարագաներն, որոնք Հայաստանի միայն յատուկ են: Յիրաւի, դք մեր հայրենի հողոյն վերայ ծնած կամ սնած են և այն ամենայն տեսած, դիւրաւ կարեն հաւատալ, թէ իրօք էջերուս գրողն ևս հոմ ծնած, սնած և ակամատես եղած է իւր մկարագրած երևոյթներում:

Դառնալով յաշորդ գլխակարգութեանց, հետևեալները մասնաւոր դիտողութեան արժանի են. այսինքն է 504 իջում վերստիմ մէջ բերուած է՝ 350 իջի մէկ տեղին, Քրիստոսի մահուան ժամն և լուսաւորաց խաւարման մասին, համդերծ այն քամի մի տող հատուածով, որում համար ըսուեցաւ, թէ թերի է. և թէ Գ, ԻԳ և ԻԵ չնշեցէ միայն կը լրացնեն, թէ և փոքր ինչ տարբերութեամբ: Սակայն այս անգամ հայազմ վարդապետս ոչ Դամիէլի տեղին մէջ կը բերէ և ոչ այլ Զաքարիայ մարգարէութեան ամբողջ տեղին, այլ այն տեղոյն մէջ յիշուած « օրն այն յայտնի Տեառն », զոր ինքն օր իբրև կ'անուանէ, զուգելով ընդ մնա Յովնայ մարգարէութեան « զօրն Տեառն մեծ և երևելի », այսինքն է օր զայստեան և հատուցման: Արդ, դիտելու ենք, որ աստ՝ այսինքն է ՂԱ գլխահամարի մէջ, Յովնայ մարգարէութեան երկու տալեր տեղեր մէջ բերելով, այսինքն է մի՞մ Բ. գլխոյ 30 տանէն, յորում գրուած է, « Արիւն և հուր և մրրիկ ծխոյ ». և միւս՝ մի և մոյն գլխոյ 11 տանէն. « Յաւուր յայնմիկ հեղից յոգւոյ իմնէ՝ ի վերայ ամենայն մարմնոյ. և մարգարէասցին ուստերք ձեր և դատերք, և ծերք ձեր երագովք երագեցին », և այլն, ուզած է կրկին գործ կատարել. այսինքն է, մախ հոգւոյ զայստեան՝ ճառը՝ մեռելոց յարութեան կամ վերջին զայստեան ճառին հետ կապել, յորմէ զգալի կերպով հեռացած էր. երկրորդ վերջին դատաստանի օրուան և Քրիստոսի մահուան կամ փրկագործութեան օրուան մէջ համաձայնութիւն մի կ'ազմել: Բայց թէ այս գեղեցիկ գիտս իցէ՞ արդեօք հայ վարդապետի ընծայելի կարծեմ թէ ոչ: Եւ յիրաւի, իմպլէս հոգւոյ զայլստեան ճառէն խոտորելոյն՝ այսպէս մաս զամոնք իրարու հետ միացնելու իբրև բուն պատճառ՝ համարելու ենք Ոսկեբերանի Գործոց Առաջին Մեկնութեան և Հոգեբանութեան Բ ճառին հետևողութիւնը, յորս Յովնայ մարգարէութեան վերոյիշեալ տեղիքը կը մեկնուին. և ստուգել տոյն այս երևոյթը յայտնապէս կը տեսնուի Ագաթանգեղոյ Դ, և ՂԱ գլխահամարներում իսկ, այսինքն է 494-497 և 500-506 էջերն՝ յիշեալ մարգարէութեան կրկին տեղեաց մեկնութեամբ ընդարձակուած, և ուրեք ուրեք բառակամ կերպով իսկ Ոսկեբերանի կը համաձայնին:

Յէջ 498-499 դարձեալ մէջ կը բերուի վեցհազարամեան կամ արարչութեան վեց աւուրց վարդապետական մէկ տեղին, յորում

մէժ մի օր՝ 1000 ամաց կը հասնածայնեցնէ, ըստ մարգարէագուշակ առածին: Արդ՝ այս տեղիս արդէ՛մ տեսանք 274 իջի բնմութեամ մէջ. բայց ինչ որ անծանօթ հեղինակս վարդապետութեան 274 իջում իբրև սուկ կարծիք՝ երկու խօսքով արտայայտելով անցած էր, 498-499 իջում՝ ըմդհակարակով ամբողջապէս մէջ կը բերէ, որով առանց երկբայութեան կը հաստատէ մեր մախրմթաց ենթադրութիւնն, այսինքն թէ այդ տեղին գրեթէ բառ առ բառ Աստուածաբանի ի սուրբ Պէնթաթէոսէ մատէ՛մ ստուգիւ փոխ առնուած է, և թէ մի քանի մախամիկիական հարց կամ Հաղորդուց վարդապետութեամ հետ վերաբերութիւն չունի:

Յէջ 508 մէկ տեղին՝ ուր հոգին սուրբ դարձեաց նարտարապետի, և Առաքեալները՝ երկաթի կը մմանեցուին, որոնք մխուելով ՚ի փութս հոնցի շարժարութեան և սիրոյ՝ գլխովին տարբեր գոյմ և շողում կ'ըմդումին, բառ առ բառ մոյմ է Ոսկեբերամի Կորնմթացուց ծն գլխու մեկնութեամ մէկ տեղւոյն հետ. միայն թէ առ Ոսկեբերամի՝ արդէ՛ զորուած է փոխանակ երկաթի: Յէջ 526-527 Դէ գլխահամարով Ա պարբերութեամ մէջ՝ Բամին Աստուծոյ մասին եղած գեղեցիկ ձեռնարկութիւնը՝ մնամ է թէ՛ Ոսկեբերամի Յովհ. Ա. ւետարանի Ա. գլխոյ մեկնութեամ մէկ տեղւոյն և թէ՛ Ս. Բարսղի ի սուրբ Բանն և Բանն էր Աստուծոյ մատէ՛մ. չկարեմ ստուգիւ ասել, թէ որո՛ւմ հետևած է վարդապետութեամ հեղինակն, որովհետև բառ առ բառ չէ. սակայն « Տեսանմն՝ զի չեթող ՚ի միջի զաստուածագէտ իմաստութեամ զպայման » հարցական ձևն, և ամբիջապէս մորս յաջորդ էջերում շարունակուած մեկնաբանական ոճը՝ զՈսկեբերամ կը թուին ցուցանել մեզ իբրև ամբիջական աղբիւր: Յէջ 531 ԴԸ գլխահամարով սկսող պարբերութիւնը՝ ուր հոգւոյն Սրբոյ համար կ'ըստի, թէ « Հոգին նշմարտութեամ ՚ի հօրէ ելամէ. ելամէ և ոչ բաժանի, և Բռնէ և ոչ սպառի », Գր. Նիւսացոյ Երբոյրութեան մատէ՛մ փոխ առնուած է, զոր կ'ըմծայէ մեզ ԻՁ ժառնտիին յէջ 47: Եւ իրօք այս բանիս յայտնի ապացոյց են Եւնէ և Բռնէ բայերու՝ դիտմամբ գործածութիւնը. որովհետև ելամնել բայը կը գործածեն Յոյնք՝ մկատմամբ հօր կամ ամսկիզբն պատմաբանի ելմանց, ինչպէս կը տեսնենք Յովհաննու Աւետարանէ՛մ մէջ բերուած տեղւոյն մէջ. իսկ հոգւոյն Սրբոյ ելմամ համար՝ յորդւոյ, կամ լաւ ևս վերաբերութեամբ սկզբնաւոր պատմաբանը՝ բըլխել բայը կը գործածեն միշտ. ինչպէս կը գտնենք և յէջ 66 Ագաթամզեղոսի: Յէջ 534 Առաքելոյն հետևեալ խօսքերով, թէ « Շնորհք Քրիստոսի ՚ի վերայ ամպատում պարզեաց մորս », կը գտցուի ըմդարձակ վարդապետութեամ մատը, Վեմետկեան 1862 ամի հրատարակութեամ համեմատ, զոր ՚ի գործ ածի. իսկ Ագաթամզեղայ Ձ երրորդ օրինակն՝ սոյն տողերն ևս կ'ըմծայէ մեզ. « Եւ մեզ ըմդ սրբոց դասուցն փառաւորեսցոք զհայր և զՈրդի և զՄուրք Հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս յակիտեմից, ամէ՛ն »: Այս տողերու հարազատութեամ կամ ամհարազատ լինելուն ապացոյց մի չունիմ ՚ի ձեռնն. բայց այսչափ դիտելի է, որ ինչպէս ուղղափառ դասամու-

թեամբ ամենատուրբ Երրորդութեան՝ սկսաւ վարդապետութեան ճառը, նոյնպէս ևս կը կնքուի. և թէ այսպիսի վերջաւորութիւն մի յատուկ է Ոսկեքերանի, որով կնքած է մա բոլոր իւր ճառերն:

Ի վերջնոյս դրուած համառօտագիծ յիշատակարանը, որ կը սկսի. « **Ապարեցաւ Վարդապետութեան Գրիգորի** » խօսքերով, յետոյ ուրեմն ներմուծուած է, ըստ իս, և պէտք չէ առնուլ իբրև ապացոյց իսն հարազատութեան վարդապետութեանս. բայց թէ ե՛րբ և ի՞նչ պատճառաւ, չկարեմ որոշել. այլ այսչափս միայն դիտելու ենք, որ մեան երևոյթիմնի խիստ շատ են ձեռագրաց մէջ, յորս ընդօրինակողք մախմի հեղինակութեանց հասնելով ՚ի վերջ գրութեանն՝ կը ծանուցանեն, թէ աւարտեցաւ այն. այսպէս ըրած են մաս վարդապետութեանս ընդօրինակողք՝ փոխադրելով մորա ճակատի վերնագիրն միւսամզամ ՚ի վերջ գրութեանն:

